ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

ՍԱՂՄՈՍԱՑ

Յօրինեալ ՚ի Տ. Միքայէլ վարդապետէ Չամչեանց՝ Յաշակերտութենէ ամենապատիւ Մխիթարայ Աբբայհօր.

Տպագրեալ հրամանաւ Հոգեւոր Տն. Ստեփաննոսի Գծի Աբբայի Ագոնց, Ծծայրագոյն Արքեպիսկոպոսի.

Յամի Տն. 1819. և հայոց. ՌՄԿԸ.

Բաժանեալ ՚ի տասն հատորս.

ՀԱՏՈՐ Ե.

Ի ՎԷՆԷՏԻԿ

Ի ՎԱՆՍ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ

Նուէր

Լիզպոնի Գալուստ Կիւլպէնկեան

Հիմնարկութեան կողմէ

Հայկական ՍՍՌ Գիտութիւնների

Ակադեմիայի Մատենադարանին

1966





Ողորմեաց ինձ Տէր զի կոխեաց զիս մարդ · զօրհա-
նապազ պատերազմանք նեղեցին զիս :



ԿԱՆՈՆ ԺԲ

ՍԱՂՄՈՍ ՃԽԵ

Պաղատանք առն սպասարկուոյ ի վիշտս ի ձեռաց թըշնամեաց. և քաջալերք յուսոյ ճշմարիտ օգնականութեան. և գոհութիւն առ Աստ վասն փրկութեան անձին։

Լ՝ խաւարաց - վասն ծողվըբդեան, որ ի սրբոյն հեթանոսաւ էին. արքայութիւն ի դաւիթ. ի ձանձանաւէ՝ էր խալսն ընա այլազգեն ի գէր։

1 Ողորմեա ինձ աՍ, էր խոհեաց էիս մարդ. զօրհնաւոպաղ պաւերաշմանեա նեղեցին զիս։ 2 Լոխեցին զիս ըշնադ իմ զօրհնաւոպաղ. բազում եղեն՝ ոչ մարթնէին ընդ ես ի բարձեանդ։ 3 Լ՝ ասաս ես ահ երկեայդ, էր ի քո յոսայայ. ասաօձով փավիցեդ զբանս իմ. յԱծ յոսայայ՝ և ահ երկեայդ, էր արասցե ինձ մարդ։ 4 Օ՝ օրհնաւոպաղ զբանս իմ անարգեցին. էրնեն էին խորհուրդք նորա ի զարուբէ։ 5 Պանդոխաւ եղէին, և ընաւխաւորս զրկեացին. նոցա փաշաւպարբ իմոմ սպասեացեն՝ որպես և սպասէին անձին իմոյ։ 6 Լոխս սա ունէք ձերգեսցէս ընոսա. բարխուրէ գձողվարդս հնասանդեցոացես։ 7 Լ՝ գնեանս իմ պասեցիդ ինէ. եդէդ զարտասուս իմ առաջի ս, որպես խոսացաբ դու ինձ։ 8 Լարձիցին ընդահիս իմ յետս խոբեանց. յասաւս յորում կարդոցիդ սա ինէ։ 9 Լ՝ հա ծանեայ էր աՍ էր իս դու. զԱծ օրհնեցիդ ի բանս իմ, և պար փավիցիդ ի խոսս իմ. յԱծ յոսայայ և ահ երկեայդ, էր արասցե ինձ մարդ։ 10 Ջ՝ նեղեն են ոխաւ իմ. զոր պայ ինէ աՍ օրհնաւոպէ։ 11 Փրկեցեր զանձն իմ ի մահաւանէ, զաչս իմ յարտասուաց, և զոտս իմ ի փոյթ խոխրուրէ. հաճոյ եղեց առաջի աՍ յերկրին կենդանեաց։

ՎԱՐՆԱԳՈՒՐ.

Ի խաբաթ վան ձողվբեան , որ ի սբբուբեանց հեռացեալ էին . աչխանաբէր ի գաւիւռ . ի ձամանակի ոչ խալան ընա այլապէին ի ֆէրն ։



Ո ՐՔՎՓ ՍՒՐՎՅՈՍՐԲՆՆ ուհիմք , այնչափ այլևայլութի գտանեմք ի նոսա ի կարգս բառից վերնագրիդ . մանաւանդ ի բառդ ՚՚ընբռնեց , որ յոմանս դնի ի սբռի , յոմանս ի սբռոյ , յոմանս ի սբռոնէ , և յոմանս ի սբռոնբռնէ ։ Իսկ այլոց բառից այլայլութիք ոչ ինչ վնասեն մտաց բանին . վասն որոյ և զանց առնեմք ի մէջ բերել զնոսին ։ Ի Թարգ . եօթանասնից և լատ . ըստ մերումն դնի . իսկ ղեբրայականէն ասասցուք ի ստորև ։

Ա.յս վերնագիրս հայի չանցս գաւթի , (որ պատմի ի ՚՚ա գիրս Թագ . գլ . իա . և իբ ։) Վանդի իբրև գիտաց գաւիթ Թէ վճարեալ է չարութի՚ առ ի սա. ւուղայ վասն իւր՝ փախեաւ և գնաց ի գէթ՝ անկանել առ անբուս արքայ փղշտացւոց . և զի փղշտացիք գառնացեալ էին ի վերայ գաւթի , և խնդրէին կորուսանել զնա՝ գիտելով Թէ նա է սպանօղ գողիա Թու՝ ամբաստան եղեն զնմանէ առ անբուս . յորմէ զարհուրեալ գաւթի՝ ձևացոյց զանձն առաջի նոցա իբրև զխելագար , և գնայր յափսիԹերս , այսինքն չորս ոտիւք ։ Ո՚այն տեսեալ անբուսոյ՝ արհամարհաց զնա , և մերժեաց յերեսաց իւրոց՝ ասելով ցծառայս իւր . * ահա տեսիք զայրն այսահար , և ,, ընդէ՞ր մուծիք զնա առ իս ... մի մոգէ դա ի ,, տուն ։ (ա. Թագ . իա . 10 — 15 ։) Այլեալ անտի գաւթի գնաց ի յանձաւս ոդողմայ . և որպէս ասէ գիրն * ժողովին առ նա (անդ) ամենայն վշտաւ ,, տեաք և ամենայն պարտապանք , և ամենայն ցա-

,, սաղմոսք ոգւով, և էր նոցա զօրագլուխ. և էին
,, ընդ նմա (ամենեքին) իբրև արք չորեք հարիւրք ‖.
(ա. Թագ. ԻԲ. 2։) Այսմիկ հետէ միշտ ի հալա-
ծանս եկաց դաւիթ մինչև ի մահն սաուղայ։ Այլ
ահա յայս ամենայն հայելով դաւիթ սասց զայս
սաղմոս իբրև ընորհակալութեան առ Աստ, և իբրև քա-
ջալերութեան այսոցիկ որք եկին առ նա։

Այլ զի սոքա ժողովելով առ դաւիթ՝ հեռացան ի
սրբութենէ՝ այսինքն ի տանէ տեն և ի ներկայութենէ
տապանակին, և ի հանդիսից զոհից նէ, եւս և յըն-
տանեաց իւրեանց՝ որ առ նոսա սրբութենէ էին է,
այսինքն սեղկականաել, սակն իբրև ասի ի վերնագ-
րի։ * վասն ժողովրդեան որ ի սրբութենէ հեռա-
ցեալ էին ‖. այսինքն վասն այնոցիկ որք ժողովելով
առ դաւիթ՝ հեռացեալ էին ի սրբութենէ անտի,
յորմէսի էին ընդ դաւիթ։ Այլ ասասցուք բառադ վասն
ոչ ցուցանէ՝ թէ քանք սաղմոսիս կարգին վասն նո-
ցա, այլ թէ ի գալ նոցա առ դաւիթ, և ի պատ-
միլ դաւիթի զանցս իւր՝ ասաց զայս սաղմոս վասն
քաջալերս տալոյ նոցա, թէ ածի փրկիչ գնասա յամե-
նայն վտանգից։ որպէս և փրկեացն իսկ։ Այլ գի
տելի է, զի այս սաղմոս կարէ հայել և յայլ ամենայն
հալածանս, յորոց փրկեաց Աստ դաւիթ։ որպէս և
բեւէ յընթերցից բանիցն։

Այսն այս սաղմոս կոչի սչխանաչէք ի գաւէն։ Իսկ սրձա-
նագիրն ըստ առանձինն նշանակութեան իւրում յայտ
առնէ գիր գրեալ յարձանի, այսինքն ի սեան, կամ
ի վիմի նէն. և կամ յիշատակելի անցք փորագրեալ
յարձանի, կամ արձան գրեալ։ Իսկ ըստ գործածա-
կան նշանակութեան յայտ առնէ հաստատուն ինչ գիր
գրեալ իբր անջնջելի յիշատակ, թէև չիցէ յարձա-
նի։ Այլ ահա ըստ այսմ նշանակութեան դնի ասա
բառադ սչխանաչէք. որպէս թէ եգեալ էր։ այս սաղ-
մոս գրեալ է ի դաւթայ ազգմամբ հոգւոյն սրբոյ
իբր անջնջելի յիշատակ։ Այլ է եւս ասել՝ թէ
այս սաղմոս, որպէս և այլ քանի մի՝ էին ի թուոյ
այնց սաղմոսաց, զորս ըստ ասելոյ ոմանց գտին ի
ժամանակս եզեկիայ բարեկամք Նորա, գրեալ յար-
ձանի, և վասն այնր կոչի արձանագիր։ Ասա ա-

ԵՒ ԱՍՊՄՈՒՆ ՅՇ. ՅՀ. ՅՇ. ԱՀ.

ՀՅԼԸ. գրի լռութեամբ ալ եղծան եկեղ ուխտիդ լքաւոխ
դիմեամ պեպեղը ոխո եչկուիմ պեկշաւ. այս է * ի կա-
,, տարած ի վերայ Հոմի ազատնուդ. (յորում առա-
,, ջի գնին) հեռատրութիւք. ի դաւիթ. միմեամ
,, (այսինքն նուագ) յորժամ ձգեցին զնա պաղեստի-
,, նացիք ի գէթ ‖. զոր այլք այլազգ թարգմանեն
այսինքն է. * արձանագիր ի դաւիթ (աւանդեալ) ի
,, նուագապետ այնր գառաւ՝ որ ասի աղաւնի Հոմի,
,, (վասն) նոցա՝ որք հեռի են. (ի ժամանակի) յոր-
,, ժամ կալան զնա փղշտացիք ‖. որ է ասել. այս
աղաւնս է արձանագիր գաւթի՝ զոր ասաց ի ժամա-
նակի՝ յորժամ կալան զնա փղշտացիք, վասն նոցա՝
որք հեռացեալ են ի հանգստանէ. և երբէք սա այ-
նու գործարանաւ, կամ ըստ այնմ գառաւ որ կոչի
աղաւնի անբարբառ. (զորմէ տես ի նեբռած. Ժ.)
կամ ըստ այլոց թարգմանելոյ դնի այսպէս. * յաղ-
,, թանակողի յերգս վասն անբարբառ աղաւնւոյ՝ զի
,, հեռացաւ անկեղն և խնամարկն դաւիթի՝ յորժամ
,, ըմբռնէին զնա փղշտացիք ի գէթ ‖. որ է ասել.
այս սաղմոս է երգ դաւթի՝ որ գառաւ անբարբառ
աղաւնի հեզ և խնամարկ ի հեռանալ իւրում ի
գէթ, և յանկանելն ի ձեռս փղշտացւոց. Ի.ԱՒՔ
թարգմանեն. ի կատարած. ի վերայ զօրագլխին
հեռացելոց. դաւթի արձանագիր. մինչ կալան զնա
պաղեստինացիք ի կաթ.

Ի.ԱՒ. ոչ է մարթի հաւատալ՝ թէ ի ժամանակս ե-
թանանցից ևս այսպէս էր այս վերնագիր առ եբ-
րայեցիս. ապա թէ ոչ՝ ոչ դնէին ըստ նախակար-
գելոյդ, ա գիտէ գուցէ յետեկատաջութէ տառից
մուծեալ է այդպիսի փոփոխութէն. զորմէ չէ հարկ
երկարել մեզ զաման.

Ասմանք ատանօր զայս սաղմոս վերածէն ի ժամա-
նակ գերութէն բաբելացւոց. ըստ որում յարմարե-
ցուցանել և վարդան. և ոմանք վերածէն ի ժամա-
նակս նեղութէն մանաքայեցւոց. Ի.ԱՒ. սոքին ըստ
յարմարութէ միայն գնին առաջի. իսկ բանք սաղ-
մոսս ուղղակի հայեն յանցս տառապանացն դաւ-
թի, և ա և ի տառապանս իւրաքանչիւր անձին հե-

ռացեալ ՚ի սրբութէ անմեղութէ վարուց, և նեղեալ ՚ի փորձութենէց և ՚ի դիւաց. և այլազանօրէն յանցս չարչարանաց ՚ին մերոյ ըստ մեկնելոյ սուրբ հարց։ Այս այս ամենայն առաջի դնին խնդրուածովք ողորմութէ և օգնականութենն ՚ոյ, որպէս և թեսցի յառաջիկայդ։

Ր Ե. Ն

ԱՒ. Աղրէ՛ ինէ ՚ած, էլ էռնեաց էլս մարդ. էօբհանապաղ պապերապմոնդ նեղեցին էլս։

Մ Ե Կ Ն Ո Ւ Թ Ի Ւ Ն

Ախթարութէն մեծ էր ՚ի բերան դաւթի այս բան աղրէ՛ ինէ ՚ած. քանզի առեալ զձաշակ այսր՝ յամենայն նեղութենս իւր զսոյն առնոյր ՚ի բերան. որպէս և աստ իսկ պաշարեալ ՚ի մեծի նեղութէ՝ զնոյն գործէ. և այնպէս խօսի, որպէս թէ տակաւին յայնմ վտանգի էր՝ յորմէ զերծաւն։ Վ՚անզի սովորութէն է մարդարէից, զի յերկս իւրեանց զորս յօրինեն յետ նեղութէ՝ պէսպէս կարգեն զբանն, երբեմն առաջի առնեն զանձինս իւրեանց իբրև ՚ի նեղութէ, և երբեմն իբրև արտաքոյ նեղութէ, երբեմն իբրև տակաւին չգտեալ զողորմութէն, և երբեմն իբրև վայելեալ յողորմութենն ՚ոյ. ըստ այսոցիկ կարդէ և աստ դաւթի զբան իւր, և նախ զանձն իբրև ՚ի վտանգի անդ տեսանելով՝ պաղատի և ասէ։

Աղրէ՛ ինէ ՚ած. էլ էռնեաց էլս մարդ։ Դաւթի փախուցեալ ՚ի ձեռաց մարդոյ այսինքն սաւուղայ, անկաւ դարձեալ ՚ի ձեռս մարդոյ այսինքն անքուսայ որով և պաշարեցաւ ՚ի մարդկանէ. և եթէ հայեսցուք ՚ի ժամանակն յայն, յորում պատահեցաւ նմա այս, փոքր էր վտանգն՝ յորմէ փախեաւ, և մեծ վտանգն այն՝ յոր անկաւ. զի հնար էր դաւթի պաշտպանել զանձն ՚ի սաւուղայ. բայց ո՛չ ՚ի ձեռաց անքուսայ. ուստի և յանկանիլ նորա յայնպիսի վտանգ՝

գրեթէ յաւասարեալ ի կենաց. և ոչ գտեալ իւր
ապաւէն՝ դիմաց առ ած ասելով. ողորմեա ինձ ած,
որպէս թէ ասէր. դու որ միայն ես ապաւէն նեղե-
լոց և թշուառացելոց, հայեաց առ իս, զի ահա ոչ
ոք է ի մարդկանէ՝ որ ողորմեսցի ինձ. այլ ամենե-
քին խնդրեն զանձն իմ. յո՛ և երթամ, ի ձեռս նո-
ցա մանեմ. յո՛ և դառնամ՝ ընդ ոտիւք նոցա մա-
կանիմ. և նոքա փոխանակ անխոչեմ կոխեն զիս,
այսինքն պաշարեն զիս, և կամին խեղդել, և որպէս
թէ կլանել։

Ա՛ստանօր յասեն եղակի * զի կոխեաց զիս մարդ ||, ոչ է պարտ իմանալ զմի ոք ևեթ, այսինքն սոսկ զանբուս կամ սոսկ զոաւուղ, այլ զո՛ և իցէ թշնամի, որպիսի է՛ն և փղշտացիք, և և ծառայք սաւուղայ յորոց վտանգիւբ նա. որպէս տեսանի ի յաջորդ համարն։ Իսկ զայս վտանգիս յայտ առնէ բառիւս իւրեաց, կամ ըստ այլոց բառիս եհաւ. որով ցուցանէ նախ՝ զմեծութեն վտանգին՝ յոր անկաւ. երկրորդ՝ զառաւելութեն չարութեն թշնամեացն՝ ոք խնդրէին զնա. երրորդ՝ զբինախնդրութեն փղշտացւոց՝ որք կալան զնա, և ածին առ անբուս. և յայսմ ամենայնի գրեթէ կոխեալ եղև դաւիթ ի մարդկանէ, և պաշարեալ եղև ի նոցանէ։

Ղաբձեալ՝ այս տարազ խօսից՝ յորում արձակ դնէ զբառդ մարդ՝ ցուցանէ թէ չէր պարտ այսպիսս լինել. զի ով է մարդ, որ իշխեսցէ կոխել զմարդ. քանզի եթէ ըստ պատուականութեն մտածեսցի, ըստ որում է պատկեր ՚ին, զնմարդ համարձակի մարդ կոխել զպատկեր ՚ին. իսկ եթէ ըստ անարգութեն մտածեսցի՝ ըստ որում է ի հողոյ, զնմարդ վատահի մարդ կոխել զմարդ զի և ինքն է ի հողոյ։ Այսպիսի ինն օրինակ ձևացուցանէ յոյ մարգարէն զանձն իւր՝ կամի ազդու առնել զնոսին, և զօրաւոր ցուցա նել առաջի ՚ին. որպէս թէ եգեալ էր. տես՝ ահ՝ զի մարդ է՝ որ կոխէ զիս զպատկեր քո. տես, և ցոյց ինձ զողորմութեն քո։ Կա՛ զի յայտ արասցէ, թէ ոչ մի օր, այլ հանապազ յայսպիսի վիշտս վտանգի, յաւելու, և ասէ։

Ո՛ջ ծանապազ պատերազմեցեր նեղեցին զիս։ Ա՛ստ բա-

ռիւս պաղերազմունք՝ չորս ինչ նշանակին, նախ՝ հա-
լածմունք, որք միշտ տառապեցուցանէին զնա՝ ոչ
միայն ՚ի սաւուղեանց, այլ և յայլոց Թշնամեաց.
(որպէս յայտնի տեսանի ՚ի Բ. գիրս Թագ.) Երկ-
րորդ՝ բազմադիմի վիշտք, զորս կրեաց ՚ի տատանիլ
իւրում յօտարութեան. (որպէս ի տեսանել ՚ի նոսին Բ
գիրս Թագ.) Երրորդ՝ բազում մարտք և պատե-
րազմունք, զորս մղեաց նա ընդ այլ և այլ ազգս.
յորս և վաստակեցաւ յոյժ, և վանգեցաւ բազում
անգամ. Չորրորդ՝ ՚ի Թանձրացեալն առեալ՝ նշա-
նակին պատերազմողս. Օ այսոսիկ ՚ի մէջ բերելով
դաւթ՝ կամի գրելոյ տախտիլ զնա, զի փութասցի
ողորմիլ ինքեան, որպէս Թէ առասցեալ էր. ողորմեա
ինձ ած իմ, զի չէք այլ ոք որ ողորմեսցի ինձ. առ ի
տալոյ տեսանես՝ ահա տեսանես՝ զի ամենեքին
Թշնամացեալ են ընդ իս, պատերազմին և կռուին.
և առհասարակ առելութեան յարուցեալ են ՚ի վերայ
իմ. Օ այս եդեալ յաւելու ասել.

Ը. Վասն զի նա ընդ ինձ ապրեցաւ, և ես ընդ նմա ապրեցայ:

Վասն զի նա ընդ ինձ ապրեցաւ: Այս բան կրկնեալն ի նախընթաց համարոյ ըստ եր-
կուց հատուածոցն եւս. և զոր ըստ առաջնոյն եզակի
եդ ՚ի վերոյ՝ ասա յօգնական դնէ ասելով.

Վասն զի նա ընդ ինձ ապրեցաւ: Այսինքն սա-
ւուղ և ծառայք նորա, եւս և փղշտացիք, և այլ
Թշնամիք իմ, զոր ամենայն ոչ դադարեցան ՚ի հալա-
ծելոյ զիս. զի ուր և լսէին զինեն՝ հասանէին անդր,
և վաթեին զիս անտի. և այնչափ ինչ սարսուռն ընդ
իս, մինչ գրեթէ կոխել զիս: Ուր բառս ՚ի նոսա
նակէ նախ յանկարծակի հասանելով վտանգել. որ-
պէս բազում անգամ սաւուղ ընդ դաւիթ.
երկրորդ՝ նշանակէ կարի ինն վաստակեցուցանել,
կամ իբր ոտնակոխ առնելով չարչարել. որպէս յայտ
է ՚ի գործս սաւուղայ՝ զոր եցոյց առ դաւիթ. եր-
րորդ՝ նշանակէ խոնարհեցուցանել և անպիտանա-
ցուցանել. զի որ կոխի՝ այսպիսի համարեալ լինի.
և սոքիմբ դիտէ դաւիթ ցուցանել զիսպառ ընկճիլ
եւբ ՚ի Թշնամեաց, և զի բազում ինն նոքա, սմին

Բազում եղեն այս մարանէքին ընդ իս ՝ի բարձանց ։ Արարանչելն ի բարձանց՝ նշանակէ ՝ի բարձր տեղւոջ կալով մարտ գնել ընդ այնոսիկ՝ որք կան ՝ի ստորին տեղւոջ. և այսու նշանակի անվտանգ բարձրանալ մարտնջողաց, և վտանգիլ մարտուցելոց ։ և ըստ այսմ նշանակութեն կամի յայտ առնել մարգարէն, թէ ըստ զումէ ՝ի թշնամեաց իւրոց իբր ՝ի բարձանց մարտնչելով՝ վտանգելին զնա ։ որպէս թէ ասէր ։ ամենեքին յարուցեալ էն ՝ի վերայ իմ՝ ամենեքին հալածեն զիս, ամենեքին մարտնչին ընդ իս ։ և բազումք ևս վտանգելով զիս մեծասիս՝ բարձրանան ՝ի վերայ իմ՝

լամբ՝. որովհետև զայս պատերազմ գնել լինել ՝ի խորհրդոյ և ՝ի դիւաց, զաւառ ՝ի բարձանց մեկնհոգևոքրապէս ։ յաւէրն, դևք ՝ի բարձանց պատերազմին ։ * զի ընդ օդդ չորքելով գան ժողովին առ մեզ ՝ի մարտակցութեն ։ ։ ։ ընդ նեբբին խորհուրդս ։ և կամ ըստ թարգ. տալոյն ՝ի, ՝ի բարձանց մարտնչին ընդ մեզ այսինքն մեսիսանութեն, բարձրամտութեն, և ն։ Աարդապէս այսոքիկ պատերազմունքն հայեին ՝ի յարուցմունս ախտից ՝ի սրտի, և ՝ի գրգռութեն կռուոյ ։ որոց արմատ և անկարգ յօժարութեն ապա կանեալ բնութեն, կամ հեռանութեն ցանկութեն հին մարդոյն, առ որ կարէ յարմարիլ բանն այն՝ զոր ասէ յակոբոս առաքեալ ։ (դ ։ ։) * ուստի պատերազ՝՝ մունք (՝ի սրտի ձերում), և ուստի կռիւք (գրգ՝՝ ռութեն ընդ պլս ։) ոչ յայսոսիկա ցանկութեց՝՝ ձերոց, որք զօրացեալ են յանդաման ձեր ։ Աքա հանապազ նեղէն զմեզ ։ եթէ տեղի տացուք՝ խեղդեն, և եթէ զսպեսցուք՝ օգտեն ։ եթէ թուլասցուք և ծուլասցուք՝ նուաստն և սպանանեն, և եթէ համբերեսցուք և խոնարհեսցուք՝ որչափ կոխեն՝ այնչափ շահեցուցանեն ։ Այսպէս և նեղութիւնք և արհամարհանք, որովք կոխի փառք և պատիւ մարդոյ, եթէ խոնարհութեն տարեալ լիցին՝ փոխանակ ինասելոյ՝ զարգասիս բարեաց ընծայեն ։ Վերջումն բարւոք անէ՝ յօրժամ կոխոսի, այնպէս և փառք և մեծութեն յօրժամ կոխոսին ՝ի խոնարհս, անէն և

պտղաբերեն։ Այլ քանզի տկար եմք և կաքաւամիտք, ի կոխիլ մեր յայսպիսեաց աստ պարտիմք դիմել յաղօթս, զի որ կարօղ է յամենայնի պաշտպանեսցէ զմեզ. որպէս և տեսանել յանձն դաւեթի, որ ի վերանդիլ իւրում՝ զնա կարդայր, ըստ որում ցուցանէ նա ինքն սովին առաջիկայ բանիւղ. զոր առաւել եւս կամելով բացայայտել՝ յարէ զկնի, և ասէ.

Ո՛չ. Այլ դուք եւ ա՛լ երկեայք, էք ի ոչ յոյսացեալ. ապաքէն ծով գովեցէք զԵհովա էմ. յաճ յոյսացայ՝ և ա՛լ երկեայք, էք ոչ յոյսացեալ ինձ։

Որովհետև թշնամիք դաւեթի առաւելապէս ի պատուոյ տունքէական խնդրելին զնա՝ և ոչ այնչափ ի գիշերի, յայն սակս թողեալ զդիշերն՝ զարիւն և եթէ յիշեսցէ զնովաւ.

Այլ դուք եւ ա՛լ երկեայք, էք ի ոչ յոյսացեալ։ Այսչափն թէ ոչ երկեայք ի թշնամեացդ իմոց՝ որք զկեա իմ սկզբնի ի տունքէական. զի պահէ զնա ոչ, և փրկէ ի ձեռաց նոցա, վասն զի ի նա յուսացայ։ Այսքան է աստ բառիւս ի դաւեթ՝ խնամալ զայսմանէ լինել անձին. զի որ յայսմանէ է՝ ի տիւ օրինակի. և ըստ այսմ կամի ասել. ի յայսմանէ լինել իմում առ թշնամիս իմ, կամ՝ ի գիտել թշնամեաց իմոց՝ թէ ուր է ցեմ, և զինչ առնեմ, ոչ երկեայք. զի ոչ կարեն առնել ինչ, վասն զի ես յաճ եմ ապաւինեալ։

Յարդյապէս յորժամ փորձութիւնք յայսմանէ լինին իքո ի տունքէան՝ ոչ են այնչափ երկիւղալի, այլ փառաւելի յուսալով յաճ. կամ ըստ լատ. յորժամ մարդս կայ ի տունքէան այսինքն ի լուսաւորութեան մտաց և ի խաղաղութեան հոգւոյ կամ ի տիւ շնորհացն այ, և օրինաց նորա, աներկիւղ և հանգիստ եմ ասել, և յաճ այնման քաղցրանայ. և ի նա լեալ ապաստան ցնծայ ի գովութեան նորա. և այդ ակնարկելով կելոյ յարէ զկնի և ասէ.

Զի պատճառ գովեցէք զնա էք. Այսանօր բառդ բան նշանակէ զնաստուածն զայն, զոր արար ինձ քեզ բանով սամուէլի յասելն. * ինդրեսցէ տէր այր ըստ սրտի ,, իւրում, և տացէ զնա պատուիրանաւ իշխան ի վե- ,, րայ ժողովրդեան իւրոյ ‖ (ա. թագ". ԺԳ. 14.)

և զայս ասաց սամուէլ վասն դաւթի. զի յետ այնր գնաց, և էօծ նա զդաւիթ թագաւոր իսրայէլի. (որպես գրի. ի ա. թագ. ժղ. 13:) Լուրդ գնաւթր դաւիթ, թէ ոչ ի զուր եղև այն խոստումն ըստ որոյ օծաւ թագաւոր. և զի այս խոստումն ինքեան եղև, վասն այնորիկ կոչէ զայն, իմ բան. յասելն ասուածով գովեցեալ էնմ. այսինքն ապաւինեալ յԱստ, և աստուածով զօրանալով և յոյժ օժանդակելով գովեցից զբանն զայն կամ զխոստումն զայն, որ եղև յոյժ առ իս. որ է ասել. ի լրանալ խոստմանն՝ որ եղև առ իս, աստուածով պարծեցայց, և զնոյ գոհացայց վասն կատարելոյ նորա զխոստումն իւր առ իս:

Լ.Հլեզգ Լս հնար է ակնհար զայս բան հայելով ի համարն 9. յոր միա բայդ գոՀչ՝ դնի փոխանակ գովեցեալ առնելոյ. որպես թէ ասէր. գովելի յուսից զբանս իմ՝ ոչ լինս, այլ աստուածով. զի նովաւ խոսիմ. և ազդեալ ի նմանէ գրեմ, զոր գրեմ: Լ.Ե կամ այլազգ Լս. այսինքն թէ յաղաւթել իմում աստուածով գովելոցն արարից զբանս իմ. այսինքն, խոսեցայց զբանս գովելոցն առ Ած, և նովաւ օրհնեցից զնա. կամ ըստ լամբ." օրհնեցից զԱծ բանիւք գովելոցն, և ծնացից անբիկիւղ, եդեալ զայս իմ ի նա: Լ.Ե առ այս յարէ:

Ղ՚ած յ...այ՝ և ոչ եղիցայ, զի արասցէ ինձ մարդ: Կամ ի սակ, ես գիտելով զխոստումն նմ, զայս իմ եդեալ եմ յԱծ. և եթէ նա է իմ պաշտպան և օգնական, ո՞ր ի մարդկանէ կարիցէ ընդդէմ ելնել նմա՝ յաւիտեանէ զիս ի ձեռաց նորա և կորուսանել. վասն որոյ և ոչ երկեայց քնաւ: Կամ թէ զիարդ վարեցին թշնամիք ընդդէմ նորա, յայտ առնէ ի յաջորդ համարն ասելով.

Ո այս բան (որպես յայտնի տեսանի) զաստուածանց ասէ դաւիթ. որով ցուցանել կամի, թէ զոր գործէին նորա ընդդէմ իւր, էր ի չարութենէ սրտից նոցա. զի նաև զայտնի խոստումն արարեալ նմա և զայտնի ձշմարտութենէ բանից նորա՝ միշտ արհամար-

հիւն, և յատեալսն իւրեանց չարիս հաստատեալ
կամ ի նմա. վասն որոյ ասէ՝

Օ տիրանալոյ ջանս իմ անարգելոյն: Կատարեալ բան՝ կրկնա-
կի կարէ առեալ լինել ասած. մի՝ փոխանակ խոստ-
մանն՝ որ եղև առ յիւր՝ ի դաւթի, զորմէ խօսեցաք՝ ի
նախընթաց հատուցն. և զի զայս արհամարհիւն
թշնամիք նորա, և ոչ կամիւն տեսանել զլռութիւն այնր
խոստման, վասն այսորիկ ասէ թէ զօրհնանալոյ
անարդելոյն զանուն իմ զայս. և խորհիւն խափանել
զայն: Այրկրորդ՝ որ հաւանականագոյն է, բառդ
բան՝ առեալ լինի աստ փոխանակ ի և իւր բարի խօս-
սից. և ըստ այսմ կամի ասել. զոր ինչ և ասէի,
եթէ բան գովութեան էր, և եթէ բան խրատու, նո-
քա թէ և տեսանիւն՝ թէ ուղիղ է զոր ասեմ, բայց
քանզի վառեալ էին բոցով տառապանաց, անարդիւն,
այսինքն արհամարհանօք մերժիւն զայն իմ բան. և
եթէ լսելին զինեն կամ՝ ի վերայ իմ բան ինչ բարի,
պախարակիւն. և զայս ասէ առնելին զօրհնանալոյ,
այսինքն միշտ կամ զօրն ողջոյն և յամենայնի. որով
ցուցանի թէ չարութիւն առնելին. վասն զի միշտ ար-
համարհել զբանս այլոց՝ ոչ կարէ լինել, բայց եթէ
ասասի, զի կամ միշտ չարիք են ի բերան խօսողին,
և կամ զի միշտ չարիք են ի սիրտ լսողին. և զի ոչ
միշտ չարիք էին ի բերան դաւթի, ապա միշտ չա-
րիք էին ի սիրտ լսողացն. և նովին չարութիւն անար-
գելին զբան նորա: Այս զայս նեղբերն չարուն նոցա
ցուցանի. և ի չար խորհրդոյ նոցին ասելով՝

Օ ինչո՞ էին խորհուրդք նոցա ի լերանն: Այսինքն թէ,
որպէս չար համարելին զբանս իմ և անարդելին, այն-
պէս և չար խորհելին զինեն. կամ թէ ուրեք բարի
խորհելին զինեն, այլ չար: Այր բառդ խորհուրդ՝ կրկնի
նշանակութիւնք դնի. մի՝ ըստ նեղբերն մատածութեց,
որով չարիս խորհելին նոքա ի միտս իւրեանց. և մի
ևս՝ ըստ արտաքին խորհրդածութեց, իբր զի ի ժո-
ղովել ուրեք ի միասին թշնամեաց նորա՝ խորհուրդ
ի մէջ առնուին՝ չարիս հաստատել նմա. և զոր
խորհելին՝ չանային գործով կատարել: Այս զայս որ-
շահի ևս կամելով յայտնել, յարել զինեն և ասէ՝

Ե. Պանդխտ եղէքն, և նախանձայոյզ ընկերացն. Նուա
գաբշտարբ էմամ սպասեցցեն, որպէս և սպասէին
անյին էմայ։

Ա. Այս քանիք ըստ պարզ շարադասութեանն բառիցն ցու
ցանեն զթշնամեացն դաւել, իբր զի
որպէս նոքա պանդխտիւք զդաւիթ յերկրէ
իւրմէ, և ետուն նմա թաքթաքուր ընկերել, այսինքն
գաղտագողի դեգերել աստ և անդ, սոյնպէս պատա
հեսցի և ինքեանց ի պատիժ չարութեանն իւրեանց։
Այս սակայն ըստ նեղբին նշանակութեանն բառիցն այս
բան ոչ զթշնամեացն թշնամեացն դաւեսցի, այլ
զչարութեան նոցա յայտնէ։ Այս առ բարւոք խմնաւոյց
զայս՝ պարտ է գիտել, զի բազում եղէքն, ընկերացն,
եւ. որք դնին աստ յապառնի ժամանակի, ունին
զզօրութեան անցելոյ. որպէս թէ ասէր. պանդխտիւք
լինէիմ, և թաքթաքուր ընկերէին, և գաբշտարբ
խմամ սպասէին. յայս մեզ առեալ խօսի աստ մար
գարէն և ասէ։

Պանդխտ եղէքն։ Կամի ասել. թշնամիք իմ որք
յառաջն ընտանութեանն վարէին ընդ իս, և բարեկա
մութեանն կային առ իս, ոչ կան այնպէս, այլ պանդխ
տացան, այսինքն օտարացան և օտարանան կինէն. որ
է ասել. հեռանայոյլ կինէն իբրև օտար վարեցան,
և վարին. կամ ընդ հակառակն՝ ատելութեանն պանդխտիւք
նման առ իս իբր բարեկամ. և մերձենալ կինէն՝ որո
գայթ լարեն ինձ, և գաղտնի գարանին կորուսանել
զիս. և առ այս յարէ։

Ընկերացն։ Ի թաքթաքուր ընկերէին է
թաքելոյ միանգամայն և երեւելով ընկերել, կամ գաղ
տագողի դեգերել։ Ոմանք միտ ի ձեռագիր ածա
նուցն ինչ գրի * թաքթաքունք ընկերացին ։ Այս
որոյ սիմէոնոս դնէ * գաղտ ընկերին ։ Կամի ասել.
թշնամիք իմ գողուղի վարէին և վարին. ծածկին և
երևին. գան և գնան առ միմեանս, և խորհին յիւրա
եանս, զի արկցեն զիս յորոգայթ։ Առ զայս յայտնէ
յաջորդ բանիւն ասելով։

Գաբշտարբ էմամ սպասեցցեն. (կամ որպէս դնի
յայլ քանի մի ձեռագիրս, սպասէին ըստ սիմէոնոսի,

Ա.

կամ սպասէցին)։ Այսպէս թէ Հնամիք իմ սպասէին՝ զի սահեցուսցեն զդարշապարս ոտից իմոց յորոգայթն իւրեանց . կամ շրջէին զկին Հանապարհաց իմոց , զի կապացեն որսալ զիս . որ է ասել . սպասէին՝ զի գըտցեն զայրպիսի առիթ՝ որով կարիցեն ըմբռնել և կորուսանել զիս ։

Ո՞վ այս բան մարթի է փոխանակել և իմանալ . զի որովհետև գարշապարն է՝ յոր աւարտի յետին մասն ոտից , կարէ յօրինակ բերել մեզ , յոր աւարտի յետին մասն կենաց . և ըստ այսմ սպասէցն գարշապարի նշանակէ և սպասել մեզ ։ Այլ զայս գրեթէ մեկնաբար առաջի դնէ մարգարէն յաջորդ բանիւն ասելով ։

Որպէս և սպասէին (իակ) անձն իմ։ Որ դնելով զառադ որպէս՝ կամի ասել . Թէ նամիք իմ որք սպասէին որկա նել զիս յորոգայթ , արդէն սպասել կային կորուսանել զանձն իմ . կամ Թէ ի սպասել նոցա գարշապարի իմում , նովին իսկ սպասէին՝ զի կորուսցեն զիս , կամ նովին իսկ ինդրէին կորուսանել ոչ միայն զմարմին իմ , այլ և զանձն իմ , այսինքն զՀոգի իմ . զի բառս անձն՝ դնի և փոխանակ Հոգւոյ . որպէս և յայտ է ։

Այս ամենայն զորս ասաց մարգարէն ի հնգեսին Համարտ , ուղղակի ասացեալ լինին և ի բերանոյն քան առ Հայր , բան որում Թէ նամիք նորա կամէին կոխել զնա , այսինքն նուաձել և կորուսանել . և ի մարտնչելն ընդ նմա կամին բարձրանալ ի վերայ նորա ։ Այս և զօրհնանապազ անարգելին զնան նորա , և սպասէին սպանանել զնա ։ Այլ զոր միանգամ կամեցան և խորհեցան ընդդէմ նորա , այն ամենայն եկն ի վերայ նոցա , զորոց խօսի մարգարէն գնի ի դէմս Թէ նամեաց իւրոց , յասելն ։

Ը. Պրպտեա առ ընկէր ներքինեաց պատա. բարեխոսէ զիս վերջս հնազանդեցուցանէ ։

Ի Թէ նամանալ սաւառնայ և արանց նորա և այլոց բազմաց ընդ դաւթայ , Թէպէտ և գիտէին ժողովուրդքն Թէ անմեղ է դաւիթ և ընտրեալ է ի յին Թագաւորէ ի վերայ իւրեանց , բայց առ հա

Ձոյանաղոյ յաչս սատուղոյ, և առ չարուքեն իւրեանց ինքեանք և զարձան յատելուքեն ընդդէմ նորա, և հաշտեցին զնա ընդ սատուղեանց։

Ա.յլ քանզի ասէ զատուղեանսն խորտակեաց, և զժողովուրդն էարկ ընդ իշխանութեամբ դաւթի, ի սոսկին հայելով խօսի նախ զխորտակմանէ սատուղեանցն, և ասէ։

Որպէս առ ունկն ներծնեցես զնոսա։ Ա.յսինքն իբրև զնչինչ լերես և թողես զնոսա ի ձեռաց քոց, որով և կորիցեն նոքա, և եղիցին որպէս թէ ոչ էին եղեալ։ Այլ ի քառնիլ նոցա շարժեաց ասէ զսիրտ ժողովրդեանն հնազանդիլ դաւթի. և զայս յայտ առնէ յաջորդ բանիւն ասելով՝

Ի.նքեանք պիղծեսցեն ընդպղծեցոսցես։ Ա.յսինքն թէ զժողովուրդս խորայելի հնազանդեցուսցես ինձ թագաւորեցուցանելով զնա ի վերայ նոցա. և զայս ասէ արասցես բարւովքէ. վասն զի թէպէտ և արհամարհեցին նոքա զնա, բայց դու ի բարկանալդ ի վերայ թշնամեաց խնդ, այսպիսի ինչ արարեր՝ մինչև ստիպել ժողովրդեան կամայ և ակամայ ընտրել զնա, և հնազանդիլ ինձ։

Ա.յս բան է յայտնի գուշակութեամբ արհամարհութեամբ հրէից և ընտրութեամբ հեթանոսաց. զի ի հալածել հրէից զտէրն մեր, ամ մերժեաց զնոսա, և հնազանդեցոյց նմա զհեթանոս, և արար զնոսա ժողովուրդ սեպհական։

Ա.ստ լսեմք "։ ամ իբրև զոչինչ մերժէ ի մէնք զայր դնա զտիեերիմ թշնամին մեր, և զժողովուրդս՝ այսինքն զամենայն զօրութիւնս հոգւոյն, նա և զկիրս, որք հնազանդելին դիւաց, հնազանդեցուցանէ հոգւոյն։ Օ այս եդեալ մարգարէին՝ առաջի առնել զհաստատութիւնէ յուսոյն իւրոյ՝ զոր ունէր առ ամ, և պատաստելով առ նա՝ ասէ,

Է. Ա.ճ պիեանս իմ պահեսցէ տէր. եթէ զարթասաս իմ առաջի ս, որպէս խոստացար դու ինչ։

Աեանքն յորեքկին առաեալ լինի. մի՝ փոխանակ կենդանական գոյութե, որով կեայ կենդանի։ Յերկրորդ՝

փոխանակ բնական գործողութեանն կենաց։ Երբորդ՝ փոխանակ պատճառի կենաց, այսինքն փոխանակ՝ այնը՝ որ տայ զկեանս։ Չորրորդ՝ փոխանակ այնը զորս առնէ կամ կրէ մարդ՝ ի կեանս իւր, կամ փոխանակ օրսիսութեանն կենաց, կամ փոխանակ ընթացից կենաց. ըստ այսմ յետին նշանակութեանն առեալ լինի ասա բառդ կեանդ՝ յասէին։

Ա՛ջ՝ ընդ այն էմ պատճէշ տէղ։ Ասի բայդ պատճէշ՝ թէպէտ և յատաւնին դնի, բայց իմացեալ լինի ոչ միայն յատաւնին, այլև յանցեալ. որպէս դնի և յընտիր ձեռագրի միում, և՝ ի մէկին լսմբ", և՝ ի բազում օրինակս եօթանասնից։ Այլ ըստ այսմ առեալ՝ կամի ասել. պատճեցի՝ ի սաղմոսի ասա և պատճեցից քեզ շաձ իմ, և յայտնի առաջի քո եղից զընթացս կենաց իմոց, զվարարանգութիւնս իմ, զառաքարարհիկ լինելս իմ, և զտառապանս՝ զորս կրեմ՝ ի թշնամեաց իմոց։ Իսկ թէ զիարդ դներ առաջի՝ յայտ առնէ ասելով։

Ա՛դէհ պբպասաս էմ առաջէ տ։ Արգասիս իբրև զմիւսն արարեալ զարտասուս՝ ի նոյն թաւամախ զգան իւր իբրև զդրիչ, և ասէ. արտասուօք զբեղից և պատմեցից զանցս կենաց իմոց. և զնոյն զայն արտասուս իմ մատուցից առաջի քո. զի Հայելովյայն՝ ողորմեացես ինձ։ Ա՛րթէ և ասա արտասուօք իմս. նաև և զկեանս արտասուալիս. կամ զայնպիսի վիշտս, զորս արտասուօք լինի վճարել. և ըստ այսմ կամի ասել. յայտնեցից առաջի քոյ զցաւալի կեանս և զողբալի վիճակս իմ, զի տեսեալ զտառապանս իմ գըթասցես՝ ի վերայ իմ. և արասցես առ իս ըստ խոստմանն քում։

Ա՛յս եղանակ բանի յասէին՝ եղից զարտասուս իմ առաջի՝ կարէ հայիլ յայն՝ զոր սովոր էին առնել հեթանոսք. իբրզի յառաւելն լալ նոցա՝ ի վերայ մեռելոյ կամ՝ ի վերայ թշուառութեան՝ ամիսոփելին՝ ի շէշ զարտասուս իւրեանց, և առեալ՝ ի մէհեան՝ դնէին զայն առաջի կուռց որպէս զի մխիթարեացին, կամ նպաստաւորեացին։ Ասա այնու և դասին զարտասուս աչացն ամիսոփեալ՝ ի սիրտ իւր իբր՝ ի շէշ՝ դնել առաջի՝ այ՝ զի գոցէ՝ ի նմանէ զմխիթարութիւն

և զողըմմալե, ըլ խոստման նորին. և առ այսյաքէ։
Որչէս խոստացար դու ինչ։ Այս բան յերես ակնարկէ.
մի՝ ի դառնալ զողըմմալեն և զփրկութեն. որպէս
թէ ասէր. լսելով յինէն զանցս կենաց իմոյ՝ ողոր-
մեացիս ինձ. որպէս խոստացար՝ թէ ընդ քեզ եղիցի,
ըստ։ Այրերդ՝ ի բան նախընթաց համարին. որպէս
թէ եղեալ էր. մերժեացես զինամիս իմ և հնա-
զանդեցուցես ինձ զժողովուրդս, որպէս խոստացար
ինձ։ Այրերդ՝ ի բան յաջորդ համարոյն. որով կամի
ասել. որպէս խոստացար ինձ պահել զիս ի թշնա-
մեաց իմոց՝ արա և այժմ ըստ խոստման քում։
Վարձայատիս այս բան հայի յայսպիսի անձն՝ որ ձգմա-
բիտ զղջմամբ պատմէ առաքի ոմն ի խորհուրդ խոս-
տովանութեանն զմեղս իւր, խոստնեալ ի նմին կենդա-
նի արտասուս, ապն ունելով զառնալ զողոքելի,
ըստ որում խոստացեալ է ածել թողուլ զմեղս այսպի-
սեաց։ Ապացի * կենդանի արտասուս ։ զի բա-
զումք կան՝ որք յորդի արտասուօք լան ի վերայ մե-
ղաց իւրեանց. բայց չունին հաստատութիւն կամաց
յետս կալոյ ի մեղաց։ Չորդ անձրև ոչինչ օգտ
յանտառս՝ եթէ չիցէ պարարտ՝ բայց եթէ ի բուսու-
ցանել զսունկս։ Վազումք ի մատչին ի խորհուրդ
խոստովանութեանն՝ հայեցեալ ի խայտառակ քո լան՝
թէ զինչդ մեղօք իւրեանց ի խաչ հանին զնա. իսկ
զոր խնդրէ ի նոցանէ քո՝ զայն ոչ տան. արդ քո
խնդրէ զհաստատութիւն կամաց ի մեզանէ. և ստ-
քա լան միայն, և խնայեն տալ զոր խնդրէ. նման
են սոքա այնպիսի մանկան, որ ի տեսանելն զմայր
իւր վիրաւորեալ կամ տանջեալ՝ լայ. բայց ի խնդ-
րել մօրն ի նմանէ պինձորն՝ զոր ունի ի ձեռին՝
ոչ տայ։ Այց և տուր. լայց ի վերայ մեզաց, և տուր
զոր խնդրէ քեզ. պատմեսն նմա զկենաս քո. դիր և
զարտասուս քո առաջի նորա. և զոր նա խնդրէ մի
զլանար. հաստատութիւն առաջադրեա՝ ոչ ևս վիրա-
ւորել զնա մեզօք քո ։ Այթէ ոչ թողուցուն քեզ
սխալք և դևք կատարել զյառաջադրութիւն քո, կաս-
դա առ նա, և նա ընկճեսցէ և յամօթ արասցէ զնո-
սա. ըստ որում ցուցանէ հետևեալ բանդ զոր ասէ
մարգարէն։

Ը· Պաբիլեն ընդունի իմ յեաս խրեանց· յաւուր յորում
խաբեացէք առ ինձ·

Ի դիմել Թէոմացաց ի վերայ ուրուք, եթէ տեսցեն
Թէ նա պաշտպանեալ լինի ի հզօրագունէ քան զինքեանս, կամ ապաւինի յայսպիսի տեղի՝ ուր այնինչ կարեն առնել՝ յամօթ լինելոյ յետս դառնան· և զի այսպէս պատահեցաւ Թէոմացաց դաւեի, սմին իրի ասէ·

Պաբիլեն ընդունի իմ յեաս խրեանց· յաւուր յորում խաբեացէք առ ինձ· Կարդալ առ նա՝ զնա և ընդդէմ Թէոմացաց· և ապաւինելն ի նա՝ պարիսպ ամրութեան· որպէս յայտնի տեսանի այս ի կարդալն դաւեի առ նա· Ուր ապառնին դնելով դաւեի զգանձն՝ զանգեաղն ևս ասյ իմանալ· որպէս Թէ ասէր· ի սմին գՀետ իմ՝ Թէոմացաց իմոյ, կարդացէք առ քեզ· և ի պաշտպանել քո զնա՝ Թէոմաքի իմ յամօթ եղեն· և ապն ուՀետ, Թէ միշտ արացես այսպէս· իբր զի յորում աւուր դիմեցից առ քեզ պաղատանօք՝ ապաւէն և պաշտպան լիցիս ինձ· և Թէոմաքի իմ տեսեալ զպաշտպանութիւն քո՝ դարձցին յետս գլխակոր և ամօթալից, կամ բառդ խոստանաս՝ որ դնի գինի, յուցանել զառնալ նոցա ի Ճանապարհ իւրեանց· որպէս Թէ եդեալ էր, դարձցին ընդ այն՝ ընդ որ եկին·

Այս ամենայն զանք որք ասացան զԹէոմացաց դաւեի՝ բարեյապէս Հայկն ի գէս, որք միշտ ջանան գնել զմարդիկ, խորՀուրդ չար արկանել՝ ի միտս նոցա և յաղեել նոցա, և և գարանիլ Ճանապարհայ նոցա, և գարշապարի մահուան նոցին· Այլոյ ոչք ապաւինին առ նա՝ զերծանին ի Հնարից նոցա գիւրաւ· զի նոքա չունին իշխանութիւն առնել չար ումիք՝ Եթէ ոչ ի Թոյլ տալոյն նոյ· ապա Եթէ պաշտպան լիցի նոցա նա, զինչ և կարիցեն առնել, քայց Եթէ ամօթալից դառնալ յետս· զայս ամենայն եզեալ դաւեի Հեռևեցուցանէ և ասէ·

ՃԲ. Ահա ծանեայ ընչ աշխ իմ եմ դու. զաշխ օրհնեցից ի բանս իմ. և զբեր գովեցից ի խօսս իմ. յաշխ յոմանայ և ոչ երկնչայց, զի՞ արասցէ ինէ մարդ։

Ստանալոր բառդ ծանեայ ոչ Հայի ի նորոգ ծանօթանալ, այլ ի հաստատուլեն ծանօթանալեն երկուց ի ձեռն փորձոյ. զոր օրինակ ի հանապազ ումիք՝ թէ սիրէ զնա թագաւորն, եթէ զփորձ նորա ևս փորձեսցէ, այս փորձ ոչ սակ նորոգ հանապազումն, այլ լինի հաստատուլեն հանապազման նորա. ըստ սմին օրինակի գիտէր դաւիթ՝ թէ տէր է աշխ իւր և պաշտպան իւր. բայց տեսեալ և զփորձ պաշտպանուլեն նորա, հաստատիւր ի գիտուլեէ, վասն որոյ և ասէր։

Ահա ծանեայ զի աշխ իմ եմ դու։ Ուր բառդ ահա՝ Հայէ ի ցոյց խնամոյն ոյ կամ գործոց պաշտպանուլեն նորա, որով ազատեաց նա զդաւիթ ի ձեռաց Թշնամեացդ իւրոց, և ի բազում իրս եցոյց նմա զայցելուլեն իւր. և հուսկ յետոյ հնազանդեցոյց նմա զժողովուրդս։ Հայասա ասելոյն ասէ ծանեայ՝ զի աշխ իմ էս դու։

Ի սմին բանի բայդ ես՝ ոչ ցուցանէ սուտ զլինելն ոյ աշխ դաւիթ, այլ զլինելն ոյ՝ աշխ պաշտպանիչ դաւիթ. որպէս թէ ասէր. յայսմ ահա ծանեայ՝ զի դու որ ես Հշմարիտ աշխ, դու ինքն ես պաշտպան իմ. զի լսելով ինձ և պաշտպանելով զիս, այնու ցուցեր զլինելդ քո իմ աշխ և իմ պաշտպան. կամ որպէս է. դու որ աշխ իմ ես՝ պաշտպանուլեէ քով յայնմի ցուցեր թէ դու ինքն ես իմ աշխ. վասն որոյ և ի գոհուլեէ մեծ տուեալ ասէ։

Օ աշխ օրհնեցից ի բանս իմ, և զբեր գովեցից ի խօսս իմ։ Ի յսինքն օրհնեցից զաշխ բանիւք սաղմոսաց, և գոհ վեցից զբեր՝ պատմելով զբանս նորա։ Այս և զօրհնուլեն իմ եդից ի բանս իրում. ի սկաւառակս, և զդուլեն իմ եդից ի խօսս իրում. ի սկսեալս. և մնասցից առաջի ոյ։

Այս բան կարի մեկնիլ և ըստ մտաց 3 համարոյն. ուր ասաց. * աստուածով գովեցից զբանս իմ ||։ Այս ըստ այսմ բանիւք և խօսիւք խնդացեալ լինին խոստ-

մունքն՝ զորս արար ՅՀՅ առ դաւիթ, յոր միտս կամի ասել. որովհետև ՅՀՅ ըստ խոստմանց իւրոց պատրաստեաց զիս, և ըստ խօսելոյ իւրոյ առ իս՝ հանդերձ ձեռաւ ի հաստատել զիս ի յանդորրութիւն թագաւորութիւն, յայս խոստմունս նորա, կամ՝ ի լրանալ այսց խոստմանց՝ օրհնեցից զնա։

Յառաջին հատուած այսր բանի դնէ օրհնեցից զՅՀՅ. և յերկրորդն գովեցից զտէր. երկոքին և թէպէտ ի նոյն միտս դնին, և ցուցանեն զառաւելութիւն զեղծմանն սրտի մարգարէին, քանզի հայեցեալ ի գանազանութիւն բառիցդ՝ մնքեմ ել առաջինն հայի ի բարութիւնն ՅՀՅ, որում հաղորդ գտանելով մարգարէին օրհնէ զնա յանաւհմանն բարութ նորա. իսկ երկրորդն հայի յարդարութիւնն ՅՀՅ՝ որով պաշտպանեալ լինելով ի նմանէ՝ գովէ զնա երբեմն զտէր արդար յամենայնի. վասն որոյ և զամենայն գնեանս իւր ի նա յանձն առնէ, ասելով։

Յաճ յոտացայ՝ և ահ երկնչայ՝ ղի ոչ ասիցէ ինչ մարդ։ Օ այս մանկ տէս ի համարն յ. զի ամենևին նոյն է։ Իսկ կրկնութիւն քանին ցուցանէ զառաւելութիւն հաստատութիւն յոտից մարգարէին և զմեծութիւն աներկեւանութ սրտի նորա։ Այս քանզի որ միանգամ յոտանալով յաճ կայ աներկեւան, պարտի և յիւրմէ առնել ինչ. զոյն զայս ևս ի մէջ բերէ մարգարէն ասելով։

Ճ. Յանկն են ոտքք իմ, աղբ տայ տէր աճ օրհնութիւն։

Այս է յայտ թէ ինքն ահ ուխտեալ իւրէ դաւիթ ընծայել ինչ ՅՀՅ. երևի թէ ի վտանգին անդ առաջի անգուսոյ ի սրտի իւրում ուխտեաց տալ ՅՀՅ ուղերձ ինչ, և կամ նուիրել նմա պատարագս օրհնութիւն, այսինքն սաղմոս և օրհնութիւն. ի սոսկ թերևս հայելով ասէ։

Յանկն են ոտքք իմ. աղբ տայ տէր աճ օրհնութիւն։ Այսինքն թէ որպէս ես ինձէն ուխտեցի մատուցանել քեզ պատարագս, նոյնպէս գիտելով թէ յինէն են այն ուխտք, և ահ յայնց զոր ուխտեցի, զնոյն տաց քեզ ՅՀՅ իմ. և ի տալն օրհնեցից զքեզ. կամ՝ որ նոյն է՝ զուխտսն որք եղեն քեզ յինէն՝ ահ եմ մե-

ռացեալ, այլ միշտ ունիմ ի մտի, զոր և կատարեցից
հանդերձ օրհնութեամբ։

Ա.Յս քան ուղղակի ասի ի բերանոյն քոմ. որ ոչ ի
խնդրոյ մերմէ և ոչ յայտնացաց մերոց, այլ յիւրմէ
կամեցաւ և ուխտեաց հաշտեցուցանել զմեզ ընդ Հօր,
և ժամանեցուցանել ի փրկութեն յաւիտենական. և
զայս ուխտ՝ զոր արար ընդ ի կատարեցն՝ մատոյց
իբրև զպատարագ օրհնութեան. ըստ որոյ ասէ. * զոր
տաց քեզ ընծ օրհնութիւն։ Օ այսոսիկ եդեալ մար-
գարէին ի մէջ բերել և զպատճառս տալոյ այսպէս
զուխտ իւր ցՅս. այն է բազմապատիկ գործք ազատու-
թեան և փրկութեան՝ զորս եցոյց նմա ընդ այլ ևս յոր
յայտ առնել ասելով։

Ժ։ Փրկեցեր զանձն իմ ի մահապանճ, զոտս իմ յարտա-
ռոաց, և զաչս իմ ի գայթակղութենէ. հաճոյ եղէց
առաջի տեառն ի լերկրին կենդանեաց։

Ա.Յս այն է՝ որ դնի ի տաղ. (ԺԸ։ 6.) և ընդ այլ
ինչ ի տոսս աւելնի, բայց եթէ ի բայդ ֆրկեց. որ
անդ դնի լերբորդ դէմն ասելով * փրկեաց զանձն իմ
ի մահուանէ։ իսկ աստ դնի լերկրորդ դէմն յա-
սելն։

փրկեցեր զանձն իմ ի մահապանճ։ Ա.յսինքն փրկեցեր զիս
ի վտանգէ անտի մահու՝ յոր ըմբռնեցայ ի հալա-
ծելս իմ ի սուտազայ և յաբեւաղտմայ. կամ յոր պա-
շարեցայ առաջի անբուսայ. փրկեցեր նաև ի մահ-
ուանէ անտի՝ զոր սպառնային սուտազ. և ս ի մա-
հուանէ մեռոց։ Այս զի յայնպիսի վտանգս արտասուօք
խնդրէր յիւր զազատութիւն, ասէին իբրև վասն փրկելոյ
յարտասուաց անտի ասէ։

Օ։ ոտս իմ ի գայթակղութենէ։ Ա.յսինքն փրկեցեր զոտս իմ ի
սատանայէ երկիւղէ և ի դառն տրտմութենէ յորում
լայի արտասուօք, և զազատութեն խնդրեի։ Այսպէս
ասա և զփրկութենէ ոտիցն՝ ասէ։

Օ։ ոտս իմ ի գայթակղութենէ։ Ա.յսինքն զերծուցեր զոտս
իմ, կամ պահեցեր զոտս իմ, զի մի սահեսցի յորո-
գայթակղութենէ թշնամեացն. որ է ասել. անվտանգ զերծու-

ցեր զիս, և ոչ եւսուր ինձ թոյլ անկանիլ ի ձեռս թշնամեաց իմոց. և կամ զարձեալ պահեցեր զիս՝ զի մի գլորեցայց ի մեղս և յանօրէնութիւն, կամ յաներեսս արհնչեղութիւն։ ՚Ո այսոսիկ եգեալ մտո-գարէին՝ առաջի առնել այժմ և զՀեռևուէնի այսր փրկութիւն ասելով։

՚Ահաւադիկ եղեալ առաջի ես յերերին կենդանեաց։ Կամի ասել. ահն ունիմ թէ յետ փրկելոյ զիս ոչ յայտնի ամենայնիւ և չսյլոց վտանգից, ժամանեցուսցէ զիս ի հայրենիս իմ, որ է երկիր կենդանեաց. ուր զամենայն ինչ ըստ կամաց նորա վարելով և կարգաւորելով առաւել և առաւել հաճոյացայց նմա, կամ հաճոյ գտայց առաջի նորա, և ոչ իբրև զառաւղ անարգեալ։ Այս զի * որ ասաս ,, հաճոյ լինի ոչ, գասանի նոյն հաճոյ և յիմանալի ,, երկրին կենդանեաց։, որպէս գրէ մեկնիչն. այս քան կարէ հայիլ և ի հանգերձեալ կեանս, յոր միտս կամի ասել. յետ ազատելոյ իմ ի նեղութենէ այսր կենդաղոյս, ժամանեցից ի վերինն երուսաղէմ, որ է չշնորհեալ երկիր կենդանեաց. և անդ կացից հաճոյացեալ ոչ և հաճելով աստուածով յաւիտեանս յաւիտենից։

ՍԱՂՄՈՍ ՃՀ.

Պաղատանք և հայցուածք առ ՚Ած վասն գտանելոյ զողորմութիւն և զպաշտպանութիւն նորա ի ձեռս թշնամեաց իբր յատամանց գազանաց. և և գովութիւն և օրհնութիւն բարձրութեան փառացն աստուծոյ։

1 Ողորմեա ինձ ՚Ած, ողորմեա ինձ, զի ի քեզ յոյսս առի անձն իմ։ 2 Ի հովանի բեռոց քոց յոյսացայց, մինչև անցցեն անօրէնութիւնք։ 3 Կարդասիցեմ առ ՚Ած բարձրեալ, առ ՚Ած բարերար իմ։ 4 Առաքեսցէ յերկնից՝ և փրկեսցէ զիս. եդ

Ի խաւարած. Ջ ապրեսցէ. ի գազանէն արիւնապէտ. ի ձա-ղանչէն՝ զի գոհասցեալ ընծայեսցէ երբեսոց ասուղաց,

՚ի նախաբինա՝ որ խոնեին զիս։ 5 Լուացայ ես ջուրմանէ
և պշնաթուռունէ իւր. և բերէաց զնոյն իմ ՚ի վերոյ փալանաց,
զի նոքեր են խոտվելու։ 6 Ընդ որում մարդիկ ապականեն իրենց
զնոյն և նեպոյ են, և լեզուով նոցա որպես առաջ առասպէլ։
7 Խորհեալ են զոս յերկինս ես. և յամենայն երկրէ են գոտ-
ոյս։ 8 Որոգայթ պատրաստեցին ոտից իմոց. խոնարհ արարին զանձն
իմ. փորեցին առաջի իմ խորխորատ, և անկան ինքեանք ՚ի նմա։
9 Պատրաստ է սիրտ իմ ես, պատրաստ է սիրտ իմ. օրհնել և
ասպնա տալ ձեզ գոստ իմովս։ 10 Օ՚արթիկ գոստ իմ, զար-
թիկ տաղմոսով և օրհնութիւնք. և ես զարթեայց առաւօտուս։
11 Խոստովան եղից ձեզ ՚ի ծողովրդոց տէր և ասացս առա-
ջեց ձեզ յազգինս։ 12 Որ՚ես եղեն գինեւ յերկինս ողորմութեան
գոս. գինեւ յամպս ճշմարտութիւն գոս։ 13 Խորհեալ ես գոս յեր-
կինս ես. և յամենայն երկրի են գոստ գոս։

ՎՀՐՆԵԳԻՐ

՚Ի խոստաց. ի տապանէր. ՚ի գոսին աբշանաքիր. ՚ի ձա-
մանակի ի գիսուցեալ ընտրուցեալ էր յերկուսց առաքելոյ յու-
դէ անդ։

ՕՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՎԱՅՐԱԳԻՐՔ

գացես ՚ի սաղ. իդ. և յայլս, ըստ աւան-
գելոյ յառաջինն գիրս Թագ. (գլ. իդ.
և իգ. ։ Ո՚ւր վասն բառիս աբիաթարի կամ ըստ երբ՚՚.
գիտելոյ տես ՚ի վերնագրի նախորդեցս սաղմոսին, (և
՚ի սաղ. ժե։)

Ա՚յլ վասն բառիդ. Ի տապանէր. կամ ըստ երբ՚՚. ալ
թարգմանին գիտելի է. զի այս գնի և ՚ի վերնագրի այլոց
և ս երից սաղմոսաց. այսինքեան են. ծէ. ծը. և հգ։
Թակ թէ առ ինչ գնի այս բառ, և զինչ նշանակէ, սակայն-
ևիւնչ անյայտ է. սակայն վերածեն զսա ըստ այլաբանա-
կան մեկնի ՚ի յարութիւն քրիստոսի, յորում ՚ի ևս ս մարմին
նորա զտապանեցաւ. որպես թէ խոստովանի այ առ-
մարհն՝ ասել ցնա. Ի տապանէր. Սակայն վերածեն
՚ի վերնագիրսն խաչին քրիստոսի, զոր եդ պիղատոս. և ՚ի

խնդրելն քահանայից փոխել զայն՝ խիղճ մնաց նորա աղդ արար նմա ասելով մի ապականեր. վասն որոյ և ասաց զոր ինչ գրեցի գրեցի. և ոչ փոխեաց ինչ։

Ոմանք վերածեն զայս 'ի բանն յայն՝ զոր ասաց Դաւիթ. ո՛չ ապականել զօծեալն տն, այսինքն զսաւուղ, յորժամ անկաւ 'ի ձեռս իւր յայրի անդ (ա. Թագ. իդ. 7.) և 'ի կեիլա (ա. Թագ. իզ. 9.) և զի այս գործ դաւթի մեծ իմն եղև, իբրև անջնջելի յիշատակ եանց 'ի վերնագիրս. և յայս միտս վերնագիր սաղմոսիդ բացատրի այսպէս. այս սաղմոս ասացաւ իբր արձանագիր 'ի դաւթայ 'ի յիշատակ այնր, զոր ասաց նա ինքն դաւիթ. * մի հարկաներ զդա ||. կամ 'ի յիշատակ այնր՝ զոր ասաց քաւ լիցի ինձ մխել զձեռն իմ յօծեալ տն, կամ ապականել զօծեալ տն։ Այս մեկնութիւն կարէ յարմարիլ այսմ սաղմոսի, և ծէ սաղմոսին. բայց ոչ յարմարի ծը. և հդ սաղմոսաց, յորս դնի այս բառ։

Ոմանք ասեն՝ թէ զայս բառ եդ դաւիթ 'ի վերնագրի ասա վասն անձին իւրոյ. և սկսաւ այսու բառիւ ասել. * մի ապականեր (զիս, կամ զժողովուրդ քո այլ) ողորմեա ինձ ած, ողորմեա ինձ ||։ Բայց այս մեկնութիւն ոչ կարէ յարմարիլ այլոց սաղմոսաց ունողաց զայս բառ 'ի վերնագրի իւրեանց։

Ոմանք համարին՝ թէ զայս եդ դաւիթ և կամ յօրինող վերնագրիս, առ 'ի զգուշացուցանելոյ զընթերցողն, մի ամենևին փոփոխել զկարգ սաղմոսիս. կամ յաւելուլ ինչ 'ի սա, և կամ պակասեցուցանել. որպէս առնէ յովհաննէս 'ի յայտնութեան 'ի վերջն. (իբ. 18. 19.) Բայց ընդէր յայսոսիկ չորեսին սաղմոսս միայն պարտ իցէ ունել զայս զգուշութիւն և ոչ յայլս։ Արդարն դնէ ընդ այլոց ոմանց թէ յետ որոյ բարեկամք եղեկիայ գտին զպէսպէս սաղմոսս, և գրեցին 'ի նմա 'ի կատարած, յոմանս և եդին մի ապականեր։

Ոմանք հաւանական համարին ասել, թէ կայր առ եբրայեցիս երգ ինչ՝ որ սկսանէր բառիւդ մի ապականէր. և որ ինչ երգեալ լինէր եղանակաւ նորին, ասիւր, երգի որպէս մի ապականեր, և յայս միտս ասեն դնի 'ի վերնագրի ասա մի ապականերն, որպէս

թէ եդեալ էր. այս սաղմոս է արձանագիր դաւթի. որ մինչև ի վերջն երդի օրպէս զերդն մի ապակա-
նեբր։

Ամենք ևս համարին՝ թէ այս բառէ անուն նուագա-
բանի կամ երգանակի, որով և միտ բանի վերնագրիդ
բացատրի այսպէս. այս սաղմոս մինչև ի վերջն եր-
գի այնու նուագարանաւ կամ այնու երգանակաւ՝ որ
կոչի մի ապականեբր. (տես ի նեբրած. գլ. ծ.) Իսկ
դիտումն սաղմոսիս է խնդրել յիշ զողորմութիւն վասն
փրկելոյ ի բռնութենէ թշնամեաց, և գոհանալ զնոյ
վասն այնր փրկութեան. և փառաւորել զնա. որպէս
տեսցի ի միևնութենէ։

Ե Լ. ՛Ն

ԻԸ. Աղաչեմ ինչ ես՝ աղաչեմ ինչ. զի ի տէր յոյսացաւ անձն
իմ։

ՄԵՆՈՒԹԻՒՆ

Այլ ոք բատ օրինի կարէ ասել առ ինձ, ողորմեա ինձ,
բայց եթէ նա՝ որ ճանաչէ զթշուառութիւն իւր, և
յուսոյ ի բարութիւնն այլ. զի թէ սոսկ զթշուառութիւն
իւր ծանիցէ, թէպէտ և տեսանէ զինչն կարօտ, բայց
ոչ համարձակի խնդրել զողորմութիւն, եթէ ոչ ունիցի և յոյս առ բարուն այնր՝ որ ողորմի։ Այլ զի եաես դաւիթ զինչն անկեալ ի թշուառութիւն մեծ ի հալա-
ծանաց անտի սաւուղայ, և զյոյս իւր եդ յնմ, աղա-
ղակէ առա և ասէ։

Աղաչեմ ինչ ես՝ աղաչեմ ինչ. զի ի տէր յոյսացաւ անձն իմ։
Որպէս թէ ասէր. յանհնարինն նեղութենէ եմ, և ոչ
ունիմ ինձ զոք ձեռնտու. միայն ի քեզ եմ յուսա-
ցեալ, դու ողորմեա ինձ։ Իսկ կրկնութիւն բանին՝ յայլ
և այլ ինչ ակնարկէ. մի՝ ի խնդրել զկրկին փրկութիւն
անձին իւրոյ. (զորմէ տես ի համարս ՟ը.) Այրիացեալ
՝ի զօրաւոր առնել զաղաչանս իւր, և այնու գթալի
ցուցանել զանձն առաջի նմա, որպէս թէ ասէր. ողորմեա
ինձ վշտացելոյս աղաչեմ. ողորմեա ինձ տառապելոյս։

Երբորդ՝ յողորմիլ փութով. որպէս Թէ ասէր. ողորմեա՛ ինձ ՚ած, վաղվաղակի ողորմեա՛ ինձ, Ջորրորդ ՚ի ցուցանել զառաւելուն տառապանաց և սրտմտե՛ իւրոյ. որպէս Թէ ասէր. ողորմեա՛ ինձ ՚ած. ողորմեա՛ ինձ մեծապէս զի մեծ է անձկութե՛ իմ. ՚Վնգերորդ ՚ի յայտարարութե՛ միայնոյ յուսոյ իւրոյ. երբ զի միայն չ՚ած եդ զյոյս իւր, և ո՛չ յայլ ո՛ք. և ըստ այսմ կա՛ մի ասել. ողորմեա՛ ինձ ՚ած՝ զի ՚ի քե՛զ յուսացայ, և ո՛չ յայլս զի ո՛չ գոյ այլ ո՛ք ասպնէն հզօր՝ բաց ՚ի քե՛նէ՝ յոր յուսացայց, վասն որոյ ողորմեա՛ ինձ: Նշ զմեծու Թէ յուսոյն իւրոյ դիտելով յայտ առնել, ո՛չ ասէ յուսացայ, այլ յուսացաւ անձն իմ, այսինքն հոգի իմ. որպէս Թէ ասէր. ՚ի վտանգիլ մարմնոյս հոգի իմ բողբոջի՛ն ՚ի քե՛զ յուսացաւ: Օ այս յոյս իւր կամելով այլով բանիւ և յայտնել, չարել զկնի և ասէ.

ՁԲ. Եւ հովանի՛ թեւոց քոց յուսացայց, մինչև անցցէ անօրէնութիւն:

Հովանի ասի հասարակօրէն այն որ պաշտպանէ ՚ի տապոյ արեւու կամ չանձրեւոյ: Իսկ հովանի Թեւոցն ասել չայտ առնէ զպաշտպան լինել Թեւոցն. որպէս և տեսանե՛լ ՚ի Թխմայր հաւ, որ զԹեւս իւր հովանի տարածե՛լ ընդ նոսա պաշտպանի զձագս իւր ՚ի Թըշնամեոյ, ՚ի ցրտոյ, ևայլն: Կ՚ըդ՝ որ գիրն զայս նմանութի՛ բազում ուրեք ՚ի կիր առնու՝ հայելով ՚ի պաշտպա՛ նութե՛ն այ. (որպէս և տեսանե՛լ ՚ի սաղ. ԺԶ. 8. Կ. 5. ԿԶ. 8. ևայլն. և Հառաջ ՚ի. 12. և մատ. ԻԷ. 37. ևայլն.) յորս պաշտպանութի՛ն այ և իւնամք նորա այլաբանի՛ ՚ի հովանի Թեւոց նորին:

Իսկ Թեւաքն այ իմացեալ լինի կամիլ նորա և կարել. կամ ողորմութի՛ և կարողութե՛ն նորա. զի ած է միայն՝ որ չամենայնի ըստ կամելոյն պաշտպանել, կարէ ան խափան ցուցանել զպաշտպանութի՛ իւր. և ո՛չ որպէս զմարդիկ՝ որք Թէպետ և կամիցին ողորմիլ և պաշտպանե՛լ, բայց ՚ի բազում տկարանան, և ո՛չ կարեն առնել ըստ կամելոյ իւրեանց: Օ այսոսիկ գիտելով մարգարէին. ո՛չ ՚ի մարդիկ՝ այլ չած միայն յուսալով դիմե՛ ՚ի տարածումն Թեւոց նորա, և ասէ.

ՁԱ. Հովանի՛ Թեւոց քոց յուսացայց: Կարէր պարզապէս ասել.

'ի քեզ յուսացայց կամ 'ի խնամս քո յուսամ Տէ. բայց ոչ գնէ այսպէս. այլ զհովանի թևոցն առնու իւր ապաւէն։ Նաև այսու կամի ցուցանել նախ զառաւելութի գթասիրութեն Այ. իբր զի այնչափ գութ ունի նա առ մարդիկ, մինչ գրեթէ իբրև զհաւ բաց ունելով զթևս իւր՝ կամի նոքիմբք պաշտպանել զնոսա 'ի յուսալ նոցա առ ինքն. յոր միտս ասաց մովսէս. *տարածեաց զթևս իւր և ընկալաւ զնա॥. (Երկց լբ. 11։) Կամի ցուցանել երկրորդ՝ զհաստատութի կամ զտևողութի յուսոյ իւրոյ վասն զի սոսկ յուսալն յԱծ՝ կարէ 'ի վայրկենի վճարիլ. իսկ յուսալն 'ի հովանի թևոց նորա՝ առաւել ինչ ցուցանէ. քանզի որ դիմէ 'ի հովանի, մնայ 'ի նմա գոնէ փոքր մի ժամանակ. ապա թէ ոչ այն ոչ է դիմել 'ի հովանի, այլ անցանել ընդ հովանեաւ։ Նաև ըստ այսմ ասելովն 'ի հովանի թևոց քոց յուսացայց՝ ցուցանէ թէ երկարապէս և հաստատապէս յուսայ յԱծ, և ոչ թողու զնա մինչև ոչ տեսցէ զպաշտպանութիւն նորա. և առ այս յարէ։

Մինչև անցցէ անօրէնութիւն։ Հալածումն զոր կրէր դաւիթ 'ի սաւուղայ՝ 'ի կողմանէ դաւթի՝ կոչի նեղութի և տառապանք. իսկ 'ի կողմանէ սաւուղայ՝ անօրէնութի և չարութի։ Այնպէս և նեղութիւնք զորս կրեն մարդիկ 'ի միմեանց և 'ի դիւաց, 'ի կողմանէ նեղելոց տառապանք են, իսկ 'ի կողմանէ նեղչաց՝ անօրէնութիք են։ Նաև ըստ այսմ բառիս անօրէնութիւն նշանակի աստ տառապանքն այն՝ զոր սաւուղ անօրէնութբ հասուցանէր դաւթի։

Իսկ բառդ մինչև՝ ցուցանէ աստ՝ զհետևութի յուսալոյն կամ զյաջողութի անցանելոյ անօրէնութեն. որպէս թէ ասեալ էր. յուսացայց յԱծ և ոչ թողից զհաստատութի յուսոյ իմոյ. զի ակն ունիմ թէ անցցէ փութով այս անօրէնութի այսինքն այս նեղութի. կամ ըստ այլոց ոչ դադարեցայց յապաւինելոյ յԱծ մինչև իցէ անցեալ այս իմ տառապանք։

Այս բան կարէ հայիլ ըստ լմն". և այլոց նաև 'ի կատարած կենաց, որպէս թէ ասեալ էր. ոչ այժմ միայն, այլ միշտ յուսացայց յԱծ մինչև 'ի վախճան կենաց իմոց. յորում վայրի 'ի բառնիլ կենացս՝ բարձցի

և անօրէնութիւն. այսինքն ոչ ևս եկեսցէ յիս յայլոց անօրէնութիւն յուխտարէն աստ և ոչ կինն հասցէ նոյն առ այլս։ Օ այս եզեալ առաջի առնէ այժմ և զաւրութիւն ներգործութիւն յուսոյ իւրոյ, և ասէ։

Ճ. Ղաղաւիթ առ ած բարեբաստ իմ։

Ի յուսալ ուրուք ի նեղութիւն իւրում ի կարօղ ոք՝ յայտնի նման զայն, զոր ակն ունի ընդունել. զորօրինակ որ անկեալ իցէ ի ծով, ի տեսանելն զոք յայս ունելով թէ կարօղ է նա փրկել զինքն, աղաչէ զնա. և եթէ հեռի իցէ, աղաղակէ առ նա՝ հասանել յօգնութիւն, և ազատել զինքն ի վտանգէ անտի ընկղմման. քան սմին օրինակի և դաւիթ ի պատերազմին անդ ի սաուղայ՝ ըմբռնեալ ի վտանգ մեծ՝ թէպէտ յուսացաւ յած, բայց տեսեալ գնա իբր հեռի, և ի բարձրութիւն, այսինքն տեսեալ թէ անագանի հասանել յօգնութիւն, սկսաւ աղաղակել. և այս է զոր ասէ։

Ղաղաւիթ առ ած բարեբաստ իմ։ Այսինքն ի նեղութեան իմում տեսեալ զիս մատնեալ ի ձեռս թշնամեաց իմոց՝ աղաղակեցի առ ած իմ իբրև առ բարձրեալ, այսինքն իբրև առ զերագոյն զատաւոր՝ առ այնպիսի՝ քան զոր վերագոյն ոչ ի հնար լինել. որպէս զի նա ինքն տեսցէ զդատաստանս իմ, և իրաւ արասցէ ընդ իս և ընդ թշնամիս իմ։ Այսպս վստահիր դաւիթ ի բազում փորձս՝ յոր տեսեալ էր զոյցեղութիւնն նոյ, և զտեալ ևս զօգնութիւն ի նմանէ. և առ այս ասէ։

Ած բարեբաստ իմ։ Որ բառդ բարեբաստ յաւէտ հայի ի բարեբարութիւն պաշտպանութեանէ և ազատութեանէ, քան ի բարեբարութիւն պարգևատուութեանէ. որպէս թէ ասէր. աղաղակեցի առ ած իբրև առ այն՝ որ բարեբար գտաւ առ իս՝ բազում անգամ պաշտպանելով զիս ի չարէ, կամ ազատելով զիս ի վտանգէ (որպէս յայտ է ա. թագ. իզ. 26—28։) Ել զայս բարեբարութեանէ համառօտիւ ինն պատմէ յերեսին յա. Ջորդ համարսն զեղեցիկ նկարագրութիւն յասելն։

ՀԻ. Աստուած յերկինից՝ և ՚ի ներքոյ ցիս. եր ՚ի նախադինն՝ որ խոնեին զիս։

Այս բանք ըստ Ճառին ուղղակի Հայկին յայն դիպուածն՝ որ պատմի (ա. Թագ. ԺԴ. 27.) թէ ՚ի պաշարել սա. ուղղայ զդաւթի՝ յորժամ մերձ էր ըմբռնել զնա՝ և ՚ի հաս առ նա հրեշտակ. և փութացոյց զնա դառնալ յետս, և վանել զայլազգիս, որք աշուաւել էին յերկիրը նորա. որոյ ՚ի միկնիկն վերծաւ գաւթի անվնաս. նոյնպէս եղև և ազատութիւն նորա յայրի անդ. զորմէ գրի. (ա. Թագ. ԻԳ. 4.) ՚ի սոսին Հայերուլ ասէ։

ՀԻ. Աստուած յերկինից՝ և ՚ի ներքոյ ցիս։ Այսինքն յորժամ պաշարեալ էի ես ՚ի բազմութիւն թշնամեաց իմոց, և մերձ էի ՚ի մահ, և ոչ գոյր ինձ յոյս ուսանէք յերկիրս. ուրաց, առաքեաց Աստ զօգնութիւն ողորմութիւն և Ճշմարտութիւն իւրոյ յերկինից, և ազատեաց զիս ՚ի վտանգ. զ մահու։ Որ բառդ յերկինէ ըստ չորից դիպ. մի՝ ըստ լսելոյ". ՚ի ցուցանել զնոյ ամենակալ զօրութիւնն, զի ՚ի ծայրագոյն վայր բարձրութիւնէ գոլով ամենայնի իշխէ, և զամենայն կեցուցանէ։ Երկրորդ՝ ՚ի ցուցանել թէ ոչ գոյր նմա օգնութիւն յերկրէ այսինքն ՚ի մարդկանէ։ Երրորդ՝ ՚ի ցուցանել թէ այն եղև, իբր հրաշք և յատուկ երկնային տեսլութեան ոյ։ Չորրորդ ՚ի ցուցանել թէ յոյժ հեռի էր յիւրմէ և անտեսանելի այն ազատութիւն. ուստի յորժամ եհաս նմա՝ հասնելոյ թուցաւ իբր յերկինից առաքեալ այսինքն յանեղութիւն եկեալ և յանշափ հեռաւորութէ։ Որ զի այսու ազատութիւնէ խայտառակեցան թշնամիք նորա, սակն իբր յարէ զկնի և ասէ։

ՀԲ. Եւ ՚ի նախադինն՝ այ ինէն ցիս։ Այսինքն նախատելի և անարգ եցոյց զայնչափ բազմութիւն թշնամեաց իմոց՝ որք հանդերձ թագաւորաւ իւրեանց կոխէին զիս, այսինքն պաշարեալ էին զիս, և կամէին խեղդել. քանզի ամենայն հնարք նոցա և ջանք ՚ի դերև ելին և խայտառակեցան. որպէս յայտնի տեսանի յերբիս դիպուածն ևս, յորս կամէին սաստուղանք կոխել զդաւթի. (տես ա. Թագ. ԻԳ. 19 28. ԻԴ. ՚ի

ւ — 22 ։ ԻՀ. ւ — 15 ։) Այլ զի զայս ասաց ՚ած ողորմելով. և իրաւունս առնելով, սմին իբր ասէ ։

Ե. Արդ երթայք և ուսարուք զի զ՚ինչ է այս՝ ողորմութիւն կամիմ և ոչ պատարագ։ Ոչ եկի կոչել զարդարս, այլ զմեղաւորս ։ Եւ ասէին ցնա աշակերտք Յովհաննու և փարիսեցիք՝ պահեն ։ Եւ ասեն ցնա՝ ընդէ՞ր աշակերտք քո ոչ պահեն, իսկ աշակերտք Յովհաննու և աշակերտք փարիսեցւոց պահեն ։ Եւ ասէ ցնոսա Յիսուս՝ միթէ կարող են որդիք հարսանեաց լինել զի ընդ նոսա է փեսայն ։ Այլ եկեսցեն աւուրք յորում առցէ ի նոցանէ զփեսայն, յայնժամ պահեսցեն ։ Ոչ ոք կարկատէ կտոր ի հին հանդերձի, զի ոչ առնուցու զլրումն նորոյն ի հնոյն, և չար ինչ լինի ։ Եւ ոչ արկանեն գինի նոր ի տիկս հինս, զի ոչ պատառեսցին տիկքն, և գինին հեղցի, և տիկքն կորիցեն ։ Այլ արկանեն գինի նոր ի տիկս նոր, և երկոքինն պահեսցին ։ Եւ ոչ ոք որ գինի հին ըմպէ, կամի նոր ։ Ասէ՝ հինն քաղցր է ։

Ե. Արդ երթայք և ուսարուք զի զ՚ինչ է այս՝ ողորմութիւն կամիմ և ոչ պատարագ։ Ոչ եկի կոչել զարդարս, այլ զմեղաւորս ։ Եւ ասէին ցնա աշակերտք Յովհաննու և փարիսեցիք՝ պահեն ։ Եւ ասեն ցնա՝ ընդէ՞ր աշակերտք քո ոչ պահեն, իսկ աշակերտք Յովհաննու և աշակերտք փարիսեցւոց պահեն ։ Եւ ասէ ցնոսա Յիսուս՝ միթէ կարող են որդիք հարսանեաց լինել զի ընդ նոսա է փեսայն ։ Այլ եկեսցեն աւուրք յորում առցէ ի նոցանէ զփեսայն, յայնժամ պահեսցեն ։ Ոչ ոք կարկատէ կտոր ի հին հանդերձի, զի ոչ առնուցու զլրումն նորոյն ի հնոյն, և չար ինչ լինի ։ Եւ ոչ արկանեն գինի նոր ի տիկս հինս, զի ոչ պատառեսցին տիկքն, և գինին հեղցի, և տիկքն կորիցեն ։ Այլ արկանեն գինի նոր ի տիկս նոր, և երկոքինն պահեսցին ։ Եւ ոչ ոք որ գինի հին ըմպէ, կամի նոր ։ Ասէ՝ հինն քաղցր է ։

,, և ահա եղանէին չորք գազանք, (այսինքն չորք բռնաւորք‖․ ըստ սմին և դաւիթ գազանս կոչէ զթշնամիս իւր զի ոչինչ իւիք ընտելացան ը՟ նմա․ և որչափ բարիս եցոյց առ նոսա, նոքա միշտ իբրև զգազան մռմռային ընդդէմ նորա․ և իբրև զվայրիս ընդ լերինս և ընդ դաշտս շրջէին գտանել զնա և պատառել։ Վասն որոյ և չէր հնար դաւթի կալ ուրեք հաստատուն, և կամ հանգիստ 'ի քուն մտանել, մանաւանդ յերիս դիպուածսն անդ, զորոց զտեղիսն նշանեցաք 'ի նախընթաց համարն 'ի վերջոյ։ Այլ ա՟ծ ողորմելով նմա փրկեաց զնա 'ի ձեռաց նոցա․ վասն որոյ ասէ․ *փրկեաց զանձն իմ 'ի միջոյ գազանաց‖․ այսինքն 'ի թշնամեաց իմոց 'ի պաշարել նոցա զիս։

Իսկ զոր յարէ զկնի ասելով, ը՟ ննջէի ես խռովեալ․ այս բան յերկուս ինչ ակնարկէ․ մի՝ յայն, զոր ասացաք, այսինքն է թէ չէր նմա հանգիստ 'ի քուն լինել, այլ երկիւղիւ և խռովութ՟բ սրտի․ և ըստ այսմ բառդ ը՟՝ դնի փոխանակ բառիս մ՟նչ ը՟․ որպէս թէ ասէր․ այնպէս զարհուրեալ էի 'ի թշնամեաց իմոց՝ մինչ զի խռովեալ ննջէի։ Երկրորդ յայն, թէ 'ի ննջել նորա խռովայոյզ սրտիւ 'ի վիմին անապատի, կամ յայրին դադդայ (ա՟․ թագ․ ի՟գ․ 25․ և ի՟դ․ 4․) հասին 'ի վերայ նորա սաւուղեանք․ և ը՟ այսմ բառդ ը՟ դնի փոխանակ բառիս յորժամ․ որպէս թէ ասէր․ յորժամ ննջէի ես խռովութ՟բ սրտի, և պաշարեալ էի 'ի թշնամեաց իմոց, փրկեաց զիս ա՟ծ 'ի ձեռաց նոցա։

Հայի այս և յայն խռովութ՟ի սրտի որ հասանէ 'ի փորձութ՟նց․ յորում թմրեալ վերին մասին ննջէ հոգին խռովեալ կ՟մ անհանգիստ լեալ իբր 'ի խաւարի, ըստ լամբ″․ իսկ յաղաղակել հոգւոյն առ ա՟ծ՝ ողորմութ՟ի նորա՝ եւս և ճշմարտութ՟ի նորին փրկէ զնա 'ի բռնութենէ անտի փորձութ՟նց իբրև 'ի ժանեաց գազանաց․ այլ թէ ո՛ր և ո՛րպիսի իցեն այն ժանիք, և զի՛նչ լեզուք նոցա զորս կոչեաց գազանս յայտ առնէ 'ի յաջորդ համարն ասելով։

Ջ. Արտոյ մարդկան ապաստան էրբեանց ղէն և նեպ էն.
և լեզուս նոցա որպէս սուր սուսերի:

Ի խնդրել դաւթի զմրմունքն յայլ ի սկզբան սաղմոսիս, երկիցս եղ ողորմեա ինձ ողորմեա ինձ. որով որպէս աստացաք անդ զայլ և այլ ինչ դիտեր, մանաւանդ զկրկին փրկուքն անձին. ըստ միոյն խնդրեր փրկել ի չարէն և ի ներկայ վտանգէ՝ յորում պաշարեալ գտաւ ի թշնամեաց իւրոց իբր ի գազանաց. իսկ ըստ միւսոյն խնդրեր փրկել ի ծածուկ և ի հեռաւոր վտանգէ՝ զոր նախընթացն նմա թշնամիք իւր: Այսուհետև առաջնոյն խոստովան եղև ի նախընթաց երկուս համարան՝ թէ եգիտ զոր խնդրեր. իսկ վասն երկրորդին աստ խօսի յաւելուն:

Արտոյ մարդկան ապաստան էրբեանց ղէն և նեպ էն, և լեզուս նոցա որպէս սուր սուսերի: Ստամամբք նշանակին աստ ծածուկ հնարք թշնամեացն, զոր նիւթէին ընդդէմ նորա. զի ատամունք գոլով ծածկեալ ընդ շրթամբք, յօրինակ բերին ծածուկ հնարից: Յսպիսի ծածուկ և նենգապատիր հնարք իբրև զէնք եղեն ասէ, և իբրև նետք ի ձեռս թշնամեաց իմոց. զէնք՝ առ ի պաշտպանել զինքեանս, և նետք՝ առ ի խոցոտել զիս ի հեռուստ, և սպանանել:

Ա՛մբէն է ատամամբք իմանալ աստ և զբռնութեն թշնամեացն կամ զչար կամն նոցա որով կամէին իբր ատամամբ պատառել, և իբր նետիւք վիրաւորել զդաւթի:

Ա՛րդ որպէս ատամունք նոցա, այնպէս և լեզուք նոցա ասէ, որով խօսէին զինէն ի մէջ իւրեանց, էին որպէս սուր սրեալ. զի զայնպիսիս խօսէին որով իբր սրով յօշոտէին զանուն իմ, և զփրկուն իմ, և կամէին սպանանել զիս:

Արդէս տեսանի ի նախապրեալսդ, սոքիմբք նշանակի այն ամենայն՝ (որ գրի ա. Թագ. իա. 11: իբ. 9: իգ. 19: իդ. 2.) յորս պատմի թէ զմարդ թշնամիք դաւթի պէսպէս բանիւք չարախօսէին զնմանէ, և մատնէին զնա, և գրգռէին զսաւուղ ընդդէմ նորա՝ հնարիւք նմին փակել զնա, և ըմբռնել. վասն որոյ և ասաց դաւիթ յաւուր միում ցսաւուղ. * ընդ՚ր լսես

բանից ժողովրդեան‖. իզ (ա. թագ. իէ. 10:)
Օ մատնութիս և զհնարս սոցա, կամ զթշնամութիս սոցին նմանեցուցանելով զինուց և նետից, և զլե-զուսն սուսերաց սրելոց, կամի յայտ առնել՝ թէ թըշ-նամիք իւր առաւել չար են քան զգազանս. զի ատա-մունք գազանաց ո՛չ են նետք, և լեզուք նոցա ո՛չ են սուսերք. իսկ ատամունք թշնամեաց իւրոց նետք էին, և լեզուք նոցա սուսերք: Որպիսի եղեն և ատամունք և լեզուք դպրաց և փարիսեցւոց, քահանայից և իշ-խանացն հրէից. որոց տրտնջելն էր զէն ատամանց, և հայհոյելն՝ նետ շրթանց, և մատնելն ՚ի մահ՝ սուր սուսեր:

Աստանօր ՚ի շարադրութե կայ մթութի ինչ, զոր պատ-ճառէ բառս իւրեանց. որ ըստ երից մտաց կարէ իմա-ցեալ լինել. մի ըստ լինելոյ բացայայտելի. որպէս թէ եդեալ էր. ատամունք իւրեանց, այսինքն ատամունք որդւոց մարդկան՝ են զէնք և նետք: Երկրորդ՝ ըստ լինելոյ խնդիր հական բայիս էն. որպէս թէ եդեալ էր. ատամունք որդւոց մարդկան են ինքեանց զէնք և նետք: Երրորդ՝ ըստ լինելոյ յատկացուցիչ ատամանց. որպէս թէ եդեալ էր. այնպիսի են որդիք մարդկան՝ զի և ատամունք իւրեանց համարին լինել զէնք և նետք. և լեզուք նոցա սուր սուսեր: Այլ որպիսի և իցեն, եթէ ած ո՛չ տացէ թոյլ, ո՛չինչ կարեն առնել. զի ՚ի ձեռին նորա է ամենայն. և ընդ նորա իշխա-նութբ են ամենեքին, և նորա հրամանի սպասեն ա-մենեքին. գոլով նա ինքն բարձրեալ և փառաւո-րեալ յամենայնի. սմին իրի յարէ զկնի և ասէ:

Է. Բարձրեալ ես դու յերկինս ած. և յամենայն երկրի են փառք քո:

Այս բան կրկնի ՚ի վերջ այսր սաղմոսիս, (ևս և ՚ի սաղ. ճէ. 5.) ուստի և զմեկնութի սորա տե՛ս անդ: Իսկ պատճառ աստ ևս դնելոյն՝ է կրկին, մին է այն՝ զոր եդաք այժմ ՚ի ցուցանել՝ թէ գոլով ած բարձրեալ յամենայնի՝ առանց նորա ակնարկութե ո՛չ ոք կարէ առնել ումեք ընդդէմ ինչ. իսկ միւսն է յարմարութի բանին, հայելով ՚ի փրկութին յայն, զոր եցոյց ած յերկնից. առ որ և աղաղակեաց

մարգարէն (՚ի համարն 3.) ասելով. *աղաղակեցի առ ՚ած բարձրեաւն, և նա առաքեաց յերկնից զօրութիւն իւր ‖. Եւ. ՚ի տոսէն ակնարկելով ասէ։

Բարձրեալ ես դու յերկինս ՚ած. և յամենայն երկիր են ֆառք։ Որպէս թէ ասէր. դու ինքն ՚ած ՚ի բարձրութենէ երկնից գոլով իշխես ՚ի վերայ ամենայնի՝ որք են յերկիր. և տաս ամենեցուն կեանս, և փրկես զյուսացեալսն ՚ի քեզ. նա պի առանց ակնարկութեան քո ոչինչ ներգործի յաշխարհի. որով և փառաւորի անուն քո ընդ ամենայն տեղիս՝ և ընդ ամենայն ազգս. զի ամենեցուն տեսեալ զգործս արդարութենէ և փրկութենէ քո, գովեն զքեզ և գոհանան զքէն։ Ա. յամ կամի հետևեցուցանել և ասել. ցո՛յց և առ ինս զփրկութենէ քո, և ազատեա՛ զիս ՚ի հնարից թշնամեաց իմոց. և մի թոյլ տար նոցա առնել ընդ իս ըստ կամաց իւրեանց։

Լա՛մբ". գրէ աստ թէ *փառաբանն այս որով լի էր երկիր՝ կիր, լմնանամբ զպեսպես արարածոցս՝ որ ստեղծեալ են ՚ի նմանէ՝ զվայելչութենէ. զի որպէս ՚թագաւորին սպեսպես գոյից բազմութի՝ առաւելութենէ ասի նորին փառաց, և նուազութին՝ պակասութի, այսպէս և այս արարչագործութեքն ամենայն երկիր լցեալ է, զի ասէ, նորին փառաբ. քանզի ամենայն ստացուածք իւր՝ մեծութենէ են իւր փառացն ‖։

Ա. յս բան հայի և ՚ի բարձրանալ որդւոյն այ. քանզի ՚ի կարծել հրէից՝ թէ ՚ի հող մահու իջուցին զփառս նորա, նա յարուցեալ բարձրացաւ. և փառաբ նորա լցաւ երկիր։ Ո՞յս եղեալ մարգարէին, առաջի առնէ այժմ և զչարիս թշնամեաց իւրոց ասելով։

Ը. Որդեայն պատրաստեցին ոտիք իմոյ. խոնարհ արարին զանձն իմ. փորեցին առ ՚ի իմ խորխորատ և անկան ՚ի նմա։

՚ի նոյն։

Որովհետև բազմադիմի հնարիւք զհետ եղեն դաւեթի թէ թշնամիք նորա ՚ի կորուսանել զնա. նա ինքն դաւիթ և ա բազմապատիկ օրինակաւ առաջի դնէ զայնոսիկ. է՝ զի նմանեցուցանէ զայնս յարձակմանց գազանացն (որպէս ՚ի համարն 5.) և է՝ զի նմանեցուցանէ

նետից և սուսերաց (որպէս 'ի համարն 6)․ է՝ զի նմանեցուցանէ հեղեղաց ջրոց, և է՝ զի նմանեցուցանէ թունից վիշապաց․ իսկ աստ (որպէս և այլուր)
նմանեցուցանէ այլոց գործոց, և ասէ։

Որոգայթ պատրաստեցին ոտից իմոց․ խոնարհ արարին զանձն իմ․ փորեցին առաջի իմ խորխորատ։ Այս նմանութիւն առեալ լինի 'ի հնարից որսորդացն, որք վասն հաւուց որոգայթ հասարակ պատրաստեն․ իսկ վասն մեծամեծ էրէոց և գազանաց երբեմն որոգայթ մեծ լարեն, և երբեմն խորխորատ փորեն առաջի, և պնդին զկնի նոցա, և վարեն ուժգին, մինչև արկցեն զնոսա 'ի նոյն։ Եւ զի դաւիթ իբրև զվայրենի հաւ շրջէր 'ի լերինս, և իբրև զէրէ յանապատ տեղիս դեգերէր, յայս հայելով՝ զհալածելն սաւուղեանց նմանեցուցանէ որոգայթ լարելոյ և խորխորատ փորելոյ։ Զայսոսիկ գործելով *խոնարհ արարին զանձն իմ‖․ այսինքն նուաստացեալ ցուցին զիս, անարգեալ 'ի մարդկանէ, և մերժեալ 'ի փառաց․ յամենայնի տատանեալ և տուայտեալ։ Բայց քանզի պաշտպան եղև նմա ած 'ի թշնամեաց, այն չարիք նոցա հասին 'ի
նոսա․ սմին իրի յարէ զկնի և ասէ։

Եւ անկան ինքեանք 'ի նոյն։ Այս բան հայի 'ի նմանութ՟ն նախընթաց հատուածոյն․ իբր զի որպէս որսորդք երբեմն 'ի պնդիլն զհետ էրէոց առ 'ի արկանել զնոսա 'ի խորխորատ՝ ինքեանք անկանին 'ի նոյն, սոյնպէս պատահեցաւ ասէ և թշնամեաց իմոց, իբր զի 'ի կամիլ նոցա ըմբռնել զիս, ինքեանք ըմբռնեցան․ և 'ի խնդրել նոցա կորուսանել զիս, ինքեանք կորեան․ և 'ի պնդիլն զհետ առ 'ի որսալ զիս, ինքեանք որսացեալ եղեն․ որպէս յայտնի տեսանի այս 'ի սաւուղ, որ 'ի կամիլն ըմբռնել զդաւիթ՝ անկաւ 'ի ձեռս նորա երկիցս․ այլ դաւիթ խնայեաց 'ի նա, և եթող անվնաս․ (որպէս աւանդի․ ա․ թագ․ իդ․ 11․ և
իզ․ 8։)

Լամբ″․ ըստ հոգևորին մեկնելով զայս բան, ոտիւք իմանայ աստ զընթացս կենաց մերոց՝ յորս որոգայթ լարեն դևք և խոնարհեցուցանեն․ այսինքն յորոգայթ արկանելով նուաստացուցանեն և թշուառացուցանեն զմեզ։ Այլ որ չարն է՝ խորխորատ ևս փորեն առաջի

մեր. այսինքն Ե յուսահատութիւն էառ, համ այնպիսի
լինչ՝ յոր հնարին՝ անկանգնելի կործանել։ Այլ ի
դիմել մեր առ նա՝ չքանայ, և ինքեանք կրեն զպա-
տիժն։

Ի. Բազում ձեռագիրս մեր առտնօր գնի բառդ հա-
գեսպ. որպէս և յերբ" ասէ. զի առ առ աւարտին քանք
ի վերայ թշնամեաց, և սկսանին քանք օրհնութիւնք և
պատրաստութեան սրտի առ նա։ Այ՝ առնգի տեսեալ
դաւթի զայսպիսի և զայսչափ պաշտպանութիւնս և
վճռաւոր ի վերայ նր, մատուցանէ զանձն առաջի
օրհնութեան, և ասէ։

ԺԹ. Պատրաստ է սիրտ իմ աստ, պատրաստ է սիրտ իմ. օրհ-
նել և սաղմոս ասել չէզ քառօք իմովք։

Ի. Արի՛ փառք իմ, արի՛ քնար և սաղմոս, յարիցեմ
առտուն։

ԻԱ. Խոստովանեցայ քեզ ի մէջ ազգաց տեր. և սաղմոս
ասացից քեզ ի մէջ հեթանոսաց։

ԻԲ. Մեծ է մինչև յերկինս ողորմութիւն քո. և մինչև
յամպս ճշմարտութիւն քո։

ԻԳ. Բարձրացիր ի վերայ երկնից ո՛վ Աստուած. և ի
յաւէտ ելիցէ փառք քո։

Ա. Յոգիկ հնգեբին համարք ամենևին նոյն են ընդ
այնս որք գրին ի սաղ. ՃԺ. 1 — 5։ Աստի և զլիա-
գոյն մեկնուն այսոցիկ հնգեցունց տանցս տէս անդ
նաև ըստ եբրայականին ի համեմատութիւն։ Այլ
կամելով աստ ևս ասել ինչ՝ հայեցցուք ի կարգ բա-
նիցդ։ Առգարէն երկու ինչ նկարագրեաց առաջի
իւր. որոց մին էր վտանգ մահու ի թշնամեաց, և
միւսն՝ խնամք փրկութիւնն առ յայ. և ահա յերկոսին
ի տոսա հայելով աստանօր՝ պատրաստ ցուցանէ զինքն
և ասէ։

Պատրաստ է սիրտ իմ աստ, պատրաստ է լեզ։ Արտիւք իմա-
ցեալ լինի աստ յօժարութիւն կամաց, և զայս առաջի
դնէ առ ի ցուցանել զառաւելուն պատրաստութեան

իւրոյ առ ամենայն ինչ եթէ՛ ի մահ և եթէ՛ ի կեանս. որպէս թէ եղեալ էր՝ պատրաստ եմ՛ ի մեռանել վասն քո ամ. պատրաստ եմ և՛ ի կեալ՛ ի փառս քո. պատրաստ եմ ոտնակոխ լինել վասն սիրոյ քոյ. պատրաստ եմ և ելանել՛ ի փառս վասն անուան քո, պատրաստ եմ հոգւով, պատրաստ եմ և մարմնով: Այս և պատրաստ եմ՛ ի տառապիլս օրհնել զքեզ, և՛ ի յանդուրանալս սաղմոս ասել քեզ փառաւոր խոստովանեալ զքեզ. այսինքն սաղմոսարանօք խմամբ, որք են ինձ պարծիք փառաւորելոյ զքեզ. (այլ զայսմանէ տես՛ ի սաղ. ՃԽԷ. 1:) Օ այս եղեալ՝ ապա յորդորի ինքնին յօրհնութիւն և՛ ի սաղմոս, ասելով:

Ճ. (Ա)ՔԻՒՒ ֆառաւ եմ, ՔԻՒՒ սաղմոսաւ և օրհնաւՔԻՒՔ, և ես ՔԻՒԵայց առաւօտուց: Այսինքն զգաստայիք ուրախ միտք իմ և կամք իմ՝ որք էք փառք իմ, ի ձանձրանալ և՛ ի սիրել զիս. որով և ես արթնացայց և լուսաւորեցայց. կամ զարթիք ուրախ ներքին զօրութիւնք իմ օրհնել ընդ իս զիս. կամ զարթիք փառք հոգւոյ մարգարէութեանս և նուագերգութեանս, որովք երգէի զխորհուրդս փառացն իմոյ. կամ զարթիք ուրախ սաղմոսարանք իմ և երգք իմ, որք էք իմ գործարանք փառաւորելոյ զիս: Զարթիք սաղմոսել և օրհնել զիս. և ես ահա զարթեայց առաւօտուց՝ երգել զօրհնութիւնս առ ինձ: (Տես զայսմանէ՛ ի սաղ. ՃԽ. 2. 5:) Օ այս եղեալ մարգարէին, մատչի՛ ի խոստովանութիւն ինձային խնամոցն և ասէ:

Ձ. (Ո)ՐՈՍՊՈՎԱՆ եղէց ՔԵԶ՛ ի ժողովուրդս զՔ. և սաղմոս ասացից ՔԵԶ յազգս: Այսինքն՝ ի փրկել զիս յամենայն թշնամեաց իմոց, և՛ ի դարձուցանել զիս՛ ի հայրենիս իմ, կամ՛ ի յանդուրժութիւն կենաց, խոստովան եղէց և յայտնի ցուցից առաջի ժողովրդեան, և ես և առաջի հրեշտակաց քոց զվարերարութիւնս քոյ՝ զոր ցուցեր առ իս. և սաղմոս ասելով՛ ի մէջ ազանց օրհնեցից զքեզ:

Ա՝արդարեն նախ եդ օրհնել և սաղմոս ասել. ապա եդ սաղմոս և օրհնութիւն. իսկ աստ խոստովան լինել, և սաղմոս ասել: Եթէ՛ ի սէրտ մարգարէին հայեցուք՝ երեքին ևս՝ այսինքն խոստովան լինել,

և օրհնելն, և սաղմոսելն ցուցանեն զպօլացուին նո-
ւին լեզու զմի ոմն եբրեակ դուռնալ. իսկ եթէ հայե-
ցուք յառաջիկայն, օրհնելն բերի 'ի բարուքիւն
այ լինքեան. զոր այլով բառիւ դովել ասեմք. խոս-
տովանիլն բերի 'ի բարերարուքիւն այ՝ որ առ
մեզ. զոր այլով բառիւ գոհանալ ասեմք. իսկ սաղ-
մոսելն բերի 'ի փառս այ 'ի հռչակել. զոր այլով
բառիւ փառաւորել ասեմք. երբեմն բերի և յողոր-
մուքիւն այ 'ի գթալ նորա յայլս, և ըստ այսմ փոխա-
նակ ասելոյ սաղմոսել, յատուկ բառիւ ասեմք
լանդրել, աղաչել, ևն։

Օ այլ ինչ զանազանուքիւն տայ սուրբն յակոբ մեծքնայ
հայրապետ ('ի Ճառն ՟ը.) եբրեակ են ասէ աղօթք.
այսինքն են * լանդրուածք, օրհնուքիւնք, և գոհու-
,, թիք. լանդրուածք այս են՝ զի լանդրեսցէ ոք զ-
,, ղորմուքիւն գթուքիւնե մեղաց իւրոց. գոհուքիւնք՝ զի
,, գոհանայցես զՏօրէն երկնաւորէ, օրհնուքիւնք՝ զի
,, օրհնեսցես զնա վասն ամենայն գործոց իւրոց։ ՟Ի
,, ժամանակս վտանգի նեղուքիւնե քո մատո՛ զու նմա
,, աղօթք լանդրուածոց. և 'ի ժամանակի երբեմն կե-
,, րակրես 'ի բարուքիւնէ նորա, խոստովանուքիւնք գո-
,, հանայցես զու զայնմանէ՝ որ եան քեզ. և 'ի ժա-
,, մանակի երբեմն լի և յուրախուքիւնե ցնծուքիւնե միտք
,, քո՝ տո՛ւր զփառս օրհնուքիւնե. և ամենայն աղօթք
,, քո որոշելով լինիցին առաջի այ. Եւ տե՛ս զու, զի
,, գաւիթ ընդ ժամանակս ժամանակս այսպէս կայր
,, յաղօթս, և ասէր, յարեայց և խոստովան եղէց
,, առ քեզ վասն իրաւանց և արդարուքիւնե քո. և 'ի
,, միւսում սաղմոսի ասէ. օրհնեցէ՛ք զնո՛ր յերկնից,
,, և օրհնեցէ՛ք զնա 'ի բարձանց. և դարձեալ ասէ.
,, օրհնեցէ՛ք զնո՛ր յամենայն ժամ, յամենայն ժամ
,, օրհնուքիւն նորա 'ի բերան իմ. և ո՛չ եթէ միով
,, կերպիւ կայր յաղօթս, այլ որոշելով ։ Օ այս ասէ
սուրբն յակոբ 'ի ցուցանել՝ թէ ո՛չ վայրապար
զայլևայլ տարազս աղօթից առաջի առնէ մարգա-
րէն, այլ որոշելով. ըստ որում և աստ առնէ, և
յայլ տեղիս ևս, 'ի մէջ բերելով զսաղմոսելն, զօրհ-
նելն, և զխոստովանիլն կամ զգոհանալն, ևն։
Ո՛րդ զայսոսիկ առաջի եդեալ աստ մարգարէին 'ի

մէջ մատուցանէ և զպատճառն, որոյ աղագաւ յայտ պիտի յոլորդորի, ասելով ։

ԺԲ. Ա՛ԷՁ ԷՂԵ ՔՒՆՁԵ ՅԵՐԿԻՆՍ ՈՂՈՐՄՈՒԵ ՛ՈՒ. ՔՒՆՁԵ ՅԱՄԱՊ ՃՇՄԱՐՏՈՒՆԷ ՛ՈՒ ։ Այլեմբք ու՛չ ցուցանի թէ միևնոյն յերկինս ողորմութիւն ու՛ր անդր ևս, նոյնպէս և ճշմարտութիւն ու՛ր անդր ևս, այլ զի որքան հեռի մարդիկ բարձր քան զամենայն ըմբռնեն զերկինս, նոյնպէս և զամպս յօդս վերինս, կամելով բարձր և մեծ ցուցանել զողորմութիւն ու՛յ, և զճշմարտութիւն նորա, ասէ մինչև յերկինս, իբր թէ ասէր. ողորմութի՛ք ո՛ւ ճշմարտութի՛ք ո՛ւ զոր ցուցեր մեզ՝ մեծ եղև յոյժ. որպէս թէ աձեցեալ և ամբարձեալ լինէր մինչև յերկինս. նոյնպէս մեծ եղև և ճշմարտութի՛ք ո՛ւ, և իբրև թէ յամպս բարձրացաւ ։

Ո՛րդ մեծ ասի ողորմութի՛ն ու՛յ, եթէ յինքեան, և եթէ հայելով առ մեզ. յինքեան ասի մեծ՝ զի է անչափ և անսպառ գանձ ՚ի բարերարել ։ Ո՛ւ մեզ ասի մեծ ըստ այլևայլ բանի. մի՝ զի մեծամեծս տայ, երկրորդ՝ զի մեծապէս տայ, այսինքն առատապէս, երկրորդ՝ զի անյապաղ տայ, ուր յապաղէլն նահանջի. չորրորդ՝ զի յօժարութի՛ք տայ. հինգերորդ՝ զի զիտքըն առեալ զմեծն տայ ։ ՚Ի սոսին հայելով բարեգործ վարդապետ. (՚ի մեկն. մարկ. գլ. ԺԵ.) և օրինակ բերելով ՚ի սոյն զիրկութիւնն աջակողմեան աւազակին՝ գրէ այսպէս. * մեծատուն է ողորմութի՛ն ու՛յ, եթէ նորա. զի յորում ժամանակի ընկալաւ յաւազակէն զակէ անտի զհատատն՝ դարձոյց նոյնժամայն զիտքն խարէնն. և եբաց նմա զդրախտն. և տարեալ եմոյծ ՚ի նոյն. և կացոյց զնա ՚ի վերայ ամենայն ընչից իւրոց. ընդ ես ասէ էցես այսօր ՚ի նեղքս ՚ի դրախտին փափկութե՛ն, այսինքն ՚ի նոյն փառսն՝ յորում ես եմ՝ կցորդ զքեզ լինձ արարչից. և այս պէս քրիստոնեայք բազմացան հաւատովք. և հանդերձեալն նոցա տալ (ըստ աւազակին) զհատուցումն անպատմելի. վասն զի հաւատացին ՚ի մարդ խաչեալ, որ է ՚ած ՚ի վերայ ամենայնի. և ինքն խոստացաւ. ուր եմն էցեմ, անդ և պաշտօնեայքն իմ եղիցին ։

Ա՛յս բան ըստ բառիցն առեալ՝ կարէ հայել և յայն՝

զի ընդ երկինք է ողորմիլն այլ՝ ի Աշխատութիւնս ստեղծուածոց. իսկ՝ ի վեր քան զերկինս ոչ գոլով Աշխատութիւն, ոչ գոյ և ողորմութիւն մատակարարութիւն՝ ի Աշխատասցեալս։ Վասն որոյ ասէ * մեծ եղև մինչև յերկինս ողորմութիւն քո ։ Այնպէս և ճշմարտութիւնն, այսինքն ճշմարիտ խոստումն այլ՝ ի ներքոյ երկնից է կամ ընդ ամպովք. իսկ յերկինս ոչ է խոստումն, այլ կատարումն խոստման վասն որոյ ասէ. * մինչև յամպս ճշմարտութիւն քո ։ (՚Ի յայտնի տե՛ս յայտնի՛ս ՚ի սաղ. լէ. 6. և՝ ի նախայիշեալ սաղ. ճէ. 4։)

Ստորադաբար առեալ, այնչափ մեծացաւ ողորմութիւն այլ, մինչզի յերկինս անդ չպարագրելով ի քոյոց յերկնից զայծ մինչև յերկիր. և որ էջն՝ գալոց է ամպովք ճշմարտութիւնք, այսինքն՝ ի ցուցանել զճշմարտութիւնն իւր։

Ա. Յլաբանօրէն՝ ողորմութիւն այլ մեծացաւ առ մեզ՝ ի ձեռն առաքելոց՝ որք նմանին երկնից. սոյնպէս և ճշմարտութիւն յայտնութեանց և խոստմանց նորա մեծ ցուցաւ՝ ի մարգարէս որք օրինակին յամպս։ Ա. ըզ եդեալ մարգարէին զմեծանալ և զբարձրանալ այլոյն ողորմութեանն՝ առաջի դնէ ապա և զբարձրութիւնն այլ հանդերձ փառօքն, և ասէ։

ԺԸ. Բարձրեալ ես դու յերկինս ած. և յամենայն երկիր է փառք քո։ (Տե՛ս զայսմանէ՝ ի վերոյ՝ ի համարն 7։) Որ մարթ է յաւելուլ ևս, թէ այս հայի յայն՝ որ եղև՝ ի լեառն սինայ. ուր էջ յերկնից բարձրեալն ած. և փառք նորա երևեցան անդ, և անտի սփռեցաւ փառաւորուի անուան նորա ընդ ամենայն երկիրս. և ըստ այսմ փառօք իմացեալ լինի ստացուածոց պայծառութիւն լուսոյ, և բազմութիւն հրեշտակաց՝ որք իջին անդ։ Այս միտս իմանալով ծործորեցւոյն զանուանս ֆառ՝ ասէ (՚ի մեկն. մատ. գլ. ճ.) * Արկին ,, լսի փառացդ իրք, քանզի կամ զպայծառութիւն լու- ,, սոյն կոչէ փառս, իբր այն թէ բնակեալ է՝ ի լոյս ,, անմատոյց. և թէ իջին փառքն այլ՝ ի լերինն սի- ,, նայ. և կամ զբազմութիւն զօրացն. ըստ այնմ՝ ի ,, բազում զօրս փառք թագաւորի ։ Ա. ըզ յայտ է թէ սոքիմքն երևեցաւ ած՝ ի լերինն անդ. որով որ. պէս նա ինքն բարձրեալ էր յերկինս, սոյնպէս և

անուն նորա փառաւորեսցաւ և փառաւորի յամենայն երկիր. և փառաւորեսցի յամենայնի յաւիտեան։

ՍԱՂՄՈՍ ԾԷ.

*Յանդիմանութիւն առ խստացեալ մեղաւորս, որք հան-
գոյն օձից և իժից խնուն զականջս ընդդէմ բանիցն
Այ. եւ և յայտարարութիւն պատժոց նոցին առ յԱյ.
և ցոյց հատուցման չարի և բարւոյ։*

Ի կատարած. մի ապականեր. արձանագիր 'ի Դաւթի։

1 Եթէ արդարեւ զարդարութիւն խօսէիք. և ուղիղ դա-
տէիք որդիք մարդկան։ 2 Քանզի և արդ իսկ
'ի սրտի ձերում զանօրէնութիւն գործէիք յերկրի. անիրաւութիւն
ձեռք ձեր նիւթէին։ 3 Օտար եղեն մեղաւորք 'ի մօրէ. խա-
բեցան յարգանդէ, և խօսեցան սուտ։ 4 Սրտմտութիւն նոցա
ըստ նմանութեան օձի. որպէս իժի և քարբի, որ խցեալ է զա-
կանջս իւր։ 5 Զի մի լուիցէ նա զձայն թովչի ճարտարի. և
մի առցէ դեղ 'ի դեղատուէ իմաստնոյ։ 6 Ած փշրեսցէ զա-
տամունս նոցա 'ի բերանս իւրեանց. և զծնօտս առիւծուց
խորտակեսցէ Տր։ 7 Անարգ եղիցին նոքա որպէս ջուր՝ որ
հեղու. 'ի լարել աղեղան նորա՝ տկարասցին որպէս մոմ որ հա-
լի, և սատակեսցին։ 8 Անկաւ հուր՝ և ո՛չ տեսին զարեւ,
մինչչեւ 'ի մի առեալ էր զփուշս իւրեանց. որպէս դժնիկ
բարկութիւն՝ կենդանւոյն կլցէ զնոսա։ 9 Ուրախ եղիցի ար-
դար յորժամ տեսցէ զհատուցումն. և զձեռս իւր լուասցէ յա-
րեան մեղաւորի։ 10 Եւ ասասցէ մարդ, թէ արդարեւ գոյ-
պտուղ արդարոյ, և է Ած որ դատի զնոսա յերկրի։

ՎԱՐՆԱԳՈՒՅ

՚Ի հատարած ՚ի սպանէդը . արչանագէդը ՚է գաւէդը .

ԱՍՏ ՍՈՒՆԳԴԵԼՈՒ ՍՈՒՅՆ ԸՅՕՎՆԻՆ.

Նագիր և յայլ ամենայն ապագրեալ՝ և ՚ի ձեռագիրս սաղմոս մեր փոքու ինն այլեայլութք . որոց յոմանս յաւելեալ լինի նաև բառդ «աղաղոս . քայց քանզի ՚ի բազումս ո՛չ դնի այդ , և ո՛չ յերգը". և ո՛չ ՚ի Թարգ". եօթ". և լատ". ևն . մեք ևս զանց արարեալ զայնու՝ ըստ հաստարակ ձեռագրաց եդաք : Այլ վասն բառիդ ՚ի սպանէդ՝ տե՛ս ՚ի նախընթաց սաղմոսն . նոյնպէս և վասն բառիդ արչանագէդ , տե՛ս ՚ի սաղ. ծե : Նակ միտ բանի վերնագրիդ է , Թէ այս սաղմոս ասացաւ ՚ի դաւԹայ երբ անջնջելի յիշատակաւ երգելն :

Սաղմոս այս է երբ շարունակուէ նախընթաց սաղմոսին . ուստի հաստարակաց կարծիք է , Թէ զայս ասաց դաւիԹ հայելով ՚ի ժամանակն յայն՝ յորում Թէպէտ և զերծաւ ՚ի ձեռաց սաւուղայ , քայց խորհրդատուք և ծառայք սաւուղայ ո՛չ դադարէին գրգռել զնա ընդդէմ դաւԹի . և յորժամ հարկ լինէր ջատագովել զնա՝ լռէին . և ՚ի բանից անտի դաւԹի՝ զորս խօսեցաւ առ սաւուղ ՚ի պաշարման իւրում , ո՛չ իւիք զգաստանային . վասն այնորիկ զբանս իւր ՚ի դէմն նոցա կարգէ , և նոքիմբք ուղղակի ՚ի դէմն իւր բաքանչիւր խստացեալ մեղաւորի , մանաւանդ ՚ի դէմն քահանայից և իշխանացն հրէից՝ որք անիրաւութիւն դատեցին , և հանգոյն օձի և իժի խցին զականջս իւրեանց ընդդէմ բանից նոր , և ո՛չ առին դեղ բժշկութե՛ն առնմանց իւրեանց :

ՐԱՆԻ

ՃԻԳ. Ով ասէ արդարն պատրաստութիւն չունի խօսելոյ. և ուղիղս պատրաստ ունի դատաստան:

ՄԵԿՆՈՒԹՒՆ

Այս եղանակ խօսից է զարմացական՝ միանգամայն և հեգնական, զի տեսեալ մարգարէին զչիմար դատումն մարդկան խստացելոց՝ ի մեղս, մանաւանդ սաւուղայ և արանց նորա, զարմանայ. և տեսեալ զանուղղելի լինել նոցին՝ հեգնէ զնոսա, և իբր ծաղր առնելով ասէ:

Ով արդարն պատրաստութիւն խօսէր. և ուղիղս պատրաստ ունի դատաստան: Արդեօք թէ ասէր. ոչ թէ զիւրդ զարդարութիւն խօսիք, և ուղիղս դատիք որդիք մարդկան. որ է ասել. քնաւ երբէք արդար լինչ ոչ խօսիք, և ամենևին ուղիղ ոչ դատիք:

Այլ առ բարուք իմանալոյ զայս՝ ծանիր, զի ի հարցանել մեր ցի և էյէ մարդ, էյէ արդեօք բարի՝ տալ բանապարտուց հալածել զոք, ատուիք քամքատել, յանիրաւի սպանանել, գողանալ, չնալ, եւ. եթէ արդարութիւք կամիցին պատասխանել՝ ասեն, ոչ է բարի. զի ի միտս ամենեցուն կայ այս ուղիղ դատուն, թէ չար է զայդպիսիսդ գործել. ապա թէ ոչ, ընդդէմ ոչ կամին, զի և այլք արասցեն ինքեանց զայդպիսի լինչ:

Այդ թէպէտ և այսպէս ձանաչեն և այսպէս պատասխանեն ամենեքին, բայց չարք և ամբարիշտք ի պատասխանելն այսպէս, ոչ արդարութիք խօսին, և ոչ ուղղութիք դատին. քանզի զնեբհակն խորհին ի մտի, և զնեբհակն կամին ի սրտի. վասն զի խորհին և կամին հալածել, քամքատել, գողանալ, չնալ, եւ. զի թէ ոչ կամէին, ոչ գործէին զայդպիսիս: Ապա թէ զոր խօսին, և ոչ արդարութիւն՝ զոր խօսին, և ոչ ուղղութիւն՝ զոր խորհին. և այս՝ ըստ երկուց կողմանց և ս. իբր զի եթէ ասէին, բարի էն այդ գործք, ահա այսու

ո՛չ խօսին զարդարութիւն և ո՛չ դատին ուղիղ. իսկ եթէ ասիցեն, ո՛չ են բարի, այսու ևս ո՛չ խօսին զարդարն և զուղիղն. զի ինքեանք իբրև բարի կամին զայնս:

Սուրբն այսպիսիքս իբրև յիմարք հեգնելիք են, և մերժելիք. վասն որոյ և իրաւամբք հեգնէ մարդարէն զայսպիսիս, և հեգնելով ազդ առնէ նոցա զչարիս նոցին՝ զոր գործեն. որպէս թէ ասէր. դուք գիտէք թէ անիրաւութիւն է հալածել և սպանանել, ևն. ապա զի՞արդ խորհուրդ տայք սաւուղայ հալածել զիս. ա՞յդ է ձեր ուղիղ դատաստան. իսկ եթէ զսարին հակառակն՝ խորհուրդ տայք, թէ չէ արժան հալածել, սպանանել ևն, զի՞արդ ապա միաբանեալ էք ընդ նմա 'ի հալածել զիս:

Մարթ է զայս բան ըստ առաջին հատուածոյն մեկնել իբր հարցական, և ըստ երկրորդին իբր յորդորական. որպէս թէ ասէր՝ միթէ արդարութի՞ւն է այն՝ զոր խօսէիք որդիք մարդկան՝ 'ի գրգռել ձեր զսաւուղ՝ զի հալածեսցէ զիս ևն. յայտ է թէ այդ չէ՛ արդարութիւն. և սակայն դուք եթէ ուղիղ դատէիք, ըստ դատելոյ ձեր՝ զարդարութիւն խօսէիք:

Պատճառ թիւրելոյ այսպիսեաց 'ի դատելոյ զուղիղն է թիւրութիւն մտաց և կամաց նոցա. որպէս պատճառ պղտոր տեսանելոյ՝ է պղտորութիւն աչաց: Ապաքէն որ ախտացեալ է դեղնութեամբ աչաց՝ դեղին տեսանէ զսպիտակն. սոյնպէս և որ ախտացեալ է մոլորութեամբ մտաց և անկարգութեամբ կամաց՝ թիւր դատէ զուղիղն. այլ զորօրինակ ըստ ասելոյ ոմանց եթէ ախտացեալն դեղնութեամբ աչաց կրեսցէ 'ի ներքանս ոտից զխոտն կոչեցեալ կեղիտակ կամ կելիտոնիա, բժշկի, սոյնպէս որ կրէ 'ի ներքս 'ի միտս զխորհուրդս բարիս, և 'ի կամս զգթութիւն՝ բժշկի 'ի թիւր դատելոյ. ապա թէ ոչ՝ մոլի 'ի դատելն, մանաւանդ 'ի դրգռել հպարտութեան և նախանձու: Որ ըմպէ զհիւթ ովփիայ խոտոյ (այն է ոփուսիա՝ որ բուսանի յաշխարհն եթովպիոյ) այլայլի յերևակայութեան. մինչև տեսանել զփուրև զօձս. և զգազանս. այլ եթէ 'ի վերայ այնր ըմպիցէ զգինի արմաւոյ՝ զգաստանայ. սոյնպէս որ արբեալ է 'ի հիւթոյ հպարտութեան կամ

նախանձու՝ այլոյն չերևակայելե, և այլանդակ դառե. իսկ եթե՝ ի վերայ այնը ըմպիցի զգինի սե-
բոյ, կամ եթե ունիցի խորհուրդս բարիս՝ ուղիղ դառե. զի թե և յայտնի տեսանիցի զանկարգուե-
ին՝ ոչ յայլս՝ յուղիղն գարձուցանե։ Ո՛ տեսանել աթե-
մէ՛ք այնահա՝ զի խաղայը ընդ ուբեկայ՝ կարիր
թիւը դառել գնա. սակայն ուղղուեի սրտի նորա
ետ նմա ուղիղ դառել՝ ասելով, ուբեմն կին նորա
է. (ծնն. իզ. 9)։ Ո՛թե չարաիտ ոք տեսանիր՝
թե եղիազար գնե գինաս յակաոբա ուբեկայ, և
ապարանքնան՝ ի դաստս նորա (ծնն. իզ. 22-47.)
սոյնպէս եթե տեսանիր թե յակոբ համբուրե զռա-
քել, ՝ի չարն դառիր. բայց ուղիղք յուղիղն դառե-
ցին. (ծնն. իե. 11)։ Ո՛ք քանզի մարդարէն սա
կաս տեսանիր յորդիս մարդկան զայսպիսիս, վասն
որոյ զարմանայ. * Թե արդարև ասէ զարդարուեի՛ւն
խոսելիք, և ուղիղս դառելիք որդիք մարդկան ։
Ո՛ստանօր եթե չաղկապ Ե՛ առցի իբր թարմատար,
և իբր զարդ, և կամ փոխանակ բառիս չունչամ, միա-
բանին լինի այս. եթե յիրաւի զարդարուեի՛ խոսելիք՝
յայնժամ ուղիղս դառելիք։ Ո՛այս միա մեկնի և վար-
դան. և փոխանակ ասելոյ՝ խոսելիք, գնե սիրելիք,
յասելն. եթե ստուգախոս սիրելիք զարդարուեի՛ւն,
ուղիղս դառելիք։
Ո՛ասամբ ինն այսպէս մեկնի և լամբ". յասելն.
* եթե Ճշմարիտ կամաք խոկայիք զարդարուեի՛ւն, և
,, ուղիղ դառաւոր լինելիք գործոց ձերոց, ոչ ստե-
,, րիւրելիք յօրինացն ՚ոյ ։ Ո՛ս սակայն առաջինն
մեկնուեի՛ւն երևի հարազատ և ուղիղ և համաձայն
յաջորդ բանին. զի յայն Հայելով և ըստ այնմ մտաց
խոսելով մարգարէին, յարե զինի և ասէ։

ԺԲ. Վ՚ԱՆԵԼ Ե ՍԲՐ ԷԱՆ Ի ՍԲՈՒ ՅԵՐԵՄ ՀԱՆՕՐԵՒՈՒԻՆ
ՓՈՐՁԱԷ ՅԵՐԷԼԷ. ՈՒՐԱՑՈՒՐԻՆ ՅԵՒ ՅԵՐ ՆՈՒԼԱՆՆ։

Օայս դնե մարգարէն ի ցուցանել զասացեալն յիւր-
մէ՛ ի սկզբան սաղմոսիս, այսինքն թե յիրաւի ոչ է
արդարուեի՛ զոր խոսին ամբարիշտք, և ո՛չ է ուղիղ
զոր խորհին. զի թե՛և արդար իցի՝ զոր խոսին, և
ուղիղ՝ զոր դառեն, բայց ինքեանք ստուեի՛ զ երևե-

ցուցանեն այնպէս վճռել. վասն զի յինքեանս ոչ ունին այնպիսի սէրն իրի ասէ.

Արդ եւ արդ խօսի՛ ընդ սրտիւ իւրում զիարս ի վերայ անկողնոյ իւրոյ, եւ կատարեսցի՛ ի նմա զոր ասէ Տէր. Ընդ սրտիւ իւրում խօսեցարուք ի վերայ անկողնոյ ձերոյ, եւ կատարեսցի՛ ի ձեզ

Ը. Ո՞ր եղեն ճղաւորք՝ ի մօրէ. Խաբէբան յորժամէր, և խօսեցան սուտ։

Ասելիք քեզ սիրելդն Թշուառութեանէ մեղաւորաց, որ է յետինն ամենայն Թշուառութեանէ քանահան բնաւ Թեան. վասն որոյ գրելեմ քեզ մարդարէին այսու քանիւ ի վերայ նոցա յառեալն։

Ո՞ր եղեն ճղաւորք՝ ի մօրէ։ Այս բան ըստ Ճառին Իբրահիմ մեկնի. նախ՝ Թէ մեղաւորք մինչև եկեն ծնանել ի մօրէ օտարացեալ երևեցան առաջի Աստ. որպէս տեսանի յետաւ ըստ ընտրութեանն. կամ Թէ ի սկզբանէ անտի այսոհիքն ի ծննդենէն իւրեանց օտար Հաւատացան նոքա։ Երկրորդ՝ Թէ մեղաւորք յորմէ հետէ ծնան ի մօրէն՝ օտար եղեն յԱստ, օտար եղեն և յարդարուէ. զի Թէպետ ի ծնանիլն անդ չունէին զբանաւարութիւն ընտրել զաթոռն կամ զչար, բայց քանզի նաև ի բանիլն անդ բանաւարութէ՝ ոչ չոքան զՀետ արդարութէ, այն չետ է նոցա օտար Հաւատալ յԱստ։ Երրորդ՝ Թէ մեղաւորք Թէպէտև ի մարդոյ ծնան, բայց օտար եղեն յուղղութէ մարդկային կենաց, և ի Հանապազորդ չՀաւատութէ։

Ըստ Հոգևորին այլ և այլ օրինակաւ մեկնի այս, ի՝ Թէ մեղաւորք Հեռի գտան յօրհնութէ մօր, զոր ետ Աստ։ Երկրորդ՝ Թէ մեղաւորք ոչ ծնանին ի Հոգևոր մօրէ, այլ օտարանան. որ է ասել. մեղաւորք ոչ անսալով խրատուս այլոց՝ ոչ ծնանին ի բարի կենաց։ Երրորդ՝ Թէ մեղաւորք մեղօք օտարանան ի բարւոյ իւրեանց իբր ի մօրէ, որպէս նախասահմանեցաք ի սկզբնական արդարութէ, և դարձ ի վառաց. և այլն՝ որ ի կարգի։ Չորրորդ՝ Թէ մեղաւորք ընդդէմ գաւառնեն և ուխտի իւրեանց գնալով օտարացան յԵկեղեցւոյ իբր ի մօրէ։ Զայս միտս մեկնէ նարեկացին զայս բան (ի մեկն. երգոց երգոյն. գլ. ա. ե.) ասելով. *օտար եղեն մեղաւորք ի մօրէ իւ. այսինքն ,, ղաւանուն և զուխան՝ զոր ուխտեցին ի ծննդեանն ,, աւազանին՝ սիրել Հայրն ամ՝ և զմայրն Եկեղեցի՝ ,, ստեղին և օտարացան. զի զոր արտաքս գտեալ սա- ,, տանայի ի մօրէ՝ որ է Եկեղեցի, գերի առեալ ,, տանէ՝ որպէս զմարդալաստաւս, որք գողանան

,, զմանկունսն՝ զոր հեռագոյն ի ծնողացն գտանեն ։ Հինգերդ՝ թէ մեղաւորք միասին՝ ի մեզս՝ օտարանան և մերժին յարքայութէ՛, որ է մայր մեր ամենեցուն ։ Պատճառ այսմ այսպէս լինելոյ է այն՝ զոր յարէ զկնի՝ առելով ՝

Խաբէիան յորժամէ ։ Այսինքն յետ ելանելոյ յարգանդէ մերոյ իւրեանց՝ խաբեցան ի նանրութենէ աշխարհիս . որպէս պատահէցաւ եւայի , որ դեռևս նորոգ ելեալ ի կողից ադամայ , խաբեցաւ ի պատրանաց ։ Այլոց որդիք նորա ւչ միայն խաբեցան , այլ և զհետ եղեն խաբէութենէ , պատրելով զինքեանս և զայլս . և առելով ինքեանց և այլոց . և առ այս յարէ ՝

Ա՛ր խօսեցան տուա ։ Առաջինն ի կարգս արտաքին մեղաց՝ երևի լինել սատանէն. զի ի սկզբան անդ սատանէն միայն երևեցաւ յաշխարհի յարտաքին մեղս բերանով սատանայի . որ սատանէական սկսաւ խօսիլ ընդ եւայի յասելն . * զի՞ է՝ զի ասաց ՚ած , թէ չիմ ծա ,, ռոց որք ի դէն ի նէրքս ի դրախտի այդր մի ուտիցէք ։ (ծն . ը . 1 ։) Այս չայտ է թէ այս չայտնի սուտն էր ։ Այս քանզի անսաց այսմ եւայ , չայտնաբար իբր առաջինն ի մեզս եհաղ զսա որդւոց իւրոց ։ Այսսի տեսանելեաւք՝ զի յեղանել մարդոյ յարգանդէ (որպէս տեսանի ի տղայս) յառաջ քան զդործել զայլ մեղս արտաքոյ՝ սկսանի սուտ բանիւ , որ է սուտ խօսիլ , երբեմն սուտ դործով՝ որ է գողանալ ։ Այս որս Հայելով ասէ սիրաք (լէ . 20 .) * յառաջ քան զամ ,, նայն գործս բան Ճշմարիտ առաքնորդեսցէ քեզ ։ Այդ թեպետ և բաղմաց է սա , բայց որոց մնունդ լեալ իցէ ի տղայսէ անտի չար , առաւել ևս զօրանան ի նոսա սատանէիք բանից և գործոց , և կամ փոխանակ նոցին անողորմելիք և անօրէնութիք ծանուցք . որպէս և տեսանել չամպարիշտս մեծաց չամարտուցեալ . զի որովհետև չայսպիսիս տիրէ նեղբին անկարգութէն , և ուղիղ կանոնաց անհամաձայնութէ , այն անկարգութէն և անհամաձայնութէն՝ տայ խօսիլ զսուտ կամ զչար . զի * ի չաւելուածոյ սրտի խօսի բերան ։ (մատ . ժբ . 34 .) մանաւանդ թէ այն սուտէն և անհամաձայնութէն չայտ առնի վնեբքին անկարգութէն . որպէս Ճշմարտութէն վնեբքին բարեկարգութէն .

զի 'ի ձայնէ անօթոյն ձմնայի դատարկութ՟ի և լըու-
թ՟ի նորա, կամ խեղութ՟ի և ամբողջութ՟ի նորին ։

Այլ արդ քանզի այսպիսի տեսանէր դաւիթ զթըշ-
նամիս իւր` վասն որոյ առ նոսա ուղղելով զայս բան`
ասէ. ոչ համարձակիմ յորդորել զձեզ յարդարութ՟ի
և յուղղութ՟ի. զի հնացեալ գոլով ձեր յօտարութ՟ե
բարւոյ և 'ի ստացութ՟ե չարի, չտեսանեմ 'ի ձեզ տե-
ղի ուղղութ՟ե. քանզի գտանեմ զձեզ` յելանելոյ ան-
տի յորովայնէ մօր ձերոյ յարեալ յանօրէնութ՟ի 'ի
խաբէութ՟ի, և 'ի ստութ՟ի ։

Այս բանք հային և յայնոսիկ որդիս եկեղեցւոյ, որք
օտարանան 'ի մօրէ իւրեանց, այսինքն 'ի նոյն եկե-
ղեցւոյ` հերձուածողութ՟բ, կամ անառակութ՟բ վա-
րուց կամ հակառակութ՟բ ընկերաց, (որպէս դնէ եզն-
կացին 'ի գով. լուս ։) Այս և պառակտեալ յարգան-
դէ` այսինքն 'ի շնորհաց աւազանին` յորմէ ծնան, և
զրկեալ 'ի ներքին հաղորդակցութ՟է եկեղեցւոյ` յոր-
մէ սնան. խաբին և խաբեն ընդդէմ դաշինն` զոր
եդին 'ի մկրտութ՟ե. և խօսին սուտ, մանաւանդ նո-
քա որք մոլին հերետիկոսական վարդապետութ՟բ ։
Ի վերայ սոցա տարածէ ծործորեցին զայս բան ('ի
մեկն. մատ. ժդ. 28.) Օսոսա ասէ թշնամիս կոչէ
ն՟ր գիրն. * զի որք սուտ խօսեցան` խաբեալք յար-
,, գանդէ և օտարացեալք 'ի մօրէ աւազանէն` թշնա-
,, միք են ա՟յ. զի զուղիղ բանն խաթարեալ եղծին և
զչար հերձուածս հաստատեցին ‖ ։

Ըստ սմին և մեծն խոսրով յառաջ բերեալ զայս
բան ('ի մեկն. ժամագր. երես. 135.) գրէ այսպէս.
* մարգարէս ոչ վասն այլ իրիք` այլ վասն 'ի հոգևոր
,, մօրէս ('ի ն՟ր եկեղեցւոյ) օտարանալոյ կոչեաց
,, մեղաւորս. օտար եղեն ասէ մեղաւորք 'ի մօրէ.
,, խաբեցան յարգանդէ` այսինքն յաւազանէն . . .
,, խօսեցան սուտ. զի ասեն, իբրև զի սիրելի են
,, յարկք քո տէր զօրութ՟եց. ցանկայ և փափաքէ
,, անձն իմ 'ի գաւիթս քո ('ի սուրբ եկեղեցի) . . .
,, զայս և որ սոցին նման ասեն. և մեծապէս ստեն ‖.
զի հեռի կան յեկեղեցւոյ. յամառեալ են 'ի չար
կամս իւրեանց. ոչ խրատու անսան և ոչ յորդո-
րանաց ։

Ընդ սոսին դասին և այնոքիկ՝ որք չէտ Թողլ զվայել-
չութիւն աշխարհիս յարին ՚ի սէր աշխարհի , օտա-
րանան ՚ի ժողո՝ այնինքն ՚ի կանանէ կրօնի իւրեանց ,
և իսքին չարգանդէ ՚ի մեկնիլն չառաջադրեալ է .
և այնու խօսին սուտ . զի առեն ուխտի իւրեանց՝ զոր
ուխտեցին : Չուխտէն այլ ինն եղեն առջա , և այլ
ինն եղե աշխարհ վասն առջա . և ՚ի չարիչն ՚ի նոյն՝ մի
լինին ընդ նմա : Չայսպիսի ազէտս Հայելով մի ունի
՚ի սրտոյ , աւաղիր , և սոսկայր . և լալագին խօսե-
լով ընդ աշխարհ ասէր . * ով աշխարհ , դու ես միշտ
նոյն , ես եմ միշտ նոյն . մեք ոչ եմք նոյն ||

Ր. ու այսպիսեաքս և տեսանել և զայնսոսիկ ամպա-
րիշտս՝ որք չէտս կացեալ ՚ի բարեկեցութէ իւր ՚ի մե-
րէ՝ ունակացեալ էն ՚ի չարիս և ՚ի չար չարժարունս .
և անդադար զՀետ էն անօրէնութէց . որով և
անընդունակ արարեալ էն զանձինս բարի խորհրդոց
և խրատուց . զորոց խոսի մարգարէն ՚ի չետագայդ
ասելով ՝

Ղ· Սրամարեք նոցա ըստ նմանութէն օյն . որպես էթէ և
չարէթ, չի եղեալ է ղնոսին իւր ՝

Ե· Օ ի ՚ի լուելն նա զնոյն խովէլ ձորաքրն . և ՚ի առ-
ջե գրել ՚ի գեղատուէ ինձանդ ՝

Օ չամառ չարուէնի մեզաւորաց օտարացելոց ՚ի մե-
րէ ըստ ՚ի վերոյ զրելոցդ՝ ոչ կարէր մարգարէն այ-
լով իւիք յայտնի կացուցանել , բայց եթէ նմանութէ-
գաժանութէ օձի , իխի , և քարբի : Այս այս կարի ՚ի
գեղ· զի առջա յորժամ առնուն զնաժոտ ձայն թռչնի՝
կատաղին , և իսկոյն փախին զահացն իւրեանց . կամ
ըստ ասելոյ ոմանց՝ զմին չահացնջա գնան ՚ի վերայ
գետնոյ , և զմիւսն խնուն տատմէ . զի պէ գան և սոս-
կան ՚ի ձայնէ անտի . և չետոյ ՚ի տալ թռչնի զայլ
ձայն՝ սխորժեալ ընդ այն իքր ընդ ձայն չաճոյ լսե-
լեաց իւրեանց՝ և իքր ընդ ձայն ազատեցելոյն՝ ըն-
տանեքար բերին առ թռչնին . և յերթռնիչն ՚ի նմանել
ոչ խայեն զնա՝ բարեկամ կամ բարեբար չանաչե-
լով զնա ինքեանց : Կամկական օրինակ ինն կարի լի-
նել սյսմ այն , զի յորժամ փիտա տեսս կատուի՝ երբեա-

նու և փախչի. և յորժամ փիս փիս ասէս, մեղմի և ընտելաբար մերձի. Այնպէս և տեսանել և ի շունն, և ա և ի գայլն՝ նաև յոչխարն և ա. Ի շրջիլ խմամ յերգ ծովս՝ անկաւ ի նաւէ գառն մի ի ծով, և մերձ էր ընկղմել. և որք էին ի մակոյկ նաւին ձայնեն առ նա՝ զի մերձեսցի. այլք ի ցամաքէ խոտ ցուցանէին, և քաղցրութիւն առ ինքեանս կոչէին. բայց նա փոխանակ մերձենալոյ՝ խորշէր և մայրէ և ընկղմեալ լինէր. Էանց ընդ այն տեղի մի ոմն ի բուղտաց. և տեսեալ զգառնն ի տաղտապի՝ ձայն ետ նմա այլով ինն բարբառով. և նա նոյնժամայն սկսաւ դիմել առ նա իբրև առ ընտել բարեկամ իւր. և բուզարն կալեալ զերջերաց նորա եհան ի ծովէ և տուեալ ցամէր իւր գնաց. O այս տեսեալ իմ, ի նմանութիւն առի և զձայն թռչնի. որ Ձայնարկութեամբ արձակ տի իւրոյ նախ զնաւացուցիչս ձայնեւոյլ խոժոռեցուցանէ և կատաղեցուցանէ զձայս. և յետոյ մեղմացուցիչս խօսելով այսոքիքն զՀաճոյս ընծրւեալ նոցին, առ ինքն ձգէ զնաւս, և ըմբռնէ. և Թմրեցուցիչ գեղս ևս մատուցանէ նոցա, և նուաճէ զնաւս ընդ իշխանութիւն իւրով. որպէս և այսը իսկ տեսանէք։

Ի.սոյն յայսմանէ տեսանի՝ Թէ Թռչուածք ոչ է կարեւոր Թռչել, այլ արհեստ. զոր Թռչիլ միայն ուսեալ վարեն. Թէպէտ և սակաւք կարեն ուսանիլ անբաւական գոլով յարմարել զձայնսն. Իսկ եԹէ կարեւոր Թռչել համարեսցի, մարգարէն ոչ եԹէ իբր գովելի ինչ յառաջ բերէ ասա զայն, այլ կամի առաւել իբր նմանութիւն հաստատել զառացելոյն իւր, որպէս յօբիսնակ բերէ՝ ՆՀն մերոյ զգործ անտեսին, և զգործ գառատուրին ԱԱ, ոչ եԹէ գովելի ցուցանել զայնս, այլ իբր նմանութիւնք հաստատել զոր ասէ.

Ի.ստանօր օձիւ իմացեալ լինի Հաւարակ Թիւնաւորօձ. իսկ իժն է յարաԹնոյն օձս այն՝ որ ոչ ծնանի ձուս, այլ որպէս զայլ օձս, այլ կենդանի ելանէ յորովայնէ մարն առանց ձուոյ. որպէս և տեսանեմք իսկ ի բանալ զիրս նորա. զորմէ ասէ Յովսէորդեցին (ի մեկն. մատ. Ժբ. յ4.) ԹԷ * ի յղանալն զՏպրեն, և ի ծնանլն ,, նիրն զմայրն սպանանէ ‖. այլ այս չէ ինչ Հաւաստի, Հայելով յայլ Թարգմանութիւս, ասա իժն (իբր.

ֆիլիէն) դնի փոխանակ այրը օձի, որ կոչի խարա-
մանի, առաքա կամ ծաղաւ (աբբիս, սաղըբ երլյան)
զի ի խածանելն յանհնարինս խարե և ծարաւեցու-
ցանել. և առյորբեղով սպանանել. որպիսի էին և այն
օձք՝ որք հասին ի վերայ իսրայէլացւոց յանապատի
անդ։

Յոակ քարքն է այլ ի՝ն տեսակ չարաթոյն օձի՝ որ բա-
սիլիսկոն կոչի՝ այսինքն արքայիկ. և ըստ ասելոյ
սմանց՝ է արու իժ. որպէս համարի և վարդան։ Ընդ-
դանդամուելն իւն մեզաւորաց՝ գազանութեան սոցա
և հնարից սոցին նմանեցուցանելով մարգարէին՝
ասէ։

Արամաբէ նոցա ըստ նմանութեն օձի, որպէս էին և յաբէլ,
զի խոչել և զսխնջել էր։ Օձ ի լուիցէ նա ձայն խուվիլ
ձաքաթի, և ի առնե գեղ ի գեղատուն իմասին։ Ար-
ատուելն կոչի զկատաղի անզգամութեն անագորոյն մե-
զաւորաց, կամ զկատաղելն սրտից նոցա և զանզգջու-
թեն նոցին. և ասէ լինել ըստ նմանութեն օձի, որպէս էին
և յաբէլ. այսինքն թէ այն անզգամութի, կամ խաւտու-
թեն, և անզգջականութեն նոցա է նման չարուեստ այսո-
ցիկ գազանաց, զի ըստ սոցա վարին. իբր զի որպէս
սոքա ի զգալ ձայն թովչի կատաղին և խցանէն
զականջս իւրեանց, զի մի ազդեսցի ի նոսա ձայն
թովչի, սոյնպէս և մեք մեզաւորք ի լսել զասն բա-
րի ի բերանոյ այլոց, կամ լընթեռնուլ զիմաստասից
Հաւատ, կամ ի տեսանել զօրինակ զգաստուե՝ պղտո-
րին, և երբեմն կատաղին։ Այլ որպէս զի մի որսա-
ցեալ լիցին յոտղուելե՝ խցանէն զականջս Հոգւոյ իւ-
րեանց, կամ դնեն զմի յականջաց իւրեանց՝ այսինքն
զգործնական Հանապազումն իւրեանց ի վերայ երկրի՝
այս է՝ ի վերայ երկրասիրութեն, մարմնապաշտուե-
ւն. և զմիւսն այսինքն զտեսական Հանապազումն իւրեանց
խցանեն տառամբք մնալոյ վարդապետութեն, կամ մի-
մեանս խորհրդոյ. Հաստատուի և այ կամին լսել
ձեռբին ականջօք. այլ փոխանակ լսելոյ խստացուցա-
նեն զսիրտս իւրեանց անզգջականութեն, զի մի գուցե
ընկերիցն ի չարեացն՝ զորս սիրէն, և գայցեն
յոտղութեն՝ զոր ատեն և մերժեն։

Այ զորօրինակ ի խցանել օձի և քարբի զականջս

իւր՝ ոչ ևս դիւրաւ՝ ազդէ ՚ի նա արհեստ թողչի, այսպէս ևս ՚ի խզանել մեզաւորին զսիրանըմս հոգւոյ իւրոյ՝ ոչ ազդէ ՚ի նա՝ ոչ ձերսատուելի մարդկային բանից, և ոչ զօրուն ձայնին պատգամից, ոչ սպառնալիքն և ոչ սաստ պատժոց։ Այլ եթէ երբեմն ազդեացէ ևս, ոչինչ նեղգործէ. զի ոչ առնու զայն երբեք դէղ, այլ միայն ձանձալի լինել զօրաւոր ինչ բան. զոր ոչ կարէ կատարել [1]ՀԱՒ հաձեսցի. զի սովըրուեալն ախտիցն՝ և ունակուելն անագորոյն բարուցն թոյլ ոչ տան նմա ձեմարտապէս կամիլ յետս կալ ՚ի չարէ։

Այնդ սոսա գասին և այնոքիկ, որք փախչին ՚ի լսելոյ զքարոզս՝ ևս և զո՛ և իցէ հոգևոր բանս. զի մի ըստ գտանիցին ՚ի չար խղձի մտաց. * զի առնեայն որ ,, զչար գործէ՝ատեայ զլոյս, և ոչ գայ առ լոյսն. ,, զի մի յանդիմանեսցին գործք նորա ‖. (յովհ. ՚գ. 20։) [2]Յօրժամ հաւր վաւի գիշերային յանմարդաբնակ տեղիս՝ փախչին ՚ի լուսոյ նորա գազանք, որպէս և փորձեալ ետաք. սոյնպէս և չարք ՚ի լուսոյ քարոզութեանէ, պատճառելով զպատճառս մնոտիս, թէ միջոց պարապոյ չունիմք, կամ թէ ծանր գործս ունիմք. ոմանք՝ թէ մեք ևս գիտեմք, կամ թէ ոչ իմանամք. ոմանք՝ թէ երկար խօսի կամ կարճ. ոմանք թէ խորին խօսի, կամ թէ յոյժ պարզ. ոմանք՝ թէ կարգ բանիցն ոչ ել յարմար, կամ եղանակն ոչ ել քաղցր. և ոմանք յանդգնին և ասել. մեղաւոր ա՛ն է՝ որ քարոզէ. կամ թէ ինքն ոչ պահէ՝ զոր ասէ։ Օ՛ի փոյթ է քեզ, միթէ մեզաւոր գոլ նորա արգելացանէ զքեզ ՚ի մեղաց, կամ ոչ պահել նորա անմեղադրելի կարէ առնել զքեզ. դու հայեաց յօգուտ անձինդ. եթէ յօժարամիտ ունին մատուցեալս, բան քարոզչին ազդեսցէ ՚ի սիրտ քո, և զուարթացուսցէ ՚ի հոգևոր կեանս։ Այնդ ունին եմուտ մահ ՚ի մարդն, և ընդ ունին մտանել կեանք. ուստի ասէ. * ընդ որ եմուտ մահ, ընդ նոյն մտանել կեանք ‖։

Ունին մատոյց Եւա սատանէ, և եհաս ՚ի նա մահ. ունին մատոյ դու Յիմարտուէ, և հասցէ քեզ կեանք։ Այն ևս որք յօժարուէք լսել, բայց ոչ օգտուիք. որ ունիսի են նոքա՝ որք կամին ուսանիլ ինչ ՚ի քարոզու-

ՀՀ ոչ վասն իւրեանց, այլ զի զգուաստն վաճառեսցեն այլոց։

Այսպիսի են և նոքա որք հետաքրքրութիւն ունին դնեն ի քննել զանս քարոզչին, և կամ ի զուարճանալ ընդ բանս նորա։ Այն այսպիսեսաց ասաց Տէր առ եզեկիէլ մարգարէ, (ԼԳ· 32·) * և դու լինիցիս ,, նոցա իբրև զձայն երգոյ քաղցրաթարթառ յօրինելոյ ,, և լուիցեն զանս քո և ոչ արասցեն ։ Այսպիսեքա հաճարեալ լինին հանդերձ ոչ լսողաց ըստ նմանութեան իւրում և քարեաց. ուստի և ոչինչ շահին. զի չառնուն օրում կարօտին. զոր և ի մանաւորի առաջի մատուցանել մարգարէն, և ասէ։

Այս ՚ի սաղ դէղ ՚ի դեղատուէ խմասին։ Իւր բառդ դեղատուէ խմասուն՝ նշանակի զնոյն զոյն Թովիչն, որ ասէ Թմբեցուցիչ դեղ օձի՝ յորժամ ըմբռնել. և Թևպիտ օձն ոչ գիտէ Թէ Թովիչն դեղ տալոց իցէ ինքեան, բայց քանզի այնպէս լինի՝ զգուշանայ ի ձայնէ նորա, զի մի ըմբռնեսցի ՚ի նմանէ. ուստի յայս բան * Եւ ՚ի սաղ ։ եւ, ոչ ցուցանէ Թէ գիտելով զգուշանայ օձն, այլ Թէ երկնչի և զգուշանայ՝ որոյ վասն իսկ ածառարէ խնուլ զսկանջս իւր. սոյնպէս և մեզ առաքեալ ոչ Թէ յանգիտաս, այլ գիտելով Թէ բանք քարոզչաց կամ խրատուցոց են դէղ Թմբեցուցիչ սիրոյ իւրեանց, կամ դէղ բժշկութեան, ոչ կամին առնուլ զայն. և յայս իսկ խցանեն զսկանջս հոգւոց իւրեանց, Ընկոյս արարին և հրէայք ընդդէմ ձայնի Հարուստ Թովչաց այսոցիքն մարգարէից, և խմասուն դէղատուաց, այսինքն առաքելոց։

Նոյնս որովհետև ոչ կամէցան առնուլ և նոքա լսել այսպիսի ձայնի՝ լսելոց են զահաւոր ձայն դատաւորին. երթայք յիս՝ անիծեալք։ Լուսոյ ասէ սուրբ գրիգոր լուսաւորիչն մեր (՚ի յայտնու. Հատ. Ե·) * որք խնուն զսկանջս առ ճշմարտութիւն աւետարանն, նոքա , և մեւս առնեն կոտրատեան բարբառոց և ամենապատիր վիսասիարաց. և առնեն զմիտս սուրբ գրոցս իբրև զքարեից , զի մի առցեն զկենդանի դէղն բժշկութեան ՚ի դեղատուէ ճշմարիտ բանիցն, լսելոց են զբօթ և զդժ ահաւոր սպառնալեօք ՚ի նոսին. երթայք յիս անիծեալք ՚ի հուրն յաւիտենական։

Հրեշտակային (՝ի գալ. լուս.) զեստաստիրտ մանկունս
զպրութեանն՝ իժից և քարբից նմանեցուցանելով ասէ.
* ՚Ի մանկունք ուսմանն քո սրտմտութիք և ընդդիմացեալք
,, խրատուս, որք ոչ ախորժէն լսել զձայն Թումբի Ձար-
,, տարի. և ոչ ընդունին զեղ՝ ի զեզատուէ իմաստ-
,, նոյ. մանուանդ Թէ զեղատուքն են կարօտ զեղոյ
,, բժշկական. և եթէ ոք ուրեք զոյն նոցա մատու-
,, ցանէ՝ ատէն և Թշնամանեն ։

Ի սոսին ակնարկելով նարեկացին ոդեայ ՚ի գիմաց
մեղուոցն, և ասէ (՚ի բանն. ծ.) * քև՝ որ քո բազ-
,, միք աւետարանեցաւ ինձ յամառելոյ իժի. և քար-
,, բիս ունկնաթիկ և լսելափակ անլուր ականջաց ։

Ի յատ որում (և ՚ի բանն ե.) ասէ. * խոյն զպատու-
,, հան լսելեաց իմոց առ բանիդ կենաց ընդունելու-
,, Թիւն ։

Ի ամբոնացին ընդ անուամբ օձի, իժի, և քարբի
իմանալ աստ զդևս, և ասէ՝ Թէ մարդիկ նմանեցան
նոցա. և որպէս նոքա անպէղ են ՚ի լարիս, և ոչ են
ընդունակ ուղղութեան, սոյնպէս են և բազում մեղա-
ւորք։ Օ այս ասէ և Հիրաւոս վարդապետ (՚ի մեկն.
Տարեբաւորացն եւագրի. ա. 68.) ուր զսրտմտու-
Թէն նոցա նմանեցուցանէ սրտմտութեան օձի,
Իսկ գիմիգր ակնատցի (՚ի Հրահանգսն) օձիս իմա-
նալ զատանայ, իսկ այլովք զդևս նոքա. չարաբարտ-
Թի մեղաւորաց է ասէ, * ըստ նմանութեան օձին այս.
,, ինքն սատանայի. իժի քարբի՝ այսինքն գիւաց նո-
,, րին, զի նպատել են զանկնջս իւրեանց ընդդէմ ձայ-
,, տար Թումբաց, (այսինքն) մարգարէից և առաքելոց
,, և վարդապետաց եկեղեցւոյ. և ոչ կամին առնուլ
,, լիմաստուն բժշկաց զդեղ ապաշխարուԹեան և առող-
,, ջանալ յախտէն ։

Իմանք աստուծոյ օձիւ, իժիւ, և քարբիւ բարոյապէս
իմանան զչար խիղճն մնաց, որք գառն խայտեն և
այրեն զսիբտ անգէղջ մեղաւորի, և տագնապեն գնա-
ս. զի իբրև ոշնի փշալից է խիղճ մնաց. եթէ մեք
ձեռցիս ՚ի նա՝ ընդդէմ նորա գործելով Հարկանէ.
որով և տեսանես զՀոգի քո արեամբ շաղախեալ։
Կրէ աստ վարդան, Թէ ոմանք ՚ի քարբից՝ այսինքն
յարու իժից՝ ասնին՝ ինձերքոյ պարանոցի զՀևս, որով

Թագէին և Հարկանեն. յայս միտս է և գէորգ վարդապետ. (որպէս տեսանի ի մէկն. եւայլ.) Այսոցա նմանն են ոմանք յանագորոյն անձանց, որք բանիւք իւրեանց իբր թէ օգ Թաւուցեալ խաճանեն զայլս առանց բժշկելոյ. այսպիսիս են և ոմանք ի լկտի կանանց՝ որք կամակար հայեցուածովք ի հէնուստ իբրև նետիւք հարկանեն, և ի մահ վերաւորեն զհոգին. և սոքա են իբրև մարմնացեալ դևք կերպարանեալք յօձ և ի քաջ. որոց ոչ Թոյլտայ քարոզչաց ազգէ, և ոչ իմաստասէր վարդապետաց նպաստել. այլ բարկութիւն՝ ի խորտակել զանգգամտութիւն սոցա, և ի նուաձել զբորբոք սոցին՝ ոչ միայն ի հանդերձեալն, այլ և աստ իսկ. ըստ որում յայտ առնէ մարգարէն ի յաջորդ հատնէն, ի մէջ բերելով զբարեպաշտ պատուհասիլ ամբարշտաց՝ յասելն.

ՀԶ. Վ Ա՜Յ ՔԷԲԵՈՅԷ ՂԱՓԱՂԱՆՈՅ ՆՈՅԱ Ի ԲԵՐԱՆՈՅ ԻՐԵՒԱՆՑ. Ե ՊՃԱՒՆ ԱՒԵՒՕՈՅ ԻՒՐՈՒՄԵՒՑ ՊԵՐ.

Վ՜այ անդէն բազումք, որպէս և ակնյայտապէս վկայեն, Թէ Թովիչք յետ ըմբռնելոյ զօձս՝ Թափեն զատամունսնոցա. զի մնասուցանեն ի բերան նոցին զնիւթ Թաղեալ (այսինքն է քերէ), և ի խաճանել նոցա զայն ատամամբք՝ յանկարծ ցնցէլով քարշէն, և ի բաց Թափեն զատամունս, և կամ փշրեն զնոյնս. զայս գործ Թափից յօրինակ բերէ ատա մարգարէն, ի ցուցանել Թէ ոճ ոչ որպէս զիովիչս, այլ որպէս ինքնիշխան տէր հզօր զօրութիւն փշրէ զատամունս մեզաւորաց. քանզի ի Թոյլ տալ անդ իւրում խաճանել նոցա զարդարան իբրև զնիւթ Թաղեալ, անդէն իսկ ձգեալ լինէն զնոսա, այսինքն զարդարան ի բերանոյ նոցա՝ խորտակէ զատամունս նոցին. և զնոսա իսկ զայնս զահանջս իւրեանց զի մի լուիցեն, ոճ և իսկ նոցանէ զբերանս նոցին, փշրելով զատամունս նոցա, զի մի խաճանիցեն զայլս. Ասէ Տէր Հայելով մարգարէին ասէ.

Վ՜Ա՜Յ ՔԷԲԵՈՅԷ ՂԱՓԱՂԱՆՈՅ ՆՈՅԱ Ի ԲԵՐԱՆՈՅ ԻՐԵՒԱՆՑ. Վ՜ատամունքք իմացեալ լինին աստ անզգամութիւն մեզաւորաց և բանութիւք նոցա, որովք խաճանեն զայլս և ինքեանս նոցա յանձինս, կամ յինչս նոցա, և կամ ի համ

բաւս նոցուն. և ա՛ծ՝ որ առնէ իրաւունս զրկելոց՝ փշրէ զատամունս նոցա, այսինքն խորտակէ զանզգամութիւնս նոցա պէսպէս պատժովք. այսինքն կամ տկարացուցանելով զնոսա, կամ բառնալով զկեանս նոցա մահուամբ, և կամ 'ի հանդերձեալն դատապարտելով 'ի դժոխս. ուր ո՛չ թէ սրեսցեն և զինեսցեն զատամունս իւրեանց ընդդէմ այլոց, այլ կրճտեսցեն զնոսին, և ծամեսցեն նոքօք զլեզուս։

Իսկ բերանով զոր յիշէ, նշանակի իշխանութի կամ կարողութիւն նոցին, որպէս թէ եդեալ էր. թէ և անզգամութբ իբր ատամամբ առեալ իցեն մեղաւորք յիշխանութե իւրեանց զանմեղն. բայց մինչև հասեալ իցեն՝ խորտակէ տ՛ր զանզգամութիս նոցա. կամ եթէ թոյլ ես տացէ խածանելոյ, ո՛չ թողու նոցա 'ի վերջոյ՝ վարել զատամունսն ըստ իշխանութե իւրեանց. այլ յորժամ յիշխանութե անդ բռնանան՝ բառնայ զնոսա. որով և իսպառ փշրէ զնոսա և զատամունս նոցին։ Նա և զի նոքա 'ի գործելն զչարիս՝ յանձնապատան կան, և համարին զինքեանս անընկճելի իբրև զառիւծ, այսու առաւել գրգռեն զբարկութիւն ա՛յ 'ի խորտակել զնոսին. ուստի ո՛չ միայն զատամունս նոցա իբրև զօձից փշրեսցէ ա՛ծ, այլ և իբրև զառիւծուց խորտակեսցէ։ Նա առ այս յարէ մարգարէն ասելով։

Ն. զժանիս առիւծուց խորտակեաց տր։ Ժանիք առիւծուց են այն կեռ ատամունք նոցա, որովք պատառեն՝ զորս ըմբռնեն. և սոքիմբք նշանակին նոյն անզգամութիք և զօրութիք մեղաւորաց՝ զորս ատամանց օձից նմանեցոյց 'ի վերոյ. յոր միտս կամի ասել. որչափ և զօրաւոր իցեն ժանիք, այսինքն անզգամութիք մեղաւորաց, ա՛ծ խորտակէ զնոսին։

Իսկ այն զի յայս համար յառաջնում հատուածի ապառնի դնի բայն՝ յասելն՝ փշրեսցէ. իսկ յերկրորդում յանցեալն դնի՝ յասելն՝ խորտակեաց. ոչինչ այլայլէ զմիտս բանին, զի յերկրորդին ես դիտէ մարգարէն ցուցանել, թէ ա՛ծ նուաճէ զայնոսիկ՝ որք նուաճել կամին ո՛չ զինքեանս՝ այլ զայլս։

Մարթ է ես ասել՝ թէ զայն դնէ իբր տարացոյց 'ի հաստատութիւն առաջին հատուածոյն. որպէս թէ

ասէր. Ա՛ծ որ խորտակեաց զժանիս առիծուց, մինչ
ոչ կարէ փշրել և զատամունս օձից. որ է ասել,
եթէ զՀզօրագոյնս խորտակեաց ՚ի՛ր, թերևս և կա-
րասցէ փշրել զակաւս։

Ա՛յլաբանօրէն՝ քո ՚ի՛ր մեր փշրեաց զատամունս դի-
ւաց խորտակեաց զժանիս կռապաշտ կայսերաց, և
աւար զնոսա անարգս. որպէս գրէ ՚ի յայտնի Համարն՝
Այդպէս և առաքեալք և Հայրապետք Հետեւողք նո-
ցին ըստ գրելոյ նարեկացւոյն (՚ի գով. առաք.)
* կոխեցին, մանրեցին զատամունս օձից խիստ հեր-
,, ձուածողաց, և թունից կաթչաց՝ նոցին գործակ-
,, ցաց, ընդ զօրացեալսն ՚ի քարին՝ մնչու և բեւեռա-
,, ցաց ։

Խարոյսպէս ՚ի գալ ընդ՚ի՛ր ՚ի հոգին և ՚ի հատատ
տալ մարդոյ ՚ի բարին, ատամունք չար խորհրդոց
փշրին ըստ լամբ". և ժամիք մեզաց խորտակին։ Ա՛յլ
եթէ քանի՞ անարգ են այսպիսիքս առաքի՛ն այ, յայտ
առնէ մարգարէն նմանութի՛ւբ իմն ասելով։

Ե. Ա՛նթէ եղիցին նոքա որպէս ջուր՝ ի հեղեղ. ՚ի լ-
բել աղեղն նորա՝ թեթեւացին. որպէս մա՛ղ հո-
ւի, և սպառեսցին։

Ա՛ռաքին օրինակաւ՝ զորս եդ ՚ի վերոյ (՚ի համարն
4. և 6.) ցուցանել ին զզօրաւոր լինել մեղաւորաց՝
Հայելով առ տկարս. իսկ այսօրիկ երեքին օրինակք
ցուցանեն զտկարութի՛ւն և զանհաստատութի՛ւն զօրու-
թե՛ն նոցա, յայտ առնելով թե՛ ո՛ւ իցէ զօրութի՛ւբ մե-
ղաւորաց՝ անզօրութի՛ւն են համարելի՛ և իբր ստուեր
առաքի՛ զօրութե՛ն են՝ զի՛ ոչ ըստ ամի՛ն ժամու
ցանաւ ՚ի՛ զօրութի՛ն ՚ին. մի՛ յոյժ ամրութիւ
՚ած զձեռն իւր ՚ի նոցանէ. երկրորդ՝ յոյժ մանուա
ւոր պատժովք փոքր փոքր նուաճէ. զնոսա. և եր-
րորդ՝ յոյժ պատուհասիւբ սպառէ զնոսին. ըստ ա
ռաքինոյն ասէ։

Ա՛նթէ եղիցին նոքա որպէս ջո՛ւր՝ ի հեղեղ։ Ա՛յսինքն
որպէս ջուր յոյժ մեծ հեղանի կերկիր՝ անպիտանանայ
և անարգանայ. զի ըստ մնասին ՚ի հող ընկղմի, և ի՛ր
մասին ՚ի տապոյ արեւու բառնի, և անչեւտանայ,
սոյնպէս յոյժ ամրութիւ՝ ած զձեռն իւր ՚ի մեզա-

ուրայց, տկարանան, և անարգանան. զի զօրութիւնք նոցա ըստ մասին իջանէին ՚ի հող, այսինքն դառնան ՚ի տկարութիւն իւրեանց. և ըստ մասին քառնին ՚ի տապոյ բարկութենէն ոյ, մինչև նշմարանք նոցա ևս ոչ մնան. կամ թէ որպէս ջուրն ՚ի թողեալ մնելոյ հեղանի և վատնի, և իբրև անարգ ինչ անհետանայ, սոյնպէս և մեռեալքն ՚ի թողանիլն յոյ իբր անարգ ինչ նաեղանան և պակասին ՚ի զօրութենից իւրեանց. Վասն զարձեալ՝ որպէս հեղեղք ջուրց թէպէտև ահեղ ինն երևին, և բազում ինաստ գործեն, բայց յետ սակաւ ժամու չքանին, սոյնպէս և գազանամիտ մարդիկ թէպէտ և զօրաւոր երևին, և բազում չարիս հասուցանեն այլոց, բայց յաւուրս միում չքանան ՚ի միջոյ. որպիսի եղեն ՚ի հնումն սաւուղ, յերոբոամ, աքաաբ, ՚ի և. և ՚ի կայսերս ներոն, կայիոս, դոմետիանոս, ՚ի և. և ՚ի հերետիկոսապետս մանի, սաբէլ, արիոս, մակեդոն, նեստոր, ՚ի և. որոց օրինակք եղեն դադան և արիրոն, որք իբրև սուզեալ ՚ի հող անհետացան. Այլ թէպէտ և կարօղ է ոճ խոկոյն ՚ի զղուլ ՚ի ձեռաց զայսպիսի չարս, զի անպիտանասցին, բայց երկայնամիտ գոլով, բազում անգամ այլազգ վարս. իբր զի փոքր փոքր պատժելով կամի զի դարձցին. յայտ առնէ յօրդոր բանիւն ասելով՝

Ի լուրէ ալեղան նոցա (այսինքն ոյ) պիտասցին. Այլ զդամբ խմացեալ լինել սատ ամենակարողութեան ոյ ըստ վրէժխնդրութեան կամ նոյն իսկ վրէժխնդրութեան ոյ. և յայս միտս կամի ասել. ոճ լսեալ է զամենակալ բողոքեն իւր իբր զաղէղն, և արձակէ նետս պատժոց ՚ի մեռուսորս. և մինչ լսեալ ունելով զոյն՝ ոչ դադարի յարձակելոյ զնետս հետզհետէ. մինչև գինն մին ՚ի նետից ազդեցի ՚ի սիրտ նոցին. այսինքն թէ գինն մին ՚ի պատժոց նուաճեսցի զբռնութենէ նոցա, կամ զամբարտաւանութենէն նոցին. որով և տկարասցին ՚ի չարեաց իւրեանց, կամ զգաստասցին;

Օ այս հանապազորդ տեսանէիք զոյզ մերոյք, թէ բա և յանձինս մեր զգամք. եթէ կամիս, առաջի ևս նկարեցից քեզ զոյն. յորժամ հասանէ քեզ ցաւոյ՝ դու զինչ համարիս զոյն. նետ է արձակեալ յաղեղանէն ոյ, զի զգաստասցիս, և տկարացիս ՚ի

դրծՃելոյ զչար. այլ սպասիլ յորժամ հասանիլ քեզ հիւանդութիւն, միւս այլ նման է. և յորժամ հասանիլ քեզ կորուստ ընչիցդ կամ տանդ, այլ միւս ևս նման է այն. սակս նման յորժամ հասանիլ քեզ տեսանել զմահ որդւոցդ, այն ևս է այլ նման. և յորժամ հասանիլ քեզ նախատիլ կամ զրպարտիլ ։։, ահա և այն նման է առաքեալ յոյն ։

Ի՚դէպ չորեքկին արձակիլ ասէ զայսպիսի նման. մի՛ բան այդմ զոր եդաք, այսինքն է՝ ի զգաստացուցանել. որպէս արար ընդ մանասէ և ընդ այլ բազումս մեզ առաս. զի կամ դարձցին, և կամ տկարացին՝ ի մնա՛ անլոյ այլոց։ Ի՚բրկորդ՝ ի պատուհասել յանխնայ, որպէս արար ընդ փարաւոն, առ որ հետզհետէ արձակեաց պնեաս իւր՝ ի կորուստ նորին։ Ի՚բրորդ՝ ի պատիժ թողեալ մեզոյ, որպէս արար ընդ դաւիթ և ընդ այլս։ Ի՚բրորդ՝ ի գոյց համբերութեանն ծանոյց իւրոց և յատուկ ընտրելոցն նոցա. որպէս արար ընդ յոբ, և ընդ այլս։

Իսկ պատճառ՝ ի մէջ բերելոյ մարգարէին զայսպիսի նմանութիւն՝ այն է, զի մի կարծեսցեն մարդիկ՝ թէ ըստ դիպուածոյ հասանեն ինքեանց պատիժք, այլ դիտմամբ. զի որպէս նետաձիգն արձակելոյ՝ ի քաջահմուտ աղեղնաւորաց քաջ դիտին, այսպէս և պատիժք հասեալք՝ ի մեզաւորս, կամ նեղութիւնք եկեալք՝ ի վերայ արդարոց՝ անվրէպ դիտին յամենաուսեալ աղեղնաւորէ անտի, այսինքն յոյն։ Ի՚դէպ թէպէտ և հասաբակօրէն այսպիսի նետաձգութիւնք վարէ նաև ընդդէմ մեզաւորաց, իբր զի դիտէ արձակմամբ սկսպէս պատժոց առ սակաւ նուաստել զնոսա. այսինքն կամ յաղաշխարութիւն ածել, կամ՝ ի տկարութիւն վարել. բայց հուսկ յետոյ եթէ ոչ ըզգաստասցին, հարկ և մաշէ զնոսա. և առ այս յարկ մարգարէն զկնի և ասէ ։

Որդեա՛ մի՛ զլե հալի, և սպասեսցես։ Ո՚զգուշութիւն առաքեալ նմանեցուցանի տկարութիւն մտոյ. իսկ ըզգոյծ բարկութիւնն այդ նմանեցուցանի հրոյ, զոր և՝ ի մէջ բերէ՝ ի յաջորդ համարն. որով ցուցանէ, թէ առաւել դիւրին է այդ տկարացուցանել և չքացուցանել զզօրութիւնն և և իցէ տաքաբշուած, քան հրոյ

հալել զմոմ։ Օ՛ի զօրօրինակ օրհասի և խիստ իցէ մահն՝ ո՛չ կարէ ասկալ ջերմութեան հրոյ, այլ խակոյն հալի, և վառեալ ծախի, և օրպէս թէ չքանայ, սղմպէս և զօրութիւնք ամբարշտաց օրհասի խիստ իցեն և անհանգիստք ի բարկութիւն անտի ոչ խակոյն հալին, այսպէսքն տիարանան, և ծախին. վասն որոյ և յաւելու թէ սպառնացին. այսպէսքն այնպէս ծախեսցին, օրպէս թէ ո՛չ գոյին յառաջին։

Ամբրոնացին զայս բան վերածէ յօր դատաստանի. և՝ ասէ՝ թէ արգար դատաստանն քան իբրև աղերս լսեալ հարցէ զմեղաւորս. և բարկութիւն նորա մատնեսցէ զնոսա ի հուր դժոխոց. որ թէպէտև դիւաց էր, բայց մարդկան ևս եղև վասն հետևելոց նոցա գիւաց. և ի գոլի հուրն յայն նման բարկութիւնն ոչ ըստ նմանութեան հրոյ հալեսցէ զնոսա խոպառ՝ այս ինքն յաւիտեան։

Աստանօր շաղկապէ և՝ որ գտանի ի մերում թարգմ՝, դնի առ ի շարայարել զամն. ունելով զնշանակութեան բառիս այսպէս օրպէս թէ ասէր. զօրօրինակ մոմ հալի ի հրոյ, այսպէս և ամբարիշտք հալեսցին և սպառեսցին ի բարկութենէն ոչ՝ օրպէս ի հրոյ. և զայս այլով ինն բանիւ ևս յառաջէ դնէ ի յաջորդ համարն ասելով։

Ը. Նման հաւ՝ և ո՛չ պետն զաբէ, զնելն ի դա առեալ էր պիտոյ ենթակայ. որպէս գծենիք բարբառիք՝ կենդանոյն ինդեա։

Ամենայն մեծ և ի բանդ, և գժուարին և պարզել. բայց քանզի մարգարէն ըստ մտաց նախընթաց համարոյն գնէ զայս՝ մարթ է ի նոյն հայելով մեկնել ի փոխաբերական միտս. ըստ որում և նա ինքն մարգարէն փոխաբերմամբ խօսի աստ յասելն։

Նման հաւ՝ և ո՛չ պետն զաբէ. Հրով իմացեալ լինի աստ բարկութենէն ոչ, որ հասանէ յամբարիշտս. և ըստ այսմ կասի ասել. եհաս բարկութենէն ոչ ի վերայ ամբարշտաց՝ իբրև հուր անկանելով կամ տեղալով. և նորա հալեցան իբրև զմոմ. այսպիսին է սատակեցան և կորեան։ Չէ զայս սատակումնս և զկորուստս յայսո առնէ այնու՝ զոր ասէ. և ո՛չ պետն զաբէ. զի

այսպէս ասի զնոցանէ՝ որք մեռանելով՝ զլկին ի տեսութէ արեւուս. ոստի և յայսպիսի բանս՝ նոյն լինի ասել, մեռան՝ և ասել, ոչ ևս տեսցին զարեւ։

Արթն է և յայլ իմն նմանութեան վերածել զայս բան՝ ի ցուցանել զպաշարումն հոգւոց ամպարշտաց ծխովք չարութեան. իբր զի յանկանիլ բարկութեանն ոչ ի վերայ նոցա իբրեւ հուր, կամ սատանայն իբրեւ զփայլակն, և յայրիլ հոգւոց նոցին՝ փոխանակ ապաշխարութեան ելանել ի նոցանէ ծուխ չար՝ ծուխ տխրութեան, կամ ծուխ դառնութեան, կամ ծուխ յուսահատական խորհրդոց, կամ ծուխ արանձնացոց, կամ ծուխ անկարգ հառաչանաց. որովք ծածկի ի նոցանէ արեգական արդարութեան. մինչ ոչ ևս տեսանել նոցա զնաւագային ողորմութեան նորա։

Այս բան հայի ըստ լամբ՛. և ի դատապարտեալս որք ընկղմեալ ի հուրն գժոխոց, ոչ ևս տեսցեն զարեւ յաւիտեան։ Այլ զի երբեմն յառաջ քան զձնունդն ել նոցա զոյն՝ հասանէ առ նոսա այս պատիժ, սմին իբրեւ յարէ զինի և ասէ։

Վասկլե՛ ի դա առել էր զքառս իրեանց. որպես գծնիկ բարձրանէ՝ կենդանոյն կիզչ ընտա։ Գժոխիկն և փշաքերթ թուի ինչ ժանա՝ որոյ փուշքն կամ խոյնքն են կեռա. և ի մատուցանել ի նա զՀուր՝ քան զայլ փուշս դիւրաւ վառի. ևս և կենդանւոյն՝ այսինքն յառաջ քան զլուսաւորն. երբեմն և ինքնին իսկ ի ջերմանել՝ արեւս բորբոքի և տաղտի զայլս. և յայս միտ ի մէջ երեք զայս բան յոմանս. (ի դատ. իթ. ւհ։) Այդ մարգարէն զամպարիշտս նմանեցուցանէ այսմ թփոյ այսինքն գԺնկի. և զարիս նոցա նմանեցուցանէ փշոյ սորա. զի նոքիմբք ոչ միայն անպիտան նաղի լինին, այլ և վնասիչ այլոց։

Այսու մեծին նմանաբանութեանէ կամի յայտ առնել զայս՝ թէ ամբարիշտք յորժամ անվնաս ձեռամբ յիմքեանս վնասեն այլոց, հատարելով թէ ոչնոր փառաւորին, կամ մեծանան ևն, * մինչև ի միտ առեալ իւեն զփուշս իւրեանց։ այսինքն մինչև տեսեալ և իմացեալ իւեն զչարիս իւրեանց զոր դիտեն առնել կամ մինչև վայելեալ իւեն զոյն՝ զոր կամէին յայնժամ * որպէս գԺնկի բարկութէ կենդանւոյն կիզ-

ցէ զնոսա ‖. այսինքն թէ ա՟ծային վրէժխնդրութիւն իբրև հուր անկցի 'ի վերայ նոցա, և բարկութեամբ կիզցէ զնոսա կենդանւոյն իբրև զգժնիկս : Կամ համառօտիւ ևս, 'ի կամիլ ամպարշտաց վնասել այլոց՝ չև ևս տեսեալ զվնասն՝ բարկութիւն ա՟յ կենդանւոյն կորուսցէ զնոսա. որպէս հուր զգժնիկս : Աւր կենդանւոյն ասելով կամի յայտ առնել զվաղ հասանել բարկութեն ա՟յ, իբրև թէ մինչդեռ դալար են, կամ տհաս են փուշք խորհրդոց նոցա, այրեսցին. կամ մինչ խորհէին մնալ երկար, չև հասեալ 'ի կատարած կենդանութեն իւրեանց՝ բարձցին և կորիցեն. որ է ասել՝ բարկութիւն ա՟յ այնպէս արասցէ ընդ նոսա, զի մի կարասցեն տևել երկար, և հասանել դիտաւորութեն իւրեանց :

Որչափ չարչարեաց փարաւոն զիսրայէլացիս, զի նուաճեսցէ զնոսա, որպէս զի առաւել ևս մեծասցի 'ի թագաւորութեն. բայց մինչև էր տեսեալ զպտուղ չարութեն իւրոյ՝ խեղդեցաւ : Զինչ ոչ արար սաւուղ ընդ դաւիթ. բայց չև հասեալ 'ի կատարումն դիտաւորութեն իւրոյ՝ կորեաւ : Զիարդ ջանաց հերովդէս սպանանել զՔ՟ն մեր. որոյ վասն խայթեաց և սպան զանմեղ մանկունս բեթղեհէմի, զի հաստատ մնասցէ 'ի թագաւորութեն իւրում. բայց ոչ կարաց վայելել 'ի թագաւորութեն անդ, այլ չարաչար սատակեցաւ : Այնպէս և բազում կայսերք, մաքսիմիանոս և յուլիանոս, և այլ բռնաւորք այնչափ վնաս հասուցին քրիստոնէից՝ զի բարձցեն զնոսա, որպէս զի ըստ իւրեանց կրօնից կեցցեն ամենեքին. բայց մինչև բարձեալ էին զնոսա՝ ինքեանք բարձան : Եւ թէպէտ թուէր նոցա տեսանել առ ժամանակ մի՝ զոր կամէին, բայց ոչ այնպէս տեսին՝ որպէս ինքեանք ախորժէին :

Հոգևորապէս, փշովք իմացեալ լինին նախ անցաւոր մեծութիւնք և հեշտութիւնք են, յորս ընկղմին մեղաւորք. և մինչև 'ի միտ առեալ իցէ նոցա՝ թէ սոքա փուշ են, հասցէ նոցա մահ. և յաջորդեսցէ հուրն դժոխոց, որ կիզեսցէ զնոսա իբրև զգժնիկս կենդանւոյն, այսինքն կենդանի պահելով 'ի դատապարտութեն անդ :

Աբկրտրդ՝ իմացեալ լինին խայթմունք խղճի մտաց. որք հանապազ հարկանեն, և ոչ երբէք դադարեն, ոչ նահանջին և ոչ իւիք երբէք խանջին։ Ընդհանուն ծառք, այրին ապաքանք, ընկղմին նաւք, կործանին աշտարակք, մեռանին չարագործք, բառնին և բա. ցեգործք. իսկ խիղճ մտացն ոչ չորանայ և ոչ մեռա. նի. և զի չարք ոչ կամին առնուլ ի միտ, խայեե. լով խայեէ զնրատս նոցա. և երբև դահիճ տանջէ զնոսա, և և երբէք հնար կիցու և այրէ կենդանեացն, այսինքն առանց մեռուցանելոյ։ Աբ եթէպէտ յոմանս երևի երբ ընկղմեալ և բարձեալ, բայց կայ նա կենդ. դանի, և յամենայն առիթս արթնանայ, և ի ներ. քուստ ազդ առնէ, թէ չէ բարի՝ զոր առնես, կամ թէ չար է՝ զոր արարեր։ Պատմի ի գիրս յոբայ (ա. 15.) թէ ի հասանել հետ գՀետ բանաբերիցն յետ պատմելոյ նոցա զայրումն, զաւարումն, գկողոպտումն և գկործանումն և գմահ, յարէին գինի ասելով. * Աչս միայն ապրեալ եկի պատմել քեզ ։ և թէ ես միայն ինացեալ եկի պատմել քեզ ։ Աչս բանաբերը է խիղճն մտաց. որ ի մեռանիլ այլոց ինքն ապրեալ մնայ, հասանէ և ազդ առնէ. և է որդն անմեռ և փուշ գժոխախայթ։ Աչ միտ առ ապա զազդարարու. թեն նորա. ապա թէ ոչ առանց մեռանելոյ՝ և առանց բառնալոյ իւրոյ՝ բառնայ և տանի զբեզ. և ուր ա. ծէն յաւիտեան տանջիլ,

Աթէ աղօթ ևս ազդեացե ասելով՝ գուցէ չէ բարի այդ զոր կամիս առնել. գուցէ ձշմարիտ է այն՝ զոր ասէ, գուցէ այս վտանգ ազդարարութիւն իցէ նոյ, և նե. ւի արշամարհէրը զայսպիսի գուցէս, այսինքն զայս. պիսի ազդմունս. զի թէպէտ նուազ իմն երևին, այլ մեծի լուսոյ լինին առաջնորդ. վասն որոյ փոխա. նակ արշամարհէրոյ պարտական ևս ուղի տալով ուշ դնել և քննել։ Աթէ չկամիցիս առնուլ ի միտ և ան. փոյթ լիցիս, գուցէ ի մեծամեծ ազդմունց ևս զրկիս. ցիս. և յայնժամ ոչ ևս ինայէ ի քեզ նոր, այլ մե. ծամեծաք պատուհասէ, և բարկութիւն կիզանէ։ Չայս վայր խօսեցաւ մարգարէն զՀանգամանաց չար մարդ. կան և զչար փշոց նոցա, դառնոյ ապա խօսիլ և զար. դարոյ, և ասէ։

ԼԲ. Ա՛րթև եղեալէ արդեօք՝ յորժամ պեսպէս չնաշադրանաւ. և չգիտաս իսբ լուսոյն յարեան ճեղուրն։

Սակայն քանիս տայ խմանալ մարգարէն՝ Լեհ քանի՛ երջանիկ են արդարք, զի ո՛չ վարեցան ըստ ամբարշտաց, այլ ըստ արդարելեաց օրինաց, ընդ որ ունկն ուրախանալ՝ ո՛չ միայն կրնդունելն զհատուցումն գործոց իւրեանց, այլ և՛ ի տեսանելն զհատուցումն գործոց մեղաւորաց. վասն որոյ ասէ.

Ա՛րթև եղեալէ արդեօք՝ յորժամ պեսպէս չնաշադրանաւ. Այսինքն Լեհ յորժամ տեսցէ արդարն զվերեւ ի խնդրուելին ոչ՝ ի վերայ մեղաւորաց՝ զորմէ խօսեցաւ ի վերոյ, ուրախ լեցի՛ ո՛չ եթէ ցանկալով պատժոց նոցա, այլ հաճելով ընդ արդարութեանն ոչ. կամ ո՛չ եթէ հգեալով վրէժ խնդրուելոյ, այլ ախորժանօք ուղղութեանն կենաց. Իբրզի արդարն՝ ի տեսանելն զպատուհասիլ մեղաւորաց՝ գտեալ զինքն ազատ յայնպիսի մեղաց, որք եղեն պատճառք այդպիսի պատժոց, ուրախանայ, Այս հասական է ամենայն մարդոյ. զի ո՛ ոք և իցէ յորժամ տեսանէ զպատուհասիլ մեղաւորին չոչ կամ՝ ի գաւառել, ուրախ լինի՝ ոչ ընդ այն՝ զի մեղաւորն պատժեցաւ, այլ ընդ այն՝ զի ինքն զերծ գտաւ ի չարեաց նորա և՝ ի պատժոյ նորին։ Ասեն ասէ գէորգ վարդապետ. (՝ի մէկն. ես.) * ՝ի նեղել զրկողացն՝ ,, նեղեալքն՝ ի նոցունց փրկը մի ոգի առնուն, և ,, օրհնեն զնա վասն մխիթարելեն. ո՛չ զի նեղիչք ,, ՝ի վիշտս մատնեցան, այլ զի ինքեանք փրկը մի ,, դիւրութեի գտին ։ Այս սմին գրելով և բարեկդ. վարդապետ. (մարկ. Ժ. ՝ի յորգ. ասէ.) * ուրախ է ,, զիցէ արդարն յորժամ լուիցէ զհատուցումն մա ,, պարտի, ո՛չ զի ոտնչար լինի, քաւ լիցի, բայց զի ,, մի և ինքն այնպիսի ինչ կրիցէ, այլ ապաշխարեսցէ, ,, յ՛ և, որբիցէ զինքն ՝ի մեզայ ։ Նոյնս գայս կամելով մարգարէին առաւել ևս հաստատել, յաւելու, և ասէ.

Այո՛ զնեսցես էր լուսոյն յարեան ճեղուրն։ Այս բան չորեքկին մեկնի. Նախ՝ Լեհ այնչափ բազում եղիցի աբիւն մեղաւորի՝ մինչև կարել արդարոյն լուանալ ՝ի նմա զեռս իւր, նա և զոտս. որով ցուցանի առա-

ւելմէն պատժոց մեղաւորին և մեծութեն ուրախութե արդարոյն ։ Երկրորդ՝ թէ յարեան մեղաւորի , այս ինքն ՚ի պատիժս մեղաւորի չունիցի արդարն մնան և բաժին . ուստի և լուսացոյ զձեռս իւր ՚ի նմա , որ է ասել . ցուցցէ զգործս իւր լուացեալ , այս է ազատ յարենէ մեղաց նորա և ՚ի պատժոց նոցին ։ Երրորդ՝ թէ երբև լուանալով զձեռս իւր ասացէ . ոչ եմ մասնակից արեան մեղաւորի , զոր որդ և ոչ մասնակից պատժոց նորա . յոր միտս լուաց պիղատոս զձեռս իւր . (մատ. իէ . 24 .) ։ Չորրորդ՝ թէ զձեռս իւր , այսինքն զգործս իւր համեմատութե արեան՝ այսինքն անօրէնութե մեղաւորի՝ ցուցցէ բարի . զի գործք բարիք համեմատութե չարի առաւել պայծառ երևին ։

Ա. այս բան կարէ հայիլ և ՚ի զգաստութե արդարոյն . իբր զի տեսեալ նորա զհատուցումն մեղաւորի՝ զգաստանայ յինքեան , և եթէ տեսցէ ՚ի գործս իւր յանցանս ինչ , փութայ լուանալ զանձս յարեան մեղաւորի , այսինքն պատճառաւ արեան մեղաւորի ։ Այլոյ այս հայի և յոր հատատանին . ուր * արդարն կացցէ ,, բազում համարձակութե հանդէպ նեղչաց իւրոց , ,, և որոց անգամանէին զվատակս նորա ‖ . (իմաստ . Ե . 1 .) իսկ թէ ՚ի տեսանել այլոց զպատուհասիլ մեղաւորի ՚ի վերայ երկրի , նոցինպէս և զցնծալ արդարոյց , զինչ ուսիցին ասել՝ զայսմանէ գրէ մարգարէն ՚ի յաջորդ համարս ասելով ,

Ա. Եւ ասացէք մարդ . Ի՞ն արդարն գոյն պատղ արդարոյ , Եւ ի՞ն ոչ դարձ ընդս յերէքն ։

Ա. այս բան հայի ՚ի հաւատարակ դատաւնին մարդկան . զի թէ չարի իցէ մարդ և թէ չար յորմէ վհմակի և գոցի , երանեալ զվախճան արդարոյ , և ուսուցէ զկատարած ամենաշնորհ , տեսեալ զերկաքանչիւրոց ըզհատուցումն և և յերկրի ասա . յայս հայելով ասէ ,

Ա. Եւ ասացէք մարդ . Ի՞ն արդարն գոյն պատղ արդարոյ ։ Ա. յսինքն ՚ի և իցէ մարդ յորժամ տեսանիցէ զի պատհասին մեղաւորք և ցնծան արդարք , ասացէք ուրեմն նա որ արդարն է այսինքն յարդարութե կեայ՝

ոչ միայ անպտուղ. այլ Չմարթիւ ունելի պտուղ յերկրի աստ զուրախանալ և զանգորդուիլ, և յերկինս զանվախճան երանուիլ. նոյնպէս և որ մեզաւորն է՝ ոչ միայ անպտուղ, այլ Չմարթիւ ունելի պտուղ յերկրի աստ զարժանանալ և զերամուիլ, և ի գժոխս զանվերջանալի թշուառանալ.

Համբերացին զայս բան վերածէ ի դէմն մեզաւորի. իբր թէ յաւուրն յերանում տեսեալ մեզաւորին զՀաւուցումն արդարոց՝ ասացէ. ուրեմն գոյ պտուղ արդարոյ. իսկ մեզ մեզաւորքս յիմարեալ, զվախճան արդարոյ համարիլաք ունայն. լուտ որում գրէ խնամուտնն՝ ի բերանոյ մեզաւորացդ (Ե. 3։) Ասացեալ երևի թէ մարդարէն զայս բան ասէ Հայելով յա և իցէ մարդ, որ՝ ի տեսանելն զՀատուցումն արդարոց և մեզաւորաց, բռնադատի ասել, թէ գոն վարձք արդարոյ և պատիժք մեզաւորի. և թէ գոյ դատաւոր արդար. և այն է Աստ. յայս Հայելով ասէ.

Ե՞ր է այն որ դատէ երկիր։ Յայնժամ ի տեսանել մարդոյ զարդար, դատաստան՝ ի վերայ արդարոց և մեզաւորաց, ասացէ, ուրեմն գոյ Աստ արդարադատ, և աննենգելի դատաւոր՝ որ արդարութիւ դատէ զնոսա, այսինքն զարդարս և զմեզաւորս. Հատուցանելով արդարոց զարժանի վարձս փոխանակ բարի գործոց նոցա զորս արարին, և և փոխանակ չարեաց որոց Համբերեցին. նոյնպէս Հատուցանելով մեզաւորաց զարժանաւոր պատիժս փոխանակ չարեացն զորս գործեցին, և փոխանակ բարկութեանց՝ յորս փութկացան, Իսկ ասելովն յերկիր, չորս ինչ ասյ իմանալ. մի՝ թէ նաև յերկրի աստ Աստ դատէ, և ըստ դատելոյն սկսանի վարձատրել զարդարս, և պատժել զմեզաւորս։ Կամ երկրորդ՝ թէ դատէ զնոսա ըստ գործոց նոցին զորս գործեցին յերկրի աստ։ Կամ երրորդ՝ թէ յաւուրն յերանում իջանելով յերկրից դատելոց է զմեզաւորս կացեալս յերկրի, և զարդարս առ ինքն ժողովելոց է յերկրէ. յոր միտ Թեբելա ի սաղմոսս ինչ դնի յերկրէ։ Կամ երրորդ՝ թէ մեզաւորք և արդարք ի դատին անդ՝ յերկրի աստի յափշտակելոց են ի տեղիս խրտնանց. մեզաւորք ի գժոխս ի Տարս անչէջ, և արդարքն ի յերկինս յերանութեան յաւիտենական։

ՍԱՂՄՈՍ ՃԻԱ

Պաղատանք անձին՝ որ իցէ ի յետին վտանգ կենցաղ, և ի պաշարմանն Թշնամեաց, և ա և յայտարարութիւն ողորմութեան նմա ի փրկել զարգարն, և վրէժխնդրութեան նորա ի պատժել զհպարտսն. միանգամայն և գոհութեան առ նա վասն ոչնչ փրկութեան և պաշտպանութեան։

1 Ի քեզ եմ յուսացեալ, Տէր, յաւիտեան որ չամաչեմ։ 2 Փրկեա զիս ի քում արդարութեանդ, ականջ դիր ինձ և փրկեա զիս, արագ լեր ի վերայ իմ, ապրեցո զիս։ 3 Լեր ինձ ի հովանի հզօր, ի տեղի ամրոցի, որ փրկես զիս։ 4 Զի զորութիւն իմ և ապաստան իմ ես դու, վասն անուանդ առաջնորդես զիս և սնուցանես զիս։ 5 Հանես զիս ի ծուղակէ զոր ծածկեցին ինձ, զի դու ես պատսպարան իմ։ 6 Ի ձեռս քո աւանդեմ զհոգի իմ, փրկեցեր զիս, Տէր, Աստուած ճշմարիտ։ 7 Ատեցեր զամենեսեան որ պահեն զանօգուտ հաւատս, և ես յուսացեալ եմ ի Տէր, ուրախ լինիմ և ցնծամ ողորմութեանդ քում։ 8 Զի տեսեր զխոնարհութիւն իմ, ծանեար զանձկութիւնս հոգւոյ իմոյ։ 9 Եւ ոչ արար զիս ի ձեռն թշնամւոյ, այլ կացուցեր զոտս իմ ի տեղւոջ լայնութեան։ 10 Ողորմեա ինձ, Տէր, զի նեղեալ եմ, խոնարհեցաւ ի տրտմութենէ աչք իմ, հոգի իմ և որովայն իմ։ 11 Զի կեցից ես ի ցաւս, և տարիք իմ ի հեծութիւնս, զաւրացաւ ի չարութենէ զօրութիւն իմ, և ոսկերք իմ խռովեցան։ 12 Ի բոլոր թշնամեաց իմոց եղէ նախատինք, և ի հարեւանս իմ յոյժ, և երկիւղ ծանօթից իմոց, որ տեսանէին զիս արտաքոյ ճանապարհի փախեան ինձմէ։ 13 Մոռացեալ եղէ իբրեւ զմեռեալ ի սրտէ, եղէ իբրեւ զանօթի որ ունի զանօթ կորստական։ 14 Զի լուայ զանիծս բազմաց, որ շրջապատեալ էին ինձ, ի ժողովել նոցա զիս ընդ իս, առնուլ զանձն իմ խորհեցան։ 15 Եւ ես յուսացեալ եմ ի քեզ, Տէր, ասացի, Աստուած իմ ես դու։ 16 Ի ձեռս քո են ժամանակք իմ, փրկեա զիս ի ձեռաց թշնամեաց իմոց և հալածողաց իմոց։ 17 Երեսս քո լուսաւորեսցէ ի ծառայ քո, կեցո զիս ողորմութեամբ քով։ 18 Տէր, մի ամաչեցուսցես զիս, զի կոչեցի զքեզ։ Ամաչեսցեն ամբարիշտքն, և իջուսցին ի դժոխս։ 19 Համբակեսցին շրթունք նենգաւորք, որ խօսին զանօրէնութիւն ընդ արդարոյ, հպարտութեամբ և անարգանաց։ 20 Զի որքան մեծ է քաղցրութիւն քո, Տէր, զոր պահեցեր երկիւղածաց քոց, և գործեցեր յուսացելոց ի քեզ առաջի որդւոց մարդկան։ 21 Ծածկեսցես զնոսա ի ծածկոյթի երեսաց քոց յանարգանաց մարդկան, պահեսցես զնոսա ի խորանի քում յանդիմանութենէ լեզուաց։ 22 Օրհնեալ է Տէր, զի սքանչելացոյց զողորմութիւն իւր ինձ ի քաղաքի պարսպեալ։ 23 Ես ասացի ի սաստկութեան իմում, թէ՝ մերժեցեալ եմ յերեսաց աչաց քոց։ Վասն որոյ և լուար ձայնի աղաչանաց իմոց, յորժամ աղաղակէի առ քեզ։ 24 Սիրեցէք զՏէր, ամենայն սուրբք նորա, զի զճշմարիտսն պահէ Տէր, և հատուցանէ առատապէս հպարտութեան գործողաց։ 25 Զաւրացարուք և զօրասցի սիրտ ձեր, ամենեքին որ յուսայք ի Տէր։

ապա ինչ ո՛չ չափեսցին, որովհետեւ։ 19 Այս օրինեցից զերկնաւորսն ես. և զինքեանց առաքեալսդ յաղագս նոցա։ 20 Ոչ ի նոսէք իմ պաղատանս և զոմն ապաւինիս, յաւուրս նեղութեան իմոյ օգնական իմ։ 21 Վասն սատանայ առնիցէ՝ ած առ պատն իմ. ած աղերսանիցէ իմոյ։

ՊՀՒՐԻԱԿՈՒՄ

Ի խաւարած. ի ապականիչ. արյանապիղծ ի գործի, ի ձեռնամանաւիլ ընդ առաւելեալ սատակող, և գալստեան դատաստանի նորա, չի սպանցէ զնա։

ԶԱՆՑ ԱՊԱՇՆՈՐՀԱՒՈՐ ԴԻՒԹՅՈՒՆ

զդպրեան, իբրև դարձաւ ի քաղաքն Հանդերձ սաւուղա՝ ելին պարտաւորք ընդ առաջ նորա յամենայն քաղաքաց իսրայէլի, և նուագ գնէին կանայք ասելով. * Եհար սաւուղ զհազարս, և դաւիթ զբիւրս ||. ընդ այս գլարեալ սաւուղայ՝ ընդ սակաւ հայեր ի դաւիթ, և չարիս խորհիլ գնմանէ. և թէպէտ փեսայացոյց գնա ինքեան՝ տալով նմա զմիղբող զդուստր իւր, բայց թէ նեամուելի նորա առաւել և առաւել ակնդ թէ՝ ի թէ՛ նեամուելի փեսայացոյց գնա, զի մատնեսցէ՝ ի կորուստ, խորհեցաւ ապա ընդ ծառայս իւր ըմբռնել գնա և սպանանել. և թէպէտ յոնիսաթան որդի սաւուղայ ջանացաւ խափանել, բայց հուպ չէտոյ ոչ կարացեալ սաւուղայ հանդուրժել նախանձուն իւրոյ՝ առաքեաց ի գիշերի մեռ զարթ պաշարել զտունն նորա, զի ընդ առաւօտն բմբռնեալ սպանցէն գնա ոչ ի ծառ

ծուխ, այլ յայտնի։

Ո՞ այս տեսեալ մեղքող կին նորա, ազգ արար նմա, և ասէ. եթէ ոչ ապրեցուսցես զանձն քո ի գիշերիս յայսմիկ՝ վաղիւ մեռանիցիս ես։ Այլ մինչդեռ պատհապնդն առ գրան կային՝ ինքոյն մեղքող զդաւիթ ընդ պատուհանն. և առ պատրելոյ զպահապանսն այսինքն զարթ սաւուղայ՝ եդ յանկողնի նորա զհան-

դերձս. եւս եւ զայլ ինչ. եւ ձեւացոյց արտաքուստ թէ դաւիթ յանկողնի իցէ հիւանդագին. իբրև եկին մէջն յաւուրսն արք սուրազօտ ըմբռնել զնա, գոհն միայն զհանդերձս նորա յանկողնի. եւ գնացեալ պատմեցին սուրազօտ։ Եւ դաւիթ փախուցեալ անտի ապրեցոյց զանձն։ Այս ամենայն լիագոյնս պատմի ի Թագ. ԺԹ. 6—30։ եւ ԺԲ. 1—16։

Զայս գործ փրկութեան իւրոյ Հայելով դաւիթ, երգեաց զայս սաղմոս իբրև ընդհակառակն առ ՅԱԽ՝ զոր սովորութեամբ նախնեաց, որք յաղաչանսն յայսոսիսի ինն մեծ վտանգէ, գոհութեամբ տային պսպղէս բանիւք օրհնութեան եւ երգոց։ Այսուհետեւ ինքնին մեկնի վերնագիր սաղմոսիդ։ (Եւ զայն բառիդ ՓԱՓԱՆԵՔ՝ տես ի սաղ. ՃԺ. սղմսիս եւ զայն բառիդ ԱՐՁԱԿԳԷՔ. տես ի սաղ. ՃԵ։)

Զանազ սաղմոսիս Հայելով ի պատմութենէ վերնագրիդ՝ վերածնին եւ ի քո զոսս ժամս յարութենէ. զի ի պահել զինուորաց զգուշոն գերեզմանին նորա՝ նա ի գիշերի ինքնին եղ ի գերեզմանէ իբրև լոյս ընդ առաւկի, թողեալ անդ զվարշամանդն ընդ այլ կտաւսն։ Այլ գիտելի է՝ զի բազում բանք կան ի սաղմոսիս որք ամենևին ոչ կարեն յարմարիլ անցից դաւթի զոսս նախակերպեալ պատմութենէդ. այլ ուղղակի Հոգւոյն ի ժամանակ շինելոյ իսրայէլացւոց զոսն ոմն յաւուրս կիւրոսի՝ յորժամ սկսան Հակառակիլ և զաղանջել, եւս և խափանել զգործն թէ շինմիք նոցա՝ այլ և այլ ազգ բնակեալք ի պաղեստին. (զորոց տես. ա. եզր. է. 68. և ը. եզր. ը. 1 = 24։) Ոչ ապա դարձեալ յաւուրս դարեհի կիւրկրորդ ամի նորա յորժամ ձեռն արկին իսրայէլացիք շինել, վերստին սկսան թշնամիք նոցա խափանել զգործ. բայց ոչ կարացին. (տես ը. եզր. գ. է. և ը։) Զայնպէս և ի կանգնել զպարիսպն երուսաղէմի յաւուրս Նեհեմեայ՝ դարձեալ յարեան ի վերայ թշնամիք, և սակայն չկարացին առնել ինչ. (տես. ը. եզր. գ. ը. 1 = 23։) Ոչ զի բանք սաղմոսիս յարմարին ի առն, վասն այնորիկ ոմանք պնդեն ցուցանել թէ այս սաղմոս իցէ ասացեալ ոչ ի դաւթէ, այլ յեզեքեայէ կամ մանասեայէ ի հնէմեայ. բայց քանզի

Ա՛յս ձայն դաւթի պատկանի եւ այնպիսի անձին՝
որ իբրև զդաւիթ պաշարեալ էցէ ի թշնամեաց,

ՄԵՆԻՆ

Ա. Փրկեա՛ զիս ի ընդհարեալ խմոյ աֆ. յայնցանէ որ յա-
րուցեալ են ի վերայ իմ, ապրեցո՛ զիս.

Բ. Փրկեա՛ զիս յայնցանէ որ փորձեն զանօրէնութի՛ւն. յա-
րեաց արեհատիղաց ապրեցո՛ զիս.

Ա՛ր ինչ է ասել, Թէ յասել իսրայէլացւոց զայս սաղ-
մոս դաւթի ի շինուիլն անդ տաճարին եւ պարսպին,
յասել ի սոյն ինչ ինչ եզրսս, եւ ինչ նեխեմ. եւ
կամ Թէ հաւանականագոյն է՝ նա ինքն դաւիթ ի
յօրինելն զայս սաղմոս՝ Թէպէտ առնիւ նախակար-
գեալ անցիցդ գրեաց, բայց յասել եւ զոյնպիսի
բանս, որք ոչ ի նմին անցս, այլ յայլ ինչ կայեին.
որպէս երեւի եւ յայլ բազում սաղմոսս նորա։ Այլ
դարձեալ ըստ ասելոյ մերոյ այլոցդ, զայս սաղմոս,
նոյնպէս և զայլս՝ Թէպէտ և յիւրմէ առաց դաւիթ,
բայց ոչ սոակ ի դիմաց իւրոց, այլ և ի դիմաց այ-
լոց, գուցէ գուշակութիւն ինն և ի դիմաց նոցա՝ որք
էին ի ժամանակս շինուիլն երկրորդ տաճարին և
պարսպին. ուստի և մեկնուիլն սորա ըստ նկարագ-
րին Հայր ոչ միայն ի դէմս դաւթի, այլ և ի դէմս
նոցա, եւ և ի դէմս իւրաքանչիւր տառապեալ ան-
ձին. որպէս և եդաք ի սկզբան սաղմոսիս։

Լակ լամբ՚, և այլք բազումք ի բարեյական միտս
մեկնեն ի դիմաց այնոցիկ, որք Հալածին ի գիւաց
ի ձեռն չար խորհրդոց. և զի յիմանալ զմիտս սաղ-
մոսիս՝ իւրաքանչիւրըք կարէ ինքնին Հակեցուցանել
զայն ի բարեյական իմացուածս, վասն որոյ ընթեր-
ցողին Թողումք զնոյն։

ևթէ յերևելեացդ և ևթէ յաներևութիցդ, ևթէ ներքնոց և ևթէ արտաքնոց. յորոց օրչափ դժուարին իցէ մարգկային հնարիւք ազատիլ, այնչափ դիւրին և պաշտպանութեան ոյժ փրկիլ. վասն որոյ ի նա ասէ տէրունեալ ասէ՝

Փրկիջ զիս ի ընդհաքաց էնոյ ածի, յորմանէ որ յարուցեալ են ի վերոյ իմ, ապրեցո զիս։ Փրկել և ապրեցուցանել ևս ասէ միանգամ ի գործ ածին, բայց փրկելն ըստ ինքեան չոյի յազատութենէ ի չարէ ըստ օրումն է չար. իսկ ապրեցուցանելն չոյի յազատութենէ ի չարէ՝ ըստ օրումն այն ազատութենէ և բարի այնմ որ փրկի։ Այլ դարձեալ փրկելն չոյի յազատութենէ յն և իցէ վտանգէ. իսկ ապրեցուցանելն չոյի յազատութենէ ի վտանգէ կենաց, որ տիրապէս կեցուցանել ասի։ Այլ ըստ այսմ կերպի զանազանութենէ դնէն ասա բառդ ֆրկել և ապրեցուցանել. զի չոյէ՛լով յազատութենէն որ ի ձեռաց թշնամեաց՝ ասէ. փրկեա զիս ի թշնամեաց իմոց այսինքն ի սատուցայ և ի խորհրդակցաց նորա. իսկ չոյէ՛լով յազատութենէն ի վտանգէ կենաց. յորում էր՝ ի պաշարիլ իւր յաբանայն սատուցայ, ազայէ և ասէ ապրեցո զիս յայնցանէ՝ որք յարուցեալ են ի վերոյ իմ, և պաշարեալ պահեն զիս, և կամին ըմբռնել և կորուսանել։ Օ՞սոյն զայս ազայնոս կամէ՛լով զօրաւորագոյնս առնել, կրկնէ և ասէ՝

յ. Փրկեա զիս յայնցանէ, որ գործեն զանօրէնութիւն. յաբանց արեանահեղաց ապրեցո զիս։ Իւր առաջին չոյատուած բանին չոյի յատաջին չոյատուած նախընթացից համառոտին. զի զորս անդ կոչեաց թշնամիս՝ աստ կոչէ գործօզս անօրէնութեան. վասն զի արդարք զայնոսիկ միայն ունին իւրեանց թշնամի՝ որք գործեն զանօրէնութիւն. և ոչ զայնոսիկ՝ որք գործեն զարդարութիւն, Այլ ևթէ զատոգն կամիցիմք ասել, պատճառ թշնամի լինելոյ նոցա ընդ աստս ոչ այլ ինչ է՝ բայց ևթէ այս, զի նոքա են անօրէնքդ այսինքն գործօզք ընդդէմ օրինացդ՝ և ասքա արդարք։

Պշնակս և երկրորդ չոյատուած այսր բանի չոյի յերկրորդ չոյատուած նախընթացից համառոտին. զի զորոց անդ ասաց, յորուցեալ են ի վերոյ իմ սպանա-

նել զիս, զնոսա կոչէ աստ արս արիւնահեղս. զի թէ ոչ էին արիւնահեղք, կամ եթէ ոչ կամէին ասել արիւնահեղք, ոչ յառնէին ի վերայ նորա սպառնանալ զնա։ Եւ քանզի ի յառնել նոցա ի վերայ նորա՝ պահ արկին զնովաւ, և շուրջ փակեցին զնա իբրև զորս, սմին իբր յարէ զկնի, և ասէ։

Ձ. Որսալ զանձն իմ կամիցան. և հասին ի վերայ իմ հզօրք։

Արկնակի որսան մարդիկ զկենդանիս. մի՝ անմիջապէս կինքեամբս, և մի ևս յայլումբ. կինքեանս որսան՝ յորժամ ըմբռնեն զորսն ձեռամբ կամ ներաւիւք, կամ գնատիւք, կամ կարթիւ, և ն։ Յայլումբ որսան, յորժամ շուրջ փակեն զտեղին՝ ուր է որսն. կամ արկանեն զայն յուռկան կամ ի կողով, կամ ի թակարդ, կամ յակաման և ն։ Ասա այսմ կերպիւ օրինակի դնի աստ բառդ որսալ յասելն։

Որսալ զանձն իմ կամիցան։ Յասիրքն թէ արք առաքեալք ի սատուդայ կամեցան որսալ զիս. զի եկեալ պաշարեցին զտուն իմ, և պահէին զդրունս տան իմոյ. որպէս զի այնու իբրև զորս ըմբռնեսցեն զիս. և զի զայս արարին հրամանաւ սատուդայ և աթենեթոսայ և այլոց զօրավարաց նորա, զնոցանէ ևս խօսելով ասէ։

Եւ հասին ի վերայ իմ հզօրք։ Որ բառդ հասին, դնի ըստ նշանակութեանն բառիս յաքան. բայց քանզի ի մեծ ոյժ առ ձեռն իսկ կամէին ըմբռնել զդաւիթ և սպառնանալ, վասն այնորիկ հասին դնէ, ասելով. հասին ի վերայ իմ հզօրք։ Իսկ հզօրք ասելով իմանայ զզօրաւորս սատուդայ։ Եւ զի ցոյցէ թէ անհրաւիրեալք և առանց իրաւացի պատճառի առնէին զայս, յարէ զկնի և ասէ։

Ձ. Ոչ ինդր իմ և ոչ յանցանք. առանց ինդրոյ ընթացայ և ուղիղ եղէ։

Առանց մեղաց կամ առանց յանցանաց ոչ երբէք լինի հալածել զոք, կամ չարչարել. ուստի յո՛ և իցէ հալածման կայ մեղք, կամ գոնէ կարծեօք յանցանք, և այս՝ կամ ի հալածեալն, կամ ի հալածօղն, և

գամ լերկասին և. և զի ի հալածիլ անդ դաւեի՝ չկայր ինչ մեզք ի հալածեալն, այսինքն ի դաւիթ՝ որպես և յայտ է, ապա ի հալածօղն էր՝ այսինքն ի սաուղ· զայս կամելով վկայել, ասէ։

Ոչ ելեր իմ և ոչ յանցանք. առանց ինձաց ընթացայ՝ և առ ընդ եղէ։ Ասի ասել՝ ոչ եթէ վասն մեղաց իմոց հալածէ զիս սաուղ, այլ վասն չարութեանն իւրոյ. քանզի ես ոչ անձին նորա մեղայ, և ոչ յինչս նորա յանցեայ, այլ առանց մեղաց ընթացայ, այսինքն առանց չար ինչ գործելոյ ընդդէմ նորա՝ ծառայեցի նմա. և միշտ առընդ եղէ· այսինքն ուղիղ մտօք վարեցայ ընդ նմա։ Իսկ նա տեսեալ թէ ես պատուիմ յաչս ժողովրդեան՝ նախանձու մեղօք վառեցաւ ընդդէմ իմ, և սկսաւ հալածել զիս, և որսալ զանձն իմ՝ ի մահ։ Վասն այս բանիք ինքնին առեալք ոչ՝ ի բերանոյ դաւթի և ոչ՝ ի բերանոյ այլոց կարեն ասել իրաւամբք. զի ով՝ զ ի մարդկանէ համարձակեսցի ասել, ոչ մեղք իմ և ոչ յանցանք, առանց մեղաց ընթացայ ևն։ Այլ՝ եթէ նա կարաց ասել զայս՝ որ յամենայնի սուրբ էր, և սրբուեցի սրբոց· որ և վկայէր զանձնէ. * ո՞ ի ձէնջ յանդիմանէ զիս վասն մեղաց ‖. (յովհ· ը· 46.) ըստ որում և առաքեալքն միաձայն գրեցին. * որ ոչն արար մեղս, և ոչ գտաւ նենգութիւն ի բերանն նորա ‖. (ա· պետ· բ· 22. և եբր· է· 26։) Ասասի և այս բանիք սկսեալ յառաջոյ համարիլ և այսր՝ ուրեմն պատշաճին ասել՝ ի դիմաց տան մեծոյն· ընդդէմ որոյ յարեան ապերախտ հրէայքն՝ որք գործեցին զանօրէնութեանն, և հեղուին զարիւն անպարտ. և զայնչափ բարիս տեսեալ՝ ի նմանէ՝ զհետ եղեն որսալ զնա. և հզօրք նոցա՝ այսինքն քահանայապետք և իշխանք նոցին հասին՝ ի վերայ նորա, և մատնեցին զնա՝ ի մահ խաչի։ Ի՞րդ տեսեալ դաւթի զանձն իւր ըմբռնեալ՝ ի վիշտս հալածանաց՝ չուենալով առ այլ ոք ապաւինիլ՝ աղաղակէ առ Տէր, և ասէ։

Ե. Ո արդեւք ընդ առաջ իմ, և ինձ դու ու զգուշանիցես ի հալածիլ մարդոյ՝ ի լետուստ՝ ցանկայ գտանել

ասաւէն յառաջոյ, կամ պաշտպան. և եթէ տեսցէ զոք ըստ բախտի՝ ի բարեկամաց իւրոց առաջի նր՝ ի ձանձրանալն նստեալ կամ ննջեալ, աղաղակէ առ նա՝ զարթիր բարեկամ իմ, և ասպրեցո՛ զիս ի հաւածչաց իմոց. ըստ սմին նմանութեամբ խօսի աստ և մարգարէն յասելն։

() ՚ալլելուիա՚ ընդ առաջ էմ, և պէս պս՝ որ զօրութիւն իմ էայէլէ։ Իւր բառդ ալլելուիա՝ նշանակէ օգնել և փրկել։ (որպէս առացաք ի սաղ. խզ. 23. և այլուր.) կամ ըստ լամբ՚. ցուցանէ զգործ նախախնամութեան. և ըստ այսմ կաւն ասել. ի պաշարել իմում և ի փախչել ի ձեռաց պաշարողաց անձին իմոյ՝ առ քեզ ուղղեցի զընթացս իմ, ի քեզ ապաւինեցայ, և առ քեզ աղաղակեցի. ել ապա և դու ընդ առաջ իմ, և օգնեա ինձ. և տեսանելով զվտանգն յորում գտանիմ, ասպրեցո՛ զիս. քանզի կարօղ ես. զի դու միայն ես ՚ար զօրութեաց և ՚ած իսրայէլի. ՚ար գոլով՝ ամենայնի կարես. և ՚ած գոլով՝ զամենայն տեսանես. և ա և ՚ար զօրութեաց գոլով այսինքն ՚ար երկնաւոր զօրացդ՝ ոչ միայն քեւ՝ այլ և զօրօք քովք, և կամ այլով իւիք կարես փրկել զիս. իսկ ՚ած իսրայէլի գոլով գԹաս, յիշեալով զուխան՝ զոր եդեր ընդ իսրայէլի։

{}եբր՚. ՀՐԻՒՔ յիշի աստ ՚ած. զի գրի ՀՆ ԱՆԱ ԵՀՕՎԱ ՀԼՕՀԻՄ ԱՀՎՈՆ ՀԼՕՀԵ ԻՍՐԱԷԼ. այս է * և դու ՚ար, ՚ած, ,, սաբաւօթ, ՚ած իսրայէլի ‖. ուր որպէս տեսանես կրկնի անուանս ՚ած։ Իսկ փոխանակ բառիս ադեաւօն՝ եդեալ է ՚ի մերս բառդ ջօրուընեց. զի նոյնանայ ընդ բառիս ադայ, կամ ադէահէ, որ է զօրական, զօրքվան որոյ և էօթանասաւունք՝ ուր ուրեք յեբր՚ դնի ադեաւօն, զրեթէ յամենայնի թարգմանեն բառիս ջօրուընեց. զոր ոչ դնէին, եթէ այդպէս ոչ նշանակէր։ Ո՚ինչև ցասա խօսեցաւ դաւիթ հայելով ՚ի փրկութէ անձին իւրոյ՝ ՚ի դիմաց իւրոց, և ա և ՚ի դիմաց քան. իսկ աստ սկսեալ մինչև ՚ի համարն 10. խօսի հայելով յանցս թշնամեաց իւրոց, և յանցս հեթանոսաց. և ապա դարձուցանէ զբան իւր յայլ և յայլ դէմս. և նախ ասէ։

ՀԸ. Վայեւմց ե այց տրա ամենայն հելեանոսաց, ի ողորմել ամենեցուն, ոչ գործեն զանօրէնութիւն:

Ա.յս բան թէպէտ և պարզ է՝ բայց հայելով'ի շատ բայարութիւն նախընթաց բանից՝ լինի դժուարամեկնելի վասն բառիդ հելեանոսաց. զի այս բառ ոչ շատ բայարի ընդ այլ առասյուածս այսր սաղմոսի: Ա.յլ զըր մարթ է ասել՝ դիցուք ստ առաջի՝ ըստ այնմ զըր ասէ:

Վայեւմց ե այց տրա ամենայն հելեանոսաց, ի ողորմել ամենեցուն, ոչ գործեն զանօրէնութիւն: Վայելը ոյ՝ 'ի բարի կողմն առեալ լինի 'ի տուրբ գիրս, այսինքն փոխանակ զթալոյ, օգնելոյ ևն. այլ երբեմն ընդ հակառակն ևս կարէ կարգիլ: Այնպէս և այց առնելն՝ թէպէտև հասարակօրէն առեալ լինի 'ի բարին՝ փոխանակ ախթարելոյ, ազատելոյ, նպաստելոյ ևն, բայց երբեմն կարգի և յոչ բարին, այսինքն փոխանակ վնաս խնդրելոյ, պատժելոյ, մերժելոյ, ևն: Նակ թէ յո՛ր միտս դնի աստ այց առնելն՝ ևս և նայելն՝ տարակոյս է. հաւանական է ասել՝ թէ դնի ըստ բարւոյ մասին. զի 'ի միասին ընդ նայելոյն դնի. յոր միտս կրկնակի կարէ մեկնիլ այս բան:

Ա՛ն՝ երբ գուշակութեն ապագայ գարձի հեթանոսաց. և ըստ այմ յայտնապէս մարգարէանայ գաւթի՝ թէ եկեսցէ ժամանակ՝ զի աճ թողեալ զխոտրայէլացիս վասն անարժանութեն նոցա՝ նայեսցի 'ի հեթանոս առհասարակ, և այց արասցէ նոցա, ցուցանելով զողորմութեն իւր ըստ այնմ * գնացէ՛ք այսուհետև աշակերտեցէ՛ք զամենայն հեթանոս ‖. (մատ. ին. 19.) նակ 'ի հասանել կատարած աշխարհիս, յորժամ քննութիւն առնիցէ աճ՝ հրէից և հեթանոսաց, յայնժամ մի ողորմեսցի այնոցիկ, որք գործեն զանօրէնութի:

Ներկրորդ այս բան մեկնի իբր մաղթանք վասն թշնամեաց, և ս և վասն հեթանոսաց. զի դաւթի նաև 'ի հալածիչն անդ սղօթիր վասն թշնամեաց իւրոյ. որպէս յայտ է յայլ սաղմոս. այնպէս թուի առնել և աստ. ուր զաղօթս իւր տարածէ նաև առ այնոսիկ՝ որք էին արտաքին թշնամիք. որպիսի էին հե-

թանոսք. և յայս միտս կամի ասել՝ նայեա՛ց առ ամե-
նայն թշնամիս իմ, ես և առ հեթանոսս, և ցո՛յց զո-
ղորմութ̃ի քո առ նոսա. իսկ որք ո՛չ կամին զգաստա-
նալ, այլ հաստատուն կան յանօրէնութ̃ե իւրեանց,
նոքա մի՛ գտցեն զողորմութ̃ի 'ի քէն. և այս ո՛չ վասն
պակասելոյ ողորմութ̃ե քո, այլ վասն յանցանաց նո-
ցա, և վասն մնալոյ նոցա 'ի յանցանսն անդ:

Իսկ եթէ բառդ այց առնել, նոյնպէս և բառդ նայել՝
առեալ լիցի ըստ բանի վրէժխնդրութ̃ե՝ որպէս առ-
նուն աստ ոմանք, դարձեալ կրկնակի մեկնի այս
բան. մի՝ 'ի մասնաւորի, որպէս թէ ասէր. հայեա՛ց
'ի գործս թշնամեաց իմոց՝ եթէ՛ ներքինք իցեն և
եթէ արտաքինք. և դու ինքն լե՛ր վրէժխնդիր նո-
ցա. և եթէ նոքա ո՛չ դարձցին, մի՛ ողորմիր նոցա,
այսինքն թէ ոչ ունիս ողորմիլ նոցա: Երկրորդ ընդ-
հանրապէս. որպէս թէ ասէր. եկեսցէ օր՝ զի այցե-
լութ̃ի արասցես ամենեցուն եթէ՛ հրէից, և եթէ
հեթանոսաց, և մերժեսցես յողորմութ̃է քումմէ
զամենեսին որք մերժեցին զողորմութ̃ի քո:

Մարթ է ևս ասել՝ թէ զայս բան ասէ դաւիթ՝ հա-
մարելով զգործս թշնամեաց իւրոց գրեթէ նոյն ընդ
գործս հեթանոսաց. իբր զի տեսեալ զանողորմութ̃ի
սաւուղայ և արանց նորա՝ յիշէ այնու և զգործս ան-
ողորմութ̃ե օտար ազգաց և հեթանոսաց. եթէ ա-
սէ որք յազգէ իմմէ են և լինէն բարբարեալ՝ այս-
պէս առնեն ընդ իս, զի՛նչ առնիցեն ապա հեթանոսք.
վասն որոյ աղաչէ զա̃ծ՝ լինել վրէժխնդիր սոցա և
նոցա. և յոչ դադարիլ նոցին յանօրէնութ̃է իւ-
րեանց, ամփոփել զողորմութ̃ի իւր 'ի նոցանէ:

Իսկ ոմանք զայս բան վերածելով 'ի ժամանակ նեե-
մեայ, համարին 'ի բերանոյ նորա ասացեալ. զի և
նա 'ի յառնել օտար ազգաց՝ ասաց առ ա̃ծ. * Լուր
,, մեզ ա̃ր ա̃ծ մեր... և դարձո՛ զնախատինս նոցա
,, 'ի գլուխս նոցա... և ո՛չ մեղք նոցա յերեսաց քոց
,, ջնջեսցին‖. (Բ. եզր. Դ. 4. 5:) Զիարդ և մեկ-
նեսցի, դիտումն մարգարէին է յայտ առնել, թէ
ա̃ծ որպէս ցուցանէ զողորմութ̃ի իւր առ արդարս,
սոյնպէս ամփոփէ զայն յանօրինաց. կամ թէ պաշտ-
պան լեալ արդարոց՝ փրկէ զնոսա 'ի ձեռաց ամբարշ-

Տ

տայ, մերժելով զնոյն ամպարիշտան՝ կամ ընդունայն առնելով զՆոցա. զոր նաև այլով ինձն քանիւ առաջի առնէ՝ ի յաջորդ համարն ասելով։

Է. Ադաւչեն ընդ երեկոյս. սովեսցեն որպէս շուն, և շրջեսցեն զքաղաք։

Զանց սովելոց նմանեցուցանէ զաւիթ զայնոսիկ, որք՝ ի սաւուղայ առաքեալ եկին ընդ երեկոյս, և պաշարեցին զտուն իւր. բայց ոչինչ կարացին առնել. վասն որոյ ասէ։

Ադաւչեն ընդ երեկոյս. սովեսցեն որպէս շուն, և շրջեսցեն զքաղաք։ Լաւն ասել. ՚ի մեկնիլ իմում ՚ի սաւուղայ յորժամ գառնայի ՚ի տուն իմ, արք Նորա ևս մեկնեցան ՚ի նմանէ, ուր զի գարձցին ՚ի տուն իւրեանց, այլ զի գարձցին ՚ի վերայ իմ ընդ երեկս, և սպասեսցեն զտամբ իմով. բայց որպէս շունք սովեսցին. այսինքն որպէս շունք ՚ի սպասելն ՚ի դիշերի սովին՝ և զոր գտանեն ուտեն, սոյնպէս և Նոքա սպասելով ինձ քաղցնուցուն և սովեսցին յուտել զիս. բայց յոչ գտանելն զիս, ելցեն և շրջեսցին զքաղաքաւ, և ուր ևս տեսցեն զիս։

Ը. Այլազգ ևս մեկնի այս բան ՚ի ցուցանել՝ թէ զուր էր պաշարել Նոցա զինքն. և ըստ այսմ բայդ գառնալ դնի փոխանակ յետս գառնալոյ. որպէս թէ ասէր. եկին ընդ երեկս, և պաշարեցին զտուն իմ. բայց զի ուր գտցեն զիս՝ գարձցին յետս. և իբրև շունք որք ուր գտանելով զկերակուր՝ քաղցեալ սովին, նոյնպէս և Նոքա ուր գտանելով զիս սովեսցին, և շրջեսցին գտանել զիս։

Ը. Այս բան հայի և ՚ի Թշնամիսն հրէից յաւուրս նէեմեայ, ՚ի սանաբաղատ և ՚ի տոբիայ և ՚ի համախոհս Նոցա, որք ուրախ լինէին զի ուր էր պաշարել զՀրէայս, խորհեցան ՚ի գիշերի գալ. բայց ՚ի զգուշանալ նէեմեայ՝ ուր ինչ կարացին առնել. (գ. եզր. գ. 11 = 23։) Եւ յայս միտս կամի ասել. գարձցին և եկեսցեն ՚ի գիշերի իբրև շունք սովեալք. և շրջեսցին զքաղաքաւ գտանել մուտս, և ուրինչ կարասցեն առնել։

Ը. Այլ այս բանք գուշակութիւնք ևս են գառն վիճակի

որ եհաս հրէից 'ի նորումս. յոր միտս կամի ասել. 'ի գալ լուսոյ աւետարանին, նոքա դարձցին յերեկոյս, այսինքն յարեսցին 'ի հին օրէնս որ օրինակի յերեկոյ. և որք նախ իբրև որդիք 'ի սեղան տն վայելէին, սովեսցին իբրև զշունս 'ի սով բանին կենաց. և ըստ գրելոյն մարգանայ՝ վատթար ևս քան զշուն. զի և 'ի փշրանացն զրկեցան իբրև զկատաղի շունս, զորս ոչ եթէ կերակրեն մարդիկ, այլ վարեն և սպանանեն: Շրջեցին և զքաղաքաւ այսինքն զսուրբ եկեղեցեաւ, և զսուրբ գրով հին կտակարանաց. և ոչ կարասցեն մտանել 'ի ներքս. որով և ոչ իմասցին ինչ ուղղութիւն 'ի գրոց անտի:

Ծործորեցին ('ի մեկն. մատ. գլ. ժէ.) այսոքիւք սովեալ շամբք իմանայ զդպիրս և զփարիսեցիս, որք շրջեցան զյիւ իբրև զանմատչելի և զամենալի քաղաքաւ. և սովամահ դարձեալ 'ի նմանէ՝ ղօղանջեցին բերանօք իւրեանց:

Այս բան կարէ հայիլ և 'ի մեծագոյն թշուառութիւն, որ հասին 'ի հրէայս ըստ մարմնաւորին յետ տիրելոյ տիտոսի 'ի վերայ երուսաղեմի. նա զի յանցանել ժամանակաց, ադրիանոս կայսր որ նորոգեաց զերուսաղէմ, հրաման եհան 'ի վերջին ամի իւրում՝ այսինքն յամի տն 137. զի վարեսցին հրեայք 'ի պաղեստինոյ, և հեռասցին անտի իսպառ. և այս հրաման տևեաց ոչ սակաւ ժամանակս. գուցէ յայս հայելով գուշակութիւն իմն ասէ. ընդ երեկոյս դարձցին. այսինքն յանցանել աւուրց և յերեկոյանալ այնր հրամանի, ցանկասցին դառնալ յերուսաղէմ. և իբրև շունք սովեալք դիմեսցեն 'ի նոյն, և շրջեսցին զնովաւ, որպէս և արարինն իսկ. զի յետ ժամանակաց եկեալ շրջեցան զնովաւ և բնակեցան անդ բազումք, որպէս և այժմ:

Այլ այս բան հայի ուղղակի և 'ի յետին օր կատարածի աշխարհիս, յորում ընդ երեկոյս, այսինքն յերեկոյանալ ժամանակի, դարձցին ամբարիշտք յինքեանս, կամ 'ի մարմինս իւրեանց. և իբրև շունք սովեսցին զրկեալք յապաշխարութենէ և յամենայն մխիթարութենէ, և շրջեսցին զքաղաքաւ. այսինքն հայելով յարդարս փառաւորեալս 'ի քաղաքն վերին,

կարօտասցին և մաշեսցին. և ոչ իւիք ունիցին յոյս մտանելոյ 'ի ժողովս նոցա. (որպէս գրի յիմաստ. Է. 3. 4:)

Կամի. զայս բան ըստ յարմարութեան պատշաճեցուցանէ գործոյ չար դիւաց. և երեկոյիւ իմանայ զըսկիզբն մարտնչելոյ նոցա. զի որպէս երեկոյն է սկիզբն զգալի խաւարի, սոյնպէս և սկիզբն չար խորհրդոյ՝ իմանալի խաւարի. այլ 'ի պաշտպանել ա̃յ զմարդն՝ նոքա ընդ սկսանելն մարտնչել՝ դառնան յետս սովեալք իբրև զշուն և իբրև զառիւծ ըստ դրելոյն պետրոսի (ա̃. պետ. Ե. 9:) Բայց 'ի դառնալ իւրեանց ոչ հեռանան իսպառ, այլ շրջին զքաղաքաւ՝ այսինքն զմարդով՝ գտանել մուտ առ նա: Զայս եդեալ մարգարէին ըստ այլևայլ մտաց զոր մեկնեցաք, դարձեալ սկսանի պատմել զչարութիւն թշնամեաց իւրոց և ասէ:

Ը. ՆՈՔԱ ՂՕՂԱՆՋԵՍՑԵՆ ԲԵՐԱՆՈՎՔ ԻՒՐԵԱՆՑ. ԵՒ ՍՈՒՐ Է 'Ի ՇՐԹՈՒՆՍ ՆՈՑԱ:

Ղօղանջելն է ձայն հանել պղնձեղինաց 'ի հարկանելն. և զի այս ձայն եթէ չկայցէ արհեստ՝ է անհեթեթ և տաղտկալի լսելեաց, սմին իրի անհեթեթ և տաղտկալից խօսից բերի օրինակ, որպիսի էին և խօսք թշնամեացն դաւթի. վասն որոյ ասէ:

ՆՈՔԱ ՂՕՂԱՆՋԵՍՑԵՆ ԲԵՐԱՆՈՎՔ ԻՒՐԵԱՆՑ. ԵՒ ՍՈՒՐ Է 'Ի ՇՐԹՈՒՆՍ ՆՈՑԱ: Կամի ասել. որպէս շունք 'ի հալածիլն՝ 'ի հեռուստ կան և հաչեն, սոյնպէս և թշնամիք իմ հեռացեալ յինէն ղօղանջեսցեն. այսինքն զանհեթեթ և զյիմարական բանս խօսեսցին վասն իմ: Եւ սակայն յայնոսիկ բանս նոցա ասէ զորս խօսին շրթամբք իւրեանց՝ կայ սուր. որով կամի ցուցանել, թէ 'ի խօսիլ նոցա զնմանէ, զայնպիսի ինչ 'ի մէջ բերէին, որ նման էր սրոյ ըստ երկուց, մի՝ առ 'ի մղել զլսողսն ընդդէմ նորա. և մի ևս՝ առ 'ի սպանանել զնա որպէս եղեն և բանք տիրասպան հրէիցն: Բայց քանզի պաշտպան եղև նմա ա̃ծ, սուր բանից նոցա բթացաւ և ինքեանք անպիտանացան. սմին իրի յարէ զկնի և ասէ:

Թ. Եւ ասէ ցիմէոն պետրոս. տէր, դու ինձ լուար ասել. ես քեզ ծիծաղեսայի ընդդէմ, և արհամարհեսայես ամենայն հելլենաց։

Ընդ որում ասէ ցնա, եթէ ոչ ինձ լուար ասել. ես քեզ ծիծաղեսայի ընդդէմ, և արհամարհեսայես ամենայն հելլենաց։

Ընդ որում՝ ասէ ցնա. ոչ լուա՛ր ասել. ես քեզ ծիծաղեսայես ընդդէմ։ Լաւ ասել. ՚ի խորհիլ և ՚ի խօսիլ զինեն Թէընաքեաց իմոյ զմեծամեծ էարխս, կարծէին կատարել՝ զորս կամէին նուաճել. և ոչ կասկածէին ինչ՝ Թէ չկարեն առնել զայն. քանզի ոչ գիտէին՝ Թէ դու խափանեցոյ նոցա ես զխորհուրդս նոցա. զի ոչ ՚ի նոցանէ լուաւ զայս, իբր Թէ ասէր ոչ ոք ՚ի նոցանէ լուաւ կամ գիտաց՝ Թէ դու արհամարհելոց ես զնոսա, և պաշտպանելոց ես ինձ։ Նոյնպէս պատճառ հարցականապէս դնելոյն է զօրաւոր առնել զասացեալն։ Զարձուցեալ ասլա մարգարէին զբան իւր առ հեթանոսս՝ ասէ։

Ոչ՝ արհամարհեսայես զամենայն հելլենաս։ Լաւ ասել. ոչ միայն զնմա յատուկ Թշնամիս, այլ Թէև ամենայն հեթանոսք յարձոյեն ՚ի վերայ իմ, զամենեսեան արհամարհես և ՚ի քաց մերժեսցես։ Լաւ ամբ". Հոգևորապէս մեկնելով զայս բան՝ դեղեցիկ՝ ինն հետևեցուցանէ և ասէ * ոմն մեծի հեզուԹե և խոնարհուԹե ,, խոնարհուԹիւն բարուցն. ոչ ասէ Թէ ես ծիծաղիմ , ,, այլ Թէ դու. և ոչ Թէ ես արհամարհեմ զաղգս ,, խորհրդոյն (դիւաց) , այլ դու որ տեսանես ,, զամենատկարուԹի՛ն հոգւոյն. այսպէս ելանէ ՚ի ,, գլուխ յաղԹուԹիւն առանց ամբարտաւանուԹեան խոնարհուԹի՛ն հոգւոյ ։ Եւ ահա զսոյն զայս խոնար-

հուլթե առաւել ևս յայտ առնէ մարդարէն ՚ի յաջորդ համարն ասելով ։

Ժ. Օ՛ օրո՜ւէ էմ առ չէկ պահեցէց, ալ ըզ ըզ ըզ օգնական էմ է ։

Որովհետև մեծ եղոյց զամենակարողութէն ըզ՝ խոստանար զինքն ընդ նովաւ, և ՚ի նա յանձն առնէ զամենայն զջօրութէն իւրոյ, և ասէ ։

Օ՛ օրո՜ւէն էմ առ չէկ պահեցէց, ալ ըզ ըզ ըզ օգնական էմ է ։ Ներակի մեկնի այս բան. մի՝ հայելով ՚ի նախընթաց համարն, որպէս թէ ասէր. որովհետև դու ինքն ամենակալ զօրութէդ արհամարհես զամենայն թշնամիս իմ, և դու ինքն պատերազմիս վասն իմ, ուր ինչ պիտոյ է ինձ ՚ի կիր առնուլ զջօրութէն իմ, այլ քեզ յանձնել զայն. և ես այնուհետև մնացեալ յապահովի և ասացեալ. ըզ օգնական իմ է ։ Ներկրորդ՝ հայելով ՚ի պաշտպանութէն անձին իւրոյ. յոր միտս կամի ասել. ես ուր կարեմ զօրութէդ իմով պաշտպանել զիս. այլ զօրութէդ քով. վասն որոյ աղաչեմ զքեզ զօրացո՛ զիս ընդդէմ թշնամեաց իմոց ևս ։ Ներորդ՝ հայելով ՚ի պահպանութէն զօրութեան իւրոյ. յոր միտս կամի ասել. այն զօրուն որ իմ է, ուր է կինէն՝ այլ ՚ի քէն՝ որ ամենակարօղդ ես. վասն որոյ և ուր է կինձ հնար պահել զայն կնև, այլ քև. ուստի և քեզ յանձնեմ զայն, զի դու որ ետուր կինձ զայն՝ դու կինքն պահեացես զնոյն ։ Օ՛ այս ասէ և եկեղեցի՝ ըզ առ քս. առ քեզ պահեցիկ՝ զհաւատս իմ. և դու ես օգնական իմ ։ Եւ զի ցուցցէ թէ ուր վարկպարագն խօսի զայս, յարէ զկնի և ասէ ։

Ժա. Ա՛ ձ է մ, ողորմութէ՜ն դուրա կանխեացէ առ է ս. և ըզ ձ է մ ցուցց էնչ ՚ի ընչաւրս է մ ։

Ողորմութէն այ երրակի հասանէ ՚ի փրկել զմարդ. կանխելով, համընթանալով, և զհետ գալով. կանխելով, յորժամ հասանէ նախ քան զվտանգիլ մարդոյ. համընթանալով՝ յորժամ փրկէ. զհետ գալով՝ յորժամ պահէ կամ զգուշանայ յետ փրկութէն. (զորմէ խօսեցաւ մարգարէն ՚ի տաղ իբ. 8 ։) Նակ աստ խօսի զաղջոյն և զերկրորդէն յասելն ։

Ա՛ՀԱ ԵՍ, ողորմա՛ծ Տէր Աստուա՛ծ իմ. և ա՛ծ ես զիս էնդ ի ընչասիրս եմ։ Կամ ասել. ա՛ծ է նպատակ և առարկայ յուսոյ իմոյ. ա՛ծ է ապաւէն ապաստանի իմոյ. ա՛ծ է օգնական և պաշտպան փրկութե՛ան իմոյ, և նա ինքն ողորմեցի ինձ. զի ողորմութե՛ն Տէրա նախաժամանեցէ առ իս ի փրկել զիս ի վտանգէ աստի իմմէ և ի ձեռաց թշնամեաց իմոց։ Այս նա ինքն ցուցէ ինձ ի ընչասիրս եմ. ուր զօրութե՛ իմացեալ լինի պատուիր Տեառն, որպէս թէ ասէր՝ ցուցէ ինձ զփրկութե՛ն իւր՝ առաքելով զպատուիր պատուհասի ի թշնամիս իմ. կամ ցուցէ ինձ զվրէժխնդրութե՛ն ա՛յ յիս՝ այլ ի թշնամիս իմ. կամ թէ ցուցէ ինձ զզօրութե՛ն ողորմութե՛ն իւրոյ փրկելով զիս ի միջոյ թշնամեաց իմոց։

Նարոյապէս, ողորմութի՛ն ա՛յ կամ շնորհք նորա կանխէ առ մեզաւորն ի դարձուցանել զնա. ապա թէ ոչ՝ ա՛յ կարէ ինքնին դառնալ. որպէս աչքն առանց լուսոյ ա՛յ կարէ ինքնին տեսանել. յոր միտս այլսուր աղաչէ մարգարէն զա՛ծ ասելով. (ի սաղ. հթ. 9.)
* ա՛ծ զօրութեց դարձո՛ զմեզ. երեսցո՛ զերեսս քո ի ,, մեզ. և կեցցուք ‖. (տե՛ս ի սաղ. խբ 8.) և ի լինել այսր, ասէ, տեսից յիս զզօրութի՛ն քո, և յատեալիս իմ զվրէժխնդրութի՛ն քո. զորմէ առանձինն և այս խօսի ի յաջորդսդ ասելով։

ԺԲ. Ա՛Ծ է սպանանէր զնոսա. ալ մ՛ ոտասպին զգողովրդա՛ն։

ԺԳ. Ցուցէ՛ զնոսա զօրութի՛ն քո և ընկճէ՛ զնոսա. ալ պաշտպան իմ տէր։

Յայս սաղմոս զերիս տեսակս պատժոց առաջի առնէ մարգարէն՝ հայելով ի Թշնամիս իւր. մին է արհամարհել նոցա յոյժ և անպարծ ինալ, կամ կապել և ոչինչ կարել առնել. երկրորդն է կրել նոցա զվնասս պատուհասէն. երրորդն է կորնչիլ կամ թշուառանալ նոցա խապար։ Ա՛ռաջնոյն խօսեցաւ յայս վայր (զոր և կրկնէ ի հ՛անարն. 16. 17. և 18։) Ա՛ երկրորդէն խօսի յայսոսիկ երկուս համարսդ. իսկ զերրորդէն խո-

ալ ՚ի համարն. 15։ Այլ նախ յառաջիկայ բանսդ ՚ի
բերելն ՚ի մէջ զերկրորդ տեսակ պատժոյն, զերծորդն
՚ի բաց հանէ ասելով։

ԺԲ. Ալէ սպանանէր զնոսա. զէ զ՚ Նոսաւոյին զքողէ-ըդա-
ոո։

ԺԳ. Զուէա զնոսա զօրութիւնք ոով և ընկճեա զնոսա. զէ
զոա ես պաշտպան էմ քէը։ Այս բանք կրկնակի մեկնին.
առաջին մեկնութենն հայի ՚ի թշնամիսն դաւթի որք
էին սաւուղեանք. և ըստ այսմ զօրութիւն լմնցեալ
լինի աստ բառս վաղվաղակի, որպէս թէ ասէր. մի
վաղվաղակի սպանաներ զթշնամիս իմ, զի մի լինի նո-
ցա մոռանալ զժողովուրդս քո, այսինքն ոչ տեսանել
զժողովուրդս քո. որ է ասել. մի առ ժամայն կորն-
ցեն, այլ կեցցեն սակաւիկ մի. որպէս զի տեսցեն
զփառաւորել ժողովրդեան քոյ ինև ՚ի թագաւորեցու-
ցանել քո զնս ՚ի վերայ նոցա։ Ո այս եղեալ պաղա-
տի և ասէ. ցրուեա զօրութիւն քով զատելութենն նոցա
՚ի սրտից նոցին, կամ ցրուեա զնոսա ՚ի միմեանց, և
արա զի ընկճեալ մնասցեն, և մի կարասցեն առնել
զոր կամին, այլ խոնարհեսցին, և դարձցին առ
քեզ։

Երկրորդ մեկնութենն հայի յընդհանրական պատիժ
ազգին հրէից՝ որ լինելոց էր ՚ի վախճան աւուրց ՚ի
մերժել նոցա զտէրն փառաց։ Եւ ըստ այսմ այս բան
դնի իբրև մարգարէական գուշակութենի ինչ. որով
կամի ասել. յանիրաւիլ իսրայէլացւոց առ քեզ, և ՚ի
սպանանել զորդիդ քո՝ դու ևս մերժեա զնոսա, բայց
մի սպանաներ զամենեսեան զնոսա առհասարակ. զէ
զ՚ Նոսաոյն ջնդղէ-ըդա ոո. այսինքն զի մի մոռացին
զլինել իւրեանց ժողովուրդ քո, կամ մի մոռացին
թէ ժողովուրդ քո էին. և կամ որ ուղղապոյն ևս է՝
մի մոռացին՝ հաւատալ հեթանոսքն թէ իսրայէ-
լացիք էին ժողովուրդ քո. զի եթէ գիտասցեն թէ
նոքա ժողովուրդ քո էին և դու ինքն յայտնեցար նո-
ցա, և ետուր նոցա զօրէնս և զկտակարանս, ուն-
ցին զնոսա վկայ հաստատութենէ հաւատոյ իւրեանց։
Եւ յայս սակս յաւելու ասել. ցրուեա զնոսա ընդ
ամենայն աշխարհս, զի ընդ ամենայն տեղիս լինին
վկայ չշմարտութենէ նոր օրինաց, և իւրեանց բանիւ

ընչձէա զնոսա, զի և ինքեանք օգտեսցին. բայց զի ոչ կամեցան և ոչ կամին օգտիլ, վասն որոյ որչափ յառաջն փառաւորեալ էին, այնչափ անարգեալ և նուաձեալ եղեն. որպէս և աչօք իսկ է տեսանել։ (Տե՛ս և 'ի համեմատութիւն։)

Լամբ՞ հոգևորապէս մեկնելով՝ ասէ թէ մարգարէն սովաւ խնդրէ, զի մի՛ իսպառ սպանցէ կամ բարձցէ ա՛ծ զփորձիչս. որպէս զի մարտնչելով նոցա ընդ մեզ՝ լիցին մեզ առիթ պսակաց, և այլն։ Յայս միտս գրէ և մեծն Խոսրով ('ի մեկն. ժամագրքի. երես. 324.) «Նաև տեւելն նորա (ասէ, այսինքն սատանայի և դիւաց) և երկարաձգիլն ըստ ներելոյն ա՛յ է առ 'ի օգուտ մեզ. ըստ այնմ. մի՛ սպանաներ զնոսա, զի մի՛ մոռասցին զժողովուրդս քո»։ Արդ եդեալ մարգարէն զայսպիսի լինել թշնամեացն՝ 'ի մէջ բերէ և զմեղս բերանոյ նոցա ասելով։

ԺԳ. Մեղս բերանոյ նոցա՝ և բանս շրթանց նոցա. ընկլցին նոքա յամբարտաւանութեան իւրեանց։

Մեղք բերանոյ ասելով՝ իմանայ զանիրաւ չարախօսութիւնս, զվնասակար ստութիւնս, զդառն նախատինս, և հայհոյանս և այլն. սոյնպէս և բանք շրթանց նոցա ասելով՝ իմանայ զամբարտաւանական խօսս նոցա, զյոխորտանս սպառնալեաց, ևս և զբանս գրգռիչս այլոց 'ի զինել ընդդէմ դաւթի և այլն. 'ի սոսին հայելով՝ ասէ։

Մեղս բերանոյ նոցա՝, և բանս շրթանց նոցա. ընկլցին նոքա յամբարտաւանութեան իւրեանց։ Այս բան կրկնակի մեկնի. մի՝ իբր պատճառ նախընթաց բանիցն. որպէս թէ ասէր. պատճառ ցրուելոյն ա՛յ զթշնամիս իմ կամ ըզհրէայս՝ նոյնպէս և պատճառ ընկղմելոյ զնոսա՝ է մեղք բերանոյ նոցա, և անօրէն բանք շրթանց նոցին, որովք յոխորտային և հպարտութեամբ կորուսանել կամէին զիս։ Եւ 'ի ցրուելն անդ ընկլցին նոքա յամբարտաւանութեան իւրեանց. այսինքն թէ այնպէս ծածկեսցէ զնոսա ամբարտաւանութի՛ւ իւրեանց՝ որպէս ծածկէ ջուր՝ զորս կլանէ. որով կամի ասել. անձինք նոցա ընկղմեսցին և որպէս թէ աներևութասցին, և ոչ ևս կարասցեն

Տալաբտանալ. իսկ չարութեի ամբարտաւանութեե իւրեանց յայտնի երևեսցի։

Արիարդ այս բան մեկնի յիսուքեան մնածեալ, որով միտք բանին լինի սյս. վասն մեզոց բերանոյ նոցա և վասն անօրէն բանից շրթանց նոցա ընկոյզին յամբարտաւանութե իւրեանց. կամ որովհետև որինչ խօսին նոքա բերանով և շրթամբք իւրեանց՝ են մեղք, և ամբարտաւանական բանք, վասն այսորիկ ի նոյն ամբարտաւանութե իւրեանց ընկոյզին. որ է ասել. յամբարտաւանել իւրեանց, ընկձեսցին և նուաձեսցին։ Այլ ըստ այմ մեկնութե ամբարտաւանութե նոցա դնի իբր պատճառ՝ զբարիս խօսելոյ և բերանով մեզանչելոյ. և նոյն չար խօսիչն դնի իբր պատճառ ընկղմելոյ յայն ամբարտաւանութե՝ յորմէ չարժեալ խօսեցան զայնպիսիս։

Ա.յո բանք են գուշակութիք ապականութե հրեից. զի ի գաւել նոցա զերն փառաց, բանք բերանոյ նոցա և բանք շրթանց նոցին իբրև մեզք բզկեալ լինէին յամբարտաւանութե սրտից նոցա, որով և մեծապատին թե մեք * զաւակ աբրահամու եմք ‖ . եե և ևս ի կայսր պարծէին յասելն. * չիք մեր թագաւոր բաց ի կայսերէ ‖։ Ա.յսպիսի բանիւք վարեալով նաև ընդդեմ հռովմայեցւոց, ուստ դնելով ի մէջ իւրեանց՝ ոչ ծառայել նոցա, այլ ազատ ինալ, օրասյան յամբարտաւանութե կամ ընկղմեցան յամբարտաւանութե անդ իւրեանց՝ յորժամ յաւեր և յապականութե դարձուցին զնոսա հռովմայեցիքն. որպէս և տեսանել ի պատմութե անցից նոցա. զորմէ սատկագոյս ևս գրե մարգարէն ի յաջորդ համարս ասելով։

ԺԵ. Յանէքս և ի սառնի մանեսցին. ի կապաքեն բարխոնէ սպասեսցին, և ի գոյն։

Հետզհետէ կարգաւ իմն մեծացուցանէ մարգարէն զպատիժ պատուհասի թշնամեաց իւրոց, և նոքին առաւել ևս մեծ ցուցանէ զպատուհաս հրեից՝ զոր ուշնէին կրել ի կատարածի վասն որոյ ասէ։

Յանէքս և ի սառնի մանեսցին. ի կապաքեն բարխոնէ սպասեսցին, և ի գոյն։ Ա.յս բան եթէ հայեցիլ ի

թէհնամին դաւթի, մեկնի այսպէս. անիծեալ լիցին թէհնամիք իմ, և ի տուընջեան ծնանելոցն, և չարաչար պատժեացին ի բարկութենէն ոյ. և ի կատարածի բարկութեան, այսինքն ի կատարել գործոց բարկութենն ոյ. ջնջեացին իսպառ. և մի գոցին ուրեք՝ բայց եթէ ի գժոխս։

Իսկ եթէ այս քան առեալ լիցի իբր զուշակութիւն թշուառութեան յոր անկանելոց էին հրեայք, կրկին մեկնութեան առաջի դնի. առաջին մեկնութենն է՝ թէ ի կատարել նոցա զչար կամն իւրեանց, որով մնանեցին զրջին աստուծոյ ի մէհ խայն, մնանեացին և ինքեանք յայնոսիկ անէծս, զոր էառ նոցա մինչեւ։ (ՃՀ. օրինաց ԻԸ. 15 — 68.) և և ի տուընջեան այսինքն ի սուտ անկնալութեան գալստեան մեսիային, ի սուտ մեկնութեան կտակարանաց, ի սուտ ապերդպաշտութեան ՃՀ. նաև ի տուընջեան բանից և ի խաբեու-

թեան ջանից. որպէս և տեսանելի է իսկ։

Երկրորդ մեկնութենն է՝ թէ ման անիծից և ման տուընջեց նոցա մնանեացին ի թշուառութեան յաշխարհ ամենայն. և ՃՀ այսմ նախգիրքդ չ՝ և՝ է, որք դնին ի վերայ անիծից և տուընջեց, ունին զնշանակութիւն բառիդ ման կամ յաղագս։ Ուր յայս միտս անիծիւք նշանակին այն բանք նոցա որով անիծեցին զնիւթանաս առաջի սիրազոտսն ասելով. * արիւն դորա ի վերայ մեր և ի վերայ որդւոց մերոց ‖. (մատ. իէ. 25.) իսկ տուընջեաք նշանակին սուտ վկայութիւնք նոցա, և և այն նախայիշեալ բանք տուընջեաց՝ որով ասէին. * չիք մեր թագաւոր բաց ի կայսերէ ‖. և զայս յայտ է թէ տուընջեաք ասէին. զի ոչ Հնազանդին զնա իբրեւ թագաւոր. ուստի և ոչ կամէցան ծառայել նմա, ասելով թէ մեք ազատ եմք. և ոչ ունէք ծառայեցաք (յովհ. ՃՀ. 33.) և այս և այ կը սուտ. զի նախ զամն իբր չորեքհարիւր ծառայեցին եգիպտացւոց. և ապա զամն իբր երեք հարիւր փղշտացւոց. և ապա զամս եօթանասունն

մանաւանդ թէ զամն իբր հարիւր՝ բաբելացւոց։

Ուր ահա յայտիսի տուընջեան և յայտիսի անէծս գոլով մնանեցան ի նշանակութիւն։ Ուր կամ ման այսպիսի յիմարական ամբարտաւանութեան իբրեւ նց, և ման դառնագին անիծանացն՝ որով նգովեցին զան-

ձինս իբրեւ ունց, մանաւանդ ի Թշուառութե, և երկեն
նշաւակ յաշխարհ ամենայն. և ի նոյն ունկին մնալ՝
մինչև լրումն հետ անոսոց մոգ։

Նա ըստ այսմ հետևեալ բանն այն, այս է՝ * ի կա-
տարածի բարկութե սպառեսցին և մի գացին ‖, կրկ-
նակի մեկնի. մի՝ թե ի վախճան աւուրց՝ յորժամ
եկեսցէ մեսիայ, ի մերժել զնա հրեից՝ մանաւանդ
յանէծս և ի ստութիս, և ի նոսին սպառեսցին.
այսինքն մինչև ի սպառիլ և ի վերջանալ իւրեանց՝
ի նոյն անէծս և ի նոյն ստութիս Թշուառացին.
և որք յառաջն քան զամենայն ազգս ընտիրքն էին,
քան զամենեսեան անարգ երևեսցին, որպէս թէ ոչ
էին. և չայս սակս յաւելու. Ե մի գայցեն. այսինքն
մի այնպիսի գացին՝ որպիսի էին. կամ մի գացին յորշ-
նութիս, այլ յանէծս։ Այրկրորդ՝ մեկնի Հայելով՝ ի
կատարած աշխարհիս, յորում ժամանակի նա ինքն
սրաբիչն յանդիման ցուցցէ նոցա զինքն ասելով. ահա
ես եմ այն՝ զոր մերժեցիք, և խաչեցիք. զոմն որոյ
և մերժեսջիք չկենդն և սպառեսջիք յաշխարհիս և մի
ևս գաջիք յերկրի, այլ ի դժոխս։ Օ այսոսիկ եդեալ
հետևեցուցանէ, և ասէ։

ԺՇ. Պետրոսեան՝ ոչ ես ծնրը չոխովքոյ, և ամենայն ծա-
գոյ երկրի։

ԺՇ. Պաբչյեն ընդ երեխոյս. առվեսցին որպէս ղոռն, և
ղրնկեսցին պետուտա։

ԺՇ. Պոտա սպառեսցին յոտաբէ. ոտա ինչ ոչ չոփեսցին,
պրանկեսցեն։

Զերբեկն այ ընհանրապէս առեալ ինդիր և չամենայն
տեղիս չայտնի տեսանի, բայց ի մանաւանդ առեալ՝
ի հնուէն անդ չայտնագոյն ևս տեսանելոյ չայգն չա-
կոբայ ի պատուհանել նորա զնոսա, և ի վանել ըզ-
Թշնամիս նոցա. մինչև վկայել ամենեցուն ևս Թշնա-
մեաց նոցա, Թէ առանձին ինն զԹով ինամէ զնոսա
ասէ։

Պետրոսեան՝ ոչ ես ծնրը չոխովքոյ և ամենայն ծագոյ եր-

էրէ ։ Յայնժամ ՚ի նուաճէլ նոյ զՀնամիս դաւեցին և զՀշամիսն խրախճէլ , նոքին իսկ Հշամիք գիտացեն և իբր աչօք տեսցեն՝ Հե՛ւ ոճ միրկ խրախճելոցդ և պարտպանէ զնոսա , և նուաճէ և զայս զրոս և կամի մնալ ՚ի ծագս աշխարհի ։

Յայլ եղեալ այս բան Հայելոյ ՚ի նուաճումն Հրէից՝ մեկնի այսպէս . ՚ի վախճան աւուրց յորժամ եկեսցէ մեսիա՝ ՚ի մերժիլ անդ Հրէից և ՚ի յաջորդել Հեթանոսաց՝ դիտացեն ամենեքին՝ Հե՛ւ Հշմարիտն ոճ տիրէ ոչ միայն յակոբայ , այլ՝ նաև ամենայն ազգաց մինչև ՚ի ծագս երկրի ։ Հայելով սա ՚ի Հշամիսն սակ ։

Վարչէն ընդ երեկոյս . առաւօտն ըստ և ընթացին տասնեւսա ։ Այս այն է՝ զոր ասաց ՚ի Համարն 7 . և հրամէնէն ասա ցուցանել զԻրկին նուաճելն Հշամեաց . ըստ որոյ կամի ասել . որպէս ասացի՝ այնպէս եղիցի . իբրև Հշամիք իմ՝ զոր խնդրեին զնս , յամենի լինին . և յորմէնէն զնս ընդ երեկոյս , դարձիցեն ունայն . որով և սուկեսցին և կազկանձեսցեն որպէս շունք յոչ կարելն ուտել . և սկսանիցեն շրջիլ շուրջ զքաղաքաւ ՚ի պարտրել զնս . բայց և այն ջանք նոցա նանրասցին . (տես զայսմանէ ՚ի Համարն 7 .)

Յայլ եղեալ այս բան Հայելոյ ՚ի Հշուառ վիճակ Հրէից , մեկնի այսպէս . յերեկոյանալ կամ ՚ի կատարիլ աւուրքն հին օրինաց՝ նոքա փոխանակ առ ՚ած դառնալոյ , դարձիցեն յոյ ՚ի խափանել պաշտամունս իւրեանց . և ՚ի նոսա չգտեալ կերակուր Հոգւոյ՝ սուկեսցին որպէս շունք . և շրջեսցին զքաղաքաւ . այսինքն Հե՛ւ ինասցեն արտաքոյ եկեղեցւոյ , և դեգերեսցին յաւելորդ տալտատելն . և ՚ի նոսին և այգ չգտցեն ինչ ուտել . և զայս յայտ առնէ մանգաթէն ՚ի յաջորդ Համարն ՚ի մէջ բերելով զանցս Հշամեաց իւրոց յասելն ։

Այս պահեսցին յոտին . ապա Հե՛ւ ոչ յարձեսցին , (այսինքն եՀե՛ ոչ յագեսցին) որ՝նէնեսցեն ։ Կամի ասել . յոչ գտանել զնս Հշամեաց իմոց՝ սփռեսցին յայլևայլ տեղիս յուտել զնս և զատացուածս իմ . բայց ոչ գտանելով զնս՝ ոչ կարիցեն ուտել և յագիլ . վասն որոյ և արանձգեսցեն ։

Ա՛յլ եթէ այս բան հոյակի՛ն հրեայս, սփռիլ նոցա
ըստ կրկին մնոց կարէ խմացեալ լինել. մի՛ ըստ
սփռելոյ և ցրուելոյ նոցա յաշխարհս ամենայն ի գա-
նել կերպակուր կամ զշոշ մարմնաւորս, որպէս և տե-
սանեմք իսկ. զի ուր և լսեն թէ կարեն գտանել
ինչ յուտել և կեալ, ի նոյն սփռին. ուր թէպէտև
գտանեն և ուտեն, բայց ո՛չ յագեցին. այսինքն ո՛չ
հանգստեամբ վայելեցին. վասն որոյ և տրամփռեա-
ցեն, զորոյ զօրինակն յուսին յանձինս իւրեանց ի սկզ-
բան յորմէնէ գմանանայն, և ի տրամփռելն։

Երկրորդ ըստ ցնդելոյ նոցա ի հին կտակարանս յա-
րում ասա և անդ սփռին և դեգերին, առ բանս նա-
խաձարց, առ գուշակութիս մարգարէից, առ նշա-
նակութիս տարաղուելոցն իւրեանց, առ ի ուտել
ինչ ըստ հոգւոյ. բայց ո՛չ յագին և ո՛չ յագեցին.
այսինքն ո՛չ գտցեն զայնպիսի ինչ՝ որ լիցի նոցա յա-
գուրդ հոգւոյ. վասն որոյ և տրամփռեացեն. այսինքն
ժ֊գոհութիւ՛ բաբթանչեացեն, թէ ընդէ՞ր եղև մեզ
այս. և թէ երբ ունիմք գտանել՝ զոր խնդրեմք։
Երէ՞ խնդրէին, գտանէին, բայց որպէս առաքեալն
վկայէ. * զիւրեանցն խնդրեն կացուցանել. զի ար-
դարութեն՝ ոչ հնազանդեցան ։ (Հռոմ. Ժ. 3։)
Ա՛ստղապաշտս, սոքիմբք նշանակին անօրէնք, որք յե-
լեկոյս մեղայ կրկին գարձեալ՝ որպէս շունք սովին.
և չջոյնն արտաքոյ խղճի մտոց. դեգերին ասա և
անդ յուտել, այսինքն հանգիստ գտանել. և զի յոչ
խիք յագին, տրամքնին, հեծեծին, և յոգւոց ելանեն.
* այլ անօրէնք իբրև ծով ծփեսցին, և զհանգիստ
,, մի գտցեն ։ (Եսայ ԾԷ. 20։) Ծով՝ ի չնչել հող-
մոյ ալէկոծի. և մեղաւորն՝ ի փչել փորձուէ պղտորի
և վարանի։

Չարմարական մեկնութի՛ն այս երեքին տունք սաղ-
մոսաց կարեն հայիլ և յաւուրս նահեմեայ. իբրև թէ
ասել՝ ի յաջողել՝ ան զգործ չհնութի՛ն երուսաղէմի,
և՝ ի խափանել զգործս նեհոմութի՛ն թհնամեաց մա-
նաւանդ սանաբաղատայ և տուբիայ, ծանիցեն տե-
սողք, թէ ած տիրէ իսրայէլացւոց՝ ի պահպանել,
և ամենայն ազգաց և՝ զամենս՝ ի մերժել, և զամենս
՝ի պահպանել. իսկ թհնամիքն մեր գարձցին ի՛ երե-

կայս ևս։ (տես ի համարն. 7. և 8։ տես և ՚ի. եզր
գԼ. ՚ՀՒ.) Օ. այս եդեալ մարգարէին՝ մնալն ՚ի վեր
ջին յօրհնութիւն իւր և ասէ.

ԺԵ. Եւ օրհնեաց ղբդհնութիւն ան. և ընծայայ առա
ւօտուց յողբմութիւն տան.

Ա.յս բանք կարեն ասել ՚ի դիմաց նոր եկեղեցւոյ ՚ի նշանակել նորա զանցս հրէից՝ որոց էր սեփական լինել եկեղեցի նոց. այլ ՚ի մերժիլ նոցա՝ ինքն փոխանակեաց զաւետիսն. որոյ վասն օրհնէ զնա ։ Ա՚այլ ըստ Հառին՝ ասէն ՚ի դիմաց դաւթի. զի տեսեալ նորա զանհատանելի նախախնամութիւնն իւր յայսմ ամենայնի զոր ասաց՝ ցնծալից սրտիւ առաջի դնէ զանաս օրհնութիւնն և շնորհակալութիւն ասելով ։

ԺԶ. Եւ օրհնեաց ղբդհնութիւն ան. Ա.յսինքն երգեցից ցնծութիւն զայնսիսի երգս՝ որք են օրհնութիւնք առ նոա. այս է բանք յայտնիչք մեծութեան և ողորմութեան նոյ. որով և ևս կամի ասել, թէ ղերկութիւն իմ մի տայ զօրութիւն իմոյ, այլ զօրութիւն ան. և զայն զօրութիւն նորա օրհնելով մեծացուցից. և զի ցուցցէ թէ այս գործ փրկութեան ցուցաւ ինքեան յողորմութիւն նորա, ՚ի նոյն կանխէ ասելով ։

ՁՆընծայայ առաւօտուց յողբմութիւն տան։ Ա.յսինքն ուխտեաւք հոգւոյ բերկրեցայց յողբմութիւն տան. այս է՝ վասն գտանելոյ իմ ՚ի քէն զողորմութիւն. և զայս աթարից ասէ առաւօտուց. որով կամի ասել. առաւ ջին գործ աւուրց կենացս իմոց լեցի օրհնել զողորմութիւն քո, ՚ի նոյն ցնծալ, և նովին պանծալ ։

Ա՚ երածաբար, այս բան հայի ՚ի վերնակ հանդերձեալ կենաց, ուր յաւիտենականութիւնն է՝ վասն մեղաւոր կենացդ անդուլ գիշերս անցուցեալ՝ յաջորդեալ անցաւոր լուսոյ կենացդս. իսկ վասն արդարոց է առաւօտ անսուտեր յաջորդեալ անցաւոր գիշերոյ փորձութեանդ աշխարհիս, և և յաջորդեալ մեծի գատաստանի՝ որ երբեմն օրհնակի ՚ի խաւար և երբեմն ՚ի գիշեր ։ Ձայս անսուտ յանելի առաւօտ ունին ցնծալ արդարք, և օրհնել զօրհնութիւնս նոն յաւիտեան ։

Ա.յլաբանօրէն՝ բառիս առաւօտ՝ նշանակի աստ առաւօտանալ այսինքն սկսանիլ նոր եկեղեցւոյ, և տեւել

մինչեւ 'ի կատարած աշխարհի ցառաւօտ հանդերձեալ յաւիտենին. Բարոյապէս նշանակի լուսաւորութիւն մտաց. յորում ցնծայ հոգին յօրհնել զԱծ. Զայս առաջի արարեալ մարգարէին՝ թուէ ապա զգործս ողորմութեանն Այ՝ ցուցեալ 'ի նմանէ առ ինքն, եւ ասէ.

Ժ. Զի եղեր իմ պաշտպան, եւ տուն ապաւինի յաւուր նեղութեան իմոյ. օգնական իմ.

Զերիս գործս ողորմութեան եառես դաւիթ 'ի հալածիլ իւրում 'ի սաւուղայ. մի՝ զի փրկեցաւ 'ի ձեռաց սաւուղեանց պաշտպանութեամբ Տն. երկրորդ՝ զի եհաս 'ի տեղի ապաւինութեան 'ի խնամելոյ Տն. եւ երրորդ՝ զի եգիտ եւ յաջողութիւն առնելոյ բազում ինչ 'ի տարաբնակութեան իւրում. վասն առաջնոյն ասէ.

Զի եղեր իմ պաշտպան. Մեր բառդ չէ (որ 'ի բազում ձեռագիրս մեր ոչ գտնի) յարէ զայս բան ընդ նախընթացին իբր պատճառ օրհնելոյ զԱծ. որպէս թէ ասէր. օրհնեցից զքեզ, զի պաշտպան լինելով ինձ՝ ազատեցեր զանձն իմ 'ի պաշարողաց իմոց. խօսի ապա եւ վասն երկրորդին ասելով.

Եւ տուն ապաւինի յաւուր նեղութեան իմոյ. Այսինքն 'ի նեղութեան իմում, յորում չունէի տեղի ապաւինելոյ՝ դու ինքն եղեր ինձ իբրեւ տուն ապաւինի. այսինքն այնպիսի զօրութիւն, յոր ապաւինելով ապահովացայ. առաջի դնէ եւ զերրորդն ասելով.

Օգնական իմ. Այս բառ թէպէտ ըստ ոմանց սաղմոսաց մերոց յարի 'ի նախընթացն՝ այսինքն ցօր նեղութեան, բայց ոչ է այդպէս. այլ դնելի է արձակ. որպէս է տեսանել յեբր", եւ յայլ ամենայն թարգմանութիւնս. եւս եւ 'ի լատին". զի այս հայի յառաջնին գործ ողորմութեան Այ, որով օգնական եղեւ նմա Ած. կամ ըստ եբր". զօրութիւն եղեւ նմա յամենայն գործս նորա. յորմէ դրեթէ բռնադատեալ լինէր օրհնել զԱծ, եւ սաղմոսել նմա. զոր առնէ 'ի յաջորդ համարն ասելով.

իւ. ՔԵԶ ՍԱՂՄՈՍ ԱՍԱՑԻՑ՝ ԱԾ ԱՊԱՒԷՆ ԵՍ. ԱԾ ՈՂՈՐՄՈՒԹԻՒՆ ԻՄՈՅ։

Այս բան է գրեթէ կրկնումն նախասացելոցդ. և յայտ առնէ զեռանդն հոգւոյ մարգարէին, յորժամ իբրև թէ պղպջակէին անդադար օրհնութիւնք սաղմոսաց առ ած յասելն։

ՔԵԶ ՍԱՂՄՈՍ ԱՍԱՑԻՑ՝ ԱԾ ԱՊԱՒԷՆ ԵՍ։ Այսինքն թէ որովհետև դու ապաւէն իմ եղեր, և յամենայնի ապաւէն իմ ես, քեզ սաղմոս ասացից. այսինքն երգեցից առ քեզ զերգս սաղմոսաց՝ օրհնել և փառաւորել զքեզ, գովել և գոհանալ զքեզն։ Իսկ զմեծութիւն յօժարութեան և ցնծութեան սրտի իւրոյ յայտնէ յաւելլով զբառդ ԱԾ. որպէս թէ ասէր. նա որ ապաւէն իմ է, ոչ է մարդ, կամ հրեշտակ, այլ ած. և զի ած վասն ողորմութեան եղև նմա ապաւէն, յայն հայելով՝ յաւելու զկնի և ասէ։

ԱԾ ՈՂՈՐՄՈՒԹԻՒՆ ԻՄՈՅ։ Այսինքն թէ դու ես ած ողորմութեան, այս է, ած ամենողորմ. իսկ յաւելլով զբառդ իմոյ՝ կամի ասել. յողորմութէ քումմէ արարեր, և առնես ինձ զողորմութի. և նովին ողորմուբ փրկես և պահես զիս, և առաջնորդես 'ի կեանս յաւիտենից։

ՍԱՂՄՈՍ ԾԹ·

Պաղատանք զԻՋուցանելոյ զբարկութիւնն ՚ի խրատ առեալ Նորա զիարայել , առեալ երկիւղածաց իւրոց նշան ապրելոյն ՚ի բարկութիւնէ իւրմէ . միանգամայն և յայտարարութիւն խոստմանն ՚ի՝ գտանել օգնականութիւնն Նորա զժառանգութիւնն սիւքեմայ , գաղայադու , մանասէի , եփրեմի , մնաթու , և եղոմայ , որք օրհնակէնն զմանուսէ Հեղեզեկիս ։

Ի՝ հարցած . պատանեցոյց ժամանակաց առ ոսոմանէ . ՚ի ձամանսէի էր հրչիւք արար նա ընկերացս առաջոց , և պատրաստանն առաքոյ , և ՚ի գաբչին հարկանէր յոմէ էլոն աղէ չերկիրս սան հաղար ։ Ա՝րչանագիր . սաղմս ՚ի դաւիթ ։

1 Ա՝Ճ ձերձեցեր և առերեցեր զմեզ . բարկացար , և գթա՝ցեր ՚ի մեզ ։ 2 Շ՝արժեցեր զերկիր , և խռովեցուցեր զա՝ս . բժշկեա՛ զխզճոյս նորա՝ զի սասանեցաս ։ 3 Ցո՝ղեր ժողովրդեան խոմ խստութիւն . և եռոար ըմպել մեզ գինի սխմարութեան ։ 4 Ա՝ռաար երկիւղածից ոց նշան , զի ապրեսցեն յերեսաց աղեղան ։ 5 Որպես փրկեցան սիրելիք ո՛ս . կեցո՛ աջովդ ո՛ , և լո՛ր մեզ ։ 6 Ա՝ՃՀ խօսեցաս ՚ի սրբութիւն իւրում . բաժնեցից եղեմ՝ բածանեցայց զսիւքեմ . և զձովիկան չափեցց չաթեցից ։ 7 Ի՝մ է գաղաադ , և իմ է մանասէ . եփրեմ հզօրեւ գլխոյ իմոյ ։ 8 Ցո՝ւդա թագաւոր իմ՝ մովաբ սասան յոսոյ իմոյ ։ 9 Ի՝ներովին ոտնակոխեցից զիա՛ն իմ . և ինչ այլազգիքն հնազանդեցին ։ 10 Ո՞ տարցէ զիս ՚ի ժաղա՛ս ամուր . կամ ո՞ առաջնորդեսցէ զիս ՚ի ներս յեդովմ ։ 11 Ա՝յնէ ոչ դու ա՛ՃՀ , որ ձերձեցեր զիս , և ո՛չ ելիր ՚ի՛ կից զօրս մեր ։ 12 Ցո՛ւր մեզ օգնութիւն ՚ի ներեղուէ . զի ընդունայն է փրկութիւն մարդոյ ։ 13 Ա՝ՃՀ տուիչ արասցուս զօրութիւն . և նա արհամարհեսցէ զսխոնսն՝ որ ներեղն զմեզ ։

ՂԵՐՆԵԳԻՐ.

Ի խոստաց. պատանդելոց քահանայից առ ոստանէն. ի քամահանէն էր հրդէպ արար նա ընկճափետս ասորոց, և պատրիարքանն սոխղաց, և ի գերչին հարկիանէր յովսէ չէրն ազէց չերկոտա. սան հաղարս։ Ղեւոնեանփէր. սաղմս ի թաւիղ։

ԼՈՒՐՑԸՐԱՐՔՈՒԼ ՕՐՅԼԵՒՑԻ.

փոխոխութիւբ քառից՝ որք գտանին յայս վերնագիր ի զանազան ազգիսս մեր, մասիցս ի քննութիւն պատմեմ վերնագրիդ (զի այն փոփոխութիւբք դոյն ինչ են, և ոչինչ միասեն մնաց բանին). բերեալ նախ զերբ". ուր գրի այսպէս. լամ նայնախ ալ առասան էգուսի դիւրիամ լե պատիւ լե լաւիւ. այս է. * ի կատարած առ չուշան. վկայութիւն. արձակ նագիր ի դաւիթ առ ուամանէ ‖ (ի ժամանակի՝ զի ես)։ Իւր որպէս և առասանես քառիդ արձանագիր՝ ազգոս ի գաւիթ, որ ի մեզ ի վերջոյ դնի՝ առ երբ յաւուր գրի բառիւքս դիւրիամ լե պատիւ զանց արարեալ զառաքեալ առնու։ (Տես գայթանակ ի եներած. գլ. ծ.) Իսկ պատմութիւնն որ ի վերնագրիդ աւանդի՝ մեծ դժուարութ ի մէջ բերէ. զի ոչ համաձայնի գրուածոց ամանչնին ըստ չորից. մի՝ զի ասի աստ՝ թէ հրաձիգ արար դաւիթ զմիջագետս ասորւոց, կամ ըստ այլ ձեռագրաց՝ սոսկ զմիջագետս. բայց այս ոչ ուրեք պատմի, այլ այս միայն աւանդի ի սէր գիրս, թէ եհար դաւիթ զասորիս քսան և երկու հազար արանց. * և եղեն ասորիք դաւթի ի ծառայս պատարագաբերս ‖. այնպէս պատմի և զմիմեանցուոց (ընդ. թագ. ը. — ճ, և ա. մնաց. ժը. ւ — ճ) նա զի յերբայական դնի առաջ նախաառնչի. որով նշանակին առաջիք. ըստ ասելոյ հրեից նշանակի զամասիս որ ի մնայրաձագաբ ասորւոց առ որով են նահատակիմք այսինքն գետը. գուցէ և զմիջագետս ասորւոց այրեալ

իցէ դաւիթ, բայց այն չէ գրեալ 'ի պատմութիւնս նորա ։

Երկրորդ՝ զի ասի 'ի վերնագրին՝ հարկանել դաւթի. * և զասորեստանն սոբողայ ‖. կամ որպէս գնի 'ի տպագրեալ սաղմոսս ինչ, և 'ի լատինն". * զասորեստանս բանայ ‖։ Եւ այս է յայտնի սխալ գրչաց. զի պարտ էր՝ գնել ըստ եբրայականին արամ ծօբա, այսինքն զասորիս սուբայ. կամ սոսկ զսուբայ որպէս գնէ և վարդան. վասն զի (որպէս գրի. Բ. Թագ. Ը. 3. և 19.) եհար դաւիթ զթագաւոր նորա զադրաազար, և հնազանդեցոյց զնա ։ Իսկ հրէայք իմանան սովաւ զեբրիա՝ (որ է հալէպ) ։

Երրորդ՝ զի ասի 'ի վերնագրին թէ * 'ի դարձին հարկանէր յովաբ յերկոտասան հազարս ‖։ Իսկ այս ընծայի աբեսսայ եղբօր յովաբայ. (որպէս պատմ. Ա. Մնաց. ԺԸ. 12։) Եւ որ ասէ 'ի վերնագրին երկոտասան հազար գնի, անդ ութևտասն հազար գրի. դուցէ այս այլ իցէ, և այն այլ. (որպէս է տեսանել. Գ. Թագ. ԺԱ. 15.) և կամ դուցէ գործ աբեսսայ՝ ընծայի յովաբայ իբրև մեծի զօրապետի. որպէս և (Բ. Թագ. Ը. 13.) սոյն այս գործ ընծայի դաւթի ։

Չորրորդ՝ զի յամենայն սաղմոսս մեր փոխանակ գնելոյ ձոր աղից՝ գրի ձոր աղտից, որ է յայտնի սխալ գրչաց. զի այն ոչ էր աղտից ձոր, այլ աղից. դուցէ գրագիրք ունելով 'ի միտս իւրեանց զձորն աղտից՝ որ 'ի հայաստան, փոխանակ գրելոյ ձոր աղից, սխալմամբ գրչի եդեալ են ձոր աղտից. և այս յայտ է նախ յեբր". ուր գրի גיא מלח՝ այսինքն 'ի ձորն աղից ։ Յայտ է երկրորդ յայլ թարգմանութեանց ։ Յայտ է երրորդ (Բ Թագ. Ը. 13.) ուր այս ձոր կոչի գաբեղէմ. և (Ա. Մնաց. ԺԸ. 12.) ասի աղօնայ. իսկ գաբէղէմն թարգմանի ձոր աղից. նոյնպէս և աղօնն թարգմանի աղ ։ Եւ էր սա մերձ յեդոմ առ սահմանօք աղի ծովուն՝ այսինքն մեռեալ ծովուն. և դուցէ յայն սակս ձոր աղի կոչի կամ հովիտ աղի ։

Արդ 'ի յաջողիլ յաղթութեանց 'ի ձեռս դաւթի և 'ի դադարել այսր ամենայնի խաղաղացեալ նորա 'ի խաւ-

վութեց՝ ստաց զայս սաղմոս՝ ոչ եթէ 'ի վերայ այսոցիկ գործոց, զի զայսցանէ ոչինչ յիշէ, այլ 'ի վերայ այլոց անցից անցելոց է իսրայէլացիս. ուստի և սկիզբն առնէ խօսիլ ոչ թէ զխորդ եհար զթշնամիս իւր, այլ թէ զինչ ինչ նեղութիս կրեցին իսրայէլացիք 'ի ժամանակս դատաւորաց. և զինչ ևս կրեաց ինքն. և ապա առաջի դնէ զյաջողութիւնս զներկայս և զապագայս՝ որք հանդերձեալ էին լինել յիսրայէլ, և յեկեղեցի քնի.

Վասն որոյ և այս սաղմոս կոչի զառանցելոց ժամանակաց՝ կամ ըստ այլոց, սաղմոս վասն փոփոխելոյ ժամանակաց 'ի նեղութէ 'ի հանգիստ, 'ի ձախորդութէ 'ի յաջողութի ԼԱ. (զորմէ տես 'ի սաղ. խդ. 'ի վերնագ).

Այս սաղմոս ասի լինել [illegible]. զի աւանդի վասն ուսանելոյ, և ուսուցանելոյ զգործս նախախնամուէն այ՝ թէ զխորդ հարկանէ և բժշկէ. (զորմէ տես. Բ. օրինաց. ԼԲ. 39. Այլ վասն բառիս [illegible], տես 'ի սաղ". ԾԷ.)

Բազումք աստանօր տեսեալ թէ բանք սաղմոսիս ոչ համաձայնին վերնագրի սորա, այլ ամենայնիւ յարմար երևին գերութեան բաբելացւոց, պնդեն՝ թէ այս սաղմոս ասացեալ իցէ 'ի հոգեկիր արանց գերելոց 'ի բաբելոն. և յետոյ եդեալ իցէ յոմանց այս վերնագիր, յանուն դաւթի վերագրելով. Այս կարծիք թէ և գովելի իցէ, բայց ոչ է ըստ նկարագրին, այլ միայն ըստ յարմարելոյ զբանն. որպէս առնէ և վարդան. իսկ հասարակաց կարծիք այն է զոր եդաք, որ և է հաւանական և համաձայն կարգի բանից սաղմոսիս.

Բ Ա Ն

ԺԸ. Ընծ հերձեցեալ և առերեսեալ զնէն· բարձոյր և գնաց ի հեղ։

Մ Ե Կ Ն Ո Ւ Թ Ի Ւ Ն

Առյս բանք և յաջորդք առաք այսմիկքն բանք երկուց տանց յետագային նոյն են ընդ այնս, զորս առաց մարգարէն ի սաղ· խդ· 11 — 18։ Նչ արձիչ առաց· ցաւ անդամոց, այն ամենայն հայկին ի սուտ· (տես ի մեկնուածն անդ)։ Նյս թեպէտ թէ առ մանուածոյ պէս դիտելով խօսի զսմոյ անցից՝ զորս կրեցին խոբեչելացիք ի ժամանակս դատաւորաց։ Նպա ի դեմաց նոցին խօսելով ասէ։

Նծ հերձեցեալ և առերեսեալ զնէն· բարձոյր, և գնաց ի հեղ։ Կամի ասել· վասն անօրէնութեանց մերոց մերժեցեալ և ի բաց թողեր զմեզ ի հայրական խնամոյ քոյ և ի ձերական պաշտպանութենէ քումմէ· և առերեսեալ զնէն, այսինքն չտեսեր դարձուցեր զմեզ՝ որք օրհնօք քով և իբաւամբ քով շինեալ և զարդարեալ էաք, Նչ զի մեք ոչ պահեցաք զօրէնս և զիրաւունս քո, վասն որոյ և բարձոյր· և թարկութեանդ մատնեցեր զմեզ ի ձեռս թշնամեաց մերոց· բայց ակնարկութեամբ ևս թէ ողորմածութիւն ի վերայ մեր։

Նյս ծանիցէ, զի որպէս ասէ վանական վարդապետ (ի մեկն· յոբ· գլ· ժդ·) * ոչ եմ թեթ ած մերժել և ,, առեր· այլ (զայս ասելով մարգարէին) կամի զաբ ,, թուցանել զնա ի վշտակցութենէն և ի գթութի ։, ուստի և յաբէ· բայց արդ գթացիս ի մեզ· այսինքն թէ ցուցցես ի մեզ զառաքինի գութդ քոյ՝ և զխայրա կան խնամն քոյ։

Նյս աբաքանօրէնն՝ այս բան ասի ի դիմաց մարդկան առհասարակ· որպէս թէ եգեալ եր· վասն մեղաց միոյ մարդոյ մերժեցեր զմեզ ի դրախտէ ի հնուրհայ, և առերեսեր զմեզ ըստ մարմնոյ և ըստ հոգւոյ, ըստ մարմնոյ ի հող դարձուցանելով, և ըստ հոգւոյ ի

դժոխս պարտաւորելով. այլ գիտացիս ի մէզ առաքելով առ մէզ գմիածինդ. զի որպէս միոյն գառապարտեցաք, սոյնպէս և միով այնու արդարացուցեալ և կեցցուք: Ա.յլ կամելով սատակացուցանել զզօրութիւն ասացելոց իւրոց, կրկնէ զնոյն այլով ինն բանիւ և ասէ:

Զ. Ա ուրբեցեր ջերմէր, և խառնեցուցեր զսա. բնչիեա զնարուածս սրբա՝ զի ասասնեցաս:

Ա.ստղ երկիր դնի աստ ըստ ոճոյ Հայրապատութեան փոխանուանէ ձևով. որով անուն պարունակողին դնի փոխանակ անուան պարունակելոյն. որպէս անուանս տուն՝ որ է պարունակող, դնի փոխանակ անուան պարունակելոյ, այսինքն փոխանակ բնակչաց տան. ըստ այսմ դնի և աստ. զի երկիրն որ է պարունակող մարդկան, դնի փոխանակ նոցին իսկ մարդկան՝ որք են յերկրի, յոր միտս ասէ:

Ա ուրբեցեր ջերմէր, և խառնեցուցեր զսա: Օ այս դնի առ՝ ի ցուցանել զառաւելութեն Թշուառութենն. որպէս Թէ ասէր. ոչ զմի ի մէնջ, և ոչ զմի զբաղաքս մեր, այլ զամենայն երկիրս մեր, այսինքն զամենեսեան զմէզ չարժեցեր. այս է հալածեցեր և մնանեցեր ի ձեռս Թշնամեաց մերոց: Ա.յլ կամելով ցուցանել զառատութեն այսր, յաւելու ասել. և խառնեցուցեր զսա: Ա.յսինքն որպէս խառնեցուցաք մեք գքեզ, սոյնպէս և դու արժանապէս խառնեցուցեր զերկիրս մեր. որ է ասել. արարեր՝ զի ամենեքին մեք լցեալ լինիմք խռովութեբ յերեսաց Թշնամեաց մերոց, և ի Թշուառութեց հասեալց ի վերայ մեր: Օ այս եդեալ մնաց չի պաղատիլ և ասել:

Բ նչիեա զնարուածս սրբա՝ զի ասասնեցաս: Ըստ բառիդ սրբա՝ յարաբերի զերկիրն, և այնու յանդիման առնի զընակիչս նորա ըստ նախագրելոցդ. որպէս Թէ ասէր. դու որ Տարեր զմէզ՝ դու բժշկեա զմեզ. կամ դու որ Թոյլ եւտուր Թշնամեաց մերոց Տարկանել զմեզ և սասանեցուցանել զմեզ, դու ինքն այլ արա առ մեզ իբրև բժիշկ, և առողջացո զմեզ մեր, և խաղաղացո զկեանս մեր:

Ա.յլաբանօրէն՝ որպէս նախընթաց բանն, սոյնպէս

և սա ասի՝ ի գիմաց մարդկային բնութեանն, որ առհասարակ չարժեցաւ ի սկզբանական արդարութենէ, և լցաւ խռովութեամբ, և սկսաւ ազգասիրել առ ինձ. բժշկեա զհարուածս սորա, զի առասնեցաւ ի բանից, և կործանեցաւ ի չարիս: Այլ արարիչն ինձ ըստ առհասնելոյ իւրոյ եհաս յօգնութիւն, և բժշկեաց զհարուածեալն. և փոխանակ խոցոտ մերժելոյ՝ եառ ինքն, և իբրև զհարսն ընկալաւ զնա՝ հաստատեալ յեկեղեցի տր. տակայն և յընդունելութեանն անդ, կամ առապից ի սիրոյն եկեղեցւոյ՝ թէպէտ եւ կրեալ բազում խոտութիւնս. որով գրեթէ իբրև զպղպատ հրաց ցուցեալ միտաց զնա ի ջուր, առ ի անգծելի առնելոյ ի հերետիկոսաց. և զայսմանէ խօսի մարգարէն ի յաջորդ համարն ի մէջ բերելով զխոտութիւնն իսրայէլի, յասելն.

Ճ. Ցոցէը ծաղվըդեան չամ խոտութիւն. և եղար ըմ պէվ ձեզ փինէ չխմբութիւն.

Կատարս խոտութիւն որ դնի ի վերայեալն, առաքել լինի սատ փոխանակ ճանճացելոյ, այսինքն փոխանակ խիստ իրաց, կամ փոխանակ գործոց խստութեան. որով նշանակին այնպիսիք տառապանք և փորձանք որք խիստ են. այսինքն կարծր են, և ոչ կարեն դիւրաւ ծաւալ. այս է՝ դժուարատանելի են. և կամ անվանելի և անընդդիմանալի են. կամ այնպիսի՝ ընդ որս դժուարաւ լինի անցանել. սովին կամի ցուցանել զատատութիւն տառապանացն ըստ որոյ և ասէ.

Ցոցէը ծաղվըդեան չամ խոտութիւն. Լսելիքն էատաւ ժողովրդեան քում կրել զտառապանս խիստս, կամ էտուր տեսանել զնշուաւութիւնս ծանուցս, կամ էտուր ձաշակել զնեղութիւնս դառնս: Այլ ասէ, առաքեցեր խստութիւն, այլ ցոցէը, որով յայտ առնէ՝ թէ ոճ գնալով խրատէր զնոսա. զի ցուցանէր զնիստս՝ ոչ զի պատահացին, այլ զի երկնչիցին և զգաստացին: Կամ թէ զնիստս ոչ էտ նոցա, այլ էգ առաջի նոցա՝ զի մի ակամայ յանձն առցեն. այլ կամեալ առաքել կերիցեն: Այդ առաջի նոցա էտ գինի փրկաբար. բայց այն էզնէ նոցա գինի յիմարեցուցիչ. ասէն

Ա- եռաւոր ըմպել գինի չէ՞ր բաւական։ Երբեք են գլխաւոր գործք գինւոյ. մի՝ զօրացուցանել. երկրորդ՝ զուարթացուցանել, կամ ընդ հակառակն՝ տրտմեցուցանել. երրորդ՝ արբեցուցանել, կամ ցնորեցուցանել։ Ո՞ւր ասէ տայ ծառայից իւրոց գինեզուարճս իբրև զգինի, ոչ զի ցնորեսցին և յիմարեսցին, կամ տրտմեսցին, այլ զի զօրասցին, և համբերութիւն տացին, և այնու շահեսցին։ Իսկ իսրայէլացիք զօրին հակառակն ցուցին. ասէ կամելով խրատել զնոսա հայրաբար, մնասցէ նոցա գինի նեղութիւն դառն, զի լիցի նոցա գինի զօրացուցիչ. իսկ նոքա արբին զնոյն՝ գինի յիմարութիւն. այսինքն թէ փոխանակ շահելոյ այնու՝ առաւել ևս յիմարեցան, որով և ինասեցան. և այս ոչ՝ի կողմանէ գինւոյն, այլ՝ի կողմանէ նոցա. զի գինին բան ենթակային ներգործել, այսինքն ըստ բմտողաց. զի յորս գոյանէ զկայառաւ ոգիա՝ զօրացուցանել. իսկ յորս գոյանէ զժգոհ ոգիա՝ յիմարեցուցանել։ Ո՞ւր այսչափս պատահէցաւ ասել և մեզ։

Ա՝լեզդ ևս մեզին այս բան իբր ընդ հակառակն. որով միտ բանին լինի այս. յետ ցուցանելոյ քո ժողովրդեան քոյ զմեծամեծ սքանչելիս քոյ, և յետ արբուցանելոյ նոցա զինւոյն քաղցրութիւն քոյ, սեպեալ թէ նոքա թողին զքեզ, և յարեցան յաճս օտարս, ցուցեր նոցա ոչ զսքանչելիսդ՝ այլ զիաստութիւնդ. այսինքն զիարհ բարկութիւն քո. և արբուցեր նոցա գինի գառն, այսինքն պատուհաս թշուառութիւնդ, որով նախատինս արարեր զնոսա առաջի ազգաց իբրև զյիմարս. կամ թէ այնու գինեաւ ցուցեր գյիմարութիւն նոցա, զի լրմնալ նոցա զայն, յայտնիցեն թէ քանի յիմար իցեն։ Այսպա բան թէպէտ և յառաջնում հատուածի գնի բառդ ծաղրէրեսն. և յերկրորդումն գնի ձեղ, բայց երկոքին բառդ ևս՝ի նոյն հային. որպէս և յայտ է։

Ո՞ր ասէ աստ մարգարէն՝ զայն և այժմ տեսանեմք յիւրաքանչիւր ազգս՝ի ընուլ զնոսա վրէժխնդրութեն՝ն՝ի արբեցութենէ յիմարութեն. զորոյ զաւրացոյցն յառաջագոյն եցոյց՝ ասէ՝ի ձեռն երեմիայ մարգարէի. զի հրամայեաց նմա և ասէ. * առաջես ժողովք-

,, դեռնդ զպատգամդ զայդ · այսպէս ասէ ՏԵՐ ՅԱԾ իս-
,, բայէլի · ամենայն սրիկ գիտեաւ լցցի · և եղիցի ելիկ
,, ասիցեն ցգերէզ , մինէ չգիտիցէ , եթէ սրիկ գնա-
,, եաւ լցցի · և աստուցես ցնոսա · այսպէս ասէ ՏԵՐ ·
,, ահա ես ընդում զասենայն բնակիչս երկրիդ այդո-
,, րիկ , զնազարէթ որդիս դաւթի , որք նստին յա-
,, թոռ նորա , և զքահանայս , և զմարգարէս , և
,, զայուդայ և զամենայն բնակիչս երուսաղէմի արբե-
,, ցուիչ ։ (երեմ. ԻԳ· ։ ։) Այսպէս թուի առա-
նել և այժմ վերաժինդրուիլն ՚ի ընդ ամենայն տե-
ղութիւնս և իշխանութիւնս · մինչև զամենեսեան առաս-
նել իբրև զարբեցս և զայլամոռեալս , ։

Ամբարտաւանն գիտեաւ յիմարութիւնէ իմանալ զհատա-
նումն չար խորհրդոց , կամ զմոլորումն մտաց ՚ի հա-
տանութիւնէ մեղաց · յոր արբեալ մարդկան յիմարին ,
և չկոյ այլ անկանին ։

Այս քան բան շինութիւնէ և բան օգտի առեալ՝ բան
դնելոյ մեր յառաջին մեհենութիւնէ՝ վերածի և ՚ի տա-
ճարանս եկեղեցւոյ՝ զոր կրեաց ՚ի սկզբան , յորում
եղոյց ՅԾ ժողովրդեան իւրում զհաստութիւն հալածա-
նօք բռնաւորաց · և ետ բազմաց ըմպել զգինի մար-
միրոսութիւն · որ թէպէտ և գինի յիմարութիւն երևիլ
հնարաւոր , բայց այն էր գինի փրկութիւն · իսկ զգուն
գինին յիմարութիւն կոչոյ ետ ՅԾ ըմպել հալածչաց ·
և այն ոչ միայն ՚ի պատիժ նոցա , այլ և ՚ի զգաստու-
թիւն և ՚ի զգուշութիւն ժողովրդեան իւրոյ · զորմէ խօսի
մարգարէն ՚ի յաջորդ համարն այլով ինն նմանաբա-
նութիւն յասէն ։

Ղ· Վասն երկնից պատմեն զփառս Աստուծոյ ,
և զգործս ձեռաց նորա պատգամէ հո-
ղմունք ։

Ճ· Որպէս երկնքի սկիզբն չկայ , և վախճան ,
և լինի
Կրկնակի ասի նշան տալ · մի անյաւակատիս · որպէս
յորժամ եղեալ լինի ինչ ՚ի ցուցանել զայլ ինչ ·
զորօրինակ յորժամ եղեալ լինի ՚ի վերայ զբան կրե-
պակաց նկար անօթոյ ՚ի ցուցանել ՚ի վաճառի անդ
այս ինչ · Երկրորդ՝ յաւակատիս և ակրատիս · որով

նշանակի ազգ առնել՝ ի ձեռն նշանի առ՝ ի գիտելոյ
թէ այս ինչ այսպէս եղև, կամ այսպէս լինիցի. որ-
պէս՝ ի հարկանել փողոյ՝ ի պատերազմի՝ նոյնն
տուեալ լինի դիմել՝ ի վերայ թշնամեաց, կամ փախ-
չիլ՝ ի նոցանէ և ապրիլ. կերեսաց սրոյ կամ աղետից
թշնամեացն. զորօրինակ և՝ ի հնումն սովորութիւն էր
առ իսրայէլացիս (որպէս ասէն) յերեսին նոցա՝ ի պա-
տերազմ, կանգնել՝ ի վերայ լերին ձող բարձր իբրև
զկայմ նաւու, և յայն ձող բարձրացուցանել զդրօ-
շակ առ՝ ի նշան տալ փախչելոյ՝ ի թշնամեաց՝ զի
ապրեսցին. կամ դիմելոյ՝ ի վերայ նոցա՝ զի հարցեն.
և զայն կայմն կապէին պարանոցք և պահպանէին ըզ-
գուշութիւն, զի մի կործանեսցի. յոր միտս ասէ Եսայի.
* խրճեան պարանոք քո և ոչ հանդարտեցին նըշխոյս
,, և (այսինքն՝ վասն այսորիկ և) կայմն խոնարհեցաւ.
,, և ոչ արձակեսցէ զնշան ||. (Եսայ. լԺ. 23.) որպիսի
էին և այն նշանք, զորոց խօսի նա ինքն Եսայի. (Ե.
26. ժ՚ա. 12. ԺԲ.)

Լսա սմին օրինակի և ՚ած նշան տայ մարդկան առ՝ ի
ապրիլ՝ ի բարկութիւն իւրմէ. և այս՝ երբայիկ. մի՝
յայտնի գործով. որպէս զչինութիւն տապանին էտ
իբր նշան ապագայ կորստեան. զի զայն տեսեալ
մարդկան ապաշխարեսցեն, և ապրեսցին՝ ի բար-
կութիւն որ գալոցն էր. և եթէ արդարև ապաշխա-
րեին, ապրեին. որպէս ապրեցան սիրելիքն ՚ած, նոյ
և որդիք նորա, որպէս եղև և նիհուէացւոց. Այլն-
պէս և ձեռամբն մովսէսի բազում անգամ էտ ՚ած
նշան որդւոցն իսրայէլի. զի ապրեսցին յերեսաց ա-
ղեղան և սրոյ, և պէսպէս պատժոց. որպիսի եղև ար-
ձուն գառինն՝ ի վերայ բաւարարի գրանց. որպիսի
եղև և գեղին առ գեղեհսիս, որպիսի եղև և կիսին
՚ի ձակատս աթանց առ եզեկիէլիս. Այ՚արթ է՝ ի սոյն
վերածել և զառնն ՚ած զծիածանն նշան ապրելոյ յա-
պագայ ջրհեղեղէ.

Երկրորդ օրինակ նշան տալոյն ՚ած է պատժել զայլս
վասն չար գործոց նոցա. որպէս զի զայն տեսեալ եր-
կիւղածացեն՝ ձեռ, իբր նշանաւ՝ ի միտ առցեն և զգաս-
տասցին, երկիցեն և զգուշասցին՝ ի գործելոյ զչար.
և այսու ապրեսցին՝ ի պատժոց արձակելոյ յաղեղա-

նէն ՝ այ. այսինքն ՝ի բարկութիւն նորա ։

Լչըղոդ օրինակ նշան տալոյն ՝ի է առաքել նեղութիւնս առ նոսին իսկ երկիւղածս. զի որովհետև մարդիկն նոքա և սխալին ՝ի բաղումս, և երբեմն սկսանին վատաբարանալ, ման որոյ և ՝ած սկիզբն առնէ առաքելոյ առ նոսա զայս և զայն նեղութիւնս։ Լրնէ ՝ս զդաստացին՝ յաւելու և զայլս. իբր զի կամելով կեցուցանել զնոսա, տայ նոցա և զձայն լսելոյ առղեան իւրոյ նեբքին ազդարարութիւն, և կամ արտաքին ծանը թշուառութիւն. զի առեալ նոցա զշահս հիւն, այսինքն զձայն աղեղանն ՝այ, այս է սեսեալ թէ լարէ ՝ած զաղեղն իւր այսինքն զարկուածն իւր, դարձոյին յինքեանս և զդաստացոյին, ասելով. գուցէ յաւուր միում արձակեսցէ զնեսս իւր, այսինքն զանդառնալի պատիժ իւր, կամ զնեսս յաւիտենական դատապարտութեան. և զայս խորհելով ուղղեսցին զինքեանս, որով և տպրեսցին ՝ի նեսից անտի աղետնցն ՝ՀՅայս կարեն վերածիլ և հաստատացց հարուածք տուեալք իբր նշանք. որպիսի են գեղնաչարժութիւնք, հրկիզութիւնք, սովք, պատերազմունք, գերութիւնք, ևն։ Լյս և արտաքոյ կարգի իբր եբևեալ յայլևայլ տեղիս. որպէս աստեղք գիսաւորք, բղխմունք արիւնեբրանգ ջուրց, ևն. զի սոքին և կարգին իբր նշան առ ՝ի ապրելոյ ՝ի բարկութիւնն ՝ՀՅայս ամենայն հայելով ասէ ։

Հ. Լ֊ոսոր երկնեղծաց ոչ նշան, չի ապրեսցին յերեսաց աղեղան ։

Հ. Որդիս երկեցան սերկելիս ոտ. կեցոյ զնով ոտ, և լուր ձեզ։ Լյս բանք երրակի մեկնին բան նկատգրին. մի հայելով յառաջին վիճակ ասնին խօսակցելն. և բան այսմ ՝ի դիմոց խօսակցելն խօսելով կամի ասել ՝ի ժամանակս հարց մերոց Ենովայ, Ենովքայ, Նոյի, աբրահամու և այլոց որք երկնեցին ՝ի քէն, գու յաճենչալի պաշտան եղերնոցա, և ոչ պահաեցուցեր զնինան քո ՝ի նոցանե. և եթէ երբեք ինչ պատահեցաւ նոցա վատնդիլ իւրք յօտարաց, ետուր նոցա նշան պէսպէս իրօք, զի ապրեսցին յերեսաց աղեղան ՝ՀՅնդամեաց իւրեանց. արա և այժմ առ մեզ զայն՝ զոր առնէիրդ ընդ նոսա. և որպէս փրկեցան նոքա,

սոյնպէս փրկեա՛ և զմեզ աջով քո։

Երկրորդ՝ մեկնի հայելով 'ի նախընթաց համարսդ, յորս ասաց. ցուցեր ժողովրդեան քում զխստութիւն եւն։ Եւ ըստ այսմ կամի ասել. չարչարելով զժողովուրդս քո նշան ետուր նոցա կամ երկիւղածաց քոց որ 'ի նոսա, զի զգաստասցին, և այնու ապրեսցին յերեսաց աղեղան. այսինքն 'ի բարկութենէ քումմէ։ Եւ արդ որպէս զերկիւղածս քո որք սիրելիք քո էին, այնպիսի նշանաւ փրկեցեր, սոյնպէս և այժմ լսելով աղաչանաց մերոց՝ կեցո՛ և փրկեա՛ զմեզ աջով քով։

Երրորդ՝ մեկնի 'ի հասարակի առանց հայելոյ 'ի մասնաւորս. և ըստ այսմ կամի ասել. ետուր և տաս երկիւղածաց քոց նշանս պէսպէս օրինակաւ. զի այնու զգաստասցին և զգուշասցին, և ապրեսցին 'ի բարկութենէ քումմէ, որպէս և արարեր իսկ բազում անգամ, որով և փրկեցան սիրելիք քո. ուստի և մեք վստահացեալք աղաչեմք ցո՛յց և մեզ զնոյն քո փրկութիւդ, և կեցո՛ զմեզ։

Արդ զբարկութիւն ա՛յ կոչէ աղեղն. որպէս այլուր կոչէ սուր, և այլուր հուր, եւն. բայց տիրապէս խօսելով յայնժամ միայն աղեղն կոչի բարկութիւն ա՛յ, յորժամ իբր 'ի հեռուստ նշմարի գործ այնր բարկութեան և իբրև նետ արձակի. կամ յորժամ ապագայ տեսանի այն գործ և անագան. զի առ լարումն աղեղան այլևայլ գործողութիւնք ընդ մէջ մտանեն, որք յապաղումն տան արձակման նետից. և կամ յորժամ նշան տալով ժամանէ. կամ ընդ հակառակն՝ յորժամ անակնկալ հասանէ եւն։

Եւ դարձեալ աղեղն կոչի՝ զի յամենայնի անվրէպ հասանէ և կատարի գործ նորին. վասն զի յամենաճարտար ձեռանէ նորա ելանէ այն նետ, որում չէ հնար վրիպել։ Բայց վասն խնայելոյն՝ յառաջագոյն նշան տայ 'ի ձայն լարելոյ աղեղան, և երևեցուցանէ անագանիլ, զի զգուշասցին մարդիկ, և դիմեսցեն՝ ո՛չ առ աղեղն իւր, այլ առ ողորմութիւն. զի ողորմելով նոցա, ապրեցուսցէ զնոսա աջով իւրով։

Իսկ աջովն ա՛յ իմացեալ լինի ամենակարող զօրութիւն նորա, զոր մարգարէքն յաջ այլաբանեն ըստ համար-

մանմարդկան. զի մարդիկ զզօրութիւն ուժոյ իւրեանց
իբր ի բազուկս առաւելապէս աջոյ տան, և յայնմ
տեսանեն։

Յարմարական մեկնութիւն, ըստ վարդանայ, և ըստ այլոց բազմաց եւս ասի ի նշան զպէսպէս իրս և զարարողութիւնս ի հին օրէնս, որք էին նշանակիչք իրաց կատարելոց ի նոր օրէնս. որով և ապրեցան ի հնուաճն սիրելիքն այ ի բարկութենէ նորա. զի յայտ է թէ ի ձեռն այնոցիկ նշանաց հաւատալով նոցա ի փրկութենին՝ որ լինելոց էր աջովն այ, այսինքն որդւովն այ, նովին փրկեցան։

Գտարձեալ և ի նորումն եւս և տայ ասծ բազում նշանս երկիւղածաց իւրոց ի ձեռն պէսպէս իրաց, զի ապրեսցին յաւուրն դատաստանի ի նեթից արձակելոց ի բերանոյն քո իբր յաղեղանէ, յասելն. * երթ ,, թայք յինէն անիծեալք ի հուրն յաւիտենական ‖։ Զայս խորհելով մեր ստիպիմք աղաչել զնծ, զի որպէս փրկեցոց և յայնժամ զսիրելիս իւր, նոյնպէս փրկեսցէ և զմեզ. և որպէս իբր նշան տալով եհան ի գժոխոց զհոգիս սիրելեաց իւրոց, սոյնպէս ապրեցուսցէ և զմեզ անտի։

Գալաբանօրէն, եւս ասծ նշան զբարձրանալ որդւոյ իւրոյ ի խաչին ի լեառն գողգոթայ. զայս նշան թէպէտ և ամենայն մարդոյ ընծայեցոյց ասծ, սակայն նշան փրկութեանն եղև և լինի միայն երկիւղածաց նորա. այսինքն այնոցիկ՝ որք տեսեալ զորդին այ բարձրացեալ այսինքն բևեռեալ ի վերայ խաչին վասն մեզ՝ երկնչին յայ ասելով. եթէ ընդ փայտ դալարս զայս արարն հայր, ընդ չորն զինչ լինիցի. որով և զգուշացեալ ի մեղաց՝ փրկին յերեսաց աղեղան, այսինքն ի բարկութենէն այ զօրութիւն այնր նշանի։

Գտարձեալ՝ այսու նշանաւ իմացեալ լինի և նոյն ինքն նա խաչն զոր կանգնեմք յեկեղեցիս և ի տունս. որով ապրիմք յերեսաց աղեղան։ Զայս նշան իրօք եբարձ սիմոն կիւրենացի. որով և ապրեցաւ։ Ուստի եթէ վարձուք եբարձ, և վարձուց եհաս։ Նոյնպէս եթէ վարձուք եբարձ, որպէս ասեն ոմանք, նոյնն եղև վարձք ապրելոյ յերեսաց աղեղան։

Գտարձեալ՝ այսու ի մէջ բերի և փայտ խաչին. որ ի

բիւրաւոր մասանց ցրուելոց միացեալ յառաջեսցէ 'ի գալստեան տ՟ն ամենապայծառ ծագմամբ իբրև նշան երկնաւոր Թագաւորի յուրախութի՟ երկիւղածաց և 'ի կոծումն ամպարշտաց և անհաւատից․ ըստ որում ասէ տ՟րն․ (մատ․ ի՟դ․ 30․) որպէս տեսանի և 'ի շարականի 'ի բազում տեղիս․ (մանաւանդ 'ի կանոնն ՟Է․ 'ի վերջին բանսն․) և 'ի մեկնութե՟ մատթէի և մարկոսի՝ զոր արար ծործորեցին (մատ․ ի՟դ․ և բարսեղ վարդապետ․ մարկ․ գլ․ ժ՟դ։)

Պարծեալ այսու նշանակի և ձև խաչին՝ զոր դրոշմեմք յերեսս մեր, և յօրհնելն զիրս․ որով և տամք նշան քրիստոնէութե՟․ մինչ զի 'ի հարցանել այլոց զմեզ․ ո՞ր իցէ նշան քրիստոնէի, աներկբայ և անյապաղ պատասխանեմք, թէ ս՟բ խաչն է 'ի կնքելն անդ զմեզ յերեսս․ որով և զօրանամք 'ի գործել, և արիանամք 'ի վանել․ ևս և զինիմք ընդդէմ փորձութեց, և վահանաւորիմք ընդդէմ յարձակման նետից բանսարկուին, և ապրիմք։

Այսու նշանաւ յորդորէ զմեզ տ՟րն մեր գնալ զկնի իւր, և կեցուցանել զոգիս մեր։ Լուդովիկոս Թագաւոր գաղղիոյ կախեալ զխաչ 'ի կուրծս իւր՝ յորդորեաց զիշխանսն գնալ ազատել զս՟բ երկիրն․ և նոքա այնու նշանաւ զօրացեալ՝ միացան ընդ նմա, և առին զերկիրն։ Ըստ սմին կամի և տ՟րն մեր՝ զի և մեք միաբանելով ընդ նմա 'ի ձեռն խաչի՝ ազատեսցուք զմեզ 'ի գերութե՟ ախտից․ ևս և արիասցուք յամենայն պատահարս՝ զնոյն դրոշմել 'ի դէմս, և իբրև թէ նորին նկարել յանձինս մեր զնշան կենարարին մերոյ, և մնալ անմատչելի ներգործութե՟ չարին։

Յայսոսիկ հայելով Նարեկացւոյն՝ ասէ 'ի գովեստ խաչին ('ի տառն Լ․) * Լուսաւորեալ ես ամենազօր
„ նշան խաչիդ փրկութե՟․ որ 'ի սաղմոսանուագ եր-
„ գոյն յորդորման՝ զքեզ նկար մարմնոյս պահապան՝
„ 'ի մեզ ընկալաք նշան փրկութե՟․ անմարտնչելի
„ սլաքին հարման, և չարին աղեղան ներհակ դա-
„ վահան ‖։

Զայս նշան ինքեան ևս սեպհականեաց տ՟րն մեր․ որով և բառս խաչեալ՝ եղև իբր յատուկ մականուն նորա․ ըստ որոյ և հրեշտակն յաւետելն անդ զկարո-

թ՟ի նորա՝ ասաց ցկանայսն. * գիտեմ զի զյ՟ս զխա-
,, չեալն խնդրէք ||. (մատ. ի՟ը. 5. որպէս և գրէ
բարսեղ վարդապետ ՚ի մեկն. մարկ. գլ. ժ՟գ:)

՚Ի խորհիլ մեր զայս ամենայն՝ դառնութ՟իք նեղուեց որք վշտացնեն զմեզ՝ քաղցրանան. յայս օրինակ եցոյց տ՟ր մովսէսի փայտ, և հրամայեաց արկանել ՚ի դառն ջուրսն մեռայի. և յարկանել նորա՝ քաղցրացաւ ջուրն (ելից. ժ՟ե. 25.) այն փայտ էր նշան խաչին և խաչելութ՟ենն ք՟սի. ապա ՚ի տիրել դառնութ՟եց ՚ի վերայ քո՝ խորհեա՛ զայնմանէ. և ա՛րկ զնոյն ՚ի ջուր վշտացդ. և ապրեսցիս ՚ի դառնութենէ անտի, և կեցցես:

Յամբրոնացին այսու նշանաւ իմանայ զարիւնն ք՟սի, կա՛մ զմահ նորին. որով ասէ ապրիմք ընդ սիրելիսն ո՟յ յերեսաց աղեղան: Եւ ըստ այսմ յաջորդ բանն դնի իբրև հետեւուի, որպէս թէ ասէր. զորօրինակ երկիւղածք քո որք եղեն քեզ սիրելի՝ փրկեցան արեամբ միածնի քո՝ որ հեղաւ ՚ի վերայ խաչին, սոյնպէս կեցո՛ և փրկեա՛ զմեզ. այսինքն ազատեա՛ ՚ի մահուանէ հոգւոյ և ՚ի յաւիտենական դատապարտուէ. և զայս փրկութ՟ի խնդրէ առնել աջով իւրով այսինքն որդւով՝ որ կոչի աջ հօրն երկնաւորի: Ըստ այսոցիկ նշանակութ՟եցս. յամենայն տօնս ս՟բ խաչի նուագեմք զայս սաղմոս առ ա՟ծ, խնդրելով ՚ի նմանէ լսել և մեզ:

Խորհրդաբար, այսու նշանաւ իմացեալ լինի և դրօշմ ս՟բ. որով անյեղլի նշանեալ լինիմք, և տիրապէս ապրիմք յերեսաց աղեղան՝ որք լարին ընդդէմ հաւատոյ և ընդդէմ բարի վարուց:

Այսու նշանաւ նշանակի և դրօշակն ք՟սի, ընդ որով ժողովին բազմութ՟իք հաւատացելոց, և զինուորին ընդդէմ մեղաց և ախտից. որպէս նշանաւ սատանայի նշանակի դրօշակ նորա, ընդ որով ժողովին չարք, և մոլին ընդդէմ զգաստութ՟ե և արդարութ՟ե: Բայց զարմանք է՝ զի մին խոստանայ զանանց բարիս, և միւսն զանցաւորս. մին զանցաւոր չարիս, և միւսն զանվերջանալիս. և այսու ամենայնիւ սակաւք են՝ որք դիմեն յառաջինն, և յոլովք են՝ որք փարին զերկրորդիւ, և նետաձիգ լինին առ նոսա բանիւ և

գործով. յորոց նոքա միայն ապրին և փրկին՝ որք ապաւինին 'ի ք՟ս ։

Բարոյապէս, այսու նշանաւ իմացեալ լինի խիղճ մըտացն, զոր ետ ա՟ծ ամենայն մարդոյ, առ 'ի զգաստանալ, և երկիւղածութ՟բ ապրիլ յերեսաց աղեղան, եւս և 'ի թելադրութ՟է մեղաց. և փրկիլ ըստ փրկելոյ սիրելեացն ն՟յ ։ Տէրն մեր նշան ետ պետրոսի զձայն խօսնակին առ 'ի ապրիլ. և քեզ ետ զխիղճ մտաց, կ՟մ զգիտակցութ՟ին. որ իբրև խօսնակ կանխաւ ձայնէ. զթմրեալ միտսդ զարթուցանէ. յառաջիկայ վտանգէ իբրև 'ի նետից զգուշացուցանէ. և զոր առարեր յանդիմանէ. որպէս արար ընդ պետրոս. ապա ընդ լսելդ զձայն այսր խօսնակի՝ ել 'ի տանէ, այսինքն յաւթէ մեղաց, և յընկերակցութ՟է չարաց, և 'ի մօտակայութ՟է խարուկի ցանկութ՟ե. ապա թէ ոչ՝ ընդ պետրոսի վտանգիս. երանի՜ թէ՝ որպէս նա լուեալ զձայնն, և ուշ եդեալ հայեցուածոյն ք՟սի՝ ել և ելաց դառնապէս, դու ևս լսէիր և ելեալ լայիր. և որպէս ականջք նորա համապազ մինչև 'ի մահ 'ի ձայն խօսնակի էր, սոյնպէս և ականջք քո 'ի ձայն խղճի մտաց. որով ապրէիր, և հայեցուածո՟վ ք՟սի կենդանանայիր ։

Աւանդի թէ խօսնակն այն 'ի խօսիլն կայր 'ի վերայ կճեայ քարի (այսինքն 'ի վերայ սոմախի քարի) կամ սեան. որ և կայ ասեն ցարդ 'ի հռովմ 'ի տաճար սրբոյն յովհաննու լատերանու, 'ի յիշատակ իրացն եղելոց ։ Որով ցուցանի հաստատութ՟ի միանգամայն և խստութ՟ի նշանին խղճի մտաց՝ յանդադար ազդ առնել և 'ի յանդիմանել ։

Աստ 'ի ձեռագիրս ինչ մեր դնի հանգիստ. որպէս և յեբր". բառս սէլա. զի աստ փոխին ընթացք բանին. քանզի ցայս վայր խօսեցաւ մարգարէն առ ա՟ծ զխըստութ՟եց, որք հասին յիսրայէլացիս 'ի բարկութ՟է ն՟յ, և խնդրեաց ապրեցուցանել և կեցուցանել զնոսա և զամենեսին որք ապաւինին 'ի նա. այժմ սկսանի խօսիլ զյաջողութ՟եց՝ զորս եցոյց ա՟ծ առ իսրայէլացիս ընդդէմ թշնամեաց նոցին ըստ խոստման իւրում. և նախ ասէ ։

Ն։

Ջ. [illegible]Ձ խօսեցաւ՝ եւ ասէ ցնա. Ես եմ Տէր Աստուած քո. Բարձր եղիր. բերան քո լի արասցես, եւ ես լի՛ցից զայն։

Ա. Սաղմոս բառիս ասէ՝ մարդ է իմանալ զառնէն զայն ուստի խօսեցաւ ինձ ընդ մուխսի երբեւ՛ է տուրբ տեղւոջէ՛ է լերինն անդ՛ է սինայ։ Վ. անգլ՛ է տուրբ գիրս ս՛ և էջէ տեղն ուր երեւեցաւ ինձ և խօսիր, տուրբ կոչիւր. (որպէս յայտ է ելից. Ջ. 5։) Ա՛արժան է և ասս բառիս ասէ՝ իմանալ աստ զխոսրանն վկայութիե, զոր կանգնեաց մովսէս. յորմէ և խօսիր ինձ ընդ ժողովրդեանն իսրայէլի, (որպէս յայտնի աւանդէ՛ ի գիրս ելից. Լէ. 8 = 12։ և ասս և ել. 32 = 34. և Թուոց. Թ. 15 = 23. և ժն. 16. 17. և ժէ. 5 = 7։) Ա՛ւ յայս միտս ոմանք աստ զայս բառ Թարգմանեն յեբրայականէն սրբարան. այն է խորանն վկայութե։

Ա՛ւ զի յայլ Թարգմանութիս փոխանակ դնելոյ՛ է սրբութէ իւրմէ, դնի՛ է տուրբ իւր. մարթ է տալ իմանալ և զանձն մովսէսի. որպէս Թէ եղեալ էր. ինձ խօսեցաւ՛ է տուրբ իւր՛ է մովսէս, այսինքն՛ է ձեռն մովսէսի։ Ա՛րպէս և գիտի՝ այս ինչ յայտ է՛ է պրոցն ելից և Թուոց, Թէ ինձ յորժամ եհան զորդիսն իսրայէլի յեգիպտոսէ, խօսեցաւ ընդ նոսա՝ տալ նոցա զերկիրն աւետեաց. և անդ տնկել զնոսա և աճեցուցանել ինձ։ Ա՛ւ քանզի նոքա յայն խոստումն ոչ առաջնորդեալ՝ գնացին և տիրեցին այնմ երկրի, ՛է նոյն ակնարկելով խօսի աստ մարգարէն, և ասէ։

Ա՛ինձ խօսեցաւ՛ է տուրբ իւրմէ ինձ։ Ա՛յսինքն Թէ ինձ խօսեցաւ ընդ մեզ՛ է լեռնէ սինայ, կամ՛ է խորանէ իւրմէ, կամ՛ է ձեռն մովսէսի, կամ՛ է ձեռն յեսուայ՝ ժառանգեցուցանել զմեզ յերկիրն աւետեաց. և որպէս խօսեցաւ՝ նա ինքն ունի կատարել. և ընդ այս վստահացեալ ասէ՛ է դիմաց իսրայէլի։

Բ՛արձր եղիր։ Ա՛յսինքն ըստ խոստանալոյն ոյ և ես օգնութէ գտեալ՛ է նմանէ՝ բարձրացայց՛ է վերայ ամենայն հակառակորդաց՝ որք քնաւին յերկիրն խոստացեալ մեզ. և առից զերկիրն զայն, և բաժանե-

ցից ըստ կարգի. իսկ Թէ զնարդ, սկսանի պատմել
առելով.

Բնակեցայ (այսինքն բաժանեցից) ընդ ոչխարս. և գնա
վիասն յոյժ լռիկն էր. Արարդ ծածանել և լռել՝ յայս-
պիսի տեղիս դնին փոխանակ առնոյ և սեփականե-
լոյ և տիրելոյ. զի ի տիրել ումեք ի վերայ տեղւոյ
իրիք՝ իրրև Թէ բաժանել զայն յայլոյն, և առնել իւր
բաժին, և գրեթէ չափել. իբր զի այսչափ ինչ էր.
կիր ինքեան սեփականի. և յայս միտս առնու ասա
մարգարէն զայսոսիկ բառս. որպէս Թէ ասէր. ա-
ռից զսիւքեմ, և սեփականեցից ինձ զՀովիտս յարկաց.
Սիւքեմ կամ ըստ ԷբրՈ. ՀԷՆԷ, Թարգմանի բաժին.
և է սա քաղաքն սիկիմ յԵփրկրէն սամարիոյ մօտ ի
սամարիա քաղաք. և զայս քաղաք էառ յակոբ որովհ
շմաւանի և զԱեմոյ. (ծննն. լՀ. 25.) և ետ զայն յով-
սեփայ որդւոյ իւրոյ և որդւոց Նորա Եփրեմի և մա-
նասէի (ծննն. խԸ. 22.) և զի այս քաղաք յառաջն էր
անուանի ի մէջ այնր գաւառի իբրև մայրաքաղաք,
սորին անուամբ նշանակի առ բոլոր սամարիա եր-
կիր. զի մարգարէն առնու առ գերևելի մասն փո-
խանակ բոլորին. ուստի և նոյն էր Թէ ասէր առից
և սեփականեցից կամ ժառանգեցից զսամարիա՝ յո-
րում է քաղաքն սիւքեմ. և զայն երկիր ի պէսպէս
մասունս բաժանեալ՝ կարգեցից և զետեղեցից յամե-
նայնի ի նոսա զժողովուրդ իմ, և զիշխանութիւնս, և

զդատաւորութիւնս ես.

Զայս երկիր սամարիոյ յայնկոյս յորդանանու էր հա-
վիան կամ մանաւանդ ձորն սոկքովթայ, որ Թարգ-
մանի յարկ կամ վրան. վասն զի յառաջն անդ կային
վրանաբնակք. և յակոբ նահապետ ևս անդ բնակե-
լով զայն անուն եդ. (ՀԾ. ԼՅԱ. 17.) և յորժամ
շինեցաւ քաղաքն՝ ի նոյն անուն կոչեցաւ այսինքն
սոկքովթ. որ լերր. գրի ասէ. և յայս միտս գնի
առ հովիտս յարկաց՝ յառնել.

Եւ ընդ յորդանան յորդեաց՝ Այսինքն Թէ ժառան-
գեցից և զայն տեղիսն ևս որք են յայնկոյս յորդա-
նանու՝ սկսեալ ի տեղեաց անտի՝ որք են հովիտք
սոկքովթայ, կամ հովիտք յարկաց. որով կամի ցու-
ցանել, Թէ իսրայէլացիք յայսկոյս և յայնկոյս յոր-

դանանու. տիրեցին յերկիրն սամարիոյ։ Պատճառ յայսոցիկ կռռմանէ սկսանելոյ պատմել. ասե՛ էր այն, զի՛ ի սկզբան յայսոսիկ կռռմանս էզև թոստումն ոչ առ աբբահամ, և առ յակոբ՝ ժառանգել որդւոց նոցա զայսոսիկ տեղիս. (որպէս յայտ է ծնն. ժ՟ը. 3. և 14. և 15. լ՟ը. 17. ևայլն.)

Ա՛յս բանք եթէ՛ ի դիմաց ոչ և ա ասացեր՝ նոյնպէս մեկնին. որպէս թէ եգեալ էր. ՚ի խօսիլ ոչ ՚ի սրբութէ իւրմէ՝ ասաց. բազմբազայց յաղթութէ և փառաւք, և ասց բաժանել որդւոցն իսրայէլի զսիրելի քէմ ևայլն։ Վարձեալ, ասե՛ խօսեցաւ ՚ի ձեռն սրբոց իւրոց երեմիայ, և դանիէլի և այլոց՝ զաձուցանել զփառաւք զորդիսն իսրայէլի ՚ի գերութէ, և ժառանգեցուցանել նոցա վերստին զերկիրն իւրեանց։

Իսրէղաբաւր, որդին ոչ եկեալ յաշխարհ, և շրջեալ ՚ի մէջ մարդկան՝ սկսաւ խօսիլ յերեսս ազգին զոր կարգեալ էր իւր տեղի սրբութէն. խօսեցաւ և՛ ՚ի սրբութէ իսկ՝ ոչ Հայրը իւր. և ա և առ մայրը իւր, և առ աւազանն։ Խօսեցաւ և և՝ եթէ ունիմ բան. ժամանել աշակերտաց իմոց զսիրելիմ այսինքն զիսրայէլ զաձին ժառանգութէն իմոյ. քան զորս՝ (որպէս ա. սացաք) սիրելիմ թագաւորին բաժին. և չափել և առ իս ժողովել զՀովիսս յորկոյ զհեթանոսս. որք յերաւի էին իբրև զՀովիսս անկոխ լերանցն օրինաց։ Ընտիրցիդ դարձեալ և զՀովիսս դժոխոց. և Հանից անտի զյուսացեալսն յիս. * ասել կապելոց՝ եթէ ելէք. և որք ՚ի խաւարի իցէք՝ եթէ յայտնեցարուք ։ (եսայ. խե՛. 9.)

Պատձեալ սովին ցուցանի և տարածութէն իշխանութէ սուրբ եկեղեցւոյ յայս կոյս և յայն կոյս տեղեացս. նախ ընդ միջին տեղիս իբրև ընդ սամարիա, և ապա ընդ ազգս օտարս իբրև ընդ վանաբնակս։ Վկայութի ասացա խօսել մարգարէն և զայլսդ սահմանաց ա. տեղւոյ.

Ձ. Ա՞ր է փողոյդ, և իմ է նահապ. եթէպեմ հղցէ փիլոյ իմոյ։

Վաղսաղ գաւառ և քաղաք՝ ի յայն կոյս յորդանան նոյն տարածեալ ընդ երկայն. ուր ՚ի սկզբան տիրե-

յին որդիքն իսրայէլի. և ի յայսկոյս լերանցն գաղաատու. և զայս անուն ընկալաւ տեղին այն ՚ի բանից անտի յակոբայ և լաբանայ, որք ՚ի լերինն յայնմիկ կանգնեցին բլուր, և կոչեցին գաղաատ և ըստ եբր՚՛. ՚Ելեաւ, այսինքն բլուր վկայութեանէ, կամ կարկառ վկայից: Եւ այս անուն տուաւ յետոյ Թուրանին մանասէի ծնեալ ՚ի մաքիրայ. (Ծնն. խղ. 20:) Յայսցանէ և երկիրն այն բոլոր կոչեցաւ գաղաատ: Ուստ քաւքզ եէէմ և մանասէ որք են անուանք որդւոցն յովսեփայ, զնոսին աստ փոխանակ երկրին՝ որ տուաւ ցեղին եփրեմի և մանասէի. զի Ձարտաստանօրէն խոսի աստ մարգարէն. վասն որոյ և զանուն բնակողին զնոսէ փոխանակ բնակութեանն: Եւ քանզի այսոքիկ ցեղք էին անուանի ՚ի մէջ իսրայէլի ըստ գուշակութեան յակոբայ. (Ծնն. խը. 20.) զանուանս սոցա բերի ՚ի մէջ ասելով:

Եմ է գաղայատ: Ա՚. այսինքն՝ ըստ խոստանալոյն իմ և ըստ տալոց նորա ինձ, իմ է երկիրն այն մեծ՝ որ կուչի գաղաատ յայնկոյս յորդանանու. և յաւելու և ասել:

Ես եմ է մանասէ: Ա՚. այսինքն՝ իմ ժառանգութիւն է և երկիրն այն, որ այժմ կոչի մանասէ ՚ի ժառանգուէ ցեղին մանասէի յայս կոյս և յայն կոյս յորդանանու:

Եւ զաւառաւերն ևս եգեալ՝ ասէ:

Եփրեմ հզօրութիւ գլխոյ իմոյ: Ա՚. այսինքն՝ իմ է և երկիրն այն՝ ուր նստի ցեղն եփրեմայ՝ ցեղն այն որ է հզօրիչ գլխոյ իմոյ. այսինքն զօրացուցիչ թագաւորութեանէ իմոյ, կամ թագաւորին իմոյ. զի արք եփրեմայ էին քաջք, և հզօրիչք իսրայէլի. ուստի և էին իբր զինք թագաւորութեանն իսրայէլի. մանաւանդ զի փարթամք ևս էին՝ հասեմատ անուան իւրեանց. զի եփրեմ փարթամ թարգմանի:

Յամբ՚՛. ըստ հոգևորին ևս յաւելու մեկնել՝ ասելով.

* Իմ է օրէնքն և պատուիրան՝ հինն զոր ժառան-
,, գեաց իսրայէլ. որպէս մանասէ և եփրեմ զսի-
,, կիմ. և ես զնոյնն (այսինքն զօրէնսն) քաժանեցի ՚ի
, յարկս և յեկեղեցիս հեթանոսաց ‖: (Տե՛ս և ՚ի վերջ նախընթաց հատուածոյ:)

Ա՚. յաբանօրէն սոքիմբք նշանակի ժառանգելն եկեղեցւոյ զհանապան աղաս. և ՚ի սկզբան անդ զբազ-

մուԹէ վկայէց, որ ցուցանի բառիւզ գՅաղատ. որոյ նշանակուԹիւն է կարկառ վկայէց, կամ բլուր վկայուԹէ. և ապա զմուռացեալ ժողովուրդս՝ որք նշանակէն մանաւանդ՝ որ Թարգմանի մուռացեալ. և հաւասկ յետոյ զայլևայլ ազինս փարԹամացեալս իմաստու-
Թիւն և իշխանուԹիւն, որք և եղեն հզօրիչ ԹագաւորուԹէն եկեղեցւոյ. և զայս յայտ առնէ եփրեմն՝ որ ըստ ասելոյ մեր՝ և վերոյ Թարգմանի փարԹամ կամ աՃեցեալ։ Ասատ և եկեղեցին քան կարէ ասել իրաւամբք * իմ է գաղատ, և իմ է մանաւանդ. եփրեմ հզօրիչ գԼխոյ իմոյ ։ Այլ Թէ ո՞եր այն գԼուխ, կամ յորմէ ցեղէ, յայտ առնէ՝ և յաջորդ համարն ասելով։

ը. (՚) Ցուդայ ընագաւոր էմ. մովաբ աւազան յոտից էմոյ։

Իրաւունք ԹագաւորուԹե որդւոցն իսրայէլի նախագուշակեցաւ՝ և յակոբայ նահապետէ՝ ՃնալՀ՚ի ցեղն յուդայի, յասելն նորա ցնա լինքն ցյուդայ. * յուդա ,, զքեզ օրհնեսցեն եղբարք քո. ձեռք քո՝ և վերոյ ,, Թիկանց Թշնամեաց քոց. և երկիր պագցեն քեզ ,, որդիք հօր քո... մի պակասեսցի իշխան՝ և յու- ,, դայ, և մի պետ յերանաց նորա, մինչև եկեսցեն ,, նմա հանդերձեալքն ։ (կամ մինչև եկեսցէ նա, որոյ իւր է հանդերձեալքն. ծնն. խԹ. 8 = 10։) Եւ Թէ Չհմարտիւ միայն յուդայի ցեղին տուաւ՝ և սկզբան ԹագաւորուԹէ՝ վկայեաց և գաւԹ առաջի ամենայն իշխանաց և ծառայից իւրոց յասելն ցնոսա. * ընտրեաց տր ՚ծ յամենայն ազգաց զիս- ,, րայէլ, և յամենայն իսրայէլէ զյուդաս ընտրեաց՝ ,, կանգնել զԹագաւորուԹէն իւր յաւիտեան ։ (՚ս. Ճնաց. իԹ. 4. աՀս զայսմանէ՚ի նուագարանն օրհնուԹեց օրհն. ժե. 10։) Ո պատՃառ այսր օրհնուԹէ յուդայի որպէս և էփրեմայ, առաջն առնէ գէորգ վարդապետ. (՚ի մեկն. եսայ.) ասելով. * յուդայ և եփրեմ օրհնեցան՚ի յակոբայ՚ի պա- ,, տիւ ԹագաւորուԹէ. յուդայ՝ զի ոչ պարտաւորե- ,, ցաւ յարիւնն յովսեփայ. և եփրեմ՝ վասն առաքի- ,, նուԹէ և բարեաց հօր իւրոյ յովսեփայ ։ Այլ քանզի տիրապէս ցեղին յուդայ սեպհականեցաւ ի-

բաւունք Թագաւորելոյ, սմին իբր արձակապէս ասէ.

Յոտից ներքոյ իմ՝ Ամբ բառդ յոտից որ եղև առնն ցեղին յուդայի, դնի փոխանակ անհատ անձին՝ որ ի ցեղին յուդայ. որպէս թէ ասէր. իմ Թագաւոր է ի ցեղին յուդայ. Ասթէ և ասել թէ բառդ յոտից՝ դնի փոխանակ երկրին յուդայ. և ըստ այսմ որպէս ասացաք ի վերոյ՝ զանազն բնակիչն առնու փոխանակ աներոյ բնակութեանն. և միտ բան նին լինի այս. իմ է երկիրն այն, որ կոչի յուդայ ի ցեղին յուդայի. որոյ ցեղի է Թագաւորել ի վերոյ խոսեալ է.

Ալլաթանօրէն՝ այս բան Հայի ի գլուխն եկեղեցւոյ ի քո, որ ծագեցաւ յազգէն յուդայ, և Թագաւորեաց ի վերոյ նորայս խոսեալ է. և Թագաւորութեանդ վախճան մի լիցի. զոր և համեմատ պատուս Թագաւորութեանդ և քահանայութեանդ մեկնիսեցեկի. և անուանէ Թագաւոր արդարութեան, և Թագաւոր խաղաղութեան ծագեալ յազգէն յուդայ. (երե. Ի. 1 = 3. և 14.)

Հայտ արարեալ մարգարէին զժառանգութեանէ երկրին աւետեաց ըստ այլևայլ ցեղից խոսեալ է, յայտ առնէ այժմ և զայն՝ թէ հանգերձեալ էին խոսեալքն նորա վաստակել ժամանակաւ և չքնաղակայ թշնամիս իւրեանց, և հարկաւոր առնել զնոսա ինքեանց. և

Նախ խօսի զմովաբացւոց ասելով.

Մովաբ աւազան յոտից իմոյ. Ամբ ասելով իմոյնոյ զերկիրն մովաբացւոց, ուր բնակէին մովաբացիք, որք էին սերեալ ի զոմոյ ի գաւառէ նորա երիցուէ. որպէս ամենեցունց ի գաւառէ նորա կրասեղոյ. Այս երկիր, ասէ, մովաբայ կամ այս ազգ մովաբայ՝ է կամ լինիցի աւազան յոտից իմոյ. որպէս թէ ասէր. մովաբացիք լինիցին ինձ իբր աւազան կամ իբրև աղբիւր ջրոյ լի՝ յորմէ յոտսամ հանել միտ զջուր. այսինքն առնուլ զհարկս և զհասս պիտոյից. իբր զի կայր յայս հանելոյ հարկս ի նոցանէ ի պետս իսրայէլացւոց, կամ թէ յոտսամ զի իմ լիցի մովաբ իբրև աւազան լի ջրով, այսինքն լի բարեաք. Այս կամ դարձեալ (ըստ վարգանայ ի տաղ. ՃԸ. 9.) յայս ունիմ նուաճել զմն

վար , և լուանալ յարեան նոցա զոտս իմ իբր յաւա-
զանի . ըստ որում յեբր" . դնի . *մովաբ աւազան լուաց-
ման իմոյ ,

Այս քան թէրևս հայի և 'ի հին սովորութիւն վիճակարկութեան աւազանի . իբր զի վիճակարկուք ժողովեալ 'ի միասին , զանուանս իւրեանց փորելով 'ի վերայ քարի , ընկենուին յաւազանն , և հետ զհետէ յիշատակէին զայս ինչ և զայն ինչ , այսինքն զայս ինչ անօթ , զայն ինչ թաշկինակ , կամ զանարգ ինչ . և հանէին զմի 'ի քարանց յաւազանէն . և որում անուան պատահէր յիշատակեալն , նմա տային զյիշատակեալ իրն ։ Պատմի թէ 'ի միում նուագի գրեաց մի ոմն զանուն իւր 'ի վերայ կաւոյ առանց գիտելոյ այլոց , և ընկէց զայն յաւազանն ընդ քարինս այլոց . և իբրև ոչ ել անուն նորա՝ զի լուծեալ էր կաւն , վիճակ նորա համարեցաւ քան զայլոցն բարեգոյն . և որ ինչ անկանելոց էր այլոց՝ ամենայն նմա շնորհեցաւ ։ Աստի ծագեցաւ առակ ասելոյ վասն ժառանգութեան բոլորին . յաւազանի է յայն , կամ աւազան յուսոյ է իմ ։ Դուցէ յայս առակ ակնարկելով ասի աստ մովաբ աւազան յուսոյ իմոյ . իբր թէ յայս ունիմ զի բովանդակ իմ լինիցի մովաբ .

Այլաբանօրէն մովաբացւովք նշանակին ամենեքին նոքա՝ որք հաւատացին 'ի քս , ըստ որում մովաբ թարգմանի 'ի հօրէ . յոր վերածի բանն այն՝ զոր ասաց քս , (յովհ . Զ . 44 .) թէ 'ի հօրէ ձգին մարդիկ առ իս , և լինին ժողովուրդ իմ . ընդ որս և ամմոնացիք ըստ ստուգաբանութեան անուն բառիս , որ թարգմանի ժողովուրդ նորա ։ Դարձեալ՝ որպէս ասէ լատինն" . մովաբացւովք՝ ընդ որս և ամմոնացւովք՝ որք ոչ կարէին մտանել յեկեղեցի այ ըստ օրինադրելոյն մովսէսի՝ 'ի մասնաւորի նշանակին հեթանոսք , որք 'ի թագաւորելն քի յոյս առին . և մկրտեալ յաւազանն որ՝ եղեն քի . վասն որոյ և 'ի դիմաց քի ասի . մովաբ ընդ նմին և ամմոն աւազան յուսոյ իմոյ . և ըստ այսմ աւազանաւ նշանակի այն՝ որ լինի յաւազանի՝ այսինքն է մկրտութիւն և մկրտեալն . յոր միտս կամի ասել . հեթանոսք մկրտելով 'ի յոյս իմ , եղեն իմ ։ Այս եդեալ խօսի ապա և զեդոմայեցւոց ասելով .

ԹԷ. ¶ Եւ ոչ այլապէս կրնաս ըսել զԱստուած եւ զմարդ, քան զի ասացեալ է զնոսա ի միասին, եւ ոչ զանջատ ի միմեանց։

Այդ ամենայն ինչ ի մեզ ասացեալ է, որ կոչեցաւ ի մեզ եղեւ. (որպէս գրի ծննդ. ԻԵ. 30.) եւ զնաւակ՝ զոր ի հարսնացուին պաղեստինեայ, որով եւ երկիր նոցա կոչեցաւ եղեամ որ ըստ գրելոյ գիտուդ վարդապետի՝ Թարգմանի երկիր։ Այլ զի զայս երկիր եւս ակն ունէր նուաճել ընդ իշխանութիւն իւրում, սմին իրի ասէ։

¶ Եւ ոչ այլապէս կրնաս ըսել զԱստուած եմ։ Աստուածը բառդ չէ՞ որ է բացատրական, այլ նախադրութեան տրական. և այս յայտ է ի բերից. մի՝ զի բացատրական այսր բառի ոչ լինի չեղեամ, այլ չեղեամս (ա. մնաց. ԺԲ. 11. և եսայեայ կԳ. 1։) նոյնպէս և սեռական լինի եղեամ այլ ևս եղեամեայ. (երեմ. ԼԸ. 21. և խթ. 22։) Արկարդ՝ զի ի յաջորդ համարն նոյնին վերջաւորութիւն պնդի ի տրական հոլովին յամենայն ձեռագրս մերս այսպէս. * ոչ առաջնորդեացի ինձ մինչև չեղեամ ‖. այսինքն մինչև ի չեղեամ։ Արդարդ՝ զի նաև չեբր" և յայլ ամենայն Թարգ". և յամենայն մեկնիչս ամենայն ազգաց, եւս և ի մեկնութիւնս վարդ". տրականապէս դնի։ Այլ զի յաջորդ համարոյն, պահանջէ դնել տրական։

Ի՞նչպէս այսու կամի ասել, ուղղեցից զգնացս իմ ի վերայ եղեամայ՝ առ ի նուաճել և զնա. կամ ըստ որում գրէ ոչն յակոբ մծբնայ հայրապետ (ՃաւԺա.) * չեղեամ լուծից զկերացս իմ ‖. իբր թէ ասել. ընդ ոտիւք կոխեցից զեղեամ։ Այսպէս յուցանի թէ ժամանակաւ նաև եղեամայեցիք լինելոց էին հպատակք իսրայէլի. որպէս և եղեն իսկ ի ժամանակս դաւթի. ըստ այմմ. (Բ. Թագ. Ը. 12. և 14։) Այլ եհար դաւթ զեղեամ. * և եղ (դաւթ) չեղեամ պահա-
,, կապանս յամենայն եղեամայեցիս. և եղեն ամենայն
,, եղեամայեցիք ծառայք արքայի ‖ նաև զի ի վախճանի հիւրկանոս ոչ միայն անկեաց եղեամայեցւոց, այլ և ստիպեաց թլփատել զնոսա. (որպէս պատմէ ի գիրս նախանեաց յովսեպ. ԺԳ. 17։)

Լ ամբ". զբառդ չեղեամ առնու ի բացատրական հոլովին. և՝ մեկնի այլաբանութիւն ի վերոյ քան ասելոյ այսպէս.

* Երդումն մարմնոյ է նշանակ. զոր զգեցաւ տէրն. որ-
,, պէս ասէին հրեշտակքն. այս ո՞վ է որ դիմեալ գայ
,, յեդովմայ. արդ ասէ (՚ի դիմաց քո) մինչ ածեղէն
,, անմարմին բնութիւնս ուղղեմ ճանապարհ առ մար-
,, դիկ, այլ յեդովմ՝ այսինքն ՚ի մարմնոյ ‖. որ է
ասել, ՚ի ձեռն մարմնոյս: Այս մեկնութիւն երևի ըստ յարմարութեան միայն: Իսկ զայլաբանականն դիցուք ՚ի վերջ այսր համարոյ զկնի նկարագրին: Արդ յետ խօսելոյ մարգարէին զնուաճութիւն այնոցիկ ազգաց՝ որք էին ծանօթ, կամ որք էին յազգէ աբրահամու, խօսի ապա և զայլազգեաց յասելն:

Եւ ինձ այլազգիք հնազանդ եղեն: Այլազգիք ասելով իմանայ զփղշտացիս, որպէս յայտ է յեբրայականէն. զի ուր յեբր״. դնի ֆէլէշէթ այսինքն փղշտացիք, ՚ի մերումն ըստ եօթանասնից դնի այլազգիք: Եւ զի փղշտացիք երևելի էին յերկրին պաղեստինոյ, բոլոր բնակիչք կոչէին պաղեստինացիք այսինքն փղշտացիք, (որպէս յայտ է ՚ի գիրս ծնն. իա. 32. 34:) Ուստի և աստ ասելովն. * ինձ այլազգիք հնազանդ եղեն ‖. իմացեալ լինին անմիջապէս փղշտացիք, և նոքիմբք բոլոր այլազգիք, կամ բոլոր ազգք պաղեստինացւոց: Իսկ պատճառ այլազգի կոչելոյ զնոսա աստանօր այս է. զի իսրայէլացիք ամենևին օտար համարէին զնոսա, և չունէին ինչ մերձաւորութիւն ընդ նոսա. որպէս ունէին ընդ մովաբացիս և ընդ ամոնացիս՝ որք էին ՚ի ղովտայ, և ընդ եդոմացիս՝ որք էին յեսաւայ: Եւ թէպէտ նաև ընդ սիկիմացիս և ընդ գաղայադացիս չունէին մերձաւորութիւն՝ բայց ունէին մասնաւոր ծանօթութիւն. զի յակոբ առ սիկիմաւ բնակեցաւ, և էառ ևս զայն. նոյնպէս և առ գաղայադու. մանաւանդ զի (որպէս ասացաք ՚ի համարն. 7.) ինքն եդ զայն անուն: Եւ վասն այսր ծանօթութեան՝ յատուկ անուամբ յիշեաց զնոսա աստ մարգարէն. իսկ զփղշտացիսն, ընդ որս և զայլ պաղեստինացիս հասարակ անուամբ կոչեաց այլազգիք ըստ մերումս, և ըստ եօթ״: ՚Ի սոցանէ թէպէտ և անհամարք կոտորեցան յիսրայէլացւոց ՚ի ժառանգել նոցա զերկիր նոցին, բայց մնացեալքն հնազանդ եղեն նոցա, և կացին բազում ժա-

մանակս խաղաղութիւն իրը բարեկամք. ուխտ եդեալ
ընդ նոսա,

Ի.Յիսուսն այս բանիք ասէ՝ ի բերանոյն քոյ և
և՝ ի բերանոյ եկեղեցւոյ՝ ըստ որոյ եդումս նշանակի
ազգն խորհելն, առ որ ուղղեաց տեսին մեր զինացս
իւր. Ի.ԱՀ՝ ի յառնել նոցա հնազանդ եղեն նմա այլ-
ազգիք այսինքն հեթանոսք, և որք յառաջն թշնամի
էին, գործան՝ ի բարեկամութիւն հանդերձ ուխտիւք.
Չե նոքին իսկ եդումնեցիք, այսինքն խորհելոցիք
՝ի վախձան աւուրց կատարածի ունին գառնալ առ
ած ըստ առաքելոյն. * մինչև լրումն հեթանոսաց
մտցէ, և ապա ամենայն իսրայէլ (այսր ժամանակի)
կեցցէ ։

Չե թէպէտ որպէս տեսանեմք, հրեայքն զքրիստո-
նեայս (իբր նախատանօք) եդումնեցիս կոչեն. և եր-
բեմն ամենևկացիս, և զհերձանս իսրայէլացիս, բայց
ըստ առաքելոյն. (Հռոմ. ԺԱ. ժ.) որք մատնիով իս-
րայէլացիքն ասին, հոգւով եդումնեցիքն են. և որք
մատնիով եդումնեցիքն ասին, հոգւով իսրայէլացիքն
եղեն և են։ Չե այս չէ ինչ տարադէպ. զի եդումնեց-
ցիքն են եղբօրորդիքն իսրայէլացւոց. և նոցա տե-
ւել եղել ժառանգել զՀոգևորական օրհնութիւնն
աբրահամու. որպէս տեսանի՝ ի գիրս երգոց երգոյն
սաղմոսին. ուր և նոքին իսկ եղբօրորդիքն, այսինքն
հեթանոսք կոչեն զքն եղբօրորդի. ըստ որում յիս-
րայէլացւոց անտի ծագեցաւ ըն մարմնոյ, Պաւղոսեալ
Հայելով՝ ի Թարգմանութիւն ումանց, յորս դնի * յե-
դում լուծից զկօշիկ իմ, և՝ ի փղիշտ տամ զձայն իմ՝
սովին ցուցանի լուծանիլ մարմնոյ նոցա մահուամբ,
այսինքն մեռանիլ քան մարմնով՝ ի յերկրի. ըստ որում
կոշիկք նշանակի մարմնի. Չ՝ստ և զձայն իւր՝ ի գետոց
առելով. որք՝ ի կապանս էք՝ արձակեցարուք. (Եսայ.
խեթ. ղ.) և յայնժամ հնազանդեցան նմա այլազգիք
այսինքն դէք. և գազարով եւտուն զՀոգիս սրբոյն.
որով և բոլոր եդում անկաւ ընդ իշխանութիւնք նոցա։
Ի.ԱՀ թէ քանի փափաքելի էր մարգարէին ժառանգ-
գութիւն եդումից, և զիարդ ակնունէր այնմ, յայտ
առնէ՝ ի յաջորդ համարսն ասելով,

Ժ. Ո՞ տաբդե զնս ՚ի տալոյ ամառ, կամ՞ պատմուբդեսցե ինչ գնալ յերուսաղէմ։

ԺԱ. Ասէ ցնոսա, որ հերձեցեալ էին։ Եւ ոչ ելեալ ամ ընդ նոսա մեզ։

Այսպէս ամուր քաղաք զոր յիշէ՝ որ ինչ արգելաք, պիտ պէս կարծիք եմն. ոմանք համարին լինել բոսորքա զաք արաբիոյ (որ Թաբդմանի մարմին. ըստ գիտո գեայ՝ ՚ի մէկն. Եսայեայ. ըստ այլոց հնձանք). ոմանք գհռամեհ քաղաք գաղատաց. ոմանք ըստ քաղդէա կանին զսիւնոս քաղաք փիւնիկեցւոց, և այլք այլ։ Այլ առ սոքաք երկու եմն հաւանական կարծիք. ըստ միոյն խմացեալ լինի երուսաղէմ. որ եղև գլուխ քա զաքաց ՚ի պաղեստին. որոյ ՚ի ժառանգութիւն՝ ժառան գեալ համարիւը և բոլոր պաղեստին. իսկ ըստ երկ րորդին խմացեալ լինի նոյն իսկ եդեմ քաղաք եդե մեացւոց, զորմէ բազում ինչ գուշակէ սգրեալս. (համար. ւ—ճ) Այսպա առ սոսա սկիսբերելով ասէ.

Ո՞ տաբդե զնս ՚ի տալոյ ամառ, կամ՞ պատմուբդեսցե ինչ գնալ յերուսաղէմ։ Այնքան ամուր քաղաքաբ խմացեալ լինի նոյն ինքն քաղաքն եդեմ, այս բան լինի իբր կրկնաբա կամ բացատրութիւն այնր զոր ասաց. * յերուսղէմ ուղ ղեցից զդնացս իմ։ որոյ ՚ի յարբերն զինի, ՚ի տարբեր ից, կամի ասել. ոչ ել բաւական իմն գնացք ՚ի նոյն, զի ինև ոչ կարեմ. ապա ՚ի պատճառս բերեալ ինձ ՚ի նոյն, և տարբեր մինչև ՚ի քաղաք նոցա ամուր ՚ի յե դոմ։

Յակ եթէ այսու քաղաքաբ խմացեալ լինի երուսաղէմ, կամն ասել. ՚ի գնալ իմ յերկիրն խոստացեալ, ՚ի տարբ ել զիս ՚ի գլուխ քաղաքաց այնր երկրի յերուսաղէմ. ոչ զի այն քաղաք յատաջն էր այնպիսի՝ այսինքն գլուխ քաղաքաց, այլ զի գիտէ ցուցանել թէ երբ իցէ՝ զի ժառանգեսցէ զերկիրն աբեաբաց բոլոր. և անդ ու նիցի գլուխ քաղաքաց զերուսաղէմ. և զի ՚ի գրել դաւթի զայս սաղմոս՝ արդէն լեալ էր գլուխ քաղա քաց՝ յերեքեան և ՚ի լինելին միանգամայն հայելով խօսի։

Եւ զորօրինակ վերուսաղէմ միայն ՚ի մէջ բերելով զլսոլը երկիրն աւետեաց լմանայ, սոյնպէս և զեդոմ միայն ՚ի մէջ բերելով զլսոլը շրջակայ աղգս լմանայ. և տարակուսելով մանաւանդ թէ փափաքելով հարցանէ. ո՛ արդեօք առաջնորդեսցէ ինձ և տարցէ յայն: Եթէ այս բան ՚ի բերանոյ գերելոցն ասի՝ առաջի դնի այսպէս. ո՛ ազատեսցէ զիս ՚ի գերութիւն աստի, և տարցի ՚ի ցանկալին տեղն, և ես և յեդոմ. յայսմ տարակուսանայ հանէ զինքն ասելով. ՚ՈՎ է առաջնորդ իմ. սմին իրի յարէ զկնի և ասէ:

Եկ դու ՚ի մեզ. Եւ ո՛չ ոք կարէ տանել զմեզ ՚ի ժառանգութիւն երկրին աւետեաց, և ո՛չ ոք կարէ մեզ առաջնորդել և ուղղել՝ առ ՚ի գնալ և տիրել եդոմայեցւոց, բայց միայն դու, որ ես Աչմալուխտ ՚ՈՎ մեր: Ապա եթէ դու ոչ առաջնորդեսցես, ո՛չ զայն կարեմք ժառանգել, և ո՛չ զայս կարեմք նուաճել. այլ մանաւանդ մեք նուաճիմք և մեք սպառիմք. և

յայս սակս յարէ զկնի:

Ոչ դժեցեր զմեզ. Եւ ո՛չ եղեր ՚ՈՎ ընդ մեզ դու: Այս իբրև զփորձ առաջի մատուցանէ ՚ի յոյց աստուածոցն. որով կամի ասել. եթէ դու ո՛չ ածցես զմեզ, այլ թողցես ՚ի քաց, որպէս երբեմն թողեր և մերժեցեր զմեզ յանապատի, և ո՛չ եղեր ընդ զօրս մեր ընդդէմ հարկանողաց մերոց, ո՛չ ինչ կարեմք առնել, այլ մնանաւանդ ՚ի կորուստ մատնիմք:

Ա՛յլաբանօրէն, այս բան ասի ՚ի դիմաց մարդկային բնութեանն, որ զրկեցաւ յեդովմայ, այսինքն յերկնային բարեաց, զրկեցաւ և յանմահական կենաց. վասն որոյ և ամենայն հոգւոյ ցանկալի ուղղել զգնացս իւր առ այն. և յոչ կարելն ժամանել՝ գոչէր, ո՛ տարցէ զիս ՚ի նոյն, եթէ ոչ դու յո՛, որ ՚ի սկզբան անդ մերժեցեր զիս, և ոչ եղեր ընդ զօրուն իմ ՚ի մարտ ընդդէմ չարին: Ո՛ստ այսմ մեկնութեանն մարթ է քաղաքաւ լմանալ աստ լմանալասպէս և զնա ինքն ՚ՔՆ. առ որ հառաչէր մարդկութիւնս հասանել, և գտանել զնա, և միանալ ընդ նմա:

Ա՛մէն". վերածաքար մեկնելով զայսոսիկ բանս, աղաչեսցուք քաղաքաւ և եղոմաւ լմանալ զերկնային դրախտին

* ուր կարօղ է տանել զիս յայդ ամուր քաղաքդ
„ ասէ. յորում ոչ է իշխանութեն բանսարկուին պա-
„ տերազմիլ. յորում ոչ կարէ մեղքն վտանգել. յո-
„ րում ոչ է աղցաւոր կրիցն ստորաքարշել. արդարև
„ ամուր է երկնային քաղաքն՝ այսմ ամենայնի զո-
„ լով գեր ՚ի վերոյ ... ուր ոք է՝ որ առաջնորդէ ինձ
„ յերկնային քաղաքդ, և ՚ի հայրենի ժառանգութիդ
„ եղեմ... դու կարօղ ես (ասծ) յերկնային քաղաքդ
„ հանգուցանել, յորմէ մերժեցեր զմեզ ‖: Այս թէ-
պէտ լամբ". եդովմաւ իմանայ աստ զեդեմ դրախտն.
բայց այլ է եդովմ, և այլ է եդեմ. եդովմ է ՚ի հա-
բաւակողմն պաղեստինոյ, իսկ եդեմ է ՚ի հայաստան
առ լերամբ կորդուաց. զորմէ ունիմք խօսել այ-
լուր:

Նորոյսպէս, այսու քաղաքաւ և եդովմաւ նշանակէ
առաքինական կեանք, կամ կատարելութեն կենաց.
կամ վայելչութեն պատկերին ասյ. առ որ փափաքէ
հոգին ուղղել զինքն ՚ի նոյն, և հառաչելով ասէ, ո՛
առաջնորդեացէ ինձ՝ հասանել յայն: Գուցէ դու
և ս փափաքիս, և սկսանիս ևս գնալ. բայց զոր բար-
ւոք սկսանիս՝ չարաչար վերջացուցանես. * այդչափ
անմիտք կք. սկսեալ հոգւով, և արդ մարմնով վախ-
ճանիք ‖. (գաղ. գ. 3:) Որպէս թէ սկսանէր ոք
նկարել զպատկեր բանաւորի, և աւարտէր ՚ի գլուխ
անբանի: Խոստովանութեք կամիս սրբել զքեզ և
ստանալ զնորոգութեն պատկերի ասյ, ՚ի դառնալդ
՚ի գործս անասնոյ՝ աւարտես ՚ի պատկեր անասնոյ.
որով ո՛չ ևս ժամանես յայն՝ յոր հասանել կամիս. և
սակայն եթէ չնճ ապաւինեացիս, և ՚ի նմանէ օգ-
նութեն խնդրեացես՝ կարողանաս և հասանես. որպէս
և ցուցանէ առաջիկայ բնաբանդ, յասելն * եթէ ոչ
դու ասծ ‖. բայց քանզի բազմադիմի նեղութենք պա-
շարեալ զմեօք վտանգեն զմեզ՝ վասն նոցին ևս պարտ
է մեզ՝ ոչ ՚ի մեզ և ոչ յայլս, այլ յասծ գնեալով զյոյս
մեր՝ հայցել ՚ի նմանէ զօգնականութեն նորա, որպէս
առնէ և մարգարէն ՚ի դիմաց իսրայէլի. և պաղա-
տեալով ասէ:

ժբ. Տուր մեզ օգնութ՟ն 'ի նեղութ՟է. զի ընդունայն է փրկութ՟ն մարդոյ:

ժգ. Աստուծով արասցուք զօրութ՟ն. և նա արհամարհեսցէ զայնոսիկ՝ որ նեղեն զմեզ:

Զարմանալի էր խնամքն ա՟յ 'ի վերայ իսրայէլացւոց, 'ի դիմել նոցա առ նա, եթէ 'ի նեղութ՟ե և եթէ 'ի յաջողութ՟ե իւրեանց. զի յամենայնի ցուցանէր նոցա զպաշտպանութ՟ի և զօգնութ՟ի իւր. և զայս առաւելապէս արար 'ի ժառանգել նոցա զերկիրն աւետեաց, որպէս յայտ է յա՟ծաշնչի: Արդ որպէս ցուցանէ կարգ սաղմոսիս, զայն զայս լուելեայն յիշել կամի աստանօր մարգարէն, և յիշատակութ՟բ այսր վտանգի խնդրել և ինքն զնոյն օգնութ՟ի և զզօրութ՟ի. և նախ վասն օգնութեան մաղթէ ասելով:

Տուր մեզ օգնութ՟ն 'ի նեղութ՟է. զի ընդունայն է փրկութ՟ն մարդոյ: Կամի ասել. 'ի մեծի նեղութ՟ե գոլով՝ ոչ առ մարդ ոք, այլ առ քեզ միայն դիմեմք. դու տուր մեզ զօգնութ՟ի քո՝ զի կարասցուք նովաւ գտանել զփրկութ՟ի 'ի նեղութ՟էս մերմէ. իսկ եթէ դու ոչ ցուցցես զօգնութ՟իդ և զպաշտպանութ՟իդ, չունիմք ակն փրկութ՟ե առ 'ի մարդկանէ. և եթէ ունիցիմք ևս, այն ակնկալութ՟ի է ունայն. զի թէպէտ և մարդիկ կարեն ցուցանել զինքեանս թէ փրկեն, սակայն եթէ դու ոչ օգնեսցես՝ այն կամիլ նոցա ոչ փրկէ, այլ ունայն ելանէ: Խօսի ապա և վասն զօրացուցանելոյն ասելով:

Աստուծով արասցուք զօրութ՟ն. և նա արհամարհեսցէ զայնոսիկ՝ որ նեղեն զմեզ: Այսինքն 'ի տալ մեզ ա՟յ զօգնութ՟ի իւր, նովաւ իբր զինուք արասցուք զզօրութ՟իս այսինքն զմեծամեծ գործս քաջութ՟ե և յաղթութեան ընդդէմ թշնամեաց մերոց. և 'ի գործել մեր զայս՝ նա ինքն լիցի իբր զօրագլուխ մեր կամ իբր առաջնորդ, և արհամարհեսցէ, այսինքն նկուն արասցէ, ևսև անարգ և անզօր կացուսցէ զթշնամիս մեր՝ որք նեղեն զմեզ:

Այս բանք ասին 'ի դիմաց մարդկայինս բնութեան առ Հայր. տուր մեզ զմի միայն զօգնական մեր զՄիա-

ծինդ 'ի փրկել զմեզ 'ի նեղութենէ մերմէ. զի մար-
դիկ ոչ կարեն փրկել զմեզ. այդ կարօտիմք փրկիլ
և աստուծովդ զօրանալ: Ասին դարձեալ և 'ի բե-
րանոյ եկեղեցւոյ առ 'ի գտանել հանապազ զօգնու-
թիւն 'ի քնէ այ 'ի պէսպէս նեղութիւնս, ևս և առ 'ի
զօրանալ նովաւ 'ի վանել զհոգևոր պատերազմ զոր
յարուցանեն հերետիկոսք և հեթանոսք. սոյնպէս
և իւրաքանչիւր մարդ պարտի հանապազ զայն խնդ-
րել. որպէս առնէին սբք. յորս օրինակ բարի ունիմք
զմերս սբ գրիգոր նարեկացի. որ 'ի տեսութիւն այսր
բնաբանի գրէ ('ի բանն ծա) այսպէս. * և արդ առ
,, երկրածինս ոք պաղատեցայց այլս մահու ամենա-
,, պատիր. (ոչ ապաքէն գրեալ է) եթէ ընդունայն
,, է աղաղակելն (առ այնպիսիս). առ մահկանացու
,, բանական. (գրեալ է) եթէ սուտ իցէ փրկութիւն
,, առ յուսոյն վստահութիւն ||: Որում ըստ պատշաճի
հետևեցուցանէ, թէ ուրեմն միայն յած պարտ է ա-
պաւինել, և նովաւ գործել զզօրութիւնս, և վանել
զթշնամիս հոգւոյ և մարմնոյ:

Տեսանեմք, զի այլ ամենայն կենդանիք ունին իւ-
րեանց զէնս ինչ. ոմանք զեղջիւրս, ոմանք զժանիս,
ոմանք զճիրանս, ոմանք զկտուցս, ոմանք զկճղակս,
ոմանք զխայթոցս, ոմանք զփուշս, ոմանք զթևս,
ոմանք զթոյնս, ոմանք զպնդութիւն, ոմանք զարագու-
թիւն, եւն. իսկ մարդն ամենևին անզէն տեսանի. որ-
պէս զի յած միայն դիցէ զյոյս իւր, և զօրութբ նորա
զինեալ արասցէ զզօրութիւն: Այլ կենդանիք եթէ կա-
րէին ունել զայս զէնս, թերևս և ինքեանք իբր մարդ-
անզէն 'ի բնէ գոյաւորէին. բայց անբան գոլով՝ անըն-
դունակ են այսմ. իսկ մարդն բանականութբ ընդու-
նակ գոլով սմին այսմ գերագոյն զինու, սովին զի-
նուորեալ կատարէ զգործս մեծամեծս, և զյաղթու-
թիւս անլուրս. որպէս է տեսանել 'ի Յուդիթ. որ
անզէն գոլով՝ կին տկար՝ զինուորեցաւ աստուծով՝
և արար զայնպիսի յաղթութիւն. զորոյ զնմանն չէր
տեսեալ աշխարհ: Զսոյն կարէ առնել ամենայն ոք,
և առաւել ևս ընդդէմ սատանայի և ընդդէմ բռնու-
թեան ախտից, և գործել ևս զգործս զարմանալիս 'ի
հաճոյս այ, և զարժանիս արքայութեան երկնից, ուր
ունի ուրախ լինել յաւիտեան:

ՍԱՂՄՈՍ. Կ.

Պաղատանք առ ած հանդերձ գոհութեամբ վասն գտանելոյ զանդորրութիւն կենաց, և զժառանգութիւն բարեաց, եւս և զերկարուն աւուրց թագաւորի. միանգամայն և յայտարարութիւն ոչ պակասելոյ ողորմութեան և ճշմարտութեան այ:

՚Ի կատարած. ընդ օրհնութեանս սաղմոս ՚ի դաւիթ:

1 Լուր ած աղօթից իմոց. և նայեա՛ տր յաղօթս իմ: 2 ՚Ի
ծագաց երկրէ կարդացի առ քեզ, մինչ ՚ի հատա-
նել սրտի իմոյ: 3 ՚Ի վէմ բարձր արարեր զիս. առաջնոր-
դեցեր ինձ, և իմ եղեր յոյս՝ և աշտարակ հզօր եղեր ինձ յե-
րեսաց թշնամւոյն: 4 Բնակեցայց ՚ի յարկս քո յաւիտեան. և
ծածկեցայց ընդ հովանեաւ թևոց քոց: 5 Դու ած, լուար
աղօթից իմոց. ետուր ժառանգութիւն, ոյք երկնչին յանուանէ
քումմէ: 6 Աւուրս յաւուրս յաւելցես թագաւորի ամաց նորա,
աւուրս ազգաց մինչև յազգս: 7 Կայ և կայ յաւիտեան առա-
ջի այ ողորմութիւն և ճշմարտութիւն, ոյք խնդրեսցեն ՚ի նմանէ:
8 Այսպէս սաղմոս ասացից քեզ յաւիտեանս յաւիտենից. և
տաց քեզ զաղօթս իմ օր ըստ օրէ:

ՎԱՐՈՂԱԿԱՆ

Ղ՝ հապարաճ. ընդ օրհնութիւնս սաղմոս՝ է դաւիթ։



Ի ՍԱՂՄՈՍԱԳՐՈՒԹԻՒՆ ՁԻՒՐ ԻՆՉ ՀԱՄԱՐ ՝ի մեկնել. իսկ միտ բանին է թէ այս սաղմոս ասացեալ է՝ի դաւթայ ելբև օրհնութեան, կամ դասել ընդ օրհնութիւնս. իսկ վասն բառիս՝ է հապարաճ՝ տե՛ս՝ի ներածուե. գլ. թ։) Ա.յլ պիտեի՛ր է՝ զի աստանօր փոխանակ բառիդ ընդ օրհնութիւնս սաղմոս. յելբր՛՛. դնի ա՛լ ընդ ելբև. իսկ նախկին նաթան նշանակէ գործ՝ի օրհնութե՛ կամ նուագարան սաղմոսելոյ, և կամ գուսան սաղմոսաց. և ըստ այսմ միտ բանի վերնագրիդ բացատրի այսպէս. այս սաղմոս որ՝ի դաւթայ է ասացեալ, երգելի է նուագարանաւ գուսանաց. (տե՛ս զայսմանէ և՝ի սաղ. ՟ճ. ՟ի վերնագրի։)

Ի՝ սաղմոսի աստ են ինչ ինչ բանք՝ որք գտանին՝ի սաղ՛՛. լե. և որպէս յայտնի տեսանի՝ սոյն այս սաղմոս այնու առթիւ ասացեալ է՝ի դաւթայ, որով առթիւ ասացաւ այն լե սաղմոս. և զի այն ասացաւ յառթէ հալածանացն սաւուղայ, ապա և սա. սակայն այսու ևեթ զանազանութի՛ զի այն ասացաւ ելբև՝ի հալածման գոլով, իսկ այս ելբր յետ հալածմանն՝ բայց՝ի նոյն հայելով։

Ա.յլ սակայն են բազումք, որք պնդեն թէ այս սաղմոս ասացաւ՝ի բերանոյ գերելոցն՝ի բաբելոն՝ յորժամ դարձան անտի։ Ա.յս կարծիք մեզ ո՛չ թուի լինել բաւական նկարագրական մեկնութե՛ այլ ըստ յարմարականն տեսուե։ Ա.ազումք ևս կան, ընդ որս և լամբ՛՛. որք յամանան ասացեալ զայս՝ի դիմաց իւրաքանչիւր Ղաւատացելոց ևս և՝ի դիմաց եկեղեցւոյ։ Ա.յլ այս է ըստ հոգևորին, զոր և՝ի մեկնել մեր՝ի դիմաց դաւթի՝ իւրաքանչիւրոք կարէ հպեցուցանել՝ի դէմս իւր և եկեղեցւոյ։

ԲԱՆ

ԺԲ. Ի՞ՐԱ ՁԱԾ ԱՂՕՐԻՆ ԷՄՈՑ. Ե ՆԱՅԵԱ ԹԷ ՅԱՂՕՐԱ ԷՄ։

ՄԵԿՆՈՒԹՒՆ ՄԱՆԿԱՆՈՒԹՒՆ

Ի սկզբնաւորուէ այսր սաղմոսի և սմին նման սաղմոսաց կարեմք իմանալ, թէ արժան է ամենեցուն՝ որոց մատչին աղօթիւք առ Ած, զայսպիսի խորհուրդս ունել ի մտի. կամ զոյնպիսի բանս դնել առաջի՝ հաստատուն յուսով. և այս՝ կամ լռելեայն, և կամ բացայայտ խնդրուածովք. կամ այսպէս ասացից, ի մատուցանել մարդոյ զաղօթս, պարտ է յուսալ՝ թէ լսէ Ած աղօթից իւրոց, և կամ պարտ է փափաքիլ՝ զի լսէցէ. ապա թէ ոչ՝ ի զուր լինի խնդրել ինչ աղօթիւք. խակ թէ զնայրդ կատարելոց իցէ, կամ երբ ևս, զայն Թողեալ ասէ. Այրդ այլ է լսելն այս աղօթից. և այլ է նայիլ ի նոյն. լսէ Ած՝ յորժամ ընդունի. նայի՝ յորժամ տեսանէ զդիտաւորութիւն խնդրողին, և զոր արժանն է՝ կատարէ. վասն այսորիկ զերկոսին ևս դնէ առաջի ասելով.

Ի ՀՈՐ ԱՁ ԱՂՕՐԵՑ ԷՄՈՑ. Ե ՆԱՅԵԱ ԹՐ ՅԱՂՕՐԱ ԷՄ։ Այնքան ընկալ զաղաչանս իմ՝ զորս աղօթիւք մատուցանեմ քեզ. և ի տեսանելդ թէ պատշաճ է զոր խնդրեմ, կատարեա զխնդրուածս իմ. Այս քան թէպետ և ըստ ինքեան հայի ի ներկայ խնդրուածս ի սկսանիլ աղօթից, քայց կարէ հայիլ և յայլ խնդրուածս արարեալս յառաջագոյն. և որպէս երևի՝ առանօր ըստ երկուցդ ևս առաջի առնէ մարգարէն զայս քան. ըստ միոյն՝ հայեցուլ յայն՝ զոր ունէր ի սրտի. և ըստ միւսոյն՝ հայեցուլ յայն՝ զոր արարեալն էր. խակ թէ ուստի, և զինարդ, յայտ առնէ ասելով.

ՀԱՐԴԱՆ ԴՆԻ ԱՍՏ ՓՈԽԱՆԱԿ ԱՂԱՂԱԿԵԼԻ ՅԱՒԻՏ

ԺԲ. Ի ԾԱԳԱՅ ԵՐԻՑՔ ՀԱՐԴԱՅՔ ԱՍ՝ ՉԵՍ, ԹԻՆԻ Ի ՀԱՍՊԱՏԱԿԵԼ ԱՐԴԵ ԷՄՈՑ։

սրտիւ քան ձայնիւ. և այս 'ի ծագաց երկրի՝ յա-
սէլն։

'Ի ծագաց երկրի կարդացի առ քեզ։ Որովհետև 'ի հալածիլ դաւթի 'ի սաւուղայ՝ չոքաւ 'ի ծագս երկրին հրէաստանի, և անտի կարդաց առ ա̃ծ, յայն հայելով ասէ. 'ի ծագաց երկրի կարդալ. որպէս թէ ասէր. 'ի վարելս իմ յօտար տ̃րութ̃ի, ոչ ապաւինեցայ յօգնութ̃ի մարդոյ, և ոչ կարդացի առ այս ոք կամ առ այն, այլ առ քեզ. և յերկարիլ պանդխտութ̃ես ոչ լքայ. սմին իրի յաւելու։

Մինչ 'ի հատանէր սրտէ իմոյ։ Աստանօր եթէ մինչ առցի իբրև նախադրութ̃, 'ի հատանէր՝ դնի իբր խնդիր այնմ, և միտ բանին լինի այս. այնչափ աղաղակեցի՝ մինչև վաստակեցաւ սիրտ իմ. այսինքն յոգնեցաւ և տուայտեցաւ։ Իսկ եթէ առցի իբրև մակբայ. որպէս դնի յայլ թարգ", միտ բանին լինի այս. մինչդեռ վաստակիւր և տառապիւր սիրտ իմ կարդացի առ քեզ 'ի ծագաց երկրի։ Նոյն այս առաւել ևս համաձայն է եբր". ուր դնի պաաթօֆ լիպի. այս է. * 'Ի նուաղիլ սրտի իմոյ ‖ այսինքն յորժամ նուաղիւր սիրտ իմ։

այլոց ասեն զայս սաղմոս , հաստատեալ յայն՝ թէ ի
հին սաղմոսս ինչ ոչ լիշի անուն գաւեթի ի վերնա-
գրի սորա , բայց հաստատեալ կարծիք է՝ թէ գաւեթի
է ասացեալ զայս ։

Ր Ա Ն

ա. Ա ղաղէնեցէք առ ած ամենայն երկիր . սաղմոս ասացէք
անուան նորա . և արա՛ք պատուական օրհնութիւն նորա ։

Մ Ե Կ Ն Ո Ւ Թ Ի Ւ Ն

Ա յս բանիք ըստ ասելոյ մերոյ այլուր՝ ցուցանէն զգե-
ղումն ուրախութեի սրտի մարգարէին՝ որ ի լուսեղէ-
ամտի իւրմէ ի յորդոր մտանի առ ամենեսեան օրհ-
նել զած և գոհանալ զնմանէ , վասն ազատելոյ ի
թշուառութեի գերութենէն . և նախ ասէ ։

Ա ղաղէնեցէք առ ած ամենայն երկիր , կամ ըստ ոմանց
ձեռ՛՛. և ըստ լամբ՛՛. աղաղակեցէք առ ած ամենայն

երկիր։ Այս աղաղակէս ցնծանէ ձայնիւ զինուելոյ զօհանալ զնոյ, կամ մնալոյն զօհուելոյ առ ոճ բարձրանայն. և զի ոչ բանական համարէր մարգարէն զաղաղակել ոմանց՝ զանձնեսին հրաւիրել ի նոյն՝ ասելով, ամենայն երկիր. որով և յայտ առնէ՝ թէ ընդ ամենայն երկիր լինելոց էր փրկուելոյ նոյ. ուստի և առ ամենայն բնակիչս երկրի խօսի՝ մեծաւ ցնծութեամբ աղաղակել առ ոճ. և զի մի իմասցի՝ թէ այն աղաղակ իցէ միայն գոչումն ձայնի՝ զի զայս և անբանք առնեն, յաւելու ասել։

Ամէն ասացէ՛ տէրն Նոյա։ Այսինքն յաղաղակել ձեր առ ոճ՝ սաստիկ ցնծալով զանուն նորա, և ասելով՝ ոճ կենդանի, ոճ հզօր, ոճ ամենակալ, դու միայն օրհնեալ, դու միայն փառաւորեալ, դու միայն բարձրացեալ ես. և զի ցուցցէ թէ զայս ևեթ դիտէ աստ, յաւելու ասել։

Ի՛ս գոյ դիտաւ օրհնութիւն նորա։ Արդ օրհնութիւն ևեթ առնել լիցի իբր սեռական, լինի յատկացուցիչ փառաց, և նշանակէ՝ թէ այն օրհնութիւն զոր տալոց են՝ պարտի լինել յայտնիչ փառացն ոճ. ուստի և յասելն, տուք զփառս օրհնութիւն նորա, միտ բանին լինի սոյա. տուք ոճ զայնպիսի օրհնութիւն՝ որով ցուցցի մեծութիւն փառաց նորա. կամ թէ տուք ոճ փառս այնպիսի օրհնութիւն՝ որ իցէ օրհնութիւն ոճ, և այնու իցէ փառաւորիչ ոճ. յոր միտ ի գործակատն դնէ լսողն։ Յասելն տուք զփառս օրհնութիւն նմա։

Եթէ ևեթ բառդ օրհնութիւն՝ առնել լիցի իբր տալ կան, որպէս դնի յայլս, կամ ըստ նշանակութեան ներգոյականի, որպէս դնի յերբայականն, լինի իմիջիր բայիդ տուք, և նշանակէ թէ տայն զփառս ոճ՝ կաքդի յօրհնութիւն ոճ. որպէս թէ ասէր, տուք զփառս՝ ոչ ի գովել զայս ոք, կամ զայն, և կամ առ ի մեծացուցանել զձեզ, այլ ի յօրհնել զոճ։ Յորմէ ոօսին՝ եթէ սեռականապէս առցի՝ օրհնութիւնն կաքդի ի տալ զփառս. իսկ եթէ տրականապէս առցի, տայն զփառս կարգի յօրհնութիւն. իսկ թէ զինչ պարտ էր նոցա ասել առ ոճ յօրհնութիւն անդ, ասացեալ դնէ մարգարէն ասելով։

ՀՐ. Ա ասացէք ինձ, որպէս զի ահեղ են գործք տեառն ի բա-
ղում զգրուխս տեառն սահման են ընծաից տեառն։

Որովհետև ամենայն գործք ոյք են նիւթ օրհնելոյ
զնա, կամելով մարգարէին յառաւելութիւն այնր յա-
ժարեցուցանել զմարդիկ, խրախուսէ զնոսա՝ հայել
նախ յահեղութիւն այնոցիկ գործոց, և յիշատակելով
զայնս առաջի՝ այնու օրհնել զնա. վասն որոյ
ասէ։

ՀՐ. Ասացէք ինձ, որպէս զի ահեղ են գործք տեառն։ Կամի ասել.
յօրհնելն ձեր զնա ի սաղմոսէն՝ ասացէք զայս-
պիսիս. որպէս զի ահեղ են գործք քո տէր. ուր
գործովք խմացեալ լինին գործողութիւն ոյք. զայսմա-
նէ տես ի համարն. գ. ուր մատամբ ինն կրկին այս։
Կակ բառդ որպէս զի՝ դնի առ հարցականացեալս կամ
իբր զարմացական. իբր թէ եղեալ էր. ոչ միթէ
ահեղ են գործք քոյ, զորս արարեր, և զորս ցուցեր
առ մեզ, և առ ամենայն ազգս մարդկան։

Նէ զայսոսիկ գործողութիւնս կոչէ ահեղ՝ ըստ այլոց
այլ բանի. նախ՝ ըստ մեծութեանէ ամենակալ զօրութեանն
ոյ. երկրորդ՝ ըստ եղանակին՝ որով եղեն և լինին.
երրորդ՝ ըստ անհասանելի լինելոյ մարդկային մտաց.
չորրորդ՝ ըստ գերազանցելոյ քան զկար բնութիւնէ, որ-
պիսի են նշանք և սքանչելիք։

Այլ անհասութիւնն իմն ահեղ երևեցեալ այն գործ՝
զոր արար քո ի փրկելն զմարդիկ. առ որ օրինակ ի
մեջ բերեալ լամբ՝. ասէ. * ոչ ասի ահեղ գործ Թա-
,, գաւորի ուրուք բազմութիւն զօրացն, և պատրաս-
,, տութիւն զինուցն զինչևիսին յաղթահարել. այլ՝
,, այն Թագաւի ահեղ յայս ծառայիցն՝ յորժամ զայն-
,, պիսի կարութիւն անտես արարեալ՝ ինքն իւրովի
,, առանց զինուոյ և երկիւղացս ի հետուստ ընդ-
,, դէմ նոցա ընթացեալ ընկնէ։ Այս եղև և այն
,, գործ ոյ ահեղ յայս երկնաւորացն և յորոց միաքն
,, յերկրի. զի ոչ հրեշտակօք մարտեաւ ընդ դէս,
,, ոչ ՅՈՒեղէն զօրութիւնն եհան ի ձեռաց նոցա զմար-
,, գիկ, այլ զինքն ունայնացուցանելով՝ զկերպարանս
,, ծառայի առեալ... այսպիսի գործս ահեղ Թագա-
,, ւոյ յայս ամենեցուն։ Այլ քանզի ամենաբիւրաց

չառնուն ինչ՝ ի միտ յահեղութիէ գործոցն այ, և կամ ոչինչ շահին, յայս սակս յաւելու մարգարէն՝ ասել՝

Ի բաղում զբօսանս տամ սահել ոչ ընծայիս ոտ։ Կամ զայս զօրութիւն այ խնայեալ լինին ասա բազմապատիկ աքանչելի գործք նորա արարեալք ամենակարող զօրութիէ, և ըստ լսոյ՝՝ գործ խնարհմանդ գործ բևեռելոյ նորա մարմնով՝ ի վերայ խաչին. այսպիսի և այսչափ բազում զօրութիւն այ ասէ, ստեղին նմա թշնամիք նորա։

Կամ ասել այլում երբակի կարէ լինել, այսինքն ըստ վարելոյ, ըստ համարելոյ և ըստ խօսելոյ։ Ոստ վարելոյ լինի ասել՝ յորժամ ոք առնիցէ վարի ընդ այլոյմ. յոր միտ կամի ասել. ամբարիշտք որք են թշնամիք քո՝ տեսեալ զազգայն զօրութիէ քոյ՝ այսինքն զգործս աքանչելի զօրութիէ քում, թէ. պէտև խոստովան եղէն, թէ մեծն այ է այս, կամ զօրութիէ այ է այս, կամ թէ ած է՝ որ առնէ զայս, և այսու բռնադատեցան Հպատակել քեզ զմիտս իւրեանց, բայց ստեղին քեզ. զի որպէս տեսին՝ այնպէս ոչ վարեցան, և զոր ասացին՝ ոչ ցուցին, և զոր խոստացան՝ ոչ կատարեցին։ Այս կամ զոր բերանովք խօսեցան, սրտիւք չյայտնեն. հեռացան. ըստ այմ ստեղին և թշնամիք խորհրդոյց յերկրորդ չինու-թէ տաճարին. զի ցուցին արտաքուստ՝ թէ ինքեանք և նմանին գործակից լինել՝ ի շինուածէ այնր, բայց կամէին խափանել. (տես. բ. եզր՛՛. ղ. 1—4. և ճ. եզր՛՛. ղ. 20։)

Ոստ համարելոյ լինի ասել. յորժամ ոք սուտ համարի զանս այլոց՝ կամ զգործս նորա, և կամ ոչ հաւատայ նմա. և ըստ այմ կամի ասել. ամբարիշտք տեսեալ զաքանչելի գործս քո՝ ոչ՝ ի միտ առին՝ թէ՝ ի քէն գործին նոքա. և եթէ միտք իւրեանց և ևս վկայէր այմ, նոքա տեղի ոչ ետուն. այլ ստեղին՝ այսինքն սուտ համարեցան՝ թէ այնպէս իցէ. որպէս առնէին գալիքքն և փարիսեցիք. և կամ ուրացան զայս ճշմարտութիէն՝ թէ՝ ի քէն գործի այս անհնարն, և թէ դու ես որ նախախնամես զանհնարն. և կամ որ նոյն է, ոչ հաւատացին թէ դու գործես զայս ամ-

Ի սա խօսելոյ լինի սակաւ, յորժամ ոք սուտ խօսի. և ըստ այսմ կամի ասել. ամբարիշտք ստեցին՝ յասել իւրեանց, թէ ահ ոչ կարէ առնել զայս ինչ կամ զայն. բայց այնչափ է զօրութիւն քո ի գործելոյդ զմեծամեծս, զի ի տեսանելն զայնս՝ յայտնի խմացին՝ թէ ստեցին, կամ սուտ խօսեցան ընդդէմ անբասիր զօրութեանդ քո։

Ի սա այսմ առեալ զայս բան՝ կարէ այլազգ և մեհենիլ հայհոյել յանհաւանս. որպէս թէ եղեալ էր, թէ նահապետք քո, որպիսի են ամբարիշտք և անհաւատք, տեսեալ զզօրութիւնս քո՝ թէպէտ և առաքի մարդկան ասացին առ Հաճոյս նոցա թէ ահ է՝ որ առնէ այսպիսս ևս, բայց ստեցին քեզ. զի ոչ հաւատացին այնպիսս որպէս ասէին։

Լուր ընդհակառակն այսր, թէ նահապետք ետուն մերոյ ստեղծն նմա. զի զոր յայտնի տեսին, ստեցին. իսկ զի սուտ ցուցին զաբանելիս նորա, և սուտ վկայութիւն դատապարտեցին զնա. սուտ ցուցին նաև զարուեստն նորին։ Վասն ձեզ եղեալ ստեցին նմա յասելն զնմանէ՝ յորժամ կախեալ կայր զխաչն, եթէ որդի է այ՝ իջցէ ի խաչէ. և զի քո ի զօրութիւնէ իւրմէ, այսինքն ի յառնելն՝ յայտնի եցոյց՝ թէ ինքն է որդի այ, այնու եցոյց թէ ստեցին նոքա յասելն զայն։

Այսքան է զայս բան իբր կրաւորաբար ևս առնուլ. որպէս թէ եղեալ էր. ամբարիշտք տեսեալ զնա խախտամածէն քոյ՝ թէպէտ և ոչ հաւատան քեզ, բայց հայեցեալ ի զօրութիւն քո և ի բազում սքանչելիս քո՝ ծանիցեն՝ թէ ստեալ են, այսինքն խաբեցեալ էն. որով և ասացեն. * ուրեմն միւոքեցաք ի Հանապարհէ Ճշմարտութեանն։ (խնամա՛. ե. 6։)

Լամբ՛. և և կրաւորաբար առնու զայս բան, և վերաձէ առ ատանայ՝ յասելն, թէ նա ի բազում զօրութեանցն քոյ սուտ երևեցաւ, և խաբեբայ ցուցաւ առաքի այ։ Լուր յայտ արարեալ մարգարէին զայն զոր ասէին և առնէին Հնչամիք ներ, այսինքն ամբարիշտք ի ստել նոցա ընդդէմ ներ, յայտ առնէ այժմ և զայն՝ զոր ոչնչն առնէր՝ ոչ ստօղքն ի պաշտել նոցա զնա, և ի յօրհնել. ամին իբր ասէ։

ՃԻ. Ընդ ինքն երիւր երիւրապետքն տէր. սաղմս ասացին տէր. և սաղմս ասացին անուան Տեառն.

Օ սոյն եգ և ի վերոյ ի համարն ւ. և ասա այլով բանիւ կրկնի՝ ի գէմն ոչ խօսելով յասելն։

Ընդ ինքն երիւր երիւրապետքն տէր. Կամի ասել. որով հետև խնամք տեսչութիւնք քո, և գութ մարդասիրութիւնք քո սփռեալ է ընդ ամենայն երկիր, ամենեքին որք ի նոյն վայելեն, ծանիցեն զքեզ՝ ած Հմայիրիա, և երկիրպագցեն քեզ. և զքեզ միայն պաշտեսցեն. որով գուշակի տարածուիլն Հմայիրիա ընդ ամենայն երկիր աւետարանեալն քոյ։

Այս և սովին առաջի դնի Տանգամանք Տնդհերձելոյ յարութեանն՝ յորում ամենեքին երկիրպագցեն նմն մեծոյ, և ծանիցեն՝ թէ նա է յամենայնի ած օրհնեալ։ Իսկ թէ ի պաշտել ամենեցուն զնած՝ զիարդ ունելին փառաւորել զնա՝ յայտ առնէ ասելով.

Սաղմս ասացին տէր. և սաղմս ասացին անուան Տեառն. Ի յսինքն սաղմոսիւք կամ Տոգևոր երգոք օրհնեցին զքեզ. և ի յիշել զանուն քո՝ զնոյն օրհնութիւնք տացին և անուան քում. Օ այսոսիկ ասէ մարգարէն Տայելով յայն՝ զոր ասաց զՔրիստոսէ նմն. իբր թէ ասէր. Քեզնմիք նմն ասելով նմա անարժան գտան պաշտելոյ զնա. իսկ որք Տաճախեն և Տաւանին նմա, երկիրք պագցեն նմա, և պաշտեսցեն զնա, սքանչացեալ ընդ գործս նորա։ Ոչ զի առ այս ոիտոյ է խոնարհ զինուիլն գործոցն ոյ, ի սոյն Տրաւիրէ զամենեսեան ասելով։

ՃԻ. Գնայք և տեսէք զգործս ած. որպես չքի ահիւն են խորհրդովք՝ Տան գամենայն երկրաւոր մարդկան։

Ոչառս գործք՝ նշանակէ ասա նախ զարարածս ոյ՝ ոչ նիւթապէս, այլ աստուածապէս, այսինքն ոչ ըստ այնմ՝ զի են, այլ ըստ այնմ զի իմաստութիւնն ոյ են, զի բարութիւն նորա են, զի ամենակարողութիւն նորա են ևն. որով և ցուցանէն զիմաստութիւնն ոյ, զամենակարողութիւն նորա, զիշխանութիւն նորա, զգեղեցկութիւն նորա, զբարութիւն նորա, զքաղցրութիւն նորա ևն։ Ուրանզի յայտ իսկ է՝ թէ որ միանգամ

Հայի յարաբաձա ՚այ, և և ՚ի յեռին և ՚ի յանարգ-
բոյս մի միայն՝ տեսանել ՚ի նմա զայս ամենայն, այս-
ինքն զնմանութեանն ՚այ, զամենակարողութիւն Աս-
բա և ն։

Լ՚երկրորդ՝ բառդ գործք՝ նշանակէ առաջ զանգենին
նախանշանութեան ՚այ. իբր այն թէ զի՞ է՝ զի զայս
ոք բարձրացուցանէ՝ և զայն խոնարհ առնէ. կանգնէ
զայս թագաւորութեան, և ցրուէ զայն ահրութեան.
այսմ առաջնորդէ ՚ի փրկութեան, և վիւռն զայն Թա-
գուհ. սա յաջողէ, և նմա ոչ յաջողէ. այս ոք վազ
մեռանի, և այն ոք ՚ի խորս ծերութեան. և այլ այս-
պիսի անքննելի գործք նախանշանութեան Աստուա։

Լ՚երկրորդ՝ բառդ գործք՝ նշանակէ առաջ զայն ամե-
նայն՝ զոր արար ՚ած առ իսրայէլացիս ՚ի հանելն զնո-
սա յեգիպտոսէ, որպէս յայտ առնէ ՚ի համարն ՀԵ.
և և զոր արար առ Նոսա յաղատելն զնոսա ՚ի գե-
րութենէ բաբելացւոց։

Յորերորդ՝ բառդ գործք՝ նշանակէ առաջ զփրկագոր-
ծութեան ՚են մերոյ, յաղատել Նորա զմարդիկ ՚ի գաստա-
պարտութենէ անիծիցն։ Լ՚այս յեռին արարք՝ այնպիսի
ինն գործ եղև, զոր նահանջն ՚ած՝ ՚ի միայն համարի յա-
սելն. * գործ ՚ի գործեմ ես յաւուրս ձեր ‖. (ամ-
բակ. ՚ա. ՀԵ)։

* Լ՚հեղ է ասէ լամ՚՚. այս փրկագործութեն, և ոչ վայ-
,, բապար, այլ խորհրդով. զի (թէպէտ) ըստ պարզ
,, քննութեան և զգալի աչացս Հայեցողութեան՝ ոչինչ գոյ
,, ՚ի նա զարմանալի, (որպիսի է) չարչարել, այլա-
,, նել, նախատել, ՚ի խաչ բևեռել, այլ մանաւանդ և
,, գայթակղութեան. այլ յորժամ ոք խորհրդաբար ՚ի
,, նոյնն հայի՝ տեսանի մեծ փրկագործութեն ըստ ա-
,, ռաքելոյ. խօսիմք զո՚՚ խնամատութենէն խորհրդով
,, գծածկեալն ... այսպէս ըստ խորհրդաբար տեսու-
,, թեց ահեղ էն փրկագործութիւնք ՚այ մերոյ ‖։ Լ՚ԶԳ
՚ի տեսութեն ամենայնի այսոցիկ հրաւիրէ մարգարէն
ասելով։

Լ՚երկայ է տեսէք զթութիւն ՚այ։ Լ՚այս եղանակ խօսից՝ է
ձև ինն Հաւատասնականի՝ յորդորիչ առ տեսութիւնն.
ուստի և ՚երկայ ասէլով ոչ ցուցանի զանհնականա-
գոն, այլ զյօժարութիւն և զվաստաքիչն և զհետ լինելն

առ՝ ի տեսանել զգործս նոյ. և այս՝ հայի ի նեղգործ-
ծութենէ կամաց. և եթէ տեղականապէս ևս իմասցի,
ցուցանէ միայն զգալն առ տեսուէ այնց՝ որք են գործք
նոյ, կամ ուր երևին գործք նոյ. (տես զայսմանէ և ի
համարն 15)։

Այնպէս և տեսիլք ասելով՝ ոչ ցուցանէ տիրապէս
զտեսութենէ աչաց, զի այս անբանից ևս է. այլ զտե-
սութիւն մտաց՝ որ է հայիլ մտօք ի գործս նոյ, զի այս-
պիսի տեսութենէ պատճառէ զզարմացումն ի միտս, և
զերկիւղ ի կամն վասն ահեղ և սքանչելի գոլոյ գոր-
ծոցն այնոցիկ. զոր և յայտ առնէ յաջորդ բանիւնն
ասելով։

Իբրէս զի տեղ են խորհրդով՝ ոչ ասի զանձնայն տեղիսն։
Կատաղ որպէս զի՝ բան որում ասացաւք ի համարն. 2.
գնի իբր զարմացական. որով յայտ առնէ մարդարէն
ոչ այնչափ զզարմանալ իւր, որչափ զզարմանալի լի-
նել գործոցն նոյ՝ վասն ահեղութենէ իւրեանց. որպէս
թէ եղեալ էր. ոչ թէ զիարդ զարմանալի են գործք
քո և զիարդ ահեղ են խորհրդովք և թէպէտ յերբ
ոչ գնի որպէս չէ, բայց քանզի զօրութիւն իմացեալ լինի
այն, վասն այնորիկ եղեալ է ի մերումն և յայլս։

Ահեղ կոչէ զգործս նոյ, զի ո և իցէ գործք նոցա
եթէ ի կարգի բնութենէ, և եթէ արտաքոյ բնութեան,
եթէ ի կարգի նախախնամութենէ և եթէ ի կարգի
գաղտնի խորհրդոց՝ յամենայնի ցուցանեն զահեղու-
թիւն։

Ի կարգի բնութենէ նկատեալ՝ հայեաց միանգամ յընդ-
արձակուն վայրսց, և ի միջոցի ծովու, ի բարձ-
րութենէ լերանց, և ի բազմութենէ գետոց. հայեաց յան-
բաւութենէ կենդանեացն ի ծովու և ի ցամաքի, յօդս
և ի ներքոյ երկրի, ի մեծամեծս և ի փոքունս, յա-
բարս նոցա, և ի հնարս նոցին։ Հայեաց յանհամար
տեսակս անկոց, և ի յաճախութենէ անտառաց, ի ծա-
ղկս և ի պտուղս, հայեաց և ի ներքս երկրի, ի
հանքս հրաշալեղեաց, և ի գոյս ականց, յապրեցուե
նոցա և ի զանազանութենէ նոցին։ Հայեալ ամենայնին
եթէ և ի գործոցուելիս նոցա հայիցիս, յահեղութենէ
նոցին ըմբռնիս. զինչ ինչ գործէ հուրն ի բորբոքիլն
և ի սաստկանալն. ջուրն ի հեղեղանալն և յալեկո-

ծին. Հողն ի չարժինն և ի պատառին, օդն ի չընչին և ի հնչելն. Օ ինչ ապա ի հայելդ ի գործո-ղումս մեծամեծ կենդանեաց, զինչ ապա ի գաղտնի զօրութեան տնկոց ։։ Այսոցանց և ի գործս փայլատականց և մրրկաց, որոտմանց և կայծականց ։։ Այսոցանց և յերկինս յայնչափ բազմութեան աստեղաց՝ յորոց իւրաքանչիւրն հարիւրապատիկ առաւելու մեծութիւ քան զՀողագունտ մեր ։ Այսոցանց և ի սքանչելի ազդեցութեն արեգական, և ի հիանալի շարժմունս աստեղաց և այլն ։

Իսկ այն գործք ՚ի՝ որք արտաքոյ բնութե լինին կամ ի վեր քան զբնութի, որպիսի են գործք աքանչելեաց, ըստ ինքեանն ահեղ են. վասն զի մարդկ զոյով իւրեք ի բնական կարգի՝ յորժամ տեսանեն զգործ ինչ ի վեր քան զբնութե, սոսկան. որպէս տեսանել ի պատմութիւս հրաշագործութեց՝ ոչք աւանդին ի տգիտս և ի յեկեղեցական մատենս ։

Այնպէս ահեղ են և գործք նախախնամութեն ՚ի՝ զորմէ խոսեցաք ի վերոյ ի սկզբան այսր համարոյ. և առաւել և ս ահեղ երևի այս գործ ՚ի՝ հայելով ի փրկութե ոմանց ի ։։ գատապարտութե այլոց, ընդոր սոսկայ և առաքեալն, և չկարելով իւիք հասու լինել, ազաղակէ. * ՚ո՜վ խորք մեծութե և իմաստուե ։։ և գիտութեն ՚ի՝. որպէս զի առանց քննելոյ են դատաստանք նորա, և առանց զննելոյ են ճանապարհք ։։ նորա. զի ո՞վ գիտաց զմիտս տեն, կամ ո՞վ խորհրդա-կից եղե նմա ։։ (Հռոմ՚. ԺԱ. ՝՛՛.) Եթէ կամիս, տես զայս մեծասաներ[illegible] գլուխ բանից առաքելոյն,

Նոյնպէս և զաստեղծորդն ։

Իսկ այսմ և ս ահեղ են այն գործք ՚ի՝ զորս եցոյց նա առ խորայելացիս՝ կարգելով զայնս առ գաղտնի խորհուրդս՝ որք հանդերձեալ էին կատարիլ յիւրում ժամանակի. որպիսի էին և այն ամենայն կարգք աթարողութեց, իբրաւանց, դատաստանաց, և ծէսք զոհից և նուիրանաց, և այլոց իրաց, որք վասն կարգեալ լինելոյ առ նշանակուն մեծամեծ խորհրդոց՝ ասին ահեղք ։ Օ ինչ ապա եթէ հայիցես ի փրկագործուե նեն մերոյ, զորմէ ասացաք ի վերոյ, մանաւանդ ի գործն յայն՝ որ երևեցաւ ի ժամ խաչելուե ։

Օ՜այս ամենայն գործս ՚ի ելեհ օր Տամմատեսչ ը գործս որդւոց մարդկան՝ զինչ այդ եօք էրև իցին նմա այնօրիկ. յերեսաւ և ոչ իսկ երբև ատեաւր տեսանին. ուստի և աստանօր յասէին քան զամենայն որդւոց մարդկան, բառդ Տաճ կամ ըստ երբ ՚ա, ոչ դնի երբ Տամմատական, այլ երբ գերազանցական, կամ երբ յայտնիչ անՏամմատուե. կամ այսպէս առացից՝ այսու բառիւ ոչ յուզանի աստ առաւել ահեղ լինել գործոյն ՚ի քան զգործս որդւոց մարդկան առՏասարակ, այլ յուզանի բառ ամենայնի ահեղ լինել։

Իսկ բառդ խորհրդովք՝ դնի ըստ չորից. ՚ի՝ ըստ պատՃառին, երկրորդ՝ ըստ պատՃառելոյն, երրորդ՝ ըստ վախճանին, չորրորդ՝ ը գնուե. ըստ պատՃառին յուզանի, թե այս ամենայն գործք ՚ի ահեղ էն. վասն զի ՚ած՝ որ է պատՃառ ամենայնի նոցա, և աթար գնացս, մեծամեծ խորհրդովք աթար զամենայն ը անսահման իմաստութե իւրոյ։ Իստ պատՃառելոյն՝ որ մտածի յերեսաւ, յուզանի Թէ մեծամեծ խորհուրդք այսինքն գաղտնիք կան ՚ի գործսն ՚ի. և յամենեսին ՚ի նոսա տեսանի զօրութէն ՚ի և իմաստութէն նորա ը։ Իստ վախճանին՝ յուզանի Թէ այս ամենայն կարգեալ էն առ գերագոյն խորհուրդս՝ զոր դիտէ ած, զի առանց գերագոյն վախճանի ոչինչ գործէ գերագոյն արարօղն։ Իստ գնացուէն յուզանի՝ Թէ օք մանգամ գնանէն զգործս ՚ի, տեսանէն ՚ի նոսա զայնպիսի ինչ՝ որ ՚ի վէր է քան զ և ի իցէ խորհուրդս։

Յայսիսի և այսպէսի խորհրդովք ահեղ էն առ ամենայն գործք ՚ի. և զի յուզցէ Թէ առաւել ահեղ էն քան զոր ասին, զարմացական եղանակաւ խօսի, և ոչ բաղդատական կամ գերազանական բառիւ՝ սաՀլով ահեղագոյն էն, կամ ամենաահեղ էն, այլ դրական բառիւ՝ յասէրն. օրպէս զի ահեղ էն խորհրդովք ը։ Յայլ կամ ՚ի լով փոքՀ ինչ և և տարացոյց ՚ի մէջ բերել, զերկուս ՚ի աքանչելի գործոց նորա առաջի առնել սաՀլով։

Ե. Ա դաբթոյդ ղծուէ ի ցամաք. և ընդ գետս անդին ոտանաւորս։

Վանի ահեղ եղև այն գործ՝ զոր եցոյց Աստ առ իսրայէլացիս ի ձեռն Մովսէսի ի պատառել զծովն կարմիր, և ի ձեռն Յեսուայ ի նահանջել զգետն Յորդանան, վկայեցին հեթանոսք բնակեալք յայն կողմն Յորդանանու, զահի հարեալք յայսպիսի զօրուէ. որպէս ասաց ոմանք. * անկաւ ահ ձեր ի վերայ մեր. և չին հաշեցան ամենեքին՝ որք բնակեալ էին յերկրին յայսմիկ. քանզի լուաք թէ ցամաքեցոյց Աստ զծովն կարմիր ... և ոչ ևս գոյ չունէր յոտիք ի մէնք ևս։ (Յեսուայ. ե. 9)։ Իսկ և (ի գլ. է.) ասէ թէ * իբրև լուան ամենայն թագաւորք ամորհացւոց՝ որք էին յայնկոյս Յորդանանու առ ծովեզերբն, և թագաւորքն փիւնիկեցւոց՝ որք առ ծովեզերբն, էին ցամաքեցոյց Աստ զջուրս Յորդանան գետ, հաշեցան սիրտք նոցա, և զարհուրեցան ։ Այս ահ յահեղ զուարճ այսոցիկ գործոց Հայեցուլ մարգարէին՝ ասէ։

Ա դաբթոյդ ղծուէ ի ցամաք. և ընդ գետս անդին ոտանաւորս։

Լսեալքն ահ ի հանդէս անդ զօրգիան խրայէլի ազգիս, և յանցուցանէն ընդ ծովն կարմիր, ցամաքեցոյց առաջի նոցա զծովն զայն. որպէս զի որդիքն իսրայէլի հանգստեամբ անցցեն ընդ նա առանց նաւուց և առանց վտանգի. (ելից. ժգ.) Այնպէս և յանցուցանէն զնոսա ընդ յորդանան՝ արար զի ջուրն յորդանանու նահանջեսցի, և գետն յառաջոյ ցամաքեսցի. որպէս զի որդիքն իսրայէլի առանց կամջոց և առանց նաւակաց գնասցեն ոտանաւոր այսմիքն գնասցեն ընդ նա ոտիւք, և անցցեն յայն կողմն (Յեսուայ. գ.)

Օ այս անցս առաջի գնէ մարգարէն՝ ոչ միայն ի ցոյց հաշեզուելոյ գործոցն այլ, այլ և իբրև ի ցոյց և յօրինակ ազատուելոյ իսրայէլացւոց ի գերութենէն բաբելացւոց. իբրև թէ ասել կամելով՝ որպէս սքանչելի եղև ազատիլ հարցն մերոց ի ծառայութենէ եգիպտացւոց անցանելով ընդ յորդանան, նոյնպէս սքանչելի լիցի եղելոյն և մեզ յազատիլ մեր ի գերուէ բաբելացւոց, անցանելով ընդ լերինս և ընդ դաշտս, ընդ գետս և

ընդ հեղեղատս։ Լսատ ասեմ ի գուշակել զայս գաղձ գերբուհեն ասէ. * և եղիցի խոպանել ,, (ի գաղձի անդ) որպէս յաւուրն յորում ել յերկիր ,, ընէն եգիպտացւոց»։ (Եսայ. ԺԹ. 16). և ի նախընթաց համարն ասէ * փլուզիցէ ՚ուր զծուին եգիպտաց ,, ւոց, և արկիցէ զձեռն իւր ի վերայ գետոյն հզաւով ,, սաստկութեանն ևս»։ Տես և ի մարգարէութեանն զաքարիայ. (Ժ. 10),

Յայսմանէ մուծին հրէայք առասպելս ի ձի գիրս եզբատայ. (ԺՁ. 43. 44.) և յայլ գիրս իւրեանց՝ թէ հրէայք գերեալք յայնկոյս եփրատայ՝ անցին աքանչելեօք ընդ այն գետ իբր ընդ ցամաք յերկիրն՝ որ ասի արսարէտ (այսինքն ասորեստան.) և յետ ժամանակաց ոճ վերստին ցամաքեցուցանէր ջուր. և յայնժամ եկեսցեն նոքա ի յայտ, ևս. և յայս միտ մեկնեն ոմանք ի բաբունեաց հրէից զայս քնարան և զյաջորդ սորա. ուր ասի. * անդ ուրախ եղիցուք մեք»։ Լ.ՀԼ Թողեալ զառասպելդ՝ մատիցուք յառաջիկայդ։

Լ.ՀԼաբանէն, յասէլն՝ ՚ուր գաղձոյց զծուին ի ցամաք, ցուցանէ՝ թէ զալէկոծուն հեթանոսութեանէ գաղձոյց ի յանդորրութեանէ ՚ուրպաշտութեան. որով և եմայծ զհեթանոսս յեկեղեցի ՚ուր. որոյ ի մէջ ոմն հարկ էր նոցա անցանել ընդ գետ մկրտուէ իբր ոտանաւորք, որով ցուցանի թէ այս անցուն էր խորհրդաւոր։

Լ.ամբ" զայլ ինն այլաբանական մեկնութեանէ ի մէջ բերէ գերազանց մտաք յասէլն. քո ցամաքեցոյց զծուին յոյսահատուէ, յոր ընկղմին մարդիկ։ * Ծով էր ասէ ,, և յոյսահատութեան ի մէջ երկնային անապատին ,, և երկրաւորս եգիպտոսի. զի ոչ ոք ան ունէր կրօ- ,, կին կենաց. իսկ յորժամ գառն ՚ուշ զենաւ յերկրա- ,, տոյս եգիպտոս, այս ծով ցամաքեցաւ նորա յաւու- ,, թէն. և կերակրեալքն մանկունք նորա արարին ձա- ,, նապարհ ընդ ծով յոյսահատութեանն որպէս ընդ ,, ցամաք, այսինքն ըստ զգալի մահ՝ որպէս ըստ կեանս. ,, և փութացան գՀետ նորա յերկինսաւորն անապատ ,, ... իսկ գետ է որպէս հոգւոյն հնարք, նոյնպէս ,, և ներշնչ խորհուրդքն. ընդ սոյն ընդ զանազան ,, խորհուրդս դիւաց մարմնաւորքն անցին ընդհուն

,, քան զօրացեալք։

Ա Երածաբար այսու ցուցանի Թէ արար Տէր՝ զի մարդկիկ անցեալ ընդ խորութիւն ծովու աշխարհի իբր ընդ ցամաք, և ընդ դետս փորձութենէ՝ կամ ընդ հոսանուտ իբրս անվնաս՝ հասցէն յարքայութիւն երկնից, իբրև ազատեալք ի թշուառութենէ կենցաղոյս. և ուրախ լիցին անդ յաւիտեան. զորմէ խօսի ի յաջորդ համարին ասելով.

Շ. Ա՛ՆՔ ուրախ եղիցուք ի՛ նա, որ փրկեն զմեզ ի նեղութենէ։

Ա՛յս ուրախութիւն զոր յիշէ մարգարէն, իբր հետևութիւն է լուծիլ բաղձանաց ի հասանել առ բաղձացեալն. զոր և յայտ առնէ բառիւք անդ ասելով։ Ա՛նք ուրախ եղիցուք ի՛ նա։ Զերկուս կարէ հայիլ այս բան. մի՝ յԵլս խորհելի ի գերութէ. և ըստ այմ կամի ասել. որպէս ուրախ եղեն հարքն մեր յԵլանելն յԵգիպտոսէ և յանցանելն ընդ յորդանան՝ նոյնպէս և մեք յԵլանել մեր ի բաբելոնէ, և յանցանել ընդ նոյն յորդանան՝ ուրախ լիցուք անդ, այսինքն յԵլանելն անդ, կամ յանցանելն ընդ յորդանան։ Երկրորդ՝ կարէ հայիլ յերկիրն աւետեաց, և կամ ըստ գաղդ՝ի լեառն սիոն. և ըստ այմ կամի ասել. ի հասանել մեզ յերկիրն մեր՝ անդ ուրախ եղիցուք ոչ ի մեզ՝ այլ ի նա, այսինքն յԱ՛ստ. որ է ասել. ուրախասէն մեր լիցի անդ առ Ա՛ստ, և փառս նմա։

Ա՛յսաւանօրիկն, այս բան հայի յերկեղեցի՝ որ. և վերստ ծաւալ յարքայութիւն երկնից. իսկ բարեպատա՛ս ի կատարելութիւն վարուց, զի որք միանդամ ժամանեն յայսոսիկ՝ ուրախ լինիցեն ի Տէր. յերկեղեցւոջ՝ ժառանգուիք հնորհաց. և յարքայութիւն՝ ժառանգուիք փառս. իսկ ի կատարելութիւն վարուց՝ ժառանգուիք խաղաղութիւն հոգւոյ։ Կամելով ապա յայտ առնել մարգարէին, Թէ այս պատահեաց նոցա յամենակալ զօրութէն նոյ. և Թէ ուրախասէն նոցա ինալոց է անշարժ հաստատեալ յԱ՛ստ, յարէ գնովի, և ասէ.

Որ փրկեն զմեզ ի նեղութենէ։ Ա՛յսինքն նա՝ որ տիրէ ի վերայ ամենայնի, այսինքն ի վերայ մեր և ի վերայ օտար ազգաց, ի վերայ Թագաւորութեանց և Տէրութեանց, ի վերայ ծովու և ցամաքի ևն, նա յաջո-

դէ մեզ զդարձ գերուեն մերոյ, և ուրախ առնէ զմեզ. և այս ոչ եթէ օտար զօրութիւք, կամ ստացական ինչ իշխանութիւք, այլ զօրութիւք իւրով։

Յակ բառդ յաւելենդ ըստ մերումն և ըստ երբ" ալամ կրկնակի կարէ առնել լմնել ասա. մի՛ իբր անուն գոյական փոխանակ զանազան աշխարհաց՝ կամ փոխանակ այսմ աշխարհի և հանդերձելոցն և փոխանակ դարուց. և ըստ այսմ դնի իբր ի տրական հոլովն. որպես է՝ ի քաղդ". յոր միա կամի ասել. ած տիրէ զօրութիւք իւրով աստեացս և հանդերձելոցն, կամ այսմ աշխարհի, և աշխարհին որ՝ ի հեանման յաւիտենից. կամ ըստ լամբ" երկնային զօրուեց և բանակացն հրեշտակաց։

Յերկրորդ՝ իբր մակբայ՝ փոխանակ բառիդ յաւիտեան. որպէս դնի յայլ ժարգ". և ըստ այսմ կամի ասել. ած տիրէ ամենայնի յաւիտեանս յաւիտենից։ Ո՛չ այս եգեալ մարգարէին՝ ի հասարակի վասն տիրելոյն ոչ ամենայնի, այսմ հետևեցուցանել թէ զիարդ տիրէ և թէ ամենայնց իւրոց՝ և հեթանոսաց ըստ մերմէ՛ելոյ զնոսա, և և ըստ խնամելոյ. վասն որոյ ասէ։

Ի. Ա՛յլ նորա՝ ի հեթանոս հային. ոչ գառնացուսին զնա՝ ի բարձրացն չանչինս իւրեանց։

Ը. Ո՛րհնեցէք հեթանոս զած մեր. լուիլ արարէք ձայն օրհնութեանն նորա։

Իբրև ազդարարուի ինչ է այս ասացուած առ այնոսիկ՝ որք հակառակ կան բանին ոչ. և զայս ազդարարուի ուղղէ առ հեթանոսս ասելով։

Ա՛յլ նորա՝ ի հեթանոս հային։ Այսքան ոճն խմացեալ լինի առնելութեն նորա կամ նախախնամութեն նորին, կամ խորհուրդ և գաւտղուն՝ ըստ որում համարի գերգ վարդապետ. (մեկն. եսայ. ՟ի.) * այլք ոճն ասէ զյա ,, ռաջհայեցումն զնի և զխորհուրդս նորա և զիւրա ,, քանչիւր իրաց գաւտղութեն՝՛՛. յոր միա կամի ասել. ած ազգք հեթանոսաց, տեսջիք, և զդող կացջիք, զի նա՝ որ տիրէ զօրութիւք իւրով, հայի՛ ի հեթանոս, տեսանէ՛ թէ զինչ պատուն, զինչ առնուն, և զիարդ չարչարեն զժողովուրդ իւր. և որպէս տեսանէ, այն-

պէս դատէ, և ոչ խնայէ. և որք արհամարհէն զբան նորա, արհամարհէ և նա զնոսա. և բարկութիւբ վրայ ընդ նոսա, մինչև յոչընչ զորել նոցա. և առ այս յա-
րէ ցնծալ, և ասէ։

Ընդ գառնացուցին զնա՝ ի բաշխուացին չանչինս խրբանց։ Լ՚այս բան ոչ հայի որոշակի առ հեթանոսս, այլ առ այնոսիկ ամենեսին՝ որք եղեն թշնամի ոչ, և ստեղին նմա. ըստ որում յիշեաց ի համարն. 2. զի անգ-
առաց. ստեղին քեզ թշնամիք քո՝ ի բազում զորութիբ քում. իսկ ասա ասէ. գառնացուցին զնա, որ տիրէ զորութիբ իւրոյ։

Ասէ գառնացուցանել զնա է բարկացուցանել զնա. կամ այնպէս առնել, զի նա ոչ ևս ցուցցէ զինքն քաղցր՝ այլ զայրացեալ։ Լ՚որդ թշնամիք նոն թէպէտև վասն գասանելոյ զօգուտ անձանց իւրեանց գառնա-
ցուցանեն զնա, բայց նովքին ոչ ժամանեն յայն՝ զոր գիտեն. այն իրի ասէ. Ի բաշխուացին չանչինս խրբանց։ Ուրով երկու ինչ խնդեալ լինի. մի՝ թէ այնպիսիք մի կարացեն հասանել յայն՝ զոր խորհէին գասանել՝ ի շահ անձանց իւրեանց. և մի և՝ թէ այնպիսիք մի կարացեն պանծալ և հզաբռանալ՝ թէ ահա արարաք զորութիբ մերով զայս ինչ կամ զայն. ահա զօրացաք, ահա յաղթեցաք, ևն։

Նոյնս այս յայտնի առնէ՝ ի տիրասգան հրէայս՝ որք գառնացուցին զքաղքացացին իւրեանց, և ոչ կարա-
ցին հասանել այնմ, զոր կամէին. և ոչ իւրք կարացին բարձրանալ չանչինս իւրեանց, այլ մանաւանդ զին-
ջան և թշուառացան. իսկ հեթանոսք որք սիրով ընկալան զբան նոն, և քաղքացան նոցա, բարձրացան և փառաւորեցան։ Ոմն որոյ և մարգարէն Հայելով յայսոսիկ բարեբասուն նոցա՝ յորդորէ զնոսա յօրհնութիւն՝ յօրինակ բերելով զմանաւանդ խնամոն նոցա զոր եցոյց առ իսրայէլ, և ասէ։

Ընծայեցէք Աստուծոյ զքն Դէր. լսեցէք արարչէ զերկնի եւ զերկիր. Ասէ Տէր։ Կամի ասել՝ ով ազգք հեթանոսաց տե-
սանել զինամն այ՝ ի վերայ մեր յաղատել նորա զմեզ՝ ի գերութիբէ, ծանեարուք այնու թէ նա է ած հզօր, և կենդանի, և միաձայն ընդ մեզ օրհնեցէք զնա. քան-
զի և դուք որք եք ազգք մերժեալք յայ, տեսանելոց

էք զամենամեծ խնամն ոյ. զի հանդերձեալ էք ազատել զնա ի գերութենէ սատանային, և դառնալ առաջ Չլմարիտ, և լինել ժողովուրդ նորա փոխանակ իսրայէլի. վասն որոյ օրհնեցէ՛ք զնա՝ որ է աջ մեր, գիտելով թէ լինելոց է և աջ ձեր. և լսելի արարէք զձայն օրհնութենէ նորա. այսինքն է երգել զօրհնութիւն նորա. այլ հրաժարեցէ՛ք ընդ ամենայն տեղիս սքանչելի փրկութենէ նորա, և զայս փրկութենէ համ ազատութենէ այլով ինչ բանիւ յայտ արարեալ մարգարէին ի ձեռն ազատութենէն իսրայէլի, ասէ:

ԸԹ. Ա՛ն որ եա զանձն էմ՛ի հէանա և ո՛չ եա զողութենէ ոտէց էմոց:

Ա՛ահու նմանի գերութենին, և գերեզմանի հանգիստանայ տեղին գերութենէ. վասն որոյ և ազատութենին ի գերութենէ նմանի յարութենէ որով լինի դառնալ ի հէանա. որպէս եցոյց եզեկիէլ. (լէ. 11): Յայսպիսի նմանութենէ ակնարկելով մարգարէին՝ խօսի ի դիմաց իսրայէլի՝ և ասէ:

Ա՛ն որ եա զանձն էմ՛ի հէանա: Դառաս անձն նշանակէ աստ զհոգին՝ որ է գլխաւոր մասն մարդոյ. որպէս դնէ յԵբր" և յայլ Թարգ". և զի ըստ Ճարտասանից մասն դնէ փոխանակ բոլորին, աստ և սանձն դնէ փոխանակ բոլորին՝ այսինքն փոխանակ մարդոյ: Ա՛րդ տալ զոք ի հէանս է յարուցանել զնա կամ կենդանացուցանել, և կամ ոչ թողուլ՝ զի մեռցի: Ա՛ւ ըստ այսմ կամի ասել. ես որ ի գերութենէ էի իբրև ի մահու, և կայի ի բաբելոնի, կամ յիշխանութենէ սատանայի իբրև ի գերեզմանի, գտի զողորմութի՛ն քո. զի դարձոյց նա զիս ի գերութենէ. որով գրեթէ յարոյց զիս, և որպէս թէ կենդանացոյց զիս, և ետ զիս ինձ. և յայս իսկ ոչ պակասեցոյց զնոսա մի՛ր ի վերայ իմ ի մահու անդ. իսկ թէ զինչ նման էր այն յայտ առնել ինէ ասելով:

Ա՛յ- ո՛ւ եա զողութենէ ոտէց էմոց: Ա՛յս բան կրկնակի կարէ մեկնիլ. մի՝ ըստ վտանգի կորստեան մարմնոյ. և մի և ա՝ ըստ վտանգի կորստեան հոգւոյ. ըստ առաջնոյն կամի ասել. ի գերիլ մեր ի բաբելոն՝ կամ ի ձեռս սատանայի, ոչ եթող զմեզ ամեզ կորնչիլ անդ իսպառ՝

թալով դողումն ոտից մերոց, այսինքն դողացուցանելով և կործանելով զմեզ ի կորուստ։ Եւ կամ ոչ արար ընդ մեզ այնպես, զի մի կարասցուք դառնալ յերկիր մեր. իբր թէ ոչ լինելով մեզ կարելի գնալ անդ՝ լինի մեզ ունել զոտս մեր դողդոջեալս և անպիտանացեալս. այլ պահեաց զմեզ, և արար՝ զի գնասցուք յաշխարհ մեր։

Ոստ երկրորդին կամի ասել. ոչ եւս մեզ թոյլ գնալ ի Հանապարհ քաջելացւոց այսինքն ի կռապաշտուս Թիւանոցա, այլ ինալ յածպաշտուե մերում անսասան. քանզի որպէս վկայեն գիրք. ե. եզր". գ. 21. և յայլ տեղիս, ի գերուԹե անդ ոչ յարեցան իսրայէլացիք աղգովին ի պաշտօն կռոց, որպիսի էր նոցա սովորուԹի. իսկ Թէ ոմանք զեղծան ի նոյն, այն մասնաւորաց համարի, և ոչ ապգին։

Զորպէսզի այս քան հայի յընտրեալս ՅԱ, զորս ի յաւիտենից նախասահմանեաց ի կեանս. վասն որոյ և իւրաքանչիւր նախասահմանեալ, կարէ ասել օրհնեալ է այն՝ որ եւս զանձն իմ ի կեանս, այսինքն նախասահմանեաց մուծանել զիս ի կեանս յաւիտենական * և ոչ եւս դողուն ոտից իմոց ||. իբր Թէ ոչ եւս ինձ դողալ և կործանիլ ի ձախակողմն՝ այսինքն ի դատապարտուԹի։ Զորդ քանզի զորս միանգամ նախասահմանէ ՅԱծ ի փառս՝ սահմանէ զնոսա միանգամայն և ի բազում փորձս, զայնմանէ և սոսկի մարդարէն ի յաջորդ համարն, ի մէջ բերելով զօգուտ փորձանացն՝ յորս փորձեցան իսրայէլացիք ի գերուԹենէ. վասն որոյ ասէ։

ՃԻ. Փորձեսջես զմեզ ՅԱծ և խնդեսջես. որպէս և խնդէ արծաթ։

Ոստ այլևայլ վախճանի կամ ըստ այլևայլ դիտաւորուԹեաՆ՝ ազգի ազգի օրինակաւ մարԹէ փորձել զոք. մի՝ առ ի ջնասել կամ առ ի կործանել ի չարն՝ առաջի դնելով զփորձուԹիս կամ զառիԹս կործանման. և ըստ այսմ ոչ երբէք փորձէ ՅԱծ զմարդ. յոր միտ ասէ. * մի ոք որ ի փորձուե իցէ՝ առասցէ Թէ „ յԱստ փորձիմ. զի ՅԱծ անփորձ է չարաց. փորձէ նա „ և ոչ ոք. իւրաքանչիւրոք փորձի առ յիւրոց ցան-

„ կուեց ձգեալ և պատրեալ ‖. (յակոբ. ա. 13։)

Երկրորդ՝ լինի փորձել զոք առ ի գիտել՝ թէ արդեօք կարէ՞ նա համբերել, կամ առ ի իմանալ՝ թէ զինչ արդեօք կայցէ ի սիրտ նորա. ևս։ Կամ առ ի ձանաչել՝ թէ հրպիսի՞ կոյ. զորօրինակ յորժամ փորձեմք զասկն ի դունոյն, ի ծանրութէն, և ի ձայնէն. և եթէ սոքիմքք ոչ յայտնեացի՝ հարկանեմք ի փորձաքարն, երբեմն և առ կռանեմք. այսպէս փորձեմք և զմարդ ի կերպարանսայ նմին ի դունոյ. ի շարժուածոյ նմին ի ծանրութէ. և ի խօսից նմին ի ձայնէ, և առաւել և ս ի գործոց՝ հարկանելով ի փորձաքարն, այսինքն համեմատելով ընդ կանոնս վարուց մանաւանդ ընդ վարդապետութիս քոի կենդանի վիմի. երբեմն և ս ներգելով նմին կռանելով։ Ոստ այսմ և ս ոչ զոք փորձէ՝ զի ս զամենայն գիտէ, և ոչ իւիք կարօտի գիտելոյ, զի ամենայն շարժմունք սրտից մարդկան մերկապարանոց կան առաջի նորա. քայց քանզի երբեմն թոյլ տայ նոցա փորձիլ՝ զի փորձեալքն ծանիցեն զինքեանս. յայս միտ կարէ ասիլ զնոյ թէ փորձէ զմարդ։

Երրորդ՝ լինի փորձել զոք առ ի յայտնել նոսին զնոյն զոր գիտէ. որպէս առնէ ոսկերիչն՝ յորժամ գիտելով զազնութիւն ոսկւոյն՝ մատուցանէ ի փորձաքարն. որով ցուցանէ այլոց զազնութիւն նորին։ Եւ կամ դարձեալ որպէս ի վաճառել ուրուք զանօթ ինչ՝ գիտելով թէ անարատ է և անբծող՝ հարկանէ զայն մատամբ, որով յայտ առնէ զնոսին զանբծողութիւն նորա՝ զոր գիտէ։ Այս միտ ասի զնոյ փորձել զմարդ նեղութիք, որպէս արար ընդ Յովբ. զոր իբրև եհար մատամբն՝ եհան նա ձայն ամբծող՝ ասելով եղիցի անուն տեն օրհնեալ ևս։ Այնպէս արար և ընդ աբրահամ և ընդ այլ բազում ծառայս իւր. յոր միտ ասաց Մովսէս. * քաջալերեցարուք. զի վասն փորձելոյ զձեզ եկն առ ձեզ տէր ‖. (ելից. ե. 20։)

Չորրորդ՝ լինի փորձել զոք առ ի զօրացուցանել և հաստատել, որպէս բրուտն փորձէ զանօթս ի թովելն՝ ոչ զի անպիտանասցի այլ զի թրծեսցի, և այնու եփեսցի, զօրասցի և հաստատեսցի. ըստ այսմ ահա հաստրակօրէն փորձէ տէր զմարդ. և իբր ի բազում

այսր աղաչաւ Թոյլ տայ փորձուէց գալ՚ի վերայ ծա-
ռայից իւրոց. յոր միտ առ սիրաք (իէ. 6.) * զանօթ
,, բրտի Թրծէ հնոց. և զմարդ արդար՝ փորձուԹի
տառապանաց ॥։

Ինպետրոդ՝ լինի փորձել զոք՝ առ՚ի գտեալ. որպէս
ոսկերչին փորձէ զոսկի՚ի մէջ հրոյ, ոչ զի անշքացի,
այլ զի գտեսցի. ըստ այսմ և բազում անգամ փորձէ
ած զծառայս իւր՚ի ձեռն սկսպէս նեղուԹենց. յոր
միտ առ լմնաստուհն, * որպէս զոսկի՚ի բոլս քննեաց
,, զնոսա ॥. (իմաստ. գ. 6։) Եւ գարձեալ Թէ.
* որպէս փորձի՚ի բոլս արծաԹ և ոսկի, նոյնպէս
,, ընտրէ զսիրտս ած ॥. (առակ. ժէ. 3։) Եւ զա-
քարիա մարգարէ առ՚ի բերանոյ ՚այ. * ջեռուցից
,, զնոսա՝ որպէս ջեռնու արծաԹ. և փորձեցից զնո-
,, սա որպէս փորձի ոսկի ॥. (զաքար. ժգ. 9)։ Եւ
եսայի առ. * եփեցից զքեզ միանգամ՚ի մաքրել զդիրտ
,, քո. և բարձից զամենայն անարգն՝ որ՚ի քեզ ॥.
(եսայ. ա. 25)։ Ա.յս եղանակ փորձելոյ նոյնանայ
ընդ նախընԹացին. յիմիք իմիք առարբերեալ ըստ պա-
րագայից լինի։

Պետրոդ՝ լինի փորձել զոք առ՚ի մարզել և՚ի
վարժել. որպէս արար ած ընտրեալ իսրայէլացիս ձեռամբ
յեսուայ առ ժամանակօք դատաւորաց (դատ. գ. 1։)
Յայսմ մարզուԹենէ երբեմն Թոյլատուաւք և այս փորձէ
ած, ոչ զի անկոյր որ փորձի, այլ զի առաւել զօրաց-
ցի և զարդասցի։ Տեսանեմք զի մայրն կամ դայեակն՝
՚ի վարժել զմանուկն՚ի քայլս՝ երբեմն փոքր ի՛ հե-
ռանայ և Թողու զնա յինքեան՝ ոչ զի անկցի, այլ զի
զօրասցի. և մանուկն ջանայ քայլափոխ լինել առ՚ի
հասանել՚ի մայրն և եԹէ սկսանիցի գլորիլ՝ ձեռն
կարկառէ նմա մայրն. ըստ սմին վարի երբեմն ած ընդ
և ած՚ի փորձել. (ովս. ժա. 3։)

ԱօԹնեցորդ՝ լինի փորձել զոք յօգուտ փորձեցելոյն.
և ընդհանրապէս խօսելով, ած յամենայնի և միշտ ըստ
սմին փորձէ զմարդ. և յայս իսկ առաքէ զփորձուիս,
զի բարւոք լիցի մեզ, Թէպէտ մեզ ծանր Թուեսցին։ Ա-
պա փորձուԹենց՚ի վերայ մեր՝ երևի մեզ ձմլիլ՚ի
նոցունց, բայց նոքիմբք զօրաւորս և փառաւորս առ-
նէ զմեզ ած։ Սակերչին առեալ՚ի ձեռս զպողպա-

տեայ փայլուն գործին (զոր կոչեն մասխալայ) չիւն նուաւ զոսկին և փայլեցուցանէ՝ թէ՛ և երևիցի ձմլել զնոյն . սոյնպէս և ամբ փորձութիք փայլեցուցանէ զմեզ : Փորձութիք որք գան ՚ի վերայ մեր ՚ի հրամանէն ոյ նմանին կռանող . որով հարկանէ ամբ զծառայս իւր՝ առ ՚ի ճևացուցանել զնոսա անօթ պատուական , և հաստատուն ևս գործել . զի յայտ է թէ կռանօք ոչ միայն ճևանայ երկաթն , այլ և արճնդանայ : Երկաթեայ կնքոյ ևս նմանին փորձութիք , (այն է սիկկէ) որով զրեթէ չնչէ ամբ ծանրութիք ճեռին զմարդ՝ առ ՚ի տպաւորել ՚ի նմա զկատարեալ թէ պատկերն իւրոյ :

Խարան է փորձութիւն՝ զոր ամբ դնէ ՚ի վերայ վիրաց մերոց . արդ խարանն թէպետև կամի այրել զառոյգն ևս , բայց ամբ յապականեալն միայն հալեցուցանէ առ ՚ի բժշկել : Ախտիր է փորձութիւն , որ ծածկէ և պահէ զհուր սիրոյն ոյ . և զի յերկարիլն չիջանի՝ ոչ թողու ամբ . այլ առնէ * ընդ փորձութեանն և զելս ‖ . (ա . կոր . ժ . 13) : Նման հրոյ գան ՚ի վերայ մեր փորձութիք . այլ զորօրինակ ՚ի հրոյ կակղի մետն , և պնդանայ կաւն , սոյնպէս այր արդար առաքինանայ փորձութիք , իսկ մեղաւորն խստանայ : Ընծան անփորձ և անարդ ՚ի հուր արկեալ սևանայ . իսկ փորձն և ազնիւն սպիտականայ : Պաքէն երկոքին աւազակք մատնեցան ՚ի հուր տանջանաց խաչի . մին սպիտակացաւ և միւսն սևացաւ . մին ողկոյզեալ փայլեցաւ , և միւսն հանգոյն յարդի այրեցաւ :

Հուր է փորձութիւն . որ թեթևն է՝ յերեսս լուղի , ծանրն ՚ի խորս ընկղմի . լուղն ՚ի վերոյ ծնայ , քարն ՚ի վայր իջանէ : Արդիքն Իսրայէլի անշնաս անցին ընդ ծովն կարմիր . իսկ եգիպտացիք ընկղմեցան :

Ոսկի արդարոս ածեն փորձութիք . այլ որչափ ածեն , այնչափ բարձրացուցանեն զհոգին . գրի (՚ի ծնն . է . 17 .) թէ * բազմացաւ ջուրն և վերացոյց զտապանն ‖ . իսկ այլք ընկղմեցան : Այնպէս ՚ի բազմանալ ջուրց փորձութեաց՝ բարձրանան արդարք յառաքինութիս : Արճափ նուաճէին եգիպտացիք զիսրայէլացիս , այնչափ աճէին նոքա : Արճափ յատի որթ բարւոյ՝ այնչափ աճէ

և առաւել և ա պտղաբեր լինի. առ որ հայելով ասաց
քս. * ամենայն ուռ որ բերէ զպտուղ՝ սրբէ զնա
(հայր իմ, այսինքն յատէ զնա. որ է պուտամիշ
ընել). զի առաւել և պտղաբեր լցցի ‖. (յովհ.
ժե. 2)։ Ալ իրաքոյժն հատանէ և պատառէ զվէրան
սուր գործեաւ՝ զի ապաքինեսցէ. բժիշկն տայ դեղ
դառն՝ զի առողջացուսցէ։

Ա.էկոծութիք զնասեն բաղմաց, բայց օգուտ և
ընծայեն ոմանց։ Խոնաք դիզեալք ի վերայ ծովու ի
ժամանակի հանդարտութե՝ ալէկոծութե ի ցամաք
անկանին. սոյնպէս և խորհուրդք մարդոյ յոչ փորձելն
սկսանին դիզել ի վերայ ծովու ախտից իակ. ի գալ
փորձութեց՝ դիմեն ի բարին։ Ա.շմարտութիք ի
յառնել վիճաբանութեց՝ առաւել և սայծառանան,
և հաստատին։ Ա.թէ ընդդէմ չշմարիտ կարծեաց
քոց հակառակեսցի ոք, պէտէս պատճառս գտանես
ի պատասխանել. որով և առաւել հաստատիս ի
նոյն. սոյնպէս ի զօրանալ փորձութեց ընդդէմ
առաքինութեց քոց՝ հնարս խնդրելով ի վանել զնո-
սին՝ առաւել հաստատիս ի նոսին։ Ա. փորձել ոչն
բնեդիկտոսի, և Թովմայի ապուէնացւոյ՝ հաստատե-
ցան յողջախոհութե, մին ընդ փուշ Թաւալելով և
միւսն խանձողիւ վարելով։ Ա.յն փորձութիք՝ որք
կամէին տիրել նոցա, եղեն գերիք նոցին. * և եղե-
ցին գերիք գերեվարք նոցա, և անկցին ի ծառայու-
Թե՝ որք տիրէին նոցա ‖. եսայ. ժէ. 2։ Ա. կամիլ
փորձութեց յափշտակել զնոսա՝ յափշտակեցան և
կորեան։ Ա.ոչեաց կորիւն առիւծու ի վերայ սամի-
սոնի. և սամիսոն պատառեաց զնա, և յետոյ եգիտ
մեղր ի բերան նորա. (դատ. ժէ. 5 — 9։)

Ջանգոյն քարանց ԹօԹափին ի վերայ մեր փորձու-
Թիք, ի դիւաց, ի մարդկանէ և ի մարմնոյ, ի
ծածկել և ի կորուսանել զմեզ. այլ որ հաճելոյ՝
պահակ կացմէ ի նոցունց նման նախաւկային. * երա-
„ նելոյ է այր՝ որ համբերիցէ փորձանաց, զի եթէ
„ ընտիր ևս գտանիցի՝ առցէ զպսակն կենաց ‖.
(յակ. ա. 12)։

Յայսմ ամենայնի որպէս տկարութիւն բնութե մերոյ
և պակասաւորութե մեր ընդդիմանայ, և տրանջայ

ևս , սոյնպէս առաքինութեանն համբերութեանն օգնեմ ի հասիլ : Աղօթեմ պակասաւոր արկեալ ի պաղչեղ եփեալ (այսինքն ի շատ) փոխանակ սպիտականալոյ մեծագնի . եթէ արկցես զաղ ի պաղչէդն՝ սպիտականայ . աղ է համբերութիւն , և մաքուռ արծաթ պակասաւոր . եթէ մտցէ այս աղ ի պաղչեղ փորձութեանց և նեղութեանց՝ սպիտականայ մարդ և առաքինանայ , մաքրի և փայլի : Ի պակասիլ այսր՝ հասանէ երբեմն յօդնութիւն ողորմութենն ՅԻ , և տայ մարդոյ տանիլ փորձութեանց և հասիլ : Այսու ամենայն հայելով մարգարէին՝ ասէ ,

Փորձեցէր զիս Աստուած . և տնկեցէր , որպէս և տնկի արծաթ . Այսու բան գնեզութենան զորս կրեին խորայէլացիք , ևս և զի և իցէ փորձութիւն , նմանութեամբ մարդ առնէ սատակութիւն հոգոյ՝ որ ի բովս արծաթոյ , կամ մանաւանդ հոգոյ հնոցի . որպիսի էր և նեզութենին՝ զոր կրեցին յեգիպտոս . յոր միտ ասէր մովսէս . * եհան զձեզ յերկաթեղէնէ հնոցէն յեգիպտոսէ ։ (Ձ . օրէնս . Դ . 20 .) կամ որպէս գրի (ի Ձ . Թագ . Ը . 51 .) * ի միջոց երկաթոյն հալոցաց ։ Վասն զի ըստ գրելոյ մերոյ այժմ , որպէս սատակութիւն հնոյ զոտ զերկաթ և զարծաթ , և ծախէ զաղտս և զժանգ , սոյնպէս և սատակութիւն նեղութեանց և փորձութեանց մաքրէ զմարդն՝ ծախելով զախտս նորա ։

Այլ ըստ այսմ նմանութեան կամի ասել . զորօրինակ որ փորձէ և զոտ զարծաթ , թողու զոչն մնալ ի բովս որչափ պիտոյն իցէ՝ մինչև հասցէ ի կատարեալ զտութիւն , սոյնպէս և դուն՝ արկեր զմեզ ի նեղութիւնս զերութիւն բաբելացւոց , և թողեր մնալ անդ մինչև ի զգաստանալ մեր և ի զղջալ ապաշխարութիւն , Այլ առ ի լսոյ հաստատութիւն ասացելոցս՝ յարէ զկնի և ասէ ,

Այս տնկեցեր , որպէս տնկի արծաթ . Աղաչեմ եւ զհետ լինել խիթք մեզ մոխոհութիւն կամ հարցմանէ՝ առ ի հասու լինելոյ թէ զինչ իցէ . յայտնեալ նաև զհետ լինելն խիթք գործով ի տեղեկանալ փոխաբերութիւն ինն քննել ասէ . որ է փորձել . և այս հայի յերրորդ տեսակ փորձելոյ ըստ ասելոյ մերոյ ի վերոյ . և զի որ զտէ զարծաթ ի բովս՝ զհետ լինի գտանելոյ զաղ-

նուսելնէ պատուականութեանէ նորա՝ յայսմանէ պղտով
ինն փոխաբերութեանէ քննել սահ և այն։ և յայս միտ
դնի ասա այս բառ։ որպէս յայտ է յերբ" և յայլ
Թագդ". որով յուցանի՝ թէ որպէս բռնաբարեալ արկա-
նելով զաբծաթ ՚ի բռնս զանէն զայն, սոյնպէս և ած
էարկ զնոսայլացիս ՚ի բռնս նեղութեանէ, ընդ որս և
զբաղում հաւատաւորիմ ծառայս իւր, ոչ զի ապակա-
նեսցին, այլ զի զանեցին և սրբեսցին։ և կամ շար-
ժեացին սիրաք նոցա, յիշել՝ թէ յորպիսի վիճակէ յոր
Թշուառութենէ անկան, և այսու զգաստացեալ խոնդ-
բեսցեն զինքն՝ ոչ զի ինքն կարօտ էր նոցա, այլ զի
նոքա կարօտ էին նմա առ ՚ի գտանել զաւարին իւր-
եանց։

Ա. յսպիսի ինչ առնէ քաղցում անգամ և առ ամպա-
բիշտս՝ առ ՚ի մաքրել, և առ յուսացեալս՝ առ ՚ի
զաթեռուցանել. յոր միտ ասէ գիւորգ վարդապետ ՚ի
մեկն. եսայ. գլ. ՚ա. * որ ինչ բռնքն ոսկերչին էն,
և պատիճքն՝ ծուլացելոց ‖։

Յորհդաբար՝ սոյն այս բան հայի ՚ի մարդկայինս
քնութենէ առեղծեալ ՚ի պատիեր ոչ իբրև զաբծաթ և
զոսկի. զոր յետ խանգարելոյն եդ ած ՚ի բռնս նեղու-
Թենց ՚ի զտել և ՚ի նորոգել։ Հայի դարձեալ և յե-
կեղեցի որ, զոր ՚ի սկզբանէ անտի զտեաց ՚ի բռնս
հալածանաց, ոչ զի սրբեսցի, այլ զի յանսրբոց զտես-
ցի, և որ պահեսցի։ Ո յսպիսի հալածանս և զնե-
զուԹիս այլով ինն նմանուԹիւ ևս առաջի առնի մար-
գարէն, և ասէ։

ԺՈՒ. Լքե՛ղ ղեղ յորթ՝ այն. եբէր նեղութի ՚ի ինիոնս
դը. և անցո՛ղք ճանապարհի ՚ի վերոյ քաղաքդ,
Ար ըմբռնի յորդայիւ՝ հանդ իսատ ոչ ունի, այլ անդա-
դար ջանայ հնարս գտանել ազատուԹե. սոյնպէս և
խորհրդեացիք ըմբռնեալ ՚ի նեղութիս իբրև յորդ-
գայի՝ ջանային հնարս գտանել առ ՚ի ազատիլ ան-
տի։ Ա՛ղ զի ոչ գոյր նոցա այլ ինչ հնար՝ բայց եԹէ
դառնալ առ ած և աղաչել զնա, և ուխտս դնել ընդ
նմա, ՚ի նոյն ձեռն արկին։ և ահա այն խակ էր զոր
դիտէր ած, և յայն խակ մանկանց գնոսա ՚ի գերու-
Թիւն։ Ո յսոսիկ կամելով մարգարէին յայտ առնել

խօսի ի գէմն տխուրս , և ասէ ։

Ինձոցէք ընել յորժամն ։ Լսեցէք մանեցէք զմէզ ի գերութեն , որպէս մանուին թաւշունք և անասունք յորոգայթ . և որպէս նոքա յորոգայթի անդ չունին գազատութեն , այլ կան իբրև շղթայեալք ի գերութեն , սոյնպէս և մեք ։ Եւ ասէ մարգարէն մանեցեք՝ այլ իջուցեք . առ ի ցուցանել՝ թէ չարաչար մանեցան ի գերութեն , և կային ի խորս գերութեն . և նեղութիք բարձրացեալ էին ի վերայ նոցա . յոր միտ յարէ զկնի և ասէ ։

Աչքիս նեղութիք ի ինձոնս վրա ։ Վնասանց նմանեցուցանէ զնեղութիս գերութեն , առ ի ցուցանել զծանրութեն նոցա . զի հասարակօրէն որք վարին ի գերութեն , մանաւն յաչխատութիս հանգոյց և շինուածոց , ի կրել ջհոզ և զկիր ։ Աչ թէպէտ ոչ պատաս հէցաս խոպանելացուց ի բաբելոն հոզակիր լինել , և բեռնաթաթձ չրջիլ , բայց նեղութեն նոցա իբրև բեռն ծանրացեալ էր ի վերայ թիկանց նոցա . նա զի այն միայն քաւական վիշտ էր նոցա , զի ոչ էին յազատութեն , այլ ի գերութեն ընդ իշխանութեր բարբարոսաց . յոր միտ յարէ զկնի և ասէ ։

Լինոցէք մխրճիկ ի վերոյ գլխոյ մերոյ ։ Կամ ասել . դու էիր ներ մեր , և դու իշխէիր ի վերայ գլխոյ մերոց , իսկ այժմ զմորդիկ բաբելոնի արարեր իշխող ի վերայ մեր ։ Եւ արժան է հղռել , զի մարգարէն ոչ ասէ , ի վերայ մեր , այլ ի վերայ գլխոյ մերոց , և այս՝ թէպէտ հասարակաց զոյց է , զոր և ասմ՛ք վարեն , բայց սովին նշանակի իսպառ նուաճելն . զի որովհետև մարդս չունի գերագոյն քան զղլուխ իւր , եթէ զայնմանէ ևս ասիցի տիրել ընդ այլովք , այնու ցուցանի ըստ ամենայնի և իսպառ տիրել և իշխել նորա ։

Վասնեալ ոչ ասէ՝ եդեր՝ այլ անցուցեր . որով նոյն ուիս նշանակի իսպառ տիրելն . զի առելի ինչ ցուցա նէ անցուցանելն ի գլուխ՝ քան դնելն ի գլուխ . զի այն հաստատագոյն է քան զայս ։

Լքժան է առնանել և զայս , զի յայս համաբ այնպէս նկատաբգել մարգարէն զձշուտաւութէն իսրայէլացւոց , և զաշխատալի վիճակ մարդկային բնութէն ի գերուե

անդ, մինչև յամենայն կողմանց պատրաստել նոցա. ձեռք և ոտք յօրոգայթս, թիկունք՝ ի նեղութիւն, և գլուխ՝ ի հարստահարութիւն։ Հայոցին յետին թշուառութիւնք գոլով՝ այլ սաստ նոցա ածէ յօրինակ այցելուէ մարգկային ազգի. և ես՝ ան զգաստութեան հանդուցանեմ։

Յարմարական մեկնութիւն այս բան կարէ հայել՝ ի քահանայս. որոց յանձն արարեալ է ած զգուշութիւնն. և որպէս թէ անցուցեալ է՝ ի վերայ գլխոց նոցա. մինչև զարիւն կորուսելոց՝ ի նոցանէ՝ ի քահանայից խնդրել։ Ո՞յսոսիկ եգեալ խօսի և զգաստութիւն ասելով։

ԺԶ. Ա Նդառ ես ընդ հոսս և ընդ ջուր, և հանիր զնեղ ի հանգիստ։

Ի փրկութենէ երկու ինչ առաւանի, մի այն՝ որ ասի յորմէ. և միւս այն՝ որ ասի յոր. այսինքն է, այն՝ յորմէ լինի զերծանիլ. և այն՝ յոր լինի հասանիլ. երկրին այսոքիկ մեծ երևեցան յիսրայէլացիս. զի յորմէ զերծան՝ էր նեղութենէ անչնաքին. իսկ յոր ժամանեցին՝ հանգիստ ի քարին։ Ա.ամենայն պատճառ ինքեանք եղեն՝ այսինքն պատճառ կրելոյ զնեղութենէ. իսկ երկրորդին պատճառ՝ ած եղև. ամեն իրի զերկրորդն ուղղակի՝ այ տայ. իսկ զառաջինն ինքեանց։ Ա.ալոյ և յառաջինն անդ մտածելի է երկուքինչ. այսինքն մտանել՝ նեղութենէ, և համբերել նեղութեան. մտանելն էր ինքեամբք, իսկ համբերելն առաւծով. և առ՝ ի յայտ առնել զայսոսիկ՝ այլով իմն բառիւք վարի, յասելն։

Ա Նդառ ես ընդ հոսս և ընդ ջուր։ Աղաղհեաւև՝ ի վերոյ եգ՝ ի համարն ։ ք. քննեցեր զմեզ որպէս քննի արծաթ, ի նոյն նմանութենէ հայելով խօսի. վասն զի արծաթ հրով և ջրով զտի, և ելբեւեն՝ ի հոս արկեալ՝ ի ջուր մխի. այնպէս և ընտրեալքն՝ ի հոս և ի ջուր մխին, և փոքրին։ Ա.ըդ հրով նշանակի հինչ ազգնասիչ նեղութիւն. ըստ այմ (եզկ. ժե. ղ.) * ի հրոյ ելցեն, և հոս կերիցէ զնոսա ։ և (ղ. ը.) * արկից հոս ի վերայ եգիպտացւոց, և խորտա,, կեսցին ամենայն օգնականք նորա ։ Այնպէս և

ջրով նշանակի խեղդիլ նեղուել . որպէս է սեաստանել (Ի սաղ . ԼԸ . 8 . և կը . 1 .) յասելն . * կեցո զիս ,, ածի . զի հասին ջուրք յանձն իմ . ընկլայ ես ի ,, խոր անդնդոց , ուր ոչ գոյ հնձ հանգիստ ։

Այլ զի փոխաբերական բանք աւելի սաստկացուցա- նեն զնշանակութիւն իրին՝ քան հարազատ բառքն , մարգարէն կամելով ցուցանել զաստակութիւն նեղու- թեաց ժողովրդեանն , և խորհրդաբար զառաւտեան որդ մատուիրեսաց , կոչէ զայնս հուր և ջուր ,

Այս դարձեալ որովհետև երկուքին սոքա այսինքն հուր և ջուր միմեանց հերհակառք են , զայսոսիկ ի մէջ բերելով սոքիմբք կամի առաւել և սաստկագոյն ցու- ցանել զնեղութիւնն . որպէս թէ հուր և ջուր , այս է ազգի ազգի հերհական նեղութիւնք առ ի յաղթա- նակել զմիմեանս՝ հասեալ իցեն ի վերայ նոցա , մին՝ առ ի այրել և տոչորել , և միւսն առ ի խեղդել և կորուսանել . որով յանկնարինս չարչարին նոքա . վասն որոյ գրելէ իբրև խոնջեալ ի տառապանաց խօսի մարգարէն ասելով . աշա ընդ այսպիսի վիշտս անցաք իբրև ընդ հուր և ընդ ջուր ։

Ուր անցաք ասելով՝ ցուցանէ ոչ սոսկ զկրեն՝ այլ և զհամբերելն . զի սոսկ կրելն զնեղութիւնս՝ եթէ ըստ նմանութեան հրոյ իցէ , զայրուցին և զտոչորուին պատ- ճառէ . ապա թէ ըստ նմանութեան ջրոյ իցէ՝ զընկղ- մուիս ի մէջ բերել և զկորուստ ։ Կամ անցանելն ըստ նեղութիւնս՝ եթէ ըստ նմանութեան հրոյ իցէ , զայրուն և զվխլուզուն պատճառէ . ապա եթէ ըստ նմանութեան ջրոյ իցէ՝ զլուացուցին և զսրբութիւն ։

Լուր ասէ որ Տայլ եւս խրախուսուցոյց , նոյնպէս և այլոց ծառայից իւրոց՝ մանաւանդ մարտիրոսաց՝ մատ- նել յայնպիսի նեղութիւնս՝ օգնեաց և նոցա՝ հաստ- բերել այնց նեղութեանց , և ի լռանալ ժամանակին՝ զոր սահմանեաց էր՝ ելեան զնոսա ի նեղուէ անտի , և ետ ի խաղաղութիւն . վասն որոյ ասէ ։

Այս հասեր ընչ ի հանգիստ . Այսինքն ազատելով զմեզ ի տառապանաց մերոց հասեր զմեզ ի տեղիս յոյս , ուր է հանգիստ մեր ։ Այս աստ բառդ հասեր՝ ոչ հայի ի նեղութենին յորմէ փերծոյց , այլ ի հան- գիստն յոր է ետ . իսկ պատճառ դնելոյ հասեր՝ է ցու-

ցանկալ՝ թէ գերազանց և բարձր ինն էր այն հանդ-
գիտա՝ առ որ կամ գնասա ՚ի՚ ։

Այս առաւել յարմարի փառացն արքայութեանն՝
յոր եհան ՚ի՚ զսիրելիս իւր զանցեալսն ընդ հուր և
ընդ ջուր ։ յորմէ սակս զոյն բան ապրումիս ընծայեմք
մեծաբերաց, մանաւանդ քառանիցն, որք իրապէս
անցին ընդ ցամաքեալ ջրոյ, և զանցին զջերմութեանն
հրոյ ։

Այլ բանք եթէ սոսկ ըստ բառիցն առցին՝ այլով ինն
օրինակաւ յարմարին իսրայէլացւոց՝ ըստ որոյ յայտա-
նութեանն ՚ի՚ եգիպտոսէ անցին ընդ ծովն կարմիր և
ընդ յորդանան ։ և ՚ի բաբելոնէ ընդ հուր հնոցի, որ-
պէս անանիայեց եղև ։

Ամբրոնացին այլաբանօրէն մեկնեալ զայս բան՝ հրով
խնամոյ զՏոգին ՚ի՚ ասէ, թէ կամ զշնորհս Հոգւոյն սիր, իսկ
ջրով՝ զնոյն զոյն ջուր աւազանին ։ արդ ։ * որք ընդ
,, հուր հոգւոյն և ընդ ջուր աւազանին անցանեն
,, ասէ, յերկինից հանդիսան եւանեն ։ և թէ անարատ
պահեցեն զանձինս ։

Վարդապետս, հրով նշանակին ՚ի և իցէ փորձութիւնք ։
և ջրով ջերմ ապօթք ։ յոր միտ ասաց ոմն ՚ի սրբոց ։
* կայ յաջոյ ձեռին զջուր ապօթից, և ՚ի ձախն զհուր
,, փորձութեանց ։ ՚ի բորբոքել փորձուէ՝ հնդ զաղօթ ապ-
,, ՚ի վերայ նոցա ։ Վարձեալ հրով իմացեալ լինին
ձախորդ և տանջողական փորձութիւնք՝ որք այրեն զո-
գիս ։ իսկ ջրով հեշտացուցիչ փորձութիւնք՝ որք մեղկեն
զզգայութիւնս ։ կամ հրով հոգևոր փորձութիւնք և ջրով
մարմնաւորք ։ ընդ որս անիծաս անցեալ սրբոց՝ մերձին
առ ՚ի՚ ։ Վարձեալ՝ հրով և ջրով նշանակին նեղչտ-
կան փորձութիւնք, զորս առաքել երբեմն ՚ի՚ առ ՚ի՚
մեղմացուցանէլոյ զիրեարս ։ որպէս առնէ բժիշկն՝ որ
զջերմութիւն հիւանդին ցրտայնով մեղմէ, և զցրտու-
թիւնն ջերմ դեղով ։ սոյնպէս և ՚ի՚ ընդ այսպիսիս
թոյլ տայ անցանել ծառայից իւրոց անվնաս ։ և ապա
հանէ զնոսա ՚ի՚ հանդիսան յաւիտենական ։

Այնթէ այս այսպէս է՝ ապա որք միանգամ յաստիս
սահեալ կան, և ոչ ցանկան ժամանել յայն հան-
գիստ, նոքա երբեմն փայտք ՚ի՚ հուր ձախորդութեանց այ-
րին, հանելով ծուխ անհամբերութեանց և անիրաւու-

Թէեց. և իբրև կաւ՝ ի ջրոյ յաջողութեաց լուծանին՝ ի հեշտութիւս, ի փառամոլութիւս, ||՝ ման որոյ և չանէին առել՝ անցաք մեք ընդ հուր և ընդ ջուր, և հասաք ի հանգիստ. այլ թէ այրեցաք հրով, և լուծաք ջրով, և ածաք անկաք ի գժոխս։

Օ՛ինչ ապա յորժամ տեսանիցեն զարդարսն փայլեալս հրով և մաքրեալս ջրով և հասեալս ի հանգիստ. բայց եթէ աւազել զանձինս. զի նովին հրով սոքա այրեցան, և նոքա զտեցան, սոքա սևացան, և նոքա փայլեցան, և նովին ջրով սոքա լուծան և եղծան, և նոքա մաքրեցան և սրբեցան. և ի վերջոյ սոքա ի՛բրև ի գժոխս, և նոքա ելին յերկինս։ Վասն զի մարգարէն յայտ արարեալ զանցանել ժողովրդեան ընդ նեղութիւնս և հասանել ի տեղի հանգստեան, ցուցանել այժմ, թէ զինչ ունէին նոքա առնել անդ. ասին իբրև յարեւ զինի և ասէ։

ԺԷ. Ա՛ուէ՛ ի տուն որ պատրաստ. քաղ տեղ ղուխս իմ, ղեր խոպոպան տեղ ղերեսուս իմ. ղեր բերան իմ խօսէցաս ի նեղութիւն։

Ի գերիվ իսրայէլացոց առ Հաստարակ՝ գերեցաւ և ամենայն վայելչութիւն նոցա, և ամենայն պաշտամունք նոցա. այրեցաւ և տուն նոին, և անհետ եղեն ամենայն ինչ. ի յիրիկ նոցա գայս՝ յոգւոց ելանելիս. և ամենայն ոգւով հաւատային, իցէ՛ թէ միւսանգամ արժանի լինին կանդնելոյ զտուն նոին, և պաշտելոյ զնա անդ. որոյ վասն իակ ուխտեալ և՛ին՝ մատուցանել նմա անդ յատուկ զոն ընծաղհաւատութեան. Հայէլով ապա մարգարէին ի կատարումն այսր փափաքանաց և ուխտից՝ ասէ։

ԺԷ. Ա՛ուէ՛ ի տուն որ պատրաստ. քաղ տեղ ղուխս իմ, Լ՛զալ հի գնելով յոգնակի իմնանայ. զի խօսի՛ ի գիմաց Ժողովրդեան. որպէս թէ ասէր. ի՛ հանել քո զմեզ ի տեղի հանգստեան մերոյ, կանգնեացուք անդ տուն անուան քո. և մտցուք ի տուն անդր ազաղջի քո՛ոյ դատարկաձեռն՝ այլ պատարագօք այսինքն ընծայիւք և զոհիւք, զորս մատուցցուք քեզ անդ։ Լ՛ւ բայ ի պատարագ՝ զորս միշտ ունիմք մատուցանել քեզ ատցուք և զուխտ մեր. ուր ուխտիւ իմացեալ լինի

յատուկ պատարագն զոր ուխտեցին, որպէս և յայտ-
նի զինի ասելով։

Օ՜ր խոստացան ինձ շընորհս իմ. զոր բերան իմ խօսեցաւ
ի նեղութեան։ Յերկոքեան այս բանք զնոյն նշանակեն,
բայց յայլևայլս հայեցուած, առաջինն հայի յատեան փա-
փաքման հասանելոյ ի տուն նոյն, և մատուցանելոյ
զնոյն. յոր միտ ասէ. զոր խոստացան քեզ շրթունք
իմ։ Իսկ երկրորդն հայի յատեան փափաքման ազա-
տելոյ ի նեղութենէ յատենէն. զոր բերան իմ խօսեցաւ ի
նեղութեան. որպէս թէ ասէր. յորժամ ի նեղութեան
էի ի գերութեան անդ՝ փափաքելով ազատիլ անտի, և
ցանկանալով դառնալ ի տեղի իմ յերուսաղէմ, ուխ-
տեցի յայտնի և որոշ բանիւ. եւս և հաստատեմ ընդ
խոստացեալ՝ մատուցանել քեզ անդ զնոյն. և արդ ահա
կատարեցաւ ցանկութենի իմ, և հասի փափաքանաց
իմոց. ապա կատարեցից և ես զոր խոստացայ։

Վ Երածաբար՝ այս ամենայն ըստ լատ՛՛. Հայի ի փա-
փաք սիրոյ՝ որք ի մտանել ի տուն տեառն յարքայութենէ,
հնէրկայանան նմա պէսպէս պատարագօք, յորս առա-
ջինն է պատարագ օրհնոյն տեր. երկրորդն է պատա-
րագ ազօթից և փառաբանութեց. երրորդն է պատա-
րագ սիրոյ. որոյ սկզբնաւորութիւն վառեալ է ի նոսա,
և ուխտեալ է ի բերանոք և շրթամբք իւրեանց, ըզ-
կատարեալն նուիրել յարքայութենէ։

Պատճառ՝ ի հոգ բերելոյ մարգարէին զշրթունս և
զբերան, այն է՝ զի ցուցցէ զհաստատութիւն խոստմանն
և ուխտին. իբրզի ոչ միայն սրտիւ խոստացան և
ուխտեցին, այլև բանիւ շրթանց և բերանոյ յայտնի
և որոշակի իբրև հնարով հաստատեցին զայն։ Օ՜ այլ
ինն պատճառս ոմանք բարեպաշտիցն հնէից, առանդ ելով
թէ ուխտն յայնժամ լինի կատարեալ և պարտաւո-
րիչ՝ յորժամ բերանով խոստացեալ լինի, և շրթամբք
յայտնի. ամէն իրի զայսոսիկ յատաջ բերել առեն մար-
գարէն ասել. այլ այս հոգի առ արտաքինսն և ոչ առ
հնէրքինս պարտաւորութենի ուխտին։ Ի՜ըզ եդեալ մար-
գարէն զնիշատակութենէ ուխտին, յայտ առնէ այժմ՝
թէ որպիսի պատարագ էր այն՝ զոր ուխտեալն էր.
ասեն որոյ ասէ։

ԺՂ. Օ ողջակէզս ողջակիզիցս մաքրութեանն եւ խընձ-
ից. Եւ տէր մաքրեսցէ զբարեխս եւ զնոխազս։

Այս բան ցուցանէ զառաւելութիւն փափաքանաց սրտի ի չնորհակալ լինել ցՅի, մնասուցանելով նմա զանա-
զան զոհս՝ ոչ ի հաւասարակ անասնոց՝ այլ որք ուղղա-
կեցքն իցեն։ Իսկ ուղղակիցն նշանակէ աստ զպա-
րարան, զի կենդանին յայնժամ հաստատագոյնս պա-
րարտ լինի՝ յորժամ ոսկերք նորա լիանան ուղղովք.
քանզի հաստատուն պարարտութիւն տիրապէս յու-
զեզս (այսինքն ի ծուծս) ոսկերացս ունի զանգի. զայս
ալիսի կենդանիս և նուէրս խոստանայ մատուցանել
Յի ողջակիզ ի գառնալն ի գերութենէ. վասն որոյ
ասէ.

Օ ողջակիզս ողջակիզիցս մաքրեսցէ տէր՝ ըստ ոչ խնչոյ. Եւ
տէր մաքրեսցէ զբարեխս եւ զնոխազս։ Ի՛ աղաչեալ մարգա-
րէ, որ երևեցաւ անմիջապէս յետ գաղթի գերութեան՝
տեսեալ զի ոմանք ի ժողովրդենէ մատուցանէին պա-
տարագս և ողջակէզս վասն կամ գյաջիւտակեալս՝
ամբաստան լինի և անէծս ևս կարգայ. (մաղաք. ա.
8 — 14.) զի այս ոչ էր յարգել Ցի, այլ մանաւանդ
անարգել. ասի իբրև մարգարէս ի խօսիլն աստ զող-
ջակիզսդ ի բաց առնու զայսպիսիս. և զուղղելոցն
առաջի մատուցանել ասելով։

Ի՛ատուցից ի տան քումմ զողջակէզս ի պարարտ ա-
նասնոց, զպարարտ խոյս, և զպարարտ զուարակս, և
զպարարտ նոխազս, ընդ որս և զպարարտ խուճկս։
Օ ուարաճաւ իմացեալ լինի արու որթի մեծացեալ.
խոշիւ՝ արու ոչխար ոչ մանեալ, նոյնպէս և նոխազաւ՝
արու այծ։ Օ այսոսիկ գնեալով մարգարէին տայ իմա-
նալ և զամենայն ազգս զոհելի կենդանեաց, զորոց
խոստացեալ էր մուծանել։ Ի՛զնպէս և իւրեքօք տայ իմա-
նալ զայլ ամենայն ծախանելիս. և յայսմ ամենայնի՝ ի
պարարտից ցանկալ մատուցանել։

Արբիմք նշանակին հոգևորացս նուիրմունք անձանց
ի ձեռն սրբոյ վարուց յերկրի աստ, և ի ձեռն
օրհնաբանութեց և կատարեալ սիրոյ յերկինս. և
և նուիրումն անմահական ողջակիզին ի նոր պատա-
րագի. և զարձեալ նուիրմունք ազօթից՝ Ընդմանր

մարմնոյ, և կատարեալ միաւորմամբ ախտից ըստ
լամբ". և որ կարևորն է՝ նուիրմունք գործոց բարեաց
՝ի ձեռն ուղղել զ իսաւսրսել. զի սովին ուղղելոյ
նուիրին այլ գործք մեր։

Նորոյակս, ուղղելոյ ողջակիզեալ նշանակին գործ-
նական կեանք լցեալք առաքինական կենօք. ոսկի հա-
մարի գործնական կեանք, ուղիղն է առաքինին.
մին առաքինի, և միւսն անտես կայ. նա արտարին է
և սա ներքին. Հայեաց ՝ի նմա է՝ այլ սոսկ պահէ. սա
ոսանց նորա սա չարժէ ինչ. առանց սորա նա ոչ կա
է, Լրկրորին և Հաձոյ են ՝ի, յօգնեալն իբրեւց. ՝ի
պատասխանի միոյն ասէ միւսն ցմա. * ասա դմա՝ զի օգ-
,, նեսցէ ինձ ‖. առանց օգնութեան մարիամու ՝ի զուր
է աշխատութեան մարթեալն. * մարթա՝ մարթա՝ դու
,, հոգաս, և զբազում իսկ զբաղեալ ես. բայց ասա
,, տակաւ ինչ ոմիոյ է ‖. այսինքն թէ տակաւ գործդ
և ես շատ է, եթէ տեսականն առաւելագոյն. այն է՝
ընդ որ առաւել հայէիր քան իբրև ընդ ուղիղ գոր-
ծոյն. որոյ վասն յաւել ասել. * մարիամ մասն բա
,, րի ընտրեաց ‖. այն է տեսական կեանքն. (ոսկ.
Ժ. 40 — 42.) Ա՛իսկ ակեաց ունի յաւետին աղօթիւր.
և ՝ի հարցանելն՝ ասաց. եթէ աղօթք ոչ օգնեսցեն
ուսուցչին՝ ոսկր են առանց ուղղոյ. միոյն կատարելը
սա զգործ մարիամու, և միւսոյն զմարթեալն. Ցե-
տական կեանք առանձինն ոչ կարէ տեւել. նոյնպէս
և ոչ գործնական կեանք առանձինն. Որ պարապէլ
գործնական կենաց՝ պարտ ամփոփել և՝ ի տեսականն,
և որ պարապիլ տեսականին՝ վարել և՝ ի գործնականն,
Լդ ասե զմարդն՝ ի գրասիրն իբր ՝ի վէմակ տեսա-
կան կենաց. բայց հրամայեաց և գործել և պա-
հել զսա գործնական կենաց. Լրևեցան եղկիկլէ
Իբրեւ պախոէ Ծուխ՝ պախոեցին. որպես հալի մոմ առաջի հրոյ, այնպես կորիցեն ներկայ առաջոյ։

Ա այնուհետև նմանաբանուԹի՛ ցուցանէ զարագ ցրուումն Թշնամեաց, և զյարաչար փախուստ առելեացն, զորս և կոչէ մեղաւորս յատկեն։

Իբրեւ պախոէ Ծուխ՝ պախոեցին ... ։ Այսինքն. որպես ծուխ բարձրացեալ՝ արագ ցրուի ի հողմոյ, այսպես

եւս ի կամել Քրիստոսեայ մերոց բարձրանալ ի վերայ
մեր, զբուսեցին չբերասցին ոչ. այսինքն ի հոգմէ
բարկութենն ոչ, և պահասեսցին ի միջոց. և եթէ
չանգդնեացին կալ ընդդէմ ոչ՝ իբրև ընդդէմ հրոյ՝
առաջանայն հալեսցին հանգոյն մոմոյ, զի ած * հուր
ծախիչ է ։ (իւ. օրին. ի. 24.) և այնու կորկեցեն։
Ասացեալս պատահեցաւ հրկից և գիւաց ի յառնել
նոն մերոց. զի հրկայք իբրև զծուխ ի հոգմոյ աւե-
տարանին պահասեցան, այսինքն դատաւորացան յառ-
նոյնել զոր ունէին, և նոքին դատաւորութիւն ցրուե-
ցան յաշխարհ ամենայն. և հալեալ ի հրոյ նոր օրի-
նաց՝ հանգոյն մոմոյ յերկիր սորեցին։ Իսկ հեթա-
նոսք ի ջրոյ մկրտութէ պնդեցան, և հաստատեցան.
զի * մոմ ի հրոյ հալի, և ի ջրոյ պնդանայ ։ Այլն-
պէս կորեան և գիք կորուսանելով զաւրութիւն հնոյ
բնին և զիշխանութիւն իւրեանց. որով ըմբռնէին զմար-
դիկ ի մոհն յաւիտենից. և ուրիշն անշարժ և խս-
պառ կալով ի հուր գեհենին հանդերձ կամաքորոք
իւրեանց. ուստի ասէ կիրակոս արեւելցի (ի մեկն.
տար". եւագրի. ա. 12.) * սատանայ ի հուր գեհե-
,, նին կալի. և նորին կամաքորքն և մեղքն խոտա-
,, նին. որպէս ասէ մարգարէն գաւթի. պահասես
,, ցին մեղաւորք յերկրի ։ Այն այս կրկին եւս պա-
տահելոց է և ի կատարածի յաշխարհիս՝ յասել նոն
առ առելիս իւր. * երթայք յինէն անիծեալք ի
,, հուր յաւիտենական ։ ընդ որ աւադելով ողբայ
նաբէականն (ի բանն. ը.) և յորդորէ զինքն փու-
թալ ի բարին և մեհնիլ ի չարէ. * զի մի ասէ ի
,, բանալ վերնայնոն երկնի՝ անբնաւրը գտեալ կրնաւ-
,, նէ վայելման լուսոյ՝ իբր զնեալ մոմոյ սպառե-
,, ցայց ջնջեալ ի միջոց ։ Օ այս եղեալ մարգարէին
վասն չարաց, հայի և առ բարին. և զուբախանալի
նոցա ի միջ քեզ, և ասէ.

ՀԸ. Ընդ որ ոսոխ եղէցին՝ և ցիծասցեն առ ինձ նորա.
և զսաբաձասցին յոսոխոսինէ երեսանց։

Լրբերակ խնդութէն լինիմք ի հանդիսիս անդ՝ յորում
ածելին խորհրդակցեալք զառապանակն ինն ի տանէ ամե-
նազաւրայ. մին երբ դրախան՝ զոր նեղդործութէ ու-

նէին յանէէն անդ զառապանսն, որպէս եդաք ի հա-
մարն առաջին. երկրորդն էր մահկանացու և ազատ.
իբր վ ազատ էին յերկիւղէ և ի տրամութէ՛ որ կա-
բէր պատահիլ յերեսաց թշնամեացն. երրորդն էր
ապագայ՝ զոր ունէին էին ի վերահղէն զառապանսն
ի խորանի իւրում. (զբաղ գրբ. ա. մնաց. ժէ.
1—8.) Երեսին յայսոսիկ հայելով՝ զառաջինն ի
վերջոյ դնէ, զերկրորդն ի սկզբան, և զերրորդն ի
միջի՝ յաւելն։

Աբդար ոբան եղեցին՝ և ցնծացին առաջի նորա, և ըս-
բաձայնի յոբանալ էրէանց։ Յսկիրն ի յառնել այ
և յառաջորդել արդարոց այսոիկն ժողովրդեանն
իսրայէլի և ի պատպանել զնոսա, յորժամ սեպհեա
զիւրեանց գտնեբկանութէն ի թշնամեաց՝ ուբաս
եղիցին. և ի ժամանել ի տեղին յայն՝ ուր գնան
հանդիսիս՝ ցնծասցեն անդ առաջի նորա այսոիկն ա-
ռաջին այ. վասն որոյ և ուբախութէ՛ ածելով զառ-
պանեն՝ զուարճասցին և երգեսցեն զօրհնութիս նմա։
Յայս խնդութէ՛ լինագոյս կատարեցաւ յառաբեալսն
և յաշակերտսն և յիւզաբեր կանայս ի յարութէն
քրիստոսի. զի ի լսել նոցա զյառնել նորին՝ ուբաս եղեն.
և ի սեռանէն գնա՝ ցնծացան առաջի նորա. և ի
կենցաղավարին ընդ նմա՝ զուարճացան յայնմ իբր-
եանց ուբախութէ՛. ուստի առ սոսա Հայելով սիրա-
պէս ասէ. յարիցէ՛ աստ, և արդարք ուբախ եղիցին
և այլն։

Յայս երրեակ խնդութէ՛ և ի մահկանացու եկեղե-
ցւոյ, ի յարդարսն ասէ՛ որք առաջնորդին քրիստ. կե-
բուսաղէմն վերին. առաջինն է խնդուն ուբախութէ՛
վասն ազատելոյ ի ծառայութէ՛ դիւաց. առ որ Հայի
ասէլն, ուբախ եղիցին։ Երկրորդն է խնդութէ՛
զուարճութէ՛ վասն ծառացելոյ քրի յաստի կենաս,
և վասն վայելելոյ գնեբկայութէ՛ նորա ի խորհուրդ
մարմնոյ և արեան նորին, և վասն խնամալ լինելոյ
ի նմանէ՛ ետ. առ որ Հայի ասէլն, զուարճասցին յու-
բախութէ՛ իւրեանց։ Երրորդն է խնդուն ցնծութէ՛
ի ժամանելն յերկինս և ի ժառանգելն զնա յին-
քեան. առ որ Հայի ասէլն, ցնծացեն առաջի նորա։
Յսպասել և այսպէս ուբախութէ՛ լցեալ արդարոց՝

ի

օրհնեն զնա . զորդ զօրինակն յանձինս իւրեանց քե-
րեն խոպակելացիք . և յայս ակնարկելով մարգա-
րեին՝ առ նոսա ուղղէ զբան իւր , և ասէ ։

Ը. Որնեցէ՛ք զնա , և սաղմս ասացէ՛ք անուան նորա .
ճանապարհ արարէ՛ք նմին՝ որ նոքա ընդ արե-
մտեաս . և որ է անուն նորա ։

Այսպէս ասէ մարգարէն իւրումն խորհր-
դոյ նաթանուելի , զոլորովին հաւատացեալ՝ ածելոյն ինն
զուարճախօսուելի . և նախ յօրհնուելի յորդորելով
զժողովուրդն ասէ ։

Օրհնեցէ՛ք զնա , և սաղմս ասացէ՛ք անուան նորա ։ Այ-
սպէս խօսելով՝ ոչ ի բաց առնուլ զինքն , այլ մանա-
ւանդ ինքեան հետևեցուցանել կամի զնոսա . որպէս
թէ ասէր . միաբան ընդ իս օրհնեցէ՛ք զնա . և յիշե-
լով զանուն նորա՝ ի միասին սաղմոս ասացէ՛ք . որ-
պէս զի այսպիսի օրհնութիւն և սաղմոսերգութիւն
տարցուք ցնծալից զտապանակ տէն ի սիոն . ապա
խրախուսել հորդել ճանապարհ առաջի նորա ասե-
լով ։

Ճանապարհ արարէ՛ք նմին՝ (որ նոքա ընդ արեմտեաս . և
որ է անուն նորա) ։ Այս եղանակ խօսից ի նշան մեծի
յարգութեան առ ի ցոյց մեծութեան և ահաւորութեան
այ . զորոյ զատուելն տեսանելիք և ի պաշտօնեայս
իշխանաց աշխարհիս , որք ի գնալ առաջի նոցա՝ զայս-
պիսիս բարբառին . Թագաւոր գայ , հարթեցէ՛ք զճա-
նապարհ առաջի նորա ։ ոչ զի ոչ էն պատրաստեալ
ճանապարհք , այլ զի ցուցցեն թէ արժան է հարթել
և հորդել ճանապարհաց առաջի մեծի իշխանի ։

Այսոյն նմանութեամբ բարեպատրաստել մարգարէն , զբան
իւր՝ խօսելով առ ամենեսին՝ որք գնային ընդ տա-
պանակին , և որք բնակէին ի չքնաղակ տեղիս՝ ընդ
որս անցանելոց էր տապանակն . հարթեցէ՛ք ասէ զա-
մենայն ճանապարհ , և պատրաստեցէ՛ք զամենայն ինչ
առաջի նորա ։ Այլ զի ցուցցէ թէ պարտ է զայս առ-
նել՝ յաւելու , թէ վասն զի տէր է անուն նորա . որ
է ասել , որոյ վասն ասեմ պատրաստել ճանապարհ՝
այնպիսի տէր է նա , մինչ զի անուանս տէր՝ կամ ըստ
էր՛՛. անունս Այսահ կամ Այսահ (յորմէ կազմի բառս

եօ՛վա, այսինքն որ էն) նմա միայնոյ պատշաճի։ Հայե-
լով ապա ՚ի Տանգամանս ուրուորութենէն՝ ասէ։
,, Ոչ նոքա ընդ աբեղոտս. և ոչ է անձն նորա։ ՚Այս
բան բազում օրինակաւ, և զանազան տեսութեամբ
մեկնի։

Նախ առաջին մեկնութեանէ բառս արևմտեաց՝ հանդի-
տութեան ինն նշանակ ասա զերկիրն աւետեաց՝ յոր
առաջնորդէր ամեն յորում նստէր ՚ած. և տիրապետ
նշանակէ գերուսաղէմ. ըստ որոյ և բայդ նոքն՝ առ-
եալ լինի ըստ նշանակութենէն իբր տպատանի. յոր
միտ կամի ասել. Ձանապարհ արարիք ինչ մերոյ, որ
իբրև արև գայ մտանէ յերուսաղէմ և նստի անդ.
կամ թէ պատրաստ լերուք ընդունել զՅԾ որպէս
ընդունի արևմուտք զարևն։

Նախ երկրորդ մեկնութենէ գիտելի է. զի կարիաթա-
բիմ էր ընդ արևմուտս երուսաղէմի առ հիւսիսիս.
և զի անդ նստէր տապանակն ՚ած, վասն որոյ և հա-
մեմատութիւն երուսաղէմի ասի՝ թէ նստի ընդ արև-
մուտս. որպէս թէ ասէր. Ներկայութիւն ՚ից ըստ յան-
դիման առնելոյ տապանակին՝ է յարևմուտս ՚ի կա-
րիաթարիմ. կամ թէ տապանակն ՚ած, ուր յանդի-
մանն լինի ներկայութիւն ՚ից՝ է ՚ի կարիաթարիմ. յոր-
մէ ահա բարձեալ բերեմք զայն յերուսաղէմ։

Նախ երրորդ մեկնութենէ գիտելի է. զի բաղդատու-
թիւն պաղեստինոյ միջերկրական ծովին անկանի ընդ
արևմուտս. և անտի ծագի հասարակօրէն ամն մեծ
և անձրևաբեր. յոր միտ ասաց տէրն * յորժամ տես-
,, անիցէք ամն ծագեալ յարևմտից՝ իսկոյն ասէք
,, թէ անձրև գայ ՚ից ՚ից ՚ից

բաստեաջիք զամենայն, զի ահա գայ ՅԱԾ նստեալ յամպս իբրև ի կառս։

Եւ զայս յորդորդ մեկնութեամբ գիտելի է. զի բառդ պատուհասի՝ կարէ առնել լինել և ներգործաբար՝ իբր թէ մեծանաղ արեւու կամ ասացից մուրացնող արեւու. որով նշանակի առաջին շարժումն յերկինս. և ըստ այսմ կամի ասել, թէ ՅԱԾ նստի յերկինս. (որպէս դնի ի համարն 34։)

Եւ զայս հինգերորդ մեկնութեամբ բառիւս արեւմտեաց՝ ո թոյլ նշանակի արեւմտեան կողմն, կարէ խնայել լինել ամենայն ծագ աշխարհի առեալ զնոսն փոխանակ բոլորին. և ըստ այսմ յասելն զնոյ՝ նստի ընդ արեւմուտս՝ ցուցանի նստիլ Նորա ծագայ ի ծագս աշխարհի, եթէ յարեւմուտս և եթէ յարեւելս. (որպէս տեսանի ի համարն 34։) իբր թէ ասէր Նա ոմն ընդ ամենայն աշխարհ. որոյ վասն յարէ զկնի. և տեր է անուն Նորա։

Եւ զայս վեցերորդ մեկնութեամբ բառիւք արեւմուտք՝ կաղբեմք իմանալ ասա ոչ զայն կողմն աշխարհի՝ ուր մտանեն արեգակն, այլ զայն զոր տեսանիք աչք մեր ի մտանել արեւու ընդ հորիզոնն իբրև ընդ ծով, կամ իբրև ընդ անապատ, կամ իբրև ընդ գաղտնի տեղի. և ըստ այսմ բառդ արեւմուտք՝ փոխաբերի յայլ նշանակութիւն. և գնի ասա փոխանակ գաղտնեաց. որպէս թէ ասացեալ էր, ՅԱԾ նստի կամ բնակի ի գաղտնիս։ Եւ այսմ մեկնութեան նպաստ երբայականն, զորմէ տես ի համեմատութենէն։

Եւ ելարանօրէն, այս բան Տէրն առ Նահապետս և առ մարգարէս, որք Հանապարհ արարին առ խորհուրդն մարդեղութեան. կամ թէ քարոզեցին և ցուցին զմարդեղութիւնն բանին այլ, որ օրինակի ի Հանապարհ ոտից նորա. որպէս գրէ գործք վարդապետ (ի մէկն. եսայ։) Եւ ըստ այսմ կամի ասել. ով դուք Նահապետք և մարգարէք ձերով գուշակութիւք Հանապարհ արարէք մարդեղութեան բանին այլ։ Պատրաստել Տէրն առ առաքեալսն քոնի, և առ Հաւատացեալս իբր յորդոր. որպէս թէ եդեալ էր. օրհնեցէք զՅԱԾ Հաստատացեալդ. տաղտուկ ասացէք նմա, այսինքն է գործեցէք զնա ձեզնիւ օրհնութեամբ և գործովք բարութեան։

Նա զի այսպիսի խորհրդոց խորհրդազգաց եղէք, և առէք լիապէս զՀոգին սուրբ, Ձանապարհ արարէք քարոզութիւն և բարի վարուք զՀոգիս որդւոց մարդկան այնմիկ * որ նստի ընդ արևմտեաս ։

Որ արևմուտք ասելով՝ բազում ինչ նշանակի. մի՝ մարդ կային բնութիւն ըստ լսելի". և ըստ վարդ". զի որ արեգակն էր արդարութեն՝ եմուտ ի բնութիւն մեր իբր յարևմուտս. և նոտաւ ի նմա, այսինքն միաւորեցաւ ընդ նմա։ Նշորդորդ նշանակի ազգ մարդկան, մանաւանդ ազգք հեթանոսաց, որոց մոռեալ էր արեգակն, և յորս տիրեալ էր խաւար՝ որպէս լինի ի մոռանալ արևու. և զի ի նոսա հաձեցաւ բնակիլ Որդի, վասն որոյ ասի նստիլ ընդ արևմուտս այսինքն նստիլ ի հեթանոսս։ Նչորորդ նշանակի կատարած աշխարհիս, յորում վերջանայ օր աշխարհի, և լինի վերջին մուտ արևու. առ որ հայելով արժան է պատրաստել Ձանապարհ այնմիկ՝ որ գաւառէցոյ ի ըզմեզ։ Նորորդ նշանակի խաւարին գործք. և ըստ այսմ նստին նշանակ տիրել և բարձրանալ ի վերոյ. ըստ որում ձերն մեր ի գալ իւր յաշխարհ ընդ ոտիւք էարկ զամենայն գործս խաւարի, և գաւառ յաՄեռայինի անարատ ։

Նրեթէ ըստ տեղւոյ առցուք զնստիլն ոյ ընդ արևմուտս, ի դէպ գայ վիճակի արևմտեան կողման աշխարհիս պայծառացելոյ փառաբեր ոյ քան զամենայն տիեզերս յամենայն կարգէ. յոր Հայի և ասելն ամենասանին. * միթէ արեգիոյ զբեզ սիրես . . . և արա՛ ,, ըից . . . զկողմն արևմտից իբրև զդրախտ ձեն. ուրա՛ ,, խուեն և ցնծուեն գացեն ի նմա, խոստովանուե՛ ,, և ձայն օրհնուեն ։ (Եսայ. ծ։ ։) Նդր քանզի որք միանգամ պատրաստեն Ձանապարհ ոյ կընդունիլ զնա որպէս ընդունի արևմուտք զարեգակն՝ զՀետ գայ ուրախանալ նոցա, վասն որոյ զայն և ասացեալ մարգարէին ասէ ։

Է. 8 Ընծայեն առաջի նորա, և խոնարհին յերեսս նորա ։

Օ այս եգ և ի վերոյ ի համարն ։ խոսեալով զարդարոց . խոկ ասա զնեղ հանդերձ հակառակաւն ասելով՝

Ցնծասցեն առաջի նորա, և խռովեսցին յերեսաց նորա։ Լ՚յաւիտեան որք պատրաստեն՚ս՚ զանապարհ՝ նորա ցրնծասցեն առաջի երեսաց նորա. իսկ որք թշնամիքն են մեք և իցեն եհ՚։ մարդիկ և եհ՚։ գեր ըստ վարդանայ՝ նորա զարհուրեալ խռովեսցին յահ՚։ նորա։ Նայս միտ մեկնի. և բարեգ վարդապետ (՚ի մեկն. մարկ. գ՚։ ժե՚։) յասելն. * ցնծասցեն առաջի նորա ,, արդարքն. և խռովեսցին յերեսաց նորա մեզա ,, ւորքն ‖. և դարձեալ (՚ի գ՚։ ժե՚։) ասէ. * որպէս ,, յաղագս ՚ս՚ ասէ. դաւիթ՝ ոմանց ցնծալ՚ի դիմից ,, նորա, և ոմանց զարհուրիլ. ըստ այնմ, ցնծասցեն ,, և խռովեսցին յերեսաց նորա, սոյնպէս գործեցաւ ,, (՚ի յարութիւն) աստ յերևմանէ հրեշտակին. զի հր ,, եւայքն և զինուորքն՝ որք պահէին զդերեզմանն՝ ,, զարհուրեցան և եղեն իբրև զմեռեալս. իսկ կա, ,, նայքն ոչ կրեցին զնոյն կիրս ‖։

Լաբեայակէս, այս բան հայի՚ի ներկայութիւն ՚ս՚։ յո բուա՚ արդարք կրկին ներգործութիւն զդաժին. մին է ցնծալ ուրախութիւն՝ ՚ի վայելելն զբաղցրութիւնն ՚ս՚։ ըստ օրոյ ասէ. * ցնծասցեն առաջի նորա ‖ յորոյ օրինակ մովսէս և յովոր և այլ ծերք նստան ուտել զՀաց * առաջի նո՚ն ‖. (եւ. ժե՚։ 12.) որով նշանակի ցնծալ՚ի ներկայութիւն ՚ս՚ ըստ պատշաճի նստելով և ըստ օրինի ուտելով. Յերկրորդն է վարիլ զդուշութիւն յերկնչիլն անդ՝ զի մի ինչ գործեսցին ընդդէմ նորա. ըստ օրոյ ասէ. * և խռովեսցին յերես ,, սաց նորա ‖. և այս խռովութիւն հայի՚ի զգուշութիւն երկիւղ. զի որ կայ առաջի մեծի՝ ոչ միայն ջնաջ բարւոք գործել, այլև զգուշութիւն և զգաստութիւն կալ. եթէ այսպէս է հայելով առ մարդիկ. ասա՛ր. չափ ևս՚ի կալն առաջի ՚ս՚ պարտ է զգոյշ և զգաստ լինել. յորոյ ապացոյց ասի՚ի յայտնութիւն (՚ի. 6.) թէ որք կային առաջի սեռասոյն ՚ս՚՝ լի եկն ասէք յերուսաղէմ և առաջոյ և յամենայն կողմանց՝ ի ցոյց զգուշութիւն և զգաստութիւն՝ ոչ միայն յաչս, այլև յականջս և՚ի ձեռս, ‖։

Լ ամբրոնացին այլազգ ընթերցուած աստ զխռովիլն, և այլազգ մեկնէ. զորոյ զրանան վասն չքնաղութեան արժան է դնել աստ, յասել նորա այսպէս. * որք մեք-

,, բեն լինքեանց զաղտ մեղաց և ձանապարհ լինին
,, քոյ, յորժամ բնակի ի սիրտս նոցա կենաց առ-
,, հաւատչեայն, բաժին է նոցին ցնծութեին. քանզի
,, այս բնաւորական կիրք է հոգւոյ՝ ցնծալ ընդ բա-
,, րեաց պատահումին. իսկ ի մարմնականս մտորեալ՝
,, ունի հետեւաբար զղջումն. սակայն չիճ ցնծութեն
,, ոչ յագուսին է, և ոչ զղջումն հետեւի. այլ բնաբոյս
,, կիրք է անձին՝ որ պատահէ նոցա, որք ի խաղա-
,, ղութեի մտաց իւրեանց բնակեցուցանեն իմացուբեն
,, զքո. զի միշտ ուրախ լինելն է ըստ առաքելոյ։ Իսկ
,, խրոխտանան յերեսաց նոցա, յայտ է թէ զօրանան
,, ընդդէմ մեղաց. և կիցս բնակեսուն նմին. որպէս և
,, պօղոսն խրոխտանայր. Պարծ ասէ՝ մեկնեսցէ զիս ի
,, սիրոյն քրիստ։ Լսպետս և ամենայն ոգի ըստ իւրում
,, չափուն բնակալեալ զքո՝ արհամարհէ զմեզ՝ նոցա
,, յուսոյին։ Իսկ թէ զինչ խնամս ունիցին այսպի-
սիք յոյ, առաջի առնէ մարգարէն ի յաջորդ հա-
մարն, կոչելով զնոճ հայր և դաստուր, յասելն։

Ղ. Որդի հայրն է պատուէ՝ և դաստուր այրեաց՝ ոճ ի տեղ-ս աբեսալեն խօսի։

Որք ասի մանուկն՝ որոյ մեռեալ է հայր կամ մայր, և կամ թողեալ է ի հօրէ կամ ի մօրէ, և մնացեալ իւր անխնամ։ Իսկ այրն ասի նա՝ որոյ մեռեալ է այրն առնելն. և այս թէպետ կարէ ասել և զառնէ, բայց տիրապէս զհնոցն ասի։ Այլ զի հասարակօրէն ի տա-ղասպոս են այսպիսիքն. որովհետև զրկեալ կան յոյս կարելին վայելել, և չունին՝ զոր ունէին, որով տուայ-տին և տառապին, վասն որոյ և ոճ ինքնին խնամ առնի այսպիսեաց, լինելով որբոց իբր հայր, և այ-րեաց իբր դաստուր։

Այլ արդ քանզի խօսակցիքն յերանելին յեգիպտոսէ մնացին իբրև որբք, և իբրև զրկեալք, և տուայ-տեալք ըստ այրեաց, ոճ եղև նոցա իբրև հայր՝ մա-նաւանդ թէ առաւել ևս քան զհայր, և դաստուր բազում առաւելութեբ. և ահա ի սոսին հայելով խօ-սի առ մարգարէն։ Այլ դիտումն իւր է յայտնել, թէ ոճ ոչ պակասեցուցանէ զնամ իւր յայնցանէ՝ որք ապաւինին ի նա. մանաւանդ որք չունին զոք

իբրեւ զնոյ խնամակալ, որոյհսի են որբք և այրիք · վասն որոյ ասէ ։

Ա՛ր Հայրն է որբոյ՝ և դատաւորը այրեացդ։ Արդ միթէ բաւական է որբոց և այրեաց ունել փոխանակ Տեղոյն Հայր զնա, և փոխանակ առն՝ դատաւոր զնոր զօրութեանց, Այլ թէ յիրաւի ոմն լինիցի Հայր որբոց, և դատաւոր այրեաց Հաստատեն բազմադիմի դիպուածք՝ որք աւանդին ի պատմութիւնս, ոչ միայն առ Հասարակաց, այլ և առ անհատս. զի ոմն յանկնկնելոյն իսկ ի նոսա ցուցանէ զմանաւանդ խնամն եթէ առ որբս և եթէ առ այրիս. առ որթս՝ ածանելով զնոսին ի հարկաւոր պիտոյս նոցին իրրև Հայր բազմագութ. և առ այրիս՝ ինքնին գատելով և իրաւունս առնելով նոցա. և վերաժս խնդրելով ի զրկոցդ նոցա. որոյ վասն և հրամայեաց զորբն և զայրին մի նեղել. (ե. լեւ. իբ. 22, յակ. ա. 27, առդ. Հաւ. է ։)

Օ սոյնպիսի խնամն ցուցանէ և որոց միացեալ իցէ անխնամ իրրև զորբս, և առանպետել իրրև զայրիս. և մանաւանդ նոցա՝ որք կամելին որբացեալ իցեն և այրիացեալ. այսինքն որք իրր թէ ոչ գիտիցեն զայր Հայր յերկրի ատ՝ բայց միայն զնա. և որք ոչ ունիցին զայլ փեսայ բաց յինէ. և որք ի նա միայն յուսացեալն, զնա միայն սիրիցեն, և ի տեսութեն նորա Հաւանացեալն. զի առ սոսա ցուցանել առանձին իմն օրէնսական զՀայրական գութ իւր, և զպաշտպանողական փոյթ իւր ։

Հոգևորապէս ըստ վարդանայ՝ որք էր քնութեանս չուենելով իւր Հայր զնա. և միացեալ էր այրի՝ չունելով իւր փեսայ զնա. Իսկ Հայրն երկնաւոր որդեգրեաց զմեզ ինքեան և Հարմանացոյց ընդ որդւոյ իւրում, Իսկ լսամբ". * որք է բանական Հոգիս, որ զրկեալ էր երբեմն ի Հայրենի տանէն, և կենայր անառակութեան, նային և այրի, զի ոչ ունէր զտեբմանողն լինչն զաւրինաւէն մանկունսն՝ զնր Հոգին։ Այսն քո Հայր յայտնեցաւ, և այր. Հայր՝ ըստ որում ծնաւ զմեզ ի յոյն կենդանի՝ անապական բանին սերմանէ. և դատաւոր՝ զի նստաւ յերկինս, և խոստացաւ՝ վասն ամենայն զղջանաց զոր կրեմք ապաւինեալքս ի նա, դատապարտել զմարտակիցն. զի մարմնոյն ի

,, խաչին ուղղեաց զայս գաւառաւան. և նաւեալ յերու-
,, կինս ՚ի սրբութիւն իւր՝ նովին խնամքն միանաւոր
,, զմեզ և գաւառ, որով իրաւամբք և սրբոյ զմեզ օր
,, ըստ օրէ արիւնն յիսուսի ։ Օ այսոսիկ եգիտալ
մարգարէին, յայտ առնել այժմ, ՚ի թէ ուսոյն և ուր
առաւելապէս ցուցանել ինձ զայսպիսի խնամն իւր առ
որքա և առ այրիս. վասն որոյ ասէ ։

Ա՚ի ԵՂՈՎ սրբութիւն էրաց ։ Զերկին սրբութիւն նշա-
նակէ ասա նախ զիարանն վկայութիւն ուր իջանէր ինձ
յանապատի, և խօսելով անտի ընդ մովսէս ցուցա-
նէր զինամն իւր առ իսրայէլացիս ։ Զանանակէ երկ-
րորդ զառաքանակն, ուր նէրկայացուցանելով զինքն՝
պաշտօն լինէր իսրայէլացւոց ։ Զանանակէ երրորդ
(ըստ երր՚.) զերկինս, ուր կալով յաջոյ փառաց
բազմեալ՝ առ ամենեսին ցուցանէր և ցուցանէ զգութ
իւր իբրև Հայր և իբրև գաւառաւր ։

Զ՚յաբանօրէն տեղին սրբութիւն նշանակէ զեկեղեցի
նէ. ուր նա ինքն ինձ միշտ բնակելով խնամէ զամե-
նայն հաւատացեալս իբրև Հայր, և պաշտպանէ իբրև
գաւառաւր, մանաւանդ զկամաւորսպէս որքացեալսն
և զայրիացեալսն ։

Զ՚արդարեւ՝ նշանակէ զՀոգիս սրբս յորս բնակի ինձ
իբրև ՚ի տեղւոջ սրբութիւն, և կառավարէ զնոսա ։
Հայրմնարարն մեկնութիւն նշանակէ զամենեսին զնո-
սա՝ որք միացեալ են ՚ի մի կրօն սրբութիւն. զի պահէ
զնոսա ՚ի յանդ որքութիւն և ՚ի խաղաղութիւն, զոր և
յայտ առնէ յաջորդ բանիւն ասելով ։

Զ՚. ԻՆՁ ԲՆԱԿԵՑՈՒԱՆՔ ԶԻՆՔՈՅՆ ՚Ի ՄԱՌ. Եւ Հանի պէս
ոչ ասէ ՚ի ՄԵՐՈՒՆՔ ԻՐՈՎ. այլ նոքա ևս ըստ-
որ ԲՆԱԿԵԼ են ՚ի ՓԵՐԵՂՄԱՆ ։

Օ իսրայէլացիս նմանեցոյց ՚ի վեր անգր որքոյ և
այրեաց յերևեցոյց նոցա յեգիպտոսէ, և եցոյց թէ ինձ
խնամէր զնոսա, զի է Հայր որքոյ և գաւառաւր այ-
րեաց ։ Այս զի մի կարծեսցի՝ թէ խնամքն ինչ միայն
՚ի նոսա Հայէր ըստ անցեալան գոլոյ նոցա, այլ և
՚ի սերունդ նոցին և յայնս յաւելու ասել, թէ ինձ
բազմացուցանելով զնոսա՝ զբազմութիւն նոցա ևս ու-
նի խնամել և պահել ՚ի խաղաղութիւն. վասն որոյ ասէ ։

Աշ բնակեցուցանէ զնիկերսն ի տան։ Բառադ միակրօն՝ կրկին նշանակութիւն կարէ առնել լինել ասա. մի կրկին նշանակութիւն կարէ առնել լինել ասա. մի ըստ երբայականին փոխանակ այնոցիկ, որք են միակք յինքեանս, կամ ինքեանց միայն կրօղ, կամ միաչեաց, այսինքն է միայնակք, և ըստ այսմ կամի առնել՝ ած զնիկայնական բազմացուցանել որպէս և կամի, և առնէ բազմութիւն բնակիլ ի տան։ Կամ թէ ած որ հայրն է որբոց և այրեաց՝ այնպէս առնէ, զի որ որբն է կամ այրի, և կամ որ միայնակն է՝ ըստ սիրոյն ածեսցէ բազում որդւովք, և ունելցի զուարճութիւն ընտանեաւ, մինչև ոչ լինել նմա բաւական բնակիլ ի սենեկի միում, այլ ի տան մեծի՝ և այն բազում ուրախութիւն։ յոր միա ասէ մարգարէն այլուր (ի տաղ. ՃԺԷ. 7.) * բնակեցուցանէ զանուանն ի տան ,, ուրախութեամբ որպէս մայր որդւովք բերկրեալ ։

Երկրորդ՝ բառդ միակրօն՝ ըստ յատուկ առման իւրում նշանակէ զունօղն զի կրօն, կի զիաբանեալն ի մի պաշտօն Ձմարիտ. որով նշանակին ասա ազգք իսրայէլի՝ զորս միակրօնս արար ած՝ տալով նոցա զօրէնս և զիրաւունս և զդատաստանս իւր. որով որ շեաց գնոսա յայլոց ազգաց. և բազմացուցեալ զնոսա քնակեցոյց ի տան, այսինքն յերկրին առեւտուր. կամ զիւրաքանչիւր ցեղ նոցա յիւր առանձին բաժին՝ իբրև ի սեփական տան խաղաղութիւն, և կամ յիւրում տան. ըստ որում սահմանեաց զի ամենեքեան նոքա յանդիման լինիցին ինքեան ամ ամի միակրօն պաշտամամբք ի տան իւրում, կամ ի տեղւոջն զոր ընտրեաց։

Ա. Այսպանօրէն՝ այս բան հայի ի հաւատացեալսն քան, որոց զմիակրօնան, այսինքն զայնոսիկ որոց մի է հաւատ, մի յոյս, և մի սէր, բնակեցուցանէ ած անդորր խաղաղութիւն և սրբութիւն ի տան իւրում այսինքն յեկեղեցւոջ. որոյ և զգալի ապացոյց առաւել ի սկզբան եկեղեցւոյ ի նախնի հաւատացեալս. զորոց ասի ի գործս առաքելոց. (Ը. 31.) * Եւ բազմանային ,, հաւատացեալքն էր սիրտ և անձն մի. և ոչոք ի նոսա ,, նէ ասէր զընչից իւրոց՝ թէ իւր իցէ, այլ էր նոցա ,, ամենայն ինչ հասարակաց ։ (տես և գլ. ՈՒ. 14. և գլ. Բ. 1. և գրձեալ ի նոյն Բ. գլ. 42 — 47.)

ըստ որում ասի և՝ ի շարականի . կալ նոցա միաբա-
նեալ միախոհ և միակրօն ։

Վ Երանելոյ՝ ըստ լսմբ". ած բնակեցուցանէ յար-
քայութիւնէ զմիակրօնս՝ այսինքն զայնոսիկ որք միոյն
կրօն ունէին ըստ նմին հաւատոյ և յուսոյ . որոց և
տայ զմիակրօն փառս արքայութեանն՝ ըստ լսփու սիրոյ
նոցա ։

Նարեկացին, սոքիմքը նշանակին ամենեքին նոքա՝ որք
կան միաբանութեան և միաձայն հաւանութեան բարւոյ ի
միասին . ընդ որս հաձի և նա ինքն ած . և սովոր է
ասել առնուլ այնպիսեացդ , և կատարել զկամս նոցա .
որպէս գրէ բարսեղ վարդապետ . (ի մեկն . մսրկ .
ժ՞ .) * բազմոց ասէ ակն առնուլ զիտէ ած միաբա-
,, նելոց ի խնդրուածս ։ և օրհնելով զայսպիսիս՝
առնէ զի բնակեսցին խաղաղութեան և բերկրութեան ի
տան իւրեանց՝ կամ յաշխարհին իւրեանց , կամ ի
թագաւորութեան իւրեանց . իսկ եթէ պակասիցի ի
նոսա միաբանութեան , պակասի և միաբանական բնա-
կութեան . որպէս յայտնի ցուցանէ փոքրն ի տունս և ի
մենաստանս , ի գիւղս և ի քաղաքս , ի գաւառս , և
ի թագաւորութիւնս ։

Ա յլ ծանրը զի միաբանութեան բազմոց յօդի սիրով .
ասպա թէ ոչ՝ ոչ աւել և ոչ յաջողէ , և վտանգէ և ս .
զի զորօրինակ եթէ տախտակք նաւուս չիցեն միա-
ցեալք վշով կամ ձիւթով՝ ջուր առնու նաւն և ըն-
կղմի . սոյնպէս և եթէ բազմութիւնք չիցեն կապեալք
ընդ միմեանս սիրով՝ վտանգին . և դիւք դիւրաս մուտ
գտանեն առ նոսա . զի ինքեանք անմիաբան գոլով՝
յանմիաբանս մերձին , և ի միաբանից խոչընդոտ . և
ջանք նոցա է յանմիաբանութեան յորդորել զնոսա . զի
այն շատ է նոցա որսալ զնոսա առանց կռուելոյ . և
թէ զինուորք ընդ միմեանս կռուեսցին , չէ հարկ
թշնամւոյն կռուիլ ընդ նոսա . * Կատարեցաւ սիրտ
,, նոցա . արդ ապականեսցին ։ (ոմս . Ժ . 2 . և գաղ .
Ե . 15 .) Ել գոյր խռովութիւնէ ի հաւմայեցիս , այլ
սէր քաղաքական . որպէս գրի (ա . մակ . ը . 16 .) թէ
* ոչ գոյր հեռ և նախանձ ի մէջ նոցա ։ որով տե-
սցին յաշխարհն . և իբրև ցցուացան ի միաբանական
սիրոյ՝ կոծանեցան . յորմէ եւ առակին այն , թէ * հա-

,, մաձայնութիւնէ փոքունք անէնն, տարաձայնութիւնէ մե-
,, ծամեծք տասոլին ։ Կառավարք նոցա բազում
ելէն, և՛ի մի խորհուրդ խարսխելին. և բազմութիւնք
զինուորաց նոցա իբրև մի պարիսպ ձակատելին. որպես
գրի և զնաբայելացոց թէ վէց հարիւր հազարք. * խը-
,, բախտեցին իբրև զմի այր ։ (ա. Թագ. ԺԱ. 7)։
Այլ այս միակրօն միաբանութիւն առաւելապէս պատ-
շաճի հաւատացելոց. որոց վասն ազաչեաց քր՝ Տէրայր
առելով. * Հայր նը պահեա զնոսա յանուն քո՝ որով
,, եաուբն ինձ, զի եղիցին մի, որպես և մեք մի եմք ։
(յովհ. ԺԷ. 11.) Իսկ այս հաստատի յայն բան՝ ըղ-
ասաց. * այս է պատուէր իմ՝ զի սիրեսջիք զիմեանս.
,, որպես և ես զձեզ սիրեցի ։ (յովհ. ԺԷ. 12. 17։)
Յարմարական մեհնութիւ, բառիս միակրօնք՝նշանակին
կրօնաւորք, զորս բնակիցս ցանել ՅՃ՚ի տան այսմիքն
՚ի յանդրբարան կեանս՚ի մէջ կրօնի, կամ՚ի տան
խաղաղութիւն, և հուսկ յետոյ՚ի տան արքայութիւն.
Այս կրօնաւորական միաբանութիւն է իբր համաձայ-
նութիւ լսելոյ քոցի. եթէ լսելն միաձայնին՝ մանա-
ւանդ ընդ մեծին՝ քաղցրաձայն հնչէն. եթէ մին տա-
բաձայնիցէ՝ խանգարի. Նմարտաբ քնարահարք զլարսն
զանձնայն ընդ միով մեծի լսելի միայն համաձայնեցու-
ցանեն. և այնու լինի համաձայնութիւն ընդ այլս ա-
սոյնպէս եթէ կրօնաւորք համաձայնեցուցեն զին-
քեանս հրամանի մեծաւորին՝ համաձայնին ընդ մի-
մեանս. * որք նոյն են ընդ միտս երկոցունց (ընդ
,, մեծաւորի), նոյն են ընդ միմեանս ։
Եթէ մին տարաձայնել կամիցի՝ պարտ է հատանել
իբրև զիտեալ անդամս, և կամ պատառել յայլոց
իբրև զխխայթեալ վերս, զի մի՚ի նեբքս նեբգոր-
ծեսցէ, և զայլս ևս ապականեսցէ. * բարձէք զնոսն
,, ՚ի միջոյ ձերմէ ։ (ա. կոր. Ե. 13.) զի * փոքր մի
,, խմոր զանինայն զանգուածն խմորէ ։ (գաղ. Ե.
9։) Սմանք յայսպիսեաց ոչ կարելով զտարաձայնու-
թիւն մանաւանդ զպատատմբութիւն իւրեանց յատաջ
տանել՝ Թիկունս առնեն զայս ոք կամ զայն ոք. որով
յայտնի ցուցանեն թէ յանպիտան կարծիս յածին.
ծառ՝ որում պիտոյ է ձողաբարձ՝ տկար է. և տուն
որում պիտոյ է յենարան՝ խախուտ է և մերձ՚ի կոր-

ծանուցին։ Յայսիսկզբա՛ւ ի կարծելն չհնել՝ կործանին և կործանեն. սոքա են, զորոց ասէ առաքեալն. (գաղ. ե. 12.) * երանի՛ թէ մեռակուսուր իսկ վհնէին՝ որ ,, զՁեզն խռովեցուցանեն՝՝։ նա՛ երանի՛ թէ չէին իսկ ծնեալ. զի մեծ են չարիքն՝ զոր գործեն սոքա, ի ջանալն վեր ի վայր տապալել զայդպիսի միակրօնս՝ որք բազմամեայ տառապանօք և անտանելի երկամբք հաստեցան։ Սոքա են կապերտ անթափ. այսինքն ոչ մարգելալ և ոչ կրթեալ թափչաւ մեռուցման սխտից և առաքինութեց. վասն որոյ պատառուին ձգեն ի բազմամեայ հանդերձի հաւատոյ կերպարանի. (մատ. ի. 16.) Սոքա ազահք են տՀասք և տուիք, և ոչ հաւուցանեալ ողկոյզք, իսկ որք բարեփոյթք և ժրաջանք են ի զօրացուցանել զմիակրօնս ի բարեկրօնութեն, ձոզաբարձ բարի են միաբանութեն։ Այն են և քահ ընկերութեն. որպէս ասէ եզնիկ կողզացի ի խրատն. * խաղաղասէր կրօ ,, նաւօր՝ քահ պայծառ է եղբայրութե՝՝։ և օրհնութե՛ հաւարակաց ի նոսա է և ի վերայ նոցա, զորս և յանդորրու բնակեցուցանէ՝ ասե՛ ի կրօնի իրբև ի դրախտի, ազատացեալ և միմեայսեալ սրտիւ յամենայն աշխարհային զբաղանաց և ի կենցաղական հոգոց և յաւելորդախնդիր պատրոգութեց։ Օ այսոսիկ ասացեալ զմիակրօնից գառնայ այժմ մարգարէն ցուցանել՝ թէ զինչ առնէ՝ ասե՛ ընդ այնոսիկ՝ որք կալեալ կան ի թշուառութեն, կամ՝ ի գերութե՛, և կամ յիւրս աշխարհի, յասելն։

Եւ հանէ զնոսեալ հաշուէն խորհ։ Այս բան հայի յիսրայէլացիս՝ որք կապեալ կային իբր յերկաթի շղթայս ի ծառայութեն Եգիպտոսի. և ասե՛ Էհան զնոսա անտի քաջութե՛ իւրով՝ այսինքն ի բազուկ բարձր. որ՝ ասէ՝ Էհան զնոսա բազում աքանչելեօք։ Կարէ հայիլ այս բան և ի յետին ժամանակ գատաւորաց. զի յայնմ ժամանակի ևս ի գերիլ տապանակին ձեռս՝ ինացին նոքա կապելոք ընդ թշուառութե՛, և ասե՛ քաջութ իւրով չարաչար հարուածելով զայլազգիս՝ ոչ միայն Էհան զտապանակն ի ձեռաց նոցա, այլ և զազգն իսրայէլի գերծոյց ի նախատանաց հեթանոս։

Ա յլաբանօթիկն՝ այս բան Հոյի յայն քաջուէ որդւոյն
նոյ, որով եհան նա զկապեալ ազգ մարդկան ի ձե-
ռաց սատանայի։ Արձեալ Հոյի յայն՝ որով ձերն մեր
եհան զիարաբելացիս զկապեալսն ընդ օրէնս՝ ի լծոյ
անտի օրինաց, Թողեալ ի բաց զայնոսիկ՝ որք ոչ կա-
մեցան ելանել անտի և լինել ընդ ընորհօք։

Արձեալ Հոյի և յայն, որով վանեալ և կապեալ
զսատանայ՝ եհան զկապեալ Հոգիսն զօրութիւբ իւրով։
Աւետ ասէ բարեգ (՝ի մեկն. մարկ. գլ. ԺԷ.) Թէ,
,, ձերն մեր ի յառնել իւրում. * վանեաց զվիշապն, և
,, կապեաց զՀզօրն, և առաց կապելոցն՝ Թէ ելիք, և՝
,, որք ի խաւարի էին՝ յայանեցարուք. և Թէ եհան
,, զկապեալսն քաջութբ ։ Զոր յաւելու Ծործորեցին
ասել. (՝ի մեկն. մատ. գլ. ԺԲ.) * ի գերեզմանէ
,, և ի դժոխոց հանեալ զկապեալսն քաջութբ իւրով
,, բան նմանութբ արեւու՝ զի ելանէ յառաջ ասաէ ։
յելանելն անդ ի գերեզմանէ։ Այլ նաբեկացին ասէ
(՝ի բանն ԺԷ.) * որ իջեր կամաւ ի տարտարոսն ներ-
,, քին արգելականացն բանտի. յորում և մաղթա-
,, նաց գուռն էր աղխեալ (բան որում ասի Թէ ոչ
,, ոք է որ ի մէնու խոստման առնիցէ առ քեզ,
,, ևն.) և գերեալ անտի զմեծերսին կապուտ վտա-
,, բանդելոցն Հոգւոց, սուսերբ Հրամանի յաղթական
,, բանիդ զկապ սատակման մահուն խզեցեր, և զմե-
,, ղայն կարծես ցրուեցեր ։ Ո այսոսիկ ինքն շարա-
կան մեր ասելով. * ակնարկելով քո ի դժոխս՝
,, Հաներ զկապեալսն քաջութբէ, և որ ննջելքն ի տա-
,, պանի ։ զորս մարգարէին կոչէ քնակեալս ի գերեզ-
մանն։

Ի արոյապէս, Հանէ ած քաջութբէ, այսինքն յայնոցիկ
Թէ ընորհաց իւրոց զկապեալսն ի չղճայս մեղաց և
ի ծառայութբէ ախտից. առ որ փափաքմամբ ինն Հա-
ւատչէբ նաբեկացին (՝ի բանն ԺԷ.) և ասէբ. * սաղմ-
,, դատաստան ի գբի մեղաց կամ տարակուսական.
,, ձեռն մատուցեալ արւէ անստուեր որպէ քարձեր-
,, լոյ, Հանցես զիս ի լոյս քուդ նշուլից ։ Ո այսո-
սիկ եդեալ մարգարէին կամելով ապա զառաւելն
եւս ի մէջ բերել՝ ասէ։

Այնպէս և պատանեցոյց, որ ընակեալ են ի գերեզմանս։

Տեղին ծառայութեանէ և գերութեանէ նմանութիւ իմն գերեզմանն կոչի. որպէս յայտ է (եզեկ. լէ. 12. և 13.) և ըստ այսմ իսրայէլացիք կալով յերկիրսոտս 'ի ծառայութիւն իբրև 'ի գերեզմանի՝ էին որպէս զմեռեալս, զորս և դառնացօգս կոչի. իսկ բառիւս դառնացօղ՝ նշանակի դառնացեալ, և և դառնացուցանօղ. ըստ առաջնոյն յայտ է թէ դառնացեալ էին նոքա 'ի ծառայութենէ անդ. իսկ ըստ երկրորդին յայտ է թէ յետ հանելոյ զնոսա այր 'ի ծառայութենէ անտի՝ բազում իրօք դառնացուցին զնա յամապատիճ անդ. և ըստ այսմ կամի ասել. Եհան նոքա զնեռակեալսն 'ի գերեզմանս ծառայութենէ՝ այսինքն զաղգն իսրայէլի, որք դառնացեալ էին 'ի ծառայութենէ անդ. և յելանելն յեգիպտոսէ՝ յոյժ դարձուցին զդառնութի իւրեանց, և դառնացուցին զնա.

Ամենեքին դառնացողքն իմիանան զեգիպտացիս. յոր միտ կամի ասել. Թէպէտև Եհան նաև զեգիպտացիս՝ որք դառնացուցիչք էին իսրայէլացւոց, բայց ընկղմեաց զնոսա 'ի ջուրս, յորս կերեալ եղէն 'ի ձկանց, և բնաև կեցան 'ի նոսա իբր 'ի գերեզմանս. Այսմ թէ Եհան և զեգիպտացիս՝ որք դառնացան 'ի վերայ էլոհին իսրայէլացւոց. բայց նախ զանգրանիկս նոցա ինքեայ 'ի գերեզմանս. Այլ այս մեկնութի գնի իբր երկրորդական.

Այլաբանօրէն՝ դառնացողքն նշանակին հեթանոսք, որք գրեթէ բնակեալ էին 'ի գերեզմանս, զի 'ի մեռելոց համարի էին առաջի այ. և որպէս մեռեալքն ոչինչ կարեն առնել կենդանոց, այնպէս և հեթանոսք ոչինչ կարացին առնել կենդանոց 'ի շարժել զնա յողորմուի. այլ դառնացան 'ի գործս իւրեանց, և դառնացուցին զնա գարշելիօք իւրեանց. սակայն նա ինքն որ մեծն է ողորմութիւ, գթացեալ 'ի նոսա եհան և փրկեաց զնոսա 'ի դառնութենէ մեղաց, և Եհան 'ի գերեզմանէ խաւարամած ագհուսէ. Իսկ ըստ լամբ". և վարդ". այս հայի յայս քաղուածին քեզ, որով եհան զհոգիս արդարոց 'ի գժոխոց. որպէս եգաք 'ի վերոյ.

Կարօղ ասել՝ նա ըստ անչափ ողորմութենէ իւրում ոչ միայն զկատարեալս մեղաց հանէ 'ի մեղաց, այլև զայ-

նոսիկ՝ որք Թաղեաւլ կան ՚ի մեղս, և իբրև ՚ի գե-
բեզմանս անդրայացեալ են։ Իբր արժան է ՚ի միա
առնուլ զընծաբանութեանն ՚ի մէջ երկաբանելոցդ.
իբր զի կապեալն կարէ նշանակել աստ զայն՝ որ ՚ի
մեղս է կաշկանդեալ, և կամի արձակիլ. որպէս յա-
տուկ է կապելոց խնդրել՝ զի արձակեսցին։ Կամ ընա-
կեալն կամ Թաղեալն ՚ի գերեզմանին նշանակէ զընկղ-
մեալն ՚ի մեղս, և և զանկեալն ՚ի դառն յուսահա-
տութեն կամ յանհաւատութեն։ Այլ ասե զի կամի
զդառնալ մեզաւորին՝ ոչ միայն զկապեալսն, այլև
զԹաղեալսն՝ յապաշխարութեն կոչէ. և եթէ ոչ մեք
ծեացեն նոքա զկոչումն նորա, հանեն զնոսա ՚ի կապա-
նացն և ՚ի գերեզմանաց։

Ըստ այսմ մեկնութեն զոր եդաք, բայս հանել՝ զօրու-
թեն կրկնի, որպէս և կրկնեցաք իսկ. սակայն եթէ
ոչ կրկնեացի՝ այս յետին բան կարէ ընդ հակառակն
և ս մեկնիլ ըստ նկարագրին և ըստ խորհրդոյն. ըստ
նկարագրին կամի ասել. ասե եհան զիսրապետսն յե-
գիպտոսէ որք կապեալ էին անդ ՚ի ծառայութե.
իսկ զդառնացօղսն այսոքան զամոսիկ որք դառնա-
ցուցին զնա յանապատի՝ տասատասն հարկ. որք և բնա-
կեալ են ՚ի գերեզմանս՝ այսոքան որք կան Թաղեալ
յանապատի անդ։

Ոսկ ըստ խորհրդոյն կամ ըստ հոգևորին այսպէս մեկ-
նե վարգան։ Ասե եհան * զայնոսիկ որք կապեալ
,, էին ՚ի չար գործս ձեռաց իւրեանց. իսկ զդառնա-
,, ցօղսն եթող ՚ի գժոխս, զդևս և զկարի չարսն, որ
,, արդ և բնակեալ են ՚ի գերեզմանն՝ մարմնով, և
,, հոգւով ՚ի գժոխս, մեռեալքն այ. զորս ՚ի կատա-
,, րածի հանէ յայլ դառնագոյն տանջանս։

Օ այս ամենայն եդեալ մարգարէին՝ սկսանի այժմ
կարգաւ խօսիլ, Թէ ասե զիւրդ առաքնորդեաց ժողո-
վրդեան իւրում յանապատի. որով և գիտէ բերել
զայն ՚ի հանդիստութե հանդիսի իւրում՝ յածելն զտա-
պանէն տեն. ապա սկիզբն արարեալ պատմելոյ զա-
ռաքնորդելոյն այ ասե։

Ը. Ա՛Ն ընդ ելանել ՚ի առաջի ժողովրդեան ՚ս. ընդ անցանել ՚ի ընդ անապատ՝ երիցս շրջեցաւ ։

Թ. Բանէն Ե երկին՝ ցղջեցին ներեսաց այ ՚ի սինէ առա-
ջի այ Իսրայէլի

՚Ի պատմել մովսէսի զաքանչելիսն զորս եցոյց ած ժո-
ղովրդեան իւրում յանապատի անդ, վերկոսին զայ-
սոսիկ յայտնի ոչ լիշէ այսինքն շարժել երկրի, և
անձրևել երկնից. այլ այսչափ ինչ ասէ. * Այլ եղև
,, յաւուրն երրորդի ընդ առաւօտս ձայնք և փայլա-
,, տակունք. և ամպ միգաստան ՚ի վերայ լերինն սի-
,, նայի լինէին ... և լեառն սինայ ծխեր առ հասա-
,, րակ ... իբրև զծուխս հնոցի ։ (ելից ժԹ. 16։)
Այս ձայնք էին գոչմունք կայծականց ահեղ հնչեցե-
լոց իբրև ՚ի դիմաց այ. յորմէ լինէր շարժել երկրի,
և անձրևել և ամպոց ինքեզոց առ սինայիս. զի այն
պիսի փայլատակմանց և հնչմանց այս գոջծք հետևի.
զորով Թէպէտ և զանց առնէ մովսէս որոշակի գրել,
բայց ՚ի գիրս դատաւորաց (Ե. 4. և 5.) յայտնի խօ-
սի դեբորա, յասելն յօրհնութիւնէ իւրում, * ՚ի ձոր յել-
,, նել քո ՚ի սէիրայ և ՚ի չուել քումմ յանդաստանացն
,, եդոմայ, երկիր շարժեցաւ, և երկինք խոտորեցան,
,, և ամպք ցօղեցին ջրովք, լերինք շարժեցան յերե-
,, սաց ած ելոհայ սինայի՝ յերեսաց ած այ իսրայէլի ։
զորմէ խօսի և ամբակում յօրհնութիւնէ իւրում (Գ. 6.
և 10. տէս զորս ասացաք ՚ի նուագարանն օրհնու-
թեց՝ ՚ի մեհնութիւնէ սոցին։)

Ա. զդ այս եղև յետ յիսուս աւազից ելանելոյ որդւոցն իսրայէլի յեգիպտոսէ՝ յորժամ ած առաջնորդէր իս-
րայէլի յելանել և յանցանել ընդ անապատ. որոց յան-
դիման կացեալ զինքն ՚ի լերինն սինայ այսպիսի ահեղ
երևմամբ, առ ՚ի զգաստացուցանել զնոսա ոչ միայն
երկնչիլ յիւրմէ, այլ և քաջալերել, տեսանելով թէ
քանի հզօր է ած՝ որ առաջնորդէր նոցա։ Հայս զի-
տելով մնդգարէին ասէ ։

Ա՛Ն ընդ ելանել ՚ի առաջի ժողովրդեան ՚ս, ընդ անցանել ՚ի ընդ անապատ՝ երիցս շրջեցաւ ։ Կամի ասել. ելանել քո առաջի ժողովրդեան իսրայէլի ՚ի հանելդ անդ

ԻՐ.

զնոսա չկոխատսե, չկա անցուցանելոյ զնոսա ընդ
ծուղն կարմիր և չկա աճելոյ զնոսա չանապատ, ուր
առաքեսցէ նոցա ի սիւն ամպոյ ի տունջեան և
ի սիւն հրոյ ի գիշերի, յորժամ չանդիման արարեր
զքէզ նոցա ի լերինն սինայ ահեղ փայլատակմամբ,
ի սաստուկ ձայնի քո շարժեցաւ երկիր։ Այս երևի
լինել նկարագրական մեկնութիւն սորա. իսկ փոխարե-
նութիւն առաջնոյդութիւն ոչ շարժեցան լերինքն,
զքանչելի առաջնորդութիւն ոչ շարժեցան լերինքն,
Այս ըստ այսմ բառիս երէից նշանակին քնակիչք երկ-
րին քանանու։ Լուսաբոլ ասպա և զանձրևելոյ երկնից
ասէ։

Եւ Վահանէ և երէից յօղեսցին չերեսաց ոչ ի սենէ առաջի
ոչ խոտաւէ։ Ասէր բառդ չանէ ի մէջ բերէ երբեք պատ-
չառ զայն՝ զոր գրէ մովսես. այսինքն թէ զիարդ
ամի երթեալ կայր ի սինայ լերին, և ձայնք փայլատա-
կանց հնչէին ևն. ըստ այսմ իմանալով կամի ասել.
սասցի երկիր շարժեցաւ, քանզի ձայնք փայլատա-
կանց ահեղ հնչէին յամպոդ ի լերին անդ, յորմէ
շարժէր երկիր. և և նոյն ամպք անձրևեցին, ևն.
Ասէր նկատել արժան է, զի փոխանակ ասելոյ ամպք
անձրևեսցեն, ասէ երկինքք յօղեսցին. քանզի այսպես
էր սովորութիւն խօսելոյ զայսպիսեաց, այսինքն թէ
երկինքք անձրևեն, կարկտեն ևն. յայտ է թէ ոչ լինք-
կանց՝ այլ յամպոց. և զի ցուցցէ թէ այն անձրևել
ոչ եղև ի բարձրութիւն անտի երկնից՝ այլ առ լերամբ
սինայ, յարէ, ի սինէ. այսինքն ի սինայէ կամ ի սի-
նայ լերին. և այս եղև ասէ լերեսաց նմ, այսինքն ի
ներկայութենէն նմ. զոր և մեկնէ կերկնեալ յասելն,
առաջի նմ խորայելի. այսինքն թէ յորժամ ձածն խո-
րայէլ էր ի լերինն սինայ։ Իսկ թէ բայդ յօղեսցէ յա-
պառնին դնէ՝ այդ չէ ինչ. զի սովորութիւն է մարգա-
բէից զեղեցկոյն խօսել երբեմն զլինելեացդ. և անդրա-
դարձեալ. թէպէ զի այլք և ասա ընթեռնուն ի կա-
տարեալն, յօղեցին։

Այմանք, ընդ որս և վարդան զգօղէն երկնից մեկնէն
ի վերայ իմման մանանային. կամ ըստ լամբ՝ ի վե-
րայ առեալոյ օրինացն. և այս ևս ոչ է տարադէպ,
Այլաբանօրէն՝ ի զալ հին մերոյ յաչխարհ, և ի հա-

նել զազգ մարդկան ՚ի ծառայութիւնէ խմանալի փարա-
ւանի՝ և յառաջնորդել նոցա, բնակիչք երկրի շարժե-
ցան՝ ըստ երկուց, մի՝ ըստ զարմանալոյ, և մի և՝ ըստ
փոխոխելոյ նոցա յայլ վիճակ։ Վարձեալ, յեղանել
ձեն մերոյ ՚ի դերեզմանէ, երկիր շարժեցաւ։ Վարձ-
եալ ըստ գրելոյն վարդանայ * յորժամ եհաներ զար-
,, դարան ՚ի դժոխոց՝ յանապատէն բարեաց՝ (այսինքն
,, որ անապատն էր ՚ի բարեաց), երկիր շարժեցաւ
,, ՚ի ժամ յարուներն ։ Նոյնպէս և երկինք յօղեցին
զանձրև հնարհաց և աւետարանի նոր օրինաց՝ յիջա-
նել հոգւոյն սրբոյ յերեսաց ոզգւոյն այլ, ոչ ՚ի սինայէ՝
այլ ՚ի սիոնէ, ուր էին առաքեալքն ժողովեալք ՚ի
միասին։ Վամենայն ասա մարգարէին առաւել եւս բա-
ցատրել զասացեալսն՝ յաւելու և ասէ՝

Ջ. Ընդէր խմաց պարբասպեցեր զբ ծառանփոխնան
հոմ. ընդէրս հետանոցաս, ասխն գոս հասաս
պեղեր գնս, և գասնե ոս բնակիչսդեն ՚ի նմա։

Ողովհետև խնամքն այ մեծ եղև և զարմանալի ՚ի վե-
րայ իսրայէլացւոց յանապատի անդ ՚ի կերակրելն և
յարբուցանելն, ՚ի պահպանելն և ՚ի պատուհասելն
ևս, նմին իրի և մարգարէն զմեծութիւնն այնր ամենայ-
նի յայտնել կամելով՝ հարատարաբանութիւնս խօսի յա-
մենէն,

Ընդէր խմաց պարբասպեցեր զբ ծառանփոխ հոմ։ Ասաղ
խմաց՝ որ դնի իրր յատկացուցիչ անձրևի, ունի գնշա-
նակութիւն ածականի. և նշանակէ կամաւոր. ես որում
դնի յայլ թարգմանութիւնս և իբր՚՝ Այլ ըստ այսմ
բառի անչէն՝ երբակի կարէ նշանակել ասել. մի՝ զան-
ձրևել ջուրց յերկնից. զոր ՚ի նախընթաց համարսն
յօղել կոչեաց. յոր միտ կամի ասել յառաջնորդել
ժողովրդեան քոմ յանապատի՝ կամաւոր յօժարութիւ
անձրևելեցեր նոցա. և ես այսմ մարթի է զայս բան վե-
րադրել՝ նաև յերկիրն աւետեաց. իբր զի ասե ՚ի բերել
զիսրայէլացիս յերկիրն խոստացեալ՝ պատրաստեացնո-
ցա անդ անձրև առատ և պարարտ. ըստ որում ասի
զերկրէն զայնմանէ՝ թէ * յանձրևոյ երկնից ըմպէ
,, զջուր։ (Ը. օրինաց. ԺԱ. 11)։

Երկրորդ՝ նշանակէ զըղխել ջուրց ոչ յերկնից՝ այլ

'ի կամաց՝ այսինքն 'ի կամաւորս սքանչելեաց. իբր զի ուր ոչ եւս նոցա ՀԱԾ անձրև յերկինից՝ բղխեցուցյց քա՛ Հաձոյից կամաց իւրոց Ջուր 'ի վիմէ. որով աբբեցուցյց զժառանգութի՛ իւր՝ այսինքն զիսրսրէլացիս, որք կո. չին 'ի ձգ գիրս ժառանգութի՛ ՀՅ։

Երրորդ նշանակէ զմանանայն՝ որ առ ոչընչէ յերկինից իբրև ցօղ կամ իբրև անձրև կամաւորական Հաձուքն ՀՅ առաքել, և լիալիր առատութի՛. որոյ վասն ասէ լինել անձրև կամաց։ Եւ զի ըստ երից ըստ այսո. ցիկ խնամեր ՀԱԾ զժողովուրդ իւր՝ նաև 'ի տափարա. Հալ նոցա՝ սմին իւրն յարէ զվիմի և ասէ։

Եկէք հետանդացաք, ասէայն դառ հաստատեցեր զիս. Որ բառդ հետանդանալ՝ դնի փոխանակ տկարանալոյ և վաս. տակելոյ, կամ նուաղելոյ և ոչքնելոյ. և ըստ այսմ կամի ասել. Թէպէտ և վաստակեցաւ ժողովուրդ քոյ, և ոչքնեցաւ յանապատի, բայց դու տալով Ջուրջ յամ. ուոց և 'ի վիմէ, և մանանայ յերկինից՝ հաստատեցեր զնա, այսինքն զժողովուրդ քո։

Հոգևորապէս՝ անձրև կամաց նշանակէ նախ զՀոգին սո՛՝ զոր առաքեաց որդին միածին յետ Համբարձման իւրոյ։ Երկրորդ՝ զնորհն՝ զորս Հեղոյ Հոգին ՀՁ յօժարութի՛ և առատութի՛ 'ի ձեր և ՀՅ՝ և ոչ բան արժանաց մերոց. որով և կոչի անձրև կամաց։ Երրորդ՝ զքո գիրս և զքարոզութի՛ աւետարանին, զոր իբրև անձրև Հոսեցին առաքեալք և վարդապե. տութի՛ն 'ի լոյս կամացն ՀՅ. և զի զերկնային վարդապե. տութի՛ն 'ի կամն մարդոյ է, պահել՝ և ոչ պահել, վասն որոյ բան այսմ ևս կոչի անձրև կամաց։ Չորրորդ՝ զՀոգևորական մանանայն, այն ինքն է մեսուռ. բական ազօթքն, որ տայ զամենայն ազգ Հաւոյ. իբր զի ևքէ կամիցի ոք առնուլ զՀամ խնարհութի՛՝ և և իցէ մեռածական ազօթք տայ նմա զայն. ևքէ կամիցի առնել զՀամ Հեզութի՛՝ գտանէ 'ի մտածութի՛ և և իցէ Հոգևոր իրաց. այնպէս և զայլոց խմ՛. զորօրինակ ևքէ կամիս ատանալ զՀամբերութի՛, կարես գտանել զայն ոչ միայն 'ի մտածելն զոգուտ Համբերութե՛ն, այլև 'ի խորհելդ զլաբլաբանս քեզ, զմեզ քո, ևն. զի և և իցէ բարի մտածութի՛ է իբրև մանանայ ամենա. ձաշակ, այսինքն տուօղ ամենայն Համոյ։ Ինչպէ.

բորդ՝ զերկնային քաղցրութիւնն՝ զորս հաղորդէ ածծառայից իւրոց քաղցրանալ ի կամն ի ծառայութիւնէ նոցա։ Ալ եղբորդ՝ զառաքինուիս զոր ածծ պատրաստ, և մարդ կամովին կատարէ. յայս սակս և կոչի անձրև կամաց։

Յայսոսիկ յամենեսեան՝ ի հիւանդանալ մարդոյ հոգւով, կամ ի վաստակիլն ի նեղութենէ՝ հոգին աջ ի ձեռն չնորհաց իւրոց առողջացուցանէ զնա և կենդանգործէ. ի պատիլ և ի նքնթիլ հոգւոյն՝ բանն ածծային մխիթարէ. ի խոտորիլ կենաց յուղղութենէ վարուց՝ Հնմարիտ առաքինութենէն բարեկարգէ, մանաւանդ առաքինութենէն հանձայնութենէ կամաց մերոց ընդ կամացն ոչ։ Վարձեալ և այլազգ եւս, ի հիւանդանալ մարդկային բնութենէ ազատեւ, եթէ հնչաս որդին ոչ, և հաստատեաց զայն։ Վարձեալ ի հիւանդանալ եկեղեցւոյ հալածանաց, հաստատեաց զնա նոյն ինքն որդին ոչ։ Այս զի յայսմ ամենայնի գհետ գայր ուսուել խաղաղ և անդորը բնակութենի յերկրի և ի կեանս, զայս կամելով յայտ առնել մարգարէին՝ յորէ զնոսի և ասէ։

Այս գաղանս սո բնակեսցեն ի նմա։ Արգարէն այլուր (ի սաղ. հէ. 52.) խաչին և հօտի նմանեցուցանէ զիարսէլ՝ ի հանել զնոսա ոչ յեգիպտոսէ՝ յասելն. * Հորդան հետ որպէս խաչին ժողովրդեան իւրոյ, և ,, Հնան զնոսա որպէս զՀօտ յանապատ ։։ այլ քանզի յանապատի անդ զամն քառասունն իրրև զվայրի էրէս շրջեցան, վասն այսորիկ զոր խաչին նմանեցոյց յերես նեղն յեգիպտոսէ, սատ գազանաց նմանեցուցանէ զնոսա ըստ շրջելոյ յանապատի. մանաւանդ զի բազում անգամ իրրև զգազանս կատաղեցան նոքա, և յարեան ընդդէմ մովսէսի, և և ընդդէմ ոչ. բայց ածծ յամենայնի զինամ իւր ցուցանէր յով առ նոսա՝ որոյ զի խոզաղութիւն բնակեցոյն ի նմա, այսինքն թէ լուծանի պիտոյից իւրեանց կացցեն յանապատի անդ ընդ հովանեաւ ամպոց. այս թուի լինել ասացեալգ. * և գազանք քո բնակեսցեն ի նմա ։։

Արթի է ասա գազանքդ խմննալ զի և իցէ կենդանի նոա. յոր միա ասի (եզեկ. ա. 5.) * կերպարանք չորս ,, բիչ գազանաց ։։. այսինքն չորից կենդանեաց. զի

էին անդ և կերպարանք եղին, և արծուոյ, և մարդոյ, որք չէին գազանք բայց գազանս կոչէ. որպէս առնէ և ամբակում. քան սակս մարգարէս գազանս՝ այսինքն կենդանիս անուանեալ զիսբայէլացիս. և վկայէ ևս՝ ազաղակել զսուտ յանապատի անդ իբր յանդորր բնա-
կութեան։

Սմանք աստանօր գազանաց իմանան զտասը ազգս, որք բնակեցան և բնակին յանապատի անդ, ընդ որ անցին իսրայէլացիք. զի ասի թէ յառաջ քան զնոցանեալ իսրայէլացւոց ընդ այն անապատ ոչ ոք բնակէր անդ՝ և ոչ էակ էրէ վայրի վասն երաշտութեան. բայց յորմէ հետէ եհան ՅՀՃ անձրև որդւոյն իսրայէլի՝ ի հանապազորդել այնը՝ բազձալ անտի երաշտութեն, և այսպէս հնար եղև բնակել անդ մարդկան և վայրի գազանաց։ Այլ յայս միտ առեալ՝ դիտաւճն մարգարէին լինել ցուցանել զառատութեն գթոյ իսրայէլի՝ յառատանձնել նորա զանձրև կամաց՝ ոչ միայն ժողովրդեան իւրում, այլ և վայրենի ազգաց, և գազանաց վայրի։

Այլաբանօրէն՝ հեթանոսք որ էին իբրև գազանք, նոյնպէս և գազանաբարոյ մարդիկ, անդուլ իշխանք և թագաւորք, և անձինք վայրենացեալք արատաբին իմաստութեբ, բնակեցան յեկեղեցւոջ քրի։ Այնպէս և քոյ լամբ՝ բազմութեբ հրեշտակաց օրք ի սպասաւորել խորհրդոյն այ՝ երևեցան ի կերպարանս գազանաց, (որպէս ետես եզեկիել. ա. ։ ։) բնակեցան և բնակին յեկեղեցւոջ առ ի վանել զչար գազանսն այսինքն զդևս, և առ ի զօրացուցանել զմնդրիկ յաւուրքն վերջին։ Ո այս եգեալ մարգարէին՝ առաջի առնի այժմ. և զիւրեքի պատրաստուհին, զոր եցոյց ՅՀՃ ժողովրդեան իւրում վասն որոյ ասէ։

ԺԸ. Պաբաոս արբեր հաղցրութբ ո աղտոտ ՅՀ. ոբը գազ ոչ գիտեն, այլ սահարանեն զօրութբ բանիս։

Զև խօսից մարգարէին այնպէս ցուցանել, որպէս թէ ՅՀ թագեալ զայլ ամենայն որդիս մարդկան. միայն զիսբայէլացւոց Հոգոյ, և որպէս թէ ամենայն փոյթ նորա զնաբջ իցէ. և այն՝ ոչ եթէ իբրև զպատուական, նաբջ, այլ իբրև զանարգ օգ. զոր և յայտ առնէ, բառիս

աղքատ՝ յաճախ։

Պատրաստ արտեր չաշխատող ոչ պիտի ունի։ Ոչ միայն թէ զինչ է այն՝ զոր պատրաստեաց ումն ժողովրդեան նուրուժ, այլ դնէ միայն՝ թէ քաղցրութիւն նորով պատրաստեաց զոր պատրաստեացն. և այսու ցուցանէ թէ զամենայն բարիս պատրաստեայ նոցա ելիւն ըստ մարմնաւորին, և ելիւ ըստ հոգևորին. զի ըստ մարմնաւորին՝ զամենայն որ ինչ հարկաւոր էր նոցա յանապատի՝ զամենաձաշակ և զամենահամ մանանայն զայն. սոյնպէս և ըստ հոգևորին՝ ի լինելն առ նոսա միշտ նեբկայ. և ի տալ նոցա զպատգամն և զօրինս ևս. և զայս ամենայն ասէ արտերք քաղցրութիւն նոր նորա

հայր խնամելով, և երբև մայր փայփայելով։

Ոչազգն իսրայէլ աղքատ կոչէ ըստ երից. մի՝ զի յայնժամ յանապատի անդ ոչ ունէին քաղաք և ոչ տուն բնակութիւն, և ոչ թագաւորութիւն, և ոչ կարդ պինուորութիւն։ Երկրորդ՝ զի յանապատի գոլով ոչինչ ունէին յերեսանց, թէպէտև զամենայն ինչ ունէին յետ։ Երրորդ՝ զի զուրկ էին յամենայն իմաստութէ, և ի հոգևորութէ, ևս և ի քաղցրութէ մարդկային բարուց, այլ միմիայն զնոսա իմաստութէ նորով և

հոգևոր պարգևօք, և երբեմն ևս պատժովք։

Ոհոգևորապէս՝ ես այդ արար աղքատացեալ քնուեա. յորմէ և կացոյց եկեղեցի ես. և նորով քաղցրութէ պատրաստեաց զամենայն հոգևոր բարիս՝ մանաւանդ զչերապոյնն յամենայնի զկարհուրդ մարմնոյ և արեան նորոյ՝ զմանանայն կենդանի։ Այնպէս այդ առնէ ես աղքատացելոց հոգւով, և խոնարհելոց սրտիւք. և ընդ զնոսա քաղցրութէ նորով յերկնային բարեաց. և տայ նոցա առնուլ զչաշակ պատրաստեալ երանութէ։ Եւ զի յայսմ ամենայնի յայտնեաց և յայտնէ զինքն բանիւ նորով՝ ի տալն անդ զբան իւր առ՝ ի ցոյց նորոյ զօրութէ, յիշէ մարգարէն և զայն ասելով։

Տէր պատճէ ինձ, ոչ առեպարանէն զօրութէ քոյմա։ Այս բան եթէ ընդհանրապէս մեկնեսցի՝ ցուցանէ թէ ես է որ տայ մարդոյ խօսիլ զօրութէ մեծաւ զբանն կենաց. կամ թէ զոր ինանգամ ընտրէ ես՝ ի պաշ-

տօն բանից իւրոց այսինքն ՚ի քարոզուե պատգամաց
իւրոց կամ՚ի յայտնել զկամս իւր. որպիսի եղեն մար-
գարէք և առաքեալք, տայ նոցա լոյս և հանճար,
վստահութիւն և ձարտարուե ՚ի խօսիլ զբան իւր. կամ
գնէ ՚ի բերան նոցա՝ ասել զայն ինչ՝ զոր ինքն կամի.
և ՚ի բանն յայնոսիկ տպաւորէ զայնպիսի զօրութիւն
և զազդուրն՝ մինչև համոզել զունկնդիրսն, և ոչ
կարել նոցա հակառակիլ. յայս ոիտ ասաց Տէրն մեր.
(ղուկ. ԺԲ. 15.) * ես տայ ձեզ բերան և իմաս-
„ տուե, որում ոչ կարիցեն կալ հակառակ կամ տալ
„ պատասխանի ամենայն հակառակորդքն ձեր ‖. և
(՚ի մատթ". Ժ. 18.) ասէ. * Ա.ռաջի դատաւորաց
„ և թագաւորաց տանիցին զձեզ վասն իմ, ՚ի վկայու-
„ թիւն նոցա և հեթանոսաց. այլ յորժամ մատնիցեն
„ զձեզ, մի հոգայցէք՝ թէ որպէս կամ զինչ խօսի-
„ ցիք. զի տացի ձեզ ՚ի ժամուն յայնմիկ՝ զինչ խօսի-
„ ցիք. զի ո՛չ եթէ դուք իցէք, որ խօսիցիքն, այլ
„ հոգին հօր ձերոյ՝ որ խօսիցի ՚ի ձեզ ‖։ Ա.ւ ըստ
այսմ կամի ասել մարգարէն. ՅԱծ տայ զբան իւր ո՛ւմ և
կամի՝ խօսիլ զայն կամ աւետարանել ազգուրիւնք
բազմաւ, կամ առատ մտօք և զօրաւոր իմաստիւք։
Ա.սկ եթէ ՚ի մանաւորի առցի այս բան, ցուցանէ
նախ զայն զոր արար ՅԱծ յառաջնորդել որդւոցն Իս-
րայէլի յանապատի անդ. զի ետ զբան իւր մովսէսի և
ահարոնի՝ աւետարանել և քարոզել նոցա զօրութիւն
բազմաւ, այսինքն ազգուրիւնք և սքանչելեօք. որպէս
արար և յետ այնր ՚ի ձեռն մարգարէից իւրոց, և ա-
ռաւել ևս ՚ի ձեռն առաքելոց։ Ցուցանէ երկրորդ
զայն՝ զոր արար ՅԱծ յանցուցանել զորդիսն Իսրայէլի
ընդ ծովն կարմիր. զի ետ զբան գոհուե կամ զերգս
գովաբանուե ՚ի բերան նոցա՝ երգելով աւետարանել
այնու զփառս իւր զօրութիւն բազմաւ, այսինքն բա-
զում ուրախուիւն և ցնծուիւն ‖. կամ ետ նոցա հըր-
ամայել զբազում զօրուն իւր՝ զոր եցոյց նոցա։ Որպէս
արար և յածելն անդ դաւթի զտապանակն, յորում
հանդիսի ասացաւ այս բան։

Ցայսմ ամենայնի դիտուիմն մարգարէին և ցուցանել
Թէ զորօրինակ պատրաստեաց ՅԱծ ժողովրդեան Իս-
րայէլի զփառաց նոցա բան մարգոյ, նոյնպէս պատրաս-

տեաց և պատրաստէ նոցա և զկերակուր ըստ հոգ-
ւոյ, և տայ ծառայից նորոյ քարոզել զայն հոգևոր
կերակուր առ ժողովուրդ իւր. և կամ հրաշակել առ
այլս, և կամ վերաբերել զնոյն առ ինքն երջանիկ օրհ-
նութեանն։

Կարօտապէս սովին ցուցանի թէ չէր այլ աջոզի զօրուն
քարոզութենէ բանին. ցուցանի և հարկաւորութեն քա-
րոզուենն'ի փրկուն մարդոյ, և այս՝ կամ լսելով, կամ
տեսանելով, և կամ խօսելով. լսելով յունկն դնելն
բանից քարոզչին կամ խրատատուին. տեսանելով յըն-
թեռնուելն զգիրս, կամ'ի նշմարելն զբարի օրինակս.
խօսելով յորժամ մարդ ընդ ինքն խօսելով խրատ
զանձն'ի զգաստութեն։

Ա՛յլաբանօրէն, բանիւ՝ նշանակի աստ բանն ած՝ որ-
պէս միածին. զոր ետ մարդկան՝ հայրն երկնաւոր որպ
պրեթէ անբանացեալ էին։ Ա՛րդ հայելով'ի կարգ
տուչութենն, նախ առաջին խոստմամբ ետ զայն'ի
սկզբան, զոր և աւետարանեցին նահապետք և մարգա-
րէք պէսպէս զօրուբ, այսինքն զօրուբ բանից և զօրուբ
գործոց։ Ա՛յս ապա'ի վախճան աւուրց՝ ետ զայն իրօք
յարգանդ անարատ կուսին. այսինքն արար՝ զի մարմ
նասցի յարգանդէն նորա, զոր և նա ինքն կոյսն մա-
րիամ առօրին աւետարանեաց սքանչելի բանիւ առ
եղիսաբէթ, և եղիսաբէթ առ նա. և սա և հրեշտակք
առ հովիւս, և թափաւորք առ հրեայս։ Ա՛յս յաւար-
տիլ ամենայն անօրինութեց՝ տիեզերահռչակ աւետա-
րանեցին զնոյն առաքեալքն և աւետարանիչք։ Ա՛յս
աւետարանութեն նոցա ճնաց և մնայ մինչև'ի կա-
տարած աշխարհի։ Ա՛յլ թէ այն որ՝ որ արար զայս,
և ետ զայսպիսիս գործել, ւրպիսի էցէ՝ յայտ առնէ
մարգարէն ասելով։

ԺԲ. Ձ Ձափաւոր ջօրութենէ աւրհնութեց. Ղեղկեցիութենէ պան
տս բաժանեալ յաւարէ. Ընդպէս և հնդկաւէտ'ի
ղէմ ելեծակաց։

Մինչև ցարդ զոր միանգամ ասաց մարգարէն թէ-
պէտ և դժուարամեկնելի էին, բայց իւրիք բացատրու-
թիւք ինամատ ինչ ընծայէին. և սակայն աստի սկսեալ
յերկիս հատարտ՝ զոր ինչ դրէ՝ է անմեկնելի. և ոչ

պատաւ ոք որ յայտնէցէ զհարազատ իմացուած այսոցիկ բանիս. եթէ յերբայականն դիմեմք, ոչինչ լոյս ընծայէ. քանզի և անդ զոր այս ոք այսպէս թարգմանէ և իմանայ, այլ ոք այլապէս թարգմանէ և այլապէս իմանայ. ըստ որում ունիս տեսանել՝ի համեմատու. թիան՝ի վերջ գործոյս. մատիցուք ապա՝ի մերս, որ ասէ:

(6) Թագաւոր զջուրն ելից ուէլեայ: Կայսի ասել. այն տէր զորմէ ասացի տալ զբան աւետարանչաց, և թագաւոր զջրոյն ելից. այսինքն թագաւոր ամենայն իշխանութիւնէ և տէրութիւնէ, կամ թագաւոր ամենայն թագաւորութիւնէ և ամենայն երկնային զօրաց, և նոյն ինքն՝ որ և թագաւոր զջրոյն ելից, և թագաւոր ուէլեայ, այսինքն իսրայէլի որ և իւր սիրելի ժառանգութիւն: Կամ զի տունն ոյդ էր՝ի մէջ իսրայէլի, և պեղեցկութիւնն այնր տան էր տապանակն ոյն՝ զոր յաւուրս հեզեկեայ քահանայի յաւարի առին այլազգիք. վասն որոյ խօսել զինքն ասէ զնոյն թագաւորն ասէ:

(7) Գեղեցիս քան զորդիս մարդկան: Այսինքն զտապանակն որ էր գեղեցկութիւնն տան քո իսրայէլի՝ յաւարի առին այլազգիք. զի գերեցին զայն և բաժանեցին հիւրեանս. քանզի նախ բաժանեցին հիսրայէլէ և տարան յազովտոս, և անտի՝ի գէթ, և անտի յաս-կաղոն, և ապա յանդաստան այլազգեաց (ա. Թագ. Է. 1. 9. 10: և Ձ. 1:) Կ.յս հիւրն և հարր զնոսա ասէ, ՚ի մի ժողովեցան նախարարք որք բնակէին՚ի մէջ վի-Ճակացն այնոցիկ, և խորհուրդ արարեալ դարձուցին զտապանակն առ իսրայէլ՚ի բեթսամիւս. (ա. Թագ. Ձ. 12 — 18:) և իսրայէլացիքն առին անտի զայն և տարան՚ի կարիաթարիմ՚ի տուն ամինադաբայ (ա. Թագ. Է. 1:) Յայտնիկ հայելով մարգարէին յարէ զկնի, և ասէ:

(8) Էպէդա ննջեալէ՚ի մէջ վիճակաց: Կ.յս քան յերիս կարէ հայիլ. մի՝ առ այլազգիսն. յոր միտկամի ասել խօսելով առ նոսա. յառնուլ ձեր զտապանակն Եհէ-ովէտ և ննջեալիք այսինքն յանհոգս կացիք և՚ի հանգստեան՝՚ի մէջ վիճակաց ձերոց յերկրի ձերում, քայց ոչ միասիքք՚ի նմին. այլ ջարչարեալիք, և տի-պեալիք դարձուցանել զայն. որպէս և արարիքն իսկ.

և ահա այժմ մեք առեալ զայն ՚ի տանէ անտի ամենատաբաց ածեմք փառօք և խնդութե՛ ՚ի տեղին պատրաստեալ սմա։

Երկրորդ՝ կարէ հայել առ բեթսամիւսացիս և առ կարիաթարիմացիս, որք էին ՚ի մէջ վիճակացն Յուդայէլի. որոց ՚ի ննջելն՝ այսինքն յանհոգս ինալ՝ եհաս տապանակն։

Երկրորդ որ առաւել ևս յարմարագոյն է՝ այս հայել առ ցեղն Խաբարայ, զորոց ասի (՚ի գիրս Ծննդ. խե. 14). * Խաբար բարւոյ ցանկացաւ հանգուցեալ ՚ի ,, մէջ վիճակաց. տեսեալ զՀանգիստն՝ զի դեղեցիկ ,, էր, և զերկիրն զի պարարտ, (ոչ կամեցաւ պատե- ,, բազմաւ կեալ, այլ) եդ զուս իւր յաշխատիլ. և եղև ,, այր արդիւնարար ‖։ Եւ զի այս ցեղ բնակեալ էր ՚ի ծագ գալիլեայ ընդ հարաւ, սովին նշանակին զոր գալիլեացիք, որք յետոյ ուրեմն իմացան զաւակ- րիլ տապանակին, և զդարձ նորին. վասն որոյ ննջեալս Համարի զսոսա, ՚ի ննջել ձեր ասէ մեք ածեմք ահա զտապանակն՝ զդեղեցկութե՛ տաճարին։

Ընտանօր եթէ բառդ ներգործ՝ առցի կոչականապէս, դիւրաւ ևս մեկնի այս բան. որպէս թէ ասացեալ էր. ո՛վ Թագաւոր Իսրայէլի սիրելւոյ՝ զտապանակ քո զոր յաւարի առեալ էին այլազգիք, ահա բարձեալ տա- նիմք ՚ի տուն քո. և արդ ո՛վ ազգք բնակեալք ՚ի վի- ճակս, զի՞ ննջէք՝ Ձանապարհ արարէք գալստեան Թագաւորին մերոյ՝ որ յանդիման ցուցանի այսու տա- պանակաւ։

Ո՞ այսոսիկ ՚ի մէջ բերելով մարգարէին՝ դիտէ ա- ներկևան ցուցանել զՀանդէպն զայն, յորում ասէր զայս բան. և ըստ այսմ դիտման կամի իմացուցանել զկնոտահուն սրտի իւրոյ. և դրեթէ ասէ. աներկևան ցնծութի՛ բարձեալ բերեմք զտապանակին Ն։ և ոչ ումեմք ուստեք ինչ երկիւղ. զի Թագաւորն զօրութե՛ ընդ մեզ է. և եթէ յարիցեն ՚ի վերայ մեր ազգք յա- ւարի առնուլ զգեղեցկութե՛ տան Ն, այսինքն զտա- պանակին, և ոչ գայցէ ոք յԻսրայէլացւոց յօգնութե՛ մեզ, այլ ամենեքին ննջեցեն ՚ի վիճակս իւրեանց, նա ինքն Թագաւորն զօրութե՛ պաշտպանեսցէ մեզ։

Ա. Յաջորդումն՝ Թագաւոր զօրութե՛ նշանակէ զՀայրն

երկնաւոր. և սիրելին նշանակէ աստ զքո, որ է միա-
ծին որդի ամենասիրելի՝ հօրն երկնաւորի: Նոյնպէս
զեղկութիւնք տանն ոյ նշանակի վայելչուն եկեղեցւոյ՝
որ յառաջն երևելոյ միայն ի մէջ խորհելի: Նայել ի
մարմնանալ որդւոյն ոյ՝ և ի մեռանիլ նորա և ի յառ-
նել, ևս և ի համբառնալ նորին յերկինս և յինջանել
հոգւոյն՝ ետ հայր զբան աւետարանութիւնէ ի բերան
առաքելոց՝ որք սփռեալ յաշխարհ ամենայն ետուն
լսելիս բաժին ի հարուստ աւարէ նմն ամենայն ազգաց
զայն եկեղեցի ոյ՝ որ լինելոյ երևելոյ. ուստի և
ազգք և ազինք բաժանեցին յաւարի զգեղեցկութիւնն
եկեղեցւոյ, յարելով ի նա յամենայն սրտէ, ընդու-
նելով զհաւատս և զխորհուրդս, ևն. որովք և եղեն
անդամք և բաժին եկեղեցւոյ:

Եւ քանզի ի սակաւ ժամանակի կատարեցաւ այս,
վասն այնորիկ գնաց բաժանել յաւարի. զի բաժանումն
աւարի փութով և ձեպով վճարի. ըստ որում՝ ի ժա-
մանակի անդ առաքելոց՝ որոց վիճակաւ բաժանեցան
ամենայն կողմանք աշխարհի, վաղվաղակի սփռեցաւ
գեղեցկութիւնն եկեղեցւոյ. * այնպէս առատացեալ
„ յաւետարանել, ոչ ուր անուանեցաւ քո‖. (հռոմ.
ժե. 20):

Եւ զի ի ժամանակի անդ քարոզութե գրեթէ ննջեալ
կային ամենայն ազգք յանհոգս՝ լոյր անզգայ ի մէջ
երկուց վիճակաց, այսինքն ի մէջ փրկութե և դա-
տապարտութե, լոյր թէ փրկութի արդեօք վիճակե-
լոց էր նոցա՝ թէ դատապարտութե, վասն այնորիկ
ասէ. թէպէտ և ննջէք ի մէջ այսոցիկ վիճակաց,
բայց ի քարոզութե աւետարանին ունիք ընտրել զբա-
ժին բարւոյ:

Նայ ըստ որում հարց այսոքիւք վիճակօք իմացեալ լինին
հին և նոր կտակարանք, զոր ժառանգեցին հեթա-
նոսք, ըստ որում վիճակն կարէ նշանակել զվիճակաւ
ժառանգեալն. ըստ այսմ բառդ ընդպէպ դնի փոխանակ բա-
ռիս այնուհետև, կամ փոխանակ բառիս էնէ, որով միտ բա-
նին լինի այս. եթէ այսպէս եղիցի ձեզ, հանդիպիք
այնուհետև ի մէջ հին և նոր կտակարանաց. կամ
յընդունել ձեր զգեղեցկութի եկեղեցւոյ՝ հանդիպիք
խաղաղութէ ի բանս որ կտակարանաց հին և նոր

օրինաց : Կամ հանգիջիք ՚ի մէջ այսոցիկ երկուց վճռ-
ձևակացս այսինքն ՚ի մէջ արհամարհելոյ զերկրաւորս
երջանկութեն, և ՚ի մէջ ընտրելոյ զերկնաւորն երա-
նութեն :

Դարձեալ՝ թագաւոր զօրութենէ կ՚ասի ինքն քա՝ զո-
լով թագաւոր եկեղեցւոյ սիրեցեալն իւրոյ՝ որ և առի
լինել տուն նորա. զորոյ զգեղեցկութեն իբրև զաւար
ժառանգեցին և ժառանգեն ազգք հեթանոսաց,
յորս քարոզեցին առաքեալք յիւրաքանչիւր վիճակս.
և թէպէտ ինքեանք ննջեցին ՚ի նոսին՝ բայց բանք
նոցա մնացին ՚ի տոսին : Կ՚ասի նա և իբր աւա-
րառ զընտրհս հոգւոյն սրբոյ, ոմն զայս և ոմն զայն տա-
նելով. զի թէպէտ բաժինք շնորհացն են, այլ հոգի
նոյն է : Կ՚ասի միտս մեկնէ և վարդան :

Դարձեալ՝ եթէ բառդ նագա՞ր. իբր հանրական առ-
յն կամ յոգնակի դնիցի, այս բան ցուցանէ՝ թէ իւ-
րաքանչիւր թագաւորք այլևայլ ազգաց, որք տիրէին
զօրաց բազմաց՝ եղեն անդամք սիրելոյն այսինքն քրի-
ստոսի և եկեղեցւոյ նորա. զի թէպէտ և ննջեալ էին ՚ի
մէջ երկուց վիճակաց, այսինքն ՚ի մէջ գերեզմանաց
տանցն և ՚ի մէջ ծառայութենէ մեղաց, կամ ՚ի մէջ
վիճակելոյ այսմ չծծոյ և վիճակելոյ այնմ չծծոյ.
կամ ընդ հակառակն՝ ՚ի մէջ վիճակելոյ կենդանութեան
այ և վիճակելոյ բռնաւորին սատանայի, բայց յոր-
ժամ դարձան առ քս, և միացան ընդ եկեղեցւոյ,
սրբեցան, և իբրև զաւար յափշտակեցին զգեղեցկու-
թիւն տանս այ, այսինքն զարքայութենէն. զի ասաց տէր.
* արքայութենէն երկնից բռնադատի, և բռնութք յափշ-
,, տակիւն զնա ‖. (մատ. ժա. 12) :

՚Ի մէջ սոյն միտս մեկնէ ըստ իմոք և լամբ". և զայս բնա-
բան փոքր ի շատէ ընթեռնուլով ըստ յունականին՝
պրէ այսպէս. * թագաւոր զօրաց սիրելոյ զգեղեց-
,, կութեն տան քո բաժանեալ յաւարի. Թէպէտ և
,, ննջեցեն ՚ի մէջ վիճակաց : Թագաւոր իմանամք
,, զքս, որ թագաւորեաց մեզ ոչ միայն ըստ ճծու-
,, թեն, այլև մարմնոյն. իսկ զօրք սիրելի է նմա
,, եկեղեցի. որպէս և ասէր ինքն. որպէս սիրեաց
,, զիս հայր իմ, և ես սիրեցի զձեզ. հաստատուն
,, կացէք ՚ի սէր իմ : Որոց բաժանեաց քս զգեղեց-

„ կուԹէ տան իւր յաւար. քանզի ո՛չ եԹ փոխարէն
„ գործոց արդարակշիռ իրաւամբք, այլ հաւատովք
„ յափշտակողացն աւար. ըստ այնմ, յայմ հետէ
„ արքայուԹիւն աւետարանի, և ամենեքեան յափշտա-
„ կեն զնա. զի զոր գործս կշռեաց գԼին աւազակն՝
„ որ էառ զնոյն, կամ անդամալոյծն, կամ այլք բա-
„ զումք: Յաւատոյն աւար բաժանեաց, և ոչ պա-
„ հանջեաց զգործս գԼին. վասն այսորիկ մաքսաւորք
„ և պոռնիկք յափշտակեցին զնոյն, և փարիսեցիքն
„ գործովք վերջացան: Ա՛ստի և ննջեցին ՚ի մէջ
„ վիճակաց, վիճակս կարծեմ ասել զպանապան գործս
„ իւրաքանչիւր ումեք, յոր ննջեալ էին մարդիկ հե-
„ տուԹիք մեղաց. ոմն ՚ի շնուԹիւն, ոմն յարբեցուԹիւն,
„ ոմն ՚ի կախարդուԹիւն, և յայլ չարեաց գործոց վի-
„ ճակս: Ա՛րդ ԹէպԹև ՚ի սոսին ննջեալ հեշտա-
„ նային, սակայն յորժամ մկրտեցան, ոչ խոտեցան,
„ այլ եղեն ժառանգորդք երկնից արքայուԹեն և
„ ժառանգակիցք քոն. և ո՛չ ըստ վիճակի մեղացն
„ աւելին պատուհաս, այլ աւար առեալ զփառս երկ-
„ նային տաճարին՝ եղեն ՚ի քո մի ||:

Ղարոյապէս՝ Թագաւոր է ՚ի հոգին՝ բանական մասն,
զի է Թագաւոր զօրուԹեց հոգւոյն, և մանաւանդ
սիրելոյն այսինքն զգայական մասին, որ միանգա-
մայն է սիրել և Թշնամի: Ա՛րդ ՚ի սկզբան անդ յոր-
ժամ կարողուԹիք հոգւոյն ննջէին կամ հանգչէին
՚ի դրախտի ՚ի մէջ երկուց վիճակաց, այսինքն ՚ի մէջ
հոգևոր և մարմնաւոր բարեաց, կամ՚ի մէջ երկնային
և երկրաւոր խաղաղուԹե, կամ՚ի մէջ տեսական և
գործնական կենաց, կամ ընդ հակառակն յորժամ
ննջէին ընդ մէջ երկուց վիճակաց այսինքն ՚ի մէջ
ծառոյն կենաց և ծառոյն գիտուԹե, կամ ՚ի մէջ
վիճակի հաստատուԹե ընտրհաց և վիճակի կորուսա-
նելոյ զայն, կամ՚ի մէջ կենաց և մահու, յաւուրն
առին գևք զգեղեցկուԹիե երջանկուԹե դրախտին,
ևս և զգեղեցկուԹիե հոգւոյն: Ա՛յս պատահի և յիւ-
րաքանչիւր անձինս ՚ի մեղանչելն, և միայն ՚ի շնոր-
հաց ետն լինի գտանել զնորոգուԹիե:

Ո՛ այսոսիկ եգեալ մարգարէին՝ գառնայ միւսանգամ
Հայիլ յաղգն իսրայէլ. և զայլոց հանգամանաց նո-

երին ևս խօսելոյ ասէ։

ԺԴ. (1) Եւ աղաւնւոյ աչքանմատպա, և ընկնամէջ նորա է գոյն ասէոյ։

Վետուրք թևոց աղաւնւոյ առ լուսով արևու յորժամ զկողիւք յածին՝ գրեթէ իբր արծաթ ապխտակ փայլեն. վասն որոյ և նմանուԹիւն ինն թևք նորա արծաԹասլատ ասին, կամ որ նոյն է արծաԹատպատ իրն նմանին։ Նոյնպէս և փետուրք Թիկնամիջի նորա յանդիման արևու իբր ոսկեգոյն շողշողին, որով և գեղեցիկ երևին։ Որդ քանչ առակաբանուԹիւն խօսէ աստ մարգարէն զնորայիկն ընդ նմին և զեկեղեցւոյ, կամելով զերազանց ինն ցուցանել զնոսին՝ զայսպիսի նմանուԹիւն բերէ ի մէջ ասելով։

(1) Եւ աղաւնւոյ աչքանմատպա, և ընկնամէջ նորա է գոյն ասէոյ։ Ի վերոյ ի սկզբան նախընԹաց Համարոյն՝ մարգարէն կոչեաց զնորայիկ սիրելի, և Թէ որ ումն է զօրուԹենէ՝ է Թագաւոր նորա, յասելն. * Թագաւոր զօրուԹենէ սիրելւոյ ||. իսկ աստ անուանէ զնա աղաւնի. ըստ որում և ուխէդ (ՃՁ. 11.) աղաւնի կոչէ զնա, սոյնպէս է և (ի գլ. Ճ. 11)։ Եւ սուրբ նիա յանուն քաղաքին՝ աղաւնի առճայնէ յասելն. * Ո՛ երևեալդ փրկեալ քաղաք աղաւնի ||. (սուրբ. գ. 1)։ Եւ այս՝ ըստ պէսպէս յատկուԹենէ աղաւնոյ, զորս կրէր յինքեան ազգն իսրայէլի։ Զայս մեկնուԹենէ նպաստակ մեկնաբանուԹենն քաղդէացւոյ, որ ասէ այսպէս. * եկեղեցին իսրայէլի՝ որ նման է աղաւնւոյ՝ ծածկեալ ամպովք փառաց ||։

Զնա այսր աղաւնւոյ էին բազմադիմի խորհուրդք՝ որք յանդիման անստեղծ արեգականն այսմիջոցս ևս իբրև ցարծաԹ փայլէին. զի կարգեալ էին ի պէսպէս լուսափայլ խորհուրդս, յորս ունէր Թռչիլ իսրայէլ։ Նոյնպէս և Թիկնամիջն նորա յանդիման արևու իբր ոսկեգոյն շողշողին, որով և գեղեցիկ երևին։ Որդ քանչ առակաբանուԹիւն խօսէ աստ մարգարէն զնորայիկն ընդ նմին և զեկեղեցւոյ, կամելով զերազանց իսկ զնոսին՝ զայսպիսի նմանուԹիւն բերէ ի մէջ ասելով։

Վարձեալ Թևօք նշանակին աստ մարգարէուԹիւնք՝ որով Թռչէր իսրայէլ ի բարձունս. և ի արծաԹա

պատ ասին վասն գեղեցկութե. իսկ Թիկնամիջօք նշանակին ա և իցէ ոսկեփայլ զօրութիք և առաքինութիք առ ի բառնալ և տանիլ զամենայն, զորս դնէր աճ ի վերայ Թիկանցն Իսրայէլի։

Օ այս բան, սոյնպէս և զնախընթաց սորա ի մէջ բերեալ մարգարէին՝ երկու ինչ դիտէ ազգ առնել. մի զայն՝ Թէ ինքն և ժողովուրդ նւր, որք աճէին զտապանակն ան, վասն այսորիկ ցնծան առաջի նորա յայնմ հանդիսի, վասն զի այսպիսի բարեմասնութե վիճակեալ էին. որովհետև այսպէս սիրելի էր Իսրայէլ յաչս այ իբրև գեղեցիկ աղաւնի, և այսչափ ինամով՝ փայփայեալ։ Երկրորդ զայն՝ Թէ ունին աներկիւղ ապաւէն և անկասկած յերեսաց Թշնամեաց իւրեանց. որովհետև զայսպիսի ունին Թագաւոր և պաշտպան։ Այս առնոյն մարթ է յաւելուլ և զայլ ինչ վայելուչ և դիւրընկալ մեկնութե. որով և այս գեղեցիկ փոխաբերութե բանի կարէ ուղղակի հայիլ ի տապանակն ան. որ իբրև աղաւնի Թռուցեալ լինէր, այսինքն հանդիսիւ ածեալ լինէր ի սիոն, ունելով զարծաթապատ Թևս, և զոսկի կախարիչ իբրև զՔիկնամիջս ոսկեզօծս։

Ա.յլաբանօրէն՝ այս բան ունի կրկին հայեցուածս. մի՝ ըստ նմանաբանութե, և մի և՝ ըստ հանգիտութե։ Ըստ նմանաբանութե հայի ի հոգին աբ. որ աղաւնակերպ էջ ի յորդանան, որ և իբրև աղաւնի տածէ զեկեղեցի քն. Թևք այսր ամենագութ երկնային աղաւնւոյ են խնամք նորա ի պէսպէս իրս. յուսուցանելն և յառաջնորդելն, յօգնելն ի բարին և ի պաշտպանելն ի չարէ, ի պահելն ի ներքուստ և ի պահպանելն արտաքուստ նէ։

Նմ դարձեալ Թևք նորա են կրկին ազգք ընտրհաց նորա. մին սրբարար ի յօգուտ ընդունողին, և միւսն ձրիատուր կոչեցեալ՝ ի յօգուտ այլոց. որպիսի են ընտրհք սքանչելեաց, ընտրհք բժշկութե, ընտրհք մարգարէութե նէ. զորս Թուէ առաքեալն (ա. կոր". ժբ. 7 — 10)։

Գարձեալ Թևք հոգւոյն եղեն առաքեալքն. որովք Թռեաւ հոգին աբ յաշխարհ ամենայն. սոյնպէս են և քարոզիչք, որոց բանիւ Թռչի ընտրհք հոգւոյն ի հո-

գիս մարդկան : Ա.յսոքիկ թևք կոչին արծաթափաստ՝ զի են սպիտակափայլ այսինքն մաքուր և յայտնի, և սպիտակացուցիչ հոգւոց :

Նոյնպէս Թիկնատիճք հոգւոյն կոչի նոյն իսկ ՝ածեղէնն զորութիւն նորա ՝ի գերբնական կարգի մտածեալ . որով պահն զեկեղեցի՝ որ այնպիսի ինն օրինակաւ՝ որպէս թէ բարձեալ էին ՝ի Թիկնատիճս իւր . յոր միտ առեալ մովսէս վիսրայէլն՝ որ նկարէր յինքեան զեկեղեցի . * տարածեաց (՚ած) զթևս իւր և ընկալաւ զնա . և ,, բարձեալ բերէր զնա ՝ի վերայ միջնորդանց իւրոց ‖ . այսինքն ՝ի Թիկնատիճս իւր . (Բ . օրին . ԼԲ . 11) :

Ա.յսոքիկ Թիկնատիճք ասին լինել ՝ի գոյն ոսկւոյ . գունով նշանակի երեւումն . և ոսկւով նշանակի անապական սէրն . և քանզի ՚ածեղէնն զօրութիւն հոգւոյն աչքն երևեցաւ ՝ի սէր իւր , վասն որոյ ասի ՝ի գոյն ոսկւոյ : Ա.յս սէր նորա է , որ տպաւորէ նաև ՝ի հոգիս մեր զգոյն ոսկւոյ , այսինքն զներգործութիւն անապական սիրոյ :

Ա՝ստ հանգիտութիւնք այս քան հայի յեկեղեցի՝ որ . զորմէ ասէ վեսայն երկնաւոր . * ու է աղաւնի իմ ‖ . կատարեալ իմ ‖ . (երգ . գ . 8) : Ա՝ւ վերայ այսր այս պէս գրէ գէորգ վարդապետ (մեկն . եսայ .) ասացեալ ասէ՝ * Թևք աղաւնւոյ արծաթափաստ . և ՚ի ,, Թիկնատիճս նորա գոյն ոսկւոյ . իբր ոչ եթէ այն- ,, պիսի աղաւնի եւտես ոք երբէք , այլ զի այնու զբա- ,, րութիւն՝ որ լինելոց էր եկեղեցւոյ յիջմանէ հոգ- ,, ւոյն՝ նշանակէ ‖ :

Ա՝ւնք այսր աղաւնւոյ այսինքն եկեղեցւոյ՝ են երկոքին տոքա . այսինքն վարդապետութիւն հաւատոյ և կատարումն գործոյ ըստ հաւատոյ . որք իբրև արծաթփայլին : Ա՝ւկ Թիկնատիճք նորա ոսկեփայլ յուցանէ զծայրագոյն սէր նորա առ փեսայն երկնաւոր . զի նուաւա բառնայ , և տանի ամենայնի վասն սիրոյ նորա : Ա՝ւ կամ դարձեալ՝ Թիկնատիճք ցուցանի ընդհանք հոգւոյն ՝ըստ , ըստ որոյ Թևօք նշանակի սէրն առ ՚ած , և սէր առ ընկերն . որպէս գրէ բարսեղ (՚ի մեկն . մարկ . ԺԲ . յորդ .) * երկու պատուիրանօք ասէ իբր ,, երկու Թևօք Թռչի ամենայն աշակերտութիւն . ,, այսինքն սիրովն ՚ած և սիրով մարդկան ‖ : Ա՝ւ նա-

քիմբք կառավարի ընթացք վարուց առ ած և առ
ընկերն, ըստ որոյ ասէ լուսաւորչին մեր ՚ի յաձախա-
պատում գիրն. (Գաս. Ե.) * կառավար վարուց
,, բարուքե ածախրութինն է, և եղբայրսիրութիւն ||.
որք են իբր երկու թևք, ածախրութինն յաջմէ և
եղբայրսիրութինն ՚ի մուս կողմանէ * Ոնևք նորա՝
իբրև զթև բոցոյ և հրոյ ||. (Երգ. Ը. 6:) Ո.յս որք
աստ թևք կոչին՝ ատինք անուանին ՚ի նոյն գիրս եր-
գոց երգոյն (Ը. 10. ևԷ:) յորոյ վերայ ասէ բար-
ձեղ ՚ի նշանակեալ տեղիդ. * այս երկու պատուի-
,, րանս (սիրելոյ զած և զընկերն) իբր զերկու
,, ատինս եղեալ է (քս) ՚ի վերայ լանջաց հարսին՝
,, որ է ած եկեղեցի՝ անուցիչ տղայութե մերոյ ||:
Վարձեալ՝ աջ թևք եկեղեցւոյ են ած խորհուրդք.
և այլ թևք նորա ած պաշտամունք և ած արարողու-
թինք: Ոսկ թիկնամէջ նորա է զօրութե հաստատու-
թե կամ անշարժութե նորա ՚ի դրանց դժոխոց մին-
չև ՚ի կատարած աշխարհի. և այս օրինակի յոսկեղի-
նուքեն աղաւնոյն, կամ ՚ի նոյն ոսկին՝ որ է անապա-
կան. յորոյ ապացոյց անապական եթող ած զաղաւ-
նիան. զի ոչ ետ թոյլ աբրահամու ապականել այսինքն
յօշել զնոսա ՚ի զոհի իւրում (Ծնն. ԺԵ. 10. և 11:)
Ո.յս սմենայն գեղեցիկ փայլէ յեկեղեցւոջ ՚ի կալ
նորա իբրև զաղաւնի յանդիման ներկայութե արե-
գականն արդարութե, այսինքն քսի՝ իւրոյ անմահ
փեսային:

Յարմարական մեկնութք այս բան հայի յանարատ
աղաւնին մարիամ, որոյ խոնարհութինն և հուսուքն
եղեն արծաթափայլ թևք. իսկ սէրն ՚ի գոյն ոսկւոյ
թիկնամէջ՝ յորում եբարձ զբանն ած: Վարձեալ
լուսէ շնորհաց նորա և կատարելութե գործոց նորին
եղեն իբրև երկու թևք, որովք թռեաւ յածամայրու-
թե անապական՝ որ եղև ՚ի նմա իբր թիկնամէջ ՚ի
գոյն ոսկւոյ, այսինքն լրումն ամենայնի, և ինքն գտաւ
պատուականագոյն քան զամենայն արարած:
Վարդապես, այր առաքինի մանաւանդ որ միայնա-
կեացն է՝ ի իբրև աղաւնի վերացեալ յաշխարհէ և որ-
պէս թռչ մոռացեալ ՚ի նմանէ. թևք նորա այսինքն
աեսական և գործնական կեանք նորա՝ իբրև արծաթ

մաքուր, որք և իբրև արծաթի դրամք՝ լինին գին ստանալոյ զերկնից բարուեաց. և թէկնամիջ նորա այսինքն համբերուեն նորա՝ որով բառնայ զնեղուեան՝ է ոսկեգոյն, այսինքն գեղեցկացեալ սիրովն Յարդիս ընորհալի (՚ի մեկն. ը. պետ. ը. 20. Ճառ. գ. յորդ.) այսոքիւք թևօք ըստ յիշելոյ մեր ՚ի վերոյ, իմանայ զհաւատս և գործ վարս. և յորդոր լինելով, ասէ. * կրկին թևս պարտ է մեզ զգենուլ, զհաւատն ,, և զսրբութեն վարուցն, և յերկրէս ամբառնալ ընդ- ,, քեն աշակերտացն ‖. ըստ այսմ և թէկնամիջով իմացեալ լինի հաստատուեն յարատեւուե։ Օ այսո- սիկ եդեալ մարգարէին՝ առաջի մատուցանէ այժմ՝ թէ զինչ առներ ՚ի ծածուկ խորհուրդս աղաւնւոյ այսինքն խո- րհել ՚ի տիարանալն յօրէնս, և զինչ և ս եկեղեցւոյ իւրում առ ՚ի շինուեն և ՚ի պայծառուեն նորին. ամին իրի ասէ։

ԺԷ. ՚Ի գոհանալ երկնաւորին զբնագոյնս ՚ի վերայ նորա. ՚Ի յետնոցին ՚ի սաղմոն։

Ա՚արգարին խօսելով ՚ի վերոյ զխորհրդէն՝ կոչեաց զնա նախ սիրելի ՚ի, և ապա աղաւնի. և այս՝ ըստ առա- ջին մեկնութեն՝ զոր եդաք ՚ի սկզբան նախընթաց համարոյն։ Ա.յլ ՚ի տգեղանալ այսր սիրելւոյ և ՚ի մո- լորիլ այսր աղաւնւոյ հիւրաքանչիւր դարս՝ յարտոյց ՚ի վերայ նորա այսինքն ընդդէմ նորա զայլևայլ թա- գաւորս առ ՚ի զգաստացուցանել զնա, որպէս յայտնի աւանդի յիմաշուննէն. և նախ (՚ի գատ. ը. 7). ուր ասի թէ ՚ի մոռանալ որդւոցն իսրայէլի զնր, * մատ. ,, նեաց զնոսա ՚ի ձեռս քուսարսանեմայ արքային ա- ,, տրուոց միջագետաց ‖։ Ա.յլ ՚ի գառնալ նոցա առ ած՝ * եւ նոցա զգոնանիլ... և եղև ՚ի նմա հոգի տեն ևն ‖։

Գարձեալ ՚ի մոլորիլ իսրայէլացւոց յայն իւրեանց՝ վհատե գերն թէ * զօրացոյց ած զեգղոմ արքայ մուա- ,, բա ՚ի վերայ իսրայէլի վասն առնելոյ նոցա էար ,, առաջի տեն. և ժողովեաց ՚ի վերայ նոցա (ած) զա- ,, մենայն որդիսն ամմնայ, և զամմոնիկ, և հոգա- ,, եհար զիսրայէլ ‖. (գատ. ը. 12. 13)։ Ա.յլ ՚ի գաղտանալ նոցա՝ յարտոյց նոցա զառուելդ որդի գե-

րեայ, որ հնարիւք սպան զեգղոմ. և զերծոյց զիսրայէլ. (դատ. Ը. 27.) որով՛ի զղջումն եկեալ նոցա յարեցան յինծ։

Օ՜ այսպիսիս ուանդէ ածաչունչն և այլ բազում ուրեք զիսրայէլն՝ մանաւանդ՛ի վերս դատաւորաց, այսինքն թէ՛ի գործել նոցա չար առաջի ին՝ գումարէր՛ի վերայ նոցա զթագաւորս, որով և զգաստացեալ նոցա պաշտէին զինս։ Եւ ահա՛ի սոսին հայելով ասէ։

Գումարել երկնաւորն զԸնագաւորս՛ի վերայ նորա, ևս։ Կամի ասել յորժամ մեղանչէին իսրայէլացիք՝ յարուցանէր կամ ժողովէր ին զայլ և այլ ազգաց թագաւորս՛ի վերայ նոցա առ՛ի նուաճել զապարանանուքն նոցա. որպէս զի զգաստասցին, որպէս և զգաստանային իսկ. և յետս կալով յամբարշտութենէ իւրեանց՝ սրբեալ երևէին. և զայս յայտ առնէ մարգարէն նմանաբանութիւքն իմն ասելով։

ԶԸնաասցէն՛ի սաղմն։ Այսինքն թէ սրբեսցին, մաքրեսցին, և սպիտակասցին որպէս զձիւն՝ հանգոյն լինին սաղմանի։ Այս լեառն՝ որ կոչի և սեղմոն, կամ սեղմոն (դատ. Թ. 48.) է մի՛ի լերանցն Եփրեմի՝ քարձր՝ յերկրին սամարիոյ մօտ՛ի սիւքեմ և՛ի յորդանան. ուր իջանէր ձիւն, որով և առաւել քան զայլս երևէր սպիտակացեալ. ուստի և յասէն աստ ձիւնասցին՛ի սաղմոն, քառգ ՚Ընաանաւ՝ նշանակ՝ իբրև զձիւն լինել. ոչ ըստ գոյութեն, այլ ըստ որպիսութեն, այսինքն ըստ սպիտակութե։

Նոկ յաւելուն զքառգ՛ի սաղմոն, է ցուցանել զսաստկութե սպիտակութեն. իբրզի յերկրին սամարիայ՛ի լեառն սաղմոն առաւել երևէր սպիտակութե ձեան. որովհետև յարմար ին ձև ունելով մնալոյ՛ի նմա ձեան՝ ձիւնն պայծառ երևէր՛ի նմին։

Ա՛արթ է և աս ասել թէ քառգ ՚Ընաասցէն՝ երկրորդաբար նշանակէ զկակղիլ և զհալիլ սրտից իսրայէլացւոյն. որպէս թէ եդեալ էր. և ձիւնասցին այսինքն հալեսցին սիրտք նոցա իբրև զձիւն։

Նոկ այն՝ զի յառաջնում հատուածի եզակի դնի յաւելն, ՚ի վերայ նորա, իսկ յերկրորդումն յոգնակի դնի յասելն, ՚Ընաասցէն, չէ ինչ. զի որովհետև քառգ նորա՝ դնի փոխանակ ժողովրդեան՝ ունի զչքորութիւն

հաւաքականի, որ կարէ դնել եզակի և յոգնակի. ուստի և յոմանս ի ձեռագիրս սաղմոսաց մերոց եզակի դնի այսինքն է՝ ձիւնասցի:

Ստանօր եթէ այս բան հայեցի յայն՝ զոր եդաք ի վերոյ ի սկզբան այսր համարոյ, թէ ժողովեաց ամր զեգզոմ արքայ մովաբու և զամենայն որդիսն ամմոնայ ետ ի վերայ իսրայէլի, որոյ վասն ժողովեցան իսրայէլացիք ի լերինն եփրեմի՝ ուր էր լեառն սաղմոն, յայնժամ բառդ ձիւնասցին կարէ նշանակել աստ զժողովին բազմութիւնն, որպէս թէ եղեալ էր ի յարուցանել ամ զթագաւորս ի վերայ իսրայէլացւոց՝ իսրայէլացիք ձիւնասցին. այսինքն իբրև զձիւն բազմագումար ժողովեսցին ի լեառն սաղմոն, և անտի յարձակեսցին ի վերայ թշնամեաց իւրեանց: Իսկ թէ զեզեկացն իբրև զլինելեաց խօսի՝ չէ լինչ, զի յեղեալն հայի:

Արժան է և աս ասել՝ թէ բառդ ձիւնասցին՝ հայի ի թագաւորն յայլ ինչ միտս. որպէս թէ եղեալ էր՝ ի ժողովիլ թագաւորաց ի վերայ իսրայէլի՝ անպիտանացին, և իբրև զձիւն սաղմոնի հալեսցին և կորիցեն. որպէս եղև ընդ ջօրան սենեքերիմայ արքային ասորեստանեայց, որք իբրև զձիւն հալեցան յերեսաց հրեշտակի նորա (Դ. Թագ". ԺԹ. 35:)

Այս մեկնութիւն յարմար եւանէ դիտման և ընթացից սաղմոսին՝ ի ցուցանել, թէ յաճել անդ որդւոցն իսրայէլի զտապանակն նոր հանդիսիւ ի սիոն, եթէ թայլ տայր ամ գումարիլ թագաւորաց ընդդէմ նոցա, ոչ խապաւ ներկր, այլ առնէր, զի ձիւնասցին ի սաղմոն. այսինքն հալեսցին և ջնջեսցին հանգոյն ձեան սաղմոնի:

Ընդ հակառակն և աս կարէ մեկնիլ այս բան. ըստ այնմ զի ամ զբազում թագաւորս գումարեաց ի վերայ իսրայէլի այսինքն առ իսրայէլ. իբր զի նուաճեաց զնոսա ընդ ձեռամբ իսրայէլի, և բազումք ի ժողովրդոց նոցա յարեցան իսրայէլ, և սպիտակացան օրէնսդքն նոքա:

Այսաւանօրէն՝ ի սկզբան եկեղ" գումարեաց հայրն երկնաւոր զբազում թագաւորս յեկեղեցի ըստ այլաբանի. զոմանս գումարեաց յաւելուլ զնոսա ի

մարմին եկեղեցւոյ, այսինքն մուծանելով զնոսա յեկեղեցի. ուր իբրև ՚ի սաղմին սկիտակացան որպէս զձիւն. և զսմանս գումարեաց Թոյլ տալով նոցա հալածել զեկեղեցի նր. քայց տկարացան և հալեցան իբրև զձիւն, և ընդ հակառակն որդիք եկեղեցւոյ առաւել ևս բազմացան և պայծառացան հանգոյն ձեան:

Եւ դարձեալ գումարեաց քո զառաքեալս ՚ի մի ՚ի վերնատանն. և սիրեաց ապա զնոսա քարոզել յաշխարհ ամենայն, որպէս զի ձիւնացին մարդիկ, այսինքն պայծառացին ՚ուծանօթութեամբ ՚ի սաղմոն յեկեղեցի՝ սբ. ըստ որում սաղմոնն նշանակէ խաղաղացուցիչ. որպիսի է եկեղեցի. կամ պատկեր, որպիսի է դարձեալ նոյն եկեղեցի, գոլով պատկեր երկնային գաւառին:

Լամբ" և վարդ" և ծործորեցին (՚ի մեկն. մատ. գլ. ՃՀ.) ըստ որս և ոմանք ՚ի նախնի հարց քառիւղ սաղմոն՝ իմանան զերուսաղէմ. ուր՝ որպ ասացաք՝ գումարեաց զառաքեալսն Թագաւորն երկնաւոր. և ՚ի գալ անդ հոգւոյն սբ ձիւնացան նոքին իսկ առաքեալքն. ըստ որում ըստ ամենայնի մաքրեցան և երկնային իմաստութիւն փայլեցան:

Ըստ սոցին իմանայ և մեկնէ նաև իշխնատիոս վարդապետ ՚ի մեկնութիւն զուկասու ՚ի զանազան տեղիս. և նախ (՚ի գլ. ԺՁ. ւ.) առաջի առնէ զկոչելն առաքելոց Թագաւոր և իշխան, յասելն. առաքեալքն *ա ,, մենայն անուամբ նշանակին ՚ի գրոց, երբեմն գու- ,, մարեալ Թագաւորք յերկնաւորէն, և (երբեմն) ,, կացեալ իշխանք ՚ի վերայ երկրի ‖. գրէ ապա (՚ի գլ. ԻԹ. 46.) *ուստի, ասէ, և դաւիթ Թագաւորս ,, զնոսա անուանէ գումարեալս յերկնաւորէն ՚ի վե- ,, րայ տիեզերաց, սպիտակացեալս իբրև զձիւն ՚ի ,, սաղմո‖. և (՚ի գլ. Ժ. ւ.) ասէ. *ապդ գումարէ ,, զնոսա Թագաւորս ՚ի վերայ տիեզերաց. և նախ ,, մաքրեալ սպիտակացոյց զնոսա ՚ի սաղմ ըստ գա- ,, Թայ տեսութենն. և անտի սիրէ ընդ քննաս ‖: *Պատուէր ետ նոցա՝ (ասէ.՚ի գլ. ԻԹ. 48,) յերու- ,, սաղեմ մի մեկնիլ, և զի լցցի մարգարէութեանն գա- ,, Թէ՝ այն որ ՚ի նմին քաղաքի (այսինքն յերուսաղէմ-

„ մի) մարգարէացաւ վասն հոգւոյն ի ջանեալ ի
„ գաստ առաքելոցն. յորում նմանեցուցանէ արծա-
„ թոյ զթեւս աղաւնւոյն, և զթիկնամէջն ի գոյն
„ ոսկւոյ, որ ոչ յատուկ որոշեալ է: Զնոյն նշանակէ
„ և ի ձեան սպիտակուն դարձուցանել զթափառս
„ ժողովեալ ի սաղիմ ||:

Ա յս գերապանծ գումարուն առաքելոց եղև ընդ-
դէմ սատանայի, զորոյ զգօրութին յաւարի առնի իբրև
թափառորք ամենազօրք ոչ տեսանի ի գործս առա-
քելոց, և ես և ի վարս նոցին, զի սփռեալ նոցա յաշ-
խարհ ամենայն ժողովեցին զամենեսեան, և արարին
մի եկեղեցի քոի, և կանգնեցին զնոյն իբրև զլեառն
բարձր:

Ասէ յապէս՝ թափառորք նշանակին աստ թափա-
զարդ և գերազանց առաքինութիք, զորս գումարէ
ած ի վերայ աղաւնւոյ այսինքն ի վերայ արդար
հոգւոյ, որ բնակի ի սեղմնի, այսինքն ի ստուերի.
և չըջի ի պատկերի, որով նշանակի մարմին և աշ-
խարհս. և յայնպիսում ստուերի կամ ի պատկերի
յայնժամ նոյն առաքինութիք արդարոյն սպիտակափայլ
երևին իբրև զձիւն:

Ասէ ընդ Հակառակն ի թոյլ տալ երկնաւորին՝
ժողովին ի վերայ արդարոյն պէսպէս փորձութիք.
և արդարն որ կայ ի սաղմնի, այսինքն ի տանիլ խա-
ղաղութիք և յուսով մատուցման վարձուց՝ այնպէս
առնէ, զի այն սեաւ փորձութիք ձիւնասպին ի նմա՝
այսինքն դարձցին ի սպիտակութիւն և փայլեսցին ի
բարին. և կամ նոքին իսկ արդարք այնոքիւք փորձու-
թիք սպիտակացին, և առաւել ևս փայլեսցին. և ես
և բարձրացին իբրև զլեառն և պարարտացին. զոր-
մէ իսկ մարգարէն ի յաջորդ հատարն, ի մէջ բե-
րեալ զբարձրութիւն ազգին իսրայէլի և զպարարտու-
նորա՝ յասելն:

ԺԶ. Եառն այ լեառն պարտիպ. լեառն մաճեալ, և լեառն պարտիպ. և չինել խարճէս լերինս հպարտաց։

ԺԷ. Եառն, ընդ որ հաճեցար ձի բնակիլ ՚ի նմա, զանիլ ՚ի նմա, և այր իսկ բնակիցէ ՚ի նմա յաւիտ։

Ազգն իսրայէլի՝ նմանեցոյց մարգարէն աղաւնւոյ ՚ի Համարն. 13. իսկ աստ նմանեցուցանէ լերինն սիոնի, որ երևեցուցանէր զիսրայէլ վասն հանդիսանալոյ նորա առաւել անդ քան յայլ տեղիս՝ մանաւանդ ըստ հոգևորական պաշտամանց, և ըստ թագաւորական կարգաց. յոր միտ քառիս լեառն՝ նիւթապէս նշանակի աստ սիոն, փոխաբերութիւք՝ իսրայէլ. զորոյ զորպիսութենէն յանդիման առնէ մարգարէն երիւք. մի՝ ըստ կատարելութենէն՝ զոր ունէր. երկրորդ՝ ըստ հաւատոյ ազգաց. և երրորդ՝ ըստ լինելոյ նորա տեղի բնակութեան այ։ Եւ նախ ըստ կատարելութեան խօսելով ասէ։

Եառն այ՝ լեառն պարտիպ, լեառն մաճեալ և լեառն պարտիպ։ Եառն այ ասելով որպէս և եդաք, նիւթապէս իմանայ զսիոն. իսկ սիոնիս իմացեալ լինի լեառն այն՝ որ էր ՚ի կողմն երուսաղէմի՝ ուր շինեաց դաւիթ խորան տապանակի ուխտի. ընդ նմին իմացեալ լինի և նոյն ինքն երուսաղէմ, ևս և լեառն ամուրհայ կամ մորիայ որ էր ՚ի նմա, ուր և շինեցաւ յետոյ տաճարն. (Բ. Մնաց. Գ. 1։)

Լեայ լեառն կողմն այ, վասն զի որպէս դնի ՚ի յաջորդ համարն, ուժ հաճեցաւ բնակիլ ՚ի նմա ՚ի ձեռն տապանակին. կողմն և պարարտ վասն պարարելոյ ուժգնին երօք. կողմն և մաճեալ՝ վասն մաճելոյ և հաստատեալ լինելոյ յայ, կամ վասն ամրութենն։

Եւ սոյն այս լեառն փոխաբերմամբ դնի փոխանակ իսրայէլի՝ ըստ որում էր եկեղեցի այ, յորում և բնակէր ուժ. և էր նա պարարտացեալ ուժգին խնամովք և պաշտամամբք. և դարձեալ ոչ էր հանգոյն հեթանոսաց երբեւ լքեալ կամ հեղեալ, այլ մաճեալ ուժգին յատուկ տեսչութիք և պետպէս խորհրդական երօք, զորմէ ասասցուք ՚ի ստորև՝ ՚ի հայելին ՚ի նորս եկեղե-

ցի։ Այս լեառնս ըստ երկրորդ տեսութեանէ, այսինքն ըստ համեմատելոյ ընդ այլ լերինս՝ գերազանց դասի յոյժ, և ասէ։

Ա– ԶԻՆԻ ԽՐԱԽՏ ԼԵՐԻՆ ՀՊԱՐՊԱՑԵԼՈՒ։ Արդ՝ ես ասեր. ամէն լերինք մեծամեծք և արգասաւորք, և ազգք հզօրք, մի համարիք զձեզ պատուականագոյն ինչ համեմատութեամբ այսր լերին. զի՝ ի ձեզ չիք ինչ երևեալ հրաշալի, այլ միայն արտաքին արգասաւորութեամբ, իսկ՝ ի լերինս յայսոսիկ ահագին քնակի, վասն որոյ ըստ երրորդ տեսութեանէ, և ասէ։

ԺԷ. Եաւն, ընդ որ հաճեցաւ ձեզ բնակել՝ ի նմա։ Այսինքն Ես հաճեցայ՝ զի տապանակ իւր զոր բարձեալ տանէին՝ քնակեսցի յայսմ լերին՝ և՝ ի սմին ազգի. և միջնորդութեամբ տապանակին իւրոյ ինքն ևս քնակեսցի՝ ի սմա, ոչ որպէս յայլ տեղիս, կամ որպէս յօտար ազգս, այլ իբրև յիւր տեղի՝ մանաւանդ ի մեծի օրինակաւ. վասն որոյ յաւելուած ասել։

Ա– ՈՐՊԷՍ Ե՞Ւ ԱՐԴ ԵՒԿ ԲՆԱԿԵՑԵԱՑԷ՝ Ի ՆՄԱ ԵՈՊԱՆ։ Այս քնակութիւն այս ըստ տեղւոյն մտածեալ ոչ այլ ինչ էր՝ բայց եթէ որպէս ատացաք՝ մանաւանդ ներկայութեամբ նորա՝ ի ձեռն տապանակին՝ և՝ ի ձեռն պէսպէս պաշտամանց և արարողութեանց։ որովք յանդիման լինէր ներկայութեամբն այլ, և փայլէր բազմօք զօրութիւն նորա յայլեայլ իրս։ Իսկ ըստ ազգին իսրայէլի կամ ըստ անձանց ժողովրդեանն մտածեալ՝ բազում օրինակաւ ասիւր քնակիլ այլ՝ ի նոսա. նախ՝ ըստ լինելոյ՝ ի նոսա անուան իւրոյ՝ զի զանուն իւր եդեալ էր՝ ի վերայ նոցա։ Երկրորդ՝ ըստ յայտնելոյ զինքն նոցա օրինօք, մարգարէիւք, հրաշիւք, և. և ըստ ծանուցեալ լինելոյ՝ ի նոցանէ. որով և ասիւր այլ ազգաց իսրայէլի, և իսրայէլ ասիւր՝ ժողովուրդ այլ և։ Երրորդ՝ ըստ մասնաւոր խնամոց՝ որովք հանապազ զգուշ իւր ցուցանէր առ նոսա։ Չորրորդ՝ ըստ պաշտեալ լինելոյ՝ ի նոցանէ այնպիսեօք՝ ընդ որս հաճեալ էր ինքն. ըստ որում ինքն էր սահմանեալ զնոսին։ Հինգերորդ՝ ըստ պէսպէս իրօք ձեւացուցանելոյ զխորհուրդ մարդանալոյն այլ, և ևս և զնորս եկեղեցի. և ըստ այսմ այնպէս էր այն՝ ի նոսա, որպէս մարդ՝ ի տուեալի իրում։ Վեցերորդ՝ ի ձեռն ընտրեալ որ առաւել

պէս էր յաղթն իսրայէլի քան յայլս. զի յայլ ազգս սահաւք գտանէին ընդունակ ընտրհաց։ Նօթներորդ՝ ըստ ոչ երբէք պակասելոյ ի նոցանէ մինչև հաստատելնորոյս եկեղեցւոյ. զի թէպէտև արտաքսապէս քաղաքաւմ անգամ եթող ած զնոսա, ըստ որում էին ազգ ինչ. բայց ըստ որում էին ձևացուցիչք եկեղեցւոյ՝ ոչ երբէք եթող զնոսա. և յայս հայելովմ ասէ *խոպատ քնակեսցէ ի նմա». այսինքն մինչև ի կատարած ժամանակին՝ յորում վիճակ այնր եկեղեցւոյ անցանելոյ էր յայլ վիճակ ի գալ բանին այս։

Ն.յլաբանօրէն՝ որպէս յայտ է ի նախապրեալոցդ այսու լերամբ նշանակի եկեղեցի քրիստոնէից, զորմէ ասեն մարգարէք (եսայի. ը. 2. և միքիա. դ. 1). * Ո՛ւ եղիցի ,, յաւուրս յետինս յայտնի լեառն տան և տուն այ ի ,, վերայ գլխոց լերանց և բարձրասցի ի վերայ բլրոց. ,, և եկեսցեն ի նա ամենայն հեթանոսք եւ։ Ն.րդ եկեղեցին կոչի լեառն՝ վասն երից. ու վասն բարձրագոյն արժանաւորութե լուրոյ, այսինքն վասն բարձրագոյն խորհրդով լինելոյ, և վասն բարձրագոյն խորհուրդս պարունակելոյ, և վասն բարձրագոյն սիրով սիրելոյ ի քրիստոս։ Ն.րկրորդ՝ վասն յայտնի և երևելի լինելոյ ընդ ամենայն տեղիս։ Ն.րորդ՝ վասն հաստատութե և ամրութեն. զորմէ գրէ դէտրդ վարդապետ (ի մեկն. եսայ. գլ. ը.) ասելով այսպէս. * լեառն զեկեղեցի կոչէ, զկրօնից ամրութիս. զի ,, զորօրինակ շուրջ զամուր լերամբ բազում զօրք նըս- ,, տիցին, և զանազան մեքենայս կազմիցեն և հնարս ,, հնարիցեն. սակայն ամուր և անառիկ լերանդ ոչ ,, ճնասեն. զիւրեանց ոյժ և զզօրութի թափիցեն, ,, և նմա ոչինչ ազդիցեն. սոյնպէս և օրք ընդ եկե- ,, ղեցւոյ մարտեան հանապազ, զնա ոչ կարացին ճնա- ,, սել. և ինքեանք անկան յոտոյ. զի նոր և չքնաղ ,, էր յաղթութեն օրինակ. ոչ զի յաղթեաց, այլ զի ,, այսպէս յաղթեաց։ Ճալածեալ կռփեալ՝ ոչ միայն ,, ոչ նուաղի, այլ և՛ս քան զևս աճէ. և զբազմապա- ,, տիկ հնարս լուծողացն միայն չարչարանօք խափա- ,, նէր. որպէս ապամանդ առ երկաթ. զի հարկանե- ,, լով լուծանէ զզօրութի հարողին. և խթան ընդ- ,, դէմ աքացելեաց, որ ինքն ոչ ճնասի, այլ զոտս ա-

,, քացողացն Ծակոտէ. վասն այսր ամենայնի կոչէ
,, լեառն զեկեղեցի ։ Եւ յետ սակաւուց ասէ. Թէ ՚ոք
գիտէք * այլ անուամբք այլ ինչ նշանակեցին. որպէս
,, գնասատատ և զաերտ զօրութիւն եկեղեցւոյ լերին
,, անուամբ նշանակեաց (մարգարէն) ։

Կոչի եկեղեցին և ՚այ լեառն. զի ընտրեաց զնա որ-
դին ՚այ յիւր բնակութիւն, յիւր հարան, և յիւր մայր-
մին ։

Կոչի և պարարտ և կրկին անգամ պարարտ. ըստ
աւուրեանն ՚ի պարարտութիւն գլխոյն, որ է ՚ուծ մար-
գարէիւք, ըստ երկրորդին ՚ի պարարտութիւն ՚ուծային
ընտրեցն և պարգևացն և ՚ի պարարտութիւն երկնայ
ին խմաստութիւնն. և ս և պարարտ ՚ի պարարտութիւն
հօտին խորհրդոց. որպէս գրի բարսեղ (՚ի մեկն.
մարկ. գլ. ժ՚ը)։ Կոչի դարձեալ պարարտ ՚ի պա-
րարտութիւն անդոցն՝ ընդ միոյ երեսուն ընդ միոյ
վաթսուն, և ընդ միոյ հարիւր ։

Կոչի և մածեալ՝ զի ընտրեքն հոգւոյն սէր և սէրն քրի-
ստոսեալ լինիլ եկեղեցւոյ՝ ոչ հոսեն անցանելով, այլ
մածնուն յեկեղեցի այսինքն ՚ինան հաստատուն.
որով և եկեղեցին ասի մածեալ, և նովին իսկ
պարարտացեալ և հաստատեալ ։ Ա.սի մածեալ և ը
սրբութենն. որոյ վասն ասէ նարեկացին ՚ի գանձն
եկեղեցւոյ. * քաղաք կենդանի շինեալ ՚այ հոգւոյն
,, աղբեղմամբ խօսեալ յիսուսի լեառն պարարտ մա-
,, ծեալ սրբութեբ ։

Ո՛ անապատ սիգք անհաւատից և ս թէպէտ երևին
լինիլ լերինք մածեալք, սոյնպէս և հերետիկոսք,
բայց ը մարմնաւորին և թ, ըստ փարթամութե, ըստ
գինուորութե, ըստ իշխանութե, ըստ արտաքին փա-
ռաց ։ Ասատի եթէ պարծեսցին, ասէ առ նոսա.
գի՞նչ կարծիք հպարտացեալք. կամ թէ ասել. գի՞նչ
կարծիս ունիք զեկեղեցւոյ և զձէնդ. գի՞նչ և կար-
ծիցիք, զոր ինչ և ասիցիք, խաբեալ դատանիցիք. գի
եկեղեցի ՚ը ոչ է կամ զձեզ սուտ լեառն, այլ այն-
պիսի լեառն՝ ընդ որ հաճեցաւ ՚ծ բնակել ՚ի նմա. զանգի
նա ինքն՝ զոր և դուք խոստովանիք լինիլ ամենայնի
տէր, բնակիցէ ՚ի նմա յապա։

Ա.յս բնակութիւն յայլ յեկեղեցւոջ ըստ բազմապատիկ
երից է մտածելի. այսինքն ըստ շնորհաց և ըստ
պարգեւաց. ըստ մանաւանդ խնամոց և ըստ յատուկ
պահպանութիւնե. ըստ սրբոյզան պաշտամանց, և որ
մեծն է ըստ իրական ներկայութիւնե մարմնոյ և արեան
հն մերոյ. որով և աներկբայ կատարի խոստումն հն.
զոր խոստացաւ, թէ * ահաւասիկ ես ընդ ձեզ եմ
,, զամենայն աւուրս մինչև ՚ի կատարած աշխարհի ‖.
(մատ. ԻԸ. 20.) ոյնպէս և վասն բնակուե հոգւոյն
սէր վկայեաց՝ թէ * ընդ ձեզ բնակեսցէ ՚ի յաւիտ
,, ան ‖. (յովհ. ԺԴ. 16. 17։)

Ա.յս բանք հային և առ ամենեսեքն կոյսն մարիամ, որ
եղև լեառն պարարտացեալ լուսով շնորհաց. մինչև
եղև մածեալ ուծամոյրութիւնք. և նա ինքն որդին սոյ
խոպառ բնակեցաւ ՚ի նմա, այսինքն բոլոր ուծութիւնք և
բոլոր մարդկութիւնք. և որ կրկր զաշխարհ ՚ի ձեռին՝ պա
րագրեցաւ ՚ի ձեռին նորա։ Ա.տլաս ոմն վասն յօրի-
նելոյ զաշխարհացոյցս՝ ասացաւ ունօղ աշխարհի, և
թէ ՚ի ձեռս նորա է աշխարհ, և թէ առ նմա է.
զինչ ապա արժան էր ասել քեզ կուսէն, յորում
բոլ ՚ի լերին բնակեցաւ ստեղծօղն աշխարհի, և ՚ի
ձեռին նորա բարձաւ անտես արարեալ զմեծամեծ
լերամբք՝ այսինքն զայնպիսեօք՝ որք յաչս մարդկան
մեծ համարեալ լինէին. վասն որոյ և նա ինքն ասաց
յերկս իւր. * հայեցաւ ՚ի խոնարհութիւն աղախնոյ
,, իւրոյ ... ցրուեաց զամբարտաւանս մտօք սրտից
,, իւրեանց ‖. (ղուկ. ա. 51։)

Շնորհալին (՚ի մեկն. մատ. գլ. ե.) ՚ի քե վերածէ
զայս բան ասելով. * լեառն իմանալի է քե յաղագս
,, անդրդուելի զօրութեն, որպէս լեառն սոյ լեառն
,, պարարտ ընդդէմ հպարտացեալ լերանցն ‖։
Նարեկացին՝ իբրաքանչիւր արդար մարդոյ հոգի ասէ
լեառն սոյ՝ պարարտացեալ ՚ի շնորհս. յորում և ած
բնակէ. և եթէ (հայելով ՚ի բառդ մածեալ) հա-
ճեսցի ած արկանել ՚ի նմա զմակարդ պարգեւաց յա-
րատևութե, մածնու այսինքն հաստատի ՚ի շնորհս.
և յայնմհետէ մինչև ՚ի մահ անմեկնելի ծնայ ՚ի նմա
հոգին աբ. և ինքն յուսալով յած կայ անսասան,
զի * որ յուսայ ՚ի տէր՝ որպէս լեառն սիոն մի սասա-

,, նեսցի յաւիտեան ։ (սաղ. ՃԼԷ. 1։)
Խարտեղ (՛ի մեկն. մարկ. գլ. ԺԷ.) լերանց նմանեցուցանել և զառաքինութեան ասելով. * գարձեալ
,, լեառն իմանամք զազգի ազգի տեսակս առաքի-
,, նութեցն. յոր բազմեալ հանգչի ամ ըստ մարգա-
,, րէից, թէ այսպես ասէ քարձրեալն՝ որ ՛ի քարձունս
,, քնակեալ է, և թէ լեառն՝ ընդ որ հաճեցաւ ամ
,, քնակել ՛ինամա. զի չիք այլ ինչ այնպէս հաճոյ ամ,
,, որպէս զառաքինութեան ։ ՛|՛ սոսա լեառն սրբուե
հաճարի մտաւորական աղօթիքն. յորում ոչ կարեն
դէք ջնասել կամ հարկանել զայլ առաքինութիս.
որովհետև նոքին լցեալ լինի հոգին գիտութիք ամն
երբև երկիր պարարտ. ըստ այնմ (եսայ. ԺԱ. 19.)
* ոչ կարասցեն հարկանել զոք ՛ի լերին սրբուե իմոյ.
,, զի լցաւ երկիր ամենայն գիտութիք ամն ։

Յամեմատութիք այսոցիկ լերանց՝ լերինք հպարտացեալք կոչին ամբարտաւանութիք և ամբարշտութիք դիւաց. որպէս գրէ վանական վարդապետ (՛ի մեկն. յոբ. գլ. Ի.) յասելն. * լերինք ամբարտաւանութեն
,, բանսարկուին և դիւաց կոչին. զի և եզեկիէլ ըզ-
,, բանսարկուն լեառն անուանէ ։

Ընդ յետ խօսելոյ մարգարէին զսիոն լեառնէ, յոր ածէր զտապանակն ամն զպարունակօղն կտակարանաց, դարձուցանէ զբան իւր յայն՝ որ եղև ՛ի սինա լեառն, ուր կ՚ըզ ամ վիառօք և ետ զայնոսիկ կտակարանն. այլ կամելով ահեղ ինն ձևացուցանել զայս հանդէս, գերապանծ ինն խօսի և ասէ ։

ԺԶ. Վա՜յ ամ էր-ելիսպեէ, հալա՜ծ ու՜ղղէլ, և ամր ՛է նոսա. ՛է սինէ սրբուե էրմէ ։

Ա՛ր գիրք ընծայեն ամ կառս, և ասեն ելանել կամ նստիլ ՛ի կառս ևս. հայելով ՛ի գործողութենն՝ որք ՛ի մեզ լինին կառօք, և կամ հայելով յերևոյթս ինչ՝ զորս ՛ի ձեռն հրեշտակաց ցուցանէ ամ առ մեօք. որպէս եցոյց ՛ի լերինն սինայ, և յանապատին. ուր գրեթէ ՛ի կառս բազմելով առաջնորդէր ժողովրդեանն իսրայէլ ։ Յայսոսիկ ակնարկելով՝ ասէ ։

Վա՜յ ամ էր-ելիսպեէ ։ Ա՛յսու կառօք նշանակին խառնիճք կամ գումարք բիւրաւոր բազմութե հրեշտա-

կաց, որպէս յայտնի գրէ մովսէս (ը. օրին. ԼԳ. 2.)
յասելն, * ուր՝ ի սինայէ եկեսցէ ... բիւրաւորօք՝ ի
,, կադէսայ (այսինքն՝ ի սրբուէ,) յաջմէ նորա հրեշ-
,, տակք իւր ընդ իւր ‖: Ո՞յա ասէ աւր՝ ի ցուցանել՝
թէ յաճ բազմութիւն հրեշտակաց իջուա կառօք էջ՝ ի
լեառն սինայ. և անդ ետ զօրէնս ժողովրդեան Իս-
րայէլ, և անտի առաջնորդեաց նոցա մինչև
յերկիրն աւետեաց՝ վանելով զթշնամիսն զամենայն,
և ցուցանելով զզօրութիւն իւր յամենայնի:

Ա՛արթ է աստ կառօք իմանալ և զսիւն ամպոյն՝
յորմէ խօսէր յաճ ընդ մովսէսի. և ս և զխորանն վը-
կայութե՛ն՝ յոր էջեալ խօսէր յաճ իջուա՛ ի կառս բազ-
մեալ. և ըստ այսմ բառդ էէ-բապաթէ՝ կարէ ցուցա-
նել զբազմութիւն ժողովրդեանն՝ որք կային շուրջ զը-
խորանաւն: Ոչ ինչ տարադէպ իմանալ աստ կառօք
և զնոյն ինքն զտապանակն ասն, և բիւրաւորօք իմա-
նալ զբազմութիւն որդւոցն իսրայէլի, որք աճէին զայն
հանդիսիւ՛ ի սինն լեառն, լինելով իջու ուղղիչք
գնալոյ նորա: Նայց առաջին մեկնութիւնն է ուղղա-
գոյն, որով բազմութիւնք հրեշտակաց ցուցանին լինել
կառք այ՝ իջուա՛ շրջապատօղք և բաւձօղք փառաց նո-
ա, զորս և ուղղիչս կոչէ ասելով:

Ա՛պաքէ ուղղէիր, և ո՞ւր՛ է նոսա: Կամի ասել. հազարա-
ւոր և անհամար են հրեշտակք գնովաւ՝ իջուա՛ զբազ-
մութեա՛ կառավարաց, որով ցուցանի մեծութի՛ կա-
ռացն այ. որովհետև այսչափ բազմութիւնք կառավա-
րէին. և այսու կամի յայտ առնել մարգարէն զա-
ռաւելութի՛ փառացն այ, և զահեղութի՛ զօրութե՛
նորա, որով առաջնորդէր ժողովրդեան իւրում՛ ի
սինայէ մինչև՛ ի տեղին խոստացեալ. յոր սակս յա-
ւելու:

Ո՛վ աչնէ սբեուրէ էրմէ: Կա՛ր բառդ սբեուրէ, գնի վո-
խանակ բառիս աէյ, յոր միտ կամի ասել. ՚ի սրբոյ սի-
նայէ, կամ ՚ի ոբ լեռնէ իւրմէ ՚ի սինայէ առաջնոր-
դէր ժողովրդեան իւրոյ. կամ թէ ՚ի սինայէ անտի՝
որ էր ոբ՝ սկիզբն արար վանել զթշնամիսն իսրայէլի:
Ա՛յս բան որպէս ըստ նկարագրին հայի յիջանելն այ
՚ի սինա յառաջնորդութի՛ ժողովրդեանն իսրայէլի,
այնպէս և ըստ այլաբանականին հայի յերանել նորա

յերկինս համբարձմամբ. և ըստ այսմ որպէս անդ, այնպէս և աստ՝ կառոք իմացեալ լինին բիւրաւոր բազմութիւք հրեշտակաց՝ որք եղեն կառք վերանալոյ նորա յերկինս. և հազարաւորք՝ ի նոցանէ իբրև ուղղիչք, այսինքն յառաջընթացք, որք ըստ մեզ խօսել սպասակէին առ վերինս՝ և առէին. Ջանապարհ արարէք այնմիկ՝ որ նստի յարևմուտս՝ այսինքն՝ ի մարմնի, և գայ նովին մարմնով՝ ի սինայէ այսինքն յաշխարհն. յոր էջ և սրբեաց զնա, և ետ մարդկան զօրէնս իւր. և այժմ գայ մտանել յերկինս և առաքել անտի զՀոգին նը, և բաշխել պարգևս որդւոց մարդկան. զորոց խօսի մարգարէն՝ ի հետևեալ բանսդ:

Պարձեալ կառք այ ասի եկեղեցի նը, յորում էն բիւրապատիկ հաւատացեալք. և իրաքանչիւր՝ ի նոցանէ ևս՝ ըստ լսմբ". են կառք այ, և հազար ուղղիչք այսինքն առաջնորդք, քարոզիստուք ևն. ընդորս և բազմութիւք պահապան հրեշտակաց: Այս կառս ուղղեաց ևր՝ եկեալ՝ ի սինէ սրբութէ իւրմէ, այսինքն՝ ի նը կուսէն:

Նարոյապէս կառք այ է սէրն այ. զի՝ ի նմա բազմի ահ և շուրջ զնովաւ բիւրապատիկ առաքինութիւք՝ ի սինայէ այսինքն յերկինից: Պարձեալ՝ կառք այ է սէրտ նը. յորում բազմի սէրն այ իբրև թագաւոր հազարաւոր ուղղեաց այսինքն առաքինուեց. առանց որոց ոչ ինայ սէրն, և ոչ հանդչի՝ ի սրտի: Թագաւորն մեղուաց ոչ բազմի ուրեք՝ ի գաշտի, եթէ չիցէ պարսառեալ՝ ի զօրաց իւրոց այսինքն՝ ի բազմութէ մեղուաց. սոյնպէս և սէրն այ՝ որ թագաւոր է առաքինութեց՝ ոչ բազմի՝ ի սրտի առանց բազմութե առաքինուեց. և ոչ այլ առաքինութիւք առանց նորա ինան՝ ի սրտի, այլ իբրև զմեղուս ցրուին. իսկ՝ ի կալն ընդ նմա, ՝ի նմանէ կառաւարին՝ իբր թե իցէ՝ ի նը սէնա, և նովաւ առաջնորդին՝ ի շինել զմեղր բարի գործոց: Ընդ քանզի խօսեցաւ մարգարէն զառաջնորդելոյն այ, խօսի այժմ և զեևանելոյ նորա, և որք զհետ եւիւն այնմ, և ասէ:

ժԸ. Ել՝ի բարձուն. և գերեաց զգերեսցի. առ աւար, բաշխեաց պարգև. և ետ որդւոց Մարդկան. զանզի ընդհատապէս և բնակիլ եղիցի՝ ի նմա։

Այս տարազ խօսից, այսինքն ե՛լանել՝ի բարձունս՝ յայնժամ ընծայի՝ այ, յորժամ յայտնէ՝ած զմեծութի՛ւն բարձրութե՛ւն փառաց իւրոց, կամ զբարձրանալ զօրութի՛ւն իւրոյ՝ի վերայ այլոց. և կամ ևս նստիլ կամ երևիլ ուրեք իբր՝ի բարձրութե՛ւն. յայս առնարկէ լուր մարգարէին ասէ։

Ել՝ի բարձուն, և գերեաց զգերեսցի. էառ աւար. բաշխեաց պարգև. և ետ որդւոց Մարդկան։ Որպէս աւանդի՝ի գիրս եւկց. (՝ի գլ. լՁ. մինչ՝ի լԹ. և գլ. ի. 32 — 36. ևս և՝ի գիրս Թուոց. Թ. 15 — 23.) յետ իջանելոյ Մովսէսի՝ի սինայէ՝ յորժամ յօրինեաց և առարտեաց նա զամենայն կազմուած տապանակի՛ն և զչինուած խորանին, և զետեղեաց զնոսա ըստ ամենայնի, ծածկեաց փառք՝ն զխորանն զայն. և ինքն՝ եր եւ անդ և նստաւ իբր՝ի բարձունս՝ի մէջ երկուց քերովբէից. և յայնմ հետէ՝ անտի խօսէր ընդ Մովսէս. և անդ քնակելով առաջնորդէր ժողովրդեան իւրում։

Ընդ կալով միանգամայն և եւ դարձեալ՝ի բարձունս, այսինքն եղոյց զփառս և զզօրութի՛ւն իւր ընդ մէջ ամենայն ազգաց՝ որս էած զխորայէլ. և գերեաց զգերութի՛ւն. զի քնակելով՝ի տապանակի անդ նուաւաւ մատնեաց զազգն զայնոսիկ՝ի գերութի՛ւն ժողովրդեան իւրոյ. էառ և զաւար այնոցիկ ազգաց, և բաշխեաց զայնս իբրև զձրի պարգևս, և ետ որդւոց մարդկան այսինքն որդւոյն խորայէլի, և քնակեցոյց զնոսա յերկիրն յայն, որ տարաւ զնոսա. և ահա այս է՝ զոր ասէ. * Ել՝ի բարձունս և գերեաց զգերու-
„ թի՛ւն, էառ աւար, բաշխեաց պարգևս, և ետ որդ-
„ ւոց մարդկան։ Այս թէպէտ բազումք յիսրայէլացւոց անտի թերահաւատ գտան նմա, բայց նոցա ևս ետ քնակիլ անդ. և յայս սակս յաւելու ասել։

Բայց ընդհատապէս ևս քնակիլ եղիցի՛ ի նմա։ Այս-
ինքն թերահաւատ ժողովրդեանն ևս եղիցի քնակիլ

յերկիրն յայն. զի աստ բառդ էնահէաւ, դնի նոքա ա-
ներևոյթ փոխանակ բառիս էնահէլ. որպէս յայտ է
յայլ թարգմանութեանց, այսինքն է՝ եղիցի բնակիլ՝ի
նմա, ըստ որում դնէ և վարդան՝ի սաղմոսի աստ։
Նոքա լամբ". պարզագոյն ևս դնէ յասելն՝ թերահաւա-
տից ևս բնակեալ էր՝ի նմա. որ է ասել. թերահա-
ւատք ևս բնակեալ եղեն՝ի նմա։

Մարթ է այլազգ ևս իմանալ զայս յետին բան ըստ
բազմաց, յաւելլով զբառս ինչ այսպէս. Ոճ բնակեալ
եղիցի՝ի նմա, այսինքն՝ի տապանակի ընդդէմ թե-
րահաւատից. այսինքն ընդդէմ կարծեաց նոցա՝ որք
թերեհաւատ գտան՝ թէ բնակիցի արդեօք ոճ՝ի մի-
ջի մերում։ Այս յետին մեկնութիւն կարէ նպաստիլ
յեբրայականէն և յայլոց թարգմանութեց, զոր բա-
զումք յայս միտ վերածեն։

Այս բան յայտնապէս ասի՝ի դէմս քրի ըստ որում
և առաքեալն պօղոս՝ի մէջ բերէ. (եփես. դ. 8.)
* իբրաքանչիւր ումեք՝ի մէնջ տուեալ են շնորհք
„ ըստ չափու պարգևացն քրի. վասն որոյ և ասէ.
„ ել՝ի բարձունս, գերեաց գերութիւն, և ետ պար-
„ գևս մարդկան։ Եւ ըստ այսմ կրկնակի իմացեալ
լինի ելանելն քրի և գերելն զգերութիւն, զոր մարթ
է հաճեմատութիւն քրի առաքելոյն կարգել այսպէս.
իբր զի Տէրն մեր որ էջն յերկինից՝ի փրկել զաշխ-
մարդկան՝ ելնախ՝ի բարձունս խաչի. որպէս գրէ և
գէորգ վարդապետ (՝ի մեկն. եսայ.) Ե գերեաց անդ՝ է
խաչն գերեալ. այսինքն գերեաց զգերեալն՝ի սա-
տանայէ որ է ասել. յաիշտակեաց զմարդիկ՝ի ձեռաց
նորա, պատառելով զթուղթ գերութեանն նոցա՝ի խա-
չի անդ ըստ պօղոսի. որով և զլծշուտ գերութիւնն
ազգի մարդկան փոխարկեաց յերանաւէտ գերութի՛
այսինքն՝ի ժառանգութիւն արդեգրութեանն Ոյ։

Եւ զորս միանգամ արկեալ էին գևք՝ի գժոխս՝ էա-
ւոք. այսինքն էառ՝ի ձեռաց նոցա՝ լուծանելով
զխաւարային բռնակալ տէրութիւն նոցա։ * Տրն մեր
„ խոնարհեցաւ էջ առ մեզ (ասէ իգնատիոս վարդա-
„ պետ՝ի մեկն. գլուխ. ա. 51.) և մարտ պատե-
„ բազմի առ գևսն հաստատեաց (այսինքն թէ մար-
„ տեաւ ընդ գևսն.) կապեաց զհակառակն. զաւարն

,, բաշխեաց , ցրուեաց զզօրս սատանայի ։ Եւ զի սա-
ատանայ մեծատուն համարիւր զինքն՝ գրէ ի համարն
53. * զայս մեծատուն (ասէ) կողոպտեալ կերբեմն
,, կարծեցեալ մեծութիւն՝ էառ զաւարն. բաշխեաց
,, պարգեւս մարդկան , և զինս արձակեաց ունայն.
,, ըստ այնմ զոր առաքեալն ասէ. (կող. բ. 15.)
,, մերկեաց զիշխանութիւնս և զզեստութիւնս. յայտ յան-
,, դիման խայտառակեալ նշաւակեաց զնոսա ։

Եւ զդէպ որ միանգամ վանեալ զինամին՝ յաւարի առ-
նու զինչս նորա , զայնս միայն առնու , որ ի ինքեան
համձոյ , և կամ արժէ ինչ , և կամ ունի զանուանելն.
և ոչ զկաշս ապականելոյս և վատթարելոս , և ոչ
զերս աղաչելոս. ըստ այսմ արար և ՅԻՇՈ մեր. զի յա-
ւարի առնուլն զայնասիկ որք կային ի գժոխս՝ զատա-
ւականան էառ , և զայնասիկ որոց ներեաց ՅՆ երբ
կայմտութիւնն , այսինքն զՀոգիս արդարոց. (ըստ
պետր". ա. պետ". ի. 20.) և ոչ զապականելոս և
զաղաչելս , որպիսի էին կայինեանք , փաթաւունեանք ,
սոդոմեանք , և այլք չարք և անօրինք , զորս յաւիտե-
նական հրոյն բաժին գնէ առաքեալն յուդայ. (ի
համարն . 7.) Եւ որպէս մանգնիան ի մտանելն ի
խռիւ՝ միայն զերկաթս ժողովէ և ոչ զայրս և
զունգս, սոյնպէս և քո ի մտուիլն յերեսաւն ի գժոխս՝
զաղտս միայն ժողովեաց և ոչ զՅԻՍՈ ։

Ո՜ աւարիլ մահու և սատանայի , կամ զերկունս նոցա՝
ի տալ արտաքս զաւարն՝ օրինակաւ ինն ի մէջ բերել
բարեգ. (ի մեկն . մարկ. գ. ԺԲ.) և ասէ. * Ո՜վ
,, օրինակ որք զկերակուր ինչ առնուն՝ զոր ոչ են
,, կարօղ պահել, և գյառաջադոյն ամբարեալն փս-
,, խեն. նոյնպէս և մահու եղև. զմարմին ևն՝ զոր
,, ոչ կարէր պահել առեալ , և զայնասիկ ևս ար-
,, տաքս ընկէց , զոր ունէր ի ներքս ... եկուր զքո՛,
,, և չկարացեալ ունել ներկեաց և զայլն տալ ար-
,, տաքս ։. որոյ վասն ասի Թէ քո. * ելոյծ զերկունս
,, մահու ։, Այսսի և ի գոլել նորա ի խայնի՝ զար-
հուրեցաւ մահ և գժոխք , և ետ զորս առնէին ներ ,
Եւ զայս ևս օրինակաւ ինն նկարագրէ նոյն բարեգ.
(ի գԼ. ԺԵ.) ասելով. * որպէս Թագաւորաց և սո-
,, վորութիւն ի ժամ խառնելոյն ի պատերազմ գո-

,, ձեզ՝ ի վերայ թշնամեացն, և սրտաբեկեալ զնասա ,
,, այսպէս չէմարիա թագաւորն որ երթայր ի գժոխս
,, առ ի բմբռնել զնշանակն կենաց և զաւարն յափշ-
,, տակել (գոչեաց մեծաձայն յատենէն զՅոզիէն)։
Այլ ապա ի յառնել իւրում։ (որպէս գրէ ի գԼ-
ժէ.) * վանեաց զպատերազմին. և էառ զաւար թըշ-
,, նամեաց. և մնացեալ բարձաւ։ վասն որոյ և զինա-
,, ւորն։ (այսինքն հրեշտակն՝ ի վիճակ) նստէ, յայտ
,, առնելով թէ հանգիստ և շքաւթե եղև աշխարհի։
Այլ գերեալ ասէ մերոյ զայսպիսի գերութիւն, և հա-
նել ի գժոխոց զՅոզիս արդարոց, ապա յետ յառ-
նելոյ ի մեռելոցն եղ զերկրորդ երևումն, իբր զի եղ
յաղթանակաւ ի բարձունս երկնից՝ ի համբառնալն
յերկինս քաղցրութիւն երկնային զօրաց, և երանելի
Հոգւոց. և յայտ առաւ երկնի և երկրի՝ թէ զիարդ
գերեաց զգերութիւն և կողոպտեաց զաստանայ՝ ընդ
իւր առնելով զկողոպուտն. առ որ և յառաջագոյն
ասէ յուսացողդ Աստուածպատրաստ իւր ասելով. * և ես
,, յորժամ բարձրացայց յերկրէ՝ զամենեսեան ձգե-
,, ցից առ իս ։ (յովհ. ժԲ. ՅՀ) ։ Այլ զի՝ առաւ գնէ՝
սովին ցուցանէ թէ ետրն մեր գորս եհան ի գժոխոց՝
ընդ իւր տարաւ. զի որ գերէ և առաւ հարկանէ՝
զաւարն և զգերեսն ընդ իւր առնի։ Այսաեալ առաւ
ընդ աջմէ հօրն՝ բաշխեաց պարգեաս և ետ մարդ-
կան. վասն զի որպէս խոստացաւ (յովհ. ժԸ.) նոյն-
պէս և ետ խոստմանն իւրում ի գնալն յերկինս ա-
ռաքեաց զՀոգի իւր Սրբ, զոր պարգեւս կոչէ վասն ձրի
առեալ լինելոյ. իսկ յոգնակի գնելն ցուցանէ ըզ-
բազմապատիկ լինել պարգեաց Հոգւոյն։
Իսկ յասելն՝ բաշխեաց և ետ, ցուցանէ թէ ետրն մեր ի
կողմանէ իւրմէ սփռեաց և սփռէ զշնորհս և զպար-
գեւս Հոգւոյն որոյ ի վերայ ամենեցուն և առ ամե-
նեսին, և զայս ցուցանէ ասելն բաշխեաց։ Այսոյ նոցա
և եթէ ետ և ասէ իրաք՝ որոց կամին և որոց ինքն կա-
մի. որով որք ելինն որդիք մարդկան՝ եղեն և լինին
որդիք նոյ. և որք էին գերի աստանայի՝ լինին ժա-
ռանգ նոյ. և՝ի տուս Հայելով գնէ զնա։
Այսոյ՝ որք կամին, և որոց ինքն կամի. քանզի ոչ
միայն որոց կամիցին ետ, այլ և այնոցիկ՝ որք երբեմն

անհաւան գոան նմա. մանաւանդ թէ որք հակառակ
ևս եղեն նմա, ևս և որք խաչեցին զնա, և որք տա-
րակուսեալ կային զկրկնութիւնն զոր արար նա։ Ո՛չ ո-
սա ևս յիշէ՛ ի մտանալն՝ կուշտով թերահաւատա-
յսմէնէն ունօղա զայնպիսի հաւատ՝ որ էր թերի՛ ի
կատարելութէ՛, որպիսի էր հրէից բազմից. կամ էր
թերի յամենայն չնմարտութէ՛. որպիսի էին այլոց
բազում ազգաց. որք ոչ կարէին իմանալ կի՛ հաւատալ՝
թէ ած բնակեալ եղիցի՛ ի մէջ մարդկան. այսոցիկ
ևս ետ ասէ զպարգևս, կամ թէ զայսոսիկ ևս արար
բնակիլ՛ ի մէջ եկեղեցւոյ։ Ո՛չայս եգեալ մարգա-
րէին, և ցուցեալ զարարածոցանէն՝ ի մէջ մտուե-
ցանէ այժմ և զառաջնորդել նորա ժողովրդեան իւ-
րում, յաւելեալ և զօրհնութիւնս բանից՝ յասելն։

ԺԲ. Տէր ած օրհնել՝ օրհնել որ զբրհնածոցդ, առաջ-
նորդեսջե հեղ ած էրուխ հեղ։

Ո՛չայս բան հայելով յերկեցաց սաղմոսիս ակնարկէ
յայն՝ զոր ասաց ի սկզբան. զի անդ եգ, * յարեցէք
ած՝ և ցրուեսցին ամենայն թշնամիք նորա։ որ էր
ասել. յածել մեր զառապանաւն ձեր ի խորան իւր՝ նա
ինքն եկեսցէ ընդ մեզ, և առաջնորդեսցէ մեզ և
վանեսցէ զնեղեալսն ի բերանոյ հանախտութեան ժողովրդեանն՝ որում
ածեր զառապանաւն՝ զնոյն առաջնորդութէն ոչ առաջի
առնէ առելով։

Տէր ած օրհնել՝ օրհնել որ զբրհնածոցդ. առաջնորդեսջե
հեղ ած էրուխ հեղ։ Ո՛չայսինքն. որ ձեր մեր որ է օրհ-
նեալ, և միշտ և յամենայնի օրհնեալ, հաճեսցի լի-
նել մեզ առաջնորդ ի հանդիսի սոսա մերում, յորում
յանուն նորա ցնծամք։

Ո՛չայս բան մարգարէին որ ասացաւ առաքեալսն հան-
դիսի՛ հայի և և յայն ամենայն հանդիսս, և յայն
ամենայն գործս և իրս, որք կատարին ի քաղցոյ
մի ժողովելոց յանուն նոյ. զի յամենայնի ի նոսա ած
ինքնին առաջնորդ լինի կատարողացն. յոր հայի և
այն բան ձեղ զոր ասաց. * ուր իցեմ երկու կամ երիք
,, ժողովեալ յանուն իմ, անդ եմ ես ի մէջ նոցա ։
(մատ. ԺԸ. 20)։

Աղքատ ասի օրհնել ըստ բազում իրաց · զորոց խօսեցաւք այլուր · (տաղ. Ա՛ի՛ղ. 12 ։ և Ղ. 24 ։) տե՛ս նոյնպէս · այլ ասա կամեցեալ խօսիլ ըստ յարմարուե իրացդ , ոչ ասի օրհնել նախ յինքեան ըստ անսահմանն իւրոյ կատարելութեանէ , և բարութեանէ ևն. և յայս հայելով ասէ՝ ոչ ասի օրհնել Յիսուսորդի ասի օրհնել յամենայն սրտարծս իւր · զի յամենեսին բարիս ցուցանելով յամենեցունց օրհնի , և այս՝ կամ յայտնապէս , և կամ լռելեայն , և ս և կամ ներգործութեամբ , և կամ զօրութեամբ · և զի հանապազորդ ցուցանէ ոչ զբարերարութեան իւր , հանապազ օրհնել ասի · յայս հայելով կրկին զօրհնելն յաւելոյ ։

օրհնել որ չըհնաւոցն ։

Ոսկ առաջնորդելն ոչ կրկնակի մտածի · մի՛ ընդհանրապէս , որով առաջնորդէ իւրաքանչիւր ումեք առանձինն՝ որ է նմա բարի · իսկ թէ մարդն դիմէ առ չարն՝ իւր է յանցանքն · զի որպէս յառաջնորդել հոգւոյն խեղճացեալ ոմին՝ յուղիղն վարել · իսկ թէ գնալ ոմին ոչ է յանցանք հոգւոյն՝ այլ ոմին · ոչինչպէս և յառաջնորդել ոչ ի բարին՝ եթէ թիւրեսցի մարդն՝

մարդոյն է յանցանքն ։

Յորկորդ առաջնորդէ ասե՛ ի ժամուսորի ըստ յաջողելոյ այսմ մարդոյ յայս ինչ գործ , և այնմ յայն ինչ · այսմ հասարակութեամբ յայս ինչ , և այնմ հանդիսի յայն ինչ ևն. և այս ըստ այլևայլ կարգի , այսինքն ըստ քաղաքականին և ըստ բարոյականին , ըստ գերբնականին և ըստ բնականին · ըստ զօրացուցանելոյ և ըստ փրկելոյ , ըստ օգնելոյ և ըստ պաշտպանելոյ ·

և այլն ։

Ոչ որպէս երեւի՝ ըստ այսոցիկ յետին առմնդ խօսի ասա մարգարէն · յոյժ սակս իսկ յաւելուա զառաջն ասե՛ ի բլլել ևր · որով ակնարկէ՝ ի յատուկ խնամս ունի մարդ որ փրկեացն զմեզ՝ և եղև մեզ առաջնորդ ՝ի կենանս յաւիտենից ։ Ոչ զի ցուցցէ Թէ յորմէ՛ և առաւելապէս փրկիւ լինիցէ այ՝ յարէ զկնի և ասէ ։

Ե՛. Ա՛ն ևր ասե՛ ինձնորոյ , և ՝ի շահ են եղ մահս ։

Ոչ առա ինձնորոյ՝ կրկնակի կարէ առեալ ՝լինիլ · մի՛ փո-

խանակ այնր՝ որ տայ զկեանս, որ և տիրապէս ասի կենդանաբար. և մի և՝ փոխանակ այնր՝ որ պահէ զկեանս. և այս՝ կամ խնամելով ի բարին՝ որ իցէ տալ ծիլ կենաց, և կամ ազատելով ի չարէ՝ որ զնասակարն ի կենաց։ Լուդ. Հայելով ի բնագիրն Եբր՞. և յայլ Թարգմանութիւնս՝ ասա ըստ երկրորդ առումն խօսի մարգարէն յասելն։

Ա՛ն ունի կենդանութիւն։ Լայնքն Թէ՝ ոմն ունի զանձս հեթանոսաց, որք մահացուիչքն են և կորուսիչք, այլ և՝ ոմն կենդանաբար՝ այսինքն կեցուցանօղ ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ. ըստ հոգւոյ տալով մեզ զշնորհս պահպանիչս հոգևոր կենաց, և և տալով մեզ զօրինս սքան տածիլս հոգւոյ։ Ըստ մարմնոյ՝ խնամելով զմեզ հայրաբար, և պահելով զմեզ ի չարէ՝ մանաւանդ ի մահուանէ. և զսոյն զայս կամելով ի մանաւանդ որ յայտ առնել յայրէ զինի, և ասէ։

Ա՛ն ի՞նչ են եղէ մահս։ Լառաջ եղէ՝ զնի ասի փոխանակ գիւտի ազատութեան, կամ փոխանակ անվտանգ ելանելոյ. յոր միտ կամի ասել՝ ի՞նչ է ձեր և իցէ ազատութիւն, և առաւել և ազատութիւն ի մահուանէ, կամ յաջողութիւն փրկելոյ ի մահուանէ, կամ հնարք ձերձանելոյ ի վտանգէ մահու, և կամ գիւտ փրկութիւն յինչ և իցէ վտանգէ. յոր միտ ի ժամագիրսս մեր փոխանակ ասելոյ ի՝նմանէ՝ են եղէ մահու, դնի.

* նա փրկեսցէ զմեզ։։

Նչ զայս ասէ մարգարէն առ ի ցուցանել՝ Թէ միայն ինչ է լինիլ փրկիչ և կենդանաբար, որովհետև նա միայն ասէ կեանս, և նա միայն պահէ և ազատէ, ի մահ. ուանէ ոչ միայն ի ժամանակաւորէ, այլ և ի յաւիտենականէ. որպէս և արարն իսկ։ Ոչ գոհք և ոչ ողջակէզք, ոչ մեծութիւք և ոչ զօրութիւք կարացին առնել ցուցանել զմեզ. ոչ եղբայր, և ոչ այլ ոք, այլ նա միայն եղև մեզ եղէ փրկութիւն. * ոչ ապա,, կանացու արծաթ և ոսկի ինօք փրկեցայք ,, ի ձեր ոց հայրենատուր առանդ իցն (ասէ առաքեալն) ,, այլ արեամբ ամբիծ և անարատ գառինն։ (ա՛. պետ. ա՛. 18.) ուր ասէ տարգիս ընդ՝ի՞նչ (ի՞նչ ձ.) * եթէ մարդիկ առ այսոսիկ (այսինքն առ հնարս ,, փրկութիւն) տկարանան՝ ապականացաք գոլով, և

,, զեզբարս իւրեանց ոչ փրկեն. որպէս ասէ գաւթի.
,, եղբայր ոչ փրկէ, և ոչ փրկէ մարդ. և ոչ ասէ
,, ընդ ումեք ոյ փրկանս, նա և ոչ զիւն փրկանաց
,, անձին իւրոյ, և այն զի պատուականագոյն է մարդն
,, ոյ քան զամենայն նիւթս։ Այլքան մանաւանդ ան-
,, շունչքն տիրանան առ այսոսիկ. զի եթէ զսակաւ
,, ասիցես, եթէ զարծաթոյ, եթէ զանանց պատուա-
,, կանաց և զծանրագնից՝ ոչ երբէք զօրեն առ հո-
,, գևոցական փրկութիւն ։ Ի սոսին ակնարկելով
մարգարէին՝ միայն ոյ ասէ զէս փրկութէ. և ասել
յայսմանէ կամի քաջալերս տալ ժողովրդեան լերկն
էին՝ ի թշնամեաց իւրեանց. զի նա ինքն ոչ փրկէս
փրկիչ է ինքեանց, այսպէս և վանիչ է թշնամեաց
իւրեանց։ Եւ զայս յայտ առնէ յօրդ բանիւն առ
սէլով.

ի՞ն. Բայց ասէ՝ ոչ էդրեսէն ընդ ինձ ոչ ոք. և ընդ
ինձն խոշնուէն, որ փոխ յանօրէնութեան
իւրեանց։

Գիտէս մարդոյ երևելի ինն գոլով՝ ի մարդն և քան
զայլ անդամսն երևեցուցիչ նորա, փոխաբերի յայն
ինչ՝ որ երևելի է՝ ինձմէ, կամ երևեցուցիչ գիտաւոր
լատութէ կամ չարութէ՝ ի մարդն։ Յայսոսիկ ինն
փոխաբերութէ հայելով մարգարէին խօսի ասա՝ յա-
սելն։

Բայց ասէ՝ ոչ էդրեսէն ընդ ինձ ոչ ոք։ Այսպէս
նոր՝ ի ձեռն գլխոյ իմոյ եւ լինին երևելի չարութէք
թշնամեացն մանաւանդ հպարտութէքն նոցա. յոր միտ
կամի ասել. ոճ մեր՝ որ է կենարար որ, լինի մեզ
պաշտպան. և եթէ թշնամիք մեր կամիցին յանձնել
՝ի վերայ մեր հպարտութէ և չարութէ իւրեանց,
սակայն նա ինքն ոճ փշրեսցէ զհպարտութիս նոցա.
որ է ասել, նկուն արասցէ զնոսա. և մի եւս կարաս-
ցեն ամբառնալ զգլուխս իւրեանց, կամ մի եւս ե-
րևեսցին հպարտութէք նոցա. զի որպէս՝ ի փշրել բարձ-
բացեալ արձանի կամ վիմի ոչ եւս երևի բարձրութէն
նորա, այսպէս և՝ ինկուն լինիլ հպարտացեալ թշնա-
մեացն ոչ եւս երևին գործք հպարտութէն նոցա։
Այլ՝ արթի է եւս ասել՝ թէ ասա բառդ էլոհ՝ որ է մասն

մարդոյ՝ դնի փոխանակ բոլորին ըստ Հաբատասանական ոճոյ. և ըլ այսմ նոյն է ասելն՝ ած փշրեսցէ զդլուխս թշնամեաց մերոց, և ասելն՝ ած փշրեսցէ զԻշմաիլ մեր, Լայց առաջինն մեկնութիւնն երևի լինել առաւել։ Հարազատ. զոր և այլով բանիւ առաջի դնէ մարգարէն յառնելն։

Զ– ընդէր խոչնովին, որ գիան յանօրէնութենէ իւրեանց։ Ընդէր դնի առ փոխարերութեամբ, և նշանակէ զգործս բռնաւորս ի հալածուածէ, կամ զզօրութիւն ամբարտաւանութեան. ըստ որում հնդէր բերի յորինակ զօրութիւն կամ այրականութիւն. և կամ և առ նոյն է, հնդէր ցուցանէ ասս զբարձրանալ հպարտութիւն անօրինաց ի բարկանալ իւրեանց՝ ըստ որում պատահի հնդեաց բարձրանալ ի բարկութիւն։

Ոչիր միա և առցի այս բան՝ յայտ առնել, թէ ած կարձռովին՝ այսինքն արմատովին կամ գլխովին ունի նկուն առնել զայնօրիկ որք գնան յանօրէնութեան իւրեանց։

Վճռալ գնէլով յայտ առնէ և զվիճակ այնոցիկ՝ որք ոչ դադարբին յանօրինութէ, այլ հանապազորդեն ի նոյն, և ի նմա ընթանալ ախորժեն։ Ցուցանէ և զՀանգամանս այնոցիկ՝ որք կամովին գնան ի վիճակ չնորհաց ի վիճակ մեղաց, կամ յառաջադեալ առաքինութենէ ի վիճակ մեղաց, կամ յառաջադեալ առաքինութենէ ի մնալ թէ և յապականութէ կենաց. վասն որոյ և ած կարձռովին նուաձեսցէ զՀբրա նոցա։

Ա–ւել գիտել է՝ զի այս եղանակ խօսից Հոյլի և և յայնպիսի իմն նմանութէ՝ զոր մարթ է առաջի դնել առակաբանութէ այսպէս. ի գնալ ամբարշտաց յանօրինութէ իւրեանց, այսինքն յայնպիսի անօրինութէ՝ որ է իւրեանց, կամ յոր սովորեալ են գնալ իբրև ի Հանապարհ իւրեանց. և ի կործել նոցա թէ չիք ուսեաք վրէժխնդրութէ, ած Հասցէ զկնի նոցա. և կալեալ զՀերաց նոցին՝ Հարցէ զնոսա զբարի, և փշրեսցէ. և կամ փեսաեալ զՀերս նոցա խայտառակեսցէ զնոսա։

Օ այս արար ձեզ մեր ընդ սատանայ և ընդ զևս նոցա. քանզի Հասեալ զկնի նոցա՝ խորտակեաց զդլուխս նոցա, և կործեաց զամենայն Հերս Հնարից նոցա զլխովին, և արար զնոսա նշաւակ ծաղրոյ

իւրոց։ Այլ զի սատանօբ բառդ ֆլոռ՝ եզակի դնէ
ըստ բազում ձեռագրաց մերոց, կարէ՛ հայիլ ուղղա-
կի՛ ի գլուխն դիւաց՝ ի սատանայ. յոր միտ եթօսի
սաղմոսերգուն (՝ի սաղ. ՀԷ. 13.) յասելն * գու-
,, փշրեցեր զգլուխս վիշապին (այսինքն զգօրութիւնն սա-
,, տանայի, և զՀնարս նորա զկռասաւորեալսն ին) և
,, եհատուր զնա կերակուր զօրացն Հնդկաց։

Օ բառդ ֆռՁՆՎՀՀ՝ ՄՀՆեցաք՝ ի վերոյ բառիս ար-
մատովին, և և գլխովին. ըստ առաջնոյն գիտելի
է, զի այս՝ բառ թարգմանի՝ եղանակ յանուանէս կառնին՝
որ նշանակէ արմատ. իսկ տուգդ է, դնի իբր զարդ
ըստ յատկութեանէ լեզուիս մերոյ, ըստ որոյ՝ ի բառս
ինչ յատկեալ լինի այդ տուգ. զորօրինակ յասելն
բարժին, պարՀին, ին. փոխանակ ասելոյ բաժին,
պահել, ին. և ըստ այսմ բառիս կարՁնովին նշա-
նակի արմատովին։

Այսա երկրորդին գիտելի է, զի փոխանակ բառիս
կարՁնովին՝ ի թարգմանութենէ եօթանասնից դնի
բառս ֆռՁՔՎ որ է ծայր. որով փոխան թարգմանիչք
մեր յամենայն տեղիս զայիպիսի բառ դնեն՝ որ հայի
՝ի ծայր. զի ծնն՞. խԹ. 26. օրին. իԸ. 35. ՂԹ. թագ՞.
ԺՂ. 25. գնեն գլուխ. օրին. ԼՂ. 16. սաղ՞. Է. 17.
գնեն գագաթն. օրին՞. Ը. 27. և ԼՂ. 1. գնեն կա-
տար. ին. և զի ասա և նոյն բառ դնի ՝ի յոյնն, այ-
սու յայտ լինի Թէ բառիս կարՁնովինն՝ որ դնի ՝ի
մերում, իմացեալ լինէն ասել, գլխովին կամ գագա-
թովին, կամ ծայրովին ին։

Այս ըստ այսմ յասելն յեօթ՞. և յոյնս * փշրեսցէ...
զծայրս հեբայ՞։ եթէ ծայրիւ նշանակեսցի ստօրին
մասն, այսինքն արմատն հեբայ, միտ բանին նոյնա-
նայ ընդ մերում ըստ արմատովին նշանակելոյն. զի
նոյն լինի ասել՝ փշրեսցէ զարմատս հեբայ, և ասել՝
փշրեսցէ զհեբս արմատովին։ Այլ եթէ ծայրիւ
նշանակեսցի ծագ հեբայն, հայի դարձեալ՝ ի մերս
ըստ գլխովին կամ ըստ ծայրովին նշանակելոյն. զի
նոյն լինի ասել՝ փշրեսցէ զծագս հեբայ, և ասել՝
փշրեսցէ զհեբս ծայրովին կամ գլխովին. յոր միտ
կամ ասել. փշրեսցէ ած զծայրսն Թէ կամ զգարձեալն
հպարտութեանէ յարաց, կամ զծայրագունեալ յարսն նոյ-

ամբ՝. Հոգևորապես մեկնեալ զայս բան՝ զբառդ
ներձնովին առնու փոխանակ բառիս ներձոյ. և գրե՛
այսպէս. * Թէ ինամի է մեր սատանայ, և ոչ ըր յերկ-
,, բայն. և ՚ի գլուխ նորին անհաւատութեին. իսկ
,, հերը բառնալը ՚ի նմանէ զանազան հիւանդութե-
,, թէքն և անիբաւութէքն. քանզի հերն՝ խորհրդոց
,, է նշանակ. որպէս և ասաց քէր, հերը և ամենայն
,, հեր գլխոյ Թուեալ է. Ի՚ըդ որչափ հեր անհաւա-
,, տութէին յաչխարհս բարձրացեալ, բառնացանէրը
,, զկարճ հերսն, այս է առ ժամանակեայ հիւանդութէքն
,, և մեղքն, որք ՚ի գալ մահուն կարձէին. և այսու
,, հերբօք և չոր խորհրդովքս ձգելին զամենայն մար-
,, դեկ յինքեանց անօրէնութէին և յանհաւանութէին,
,, ոկ յորժամ փշրեաց քո զգլուխն, և երարձ յերկ-
,, րէ զանհաւատութէին. և խորտակեաց վիշն՝ որ
,, հատաւ առանց ձեռն, զկատաղութէն պատ-
,, կերն ՚ի վերայ խեցգետնէն և երկաթեղէն ատիցն,
,, յայնժամ և հերքն ջնջեցաւ ՚ի միջոց. բարձաւ ա-
,, նօրէնութէին յաչխարհէ. . . . ծագկեաց աւետ, որբու-
,, թէն . . . որով փայլեցին մարդիկ, և կոխեցին զքրիս-
,, բեալ թ՚ինամէն զգլուխն ‖.

Իսկ վարդան զբառդ կարձնովին՝ կրկին օրինակաւ
ընթեռնու, այսինքն կարձնովին, և և կարձովին.
և գրե՛ ՚ի ձեռագրի իւրում այսպէս. * Ո՚ գլուխ
,, թ՚ինամեացն ասե (փշրեաց) զկատաղութէն, և
,, զնոյն գլուխն զիշխան (կատաղութէն) ՚ի յոր-
,, դանան. և զՀերն կարչ (այսինքն զօրաւոր) մահիր
,, քնութէ՛ն հատուցէ (այսինքն հատցէ) կարձնովին,
,, զուզիչն ասէ որ ջարդեցաւ մինչև ոչ է բժշկութ.
,, կամ կաշովին (այսինքն) արմատով. զի մեռելոտի
,, զործոց (խօսի) ‖. Ի՚ասելն ՚ի ձեռագրի, զի ՚ի
տպագրեալն փոխանակ դնելոյ կարչ դնի կարձ, և
փոխանակ դնելոյ կաշովին դնի կարձնովին. ոչ և
՚ի համեմատութէնն.

Ի՚արթ է և այ յաւելուլ, թէ բառդ կարձնովին՝ ինչ
երկու բառ, այսինքն կարձ և նովին. որով միտ բա-
նին լինի այս, զՀերն կարձ՝ նովին փշրեաց այսինքն
թէ նովին փշրմամբ փշրեաց նաև զկարձ հերն, որ
է ասել. ջնջեցաւ զամենայն հերսն, այսինքն զամե-

նայն գործս ամբարտաւանութեանէ և յարութեանէ անօրէն նաց ։ Այս են յիրաւի առնել զայս առ՝ Հաստատակ մտրգարէն վկայութեանն նորին ասելով ։

իբ. Ա ոաց ու՛ ի խորոց անդնդոց դոյն-ոյնց . և ի գլխոյ քանանաց դայն ի դուռս իոլիցնէց ։

իգ. Որպէս խաչէն ոան չո յաբեան . և լեզուս նոյն չոց յա-բենն ինձանէ չոց ։

Այս եզանակ խօսից , այսինքն է՝ ասաց տէր ես , ասա-ծոյսդ ոչ ցուցանել թէ յիրաւի այսպէս բարբառէալ էիցէ ասծ , այլ թէ այսպիսի էր Հաստուածի նորա , և այսպիսի էր նմա բարբառելի . որով ցուցանի բարե-Հաստուածի կամացն այ ի պատգամն լինել իւրաքանչ ժո-ղովրդեան , և ի վերաժխդիր լինել ընդդիմ թշնա-մեաց նորա . յայս միտ իսօսելով ասէ ։

իբ. Ա ոաց տէր ի խորոց անդնդոց դոյն-ոյնց . և ի գլխոյ քանանաց դայն ի դուռս իոլիցնէց ։

է յայլս այդ բառ, և կամ անկեալ է կերբայակա-
նէն։

Ա՚յս սաղմոս ըստ մեկնելոյ՝ զբ հարց և ըստ վկայու-
թեաց բերելոյ ի զբ առաքելոյ՝ ուղղակի հայի ի
չարչարանսն քրիստոսի իբր սաղմոսին։ Ինդ բանք
այսը սաղմոսի դնին ի նոր կտակարանս ի դէմս քրի-
ստոսի է ի համարն ։։ * նախանձ տան քո կերբցե
զիս ։։ (յովհ. բ. ։7)։ Երբորդն է ի համարն ։։.
* առեցին զիս ի տարապարտուց ։։ (յովհ. ժե.
։։)։ Երբորդն է ի համարն ։։։. * ի ծարաւ իմ
արբուցին ինձ քացախ ։։ (յովհ. ժե. ։։)։ Չորրորդն է ի համարն ։։. * նախատինք նախատից
քոց անկան ի վերայ իմ ։։ (հռոմ. ժե. ։։)։ Հինգ-
երորդն է ի համարն ։։։. * Այլ եղիցի բնակուԹիւն
նոցա աւերակ, և ոչ ոք իցէ՝ որ բնակիցէ ի նմա ։։.
(գործ. ։. ։։)։

Յայսոսիկ հայելով մեր՝ ուղղակի ի դէմս չարչարա-
նացն քոյ ունիմք մեկնել զայս. որպէս և բառդ
զառանցելոյ ցուցանէ. զի ի ձեռն այնր չարչարանաց
ազգք մարդկան զառանցելոյն այսինքն փոխեցան ի վի-
ճակէ դատապարտուԹեանէ ի վիճակ փրկուԹեան, ի խա-

ւարէ՛ ի լոյս , յանյօժարեալ չյաճգիտութէն , եւ՝ Չա-
ըատ այսմ՝ ասէին վասն զառանցելոց՝ յայտ առնէ Թէ
այս սաղմոս աւանդի վասն նոցա՝ որք փոխեցան ՛ի

վիճակ բարւոյ ։

Լակ Թէ յինչ առնէ ասացեալ իցէ զսա գաւառի ,
պէսպիսս բանք են . ոմանք ասեն Թէ առնիս Հալած-
մանն սաւուղայ ասացաւ . ոմանք Թէ ՛ի Հալածմանն
աբեսողոմայ . իբր զի այսպիսի Հալածանաւք յանհնա-
բին վիշտս ըմբռնեալ , կամ իբր ՛ի պատյոս ջուրց
պաշարեալ՝ զայսպիսիս ասացեալ իցէ , Հայելով ՛ի
Հալածանս և ՛ի տառապանս քոյն . յոր միտ մարթի
է ասել Թէ այս Հայեցուած նորա որով Հայիր ՛ի
տառապանս իւր՝ և ա և ՛ի տառապանս իւրոցանն-
չիւր արդարոյ , եղև նմա իբր գիտակն , այսինքն իբր
Հեռացոյց գործն Հայելոյ ՛ի տառապանս քոյ . յոր և
յափշտակեալ երգեաց զսոյն ասելով . * կեցո զիս ած ,
զի Հասին ջուրք յանձն իմ . . . ակն ունիմ Թէ որ
արամեացի ընդ իս , և ոչ որ էր , և մխիթարիչ ինձ
ոչ գտաւ ։ Չտուն ՛ի կերակուր ինձ զքէղլ . և ՛ի ծա-
րաւ իմ արբուցին ինձ զքացախ ։ եւ ։

Այլ ես և քաղուածք՝ որք զայս սաղմոս մեկնեն ՛ի
վերայ տառապանաց և նեղութեանց գերելոցն ՛ի բա-
բելոն . և ոմանք ՛ի վերայ Հալածանաց՝ զորս կրեցին
մանաւանդ ՛ի ժամանակս Մակաբայեցիք . բայց այս մեկնութիւնք Համարեալ լի-
նին յարմարականք . զոր և իւրաքանչիւրոք կարէ մեր
ձեռնհաս նկատել . ուստի և կամիցի՝ որ իցէ ՛ի նեղութիւն , և
առաւելապէս և՝ անձին իւրում ՛ի յընթեռնուլն
յառաջիկայդ զմեկնութիւն իւրաքանչիւր բանից մեր .
վասն որոյ ոչ է մեզ Հարկ մանաւանդել զսոյն յայս ոք
կամ յայն՝ Հայելով ՛ի նեղութիւն ոմա կամ ոմա , այլ
միայն ՛ի դէմս քոյն . և ապա ՛ի վերջ սաղմոսիս Հա-
մառօտել ինչ ՛ի գէմն գերելոցն ՛ի բաբելոն . յաե-
լեալ զկնի և զմեկնութիւն բարոյական ։

Ր. Բ. Ն

ա. Կեցի՛ ջիս ած, զի հասին ըստ ոչնչի իմ. ընկալ ես ի խորս անդնդոց. ոչ ել ինչ ինչ հանգիստ.

բ. Լա՛ռ է ես ի խոր ծովս, և ջրհեղեղ ընդդեմն ինձ.

ՄՆԱՑՈՐԴԱԿԱՆ

Նոյ գիրս ջրովք նշանակին պէսպէս իրք. այսինքն յողովուրդք, ամբոխք, աղմուկք, պատերազմունք եզ. բայց հայելով ի հանգամանս հանգստեան և նեղութեան, երբեմն դնին փոխանակ հանգստեան ըստ այնմ (սաղ. խբ. 2). * առ ջուրս հանգստեան անոյշ զիս ||. և երբեմն փոխանակ նեղութեան, մանաւանդ ի սաստկանալն. որպէս յաւելն եղիփազու առ Յովբ (խբ. 11). * և ի քուն ծանկեաց զքեզ ջուրք ||. այսինքն ծանկեաց զքեզ այնպիսի նեղութ, որ և ի քուն լինելդ տագնապէր զքեզ։ (Յես և ի սաղ. ԺԷ. 18. և լա. 8. և Ձնե. 7).

Լայս հակառակաբար նմանութեամբ չէ ինչ հեաի ի բերնութեամբ ջրոյ. զի ըստ գրելոյ լսմբ". որպէս մի գոլով ջրոյն ի բնութեամբ զայլևայլ հակառակ գործս գործել, այրս ինչ մաւցանելով և յիրս ինչ ընկղմելով, սոյնպէս կարէ և ձհակառակ իրաց նմանութեամբ բերել յինքեան այսինքն զնմանութեամբ հանգստեան և զնմանութեամբ նեղութեան.

Լաւ արդ եթէ ջուրք նշանակեն զնեղութիս, ուրեմն խորք ջուրց անդնդոց և ծովու՝ նշանակեն զանհնարինն նեղութիս. ոչինչս և չքնաքք ջուրց կամ պըղտոյտք ջուրց, զորս լիցի մարգարէն ի համարն 2. և 17. ցուցանեն զտագնապիչ նեղութս։ Այս քանզի այսպիսի նեղութիք եկին ի վերայ հին մեղոյ ըստ որում ինքն հաձեցաւ, վասն այսորիկ և մարգարէն նմանեցուցանէ զայս ջուրց, և խորոց ծովու և անդնդոց. կամելով յայտ առնել զսաստկութիւն նեղութեացս, զորս իբր նախապատրաստութիւն կրէր

'ի պարտիզին գեթսեմանի. յորում և իբր 'ի մամուլս հնձանաց ձմլիւր, և մարմին նորա հոսէր զարեան քրտունս. որպէս և առուգարանաւորէն անուան պարտիզին ցուցանէ. զի գրէ Ծորդօրգեան ('ի մէկն. մատ. գլ. իզ.) ասելով. * 'ի մերոյ բառիս առա-
,, գուէ գեթսեմանին միանոյ լսի. սակայն երբայէցի
,, է բառս, որ թարգմանի ձոր պատրաստուէ կամ
,, աւիլ ։ յորում յանդնարինս առատագործել պաշա-
րեցին կիրք տեառնին վշտաց զտէրն փառաց ։

Լ՚ետաքրքրեաք 'ի գրեալն գնեզրամէնց և զբարբառնացն քով՝ որովհետև ոչ 'ի բերանոյն քով, այլ 'ի բերանոյ իւրեանց խոսեցան պատմաբար, ոչ ասացին ինչ զառատուածէնց և զմեծամէնց նոցին. այլ թէ զոյս ինչ կրեաց և զայն. իսկ գաւիթն որովհետև 'ի գիմաց քով խոսի՝ զառատուածէնն 'ի մէջ բերելով բարբառի. և զի ոչ կարէր զայն իւիք բացատրել, առաջի առնել զնոյն նմանուածիւ. և որպէս թէ պատառելով 'ի գիմաց որգւոյ առ Հայր՝ ասէ ։

Ալեցւ՚ էիս ես ։ Ալեցուցիչն ամենայնի խնդրէ 'ի Հօրէ կերցուցանել զինքն՝ ոչ ըստ կենաց Հոգւոյն, զի անՀնարին էր այնմ կորնչիլ, որովհետև յերանական վիճակի էր. այլ ըստ կենաց մարմնոյ. և զայն ևս ոչ խնդրէ 'ի Հարէն, այլ 'ի յաւելէ՝ 'ի ցուցանել զմեծութիւն ցաւոցն, և զբնական սոսկումն զգայութեանց. ուստի որպէս և յայտնի տեսանի յաւետարանին՝ ոչ խնդրեաց զայն արձակաբար, այլ թէ ուրեմն՝ յասէին. * Նմայր եթէ կարիս անցո զբաժակս զայս յինէն ։
(զուկ. իբ. մբ).

Ուր արժան է կշռել. զի յաղթութիւն անդ 'ի պարտիզի՝ որովհետև բանն էր զառաւարկային, այսինքն զերազեղութիւն և զմնհուանէն, բաժակ կոչեաց զայն ։ Իսկ ասա բանն գոլով ոչ զառաւարկային, այլ զցաւոց՝ որ պատճառիւբ յառաջի նկարեալ այնր խաչելութեանն և մնհուանէ կոչէ ջուր, և ասէ ։

Հասեր ևս ժամ եմ ։ Լ՚ասիքն նեզուածիք ցաւոց և տագնապաց արտութեանց սատակացան յիս, և զայս սատակութիւն յայտ առնէ բառիս հասեր, որով կամի ասել՝ թէ այն նեզուածիք և տագնապաք այնչափ մեծ էին, մինչ գրեթէ իբրև զհեղեղս անձրևաց, կամ

իբրև զյորձանս ջուրց յարձակեցան և պաշարեցին զիս, և զայս բացայայտե այլով ինն նմանութիւ՛ ասելով՝

Ասէր ես ՚ի խոր անդնդոց, ոչ ՚ի գոյ ինչ հանգիստ, ՚Այսինքն այնպէս պաշարեցայ ՚ի նեղութենէ, որպէս պաշարի ՚ի ջուրց նա՝ որ ինձանէ ՚ի խորս անդնդոց, այսինքն ՚ի խորութի՛ւ անյատակ ջուրց. վասն որոյ և ոչ գոյ ինձ ասէ հանգիստ։ ՚Այլ զի մի կարծեսցի թէ խորք անդնդոց ասելով լինին խորութիւն ՚ի մէկ կամ ՚ի գետոց, յաւելու մեկնել ասելով՝

Ջուրք ե՛ն ՚ի խոր ծովու։ ՚Այսինքն եկեալ հասեն ՚ի նեղութիւ, և պաշարեցայ ՚ի նոսա, որպէս որ պաշարի ՚ի խորս ծովու։ ՚Այլ զի մէր ուրեք կան ՚ի ծովու չքնաք ջուրց յափշտակէն զընկղմեալսն ՚ի խորս՝ զայն ևս յիւրաքանչ ասելով՝

Ա՛ր չքնաւ ընկղմեցի զիս։ Ճ րջանք ջուրց այն է՝ զոր ՚ի համարն 17. կոչ պատչոյք ջուրց. որով նշանակին այն պատչոք որք գտանին ուրեք ՚ի լայնութի՛ւ և ՚ի խորութի՛ւ ծովու, յորում ուժգին պատուհասով ջուրց յափշտակէն զորս գտանէն, և սուզանէն ՚ի խորս։ ՚Այսպիսեաց նմանեցուցանէ զնեղութիւնն՝ զորս կրեաց ՚ինքն մեր ՚ի տրտմիլն անդ ՚ի պատիժսն ՚ի սկիզբն չարչարանաց իւրոց. զորմէ և ինքն վկայեաց ասելով. * տրտում է անձն իմ մինչև ՚ի մա՛հ։ (մարկ. ԺԴ. 34։) ՚Ի որ գրի զուկաս թէ * եր ՚ի ,, տագնապի՛։ այսինքն յանհնարին ցաւս հոգւոյ իբրև ՚ի հոգեվարս. և այս այնչափ՝ մինչև հասել մարմնոյ նոցա զքրտունս արեան. (զուկ. ԻԲ. 43.) և յանեբեկելի ծանրութե՛ն ցաւոյն՝ * անկանիլ ՚ի վե- ,, բայ երեսաց իւրոց յերկիր։ (մարկ. ԺԴ. 35։)

Ա՛դհա մարգարէ առ զինքեան զպատասխանի տան չքնաւ յառանձինն առ՚ի հաշտեցուցանել զմեզ ընդ Տ՛ծոյն և տալ մեզ

ինքեանն յայրեսցէ. վասն որոյ և ինքն տագնապէր. և՝ի սաստիկ տագնապելոյն քրտուներ. քրտուներ այն բայց զարեան քրտունս. ծանիցէ, զի քրտինքն յոյլև- այլ պատճառաց կարէ լինել, կամ՝ի ծանրութենէ բեռն, կամ՝ի մեծութենէ աշխատանաց, կամ՝ի սաստկութենէ ցաւոց և ամենայն, և կամ՝ի տկարութենէ քնութեան, ևն. ապա որպիսի այն բեռն իցէ, և որ աշխատանքն՝ որ տացէ արեամբ քրտնիլ։ ՚Ի գուշակել եւայեայ զմահ եզեկիայ ասելոյն, պակասեա եզեկիա. և որպէս սաեն մեկնիչքն, ի մեծութենէ ցաւոց սրտի քրտամբ եթաց զմահինն իւր. (Ի. Թագ. ի. 2։) Այնպէս և՝ձեր մեր յերևեցուցանելն ինքեան զսարսափելի մահ իւր՝ եթաց զերկիր քրտամբք, բայց ոչ հասարակ քրտամբք, այլ արեան. * ոլոռն ոլոռն հեղեալ յերկիր։ (ղուկ. ին. 44։) Որպէս գրի՝ի պատմութենէս գաղղիացւոց. այր ոմն լուեալ՝ի փարիզ զմահ մահտն իւրոյ՝ արեամբ քրտնեցաւ. նա և՝ի գուշակել մովսէսի զմերձակայ մահ եգիպտացւոց՝ եգիպտոս յարեան քրտունս մածաւ. ըստ որում յարիւն դարձան ջուրքն (ելից. է. 19.) զի այնպիսի հարուած մահու՝ զայսպիսի քրտունս ՚ի զորոյր։ Յմեռի սասպեալ օձք յորժամ հարկանեն զոք՝ սան արեամբ քրտնիլ։ Որով ցուցանի՝ թէ այսպիսի քրտունք՝ ի սաստկութենէ խիճքէ պատճառին. սաստ չափել արժան է զչափ սաստկութենէ ցաւոցն քան՝ որ ետ նմա հեղուլ զայսպիսի քրտունս. և զայն յայտնի՝ մինչև հողոյն իսկ վկայել՝ Հնմնրտութենէ արեանն. վասն որոյ ասէր առ նա քս. * Եր. ,, կիր, մի ծածկեր զարիւն մնրինոյ իմոյ։ (յովհ. ժէ. 19։)

Հրամայեցաւ Հնոյն ագամայ՝ քրտամբք երեսաց ուտել զՀաց իւր. (Ծնն. է. 19։) Ոչ այս և նորս ագամ առ՝ի բառնալ զանէծս քրտանցն՝ յարեան քրտունս ընկղմեցաւ, և արեան քրտամբք ստացաւ զՀաց իւր, այսինքն գժառանգութենէ իշխանութենէ և երկնից թագաւորութենէ. զոր արդէն ունէր իրաւամբք։ Որով եցոյց մեզ թէ մեք ևս կարեմք ստանալ զնոյն՝ քրտամբք ոչ արեան մերոյ՝ այլ արեան իւրոյ քան եր- կուց. մի՝ զի նուաստ արդիւնաւորիմք, և՝ի ձեռն նա քան արժանաւորիմք. երկրորդ՝ զի նուաստ կենդանա-

նամբ, և կենդանի գործս գործել կարողանամք. և արդարև կենդանանամք՝ եթէ նովին լուսացուբ զմէզ՝ իբը արեամբ անմեղ գառինն։ Ի սացաւ ցկոսանդիս խա-նոս Թագաւոր՝ Թէ հարկ է քեզ լսանիլ յարեան անմեղ մանկանց առ ի բժշկիլ։ մեզ ևս ասի, հարկ է ձեզ լսանիլ յարեան անմեղ գառինն յոր՝ առ ի կենդանանալ, և նորոգիլ։ Ա՛ր զայս կարեմբ առնել ի կողմանէ մերմէ, խորհելով զնեղուցեալ արեան նր, և ի նոյն ընկղմելով ըստ սխորժանաց, և փարիլ զնովաւ ըստ գործոց, զոր նմանաբանութիբք առաջի տարբ մարգարէն ի դիմաց նորա։

Ցայսպիսի վիշտս տագնապելով ձեր մէր՝ յօժարութիբ կրեր յորս չարչարեբ. որպ ասն ասէր. * հոգիս յօ-,, ժար է, բայց մարմինս տկար։ (մատ. իզ. 41.) որ-պէս Թէ ասէր. ես յօժար եմ կրել. զոր և կամիմ իսկ ըստ մերմն մասին. իսկ տագնապն զոր կրեմ՝ ես ըստ տկարութիբ մտերին մասին՝ զոր կամաւ Թոյլ տամ։

Ա՛յլ ասա գիտել արժան է, զի մարթի է զայսոսիկ նմանութիս այլով բանիւ ևս մանաւանդ ի վերոյ չարչարանացն քոյ ըստ պէսպէս կարգի և ըստ պէս-պէս պատճառաց. նախ՝ Ցայտելով յայն՝ զոր կրեաց. յոր միտ ասէ. * Հասին ջուրբ յանձն իմ։ որով նշանակի բազմապատիկ չարչարանքն։ Ա՛րդիդ՝ Ցայտելով յայն՝ որոյ վասն կրեաց, այսինքն վասն մեղաց մերոց. յոր միտ ասէ. * ընկէաց ես ի խորս անդնդոց։ կամ * եկի ես ի խորս ծովու։ որով նշանակի յանձն առնուլ նորա իջանել ի խորս անդնդոց մեղաց, այս-ինքն զառնուլ նորա ի վերոյ իւր զանբաւութիբ մե-ղաց մարդկան՝ վասն ջնջելոյ զնոսին չարչարանաբք իւ-րովք։ Ա՛րբորդ՝ Ցայտելով յայն՝ ի հնոյն որոյ կրեաց՝ կամ պահանջողութիբ որոյ կրեաց. յոր միտ ասէ. * չորքանք ընկղմեցին զիս։ որով նշանակի Թէ վերժ-ինդրութիբն ոչ և արդարութիբ նորա արարին զի որ-պէս ոչ վասն հատուցանելոյ զպարտս մեղաց մերոց՝ զնոսա ոչ վասն հատուցանելոյ զպարտս մեղաց մերոց՝

Յայսպիսի տանջանս մատնեցաք։

Տէրն մեր ազատելով զՅայր ի պաշտաման այսպիսի վշտաց՝ մեզ ևս ետ օրինակ ազատելոյ զնոյն ի նեղու-թիբս մերս, մանաւանդ յորժամ սաստիկութիբ նեղու-թիբն

իբրև զպտոյտս ջուրց ծովու սկսանին ընկղմել զմէջ ի խորս յատաստատեաւ. որպէս ասաք պետրոս, որ ի սկսանիցն ընկղմիլ. * աղաղակեաց և ասէ, տէր փրկեա ,, զիս ||. (մատ. ԺԴ. 30.) և փրկեացաւ. որոյ վասն ասի. * վէմն հաւատոյ բուռն եհար զկենդանի վի- ,, մ ||. և զի մեք եւս ի կարգի վիմացդ դասիմք. (ա. պետ. բ. 5.) պարտ է և մեզ բուռն հարկանել ի կեցուցիչ վիմն մեր. ապա թէ ծուլացուք՝ վտանգիմք և ընկղմիմք։ Լաւսի ասէ սարգիս շնորհալի. (ի մեկն. ա. յովհ. բ. 6. Ճառ. բ. յորդ.) Համարիմն ծոյլք թէ նեզուին * կործանել և կորուսանել. ոչ եթէ նե- ,, զուին առնել զայն, այլ մեր ծուլութիւն ||։ Լ՚եթէ ար- դարև ծանր էցէ և սաստիկ, և չկարելիք տանիլ՝ դիմեսցուք առ նա՝ որ տարաւ վասն մեր ծանրագոյն և սաստկագոյն նեզուեթեց, զորոց խոսեցաւ մարգա- բէն ի վերոյ. այլ կամելով զառաւելութեն նոցին եւս ցուցանել՝ յարէ զկնի, և ասէ։

ՀՂ. Ա ասաքեցէ ես ա աղաղակել, և ներկերեցա ի- նդրէ էմ։

Ի վերոյ ասաց՝ ընկղմայ ես ի խորս անդնդոց կամ՝ ի խորս ծովու, զիարդ ապա հնար եղև ի խորս ծովու գոլով աղաղակել. այլ այս դնի ըստ կրկին ձևոյ Նաբատատանութե. մի՝ ըստ ձևոյ չափազանցուե, առ ի ցուցանել զառաւելութեն անձկութեն՝ որոյ վասն աղաղակէր տէրն մեր յաղթեալն ի պարտիզի ըստ ա- ռաքելոյն (երբ. ե. 7.) երկրորդ ըստ ձևոյ փոխա- նունութե, առ ի ցուցանել լեռ այնպիսի նեզուեթե այսպիսի աղաղակ հետևեր։

Լ՚ս բարւոք խմնալոյ զայսոսիկ ծանիր. զի որպէս գրի յաւետարանի (մատ. իզ. 44. մարկ. ԺԴ. 41.) տէրն մեր երիցս աղաղակեաց. այսինքն երիցս աղա- չեաց զՀայր ի պարտիզն՝ անցուցանել յիւրմէ զաս- ժակն։ Լ՚այլ յաղաղակել նորա անդ, նմանութե խօ- սելոյ, մեզք մեր եւս զորս նա ինքն բարձեալ էր յոս իւր՝ յոսոյ անտի նորա աղաղակէին առ Հայր, զի մի անցուսցէ զբաժակն յորդոյ իւրմէ. և զի կամէր Հայրն այնու բաժակաւ ջնջել զմեզս մեր, առաւել կամեցաւ ունկն դնել աղաղակի մեզաց մերոց, քան

աղաղակի որդւոյն իւրոյ. որով և Հաճէցաւ անսալ ձէ աղաղակի անցանելոյ բաժակին, այլ աղաղակի ջրծմանն մեղայն։

Այլ զայս մի այնպէս իմասցես՝ որպէս թէ՝ ի խնդրել որդւոյն՝ ոչ լսէր Հայրն. զի զայս ասել՝ մերկութիւն է. այլ թէ՝ ի խնդրել որդւոյն զի արասցի, Հայր զայն ընդ որ Հաճի, Հայրն առաւել Հաճէլով ընդ մեռանիլ որդւոյն՝ ի վճարումն անաւրգանաց մեղացն, քան ընդ ոչ մեռանիլ որդւոյն՝ որով ոչ լինէր վճարումն, առաւել այնմ լուաւ՝ քան այսմ. մանաւանդ զի և նա ինքն օրդին որ ըստ ստորին մասին յաժարութեան՝ թէ ուելիր խնդրէր անցանել բաժակին, ըստ վերնի մասին յաժարելն կամէր՝ զի մի անցցէ. որովհետև յայս իակ եկեալ էր յաշխարհ։

Այդ այս թէական խնդիրս օրդւոյն ՚ի՝ թէպէտ և չէր աղաղակ, բայց քանզի այն ինչ՝ որոյ վասն էր այս խնդիրս, էր ծանր յոյժ՝ այսինքն և մահ խաչի, վասն որոյ առ ի ցոյց ծանրութեան այնր՝ նմանութեամբ ինն աղաղակ կոչէ մարգարէն զնոյն ինքն զայն. բայց այնպիսի աղաղակ՝ որ չափազանցօրէն խօսելով վաստակեցուցանել և կերկերեցուցանել զձայնն, այսինքն խժռեցուցանել և նուազեցուցանել. (ըստ որում նաև յաշխարհաբառ խօսս սովորութեամբ և ասել. այնչափ կանչեցի՝ որ ձայնս մնրեցաւ.) թէ և չիցէ լեալ այնպէս։

Այս զայս եղանակ խօսից վարէ առաւ մարգարէն փոխանակութեամբ ձևով, որով անուն յարմարելի գործոզութեամբ դնի փոխանակ անուան պատճառին. և քանզի այնպիսի մեծ աղաղակութիւն յարմարական գործոզութեամբ էր յանձնառութեամբ այնպիսի դառն մահու, զմեծութեամբ գործոզութեամբ դնելով՝ կամի նոցին յայտ առնել զմեծութեամբ պատճառին, յասելն։

Ա ասակէցի ես առ աղաղակել. Ես ելբէրեցաս խոյրդ էմ, Աստ ի՝ ասել ըստ վերոյգրելոյդ, թէ յաղաղակել իմում առ Հայր և յասել, եթէ Հնար է՝ անցցէ բաժակս, աղաղակեցին առ նա և մեղք մարդկան. և՝ ի բարձրանալ աղաղակի յերկուց կողմանց՝ Հայր իմ ոչ լուաւ աղաղակի իմում, այլ աղաղակի մերոց մարդկան. թէ և տեսանէր՝ թէ որոյ վասն աղաղակէի՝ այնչափ

ծանր էր, մինչ զի եթէ ըստ ծանրութեանն այնը շատանակէի զազաղակ իմ, կերկերէր կոկորդ իմ։ Ո՛վ կերկերիլ կոկորդին՝ ի կատարեալն դնելով կամ զաստակութեան ազաղակելոյն յայտնել։

Այլ պատմեա՛ ոչ լսելոյ հօրն ոչ այն էր՝ զի ազաղակ մեզանից էր զօրաւոր, այլ այն էր՝ զի որպէս ասացաք կամէր Տէրն ջնջել զնոսին։ Նա զի և որդին զայն ինդրէր յազաղակելն՝ զոր կամէր Տէրն։ վասն որոյ զերկեան դնելով ազաչէր։ Լաւ զի ոչ կատարեցաւ այն, վասն որոյ յարէ զկնի և ասէ։

Ղ. Վա՛ղ ազգին այդ էր, ո՛ չա՛ռ ինչ ո՛ տո՛ւր ձեզ էր։

Այս ասացուած ևս ըստ նախակարգ եալ բանիցդ նմանութեա՛ դնի և չափազանցութե՛ ի ձև փոխանութեան։ և է սա գրեթէ իբրև նկար ինչ ի ցուցանել զառաւելութեան ցասց նոցա մերոյ։ զի որպէս պատկերահանդ ի ցուցանել զասաստութեա՛ գործողութե՛ իրիք՝ սովոր են զառելն ինչ ևս ի մէջ բերել։ որպէս ի ցուցանել զասաստութեան ցասց նոր ազգին՝ նուաղել նկարեն գնա, այնպէս և մարգարէն ի կամին յայտ առնել զասաստութեան ցասց նոր մերոյ՝ զայսպիսի չափազանց բանս խօսի։ որով ոչ դիտել ցուցանել՝ թէ յիրաւի նուազեցան այնք նոր մերոյ յանդունդին լսելոյ ազօթից իւրոց և անցանելոյ բաժակին, այլ թէ սաստիկ էր յոյժ այն՝ որոյ վասն ազօթէը։ յայտ հայելով ասէ։

Վա՛ղ ազգին այդ էր, ո՛ չա՛ռ ինչ ո՛ տո՛ւր ձեզ էր։ Ցնուաղեցաւ քան առ Հայր էր ակն ունելին առ նա լսել ինչ. էան վասն անցանելոյ բաժակին, և այն թէ ապէս. և զի ոչ լուաւ նմա Հայր, վասն որոյ ասէ. յակն ունելիս իմ առ Հայր՝ ակն իմ ոչ եհաս յայն՝ յոր Հայէր. մինչև նուազեցաւ այսինքն պակասեցաւ ի յուսոյ, կամ յակնկալութե՛ ունելոյ զայն՝ որոյ վասն յուսացար. որպէս նուազին այնք այնոցիկ՝ որք երկար դիտեն ի հեռուստ և ոչ տեսանեն. և այս նման է թէ ասէր, թէպէտ և ակն ունէի լսելի լինելոյ, բայց Հայր իմ ոչ լուաւ ինձ. զի կամէր յաջտարանաք իմովք հաշտիլ ընդ մարդկան. և ես մտադիւր յանձն առի զայն։

Օ այսօսիկ եղեալ մարդարէին՝ ի մէջ բերել ասա
և զաղաւթելի և զաչաուելի այնոցիկ՝ որք եղեն
չարչարօղք քոյ. վասն որոյ ասէ.

Ե. Բաղում եղեն ինձ զիներ գլխոյ իմոյ, այլ ապերն ղէս
ի փարատրուեցաց.

Ջ. Օ այսոյան չիս ինձնահէ իմ և ասելիս իմ ի նմանէ.
ինել զոր ոչ յօժարեալ էր՝ տուժել նոցա.

Ա՛այս ոչ այսինքն բազում լինել քան զհեր գլխոյ
յուզանել զաուաւելուելի բազմելն, միւնչև դժուա-
բին լինել առնուլ զհամարն. որպէս դժուարին է
թուել զհեր գլխոյ. և զի կարի յոյժ բազմացան
թշնամիք ներս մերոյ, սակն իրի յայս նմանուելի ա-
ասել ասէ.

Ե. Բաղում եղեն ինձ զիներ գլխոյ իմոյ, այլ ապերն ղէս ի
փարատրուեցաց. Այսինքն առ ինձ յոյժ բազում եղեն
յոյժ առաւել քան զբազմուելի հերաց գլխոյ իմոյ.
և խորհրդաբար քան զբազմուելի սիրտդաց և հե-
ուանոցաց իմոց. և այս բազմուելի ոչ միայն ըստ ան-
հատին է չափելի, այլ և ըստ տեսակին. ըստ անհա-
տին յայտ է յաւետաբանի՝ թէ սրբոյն եղեն տաե-
ցողքն քոյին, զի բաց ի քահանայապետաց, և ի ծերոց,
և բաց ի դպրաց և ի փարիսեցւոց, բոլոր ամբոխն
յարեաւ ի վերայ նորա՝ յաղագս առհասա-
րակ. * ի խուճ հան զդա ։ Հաւետեան ասա և բազ-
մուելիք զօրականաց հերովդեի և պիղատոսի. Թէզ
զգունդ զինուորացն՝ որք ժողովեցան ի վերայ նորա,
և գան հարին զնա, և փշով պսակեցին, և հուսկ
յետոյ ի խուճ հանին.

Ի սակ ըստ տեսակին առեալ, յայտ է թէ յամենայն
կարգէ որդւոց մարդկան բազումք գտան որք առե-
ցին զնեղն մեր, եթէ իշխանք և եթէ ժողովուրդք,
եթէ տէրք և եթէ ծառայք, եթէ հրեայք և ե-
թէ հեթանոսք.

Ապա ամենեքին ասէ, ապերն ղէս ի փարատրուեցաց.
այսինքն թէ չունելով ինչ պատճառ առելոյ առե-
ցին, որպէս և յայտ է. վասն զի նոքա մեծ ի մեծ
առ նոսա ոչ ի հատուցանել նոցա զչար, այլ ի կե-

ցուցանել զնոսա. (գործ. Ժ. 38.) իսկ առեալքն առ այսպիսիս յայտ է թէ տաբաստատուց՝ |՝ոկ այն պատճառ, զոր առեալքն նորա՝ի մէջ բերէին՝ի ժողովս իւրեանց՝ ասելով. * |՝Թէ թողուաք զնա ,, այնպէս, ամենեքեան հաւատան՝ի նա. և գայցեն հռ ,, ոմք և բառնայցեն զտեղիս մեր և զազգն։. (յովհ. ԺԱ. 48.) անիւրաւ էր և յիմարական. որպէս և ելք իրացն հաստատեցին. զի յոչ թողուելն զնա այնպէս, ոչ թողան և ինքեանք՝ի հանգստեան. այլ ընդ հա կառակն թշուառացան, և որում գուշակին եղէն՝ այն եկն՝ի վերայ նոցա. քանզի եկին հռոմք այս ինքն հռոմէացիք, և բարձին զազգ նոցա և զտեղի. որ յիրաւի ոչ պատահէր նոցա՝ եթէ սիրով ընդունէին զփրկիչն և զնա։

Ո՞չ սոյն զայս և խիղճ նոցա վկայէր. բայց քանզի հաստատեալ կային՝ի չարիս, ՚ի զուր տաբաստատուց յատելութեի դարձան ընդդէմ նորա. և ՚ի չարութեե իւրեանց խստացեալ՝ չարեան՝ի վերայ նորա. զոր և յայտ առնէ մաթգարէն յաջորդ բանիւն ասելով։ Ղ. Ո՞ւրացան չիս ինձանէ էմ և ասելիս էմ ՚ի նոսէ։ |՝Այս ինքն Թ՚ընամիք իմ, որք ՚ի նմանէր առէին զիս, զօրաց ցան յայն՝ զոր խորհեցան ՚ի վերայ իմ. ուր |՝ակ բայդ ՚ի նոսէ՝ ոչ հայի ՚ի բայդ պղծուցան, այլ ՚ի բառդ ասելիս. որպէս Թէ եղեալ էր. զօրացան Թ՚ընամիք իմ, որք առէին զիս ՚ի նմանէր. քանզ որում և ՚ի նախ ընդդէմ Համարն ասաց, առէին զիս տաբաստատուց։ |՝ակ Թէ զինչ այսր զՀետ եկն՝ յայտ առնէ ասելով։ |՝Ոչ՝ զոր ոչ յաջխտակեալ էր՝ տուժելի նոցա։ |՝Այս տարազ բանի է իբր առակ ինչ ասացեալ՝ի բերանոյ այնր որ զպատիժ այլոց ինքն կրէ. որպիսի էր և այն առակ՝ի բերանս իսրայէլացւոց, * Չարք ազոխ կէ բան, և որդւոց ատամունք առան։ (երեմ. լա. 29։) |՝Որ յայտ է Թէ տէրն մեր չունէր պարտաւորութե կրելոյ պատիժ ինչ. բայց քանզի կրեաց իսկապէս զպատիժս ծանուցոյց, սմին իբրև զայս բան իբր առակ՝ի բերան առեալ ասէ։ |՝Ոչ ըր ՚ի չոխէաւել էր՝ տաՀէն նոցա։ |՝Այսինքն տուժելի զպատիժս վասն մեզաց՝ զոր չէի արարեալ։ |՝Ոչ զայս յայտ առնէ փոխաբերական բանիւ, այսինքն բառիւս չոխէաւել. որոյ պատ

Ձառն է, զի ամենայն որ մեղանչէ՝ յափշտակէ զմեզս ; եւս և յափշտակէ զիրաւունս նոյ. ուստի և 'ի պատժին վասն մեզաց՝ ասի առաժել զոր յափշտակեաց. իսկ տէրն մեր Յեսուս ամենևին անմեղ է, որովհետև ոչինչ իւիք մեզաւ, բայց քանզի պատժեցաւ վասն մեզաց մերոց, վասն այսորիկ ասէ զոր ոչ յափշտակեալ էի առաժէի վասն նոցա ։

Այլ զայս յայտնի ծանեաւ և խոստովանեցաւ աջակողմեան աւազակին յասել իւրում. * մեք յիրաւի, զի ,, արժանի օրոց գործեցաքն առնումք զհատուցումն ,, (այսինքն առաժիմք զպատիժ մերոց յանցանաց մահ- ,, ուամբ խաչի.) և սա ապիրատ ինչ ոչ գործեաց ‖. (գուկ. ին. 41։) Այլ քանզի օրպէս առացաք՝ նա յանձն առեալ էր զապիրատութիւնն մեր 'ի քրիստոս վասն այսորիկ զայնը մերոց ապիրատութիւնէ զտուժանն եւս յանձն էառ. և զի զայս ոչ ոք գիտէր յայտնի՝ բայց միայն Հայր, վասն այսորիկ առ Հայր խօսեալով ասէ ։

Է. Ես զձեզ ծանեալ զանգիմառնէ եմ. և յանդուն եմ 'ի ձեզ ու ծածկեցան ։

Ցկէն մեր օրովհետև երաշխաւոր լինելով փրկութեանն մերոյ բարձեալ էր 'ի վերայ իւր զմեզս ադամայ՝ զի քրիստոսիկ զայնը մերոյ ապիրատութիւնէ զտուժանն եւս յանձն էառ. և զի զայս ոչ ոք գիտէր յայտնի՝ բայց միայն Հայր, վասն այսորիկ առ Հայր խօսելով ասէ ։

Է. Ես զձեզ ծանեալ զանգիմառնէ եմ. և յանդուն եմ 'ի ձեզ ու ծածկեցան։ Այս բան եթէ ասացի 'ի դիմաց մարգարէին, բառիւս անպճամառնէ՝ նշանակի այն մեզք, որ անգիտութիւնէ կամ անզգայութիւնէ գործեն. յոր միտ խնդրէ յայ Թողուլ զայնոսիկ մեզս՝ զորս ոչ ձանաչէր։ Իսկ եթէ 'ի բերանոյն քո ասացի, միտ բանին լինի այս. ած Հայր իմ դու գիտես՝ զի ես յանձն առեալ եմ զանգգամանութիւն ադամայ այսինքն զմեզս նոցա՝ քրիստոսիկ մեզս նոցա մահուամբ խմով, նոյնպէս և զամենայն յանցանս մարդկան. ապա արժան է ինձ առաժել զայն մեզաց։ Օ այս ասելով միանգամայն և դատապարտելի ցուցանէ զքննամիս իւր. վասն զի չգտանելով նոցա գայայտնի յանցանս ինչ 'ի նմա՝ դատապարտեցին զնա 'ի մահ. իսկ այն զի նա յանձն առեալ էր զմեզս մարդկան, ոչ էր յանցանք ընդդէմ

նոցա. վասն որոյ և ոչ կարէին յաղագս այնր դատապարտել զնա, այլ ամենասնդր ընդհակառակ լինել զմանկէ։ Արդ որպէս դատապարտելի եղեն սորա, այնպէս փրկութեան արժանի դասն նորա որք հաւատացին ի նա, և յանուն նորա յուսացան առ Հայր. յոր միտ լսել զկնի և ասէ.

ԸՆ. Ո՛վ ամենասէն վասն իմ, ոչ համբերեն սէդ այր՝ որ զդրամբնէդ. ո՛վ պահապետացեալ վասն իմ, ոչ խնդրեն զնէդ ձեռն իւրեանց։

Ողորմեսաւ միշտնորդ փրկութեանդ ամենեցուն եղիւ տէրն մեր՝ որք միանգամ դիմեցին և դիմեն նովաւ առ Հայր, ոչ երբէք ունին ամաչել. վասն որոյ ասէ.

Ո՛վ ամենասէն վասն իմ, ոչ համբերեն սէդ այր՝ որ զդրամբնէդ, ո՛վ պահապետացեալ վասն իմ, ոչ խնդրեն զնէդ ձեռն իւրեանց։ Լսելիքդ՝ որք միանգամ հաւատացեալ կիս իմ եղէն, և վասն լինելոյ նոցա իմ Հարբերեն քեզ, այսինքն յուսան ի քեզ ի նեղութեան՝ զոր կրեն վասն իմ, և բոլորով սրտիւ խնդրեն զքեզ, նոքա մի ամաչեսցեն վասն իմ. այսինքն մի ուշանայանալով ի յուսոյ իւրեանց ամաչեսցեն և պատկառեսցեն ասելով, ուրեմն խաբեալ եղաք։

Լաւ այս բան ոչ է իբր մաղթողական, կամ իբր հիմն ունել ի տարակուսանս, իբր թէ հնար է խաբել և ամաչել այնոցիկ՝ որք յանուն քոյ յուսան կամ և խնդրեն զնա, և քո միջնորդիւ ընդ ամենայնի առաքաբանակ՝ և հաստատեալ յաներկիւղ առաքութեան, և դնի իբր յայտարար ձշմարտութեան. յոր միտ եթէ զմարդոյդ ոչ փոխեսցես ի նէ, բացայայտ իմացեալ լինի ասացեալս. այսինքն է եթէ ոչ երբէք ամաչեսցեն նոքա։

Լսակ եթէ իբր մաղթողական դիցի, յայլ դէմ փոխի միտ բանին հայելով ի նախասացեալդ. քանզի ըստ այդմ սովին բանիս մաղթեմ քեզ առ Հայր լսել ինքեան, և ցուցանել զինքն յաղթող միտելոյ և ստանալոյ. առայս եթէ ոչ՝ որք յուսացեալ լինելին կամ, և խնդրելին զնա, ամաչելին վասն քոյ, այսինքն ամաչելին վասն հաւատալոյ ի քեզ. վասն որոյ ասէ. լուր ինձ Հայր իմ, և արա զի յաղթեցիկ միտելոյ և դժուարոյ. որպէս

զի ոչք համբերեն քեզ, և ոչք խնդրեն զքեզ՝ մի ա-
մաչեսցեն՝ ի պատճառս իմ։

Ի սատանոյ Թէպէտև յառաջեսմ հատուածի դնել՝
ոչք համբերեն քեզ, այսինքն ոչք յուսան՝ ի քեզ մի
ամաչեսցեն, իսկ յերկրորդումն դնել՝ ոչք խնդրեն
զքեզ՝ մի պատկառեսցեն, բայց երկոքին ևս՝ ի նոյն
հային. զի յայտ է Թէ ոչք յուսանն՝ խնդրեն, և ոչք
ոչ ամաչեն՝ ոչ ևս պատկառին. զի պատկառիլն բուս
ոչոեմ ասս դնի՝ նշանակէ ասսեղկ ամաչել։ Ի սացի
բուս ոչոեմ ասս դնէ. զի պատկառիլն կարէ լինիլ և
առանց ամաչելոյ, յորժամ պատճառէ ի գերազան-
ցութեէ առաքինին։

Վարձեալ ասսանոյ յառաջումն դնելով՝ տէր՝ տէր
զորութեէ կամ ըստ երբայականին ռաբոյ նշան-
վօսն. որ զնոյն նշանակէ. իսկ յերկրորդումն ՅՅ իս-
բայելի կամ ըստ երբ՝ էլոհե նէռաէլ, զոյս կամի ցու-
ցանել, Թէ ՅՅ իսբայելի է տէր, տէր զորութեէ։
և այսու յայտ առնէ Թէ դիւրին է ՅՅ կատարել զը-
հայցուած իւր՝ որովհետև այնպիսի տէր է։ Ի զդ
յետ իսօսելոյ նոն մերոյ վասն ոչ ամաչելոյ հատատ-
ցելոց իւրոց յաւագայն, ապա և զներկայ զիւր ար-
տաքին ամաչել ևս առաջի դնէ հօգն երկնաւորի, զի
յայն հայելով մի ամաչեցուցէ զնոսա. ամն իրի ասէ։

Թ. Ա՝ ան յո համբերի նախատանաց. և ծածկեաց ամօթ
պէրեսս իմ։

Ոչայս սաղմոս հնգիցս կրկնի բառագ նախատիս՝ ըստ
այլևայլ մտաց. զորմէ գիտելի է. զի այս բառ երբայա-
կի առեալ լինի. մի՝ անյատկապէս փոխանակ հնոմ ա-
կայի նախատանաց. երկրորդ՝ իբր հիմնաւորս փոխա-
նակ նեհեմ նախատանաց. երրորդ՝ յատկապէս փո-
խանակ բանից նախատանաց։

Նախատանաց՝ է անձն որ նախատի կամ
որ նախատական բանից ներքոյ անկանի. յոր միա-
ստ նախատինք լինել առաջի այլոց. այսինքն է հո-
գեկայ նախատանաց լինել։

Աբեղ նախատանայն կարէ լինել հեռաւոր, և մեր-
ձաւոր. կամ արմատական, և անվիջական։ Հեռաւ-
որն է պատճառ նախատանաց. երբեմն ներքսա-

որով նշանակի այն ինչ՝ որոյ վասն նախատի անձն. և կամ այն ինչ՝ որ նախատելի առնէ զանձն. յոր միտ ա և իցէ յանցանք, կամ չարութիւն կամ անաւգութիւն, կամ անարժանութիւն ։։ նախատինք կոչին. զի նախատելի կացուցանէն զունօղն. և յայս միտ դնի ՚ի համարն 11. ըստ երկրորդումն։ Արգելեան և արատաբանել. որով նշանակի արատաբին իրն կամ անձն՝ որ լինի պատճառ նախատանաց այլոց. որպէս անխրատ որդիք կարէն ասիլ նախատինք հօրն։ Խակ մերձաւորն՝ է առարկայ նախատանաց, որ է նախատելութիւն. այսինքն արժանաւորութիւն առ նախատինս ծագեալ ՚ի պատճառէ նախատանաց. կամ վասն առնելոյ զպատճառ նախատանացն. և յայս միտ դնի ՚ի համարն 12։

Լուան նախատանաց՝ որ տիրապէս կոչի նախատինք, է այնպիսի խօսք՝ որ ասացեալ լինի առ անձն որ երբեմն յայտնիչ նախատեղութեանէ նորա, այսինքն անարգութեանէ նորա, կամ չարութեանէ նորին ։։ յայս միտ դնի ՚ի համարն 21։ Այդպիսի են և նախատական գործողութիւնք արարեալք ընդդէմ այլոց, որք յուշանին զնա նախատանաց արժանի։ Եւ ահա յայս չափինս այսինքն ՚ի բան նախատանաց և ՚ի նախատական գործողութեան հոյի աստանօր առաջնկայ քնաբանդ, յաւէրն։

Վասն չ համբերի նախատանաց։ (Կամ ըստ այլ ձեռագրաց. համբերելի) ՚ի սմին բանի բառդ վասն՝ հոյի ՚ի հատուցումն արդարութեանն ոյ, և ՚ի կատարումն կամաց նորա և ՚ի փառաւորութեանէ անուան նորին. որպէս թէ ասէր, բազումք բազում բանիւ նախատեցին և նախատինս զիս, և ես համբերի և համբերեմ ամենայնի այսոցիկ վասն քո, այսինքն վասն հատուցանելոյ արդարութեանէ քումմ ՚ի դիմաց ազգի մարդկան՝ որոց երաշխաւոր եղէ, և վասն կատարելոյ ըզկամս քո, որով կամեցար՝ զի ես մնանեալ եղէց յայսպիսի նախատինս. և ես և վասն փառաւորեալ ցուցանելոյ զանուն Ձմխարիդ ոյ։ Եւ առ ՚ի յայտ առնել՝ զծանրութիւնէ նախատանացն՝ յաւելու ասել։

Եւ ծածկեաց ամէն զնչեսս իմ։ Այսինքն այնչափ մեծ եղեն նախատինք տաւեալք ինձ՝ մինչև երևիլ ինձ

ծածկեալ գոլ ամենով. և զի ներգործութիւն ամենայնիւ ելանէ, վասն որոյ դնէ ծածկեաց զերկոսն իմ. ուր ծածկեաց ասելով՝ ցուցանէ զառաւելութիւն ամենայնի։

Լ.Զդի տէրն մեր թէպէտ և ոչ կրէր ի հոգի իւր զիւ-կունէն ամենայն, զի չունէր ինչ ամենայն արժանի, բայց կրէր զդառնութիւն ամենայն. զի գոլով ինքն տէր փառաց՝ լեալ էր առաքեալ դառն նախատանացս, ոչ միայն ըստ նախատական բանից՝ այլև ըստ նախատական գործոց, ի թքանիլն յերեսս, յապտակիլն, ի գանիլն, ի փշով պսակիլն, ի ծաղր լինելն իբրև սուտ թագաւոր, յամբաստանիլն իբրև խռովարար, ի համբաւիլն իբրև չարագործ և յանարգաբար խա-չիլն մերկ ի մէջ աւազակաց։

Լ.Ինչափ ծանր եղև այս ամենի նեղն մերոյ, մինչև զարմանալ առաքեալն, և մեծ համարել զսոյն քան զայլ տանջանս՝ զոր կրեաց տէրն մեր. վասն որոյ ասէ. * արհամարհեաց զամենի ։ (Եբր. ժբ. 2.) Լիցի թէ ասէր. թէպէտև մեծ եղև այս ամենի, բայց նա առ վճարելոյ զպարտս մեր յանձն էառ սիրով. և ես թէ ոչ ամենի համարեցաւ կրել զայնքան ամե-նայնի նախատինս առ ի յամենի առնել զՀայրատուէն մեր, և զիմաստ փառասիրութեան որդւոց մարդկան։

Լ.Այսպիսի նախատինք եթէ յօտարաց լինէին՝ ոչ էին այնչափ ծանր. բայց ծանր եղեն յոյժ, և առաւել ևս ծանրացան այնու, զի եղեն յայդ իւրմէ և յայն-ցանէ՝ առ որս էին ի փրկել. որք և փոխանակ ընդ-ունելոյ զնա և փառաւորելոյ՝ զամենայն ազգ նախա-տանաց էառուն նմա իբրև թշնամւոյ և օտարի. այն իբրև յէտ խօսելոյ զնախատելոյն իւրոյ ի նոցանէ՝ խօ-սի ասա և զօտար համարելոյն առ նոսա ասելով։

Ի. ( ) որ եղէ ես եղբօրդ իմոյ. և հիւր որդւոց մոր նմոյ։

Լ.Այս բան հայի յայն՝ զոր ասաց օրդին որոտման. * յիւրեան էին, և իւրքն զնա ոչ ընկալան ։ (Յովհ. ա. 11.) զի իբրև ընդ օտարի վարէին ընդ նմա. վասն որոյ ասէ.

( ) որ եղէ ես եղբօրդ նմոյ. Որ եղբարբք իմացեալ

լինին խոչընդոտք. ըստ որում չկարգէ խոչընդոտել ընդ
առնն մեր. առ սոսա ոչք եղբարք իմ էին ասէ ըստ
ազգի՝ իբրև օտար համարեալ եղէ. մինչև ասել նո-
ցա զկնին. * զոս ոչ գիտեմք ուստի իցէ ‖. (յովհ.
թ. 29.) այսինքն ոչ ճանաչեմք զսա. այլ օտար հա-
մարիմք մեզ. և զի որ օտարացն է՝ իբրև հիւթ համարի
ի մէջ որոց բնակի, վասն որոյ ասէ.

Ա՛ր- հնաբ ոչխ-ոց մոր էմոյ. Կոչ ի ձեռն մեր խմացեալ
լինի եկեղեցին խոչընդոտել ի հնուսն, որ և ասի սինա-
կովկոյ՝ այս է սինովա, այսինքն ժողովարան հրէից.
և ըստ այսմ որդիք այսր մեր՝ էին խոչընդոտք. առ
որս օտար համարեալ լինէին ասէն մեր՝ իբրև հիւթ
կայր ի մէջ նոցա. (այսինքն իբրև միաբիւր) կամ
ըստ երբ". Նախ այսինքն պանդուխտ, կամ նժ գիշ,
և զի չայսպիսի օտարութեանէ գոլով ոչ մերժեաց զնոսա,
այլ նախանձու հօր իւրոյ քարոզէր նոցա և կշտամբէր
ևս զնոսա, որոյ վասն և նախատեալ լինէր ի նոցա.
նէ, զայս կամելով չայտնէր չարէն զինի և ասէ.

ժ՚ա. Ա՛խանչ ման չո եչէր չէ. Նախապէս նախապէտ
չոչ անկն ի վերոյ էմ։

Ա՛խանձն զնի ասա փոխանակ նախանձայուզութեան,
որ է եռանդագին ինն բերութեն հոգւոյ ի պաշտպա-
նութեն խնդ, կամ ի ստացուածն իրենք բարւոյ, կամ
ի ջատագովութեն ճշմարտոյ։ Ա՛յսպիսի նախանձայու-
զութեն քեն էր՝ կատարեալ սիրոյ նորա կարգաւո-
րեալ եռանդն յոր վառեալ էր՝ առ ի ջատագովու-
թեն Տաճառեն և փառաց Հօրն երկնաւորի. որով ի
աւասանէն ի հրէայս զանգեալս ինչ ընդդէմ պատուոյ
կամ Տաճառեն Հօր իւրոյ՝ յանդիմանէր զնոսա. որ-
պէս է տեսանել յաւետարանի (մատ. իգ. 1—39։
և զուկ. ժ՚ա. 29—53։ և յովհ. ը. 21—24. և ն։)
Չայս նախանձայուզութեն ձեռ մերոյ հայելով մարգա-
րէին՝ ասէ. ի գիմոց նորա առ. Տոյր։

Ա՛խանչ ման չոյ եչէր չէ։ Կամ որպէս գրի յաւետա-
րանի (յովհ. ը. 17.) * նախանձ տան քո կերբիցէ
զիս ‖։ Ա՛յսու տամբ խմացեալ լինի նախ տունն իս-
րայէլի, ըստ որում էր եկեղեցի ոչ, և կամ ևս ընդ-
հանրապէս խմացեալ լինի որ եկեղեցի. և յայս միտ

Ս Ա Գ Ա Ր Ա Կ Ք Ի Ր Ք Ե Ա Ց Ի Ա Ն

Ա՛յս գործ նոն մեզոյ զարմացոյց զամենեսին. զի յայնպիսի բազմամեծ միջի զայսպիսի ինչ առնել՝ ոչ էր գործ հասարակ մարդոյ, այլ մեծի իշխանի. մանաւանդ թէ այնպիսւոյ՝ որ իցէ՝ ի վեր քան զմարդ. և գործն իբր այդ՝ զի Քէպլէտ այս գործ մարդկային էր, բայց յաճախելն կատարեցաւ յորդւոյն այդ. քանզի որպէս ասէ Յոհաննէս (՝ի մատ. ժէ. 23.) նորա * զնոյն ,, ինչ մարդկաբար, և զմարդկայինն յաճախաբար կա- ,, տարէր ‖. վասն որոյ և աշակերտքն՝ որք Նմանչէին գնա լինել մեսիայ՝ այսու գործով նորա հաստատեցան ՝ի միտս իւրեանց՝ թէ նա ինքնիշխան զօրութիւն առնէ գայս և ըստ յաճախին նախանձայուզեալ գործէ. յորմէ և զաբեթեաւ միտք նոցա յիշել զգան ապագային, և խմանալ թէ ահա կատարի այն բան՝ զոր ասաց դա- ւիթ՝ ՝ի բերանոյ մեսիային. * նախանձ տան քո կե- ,, րիցէ զիս ‖, կամ եկեր զիս. և ըստ այսմ կամի ա- սել. սէրն և եռանդագին փոյթն ինամելոյ և պահե- լոյ զփառս տանձարի քո, յոր դու ներքև ՝ի տան քում բնակիս՝ եկեր զիս. այսինքն իբրև զանց վառեալ ատիպեաց զիս ինդրել զվրէժ փառաց անուան քո, և վատրել ՝ի բաց զանարգօղս պատուոյ տանձարի քո։

Այսմ գործողութեանէ որպէս ասէ ներքոյ ՀՈՐՍՂԱՆ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆԵՒՆ, եցոյց քո ընդ վրէժխնդրութեն և զՀեզուԹէի իւր. զի զնաւթազանն ապար ոչ ՝ի կարծր նիւթոյ այլ ՝ի չուանէ. ուր ասէն ոմանք՝ Թէ երկիցս գործեաց ՝ոչն մեր զայս գործ. մին է այս զոր պատ- մի յովհաննէս (՝ի գլ. ԺԲ.) իսկ միւսն է այն զորմէ պատմին (մատ. իա. 12. և մարկ. ԺԱ. 15. և ղուկ. ԺԹ. 45)։ Ի միւսին բանիւ և գործով յանդիմա- նեաց քո. իսկ ՝ի միւսումն յաւել և զվաթազան, օրինակ տալով մեզ, Թէ ՝ի միւմ իրաւտէ, և յանրգ- գասու մնալ մեր՝ յաւելու և զնաւթազոյն պատիժս։

Զրգ զոր ՝ոչն մեր ապար վասն փառաց Հօրն երկնա- ւորի՝ Հրէայք գաղանեցին զայն յանարգանս. և գառ- նացեալ սրտիւ ասեն ցնա. * զինչ նշոյն ցուցանես ,, դու մեզ՝ զի զայդ առնես ‖. որպէս Թէ ասէին, դու ոչ ես. ոչ ապաքէն որդի Հիւսան ես. և զիարդ իշխես զայդ գործել. իսկ եԹէ ասես, ունիմ իշխա- նութիւն՝ տուր մեզ նշան։ Նա յայնժամ և ՝ոչն մեր

նշան մեծ, և ասէ. * քակեցէք զտաճարդ զայդ, և
,, զերիս աւուրս կանգնեցից զայն ։ Այս բան մեծ
և հրաշալի՝ փոխանակ զարհուրանելոյ՝ յիմարեցոյց
զսիրտս նոցա. որով և սկսան ծաղր առնել զնա. և
յայնմ հետէ անարգանօք խօսէին զնմանէ, և անար-
գանօք վարէին ընդ նմա. և յանձխէին 'ի նախաս-
տիս. և զայս յայտ առնէ յաջորդ բանիւն ասելով՝
'Ախաբէ՛ն նախաբեաց ոչ սիկա՝ 'ի վերայ էմ, 'Ախաստիլք
հօր ոչ եղէն հրէայք 'ի բազում իրս, 'ի յայտատա-
րելն 'ի նմանէ բազում անգամ, 'ի Թագաւորն գնա և
'ի պաշտելն զբազաստիճան յաւուրս Թագաւորաց իս-
րեաց, և 'ի խառնակիլն ընդ հեթանոսս, և 'ի պատ-
ճառ լինել նոցա հայհոյելոյ զանուն ոչ 'ի մէջ հե-
թանոսաց, որպէս վկայէն ինքն գիրքն և մարգարէքն.
վասն որոյ կոչէ զսոսա նախատիս ոչ ,,յասելն նախատ-
,,ոյ ։

Այսոցիկ նախատեաց նախատինքն ասէ անկան 'ի վե-
րայ իմ. և այս ըստ կրկին մնաց. մի՝ ըստ նախատա-
կան բանից՝ զորս Թագաւորէին հրէայք 'ի վերայ նո-
ա յասելն առ նա. * գնա գոյ 'ի քէզ ։ (յովհ. է.
20). * սամարացի ես դու ։ (յովհ. ը. 48.) և Թէ
* դիւահար ես ոչ ։ (յովհ. է. 20.) և Թէ * մոլորեցուցանէ զժողովուրդն ։ (յովհ.
է. 12.) և Թէ մոլեգնի՝ զի՞ նմա լսէք նմա ։ (յովհ.
ժ. 20.) և Թէ * բեէլզեբուղաս իշխանաւն դիւից
,, հանէ զա զդևս ։ (ղուկ. ժա. 15.) սոյնպէս և 'ի յա-
րախօսելն զնմանէ յատեանի իւրեանց, և առաջի սկի-
զատոսի և հերովդէի, նախատինս տային նմա.
Այրկերդ՝ ըստ նախատելի լինելոյ. իբր զի զայն նա-
խատինս կամ զայն անարգանս՝ զորս տուեալ էին մար-
դիկ ոչ մեզօք իւրեանց, 'ի վերայ իւր էառ՝ ձերն մեր
առ 'ի ջնջելոյ զայն. ուստի այն նախատինքք կամ ա-
նարգանք անարգողացն ոչ անկան՝ այսինքն եգան 'ի
վերայ օգուտն. որով և ինքն եղև ենթակայ նախա-
տանաց և անարգանաց, ունելով յինքեան զնախատ-
տելիսն՝ այսինքն զնախատելի մեզս մարդկան.
Այլ յայս միտ յառաջ բերէ առաքեալն զայս բան ա-
սելով * քո ոչ եթէ անձին հաճոյ եղև (այսինքն ոչ
,, ինդ բեաց զՀաճոյս անձին և զփառս իւր՝ մնալով

,, ըստ արժանաւորութեան իւրում պատուեալ և առանց
,, նախատանաց), այլ որպէս և գրեալ է, նախատինք
,, նախատողաց քոց անկան ի վերայ իմ։ (Հռոմ. ԺԵ.
3)։ Եւ անկան առելով ի վերայ իմ՝ ցուցանէ զձան-
րութիւն նախատանացն կամ զմեծութիւն մեղաց մերոց,
զորս յանձն էառ խոնարհութիւն, և վասն ջնջելոյ զայն
կրեաց զպատուհասն անարգանս, եւս և որ մեծն է՝ կրեաց
և զմահ առ ի ազատել զմեզ ի մահաւանէ։

Ցնդեսցուք ուրբաթոսի հաւատացելոյ կամ ին սպասա-
նել գնա. զայս իմացեալ բարեկամի նորա կամ ծա-
ռայի զգեցաւ զհանդերձ նորին՝ զի ինքն մեռցի փո-
խանակ նորա. և այնպէս եղև. զի թէպէտև ուրբա-
թոսի սպանին զբարեկամ նորա՝ կարծելով թէ նա իցէ
ուրբաթոս. հիացան ընդ այս հաւատացելիք, և արա-
բին նմա թաղաւնի թագաւորական։ Այսպէս սմին և
մեզ մեռանել թէ թշնամիք մեր կամին սպանա-
նել զմեզ յաւիտենական մահուամբ՝ զգեցաւ զհան-
դերձ նախատանաց մերոց, և սպանաւ ի խաչին. և
ազատեցոյց զմեզ։ Այլ զարմանք է՝ զի մեք ինչ ոչ հա-
մարիմք և ոչ հիանամք. և փոխանակ փառաւոր թաղ-
ման յաւելումք նմա անարգանս եւս և զվիշտս ծա-
նուտս։ Այլ արդ քանզի զայս ամենայն սիրով և խո-
նարհութիւն յանձն էառ նորն մեր, յայս ակնարկելով
ասէ,

ԺԲ. Այնպէս ես պահս զանիս իմ, և եղէն ինձ այս
նախատինս. զբարի չնախատէին իմ ոտքս, և եղէ
առաջ նոցա։

Այս բանք եթէ ըստ Ճառին ի դիմաց դաւթի ա-
սացին, կամ՝ ի դիմաց ժողովրդեանն գերելոյ ի բա-
բելոն. մեկնին այնոքիւք զորս ասացաք այլուր (ի
սաղ. լիզ. 12։ և ի սաղ. խիզ. 15. և 16.) տէս ի
նոսա։ Իսկ եթէ ասիցին ի դիմաց քոյ՝ որպէս և է.
իսկ, իմացեալ լինին իբրև առակաբանութիւն, առ ի
ցուցանել զյանձն առնուլ նորա զաւարտսն և զնա-
խատինս վասն մեր ի մարմնի։ Այլ ըստ այսմ բառս
պահս ոչ նշանակէ ասա զժուժկալութիւն ի կերակրոց,
այլ զնեղութիւնս որք կապակցեալ են և զհետ
գան պահոց, այսինքն են վիշտք, նեղութիւնք և չարչա-

բանք. յայս միտ առեալ ասէ,

Ողանգիտեցուք պահօք զանձն իմ, և եղիցի ինձ այս նախանձիւ, ևս ասել. խոնարհեցուցանելով զիս, կամ խոնարհեցուցանելով յիս՝ յանձն առի զմարդկային տկարութիւնս, և զազգատիսի վիշտս և զաղքատութիւն, առ ի ազատել զմարդիկ ի վշտաց գերութենն սատանայի և ի վշտաց յատուկենական դատապարտութենէ. և իմ այս վիշտք և չարչարանք եղեն ինձ նախանձիւք, այսինքն եղեն ինձ պատճառք նախատանաց, կամ սարսուռն զիս առարկայ և ենթակայ նախատանաց. Օ այս ասէ՝ հայելով յայն զոր կրեաց ի վերայ խաչին, ուր յայնմիսիկ պահս այսինքն յայսպիսի տանջանս խոնարհեցաւ գոլով պաշարեցաւ ի նախատանաց. զորս և նմանութեամբ ինքն յայս առնել կամելով ասէ,

Ազատ ընդ ապեղբս իմ եղէ, և եղէ օտար նոցա։ Ազանգերձն է հասարակ զգեստն. իսկ քուրձն է զգեստ խիստ և անարգ. արդ մարմին ևս մերոյ փոխաբերմամբ բանի կամ նմանութեամբ ասէ նորա հանգերձ կիր զգեստ, յոր միտ առեմք, զգեստ մարմին. Օ այս հանգերձս իմ ասէ արարի քուրձ, այսինքն մահանեցի ի քուրձ տանջանաց, կամ երևեցուցի զայն իբրև զքուրձ անարգ յորժամ կախեալ կայի գխաչի. որով և «եղէ ասէ առակ նոցա». այսինքն է եղէ նշանակ նախատանաց խաչահանուցս իմոց,

Ասթե է աստ օտար խնամել և զառակուսին նահատակին բանից. յոր միտ կամի ասել. յայսպիսի անարգութեամբ էի, մինչև տարացոյց անարգութեամբ քերել զիս թշնամեաց իմոց՝ ի խօսելն ընդ միմեանս, և այնու կատակել զիս. և ս և ի խաղս իւրեանց անարգ ձևացուցանել զանձն իմ.

Չէրն մեր թէպէտ և կարէր սակ կամելով փրկել զմեզ, կամ միայն աղօթիւք ազատել, բայց յաւել և պահս ի ցոյց կատարեալ սիրոյ իւրոյ. և քարոյապէս յօրինակ մեզ. զի և մեք յաւելցուք զպահս յաղօթս մեր՝ յորժամ կամիմք առնուլ ինչ յԱստուծոյ՝ նախ զհնել ի կամին հաճանել յայսմանէ իմիք առ Աստուած՝ և կաց յաղօթս և ի պահս. (դան. Թ. 12.) Իբրև քեզ սոքա եղբարք են. յորժամ ի միասին իցեն՝ բարի և վայելուչ երևին առաջի նոց. (սաղ. ՃԻԳ. 1.)

և որ սոքիմիք մերձի առ ՝ած՝ անտարակոյս առնու զոր խնդրէ։ Ի խնդրել երեխային նշանաւ իւիք զկամն՝ մայրն այնչափ ոչ յօժարի տալ. իսկ յորժամ լսելով խնդրէ՝ տայ. սոյնպէս յորժամ ոք աղօթիւք միայն խնդրէ ինչ յԱյր՝ զանց արարեալ զպահօք, ոչ այնչափ յօժարի տալ. իսկ յորժամ պահօք խնդրէ՝ ոչ միայն տայ, այլ և գթալով տայ. զի որովհետև ոչ կամի զվշտացեալ իւրոցն՝ ի տեսանելն անդ՝ զի ի վիշտս պահոց որոցին նոքա, գթայ և տայ դիւրաւ։

Պահօք խմն աստ ոչ սոսկ գժուժկալութիւն ի կերակրոց, այլ և զպահպանութիւն բերանոյ կամ լեզուի, զնուազութիւն յօժարութիւն սրտի, զձգտիլ մարմնոյ, և զմեռուցումն ախտից. զի սոքա լծորդեալ ընդ աղօթիւ՝ Թռուցանեն զինդրուածս մեր առ ՝ած, և հաճոյ ընծային նմա։ Իսկ քրձով խմացեալ լինի աստ ըստ բարոյական խմաստից հանգստութիւն ի զգեստս. զի այլ առաքինի փոխանակ խնկելոյ զգեստուց վայելուչ և պատշաճաւոր հանդերձս զգենու։ Ք.ամ զգեցեալ էր զամենափառաւոր զգեստ սկզբնական արդարութեան, և վտանգեցաւ. որպ վասն զգեցոյց նմա ՝ած քուրձ այսինքն հանդերձ մնչկեղէն։ Ձու սովին իսկ եցոյց Թէ հանդերձք մեր պարտին լինել պատկանաւոր և չափաւոր. առ ի պահել զմէզ ի զգաստութիւն և անվնաս յարատեան գայթակղութենէ։ Ջանկանիլ երից մանկանց ի հնոց հրոյն ի բաբելոն, հուրն այրեաց զկապանս ոտից և ձեռաց նոցա, և անարատ պահեաց զհանդերձս նոցա. զի ըստ որում գրեն մեկնիչք՝ հաճեստութիւք յօրինեալ էին. ոչ փառաւոր և ոչ գծուծ. ոչ ի մեծարիլ և ոչ յանարգիլ։ Ք.ԼՀ ամպարիշտք անգոհանեն զայսպիսիս. և զայսպանէ խօսի մարգարէն ի յայտուիւ Համարն, ի մէջ բերելով զայսպանօգոն քոյի և ասէ։

ԺՁ. Ո՞ ՝ինն խորհէին, ոչ նոքին ա՝ր գրուածս. զի այդպէս առնէին, ոչ ըմպէին գինի։

Ք.անդի ի բազմայ՝ Թէ յառաջին ժամանակս բազմ ուրեք իշխանք առ գրուն նստեալ առնէին դատաստան ի հրապարակի. ուստի ասի ի գիրս Հռու-

Թայ (գԼ · Ֆ · 1 · 2 ·) Թէ * բոյոս ևԼ 'ի դուռն , և
,, Նստաւ անդ (դատաստան առնել) · · · և էաս
,, բոյոս տանն այր 'ի ծերոց քաղաքին , և ասէ , Նըս-
,, տարւ՛ըք ասա , և Նստան ։ Այս միտ խօսելով և
յորայ (Թ · 7 ·) ասէ · * յորժամ ելանէի ընդ ա-
,, ռաւօտս (ընդ դրունս տան իմոյ) 'ի քաղաքն , և
,, արկանիւր 'ի հրապարակս (այսինքն առ դրան
,, իմոյ) աթոռս իմ ։ Այս միտ մեկնեն ոմանք
և զայն բան առակաց (լՒ · 23 ·) * Երևելի է 'ի
,, դրունս այր Նորա՝ յորժամ նստի 'ի ժողովրդեան
,, 'ի մէջ ծերոց բնակչաց երկրի ։ յայս սակս ասի
զՀեզեկիայ , Թէ * Նստեր աթոռով իւրով առ դրանն ։
(ւ՛ · Թագ · Ֆ · 13 ·) և գրի անդ , Թէ շուրջ գնային
կային աբք · որով ցուցանի Թէ նստեալ էր 'ի դա-
տել · զի էր նա յոյժ ամ դատաւոր ։

Այս խոկ՝ փոխանակ ասելոյ , գնալ առ Թագա-
ւորն կամ առաքել առ իշխանս՝ սովորութիւն եղև
ասել՝ գնալ 'ի դուռն կամ առաքել 'ի դրունս որով
համարեալ լինի , Թէ 'ի նախկին ժամանակս առ
դրունս նստէին իշխանք և մեծամեծք 'ի դատել կի՛ 'ի
կարգաւորել ինչ գնեկ երբեմն մինչև կոչել դատաւո-
րաց և իշխանաց՝ նստօղք 'ի դրունս՝ ըստ որոյ նոյն
լինի ասել , դատաւորք կամ իշխանք , և ասել , որք
նստին 'ի դրունս · յայս կարծիս էն և Հրէայք ։ Ի
սոսին Հայերով՝ ասէ ։

Օ ինչն խորհէին՝ այս նոքին սո՛ գրեաց ։ Այսինքն
Թէ իշխանք հրէից և քահանայապետք նոցա և մե-
ծամեծք նոցին , որոց սովորութիւն է 'ի դրունս նստե-
լով դատել , խորհուրդ առնուին 'ի վերայ իմ , Թէ
զիարդ կորուսցեն զիս , և որով մահուամբ անարդ
ցուցցեն զիս ։

Արթն է ևս ասել , Թէ խօսի առ Հասարակ զայն
ցանէ՝ որք նստէլով 'ի դրունս՝ նեղեն խորհրդով և
բանից արարեալ էին զայս , այսինքն Թէ զիարդ նեղ-
գեսցեն զքո՝ յատելն նոցա առ միմեանս , զիարդ Թուի
ձեզ · ւ՛ · որպէս և գրի յատետարանի ։

Կարէ այս բան ակնարկել և յայն՝ զոր գրէ յովհան-
նէս (ժ՛ · 28 ·) Թէ քահանայապետք և իշխանք
հրէից ածեալ զքո առ պիղատոս կացին արտաքոյ , և

* ոչ մեկին յայտարանան՝ զի ի պղծեսցին ‖ . վասն որոյ * եւ առ նմանս պիղատոս արտաքս ‖ : Ասէ յայսմ է թէ՝ ի կալ նոցա արտաքոյ՝ խորհէին ընդ միմեանս՝ թէ գինչ ասիցեն առ պիղատոս վասն՝ ի խաչ հանելոյ գքեզ : Ասին իրե՛ ասէ՝ գինէն խորհէին , որք ժողովեալ կային առ դրունս : Այդ յետ խաչելոյ մարգարէին զոցանէ՝ խօսի առա և զսպասաւորսդ քահանայապետին , և զգինուորսդ պիղատոսի և զայլոց օգնականսդ , և ասէ ,

Ով այն առնէին , այ՛ ըմպէին գինի : Այ՛ սեղոյն աստ , որք ըմպէին գգինի՝ ըստ նախասիրելոցդ կամի՝ ի մէջ բերել գչեստին անարգ անձինս՝ որոց սովորութիւն է լինել գՀետ արբեցութե՛ն . ուստի նոյն լինի ասելն աստ՝ մինչք կամ անզգաձք , և ասելն որք ըմպէին գգինի . իսկ այսպիսեացս նշանակին նախ այն չար սպասաւորք առեւտրին , որք՝ ի գիշերի մատնութեան տանջեցին զաւետն մեր . զորոց ասէ զուկաս , * այսն առնէին զնուաճ , և հարկանէին . ծածկէին գերեսս նորա և տանջէին ե՛ ‖ . (զուկ . իբ՛ . 63) : Այ՛նոյնկին երկրորդ գինուորք պիղատոսի՝ որք յետ ձագիկեցոյ գտեր մեր , զգեցուցին նմա քղամիդ կարմիր՝ և ծիրանիա՝ առ՝ ի նախատինս նորա . և եդին՝ ի գլուխ նորա պսակ արարեալ՝ ի փշոց , և ետուն եղէգն՝ ի ձեռս նորա . և սկսան ողջոյն տալ նմա յայսոյ կատաղանաց , և ասէլ . ողջ եր արքայդ հրէից . և ծեծէին զգլուխ նորա եղեգամբն , և թքանէին ընդ երեսս նորա ե՛ . (մարկ . ժե՛ . 16 — 19 : մատ . իե՛ . 27 : յովհ . ժե՛ . 2 :) Այ՛նոսիկին երրորդ՝ ո՛ և իցէ որք անզգաձք՝ որք այսն առնէին գտերն մեր՝ ի ժամանակս չարչարանացդ և խաչելութե՛ն նորա : Այ՛նոսիկին չորրորդ այնոքիկ՝ որոց զուարճանք էր այսն առնել գքե՛ որպէս զուարճանք է արբեցողաց խեղկատակել՝ յըմպելն գգինի ,

Ի վերոյ այսր ամենայնի մարթի է ասել՝ թէ այս քան ի մանաւանդ հայն յայսոսիկ թշնամիս քան որք իրօք ըմպէլով գգինի այսն առնէին գնա , և հայհոյէին . որով իմացեալ լինին և նոքա որք ըմպեն գնորհուրդս չարս և զմեղս ընդդէմ խզձի մտաց , և յիմարեալ՝ ի հոգիս՝ գործովք իւրեանց այսն առնեն գքրկիչ

իւրեանց ։ Այլ թէ յորժամ նոքա նախատէին և հարկանէին, զինչ արաբ քո, ընդդէմ նոցա զայն եա դնել զինի, և ասէ ։

ԺԲ. Այս յաղթեա էայն առ տէր որ, ի ծանանել ընծա-նելն ։

Ազօթել նմին մերոյ բազում օրինակաւ լեալ առեանի. մի՝ վասն գոհանալ և փառաւորել նմին անուան հօր իւրոյ. որպէս և տեսանել ի բազում տեղիս յաւետարանին ։ Երկրորդ՝ վասն փրկուել ազգի մարդկան առ հասարակ. առ որ հայել և ազօթել նոցա յիւրաքանչիւր դիշերի, զի հանցէ ի լոյս գնստեանցն ի խաւարի ։ Երրորդ՝ յատկապէս և ի հանճարողի վասն հաւատացելոց իւրոց. որպէս յայտ է (ի յովհ. ԺԷ. 20.) յաւել նորա. * ոչ վասն նոցա միայն (այսինքն ոչ վասն աշակերտացս միայն) աղաչեմ, այլ և վասն ամենայն հաւատացելոց բանիւն նոցա յիս ։ Չորրորդ՝ որոշակի և առանձինն՝ վասն արդարոց և ընտրելոց, որպիսի էին աշակերտք իւր, զորոց երկիր խօսի տէրն (ի նոյն գլ. ԺԷ. յովհ). Հինգերորդ՝ վասն թշնամեաց իւրոց և վասն խաչհանուացն յաւելն. * Հայր ,, թող դոցա զի ոչ գիտեն զինչ գործեն ։ (ղուկ. ԻԳ. 34.) Վեցերորդ՝ իբր առանձինն վասն իւր. յաւելն * բայց այժմ անձն իմ խռովեալ է, և զինչ ասացից. եթէ հայր ապրեցո զիս ի ժամէ սմանէ յայսմանէ ։ (յովհ. ԺԲ. 27.) որպէս էր և ազօթել նորա ի պարտիզն և ի խաչին։ Այդ զառաջինն դնել ի համարն 32. և 36. զերկրորդն և զերրորդն դնել ի համարն 34. 35. և 37. Զչորրորդն ի հաւմարն 38։ Զվեցերորդն դնել ի յաջորդ համարսն մինչ ի 22. և անդր ևս։ Իսկ զհինգերորդն դնել առ յաւետին ։

Այս յաղթեա էայն առ տէր որ, ի ծանանել ընծա-նելն ։ Այս. մի առել, ի նախատել զիս թշնամեացդ իմոց, և ի խորհիլ նոցա զինէն զչար, և ի տանջել, և մնալ ւանդ ի խաչել նոցա զիս՝ ես յաղթեմ կայի վասն նոցա առ քեզ հայր իմ, յայտնիսի ժամանակի՝ որ քան զայլ ժամանակս ընդունելի էր քեզ. և այս ըստ երից ։ Զի՝ զի ազօթք մնռուցեալք առ ձեզ վասն

Թ Հնամեայ՝ ի ժամանակի հալածանաց և նախատանաց՝ առաւել ընդունելի էն ՚ի քան ՚ի ժամանակի հանգստեան և գովեստի. Երկրորդ՝ զի այն էր ժամանակ սահմանեալ ՚ի հօրէ ՚ի ընդ ամենայնի, առ որ եկեալ էր տէրն մեր ՚ի կատարել. Երրորդ՝ զի օրն և դիպուած ըստ պատշաճի, այն է օր ուրբաթեան. եւ ուրբաթեն էր ժամանակ յարգոյ և պատշաճաւոր, ըստ որում ՚ի նմին կատարեաց ամէն ըզգործս իւր. ուստի գրէ բարեգէղ (՚ի մեկն. մարկ. գԼ. ժԸ). * վասն էր (ասէ) ՚ի յուրբաթեու խաչեցաւ մեր. (պատասխանէ.) զի ՚ի նմա ստեղծաւ. ադամ. ՚ի նմա էանց զպատուիրանսն. ՚ի նմա ընկալաւ զՔՀ. զտառապանսին. ՚ի նմին եւ ՚ի նմին էառ հրաման քերովբէին՝ պահել զդրախտն հրեղէն սրոմբ շուրջանակի. վասն այսորիկ ՚ի սմին ընկալաւ քո զխոցումն սիրաւ ՚ի կողն, և արձակեաց զսուր քերովբէիկն. և եմոյծ՚ի դրախտն զՏոգի աւազակին, և կցորդեաց անձառ փառացն իւրոց՝ որպէս խոստացաւ նմա, Թէ այսօր ընդ իս իցես ՚ի դրախտին. զոր և ամենայն հաւատացեալց ըստ աւազակին զնոյն փառս անձառելի պարգեւելոց է ։

Յարոյապէս առեալ՝ ժամանակ ընդունելի իւրաքանչիւր մարդոյ այն է՝ յորում ընծայի առնի գործելոյ զբարին. զի այն է նմա օր բարի, զորով չէ արժան զանց առնել. յոյր սակս ասէ սիրտք. (ԺԳ. 14.) * Յաւուրց բարեաց մի նուազիր, և մասն խնամատարեաց մի անցցէ զքեզ ։ Երեք իցես ՚ի մեզս, յորմէ առուր գառնեաս զխոստովանահայրդ՝ այն է վասն քո օր բարի և ժամանակ ընդունելի. մի նուազիր, այլ կայ յաղօթս զղջութեանէ և խոստովանութեան. Երեք իցես ՚ի զգաստնոյն՝ ՚ի գառնելդ ժամ պարապ, այն է վասն քո ժամանակ ընդունելի, մի նուազիր կալ յաղօթս և առնել զարբին ։

Ա՛ռ հաւատակ խոստովմ ՚ի և իցէ ժամ է ժամանակ ընդունելի յաղօթել. զի զուտն է մտաներելոյ ՚ի հաՀոյս նոյն, և պատճառ ամենայն բարեաց, և վանիչ ամենայն չարեաց. և ա՛ռ է առաւել գնացն զայն ժամանակ ընդունելի. * ամենայն ՚ի ծաղատուր բար-

,, հաց մեզ պատճառք ազօթիցն են (ասէ սարգիս
,, ընթհալի ի մէկն. յուգային. համար. 21. Ճառ.
,, ջ.) հիմն և հաստատութեամբ, և ամենայն փորձու-
,, թեանց խափանիչ ։ (Տճես և ի սաղ. լիս. 7 ։)

Եթէ այս բան ասելի ի բերանոյ այնոցիկ՝ որք գե-
րեցան ի բաբելոն, ժամանակին ընդունելի Հայի ի
լուսին եօթանասուն ամի գերութենեն ըստ գուշակու-
թենն երեմիայ ։ Իսկ եթէ ասելի ի բերանոյ ազգի
մարդկան, ժամանակին ընդունելի Հայի ի լուսին եօ-
թանասուն եօթնեբորդաց, այսինքն եօթանասուն
անգամ եօթն ամաց, յորում եղև գալուստ որդւոյն
այ յաշխարհ ի փրկութենէ ազգի մարդկան ։ Ո այս
այսպէս եդեալ մարգարէին, մնալոյ առաջի առնել
և զայն ազօթս, զորս վասն իւր մնալոյ քո, ասէ-
լով ։

ԺԴ. Ա Ղ ի բաղմ-ազգութենէ ոտ-քո լռեաց ինչ, ի ձգմռ-
տոնէ էրկնութենէ ոտ ։

Այս բանք, սոյնպէս և յաջորդք սորա, որպէս և զորս
եդ ի սկզբան, ոչ Հային յայն որ եղև, այլ յայն՝ որ
լինելոց էր. այսինքն է թէ ոչ Հային ի կիրս չարչա-
րանաց և մահու, այլ յաւարտումն նոցին և ի վերջ
լինելն ի նախատանաց թշնամեացն. իբր զի սոքիմբք
ոչ խնդրեբր քո զի մի չարչարեսցի, այլ զի աւարտ լի-
ցի այնմ ամենայնի. և յաւարտիլն չարութեամբ փառա-
ւորեացի. և յայս միտ ասէ զայն բան, զոր այլ-
ուր ևս յիշեցաք. (սաղ. իա. 2.) Թէ տէրն մեր
* յաւուրս մարմնոյ իւրոյ ազօթս և պաղատանս առ-
այն՝ որ կարող էր ապրեցուցանել զնա ի մահուանէ,
ուժգին գոչմամբ և արտասուօք մատուցանէր. և
լսելի լինէր առ լաւութենէն ։ (Եբր. ե. 7 ։)
Որով յայտնի երևի Թէ ազօթքն քրիստոսական չէին բացարձակ
ըստ ասարտելոյ չարչարանաց, և ըստ ապրելոյն ի
մահուանէ. բայց ոչ էին բացարձակ ըստ կրելոյն
զչարչարանսն և ըստ մեռանելոյն, այլ Թէականք.
որպէս յայտ է անտի զոր յազօթէնէն ասէր. * Հայր
,, եթէ կամիս՝ անցո զբաժակս զայս յինէն, բայց ոչ
,, իմ կամք այլ քոդ լիցին ։ (ղուկ. իբ. 42 ։ մատ.
իզ. 39 ։ մարկ. ժգ. 35) ։ Այս բան ևս յայլ ինա

միտս տարածէ եղնկացին (՝ի մէկն. մատ. գլ. իիզ.) յասելն. * Թէ հնար է ասէ, բաժակ մահուս խմել ,, մի լեցի պատճառ կորստեան (Երուսաղէմ, խո- ,, բակելի, յուդայի. ՚ի), և յանցուցէ զանգուած , ,, այլ բաժակս՝ որ յինէն կատարի, անցցէ ՚ի նոցա- ,, նէ առանց վնասու ։ ՚Ա.ՀԼ յայսմ ևս գոյ զանա- զանութիւն ԹէուԹէ. և ըստ այսմ զանազանութեան խօսելով մարգարէին՝ ասէ ։

Ա.Ը ՚ի բազում ողորմութիւն տամ լեր ինէ ։ Ազգաւ եղև ողորմութիւն՝ այ հայելով առ փրկութիւն ազգի մարդ- կան. մի՝ զի ողորմութիւն կամեցաւ փրկել. երկրորդ՝ զի նովին ողորմութիւն ետ մեզ զանապատնին գանձն ողորմութիւն զմիածին իւր, որով կարացաք լինել՝ հաւատացանել նմա. երրորդ՝ զի վասն այսպէս ողոր- մելոյ մեզ՝ տայ հանապազ ընծորն ողորմութիւն իւրոյ, և տալոց է զիւառս արքայութիւն ։

Ա.ԶԴ զայսպիսի ողորմութիւն չօր առաքի նորա տա- բաձկ. որդին, և աղաչէ, զի յայսմ բազմապատիկ ողորմութիւն լուիցէ ինքեան. իբր զի որովհետև զայս- չափ ողորմութիւն կամեցաւ առնել ազգի մարդկան , արժան է՝ զի ապրեցուցցէ զինքն ՚ի մահուանէ, որ- պէս զի այս ողորմութիւն նորա արդեամբք կատարես- ցի. զի եԹէ ինքն ոչ ապրէր ՚ի մահուանէ, այսինքն եԹէ ոչ յառնէր, արդիւնք այնր ողորմութիւն ոչ դնիւր ՚ի գործ. ուրեմն ասէ լուր ինձ վասն լրման և կատարման այդր քոյ բազում ողորմութիւն. որով և ցուցցէ հաւատարմութիւն բանիցդ՝ Թէ ողորմելով կա- մեցար և կամիս փրկել զազգ մարդկան, և առ այս յարէ ։

Ի ՃՀմարառնէ էքիռնէ ։ Ա.Հյսինքն լուր վասն ՃՀմարառելոյ զկամիլդ ողորմիլ, կամ վասն ստուգելոյ զկամն ողորմութիւն քո՝ որ յազգս փրկութիւն մարդ- կան. կամ լուր ինձ, և լսելովդ ապրեցո զիս ՚ի մահուանէ, որով ՃՀմարառեցի փրկութիւն մարդկան՝ զոր կամիս. կամ լուր ինձ, զի երևեցցիս հաւատա- րիմ ՚ի փրկել զմարդիկ, փրկելովդ զիս յարութիւն. և այսու ծանիցի՝ Թէ որպէս ողորմած եղեր ՚ի կամիլդ և ՚ի խոստանալդ զփրկութիւն, սոյնպէս և հաւատա- րիմ եղեր ՚ի տալդ իրօք զնոյն փրկութիւն՝ զոր խոս-

ասացար· Լաւ ևս՝ որովհետև բազում է ողորմութիւն քոյ, լսէր ինձ ըստ բազում ողորմութեանդ քոյոմ. և ըստ որում խոստացեալ էիր ինձ փրկել զիս ի մահտուանէ, կատարեա զխոստումն քոյ, և չարձ զիս ;

Չինչ միտ և դիպի, պարտ է զգուշութիւն ընթեռնուլ, և անվեհար խմանալ զայսպիսի բանս. քանզի ոմն ոչ իբր կարօտ, այլ իբրև հնազանդ չօր ասէը զայսոսիկ, և չայս իսկ անմիջապէս չարէ առաքեալն զնոսա նախակարգեալ բանիցդ և զայն, թէ * Թէպէտ և օրդի է՝ ուսաւ ի չաբչարանաց զնաժ ,, զհնազանդութիւն. և իբրև կատարեցաւ՝ եղև ամե. ,, նայն հնազանդելոց իւրոց պատճառք փրկութ ‖ . (Եբր . Ե . 8) ; Լաւել և զայն, զի զայս ամենայն Թէպէտև ի գէմս քոյ խօսի մարգարէն, բայց քանզի զի իբրև ի վերայ անձին իւրոյ ձևացուցանէ գաւթի զանձն , նմին իբր և զկռնաբՀական բանս յանձին, և կամ ասէ՝ մարդկօրէն ևեթ ձևացուցանէ ; Իսկ Թէ զինչ էր այն՝ որոյ վասն ձրն ազօթէր՝ զի լուիցէ Հայր , չայս առնէ ասելով ,

ժՀ. Ա. պրէդ՛ զիս ՚ի խո՛ոյ՝ զի ՚ի ընկլոյզ , պրէդ՛ոյց ես չաթելչոյ ինոյ , և ՚ի խորոյ ըո՛ոյ բաղմոյ ։

Լաւով իմացեալ լինի ասա անեչանելի վիշտ , կամ մահացուցիչ տագնապ և ասնջանք , և կամ նոյն իսկ մահն , յոր Թէ ոք խրիցէ՝ ոչ ևս կեայ . որպէս ՚ի խրել ուրուք ՚ի խորամանկ կաւ , ոչ ևս կարէ ելանել անտի ։ Ա. չայսիսի նմանութիւ խօսէլով մարգարէին ՚ի բերանոյ նոն մերոյ՝ կամի զմահ խաչն նորա չոյժ ծանր ցուցանել . վասն որոյ և պաղատելով աղաչէ զՀայր ՚ի դիմաց նորա՝ զի մի ինասցէ ՚ի մահու անդ , այլ զերծցի փրկեալ . չասելն ։

Ա. պրէդ՛ զիս ՚ի խո՛ոյ՝ զի ՚ի ընկլոյզ ։ Ա. չայնչան՝ ասրէ ցմ զիս ՚ի մահուանէ , ոչ զի մի մեռայց , այլ զի մի ընկլայց , այսինքն զի մի ընկղմեալ մնացից ՚ի մահն՝ որպէս և այլք , այլ չարեայց . որով լեալ ինձ ազատել ոչ միայն ՚ի քանութիւ մահու , այլ և ՚ի չարուհ Թշնամեաց , և ՚ի դառնութիւ տանջանացս . և առ այս չարէ ։

Ա. պրէդ՛ոյց ես չաթելչոյ ինոյ , և ՚ի խորոյ ըո՛ոյ բաղմոյ ։

Ա՛յսինքն ազատ գտայց ՚ի ձեռաց այնոցիկ՝ որք առեն զիս. և զերծ մնայից ՚ի խաւտուիթէ անդնաարին նեղութեացս և ՚ի բազմադիմի տանջանացս. զի առ խոր ծոք ջուրց բազմաց՝ նշանակի գառնութիւն նեղութեց և տանջանաց. որպէս առացաք ՚ի համարն ՚ և ՚ի տես անդ:

Նարտյապէս առեալ՝ այս բան ասէ ՚ի քերանոյ արդարոց յաղաչել նոցա զՅԻՆ՝ ապրեցուցանել զինքեանս ՚ի մերձաւոր առնթէց մեղաց, որք օրինակին ՚ի լարդուն և ՚ի սահեցուցիչ կաւս. և արդարև ապրին և փրկին՝ եթէ և ինքեանք զգուշասցին, և ՚ի գտանիլ խուեանց յայնպիսի առնթս՝ մի յաոեսցին. ապա թէ ոչ՝ յափշտակին ՚ի նոցունց: Ո՞ւնք եգիպտական կողմանց (որպէս գրէ պլինիոս) յրմպելն զջուր ՚ի նեղոս գետ՝ ոչ յամեն, զի մի յափշտակեսցին ՚ի կոկորդիլոսէ, որոյ մորթ է ՚ի գոյն կաւոյ. նոյնպէս յրմպել մարդոյ յաշխարհի աստ զջուր կարևոր պիտոյից՝ եթէ տեսցէ զառիթ ինչ կործանման, մի յաոեսցէ: Նօրինակ այսը ՚ի գնալ ՚ն մերոյ յերուսաղէմ՝ փութոյ էանց ընդ երիքով, որ էր տարացոյց կործանման. (ղուկ. ԺԹ. 1:) Նոյնպէս և աքիմաաս ծառայք դաւթի ոչ յամեցին յայնկոյս ջրոյն, այլ փութով անցին, զի մի յափշտակեսցին յաբեսողոմեանց. (Բ. Թագ. ԺՀ. 20:) Նոյնպէս պարտ է առնել ամենեցուն՝ որք կամին ապրիլ ՚ի կաւոյ մեղաց: Նառնայ այժմ մարգարէն առաջի առնել զխաւտուիթէ նեղութեցն, աղաչելով ՚ի դիմաց քոյ առ հայր՝ ապրեցուցանել զինքն յայնցանէ, ասելով:

ԺՀ. Ա՛ՌՔ ընկղմեսցեն զիս պոռոտ ջուրք, և ոչ ընկղմեսցեն զիս անդունդք խորոց. Ընդոր ոչ կաթուածէ զբերան իւր ՚ի վերայ ՚ի համարն. 2. կոչեաց ջրջանք, և ասաց անդ, թէ ընկղմեցին զիս. նոյնպէս և ՚ի համարն 1. ասաց, թէ ընկղմայ ես ՚ի խորս անդնդոց. աղաչէ, ասա, զի մի ճնասցէ ՚ի նոսին, յասելն:

Ա՛ՌՔ ընկղմեսցեն զիս պոռոտ ջուրք. և ոչ ընկղմեսցեն զիս անդունդք խորոց: Նրպէս թէ ասէր. ահա պատրաք

ջուրց՝ այսինքն անհնարին նեղուէք տանջանաց պա-
շարեցին զինս, և յանդունդս խորոց, այսինքն յանյա-
տակ և յանբերելի տագնապ մահու էջուցին զիս.
այլ դու Տայր իմ. մի թողուր զիս ինձ իսպառ յայս-
պիսի տանջանս և՛ ի տագնապս. իմ այս տանջանք,
և իմ այս մահ վասն փրկութե՛ ազգի մարդկան է.
եթէ ինձանից ես՛ ի տոսա, փրկութե՛ նոցա ոչ կատա-
րեսցի. վասն որոյ աղաչե՛մ արա զի տիրեսցեն յիս
այսոքիկ, և մի՛ էշխեսցէ մահ՛ ի վերայ իմ. զորմէ՛ ի
մանաւորի խօսելով ասէ:

„Ջ ընդ ո՞ւ ի կափուսցէ աչերան ես՛ ի վերայ եմ: „Ջ ընդ խոր
և անյատակ է մահ. այս ջրհոր զորս միանգամ կլա-
նէր յատուկն՝ յինքեան փակէր. և ոչ էր հնար ազա-
տելոյ անտի. քայց ինձ ասէ մի լինի այսպէս. որպէս
թէ ասէր. ՚ի մեռանիլս իմ և յինջանելս ՚ի ջրհոր մա-
հու և ՚ի հոր գերեզմանի, մի կափուսցէ նա զբերան
իւր ՚ի վերայ իմ. այսինքն մի տիրեսցէ մահ ՚ի վե-
րայ իմ, և մի արգելցէ զիս ելանել անտի:

Նոյնպէս այսր նմանուԹե՛ է, զի յորժամ անկա-
նի ոք ՚ի ջրհոր, կամ ՚ի գուբ խոր, եթէ ոչ իցէ
փակեալ բերան նորա, անկեալն կարէ յուսալ փրկու-
Թե՛, յաղագակելն և՛ ի խնդրելն այլուստ զօգնուի.
նոյնպէս եթէ կափուսցի բերան ջրհորոյն՝ ոչ ևս միայ կարէ
ելանելոյ անտի: Ասաի և մարգարէն այսու նմանու-
Թե՛ վարելով կամի յայտ առնել զսոյն զայս. այսինքն
զոյս չմնալոյ ՚ի մահու անյոյս:

Նարոյասկս, այս պատմք ջուրց նշանակեն նախ
զծանր նեղուԹիս ընկղմեցուսչս. որպէս տեսանի՛ ի
համարն 1. և 2: Նշանակեն երկրորդ զպատրանս
փորձուԹե՛ց սատանայի և զյափշտակօղ ցանկուԹիս
մարմնոյ. յորոց միշտ պարտիմք զգուշանալ. որպէս
յորդորեն զմեզ գիրք, և հարք սրբք, ընդ որս ասէ
սարգիս շնորհալի (՚ի մեկն. ա. պետ. ՚ի. 18. Ձառ.
Ժ. յորդ). * մի յաղԹեսցէ մեզ վիշապն ապստամբ
„ պատրանօք իւրովք. և մի ընկղմեսցեն զմեզ պը-
„ տոյտք ջուրց այսինքն ուխք անօրինուԹե՛ց չարաչար
„ ցանկուԹե՛ց: Նշանակեն երրորդ զտառապանս
խղճի մտաց:

Նոյնպէս անդունդք խորոց յայտ առնեն զխեղդմունս նո-

ընն խղճի մտաց յարկանեըն զՀոգին ՚ի յուսահատու-
ԹԻՒ։ ՚Կինչափ և տապնապ սորա, մինչև չՀանդուր-
ժեալ ոմանց ցանկացան մահու. որպիսի եղև տիքե-
րիոս, որ յանՀնարինս դառնայեաւ ՚ի հանապազօ-
րեայ խայթմանե խղճի՝ գոչէր. * կորուսայե՛ն զիս
դիք, ուր ես զօր ամենայն կործնչիմ՝։ ՚Կմանք Համա-
րէին զանձինս ընկղմեալ ՚ի մահ. որպիսի եղև փղակ-
կոս, որ ըստ փիլոսի ՚ի տանջանաց խղճի աւէր միշտ.
* արդէն ՚ի ժամուս մեռանիմ, կրեալ չիս քաշում
,, մահուընս յառաջ քան զմահն վերջին՝։ ՚Կմանք գա-
Հավ՚ժ կորեան, կի՛ր ջուր արկան և ՚ի Հուր. ոմանք
առին զմահաբեղ, կամ սրով սպանին զանձինս. և
ոմանք կախեցին զինքեանս։ ՚Կեալ սոցա դառն թուի
և ինքեանց քան զմեռանիլ. զի մեռանիլն ՚ի վայրկեան
վճարի. իսկ տապնապիլ խղճի մինչև ՚ի մահ տեւէ.
վասն որոյ ասի. * լաւ է ազատիլ ՚ի խղճէ՝ քան փախ-
,, չիլ ՚ի մահուանէ՝։. զի անդունդ դժոխոյ է այսպի-
սի խիղճ։ Օ՜յա մեղաւորք և ես խոստովանին, եԹէ
կամիցին ասել զՀշմարիտն. * նեղուի և անձկութի՛ր
,, վերայ ամենայն մարդոյ որ գործէ զչար՝։. (Հռոմ.
բ. 9). մինչև կափուսցե ջրՀոր յերկին յուսահատու-
ԹԻՒ զբերան իւր ՚ի վերայ սոցա յընդունելն զսոսա ՚ի
յանդունդս դժոխոց։ Յորմէ զերծանիլ կամելով
մարգարէին՝ աղաչէ զնա. և ՚ի մէջ բերելով զխնդ-
րուածս ազատուԹենն քան ՚ի տանջանաց մարմնոյ՝ պա-
տուիրէ ՚ի դիմաց նորա առ Հայր, և ասէ։

ԺԲ. ՚Ո՛ր ինչ ՚ա՛ր, չէ՞ խաղայր է ողբմուԹի՛ւն քո. ըսաւ Ե-
ղիա՛ս Գլուխի՛ւ քո Հայեա՛ յիս. և մի դարչնացներ
զերեսս քո ՚ի ծառայէ քումմէ. չէ նեղեալ եմ ես, վաղվաղակի
լո՛ւր ինձ։

ԺԳ. ՚Ես Հայեա՛ յանձն եմ, և էրէս չիս. վասն ընչաՀաչ
եմոյ ապրեցո՛ չիս։

Ա՚յս նոյն է՝ զոր եդ ՚ի Համարն 15. այլ զոր անդ ՚ի
վրկուԹի՛ն ազգի մարդկան Հայելով ասաց. * ուժ ՚ի
բազում ողորմուԹի՛ն քում լո՛ւր ինձ, ՚ի ՀշմարտուԹի՛ն
վրկուԹի՛ն քո՝։. աստ յատկուԹի՛ն անձին իւրոյ Հայե-
լով ասէ։

Ի՞նչ է ինչ ասէ, թէ հաղորդեալ ոչ ոք կարէ ասել. որովհետև ողորմութիւն քոյ պատրաստ է ցուցանել զքաղցրութիւն իւր առ ամենեսին, նովին ողորմութեամբ լուր ինձ, և արա զոր խնդրեմ: Հաղորդ կոչէ զողորմութիւնն այլ հայելով յընդունողն և՛ ի խնդրօղն. զի որպէս քաղցր է ծարաւելոց ջուր, և քաղցեալոց կերակուր, այնպէս քաղցր է ողորմութիւնն այլ առ այնոսիկ՝ որք կարօտին այնմ՛ և ներելութիւնք իւրեանց, և փափաքանօք խնդրեն: Եւ զի ցուցցէ թէ յողորմել այլ ոչինչ պակասի՛ ի գանձուց ողորմութենէ նորա, յաւելու ասել:

Որ բաղում գթութիւն ունի: Այսի ասել. ՛ի լսելի խնդրուածոց իմոյ՝ մի երևեցուսցես զքեզ միայն լսօղ, այլ և գթութիւնք հայեցօղ. որպէս թէ ասէր. հայեա՛ ի բազում գթութիւն քո, և ըստ բազում գթութեանդ քում գթալով յիս իբրև՛ ի ծառայ քո, նայեա՛ առ իս: Եւ զայս կամելով յայտնագոյն և աս ասել, յարէ զկինի:

Եւ մի դարձուցաներ զերեսս քո՛ ի ծառայէ քումմէ: Տէրն մեր թէպետև էր քնական որդի հօրն երկնաւորի, և ոչ որդեգիր, բայց՛ ի կերպարանս ծառայի գոլով, կոչէ զինքն ծառայ հօրն. զտրօքինակ քնական որդի ուրուք կարէ կոչիլ ծառայ հօր իւրոյ: Եւ սակայն պարտ է բարուք ուշ ունել աստ, զի ետրն մեր ոչ ըստ որում քնութենականէ՛ հօր՝ կոչի ծառայ, այլ ըստ որում քնութենականէ՛ մեզ: Եւ ըստ որում այսպիսի՝ աղաչէ զհայր վանն իւր և վանն անդամոց իւրոց, մի՛ դարձուցանել զերեսս իւր. որպէս թէ ասէր. ՛ի հայիլդ առ իս եթէ տեսցես զիս բեռնաւորեալ մեղօք ազգի մարդկան, զորս յանձն առեալ եմ, մի՛ դարձուսցես զերեսս քո յինէն. այլ փութասցիս փրկել ՛ի տառապանաց՝ զորս կրեմ առ ՛ի ջնջելոյ զայսոսիկ մեղս. և առ այս յաւելու տալ և զպատձառն ասելով:

Օ՛ի նեղեալ եմ ես, վաղվաղակի լո՛ր ինձ: Այս բան՝ զի նեղեալ եմ ես, կարէ յարիլ նախ՛ ի վերոյհեդեալդ. որով և միտ բանին լինի այս. որովհետև նեղեալ եմ ես, նայեա՛ առ իս և մի՛ դարձուցաներ զհայեցուածս քո յինէն: Արհարտ ՛ի հեռևեալ հատուածն, այս-

ինքն յայն՝ զոր ասէ. վաղվաղակի լսեր ինձ. որով և միտ բանին լինի այս. մի յաճեր լսել խնդրուածոց իմոց. այլ լսեր վաղվաղակի. վասն զի նեղեալ եմ. այսինքն՝ ի յետին նեղուն ժամանեալ եմ. քանզի ետրն մեր՝ ի կալն անդ՝ ի խաչին՝ յայնչափ և յայնպիսի եղեալ նեղութի՝ քան զոր աւելի մտածել չէր հնար. մանաւանդ՝ ի տեսանելն՝ թէ թողեալ է և՝ ի հօրէ անմխիթար. վասն որոյ դարձեալ պատճառ առնու՝ հայիլ յինքն ասելով:

Ժէ. Հայեա՛ յանձն իմ. և եղիցի ինձ: Կասի ասել. հայեա ոչ՝ ի մեղսն զոր գործեալ եմ՝ ի վերայ իմ, այլ յանձն իմ, այսինքն յիս, և տես թէ զինչ կրեմ վասն ջնջելոյ զմեղս մարդկան. և այսու՝ ի գութ շարժեալ՝ ի վերայ իմ՝ փրկեա զիս՝ ինեղութենէ առաւել: Հայեաց և՝ ի կատաղութի թշնամեաց իմոց, և տես թէ քանի՛ անողորմ գոյան առ որդի քո, և ազատեա զիս՝ ի ձեռաց նոցա. և առ այս յարէ:

ԺԱ. Եւ վասն ընդնաեցոյ էմոյ ապրեցո՛ զիս: Աւր գառդ վասն՝ ոչ հայի՝ ի ընտրս թշնամեացն, որպէս թէ ասել, թէ պատիւ երեսաց թշնամեաց իմոց, կամ վասն միջնորդութեն նոցա ապրեցո՛ զիս, այլ յանողորմութենէ նոցա. որպէս թէ ասէր. եթէ հայեալ՝ ի մեծութենէ մեղաց մարդկան՝ զորս գարձեալ եմ՝ ի վերայ իմ, ոչ արժանի տեսանես ապրեցուցանել զիս, գոնէ հայեա՛ յանողորմութենէ թշնամեաց իմոց՝ որք անխնայ և անգութ տանջեն զիս. և յայս հայեալ ապրեցո՛ զիս յանողորմութենէ նոցա. և արա՛ զի՝ ի յաւնել իմում յամօթ լինին, և կամ առ քեզ դարձցին:

ԺԲ. Այսոսիկ ասելով՝ ոչ եթէ զոր ինքն ոչ գիտէր՝ յայտնէր և խնդրէր, այլ զոր գիտէրն՝ խնդրէր և յայտնէր. և այս վասն երկուց. մի՝ առ՝ ի ցուցանել թէ ձշմարտապէս կրէր զոր յայտնէր, և ոչ թէ առ աչօք. և մի և այ՝ առ՝ ի մեծացուցանելոյ զհայր: Կամ դարձեալ՝ ըստ սմին հանգիստութենէ՝ զայսոսիկ ասելով ոչ թէ զոր հայրն ոչ գիտէր ծանուցանէր նմա, այլ զոր նա գիտէր և կամէր, առաջի նորա տարածաներ. և յայս սակս յարէ զինն և ասէ:

Ը. Ո՞վ է դու՝ զի պատասխանես ինձ, զանօրէն ես, և զպատ-
հասանես ինձ։

Ա. Ստ նախատինքն կրկին մտօք առեալ լինի, մի՝ փո-
խանակ նախատականն բանից և գործոց՝ զորս կրէր
քն, և մի և ս՝ փոխանակ առաքական նախատանաց.
այսինքն փոխանակ այնր՝ որով նախատանաց առարկայ
եղև, որպիսի էր անարդ երևիլն, և անարգաբար
խաչիլն ևն. յորում աւելի էր տանջանք հոգւոյն քան
չարչարանք մարմնոյն. վասն զի աւելի տանջանք է
աղնուական հոգւոյ նախատինք լինել՝ ի չարչարանսն,
քան թէ նոյն իսկ չարչարանքն՝ որ տուեալ լինի մարմ-
նոյն։ Ա. Ըզ յայսմհետ տանջանս գոլով ինն մերոյ՝ ի
վերայ խաչին, տեսօղքն՝ միայն՝ ի չարչարանս մարմնոյ
նորա հայէին. իսկ զներքին տանջանս որ՝ ի նախատա-
նաց անտի՝ ոչ իմանային. վասն որոյ զհայր միայն՝ որ
գիտէր՝ իբրև վկայ այնմ կոչէ և ասէ։

Ը. Ո՞վ է դու գէպ ես ինձ նախատինս եմ։ Ա. Այսինքն դու ինքն տե-
սանես՝ թէ յոր վիճակ նախատանաց մատնեալ կամ։
Այս զի այսպիսի նախատանաց զհետ գայ ամօթ կրել՝
և յայնմանէ պատկառանք, յորմէ զկնի և ասէ։

Ը. ամօթ եմ և պատկառանս եմ։ Ա. Բառքս ամօթ և պատ-
կառանք կրկնակի կարեն առեալ լինել. մի՝ փոխանակ
նախատանաց կրից ամօթոյ և պատկառանաց, և մի
և ս՝ փոխանակ պատճառի ամօթոյ և պատկառանայ։
Այլեւ՝ զի փոխանակ պատճառի առցին, միտ բանին
լինի այս. դու գիտես թէ ո՛րպիսի պատճառս ունիմ
ամօթոյ և պատկառանաց։

Իսկ եթէ առցին փոխանակ կրից՝ գիտելի է. զի
ամօթն է կիրք խորհելոյ՝ տագնապիչ հոգւոյ պատ-
ճառեալ յերևակայութենէ յոռւթե երևեցելոյ՝ ի կրօղն.
այսինքն այնպիսի կիրք, որով պղտորի արիւնն, և
տագնապի հոգին խորշմամբ ինչ վասն՝ ի յայտ գալոյ
չինչեան այնպիսի իրիք որ է յոռի, և արժանի նա-
խատանաց. յորմէ և նոյն արիւնն սիրտ յերեսս՝ կա-
մելով հոգւոյն ծածկել զայն։ Այլ թէպէտ նաև յո-
ռւթին որ ըմբռնի յայլս, կարէ պատճառել զամօթ,
բայց ոչ ըստ որում է յայլս, այլ ըստ որում այն յո-
ռւթի՝ յայլոց կարէ ցուցանել զայլ ինչ յոռւթի՝ ի

յաւմօթ կլաջէն. ուստի յորժամ վան այլոյ ամօթ կրէ ոք, ՚ի կրելն անդ ըմբռնէ յինքն զպակասութիւն. և այս յաւէտ ամաչել սի, քան ամօթ. ՚ի կիրս ամօթոյ նիւթական բանն է ՚ի պղտորման աչեան. և տեսական է յըմբռնման յայտնեալ յոռութիւն։

Նակ պատկառանքն է կիրք վհկայ պատճառեալ ՚ի նուաստ տեսանելոյ զինքն առաջի մեծութիւն այլոց։ Եւ սակայն նոյնն՝ որ է պատկառանք՝ սի երբեմն ամօթ, որպէս և մեծ ամօթն երբեմն պատկառանք։

Ա.րդ թէպէտ եղև ՚ի քո յատկապէս պատկառանք, բայց ոչ եղև ՚ի նմա յատկապէս ամօթ. զի ոչ ունէր յինքեան ինչ արժանի ամօթոյ. և սակայն կրէր զարժանիս ամօթոյ. և ըստ այսմ թէպէտև ունէր զքաւս այնը կրէց, բայց ոչ ունէր զայն կիրսն ըստ տեսականն. յոր միտ սի՝ թէ * արհամարհեաց զամօթ ‖. (եբր. ժբ. 2.) իբր զի ոչ ծանր համարեցաւ կրել զտանջանս ամօթոյ. տես և ՚ի համարն. 9։ Ի՛ստ այսոցիկ իմացեալ զպատկառանս և զամօթ՝ կամի ասել. դու հայր գիտես՝ զի նախատինք լինելոյ առաջի քազմութեամբ մարդկան՝ կրեմ զանձնամեծ ցաւ ամօթոյ և պատկառանաց. մանաւանդ զի ոչք մատնեցին զիս յայսպիսի ցաւս՝ կրկին նեղեն զիս այսպիսեօք, և տառապեցուցանեն, զոր և դու ինքն տեսանես. և զայս կամելով յայտ առնել՝ յարէ զկնի և ասէ։

իա. Ի՛ր ոչ են ամենայն նեղիչք անձին իմոյ. նախապատանաց համբերը սէրպ եմ, և ընդառաջումբ։

Ա.յլևայլ եղեն նեղիչք ըստ մարմնոյ և ըստ հոգւոյ. ըստ մարմնոյն՝ չարչարօղք նորա և խաչահանութք. իսկ ըստ հոգւոյն՝ նախատիչք նորա և հայհոյիչք, թէև զայսն։ Ի՛ստսին հայելով սահ։ Ի՛ր ոչ են ամենայն նեղիչք անձին իմոյ. նախապատանաց համբերը սէրպ եմ, և ընդառաջումբ։ Կամի ասել. որպէս յայտնի է առաջի քո, այս իմ նեղութիւն զոր կրեմ ՚ի նախատանաց, սոյնպէս յայտնի են առաջի քոյ և նուքա որք նեղեն զիս նախատանօք։ Ա.րդ որովհետև յայտնի են քեզ այսոքիկ, և դու տեսանելով զայսոսիկ ոչ արգելուս, այլ մանաւանդ թոյլ տաս, զի նախատեսցեն զիս, ես ևս դիտելով զայս՝ համբերի

և համբերեմ այսոցիկ նախատանացս վասն քոյ. սոյն պես և այլ ամենայն տառապանաց և թշուառու-

թեանց։

Սովին եցոյց մեզ Տէր՝ սիրով տանել նախատանաց. ինքն տարաւ ոչ վասն իւր, այլ վասն մեր. իսկ մեք վասն մեր. զի նախատինք ջնջեն զարատս. և զի նա ոչ ունէր ինչ արատ՝ տարաւ նախատանաց՝ առ՛ի ջնջել զարատս՝ ոչ զոր ունէր, այլ զոր մեք ունէաք. ապա քանի՞ առաւել մեզ պարտ էոյ տանել այնմ։ Իսկ թշուառութիւնք՝ զոր յաւելու դնել՝ իմացեալ լինի վինակ անկնարին նեղութեանց պաշարելոց յամենայն կողմանց. որպէս եղև Տէր մերոյ՛ի պարտիզին և՛ի խաչին՝ և՛ի միում նորա յամենեցունց անմխիթար։ Զոր և յայտնագոյնս առաջի դնէ՛ի յաջորդ համարն ա-

սելով։

Լիք. Զի ոմանք՝ ըն ոչ պրպտեցէք ընդ էս, և ուլ ոչ էր. և ծիծաղեալ էին՝ ոչ ուլ գիտաս։

Տէրն մեր՛ի չարչարանսն անդ ոչ զոք ունէր իւր այնպիսի տրտմակից՝ որ կարօղ լինէր մխիթարել զնա. ՛ի պարտիզի յայտ է թէ էր բնաւ ոք, նոյնպէս՛ի տան աննայի և կայիափայ, և յատպարանսն պիղատոսի և հերովդէի։ Իսկ յԵլեոնեէն՛ի գողգոթայ, և՛ի խաչին՝ թէպէտ և կանայք բազումք տրտմէին և լային՛ի վերայ նորա, բայց այն ոչ էր տրտմիլ ընդ նմա, այլ տրտմիլ ընդ նա. զի զոր կրէր ոչ զգային, այլ զոր տեսանէին ընդ այն տրտմէին։

Եւ կամ գարձեալ այն ոչ էր տիրապէս տրտմակից լինել կամ կարեկից՝ այլ սոսկ տրտմիլ. իբր զի նոքա տրտմէին ընդ այն, զոր կրէր. իսկ Տէրն մեր տրտմէր՝ ոչ ընդ այն զոր կրէր, այլ ընդ այն՝ զի կրէր. վասն զի տրտմէր ընդ մեղս մարդկան՝ յոյր սակս կրէր, և ոչ ընդ անցս այնոցիկ՝ որք դատապարտեալոց էին։

Եւ կամ գարձեալ նոքա տրտմէին ընդ մարմնաւոր մահ նորա՝ իսկ նա տրտմէր ընդ հոգևոր մահ բազմաց, և ընդ կուրութի՛ հրէից։ Վասն որոյ և ասաց առ նոսա. * դատերք երուսաղէմի մի լայք՛ի վերայ իմ, „ այլ լացէ՛ք՛ի վերայ անձանց, և՛ի վերայ որդւոց „ ձերոց եւն ‖. (ղուկ. կգ. 28)։

Այնպէս իմա և զմխիթարուԹիչ. զի ոչ ոք գտաւ այնմ նպաստամատոյց. քանզի և ցաւակցուԹիւն նախիշեալ կանանց ոչ իւիք ԹէԹևացուցանէր զցաւ նորա, այլ՝ և ևս սաստկացուցանէր, մանաւանդ ցաւակցուԹիւն մօրն. զի այն առաւել քան զառաւել. ցաւեցուցանէր և տանջէր զխրտ նորա, քան զոր կարէր մխիԹարել. վասն որոյ ասէ:

Ա՛ն ոՒՆԷՒ՝ ԸՆԴ ոՉ ՊՐՊՏԵՑԻ ԸՆԴ ԻՍ, ևՁ: Ա՛յս ակնկատուԹիւն ոչ ցուցանէ՝ ԹէՀ ՆորՆ մեր ոչ գիտելով սպասէր՝ գուցէ լինելի ոք ինքեան տրտմակից, այլ յայտառանէ՝ ԹէՀ ոչ ուներ զայն՝ որում ակնառնելի էր, կամ որ յուսալի էր յայնպիսի պարագայս, որպէս ԹէՀ ասացեալ էր. որք միանգամ յայսպիսի տանջանս մատնին՝ ունին ինքեանց զոք տրտմակից առ՛ի մխիԹարել. ես միայն եմ՝ որ ոչ ունիմ զայն ՛ի մխիԹարուԹիւն անձին. վասն այսորիկ յարՀ զկնի առնելով:

Ե՞ՒՔ ԴԻՒՐԱԽՈՒԹԻՒՆ ԵՒՅ ՈՒՂՂԱԳՈՒՅՆ: Ա՛յսինքն ոչ ոք մատոյց ինձ մխիԹարուԹիւն ՛ի չարչարանս իմ, և ոչ իսկ հայրն յաւիտենական. աշակերտք իմ ԹողԼին զիս, և աղգականք իմ հեռացան յինէն:

Այլ Թէպէտ յաղօԹել ես մերոյ ՛ի պարտիզն հրեշտակ երևեալ զօրացուցանէր զնա, բայց այն ոչ էր մխիԹարել, այլ արտաքին իմն սպասաւորուԹեամբ զյանձնառուԹիւն չարչարանացն իւրոյ կարևոր առաջի դնել. ՛ի վերայ որոյ ասէ վարդան. (՛ի մեկն. օրհ. յակոբայ. ծննն. խԹ. 24.) * հրեշտակ իջեալ զօրացուցանէր զնա, ոչ ԹէՀ զօրուԹիւն ինչ տալով և կամ քաջալերելով, այլ պաշտելով. որպէս փառաւորելն զնոճ հրեշտակացդ և բարեբանելն ոչ է յառնել՛ի փառս նորա և կամ ՛ի բարիս նորա, այլ խոստովանուԹիւն և վկայուԹիւն է՝ ՛ի հրեշտակացդ և՛ ի մարդկանէ օրհնեալ գոլ նմա և փառաւորեալ և բարեբանեալ. նոյնպէս և առընԹեր գոլով չարչարանացն՝ հրեշտակապետ լիջանէր առ նա ամեն նայն հրեշտակօք ՛ի դիմաց հօր և յերեսաց նորա, և յինքեանց սուրբական սպասաւորուԹենէ և պաշտամանց՝ ասէին. զօրաւոր ես դու, հզօր և կարօղ և յաւիտենական. որ ձեռաքար ստեղ-

,, ձեր զամենայն, և մարդկաբար և մարդասիրաբար
,, մեռանիս, յօժարութիւբ յանձն առնուլ զպարտիս
,, յանցանաց ազամային քնութեանս։ Եւ զայս մովսէս
,, առ յօրհնութիւնն յակովբայ. երկիրպագեն նմա
,, ամենայն տղիք ոյ, և զօրացուսցեն զնա ամենայն
,, հրեշտակք ոյ ‖։

Այսպէս և՛ ի ժամ խաչելութիւնէ ւչ միւթարէր զնա մայր նորա՝ որ կայր առ նմա, այլ մանաւանդ որպէս աստուածաբ, յաւելոյր զցաւս նորա՝ ի ցաւոց անտի իւրոց. (զորոց խօսի բարսեղ՝ ի մեկն. մարկ. գլ. ժէ. մինչ՝ ի յարդարակն։) Ահայն աջակողման աւազակն՝ ըստ ոմանց տխտոս կոչեցեալ՝ փոքր մի սփոփանս մատոյց նմա՝ ի ջատագովելն զնա ընդդէմ հայհոյանաց ձախակողման աւազակին, որ կոչիւր դումաքոս, ըստ գրելոյ նախայիշեալ բարսեղ վարդապետի՝ ի մեկնութիւնէ անդ. (Թէպէտ ծարծորեցին՝ ի մեկն. մատ. գլ. լէ. և հաննէ վարդապետ երես. 79. զձախակողմեանն կոչէ կեստաս, և զաջակողմեանն դեմաս.) բայց և միւթարութիւն սորա եղև՝ ի յետին պահու, յորում ժամու յաւելան և տանջիչք նորա՝ տալով նմա զդառնութիւն լեղւոյ՝ ի ծարաւիլ նորուն. զորմէ խօսի՝ ի յաջորդ համարն ասելով։

լէ. Ապա ասէ՝ ի հետաքննել զնոյն լեղւէ. Ահա՝ ի ծարաւ եմ ասէ. Էութիւնն զնոյն ցաւակ։

Որպէս ասանդի յաւետարանին՝ երկիցս մատուցին ոմն մերոյ զայսպիսիս. յառաջնումն լեղւի, և յերկրորդումն քացախ. քանզի գրէ մատթէոս. (ի՛ե. 34. և 48.) Թէ հասեալ՝ ի գողգոթա՝ * ետուն նմա ըմպել գինի ընդ լեղւի խառնեալ. և երբեւ ճաշակեաց՝ ոչ կամեր ըմպել ‖. և ապա յասել ոմն մերոյ. ծարաւի եմ, ոմն՝ ի զինուորացն * էառ սպունգ լի քացախ, ,, խոյլ հարեալ յեղեգան ետ ըմպել նմա ‖. սմին նման գրէ և մարկոս. (ժե. 23. և 36). բայց փոխանակ ասելոյ յառաջնումն գինի ընդ լեղւի խառնեալ, դնէ * գինի զմռսեալ ‖. որով երևի Թէ այն էր զմռսելոյ ինչ ըմպելն. զոր սովորութիւն էր ոմանց՝ մանաւանդ կանանց, պատրաստել առ՝ ի արբուցանել խաչեցելոյ. որպէս զի զօրութիւն ինչ կամ Թմրու-

*Թէ առեալ նոցա անտի՝ ոչ այնչափ զգայցեն ըզ-
ցաւսն։*

Իսկ անօրէնն խաչահանուքն առ՛ի գառնացուցանել զքիմս ան մերոյ՝ խառնեցին՛ի նոյն զլեղի. վասն որոյ և ետրն մեր առ՛ի զգալ զգառնութենն էառ զայն՛ի բերան. բայց ոչ էարբ վասն երկուց. մի՝ զի մի՛ ելիեսցի զօրանալ այնպիսեօք. և միւս և՝ զի մի՛ կարծիս տայէ փութով մեռանելոյ. քանզի որպէս ասէ ծործորեցին. * խոցեալ մարմինն յորժամ քացախ ,, ըմպէ՝ մեռանի. արդ զի մի՛ ասէ յայնմանէ կարծի- ,, ցի՝ ասեն աւետարանիչքն՝ թէ ոչ էառ ‖։ Ոմն ուրեմն միայն զքացախն յիշէ. (իգ. 36.) սոյնպէս և յով- հաննէս. (ժթ. 29.) բայց ընդ նոյն յարելով յաւե- լու և ս ասել՝ թէ խառնեցին՛ի նոյն զլեղի։ Այսու- սիկ հայելով, վասն լեղի տալոյն ասէ։

Ես՛ի ծարաւ էի աբեղացին ինձ քացախ։ Ուր կերակուր ասելով, ոչ է պարտ իմանալ զծաղքելի ինչ տուեալ վասն զքաղցն զիջուցանելոյ, զի լեղին չէ նուէր ծաղքելոյ, այլ զննդարար ինչ վասն զոկիան զօրացուցանելոյ. փոխանակ այսպիսւոյ ասէ եւտուն ինձ լեղի. և միտ բանին է՝ թէ՛ի չարչարանն անդ ոչ եւտուն նմա կերակուր ինչ, այլ փոխանակ կերակրոյ լեղի։ Այն- պէս և փոխանակ ըմպելւոյ մատուցին քացախ. վասն որոյ ասէ։

Ես՛ի ծարաւ էմ աբեղացին ինձ քացախ։ Ցայնքան՛ի ծա- րաւիլ իմում, և յասելն ծարաւի եմ՝ ցինանիք իմ փոխանակ ըմպելւոյ եւտուն քացախ։

Այս ասելով յայտ առնէ զանողորմութենէ խաչա- հանուացն, որ յայնպիսի ծարաւս փոխանակ կաթիլ մի ջրոյ մատուցանելոյ նմա, մատուցին քացախ։ Ի յաւիտենից ոչ եղև լուեալ՝ թէ ծարաւելոյն՝ որ յանհնարին տառապանս էր՝ մատուցեն քացախ. ՛ի քո միայն տեսաւ այս. * նորա է ծով, և նա արար ,, զնա ‖. (սաղ. ղէ. 5.) և՛ի ծարաւիլն ոչ տան նմա ջրուր, զոնէ կաթիլ մի. և այս՛ի ցայլ տալոյ նորա եղև՝ առ՛ի ցուցանել մեզ զսէր իւր, որով ծարաւէր փրկուէ մերում։ Այսմ ծարաւոյ նորա մեք մատուա ցուք՝ զոր խնդրէ, այն է փրկութենէ մեր, և որ ինչ հարկաւոր է փրկութենէ մերում. զի այնմ ծարաւէր,

Ա՛ատուցո՛ւք նմա պհամբերութիւն մեր, ՚ի տանիլն
նեղութենց և վշտաց, ասելով. ընկա՛լ փրկիչ իմ
զայս պիմ համբերութիւն՝ զոր մատուցանեմ ծարաւոյ
քում իբրև զջուր։ Ա՛ատուցո՛ւք և զժուժկալութիւն
հրաժարելեաց՝ եթէ հեշտութենց իցէ և եթէ փա-
ռաց, ասելով. ա՛ռ յինէն ահր զայս պիմ ժուժկալուն
փոխանակ ջրոյ ՚ի զովացուցին ծարաւոյ քո։ Ա՛ատուս-
ո՛ւք և զներել թշնամեաց և պհաշտութիւն ատելեաց,
ասելով. վասն ծարաւելոյ քո ներեմ թշնամւոյ ի-
մում, և հաշտիմ ընդ ատելիս իմ. հաճո՛յ լիցի քեզ
աղաչեմ այս իմ ընծայութիւն՝ որպէս հաճոյ է ծա-
րաւելոց մատուցումն ջրոյ։ Ա՛ատուցո՛ւք և զար-
ատասս մեր՝ եթէ ցաւակցութենէ և եթէ ապաշխա-
րութենէ. եթէ ապառաժացեալ իցէ սիրտ մեր, հար-
ցո՛ւք գաւազանաւ խաչելութենէն քում, և բղխեսցէ
ջուր արտասուաց, և զայն ընծայեսցուք նմա ասե-
լով, ընկա՛լ զարտասուս իմ՝ զոր յապառաժ վիմէ
աստի հոսեցեր խաչիւ քո. ընկա՛լ աղաչեմ, և տո՛ւր
ինձ իբրև ծարաւելոյ զկեղուծն արեան քո. և արբո՛ւ
զիս. ըստ որում և խոստացար ասելով. * եթէ ոք
,, ծարաւէ իցէ՝ եկեսցէ առ իս. և արբցէ ‖. (յովհ.
է. 37)։

Տէրն մեր արձակապէս ասելով՝ ծարաւի եմ՝ սովին
այսու յայտ արար զարձեալ զկրկին տանջանս, զորս
կրեաց ՚ի ծարաւիլն անդ. որոյ մին էր ներքին. քան-
զի ՚ի հեղմանէ արեանն ներքին մատունք մարմնոյն
ցամաքելով պատճառէին ՚ի նմա զտագնապ ծարաւոյ
մեծ. և զի այս ոչ երևէր աչօք, յայտ արար բերա-
նով յասելն՝ ծարաւի եմ. իսկ երկրորդն էր իբր ար-
տաքին. այն է դառնութենէ ճաշակացն՝ որ սաստիկ լի-
նի ՚ի ծարաւօղն. վասն զի ՚ի ծարաւել մարդոյ մա-
սունք լեզուին նորա և քմացն ցամաքեալ գոլով, ա-
ռաւել ձգեն յինքեանս և ծծեն զդառն ըմպելին.
որով և կարի սաստիկ լինի նոցա զգալ դառնու-
թիւն քացախոյ։

՚Ի յիշատակել այլոց աւետարանչաց զայս արբուճիս՝
ոչ ՚ի միջ բերեն զայն վկայութենէ. իսկ յովհաննէս
զինչ ընդ աղօտ նշանակէ, զի գրէ այսպէս. * յետ
,, այսորիկ իբրև գիտաց յն՝ թէ ահա ամենայն ինչ

,, կատարեալ է, զի կատարեցեր գիրն՝ ասէ. Ծարա-
,, ւի եմ ‖. և ապա յաւելու ասել՝ թէ * անդ կայր
,, աման ինչ լի քացախով. և նոցա (այսինքն զինուո-
,, րաց) սպունգ լցեալ քացախով ընդ լեղւոյ . . .
,, մատուցին 'ի բերան նորա ‖. (Յովհ. ԺԹ. 28։)
Այր թէպէտ ներգործութիւնք ոչ գնէ զբան սաղմո-
սին, բայց ասելովն թէ զայս ասաց. * զի կատարե-
,, ցի գիրն ‖, գրով իմանայ զայսր սաղմոսի զբանն։
Այր կատարեցի ասելով՝ ոչ ցուցանէ՝ թէ վասն կա-
տարելոյ զգիրն քացախ մատուցին քեզ, այլ գ՛. մա-
տուցանելոց էին՝ գիրք յառաջագոյն գուշակ՝ն՝ն,
և՛ի կատարիլ իրացն՝ գիրն ևս կատարեցաւ. ուստի
ասէ ծործորեցին. (՛ի մեկն. մատ. գլ. լԹ.) * ոչ
,, զի գրեցաւ արարին, այլ զի առնելոց էին՝ յայն
,, սակս գրեցաւ ‖։
Պատճառ զայսպիսի անողորմ գործ գործելոյ զինու-
ուորաց՝ ոչ էր պակասութի՛ ջրոյ. այլ պակասութիւնն
գթոյ, այն է անգթութի՛ նոցա, ևս և անհոգու-
թի՛, նաև յորդորումն հրէից և դիւաց։ Ասատի քար-
սեղ. (՛ի մեկն. մարկ. ԺԵ.) հայելով յայսպիսի
գործս զինուորաց՝ ասէ. * տան զքացախն՝ ոչ՛ի շի-
,, ջուցանել զծարաւն, այլ յառաւել բորբոքել. և
,, զի տեսցեն՝ թէ՛ի վտանգ կայ ծարաւոն, ապա
,, զոր ինչ տամք (ասեն), ըմպէ. և զի մեծաձայն
,, աղաղակեաց՝ տան զքացախն՝ զի նուազեցի՛ և
,, հատցի՛ 'ի ձայնէն. զի զեռևս կասկածէին. բայց
,, նա որպէս զլեղին վասն ադամայ, նոյնպէս և զք-
,, քացախն վասն եւայի էարբ ‖։ Եւ յաւելու զկնի
,, ասելով. * Եւ քանզի արբուցաք ոչ գառնութի՛,
,, զի խոտորեցուցաք զբնութի՛ս յոչ բնականն՝ ըմպէ
,, զքացախն զ՛ի բնութի՛ ստականեալ ըմպելին ‖։ Եւ
ըստ այսմ խորհրդոյ լեղեաւ նշանակի գառնութի՛ մե-
ղաց՝ զոր մատուցին և մատուցանեն նմա՝ որք միան-
գամ մեղանչեն ընդդէմ սիրոյ նորա. սոյնպէս և քա-
ցախով նշանակի այն կծուութի՛ մեղաց, զոր մատու-
ցանեն նմա՝ որք զկարդ և լոկ մեղանչեն ընդդէմ
անդամոց նորա։
Այնչափ ցայս վայր խօսեցաւ մարգարէն զչարեացն,
զոր պատճեցին Քրիստոսի՛ն ի մերոյ՝ մանաւանդ հր-

բեայք. եւ սակ աստի մինչեւ ՚ի 30 համարն եւսէ զբաբեայն՝ զորս ունելին կրե՛ի հատուցումն գործոց եւ բեանց ըստ հոգեւորին եւ ըստ մարմնաւորին. եւ նախ ասէ։

ՒԺ. Ալ՚ղէյն աեղանւ նոցա առաջէ նոցա յորոգայն, ՚է հատուցումն և՚ է գայլնագղուլե։

Այսպիսի ձեւք բանից, որպէս ասացեալ է մեք այլոլ, ոչ են անիծանոզական մաղթանք չարի, այլ յայտարարական բանք եղբ գուշակութիք այնր ամենայն՝ որք հասանելոց էին ՚ի վերայ հրէից. զի որովհետեւ նոքա փոխանակ այնչափ բարերարութեցն ոյզ զայնպիսի չարիս հատուցին նմա, ոճ եւս իւրով արդարութիք ունէր հատուցանել նոցա ըստ չարեաց նոցին. որոյ զմեծն և զերեւելին յառաջ դասէ աստ մարգարէն ասելով։

Ալ՚ղէյն աեղանւ նոցա առաջէ նոցա յորոգայն, ՚է հատուցումն և՚ է գայլնագղուլե։ Որովհետեւ տիրապետական հրէայք սեղան դառն պատրաստեցին ՚ի մերոյ, մատուցանելով նմա կերակուր և ըմպելի՝ զլեղի և զքացախ, արդարիրաւամբք բարելից սեղանք նոցա, զորս պատրաստեալ էր ոճ, դարձան ՚ի դառնութիե նոցին։

Նակ այսոքիւք սեղանովք իմացեալ լինին նախ ըստ նկարագրին՝ սեղանք զոհից և խնկոց և առաջաւորութեց. և կամ զոհք, և նուիրմունք նոցա, և այլ ամենայն ծէսք և արարողութիք ըստ այլևայլ կարգի. յորս ամենայն ինչ իբր բարեհամ կերակուրք էին նշանակիչք բազմազիմի ծառուկ խորհրդոց, որք կատարելոց էին ՚ի ժամանակի իւրեանց։

Նայց հրէայք ոչ կարացին ծասքել, և առնուլ զճաշակ նոցին. այլ խաճին միայն. զի զարտաքինն և եթ ունելով յայն յարեցան իբր յոտաղ. և յարտաքինն ըմբռնելով ոչ հայեցան զգուշութիե ՚ի ներքս, և ոչ հանին զծածկեալ խորհուրդն ՚ի ներքուստ անտի, ոչ ոք վան որոգայթ եղեն նոքա ինքեանց։ Նա իբրև առին զայնս հեթանոսք և դատարկացուցին զոր ՚ի ներքս՝ ինքեանք կուրօրէն անկան ՚ի ներքս անդ իբր ՚ի դատարկ տեղի. և պաշարեցան արտաքնովք, կացեալ ՚ի խաւարի դատարկաձեռն. որպէս որ անկա-

նէից յորոգայթ. և մինչև ցայսօր ժամանակի նատին
՚ի ներքին դատարկութիւնէ՝ ոչ ըստ բանի լուսաւորու-
թիւն որ անդ, զի այն էանց ՚ի նորս. այլ ըստ բանի
խաւարամածն լինելոյ՝ այսինքն ըստ անհաւատութիւնէ,
յորում և ըմբռնեալ կան իբրև որսք յորոգայթի:
Այս ահա այս է՝ զոր ասէ Եղիշէն սեղանի նոցա առաջի
նոցա յորոգայն. յոր յաւելու առաքեալն և զբառդ որս.
(Հռոմ. ԺԱ. 9:)

Այս դարձեալ տեսանելով նոցա զայն ամենայն առա-
ջի իւրեանց՝ համարեցան թէ նոքիմբք ևեթ ունէին
մեծանալ, զի գիտէին՝ թէ յայլ տուաւ նոցա այն ա-
մենայն. բայց ոչ իմացան՝ թէ նոքին փոխարկելոց
էին յայլ ինչ. և զի կարծեցին՝ թէ այնպէս միանալոց
էցեն, այսու համարմամբ խաբեցան. և եղև նոցա
այն ամենայն պատճառ որսացեալ լինելոյ ՚ի պատ-
րանս խաբէութեան. մինչև անհնարին լինել նոցա ա-
զատիլ անտի. զի ըստ ամենայնի պաշարեալ է զնոսա
կուրութիւն, զոր ինքեանք համարին լուսաւորութիւն,
և արդարութիւն այ: Այր որ ասէ գէորգ վարդապետ (՚ի
մեկն. եսայ.) * գրեացուք թէ հինգհոսաց խաւարն
„ ՚ի մտաց կուրութիւն է, հրէից ուստի արդեօք. ու-
„ սուցանէ պօղոս ասելով՝ թէ յայնմանէ է, զի զիւ-
„ բեանց արդարութիւնն խնդրեցին կացուցանել. և
„ ոչ կամեցան ՚ի քո հաւատով արդարանալ. և այն-
„ պէս կաշկանդեալ կապեցան, մինչև ոչ կարել կան-
„ գուն կալ, այլ նատին իբրև յանհնարին բանդի ||:
Նորկրորդ՝ այսու սեղանով նշանակին ծածկին քաղցր
խնամք, որով մատակարարէր ազգին հրէից զհայ-
րապետութիւնքն իւր ՚ի բազմապատիկ իրս. մին-
չև զարմանալի և նախանձելի լինել նոցա առաջի ա-
մենայն ազգաց: Այլ իբրև ապերախտ գտան նոքա
առ այս ամենայն, ամենայնին դարձաւ նոցա ՚ի դառ-
նութիւն, և այն եղև նոցա ՚ի հատուցումն. և յայս
միտ ասէ. * եղիցին աչքանդ նոցա առաջի նոցա...՚ի հա-
պաշտօն ||. այսինքն ՚ի հատուցումն դառնութիւնէ. քան-
զի յանարժան գտանիլ այնմ, այսմ գտան արժանի.
զի որ անարժան առնէ զինքն լուսոյ՝ նովքին արժանի
առնէ զինքն խաւարի:
Նորրորդ՝ այսու սեղանով նշանակին կատակարանքն

այ, այսինքն են պատգամք և օրէնք, յայտնութիւնք Նահապետաց, և գուշակութիւնք մարգարէից. այս կատարանք արդարև ամենալի սեղանք էին, բայց դարձան նոցա ի գայթակղութիւն. զի ըստ պօղոսի (ք. կոր. գ. 14—16.) առագաստ կուրութիւն ունելով ի վերայ սրտից իւրեանց՝ ի մտանել նոցա կուրութիւն ի կտակարանն՝ սահեցան ըստ ասելոյ նորին իսկ առաքելոյ. (հռոմ. ժա. 32.) և գայթակղեցան առ վիմին այսինքն առ քրիստոս, որ է ասել. փոխանակ ճանաչելոյ և ընդունելոյ նոցա զքս ի ձեռն վկայութիւն կտակարանաց, ծեքելով զնոսին, կամ թիւր իմանալով զայնս՝ գայթակղեցան. այսինքն է հեռացան ի նմանէ, և խոտեցին զնա. որով և ինքեանք խոտեցան և կորեան. և այս յայնպիսի ժամանակի՝ յորում առ իւրեանս ունէին զնա. և զի զոր ունէինն՝ մերժեցին, և զոր գտինն՝ անարգեցին, վասն որոյ և ըստ գրելոյն պօղոսի. * եւ նոցա ասծ հոգի յիմարութ,, ենէ. աչս՝ որովք ոչ տեսանիցեն, և ականջս՝ որովք ,, ոչ լսիցեն, մինչև ցայսօր ժամանակի: Եւ գաւթ ,, ասէ, եղիցին սեղանք նոցա յորոգայթ, և յորս, և ,, ի գայթագղութիւն, և ի հատուցումն նոցին ‖.

(հռոմ. ժա. 8—10:)

Այն այս բան՝ կարէ հայել մանաւորապէս և յայն թշուառութիւն հրէից, զոր հասուցին նոցա հռոմայեցիք. զի ի գայթակղիլ նոցա ի վէմն կենդանի, և ի պարծիլն ի սեղան իւրեանց՝ յետ երեսունևեօթն ամաց ի նմին տօնի՝ յորում անարգեցին զվէմն՝ հասին հռոմայեցիք. և հատուցին նոցա սեղան արեան և ապականութիւն:

Ակն գիտելի է՝ զի զոր մեք բաժանաբար եդաք զայսբան ըստ երից, մարթ է միանգամայն և աւնուլ. որով և միտ բանին լինի այս՝ թէ որովհետև հրէայք անարժան կացուցին զինքեանս այնմ ամենայնի՝ զոր եցոյց ասծ առ նոսա, մերժեցան ի նմանէ, և ամենայն ինչ նոցա դարձաւ ի դառնութիւն. և որ ծայրագոյնն է, այն սքանչելի ասծային լուսաւորութիւնք դարձան նոցա ի խաւար. որով և ոչինչ նշմարեն յասծայինն. ամին իրի յարէ զկնի և ասէ:

լիե. ՈՎ ասէ ցնա, ել ի քէ տեսցեն. և ելիցէ ցնա հանապազ կորացո՛:

Ո՞ր օրինակ՝ ի խաւարել աչաց մարմնոյ ոչ տեսանէ ինչ յերևելեացս, նոյնպէս և՝ ի խաւարել աչաց հոգւոյ այսինքն մտաց, ոչ ևս տեսանէ ինչ՝ ի հոգևորացն. և յոչ տեսանել մտացն՝ կամքն ևս որ յամենայնի պՀետ ելթայ մտաց՝ մոլորի. արդ որպէս տեսանի յաւետարանի, (յովՀ. ԺԲ. 35—46.) որովՀետև՝ ի գալ լուսոյ յաշխարՀ՝ Հրէայք ոչ ընկալան զնա, և զպալատիս ևս ծածկեցին զերեսս նորա. (մարկ. ԺԳ. 65. և ղուկ. ԻԲ. 64.) և՝ ի բանիլ երեսաց նորին՝ ի յարուԹիե՝ փակեցին զաչս իւրեանց, Թոյլ ետ նոցա ՈՀ՝ զի մնասցեն խաւար՝ ի խաւարի. վասն որոյ ասէ:

ՈՎ ասէ ցնոցա, ել ի քէ փեսցեն: Այս խաւարումն Հրէից սարսափելի էին եղև. նախ՝ զի՝ ի մեղս ըմբռնեալ գոլով՝ ի նոյն մնացին, որով և խաւարեցան, այսինքն կուրացան՝ ի միտս. զի * ոգիք ըմբռնեալ ,, ՆԵՒԱԼՔ՝ ի մեղս՝ ի մտաց ևս անկանին ‖. որպէս ասէ ծործորեցին (՝ի մեկն. մատ. գլ. ԻԸ:) Նրկրորդ՝ զի ունելով զաչս բաց՝ կացին մնացին՝ ի խաւարի, և ոչինչ տեսին և ոչինչ զգացին. ուստի և ՀԵԹանոսք՝ ի վերայ Հասեալ յափշտակեցին զսեղանս նոցա ըստ նախակարգեալ մեկնուԹե. իսկ ինքեանք որովՀետև ոչ տեսին և ոչ տեսանեն զայն, կարծեն Թէ դեռևս առաջի իւրեանց կայ այն ամենայն՝ զորս ունէին: Նր զի՝ ի հոգևորաց ինչ ոչ տեսանեն, կամք և ախորժակք նոցա Հանապազ՝ ի մարմնաւորս բերին. քայց՝ ի նոսին ևս տառապին և ձնշին. և զայս յայտ առնէ մարգարէն յաջորդ բանիւն ասելով:

Ել՝ ընկնուանա նոցա հանապազ կորացո՛: Այս բան մեկնի ըստ երկուց նմանուԹեց. ըստ առաջինն նմանուԹե ասելով՝ յայտ է Թէ յանկանիլ ուրուք՝ ի վերայ երեսաց իւրոց՝ եԹէ հզօր ոք ուժգին կոխեացէ՝ ի վերայ Թիկանց նորա՝ ոչ կարէ անկեալն՝ ի վեր հայիլ կամ այլուր շարժիլ. և ա և կրէ զայս յուժգնուԹենէ ատից կոխողին: Այսպէս պատահեցաւ հրէից, զի յանկանիլ նոցա՝ ի վերայ երեսաց իւրեանց յերկիր՝

այսինքն՝ ի յարիլ նոցա յերկրաւոր կեանս, և՝ ի մարմ
նաւոր ազատութի՛ն, քարկուքի՛ն այլ կոխեաց՝ ի վե-
րայ նոցա. այսինքն արար՝ զի կոխան լինին նոքա՝ ի
պատուհասից, և ինասցեն այնպէս՝ որպէս անկանն,
որով ոչ ևս կարեն հայիլ՝ ի վեր յերկնայինան, և ոչ
կարեն շարժիլ՝ ի լաւ անդր, և կան տառապեալք և
տուայտեալք. ուստի և ասի թէ թիկունք նոցա միշտ
կան կորացեալ ընդ ոտիւք քարկուքի՛ն այ. և այս՝ ոչ
եթէ ոմանց՝ ի նոցանէ, այլ ամենեցուն. յոր միտ
իգնատիոս վարդապետ (՝ի մեկն. ղուկ. խա. 22.)
յաւելու՝ ի սոյն բան և զբառդ առհասարակ, յասելն.
* զթիկունս նոցա հանապազ առ հասարակ կորացո՛ ։
() սոյն զայս ոլբայր և սգայր երանելի առաքեալն,
մինչև յանձն առնուլ նմա եթէ հնար էր՝ կրել զպա-
տիժ նոցա յաշխարհի աստ. որպէս զի մարթասցին
նոքա ելանել յայսմ կործանմանէ. և զայս բարուք
իմասցիս՝ եթէ ընթերցցիս զթուղթս նորա մանա-
ւանդ զգրեալն առ հռոմ. (գլ. ժ. Ճ. և ժա. ծայ-
լէ՝ ի ծայր.) ուր՝ ի մէջ բերէ և զայս բան սաղմոսի
՝ի գլ. ժա. համար. 10 ։

Ի՛ սա երկրորդ նմանութի՛ն յայտ է թէ՝ ի բառնալ ու-
րուք՝ ի վերայ թիկանց այլոց զծանր բեռն՝ և կամ՝ ի
հարկանել զնոյն բրօք՝ կորացուցանէ զթիկունս նորա.
այսպէս արար և առնէ ամ ընդ հրէայս. զի թոյլ
տայ հանապազ բառնիլ՝ ի վերայ թիկանց նոցա ծանր
բեռանց խտրութի՛ն հին օրինաց, և յաձախիլ գանից
այսինքն պատժոց, ևս և կուրութի՛ն, անհաւատուի՛ն,
արհամարհութի՛ն, գերութի՛ն, տատամսութի՛ն և այլ
բազմապատիկ թշուառութեց։ Եւ զի ցուցցէ մար-
գարէն՝ թէ ձշմարտիւ՝ ի բարկութէն այ եղև այս
հրէից, յարէ զկնի և ասէ ։

Ի՛ջ. Ի՛ բնէս՝ ի վերայ նոցա զբաթութի՛ն ամ. արհամարհութի՛ն
բաւ՝ ի վերայ նոցա ։

կացեալ բարկութիւնէ, և երբեմն փոխանակ գործոց այնր սաստկութենէ, ըստ որում բարկութիւնն այլ ըստ մեզ խօսելով՝ ի սաստկանալն զեղուս զպատիժս։ Այդ յայս բան բառդ ԷՒՒՒՒՒՒՒ՝ յառաջնումն հատուածի դնի փոխանակ գործոց բարկութենէ, որպէս և սըրտմտութենէն. իսկ յերկրորդումն դնի փոխանակ արդար վրէժխնդրութենէ, յասելն։

Ամէն՝ ի վերայ նոցա պէտքՒՒՒՒՒՒՒ ՒՒՒ. արդարՒՒՒՒՒՒՒ ԷՒՒՒՒՒՒՒ ՒՒՒ. Հասցէ՝ ի վերայ նոցա։ Այսինքն տացես նոցա զայնպիսի պատիժս, յորոց եթէ կամիցին փախչիլ, սրտմտութիւն բարկութենէ քո, այսինքն է՝ մեծագոյնն պատժոց հասցէ՝ ի վերայ նոցա։

Նայց արժան է հայիլ յայն զի ոչ առ մարգարէն, տացես նոցա ևՒ. այլ՝ արկցես՝ ի վերայ նոցա զբարկութիւն քոյ. որով ցուցանէ զեղուլ պատժոցն. և յաւելլովն զբառս ՒՒՒՒՒՒՒ՝ ցուցանէ զաստկութիւն և զմեծութիւն պատժոցն. ըստ որում այն պատիժք ոչ էին գործք բարկութենէ մարդոյ, այլ բարկութենէն այ, զոր յայտնէ բառդ ՒՒՒՒՒՒՒ։

Նակ թէ ընդէր եղև նոցա այսպէս, առաջի դնէ մարգարէն զպատճառն՝ ի համարն 28. զոր առեալ պօղոսի բացայայտագոյնս՝ ի մէջ բերէ առելով, թէ վասն զի * զտէրն յիս տպանէին, և զմարգարէսն, և ,, զմեզ հալածեցին, և այ յաչաց ելլին, և ամենայն ,, մարդկան հակառակ եղեն. և արգելուին զմեզ ,, խօսիլ հեթանոսաց՝ զի ապրեսցին. զի կատարեսցեն զմեզս իւրեանց յամենայն ժամ. քանզի հասեալ է՝ ի վերայ նոցա բարկութիւն մինչև ի վախճան։

(ա. Թես. բ. 15. և 16։)

Այդ այսր բարկութենէ այ բազում եղեն ներգործութիւնք առ հրէայս. որոց գերիւն եղ մարգարէն՝ ի վերայ նոցա. երկրորդ՝ զխաւարիլ աչաց նոցին, և երրորդ՝ ընդունելն նոցա յայ հանապազ. և երեցունցս այսոցիկ դնէ մի մի յաւելուած՝ ի յաջորդ համարսդ այլով կարգաւ. հայելով յառաջինն՝ ասէ՝ ի համարն. 30. * ընդդեմ նոքա՝ ի դարուն են։ հայելով յերկրորդն՝ ասէ՝ ի համարն 29. * դիր զմեզ՝ ի վերայ ,, մեղաց նոցա են։ իսկ հայելով յերրորդն՝ որ

ըստ մարմնաւորը պատժոյ՝ ասէ՝ ի յաջորդ համարն։

ԼԵ. Աշէղն բնակուսէ՛ս նոցա աւերակ. և՝ ի չարչս նոցա ոչ էջէ՝ որ բնակէջէ։

Այս պատիժ համեմատութիւն այլոց պատժոց հրէից թէպէտ և թեթև պարտի համարիլ, բայց համեմատութիւն բարուց նոցա՝ մեծ է քան զամենայն պատիժս. զի նոքա ժառանգութիւն սեփական երկրի և բնակութիւն յարկաց իւրեանց համարէին ունել զերանութիւն՝ ի վերայ աշխարհի. ուստի և զրկիլ նոցա անտի անհնարին վիշտ էր նոցա. բայց քանզի պղծեցին նոքա զայն երկիր՝ ոչ միայն ինքեանք վտարեցան անտի, այլ և բնակութիւնք նոցա՝ որք էին յերկրի անդ՝ յաւեր դարձան. վասն որոյ ասէ։

Աշէղն բնակուսէ՛ս նոցա աւերակ. և՝ ի չարչս նոցա ոչ էջէ՝ որ բնակէջէ։ Այսինքն քաղաքք նոցա յորս բնակէին՝ աւերեսցին և լինիցին աւերակ իբրև անապատ ամայի. մինչև ոչ ինաւ՝ ի նոսա յարկաց, յորս լինիցի մարդոյ բնակիլ. որպէս և եղեն իսկ յաւուրս վեսպասիանոսի և տիտոսի. զի ամենայն բնակութիւնք նոցա աւերեցան, և տունք նոցա առ հասարակ հուրբ կիզեցան, և յերևելի քաղաքս նոցա մանաւանդ յերուսաղէմ ոչ մնաց քար՝ ի քարի վերայ որ ոչ քակտեցաւ ըստ գուշակելոյ նմա մերոյ (ղուկ. ԺԹ. 44։)

Զի որք յետոյ վերստին շինեցան՝ նոքա էին հրէից, այլ այլոց և վասն այլոց, փոխանակ զի անարժան գտան յաղագս ոչ ձանաչելոյ զժամանակ այցելութիւնն իւրեանց, և յաղագս մերժելոյ յինքեանց զփրկիչ իւրեանց, և հալածելոյ զնա. և յայս իսկ յարէ մարգարէն զկնի և ասէ։

ԼԶ. Զի զնո՛ւ դուռն հարեր, հալածեցի՛ն. և՝ ի չէր դո՛ւռն հարեալ՝ եմո՛ց յաւելի՛ն։

Այրն երկնաւոր բարկացեալ՝ ի վերայ ազգի մարդկան՝ հանդերձեալ էր հարկանել զամենեսեան առ հասարակ, և մատնել՝ ի յաւիտենական տանջանս վասն մեղաց նոցա. տեսեալ ասպա զի որդի իւր միածին յանձն առեալ զմեղս մարդկան՝ եւ ընդառաջ բարկութեանն իւրոյ, փոխանակ հարկանելոյ զմարդիկ՝ եհար

զսրդին, և մատնեաց զնա ի մահ. որպէս գրեն մարգարէքն (եսայի. ծ֊գ. 4—8։ և զաքար. ժ֊գ. 7. և այլք։)

Ալ. սոյն յայս հարուած անձնասմատն Ովեթան հրէայք, և եղեն իւրեանց չարութիւնքն գործել ամօթալին բարկութիւն. և զոր թոյլ եւս ամ՝ նոքա անզգամութիւնք կատարեցին, անօրէնութիւնք հալածելով զսրդին նորա. վասն որոյ և պարտաւոր գտան այնչափ պատժոց. զի թէպէտ և պարտ էր լինել այնոր հարուածոյ և հատանման, բայց որպէս ասաց Տէրն, վայ մարդոյն՝ յոյր ձեռն լինիցի. զի զոր ամ իրաւամբք կամէր՝ նոքա ա. նիրաւութիւնք կատարէին. սմին իրի ասէ։

Ով է զոր դուն հարիր, հալածեցէն։ Կամի ասել. այս ա. մենայն պատիժ զոր առաջի եդի վասն հրէից, իրաւամբք հասանելոց է նոցա. վասն զի ի կամիլդ հարկանել զիս՝ նոքա ինքնին ձեռն արկին իս, և չարաչար հալածեցին զիս. և ամենևին անողորմ գտան առ իս՝ մինչ և ի խաչ ևս հանին. և զայս ցուցանէ յաջորդ բանիւն ասելով։

Եւ ի վեր ցոյց էմոյ յաւելին։ Այսինքն յետ չարաչար վիրաւորելոց զիս, որով յանհնարին ցաւս մատնեցին զիս, յաւելին և զայլ վերս ցաւոց. վասն զի յայտ է թէ ասն մեր յետ որոյ չարաչար գանեցաւ յատարանն պիղատոսի՝ մատնեցաւ վերստին ի ձեռս հրէից. ըստ այնմ. * և զմ մատնեաց կամաց նոցա ||. և նոքա տեսեալ զհարուածս նորա փոխանակ խնայելոց ի նա՝ ածին ի գողգոթա, և ի խաչ հանին զնա անդ. և այնու յաւելին զմահ խաչի ի վերս ցաւոց նորա, և բնաւ չթողին զնա հանգչիլ. բայց եթէ որպէս գրէ նաւում". հէ. յորժամ զգործն սպանմանն պատրաստեցին նմա։

Յաւելին և զբանս նախատանաց և թշնամանաց, հայհոյանաց և զկծանաց՝ յորժամ կախեալ կայր զխաչին։ Եւ յետ մեռանելոց նորա եւս ոչ խնայեցին ի նա, այլ խոցեցին զկողս նորա ձեռամբ զինուորի։ Եւ եւս յետ յառնելոց նորա ի գերեզմանէ կամեցան յաւելուլ ցաւս, համբաւելով զնա գողացեալ։ Յաւելին գարձ եալ զցաւս ի նմա՝ հալածելով զմարմին նորա, այսինքն զեկեղեցի նմա։

Խորհրդաբար՝ ասէն մեր որ առեալ էր զվերս մերս այլ
ինքն զմեղս մեր, կրեր և զցաւ և զտրտմութիւն ի
վերայ նոցա, առ ի բժշկել զայնս. իսկ հրէայք յա-
ւելին յայն և զչարչարանս և զմահ և զնախատինս։
Պարձեալ՝ յաւելին զտառապանս ի վերայ նորա ա-
ռաւել քան զորս գուշակեցին մարգարէքն, և ա-
ռաւել քան զոր կարէին և կամէին։ Նա զի զայս ա-
մենայն ի վերայ միմեանց դիպեցին՝ այնու իսկ յաւե-
լին և զմեղս իւրեանց ի վերայ մեղաց առաջի ՚այ.
ամին իրի ասէ մարգարէն։

ԼԹ. ՊԴէր ղեղս ի վերայ ոեղայնոցա պէ ի Տիցէն յարդո-
ցուԼԷ ՀՈ։

Նորակի մարթ է ասել, թէ ահա դնէ զմեղս ի վե-
րայ մեղաց մարդոյ. ոի՝ ըստ անվրէպ հաշուելոյ զմե-
ղն զորս գործեն մարդիկ. զի ի մեղանչել մարդոյ
և ի դիզել նորա զմեղս ի վերայ մեղաց, (ըստ մե-
ղ խօսելով) ահա զամենայնն որպէս թէ գրէ ոի զկնի
միոյ, և ոչ զմին առնէ անտես. վասն որոյ և ասէ
դնել զմեղս ի վերայ մեղաց մարդոյ, ոչ զի ինքն դնէ,
այլ զի զեղեալն ի մարդոյ՝ թուէ իբր առաջի իւր
առնելով։ Նորկրորդ՝ ըստ պատժոյ մեղացն. իբր զի
ըստ մեղացն դնէ ահա պատիժս ի վերայ մեղաց. և
ըստ այսմ յասելն աստ, դիր զմեղս ի վերայ մեղաց
նոցա, բառդ ՌԷՀ յառաջնումն առեալ լինի փոխանակ
պատժոց. իսկ յերկրորդումն փոխանակ նոյն իսկ ա-
նօրէնութեան։ Նորրորդ՝ ըստ մատնելոյ զմարդն ի ձեռս
կամաց իւրոց. իբր զի տեսեալ ՚այ թէ մարդն ոչ ան-
սայ լուսաւորութեամբ ընորհաց, ևս և ներքին և արտա-
քին ազգարարութեաց, այլ փոխանակ անսալոյ՝ չարաչար
վարի նաքօք, և մերժէ զնոսին, մատնէ զնա ի ձեռս
կամաց նորա, և գրեթէ թողու զնա ի ձեռաց իւրոց
կործանիլ մեղաց ի մեղս, կամ դիզել զմեղս ի վե-
րայ մեղաց. և այս է սարսափելի ինն պատիժ, զի է
պատժել զմեղս մեղօք։ Ի՝ սա այսոցիկ երբեակ տար-
բերութեանցդ իմացեալ լինի այս բան՝ յասելն։
ՊԴէր ղեղս ի վերայ ոեղայնոցա։ Կամի ասել. որովհետև
չարաչար անօրինեցան առ իս հրէայք, և չարութիւնք
մեղան յիս, դու ևս թողեր զնոսա ի ձեռաց քոց,

որով և դիզեցին նոքա զմեզս ի վերայ մեղայ առաջի քոյ. այլ դու որ զամենայն տեսանես՝ ամենայնի այնոցիկ ունիս պահանջել զհամարս, և վասն ամենայնի պատժել զնոսա և դատապարտել. որով ոչ ևս լինի նոցա ունել մասն և բաժին ընդ հաւատացեալս իմ. և զայս յայտ առնէ յաջորդ բանիւն ասելով։

Ը. Ընդէպն նոքա ի դպրութէ ցոյժն կենաց և ընդ արդարս ոչ գրեցին։

Որպէս բազում անգամ ասացեալ է մեր, այսպիսի բանք ոչ են մաղթողականք չարի, այլ մարգարէական յայտարարութիւնք այնր որ լինելոց է. ապա թէ ոչ՝ անբարեպաշտ ոգւոյ է զայսպիսիս մաղթել վասն թշնամեաց. զի ի վերայ նոցա արժան է աղօթս առնել և ոչ թէ զայսպիսիս ասել. մանաւանդ զի այս բանք ասին ի բերանոյն քրի՝ որ եկեալ էր ոչ ի ջնջել, այլ ի կեցուցանել. վասն որոյ ոչ եթէ կամելով ըզջնջիլ թշնամեաց իւրոց աղաչէ, այլ զի ջնջելի էին նոքա, զայն յայտ առնէ ասելով։

Թ. Ընդէպն նոքա ի դպրութէ ցոյժն կենաց. և ընդ արդարս ոչ գրեցին։ Ա՚ռ բարւոք իմանալոյ զայս բան՝ գիտելի է՝ զի դպրութի կենաց կամ ըստ երբ՚. և ըստ այլոց դպրութի կենդանեաց ըստ այլևայլ կարգաց մտածէ. այսինքն ըստ մարմնաւորին, ըստ հոգևորին, և ըստ աճական գիտութիւնք. ըստ մարմնաւորին՝ դպրութիւն կենաց կամ գիր կենաց ասէր նախ համարագրութիւն որդւոցն իսրայէլի՝ յորում գրեալ լինէին անուանք նոցա՝ որք միանգամ էին յիսրայէլէ և պաշտէին զնա։ Ա՚յս սովորութիւն եմուտ առ նոսա յայնմանէ՝ զի հրամայեաց նա մովսէսի ունել զհամար ժողովրդեանն

ըստ իւրաքանչիւր տանց. * զի մի լինիցի ասէ ՚ի նո-
„ սա մահ ‖. (ելից. Ը. 12: և Թուոց. ա. 2: և ին.
2): Այսպէս միտ մեկնեն ոմանք զայն բան եզեկիէլի.
(ԺԳ. 9.) յասելն ցյ. * ՚ի խրատու ժողովրդեան
„ նմոյ մի կացցեն, և մի ՚ի գիրս տանն իսրայէլի
„ գրեսցին ‖: Եւ այս գիրք կոչի՝ կենաց, զի որք
գրեալ լինէին ՚ի նմա, համարեալ լինէին որդիք ցյ,
կամ կենդանի առաձ և արդար, և ձայն խրատիր զնո-
սա իբրև որդիս, և ոչ մերժէր որպէս զապստամբ ծա-
ռայս: Եւ այս միտ յայտ է՝ թէ հրէայք անխրատք՝
խափառ ջնջեալ են ՚ի գրոց անտի, և նոյն իսկ գիրք
ազգահամարի նոցա ևս ջնջեալ են. և ոչ ևս գրեա-
ցին յայն գիր իբրև արդարք ՚ի մէջ արդարոց:

Երկրորդ դպրուն կենաց կամ գիր կենաց ասի ըստ
մարմնաւորին գիր ուղղութեն. այն որ յիշի յեսուայ
(Ժ. 13. և Ը. Թագ". ա. 18). յորում գրեալ լի-
նէին ուղղութիք կենաց՝ յիշատակելով զմեծամեծ
գործս երևելի անձանց, կամ ժողովրդեանն իսրայէ-
լի, ըստ ոյ կամ առ յոյ արարեալք: Եւ այս միտ
յայտ է թէ ջնջեալ են որդիքն իսրայէլի ՚ի գրոց ան-
տի, և ոչ ևս գրին ՚ի դպրութե անդ:

Երրորդ դպրուն կենաց ասի ըստ մարմնաւորին նոյն
իսկ կեանքն. զի ՚ի նմա գրին և ջնջին բարւոյ կամ
չար գործք մարդոյ: Վարձեալ՝ զի ՚ի յղանալ մար-
դոյ որպէս թէ գրի ՚ի կեանս, և ՚ի մեռանիլն ջնջի:
Եւ դարձեալ՝ զի մարդս ծննդեամբ գրի ՚ի թիւս
կենդանեաց, և մահուամբ ջնջի ՚ի թուոյ նոցա. և
զի կեանքն է յոյժ, վասն որոյ ոյ ընծայի այս դպրու-
թիւն: Եւ ըստ այսմ ջնջելն զոք ՚ի դպրութէ կենաց՝
է քառնալ զնա մահուամբ ՚ի կենաց. իսկ ոչ գրելն ՚ի
նոյն ընդ արդարս՝ է ոչ յարուցանել ընդ արդարոց՝
այլ դատապարտել:

Ըստ հոգևորին դպրութե կենաց ասի նախ ընտրու-
թիւն ոյ, որով առնու ած զոք ինքեան գործի յայս
կամ յայն պաշտօն. և որպէս թէ գրէ զոք յայս ինչ
կամ յայն, զտրօրինակ ՚ի մարգարէութե, յառաքե-
լութե, յառաջնորդութե, ՚ի հրաշագործութե եւն.
յոր միտ երևի ազաչել Մովսէսի զած (ելից. ԼԲ. 33.)
ջնջել զինքն ՚ի դպրութէն, յոր գրեցաւ, այսինքն ՚ի

քաց թողուլ զնա ՚ի գործոյ անտի առաջնորդութենէն, և առնել զնա իբրև զայլս. իսկ այլք ասեն թէ ըստ բառնալոյ ՚ի կենաց աղաչէր նա զմահ։ Արդէս և զի՛ն՝ ըս այսմ ևս յայտ է թէ հրեայք ջնջեցան ՚ի գրոց կենաց, իբր զի ոչ ևս ունին զառաջնորդութենէ կենաց, որ հոգևոր կամ զմարգարէութենէ՚ի հազար ուրիք հաւր ամաց հետէ, որպիսի էր երբէք լեալ ՚ի նոսա. և ոչ ևս վեր առեալ լինին յայն։

Նշ կրկրոյդ՝ գրոց կենաց ասէ ըստ հոգևորին հաղորդակցութենէն ընդ արդարս յաստի կեանս, կամ հաղորդութենէն եբց, և կամ միաբանականութենէն ընդ անդամս եկեղեցւոյ. ՚ի մէջ որոց իբրև ՚ի մէջ կենդանի գրուածոց համարին լինիլ որք կանն յեկեղեցւոջ, և համարին ջնջիլ որք մերժին յեկեղեցւոյ. յոր միտ մեկնեն ոմանք զբանն յովհաննու (՚ի յայտ. գ. ե.) յասելն, *ոչ ջնջեցայ անուն նորա ՚ի գրոց ,, կենաց ‖։ Նոյնպէս և զբան պօղոսի. (փիլ. գ. ե.) յասելն, *որոց անուանք են ՚ի գրոց ,, կենաց ‖։ Ըստ այսմ իմացեալ՝ յայտ է թէ հրեայք ջնջեցան ՚ի հաղորդութենէ եբց եղելոց ՚ի հնումն. և ոչ կրեցան ՚ի հաղորդութեն եբց եղելոց ՚ի նորումս։ Ըստ ճշմարիտ գիտութենէն այլևայլ օրինակաւ մտածէ գրոց կենաց. մի՝ ընդհանրապէս՝ որ է նոյն իսկ ընդհանրական գիտութենն ՚այ, յորում գրեալ կան այսինքն տեսանին բարիք և չարք, եթէ անձինք և եթէ գործք. յոր միտ ասէ սաղմոսերգուն *զանգործս իմ տեսին աչք քո, և ՚ի գիրս քո ամե- ,, նեքեան գրեցան ‖. (ՃԼԹ. 16)։ Ըստ այսմ ջնջելն ՚այ զոք ՚ի գրոց կենաց՝ է ոչ ևս տեսանել զնա բարի, կամ ոչ ևս տեսանել զգործս նորա հաճոյ առաջի իւր։ Եւ յայս միտ ոչ ևս տեսանէ ՚ած հաճոյ առաջի իւր զհրեայս և զգործս նոցա. և ոչ ևս գրէ վերստին, այսինքն թէ՝ ՚ի կալ նոցա այսպէս ոչ հաճի տեսանել զնոսա բարի։

Նշ կրկրոյդ՝ իմացեալ լինի մանաւանդ գիտութենն ՚այ, որ յանդիման առնէ զորդիս մարդկան ըստ արդար վիճակի աստի կենաց, կամ յանդիման առնէ զարդարս ըստ արդարութենէ զոր ունին յաստի կեանս, զոր և կարեն կորուսանել, որով և ինքեանք կորնչին.

և ըստ այսմ ջնջելն այլ զոք ՚ի դպրութէ իւրմէ կե-
նայ՝ և թողուլ զնա յարդարութէ անտի, զոր տեսա-
նէր ունել նմա. որպէս արար ընդ Հրէայն, և ոչ ևս
գրեաց զնոսա ՚ի նոյն վերստին. այսինքն թէ ոչ ևս
ետես զնոսա յարդարութէ։

Նշորդ՝ իմացեալ լինի թէ ական նախատահմանութիւն
այլ, յորում գրեալքն կարեն ջնջիլ յոչ կատարիլ թէ-
ուէն. զորօրինակ ՚ի նախատահմանելն այլ՝ թէ փըր-
կեսցէ զյուդա՝ եթէ պարձցի, յոչ պնիլ թէութէն
ջնջեցաւ նա անտի։ Ըստ այսմ պարտ է իմանալ և
զնորայելացւոց. իբր զի՞ ած սահմանեալ էր, զի եթէ
ապաշխարեսցեն, փրկեսցին. այլ յոչ ապաշխարել
նոցա, ջնջեցան ՚ի դպրութէ անտի, և ոչ ևս գրե-
ցան յայն ընդ շարս արդարոց։ Այս դպրութէ կե-
նաց ակնարկելով ասէ՝ սոսկային. մի արդեօք և ան-
ուանք իւրեանց ջնջեալ լինէին. որպիսի էր և երանե-
լին այն, որ գողալով ասէր. * գատակնիք հատուց-
„ մանն ՚ի դիւանի մտացն գրեցեալ ... և անուանա-
„ գիր ՚ի կենաց մատենէն եղծեալ ‖. (նար. իդ)։

Ընդրորդ՝ իմացեալ լինի անկախ նախատահմանութիւն
այլ, որով առանց թէութէ վճռեալ է ած ՚ի յաւի-
տենից փրկել զայս և զայն. և յայսմ դպրութէ ոչ եր-
բէք ջնջէ զոք ած։ Որանի այնմ որոյ անուն գրեալ
է յայսմ դպրութէ։ Որթէ աշխարհ ամենայն քոյ լինի.
և ամենարատամետ քեզ հնազանդեսցի, զինչ օգուտ քեզ
անտի, եթէ անուն քո չիցէ գրեալ յայսմ դպրութէ.
իսկ եթէ ընդ հակառակն՝ գրեալ իցէ անուն քո ՚ի
դպրութէս յայսմիկ՝ այն է մեծ քան զամենայն. * Ը
„ այն մի՛ խնդայք՝ եթէ այսք հնազանդին ձեզ. այլ
„ խնդայցէք, զի անուանք ձեր գրեալ են յերկինս ‖.
(ղուկ. ժ. 20)։ Որ յայտ է թէ բան մարգարէին ոչ
է զայսմանէ, այլ զառաջնոցն որպէս տեսանի ՚ի նա-
խագրելոցդ։

Ա.յլ գիտել արժան է աստ, զի այս երկու բանք՝
այսինքն ջնջել ՚ի դպրութէ, և ոչ գրել ընդ արդարս,
թէպէտև են այլևայլ, բայց կարեն և այնպէս լինել միաբանք
բացայայտիչ. և եթէ յայս միտ կամիցիմք մեկնել
զայս բան, ասելն ջնջեսցին նոքա ՚ի դպրութէ քումմէ
ես կենաց՝ իմացեալ լինի ասել, մի գրեսցին նոքա

ընդ արդարս. որ է ասել, մի համարեսցին նոքա առա-
ջի քո արդարք, այլ մեղաւորք և չարք:

Յայս վայր սկսեալ՝ ի 24 համարոյ դուշակեաց մար-
գարէն՝ ի բերանոյն քո՛ի զթշնաւութիւնն՝ զորս ու-
նէին կրել Թշնամիք նորա: Նակ ասաի մինչև՝ ի վերջն
դնէ առաջի զբանս գովութե՛ և ընդհակառութե՛ առ
ուծ, և չինուե՛ եկեղեցւոյ. բայց նախ առաջին զորս
միանգամ խօսեցաւ յառաջնոյ համարոյ մինչև՝ ի 23.
և անդր ևս, ՚ի մի բան համառօտե, և լերև Թէ
վերատին՝ ի յիշատակութե՛ կամելով ածել ասէ:

Ը. Ղաւ և ցաւած եմ ես. փրկուե՛ դու ած ընկալցէ զիս:

Երկու ինչ երևեցաւ՝ ի քո՛ի յետին ժամս խաչելուե՛.
մի՝ այն զոր ելԹող, և մի ևս՝ այն զոր ընկալաւ. ա-
ռաջինն հայի յաղքատութե՛ նորա, որ՝ ի խաչելուե՛ն
ամենեցուն յայտնի երևեցաւ՝ կախեալ գոլով մերկ
զփայտէ և ծածկեալ անպիտան զգեստիւ. երկրորդն
հայի՝ ի ցաւս նորա՝ զորս կրեաց՝ ի խաչին. սոքիմբք
եցոյց զինքն միանգամայն աղքատ և փարթամ. աղ-
քատ՝ ի մեծութե՛ց աշխարհի զորս ելԹող, և փար-
թամ վըտօք և ցաւօք զորս ընկալաւ. և ահա վերկու-
ցունցս զայսցանէ խօսել ասէ:

Ը. Ղաւ և ցաւած եմ ես: Ը. Յորինքն ոչ միայն աղքա-
տացեալ եմ յամենայն իրաց աշխարհի, և զրկեալ՝ ի
մխիթարութե՛ մարդկան՝ ևս և՝ ի մխիթարութե՛ հօր
իմոյ, այլ և ընկղմեալ կամ՝ ի ցաւս անհնարինս: Ը. յո-
րոյք օրինակ ետ մեզ՝ ասն մեր արհամարհօղ լինիլ
բարեաց աշխարհի, և համբերօղ չարեաց. որովք ու-
նիմք հասանել փրկութե՛. քանզի և ինքն ասն մեր՝
որ էր տուօղ այնր փրկութե՛, ՚ի սոսին երևեցոյց
զինքն ընդունօղ փրկութե՛. ասին իրի ասէ:

Փրկուե՛ դու ած ընկալցէ զիս: Որ բառդ երկուե՛՝ դնի
փոխանակ փրկօղ զօրութե՛. կամ փոխանակ փրկօղ
ազատութե՛, որպէս Թէ ասէր. զօրութե՛ քոյ փրկեա-
ցէ զիս. որ է ասել, փրկեա զիս: Նայց քանզի դնէ
ընկալցէ՝ սովին կամի ասել, փրկութե՛ քոյ՝ ի տառապա-
նաց լմոց՝ ի վեր առցէ զիս, և ընդունիցի՝ ի հան-
գիստ: Որ այսու մտաւք յառնել մարմնոյ իւրոյ փու-

թուի։ Ա՛ստղեկ ևս վասն խորհրդաւոր մարմնոյ նորոյ, այսինքն վասն եկեղեցւոյ՝ յամենայնի գտանել զանդորրութիւն. զոր նոքա ընկալեալ համարեալ մատչի՛ն ընտրհակալութեան հանդերձ օրհնութեա՛ւ և սա՛կ։

ՃԲ. ( )ՐՀՆԵՑԷՑ ՊԱՆՈՒՆ ԱՅ ԷՄՈՑ ՕՐՀՆՈՒԸՔ, ԵՒ ԲԱՐՁՒՔ ԱՐԱՐԷՑ ՔՆԱ ԳՈՎՈՒԸՔ։

( )ՐՀՆՈՒԹԻ և գովութի՛ թէպէտ և ունի՛ն ինչ զանազանութի՛, զորմէ խօսեցեալ է մեր այլուր, բայց՝ ի տեղի միմեանց ևս՝ ի գործ ածի՛ն. իսկ աստ երևի թէ օրհնութի՛ն հայի՛ ի ներգործութի՛ մատց, և գովութի՛ն՝ ի ներգործութի՛ կամաց. մի՛ն՝ ի յայտարարութի՛ զօրութե՛ն այլ ըստ տեսանելոյ մտացն. և միւսն՝ ի վայելումն ժառանգութի՛ այնր զօրութի՛ ըստ բերկրելոյ կամացն. և երկոքի՛ն ևս՝ ի փառաւորութիւնն անուանն այլ. ըստ սոցի՛ն խօսելով ասէ։

ՃԳ. [illegible]ԱՃԱՐ ԵՂԻՑԷ ԱՅ ՓԱՆ ՂՐԱՆ ՆԱՓԱՂ, ՈՐ ԲԵՐԷ ԵՂՔԱՐՍ և ՀՃՂԱԿՍ։

Հաճարական զոհ էր այլ որթ՝ որ արձակեալ էր զեղջիւրս և զհճղակս, որպէսզի և որթ երկամեայ, ևս և այն՝ որ է տարւոյ և կիսոյ, մինչ՝ ի եռամեայն. և որպէս առանդեն ոմանք՝ ի բաթունեացն հրէից, հասանել յակօրէն եռամեայ որթիք՝ ի զոհ մատչէին, որպէս ի տեսանել՝ ի գիրս ծննդ. ԺԵ. 9։ և այս սովորութի՛ն նաև առ հեթանոսս էր. որպէս տեսանի՝ ի հին մատենագիրս։ Եւ թէպէտ այսպիսի եռամեայ որթիք տիրապէս արջառ կոչին, մանաւանդ թէ զուարակ,

բայց վասն մատաղուԹեն կարեն կոչիլ որԹ. վասն որոյ և մատաղ կոչի՝ այսինքն ե փափկահաս կամ մատաղաշ, յասելն։

Ոչ ասաց եղիցի այդ չան զոր մարդ, որ ըստ եղջերուաց և ըստ ոչխարաց։ Այս բան կարէ հայիլ ոչ միայն ՚ի պատարագ օրհնուԹենէ, զոր յիշեաց ՚ի նախընԹաց տանն, այլև ՚ի յանձնառուԹենէ այնր ամենայնի՝ զորոց խօսեցաւ ՚ի վերոյ, և մանաւանդ ՚ի պատարագն խաչելուԹենէ՝ զոր ՚ի վերջոյ մատոյց ՚ետն մեր։ Այս ամենայն ասէ եղիցի հաճոյ հօր իմոյ քան զմատաղ որԹ եղջերաւորն և զնձղակաւորն, զոր մատուցանէին քեզ ՚ի հնումն։

Որ բառդ չան՝ ցուցանէ զայնպիսի գերազանց բաղդատուԹիւն՝ քան զոր չէ հնար լինել. վասն զի պատարագ ետն մերոյ այնչափ գերազանց էր, որչափ գերազանց էր արժանաւորուԹիւն նորա. զի այն արժանաւորուԹիւն էր անսահման, վասն որոյ և արժանաւորուԹիւն պատարագի նորա յանսահմանս գերազանցէր, և ՚ի վեր էր քան զբաղդատուն։

Յայսմ պատարագի ետն մերոյ՝ իմաստուԹիւն և արդարուԹիւն նորա եղեն երբ երկու եղջիւրք՝ որովք վանեցաւ Թշնամին մեր սատանայ. զի իմաստուԹիւնք իւրով եգիտ զայսպիսի հնարս փրկելոյ զմեզ. և արդարուԹիւն իւրով հատոյց զպարտս մեր. և ՚ի լինել այսր՝ արտաքս ընկեցաւ սատանայ յիշխանուԹենէ իւրմէ. որով երբև Թէ խեԹկեցաւ յեղջերաց անտի և վանեցաւ։

Նոյնպէս չորեքին գլխաւոր առաքինուԹիւնք ետն մերոյ, այսինքն խոնարհուԹիւն, հնազանդուԹիւն, համբերուԹիւն, և սէր, եղեն իբրև չորեքին կՃղակք, որովք կոխեաց զմահ մեղաց և փրկեաց զազգս մարդկան զմատնեալս ՚ի գերուԹիւն սատանայի, և ՚ի մահն յաւիտենական։

Այս բան կարէ առեալ լինել և ըստ այլ իմն բաղդատուԹեանց ընդ այլ պատարագս. յոր միտ կամի ասել. առաւել հաճոյ է այս պատարագ օրհնուԹեանս՝ քան Թէ պատարագ զուարակաց. (զորմէ տես ՚ի սաղ. խԹ. 8—23. և ճ. 18—20)։

Ո՞չ այսպիսի պատարագս՝ առաքեալն կոչէ բանաւորս. ըստ որում բանականուԹիւն մատուցանի սմա. յայս միտ վերածէ և վարդան զայս բան. և զրէ ՚ի բերանոյ

մարգարէին այսպէս. * Հաճոյ եղիցի Ով այս բանա-
,, կան պատարագս քան զորլձն, զոր աբրահամ և մով-
,, սէս մատուցին՝ ձգելով արտաքս զեղջիւրս և զկըճ-
,, ակս ‖:

Պարձեալ մարթ է զայս բան առնուլ բաղդատուրթ[է]
հին և նոր օրինաց. իբր զի յայժ առաւել հաճոյ են
պատարագք՝ որք մատչին ՚ի նոր օրէնս՝ քան զպատա-
րագս՝ որք մատչէին ՚ի հնումն ՚ի զուարակաց և յայ-
լոց իրաց:

Ստանօր եզնիկ կողբացի (՚ի գլ. ՀԴ.) հայելով
յառաջնիկայ բնաբանդ, ասէ, Թէ պիրք առ հատա-
րակ զանասունս յիշեն մատչիլ ՚ի պատարագ, և ոչ
զձկունս, * և դարձեալ ասէ. Հաճոյ եղիցի ձեզ իբրև
,, զորթ մատաղ, և ոչ իբրև զձուկն փափուկ. զի
,, ձուկն թէպէտ և գայ յառակ, (բայց) գերեզմանի
,, առակ գայ և ոչ կենդանութէ. ըստ այնմ զոր ձեր
,, ասէ. Թէ որպէս եղև յովնան ՚ի փոր ձկան ‖: Այլ
յաւելու ևս ասել Թէ * այնչափ ջուր են անասունք
,, (քան զձկունս), զի ՚ի նոցանէն զոհք և ողջակէզք
,, մատչին ձեզ, և ՚ի ձկանց ոչինչ այնպիսի. այլև ՚ի
,, խորհուրդ և յօրինակ մեծի խորհրդոյն որ յայտնե-
,, լոց էր՝ ոչխար և արջառ տպաւորէին, և ոչ ձկունք ‖:
Տես և ՚ի վերոյիշեալ տաղմոսս: Այլ արդ քանզի այն
ամենայն զոր ասաց մարգարէն, կարգեալ էին ՚ի փըր-
կութէն աղքատացեալ բնութէնէ մարդկան, ՚ի լրումն
բանից իւրոց ՚ի մէջ բերէ զուրախ լինել նոցա, և
խնդրել զձեզ՝ որ կեցոյց զնոսա. վասն որոյ ասէ:

ՃԲ. Տեսցեն աղքատք՝ և ուրախ եղիցին. խնդրեցէք զԱ-
ստուած, և կեցցէ անձինք ձեր:

Աղքատս կոչէ զորդիս մարդկան ըստ երից. մի՝ զի
աղքատացեալ էին խափատ ՚ի չնորհաց. երկրորդ՝ զի
աղքատացեալ էին ՚ի չհմարիտ խոստուրթէ. և եր-
րորդ՝ զի աղքատացեալ էին նաև յիրաւանց ժառան-
գութէնէ երկրի. զի անարժան էին նաև զերկրաւորս
բարիս վայելելոյ. իսկ ՚ի գալ ձեռն մերոյ աւ ՚ի փրկել
զնոսա, տեսեալ նոցա զփրկիլ իւրեանց յայսպիսի
Թշուառ աղքատուէ՝ և կարգիլ ժառանգ ոչ միայն ՚ի
վայելել զերկինս, այլ և զերկիրս, սկսան ուրախ լ-

Նիւ. սմին իրի առ։

Ցեսցէ աչսաւք՝ և ուրախ եղիցին։ Ա՛յսինքն աղզք մարդկան որք աղքատացեալ էին, հայեցեալ՝ ի բարերարութենին քեմ՝ որով փրկեցան, և յաղքատութենէ իւրեանց ազատեցան, ուրախ լինցին։ Ա՛յց քանզի առ՝ ի գտանել իրօք զայս փրկութենէ և կեալ, պարտ էր նոցա խնդրել զայծ, վասն որոյ յարէ զկնի և ասէ։

Խնդրեցէք զայծ, և կեցցէ անձինք ձեր։ Կամի ասել՝ զուք որք արժանի եղէք տեսանել զփրկութենէ չարչարանօք որդւոյն այ, եթէ կամիք ժառանգել զայն, պարտիք խնդրել զնոյն ինքն զորդին այ, որ է ասծ Ճշմարիտ. զի՝ ի խնդրել ձեր զնա՝ կեցցեն անձինք ձեր. այսինքն կեցցեն կամ կենդանի մնասցեն հոգիք ձեր՝ ի ձեռն ընտրհաց նորա՝ որ է կեանք հոգւոյ. և ապա ըստ առաքինական կենաց լինի ձեզ կենդանանալ յաւիտենական կենօք յարքայութենէ։

Ըստ յարմարական մեկնութե այս բան հայի յաղքատս ըստ մարմնոյ, որք չեն ձեռնհաս մատուցանել այ պատարագս՝ ի մարմնաւոր ստացուածոց. և գխտացեալ թէ առաւել հաճոյ են այ բանաւոր պատարագք, մխիթարին և ուրախանան, և օրհնելով զասծ խնդրեն զնա, և զհաճոյս նորա, որով և կեան ըստ հոգւոյ։

Կարօտապէս այս բան հայի առ աղքատացեալս հոգւով, կամ առ խոնարհս. զի սոքա տեսանելով զորդին այ աղքատացեալ վասն մեր, մխիթարին և ուրախանան, մեք ևս կամաւորապէս յանձն առնուն զաղքատութենէ. որոց եթէ մեծութենէ մեր ինչ և իս հասցէ՝ եթէ դրամոյ լցի, և եթէ փառաց, վարեն զայնս ոչ իբր ևս՝ այլ իբր մատակարար, ոչ՝ ի կատարել զանկարգ բերուածն քնութե, այլ՝ ի լրումն գործոյ բարութենէ. ոչ՝ ի բարձրամտիլ և՝ ի փառամոլիլ, այլ՝ ի շահիլ արգասիս պիտոյից առաքինութեց. ոչ՝ ի ճոխանալ ընկերին, այլ՝ ի սիրել և ողջնալ։

Եւ զի այսպիսիք զամենայն երկրաւոր մեծութենէ և զփառս աւ ոչինչ համարին, յերկնայինսն փափաքելով սակայն խնդրել զայծ յորում գտանեն զերջանիկ կեանս, և կեան հոգւով. ըստ այնմ (առակ. ը. 35). * որ զիս գտանիցէ՝ գտանիցէ զկեանս ‖. զի (ըստ յովհ՛. ա. 4.) * նովաւ կեանք էր, և կեանքն էր

„ լոյս մարդկան ‖. վասն զի որպէս գրէ սոյն այս սաղմոսերգուս (լԷ. 10.) ’ի նմանէ է աղբիւր կեանս։ Աստ և լրատամբք ասէ. *խնդրեցէք զնա, „և կեցցեն անձինք ձեր ‖. այսինքն հոգիք ձեր։

Պ.այս կեալս հոգւոյ՝ է ըստ երից. մին է ըստ ընտրհաց, որ է պերճնական լինն ունակական կեանք հոգւոյ. երկրորդն է ըստ երկնային իմաստութԷ, որ է ներ. գործական կեանք հոգւոյ. զի կեալն բանական հոգւոյ՝ ըստ որում բանական, է իմանալ. ապա եԹէ լինն ընտրհաց այս ըստ երկնային իմաստութԷ՝ է գերազանցութԷ լինն կեալ։ Ընդորդն է ըստ յարելոյ հոգւոյն յաԹ ’ի ձեռն սիրոյ. որով միաւորի հոգին ընդ նմա. նակ որ ’ի վերոյ է քան զամենայն՝ է ըստ յաւիտենական փառաց, յորում է լրագոյն ճշմարիտ կենդանութԷ հոգւոյն։ Ընդ յետ խօսելոյ մարգարէին զուրախութԷ փրկելոցն վասն տեսանելոյ նոցա զփրկիչ իւրեանց՝ ’ի մէջ բերէ այժմ և զայն՝ Թէ այս յաջողեցաւ նոցա ’ի լսելոյ ՏԱՆ, ասելով։

լԷ. Օ է լուա՛ ՏԷր փնանկաց. և պէսպէսէլս էր ՛ի ար. Տմարհեաց։

Օ՝ որս աղքատս կոչեաց ’ի նախընԹաց համարն՝ աստանօր տնանկս կոչէ զնոսա. զի արդարև մարդիկ տնանկանալով աղքատացան. էր զի զրկեալ ’ի սկզբնական արդարութԷէ՝ տնանկացան, և այնու անկան յաղքատութԷն մեծ, և կապեցան ’ի շղԹայս սատանայի. վասն որոյ և սկսան աղաղակել առ ՏԾ բերանով նաՀապետաց և մարգարէից, և խնդրել զողորմութԷն. և զի լուաւ ՏԾ ձայնի նոցա ըստ սահմանելոյ իւրոյ, վասն այն ասէ։

Օ է լուա՛ ՏԷր փնանկաց. և պէսպէսէլս էր ՛ի արհամարհեաց։

Պ.այսինքն լուաւ մարդկան՝ որք տնանկացեալ և աղքատացեալ էին. և տեսեալ զնոսա կապեալս յիշխանութԷ սատանայի և մահու, շԹացաւ ’ի նոսա, և եկեալ ազատեաց զնոսա. և արար զնոսա իւր։

Պ.այս բան հայի և առ արդարն՝ որք կապեալ կային ’ի գԺոխս՝ ’ի գոգն աբրահամու, և աղաղակէին առ ՏԾ. և նա լուաւ նոցա, և ոչ արհամարհեաց զնոսա. էջ առ նոսա հոգւով և ազատեաց զնոսա անտի։

Ա՛խաբանի ընդ այսմ և այն՝ զոր առաց մարգարէս այլուր, (՚ի սաղ. կԶ. 7.) * Հանել զկապեալս քաջութիւբ իւրով ‖: Ո՛չ այս ամենայն բարեբարութիւն ՚ից յիշատակեալ մարգարէին՝ մատչի ՚ի յորդոր օրհնութեան և ընդունակալութեան առնելով:

ԼՁ. ( )երդնեացեն պնա երկինս և երկիր, ծով և ամենայն որ պեսայ ՚ի նոսա: ( )րհնել երկնից և երկրի զՅԾ, նոյնպէս ծովու և զեռնոց՝ ցուցանէ զնոցա զանբաւրբաւ յայտարարութիւն փառացն ՚ից առ մարդիկ. զորս շարժեն յօրհնութիւն ՚ից՝ իւրեանց զարմանալի գործոցդութիւբք:

Նակ յորդորելն զնոսա օրհնել՝ եթէ ՚ի կողմանէ յորդորելին մտածելոյ, յայտ առնէ զառաւելութիւն ուրախութիւն սրտի նորին. իսկ եթէ ՚ի կողմանէ յորդորեցելոցն մտածեսցի՝ յայտ առնէ զբարերարիլ նոցա Յ՚ից. լբր զի երկինք և երկիր և ամենայն արարածք հաղորդ պատան այնմ մեծի բարերարութիւբ՝ զոր եցոյց որդին ՚ից առ մարդս, որ էր գլուխ ամենայնի նոցա. ըստ որում յորժամ բարի ինչ լինի գլխոյ՝ ՚ի բերկրիլ նաբա՝ բերկրին և որք նորա են. ըստ այսմ և արարածք ընդ մարդկան, յոր միտ ասէ առաքեալն * եցոյց ,, մեզ (ՅԾ) զխորհուրդս կամաց իւրոց ըստ հաճութ ,, թե իւրում, զոր յառաջագոյն եդ նովաւ, ՚ի տընտ ,, տեսութիւն լրման ժամանակաց, բովանդակել զա ,, մենայն քրիս, որ ինչ յերկինս, և որ ինչ յերկրի, ,, ՚ի նմին ‖. (եփես. ա. 10.) որով նշանակի նորոգութիւն ամենայն արարածոց. այսինքն և առ նոր ինն կարգիլ, և նորոգ ինն օրինակաւ Ձանաչիլ ՚ի մարդկանէ և ՚ի հրեշտակաց. յոր միտ երդեմք և ասեմք * նորոգեցան արարածք ամենայն ‖: Ա.յլ զայսցանէ, տես ՚ի սաղ. Ձին. 3. և 4. ‖. յորս հրա.

երին երկինք և երկիր, և այլ արարած օրհնել զնա, որպէս և յերգս երից մանկանցն. տե՛ս ՚ի մեկնութեանն այնը զոր ասացաք ՚ի նուագարանն օրհնութեցն։

Պ.այլ քննել արժան է, զի մարգարէն յետ յիշելոյ զերկինս և զերկիր և զծով, ոչ ասէ, և ամենայն որ է ՚ի նոսա, կամ որ քնակի ՚ի նոսա, որով լմացեալ լինէին հրեշտակք յերկինս, և մարդիկ յերկրի. այլ * ամենայն որ զեռայ ՚ի նոսա ‖. որով նշանակին անբանք եղեալք յերկրի և ՚ի ծովու։ Պատճառ այսը ոչ այլ ինչ թուի լինել՝ բայց եթէ այն, զի չկայր տակաւին՝ թէ յօրհնելն անբանից զնա՝ և առաւել պարտին օրհնել զնա բանաւորք. և ըստ այսմ ՚ի յորդորել անբանից՝ այնու յորդորեալ համարին և բանաւորք. մինչև ոչ և առ հարկ լինել յայս բան բացայայտ յորդորել զնոսա զոյգ ընդ անբանից՝ օրհնել զնա։

Եւ զարձեալ որ ՚ի նոյն հայի, եթէ անզգայք և անբանք օրհնեն զնա՝ զինչ և առ պիտոյ էր յորդորել զբանաւորս օրհնել զնա. զի սոցա է օրհնել զնա, և ոչ նոցա, ոչ ըստ այնմ միայն՝ զի յարմար են օրհնելոյ զնա, այլ և ըստ այնմ զի եղեն վայելուչք օրհնուենն նա, այսինքն մեծի բարեբարուեն նորա, որով փրկեաց զնոսա, և յեկեղեցի իւր ժողովեաց զնոսին. յորում և միշտ պաշտպանէ զնոսա և խնամարկէ, որպէս և զրկ մարգարէն ՚ի յաջորդ երկուս հաւասարապ ասե.

Լսվ։

Լէ. Ա՚Ձ էրէէ ըսէոէ, և շինեսցեն տաղտկ հրէաստանէ. շինեսցեն բնակիեսցեն՝ և ժառանգեսցեն ՚է նմա։ Այսոքիւ նշանակի աստ եբ եկեղեցի քրիստոսի, որ զառաջինսն գումարեալ եղև ՚ի սիոնէ, և անդ հաստատեցաւ առաքելովք ՚ի վերին կենդանի, որ միշտ և յաւիտեան անսասան պահէ զնա՝ փրկելով ՚ի չարէ, և առաջնորդելով ՚ի բարին. վասն որոյ ասէ նախ։

Ա՚Ձ էրէէ ըսէոէ։ Այսինքն որդին այս որ է ահա ձիմա բեր՝ փրկէ զեկեղեցի իւր յաւիտենական մոլորուէ, և ոչ թողու յաղթահարել ՚ի դրանց դժոխոց։ Եւ զի այս եկեղեցի որ սկսաւ ՚ի սիոն, տարածեցաւ ընդ ամենայն աշխարհ, ամին իրի յարէ զկնի և ասէ։

Եւ ընծայեն նմա ոսկի, խունկ եւ զմուռս։ Ասէ զընծայսն սիրոյ նշանակի եւ կենդանի ընծայ ըստ սկզբնաւորութեան, զոյնպէս հրեշտականաւ նշանակի ընդհանուր եկեղեցւոյ ըստ տարածութեան այլեւայլ մասնաւոր եկեղեցեաց, որք կոչին աստ քաղաքք. և միտ դանին կ՝ թէ հաստատեսցին միութեամբ ոչ հաւատոյ մասնաւոր եկեղեցիք հրեշտականաւ, այսինքն ընդհանուր եկեղեցւոյ՝ սկսեալ ’ի սիոնէ. կամ ընծայսն մասնաւոր եկեղեցիք ուղղադաւանութեամբ կաթուղիկէ եկեղեցւոյ, ըստ որում հրեշտական թարգմանի դաւանութեամբ տեղւոյ։

Ա. յս հաստատութեամբ եկեղեցեաց՝ որպէս և եդաք ’ի վերոյ՝ սկսաւ յառաքելոյ, և զարգացաւ ’ի ձեռն յաջորդաց նոցա, այսինքն ’ի ձեռն հայրապետաց, որք հետեւողք գոլով առաքելոյ՝ ըստ նոցին գարձուցին զաշխարհս, և յօդեցին զնոսա յընդհանուր եկեղեցի. որպիսի եղև ’ի մեզ եւս գրիգոր, և յայլս այլք. զսոցանէ և խօսելոյ ասէ։

Ընծայեն բնաւէսցեն և ժառանգեսցեն ’է նմա։ Ա. յսինքն առաքեալք և յաջորդք նոցա շինեսցեն զեկեղեցի՛ սը. որ է ասել հաստատեսցեն զաշխարհս յեկեղեցի՛ սը, և արասցեն՝ զի նոյն եկեղեցիք բնակեսցին յընդհանուր եկեղեցւոջ, և ժառանգեսցեն ’ի նմա զպարգևան քն, և զբերքնական բարիս ’ի ձեռն՛ սը խորհրդոց. զի լինելով որդիք եկեղեցւոյ՝ լինին և ժառանգք բարեաց եկեղեցւոյ. (գաղ՛. գ. 7.) և այս՝ որդւոց յորդիս ընդէ ’ի կատարած աշխարհի. սոքին երբեմն յառելոյ ասել։

Ը. (1) աւաք ծառայէք տոյ հաստատեսցէ անդ. և այժ սէ- [illegible] ընդ գանուն տո, բնակէսցեն ’է նմա։

Ա.ստանօր բառս գաւաք՝ դնի երբեմն հաւաքական անուն. որպիսի են բառքս հօտ, խումբ եւ. զի դնի փոխանակ մանկանց նորոյ սիոնի՝ որք են զաւակք առաքելոց և հայրապետաց։ Որպէս յասէն յաղօթս մանաւանդ. * և զաւակին նոցա արդարոց ||, բառիս գաւաք նշանակին որդիք. ըստ սմին իմանալի է և աստ։ (1) ո. ըզոց զմշտնջենաւորելն կամելով ցուցանել՝ ասէ. (1) գաւաք ծառայէք տոյ հաստատեսցէ անդ։ Ա.յսինքն զու-

Զեր համօրէն հաւատացեալոց՝ որք են զաւակ ծառայից քոց առաքելոց և հայրապետաց՝ հաստատեալ կայցեն ՚ի սիրանէդ այսինքն յեկեղեցւոջ։ Նոյնպէս հաստատել ասցա յեկեղեցւոջ է ըստ կրկին բանի. մի՝ ըստ այնմ զի ընկալեալ են զինուք անուանն քով ՚ի ձեռն մկրտութեանն՝ որով և անուանեալն են քրիստոնեայ. և երկրորդ ըստ այնմ զի ունին զհաւատս քով ձշմարտութեանդ։ Նոյնպէս յայտ առնէ յաջորդ բանիւն առելով։

Նո՛ ոչ սէրըն գանուն ՚ի, բնակէացըն ՚է նմա։ Այսինքն որք ընկալեալ են զանուն քոյ ՚ի վերայ իւրեանց մկրտութեանդ, և ունելով զձշմարիտ հաւատս սիրեն զանունդ քո՝ պատանելով զինքեանս քրիստոնեայ, նոքա բնակեսցին ՚ի նմին սիրոյն այսինքն յեկեղեցւոջ։ Նոյնպէս եթէ հաստատուն պահեսցեն զսէրն ոյ՝ բնակեսցին ՚ի վերջոյ ՚ի վերինն սիրոն յաւիտեան։ Այլ զներսպործուածդ այսր սիրոյ՝ թէ քանի մեծ է և օգտակար, պեղեցիկ և երկար խօսի լուսաւորիչն մեր ՚ի յաձախատուածի. (Հատ. ԺԹ. երես 124 — 126. տես անդ)։

Ո՛ վախճան սաղմոսիս պատշաճ դատիմ առաջի դնել և զնկարագրական մեկնութիւն սորա, հայելով ՚ի ժամանակ գերութենն բաբելացւոց. ուր ազգն եբրայեցւոց երբեմն եկեղեցի ոյ (ա) ընկղմեալ ՚ի խորս ջուրց դեղութենէ (բ) խնդրէր յոյ կեցուցանել զինքն. (գ) աղաղակէր և յոգւոց ելանէր (դ) առանց պակասելոյ ՚ի յուսոյ. (ե) Յուցանելով թէ քանի բազում էին որք ատէին զնա. (զ) և զոր ոչն էր յաւիշտակեալ պահանջէին ՚ի նմանէ։

Ո՛ այսոսիկ այսպէս եղեալ խոնարհի, և ՚ի զիմաց մեղուցեալ որգւոց իւրոց խօսելով ասէ. (է) արժան ևի եմ այսմ ամենայնի, զի ձանաչեմ թէ յանցաւոր եմ, և ոչ կարեմ ծածկել ՚ի քէն զյանցանս իմ՝ զի պատ գիտես զամենայն. և արդ այլց սրա առ իս, և պրկեա զիս, (ը) զի մի որք համբերեն քեզ ՚ի գերութեէ ատա, ամաչեսցեն վասն իմ, այսինքն ամօթ կրեսցեն ՚ի տեսանելն զիս անզերծանելի մնացեալ ՚ի ձեռս բաբելացւոց. գուցէ ասիցեն և ես, զուր ուռ ընեն կարծելոյ թէ ձոճ պաշտպան է իսրայէլի։

(ճ) Ա՛ռաջի դնէ ապա և զհամբերել իւր մեծի նա-
խատանաց՝ զոր կրէր ի բաբելացւոց, և ի խորթ
զաւակաց իւրոց յասելն նոցա առնա. ուր և ՚ուծ քոյ-
զիւ՛րդ ոչ ազատե զքեզ ի գերուէ աստի: (ճ) Ւսակ
արդ ո՞ այսուհետև ասէ քաջալերեսցէ զիս. զի ես
օտարացայ ի հայրենեաց իմոց, և եմ աստ հանդերձ
որդւովք մօր իմոյ որպէս հիւր: (ժա) Ա՛ւր նախանձ
ձայուզուածն իմ զոր ունիմ առ չինուածն տաճարի քո՝
ուտէ զիս. մանաւանդ ի լսել իմում ի նախատիչաց
քոց ի բաբելացւոց աստի զմեծամեծ նախատինս և
հատականս ի վերայ տան քո:

(ժբ) Ա՛րդ վասն խոնարհեցուցի պահօք զանձն իմ և
սգազգեաց ճնացի. և այսու առաւել ևս նախատ
եղէ. զի նոքա փոխանակ օգտելոյ ծառը առնէին զայս
դործս իմ: (ժգ) և նստեալ խորհէին զինէն չարթս,
և ըմպելով զգինի այանակատակ լինէին զինև.
(ժդ) այլ ես ոչ կամելով վրէժխնդիր լինել, յաղօթս
կայի վասն նոցա առ քեզ, յայտնելով քեզ զցաւս
իմ, և աղաչելով զքեզ ազատել զիս. որովհետև տե-
սանէի՝ զի ժամանակ էր ընդունելոյ զազատուէն առ
ի քէն:

(ժե) Ա՛ւ արդ լուր ինձ ըստ անստեղի խոստման քոյ,
(ժզ) և ապրեցո զիս ի կատոյ աստի գերութենէ իմոյ,
և յանհնարինն տառապանացս. (ժէ) զի մի խոպան
պաշարեսցեն զիս վիշտք և կորուսցեն զիս: Ա՛ւ մի
պատոյտք ջուրց, այսինքն քաղդեացք և դիւթք՝ ընդ
արս և իշխանք նուաճեսցեն զիս. և մի ջրհոր կոտո-
պաշտութենէ անհետ արասցէ զկարդ և զկրօն մեր:
(ժը) Հայեա առ իս աղաչեմ ըստ բազում գթութենէ
քումմէ, զի նեղեալ եմ ես. (ժթ) հայեաց յինս երբև
ի ծառայ քո, զի հայելդ բաւական է. հայեաց և մի
դարձուցաներ զերեսս քո յինէն երբև յանարժանէ.
մի հայելդ յայն՝ որում արժանաւորիմ, այլ յայն որոյ
տանիմ: (ի) Հայեաց և ի նախատինս իմ և յամօթս
իմ և ի պատկառանս՝ զոր կրեմ ի քաբեղացւոց
աստի, (իա) որք հանապազ նեղեն զիս առաջի քո
(իբ) Հայեսո ամենայնի ակն ունէի՝ թէ ոք մխիթա-
րեսցէ զիս, քայց ոչ ոք գտաւ՝ ոչ ի զաւակաց, զի
նոքա ընդ իս դառնացեալ կան. և ոչ յեղովմայեցւոց

համ ՚ի մովաբացւոց և յամմնացւոց, որք ապստակիցք իմ են, զի նոքա ՚ի կուռս մոլեգնեալ են. և ոչ ՚ի բաբելացւոց, (իգ) զի նոքա փոխանակ ՚ի խնդրել զիս՝ լեզի եառն ինձ ՚ի կերակուր, այսինքն դառն վիշտս հատուցին. և ՚ի ծարաւ իմ քացախ մատուցին. այսինքն փոխանակ օգնելոյ ինձ ՚ի կարօտութեանց իմոց՝ նա խատինս մատուցին: (իդ) Այլ եկեսցէ ժամանակ. զի այս սեղան դառնութեանց՝ զոր ինձ պատրաստեցին, եղիցի նոցա ՚ի թակն և յորոգայթ և ՚ի հատուցումն, այսինքն թէ այս ամենայն դարձցի ՚ի վերայ նոցա, (իե) և ինքեանք կուրացեալք ոչ տեսանիցեն զօրութիւնս, և ՚ի կամիլ նոցա ազատիլ՝ դու կորացուցես զթիկունս նոցա, և նուաճեսցես զնոսա, (իզ) հեղլով զբարկութիւն քո ՚ի վերայ նոցա:

(իէ) Արդ և՝ բնակուչք նոցա և այս մեծ քաղաք նոցա բաբելոն յաւերակ դարձցի, և մի ոք բնակեսցի ՚ի սմա. (իը) զի ոչ խնայեցին յիս. այլ տեսեալ թէ դու խրատես զիս, և հայրաբար հարկանես, նոքա չարաչար հալածեցին, և ՚ի վերայ հարուածոյ իմոց յաւելին զայլ հարուածս: (իթ) Սակն իրի և դու մի խնայեսցես ՚ի նոսա՝ այլ դիցես զծանր ծանր պատիժս ՚ի վերայ նոցա վասն մեղաց նոցա. որով ոչ ևս կարասցեն մտանել յարդարութիւն քոյ, այսինքն արդարանալ, (ի) և ոչ ունել քաժին ընդ սբս քո, այլ ջնջիլ ՚ի դպրութենէ կենաց, և կորնչիլ յաւիտեան:

(իա) Դայց մի և ընդ իս արասցես այսպէս. այլ փրկութիւն քո ընկալցի զիս. տեսանելով թէ ես ՚ի գերութիւնէ աստ և յաղքատութիւն՝ ցաւած հոգւով ՚ի քեզ եմ ապաւինեալ: (իբ) Եւ ՚ի փրկեալքո զիս՝ օրհնեցից զքեզ այնպիսի օրհնութիւնբ՝ (իգ) որ ինչ քեզ հաճոյ՝ առաւել քան զզոհս նուիրեալս ՚ի մատաղ որթոց: (իդ) Այս փրկութիւն քո տեսեալ աղքատացեալ Յորդորէ ապա զսոսա խնդրել զնծծ, և կեալ հոգւով, և գոհանալ և՝ (իե) զի լուաւ նոցա ՚ած, և եհան զնոսա ՚ի կապանաց գերութենէ: (իզ) Եւ ապա բերկրեալ ընդ այս փրկութիւն՝ գոչէ սողմոսերգուն, և ասէ. օրհնեսցեն զնծծ երկինք և երկիր և ամե-

նայն արարածք. վասն զի աշատեաց զժողովուրդ
իւր, և էած զնոսա ի սիոն. (լէ) զոր և յայսմ հե-
տէ միշտ փրկեաց և պահեաց. և ժողովուրդք շի-
նեսցեն զքաղաքս ի հրէաստանի. և ժառանգեսցեն
ի նմա ի խաղաղութենէ. (լը) և զաւակք նոցա յետ
ժամանակաց ի գալ մեսիային հաստատեսցին ի նոր
եկեղեցի. և ոչք սիրեն զանունն իւ, բնակեսցին ի
նմա խաղաղութէ. և ապա փառաւորեսցին յաղթու-
թենէ երկնից երանութէք յաւիտեան:

Օ՛ որ միանգամ ասացաք ի մեկնութէ այսր սաղմոսի,
մարթ է իւրաքանչիւր ումէք ի դէմս իւր վերածել
լոկ յանձն իւր նկարել ըստ յորմարութենէ. որպէս
առնէ լսողք". որ ըստ ամենայնի ի բարոյական միտս
մեկնէ զայս. զոյց զհամառօտութենէն պատշաճ դա-
տիմ քաղել աստ ի դիմաց նեղեալ անձին ի դիմել
նորա առ ինձ ի հոգևոր տուաւպանս իւր, և ասել.
(ա) կեցո զիս ինձ զի հասին յիս ջուր խորհուրդք. (բ)
և շրջանք պղտորման մտացս ընկղմեն զիս:

(գ) Ես եմ վաստակեալ լքայ յաղաղակելոյ, և կո-
կորդ հոգւոյս կերկերեալ՝ միաց անձային, ծանրացեալ
առ ի խօսիլ ընդ քեզ ախորժանօք: (դ) Ես ի լքմանէ
աստի նեղի հոգիս յուսահատութէք. և աչք հոգւոյս
նուաղեալ ոչ ևս տեսանէ զյուսալիսն, և ոչ ևս թոյլ
տայ ինձ քեզիւ քերկրութէք առ քեզ: (ե) Յաւելան
և այլ ևս ջուր խորհուրդք դիւաց տարապարտ ատե-
ցողաց անձին իմոյ, (զ) որք և զօրացան ի վերայ
իմ. և զոր ոչն կամէի՝ եւտուն ինձ կատարել զչարն
մեղաց:

(է) Ա՛յլ դու ես որ գիտես զդիւրաստահութէն իմ և
զանզգամութէն իմ, այլ արա առ իս՝ որ գարձեալ
եմ առ քեզ բոլորովին. (ը) և պահեա զիս ի վերս-
տին գլորելոյ. զի որք ի տեսանելն զդարձ իմ և
զբարւոյն ընթացս կենաց իմոց՝ յոյս առնուն խնդրել
զքեզ, ու՛ համաչեսցեն վասն իմ ի տեսանելն զիս կոր-
ծանեալ, և ու՛ ասիցեն, եթէ նա ոչ կարաց ի վախ-
ճանն հասանել, ապա և մեզ անկար է:

Ա՛յլ արդ փութա՛ ես օգնել ինձ, (թ) զի ամօթ
ծածկեաց զերեսս հոգւոյ իմոյ վասն տեղւոյ տալոյ տե-
սանել յիս զայնպիսի խորհուրդս զորս իբր ի նախա-

ասինա քո յարուցին գնաք ՚ի սկրատ իմ. զի Թէպէտ ես համբերեցի, բայց ամաչեմ՝ վասն տեսանելոյ իմ զայնպիսիս ՚ի հոգի իմ. որով և մԹափանի միտս իմ, և Թուլանայ հոգի իմ. (Ժ) ոչ ևս կարողանամ ելանել մօք յերկինս, և զուարճանալ ընդ հրեշտակս և ընդ հոգիս կատարելոց, որք են որդիք մօր իմոյ, այսինքն որդիք վերին սիոնի. այլ կամ իբրև օտար ՚ի նոցանէ և իբրև հիւր։

(ԺԱ) Եւ այս դիպաւ ինձ ՚ի նախանձելոյ դիւաց. զի տեսեալ նոցա Թէ հրաւիրիմ ՚ի տուն քո յերկինս՝ նախանձեցան ընդ իս, և այս նախանձ նոցա որ վասն տան քո, եկեր և եղծեաց զիս. որպէս եկեր զհայր իմ զադամ. և ոչ այսչափ միայն, այլ և կամելով նախատինս հասուցանել անուան քում, Թափեցին ՚ի վերայ իմ զխորհուրդս նախաատականս ընդդէմ բարուԹեան քոյ։

(ԺԲ) Եւ Թէպէտ խոնարհեցուցէ ես զանձն իմ պահօք և քրձազգեցուԹիւ, բայց նոքա պղտորելով զիս յուսահատական և հայհոյական խորհրդովք, նախատելն ցուցին ինձ զայս իմ գործ. և արարին զիս իբրև բեանց առակ նշաւակի. (ԺԳ) և նստեալ առ դրունս զգայուԹեանց՝ խորհէին՝ զի ՚ի հաւանիլ հոգւոյս յուսահատական և հայհոյական խորհրդոց նոցա, շաղախեսցեն զզգայուԹիս իմ ՚ի մեղս։

Եւ ՚ի վերայ այսր ամենայնի զիմաստուԹիւն մտաց իմոց յափշտակելով յինէն, և իբրև զգինի ըմպելով զայն՝ այպն առնեն զիս՝ ասելով. ուր է այն քոյ վերացումն մտաց, ուր է այն քոյ յոյս, և ուր այն բարեաց սրտի. զի՞ է զի ընկատառակն բերին խորհուրդք քո՝ տարակուսելով միանգամայն և զկոստացեալ բեաց և զպատառնացեալ պատժոց։

(ԺԴ) Այլ ես յայսմ ամենայնի յաղԹս կայի առ քեզ. և ակն ունիմ Թէ այժմ իսկ լուիցես ինձ, քանզի այժմ է ժամանակ ընդունելի. (ԺԵ) լուր ուրեմն ինձ ըստ ողորմուԹեանդ քում. (ԺԶ) և ապրեցո զիս ՚ի կաւոյ երկրաքարշ խորհրդոց, և ՚ի հնարից չար դիւաց. (ԺԷ) զի մի պտոյտք չար խորհրդոց նոցա, և հեղեղք փորձուԹեանց նոցին ընկղմեսցեն զիս. և մի ջրհորն յուսահատուԹեան փակեսցէ զիս յինքեան։

(ժը) Եւ եթէ տեսցես յիս զանզգամութիւն ինչ՝ մի՛ վասն այնր դարձուսցես յինէն զերեսս, այլ ըստ քաղցրութեանդ ողորմութիւնդ քո, և ըստ բազում գթութեանդ քո հայեսցիս առ իս իբրև առ ծառայ քոյ. և վարդեսցես կեցուցանել զիս՝ ի փորձութենէդ դիւացդ յորոյ ներքեալ եմ: Եւ եթէ ոչ վասն իմ ինչ արժանեաց, գո՛նէ վասն յաղթօղ լինելոյ քո՝ ի վերայ նոցա՝ փրկեա զիս՝ ի նոցանէ. զի ըղձ դու կամիս ապրեցուցանել՝ նոքա կամին կորուսանել:

(ժթ) Եւ արդ հայեաց առ իս աղաչեմ, և հեռացո՛ յինէն զթշնամիս իմ զայսոսիկ. (ի) որոց լեալ եմ նպատակ նախատանաց, որպէս և դու իսկ գիտես. (իա) քանզի առաջի քո էն. և գիտելով՝ թէ դու ես պաշտպան իմ, տառապեցուցանեն զիս, և նախատեն և բազում թշուառութիս հասուցանեն յիս:

(իբ) Ի պաշարել իմում յայսպիսի վիճակի՝ թէպէտ և ակն ունէի թէ ոք ի հրեշտակաց և կամ ի մարգարէից կամ յառաքելոց, այսինքն բանք մարգարէից և առաքելոց տրտմակից լինէին ինձ, բայց ոչ ոք ի նոցանէ և ոչ այլ ոք գտաւ ինձ մխիթարիչ: (իգ) Եւ ի տապիլ իմում այսպէս՝ մատուցին ինձ դևք ըղձի հեշտութենէ մարմնոյ՝ քաղցր ցուցանելով զնոյն, զի նուաւս մխիթարեցայց. և յոչ հնաւանիլս իմ՝ մատուցին ինձ քացախ այսինքն զապականեալ խորհուրդս անհաւատութենէ:

(իդ) Այլ այս հնարք նոցա ըղձս իբրև սեղան պատրաստեցին՝ դարձին ի գլուխ նոցա ըղծութիք քով. (իե) և աչք նոցա այսինքն չար տեսութիք նոցա խաւարեցան. և թիկունք ուժգնութենէ նոցանէուն լինին: (իզ) Եւ եթէ կամիցին և ևս խլրտիլ, արկցես զբարկութիդ քո՝ ի վերայ նոցա. (իէ) և վարեսցես զնոսա՝ ի բաց՝ ի բնակութենէ նոցա, այսինքն՝ ի զգայութենէ իմոց. զի մի՛ և ես լինիցին զգայութիւնք իմ յարկք բնակութենէ նոցա, այլ (իը) սանդարամետն անդնդոց: Եւ այս կարի իրաւամբք. քանզի որպէս արարին նոքա ինձ, նոյնպէս հատուցի և նոցա. զի զըղ դու հարեր՝ վարելով զնա՝ ի դրախտէն փափկութենէ յատականացու կենցաղս, նոքա փոխանակ ինայելոյ յաւելին և յաձախեցին զվէրս ցաւոց՝ ի վերայ

հարուածոցս. և անդադար յաւելուն ի ցաւս վիրաց
իմոց։

(իթ) Դուր ապա և դու վճռել ի վերայ մեղաց նոցա,
զորովք և կրկին կրեացեն զանհնարին պատիժս, և մի
երբէք արդարասցին. (լ) զնջեալք ի դարուն ինձ
նայ՝ չունելով մասն և բաժին ընդ հրեշտակս յեր-
կինս։

(լա) Այլ ես աղաչեցի ի պարզևաց մխիթա-
րութենէ սրտի և ի լուսոյ պայծառութենէ մտաց՝ ինա-
ցեալ եմ ցաւած ի կեանս իմ. և չիք ինձ այլ յոյս
ապաւինութենէ, բայց այս միայն՝ թէ փրկութենէ քոյ
այսինքն յո փրկիչդ իմ ընկալցի զիս. (լբ) զորով և ես
յանհնարին անձկութենէ հոգւոյ իմոյ օրհնեցից և
գովեցից զանուն քո. (լգ) և այս իմ անձկութենիւն
հոգւոյ, յորում կամ իբրև բոյս ցամաքեալ՝ հաձոյ է-
ղիցի ես քան զպատարագս զուարակաց։

(լդ) Եւ զայս տեսեալ աղքատաց հոգւով՝ ուրախ
եղիցին. և ինքեանք ևս յորդորեսցին խնդրել զԱծ.
(լե) և Ասծ ընկալցի զնոսա, և լուիցէ նոցա, որպէս
լուաւ այնոցիկ՝ որք տնանկացեալ ի շնորհաց, և կա-
պեալ ի շղթայս մոլութենէց՝ դիմեցին առ նա։

(լզ) Եւ արդ քանզի այսպիսի բարերար է Ասծ, և
այսչափ քաղցր և ողորմած առ ամենեսին, օրհնեա-
ցեն զնա հրեշտակք յերկինս, և արդարք յերկրի.
և ես և մեղաւորք որք զեւան ի ծովու աշխարհիս։
(լէ) Վանզի Ասծ զբազումս ի սոցանէ փրկեալով՝
սոքիմբք շինեսցէ զվերինն սիոն՝ յընդարձակութեան
երկնից. ուր և բնակեսցին փրկեալքն քոք, (լը) որք
էն զաւակք ծառայից նորա առաքելոց. և փափկաց-
ցին ի նմա յաւիտեանս յաւիտենից։

Ալանական վարդապետ (ի մեկն. յոբ. գլ. ԺԷ.)

զայս սաղմոս վերածէ ի դէմս ադամայ և եւայի.
քանզի գրէ այսպէս. * Ասեցի զիս, զի հասին ջուրք
„ յանձն իմ, յայտ է թէ զառաջինն պատկերն ստուե-
„ րացուցեալ (ադամայ և եւայի) փոխեցին ըստ
„ բազում մասանց. և որպէս զթանձրութենէ հողոյ
„ ողոլեալ ջրով արտաքս քարշին ի խորս (անձն)
„ անտի քարինք, այսպէս ադամ և եւայ յանցս տա-
„ րածեալ ջրով քարշեալք եղեալք ի դաշտ. զոր

,, յայտնապէս երդեաց դաւիթ. ընկլայ ես ՚ի խորս
,, անդնդոց ‖. և յայլ ևս բազմապատիկ աղէտս սուղ
զեալք, ՚ի յուսալ ապա յազատեցուցչէն ամենայնի՝
հասին յազատուԹիւն յաւիտենական:

Ս Ա Ղ Մ Ո Ս. ԿԹ.

Ա Ղ Ա Ղ Ա Կ Ն Ե Ր Ո Ւ Ն Ք Ն Ե Ր Ո Ւ Ն Ք Ն Ե Ր Ո Ւ Ն Ք

ՎԱՂՈՒ ԳԼՈՒԽ

Ի ՎԱՂՆԱՒ ԶԱՒՈՒԹԻՒՆ ՍՂԳԼ-
մասամբ՝ ոչ դնի՝ի վերնագրիւդ բառս սաղ
մոս. այլ և ոչ յեբր". և ոչ յայլ թարգ".
բայց՝ի լատ": Նոյնպէս յոմանս՝ի վերջոյ դնի որպէս և՝ի
վարդանայն. և՝ի բազումս և յառաջ գասի. որպէս
և եդաք: Կան և քանի մի փոքր տարբերութիք յայլ-
եայլ ձեռագիրս ըստ յառաջադասութե բառից, և
ըստ հոլովման նոցին. զայդ չեն լինչ, և չտան փոփո-
խութե մտաց բանին:

Նոյնպէս՝ի մուտս փոխանակ դնելոյ ինա՝ դնի ինէ, ըստ
թարգ" եօթ", և եթէոմ". այլ այս և՝ի նոյն հայի:
Կ՚ի մուտ և փոխանակ այդը, այսինքն փոխանակ
բառիս ինա՝ դնի ինահապաքն. և այս դուցէ վասն այ-
սորիկ՝ զի այս սաղմոս՝ի դէմն նահատակաց մեկնի
յոմանց, կամ դուցէ նահատակ ասելով իմացեալ լի-
նի նա ինքն դաւիթ, բայց ըստ այսմ պարտ էր եզա-
կի դնել և ոչ յոգնակի:

Յերբ" ոչ դնին բառքդ ենդելոյ ինա քն. այլ միայն լե-
հապէտա. այս է՝ առ՝ի չերշապաքուն. նոյնպէս և յօրի-
նակս լինչ եօթ". բայց յայլս գտանին նախանշանա-
կեալ բառք:

Կ՚այսու վերնագրով ցուցանի՝ թէ զայս սաղմոս ասաց
դաւիթ առ՝ի Թողուլ զյիշատակ բարերարութեանն
ոյ որով փրկեաց զնա. բայց քանզի բազում եղև այն՝
ոչ է յայտ՝ թէ ո՛ր ինչ որ յիշի աստ. ոմանք դնեն
զփրկիչն՝ի հալածանաց աբեսողոմայ, ոմանք՝ի սա-
ւուլայն, ոմանք յայլոց Թշնամեաց. ո՛րն և դիցի,
բան սաղմոսիս հայի ըստ խորհրդոյն՝ի դէմն քո՝
զորմէ խօսեցաք՝ի սալ. լե՝ի 18 համարոյ մինչև՝ի
22. յորս կրկնին այս բանք. տե՛ս անդ: Նոյնպէս

Ր Ա Ն Ի

Ես. Ձ յօգնել ինչ նայեաց. և որ չընկենուլ ինչ ի ձեռն։

Մ Ա Ն Ո Ւ Թ Ի Ւ Ն Ի

Ձ ասի օգնել մարդոյ, յորժամ առնէ՝ զի առնիցէ մարդն. այսինքն յորժամ շարժէ զմարդն յայս ինչ և յայն, որպէս զի և մարդն շարժեսցէ զինքն ի նոյն. կամ յորժամ զօրացուցանէ զմարդն առ այս և առ այն, որպէս զի և մարդն արասցէ զայն՝ առ որ զօրացոյց. և այս ոչ միայն ի դերբնական կարգի, այլ և ի բնականն և ի բարոյականն. իսկ երբ այսր օգնուէն ստանալն ինչ բարւոյ. և զի աղատուլթինն ի չարէ և ի բարի, գործակցիլն այս և ա ի ստացուածն այնր ասի օգնել։ Եւ յայս միտ դնի յառաջիկայդ. սոյնպէս և ընկերութիւն այս. բայց ցուցանէ և զառաւելութիւնն ինչ այսինքն զդերուն ի յօգնութենէ անդ՝ ցուցմամբ ընկերութենէ։

Ա.րդ Թէպէտ և յամենայնի կարօտի մարդ օգնուէն այլ, բայց առաւելապէս ի պաշարելն ի նեղութենս։ Ա.թէ այն նեղութիւնք իցեն մեծ, յայտ է թէ կարօտի մեծի օգնութենէ. և եթէ իցեն վտանգիչ՝ կարօտի դիւրահաս օգնութենէ։ Պաշարեալ ապա մարգարէն յայտպիսի նեղութենս ասէ ըստ առաջնոյն։

Ես. Ձ յօգնել ինչ նայեաց։ Ա.յսինքն այլ ըստ երից կարէ մտածիլ. մի՝ ըստ տեսանելոյ նորա զամենայն. և զայսմանէ ոչ է աստ բանն. երկրորդ ըստ խնամելոյ նորա զամենայն արարածս ընդհանրապէս ի ձեռն

տեսչուե իւրոյ. զայսմանէ և ոչ է քանն աստանօր. երրորդ՝ ըստ գիտելոյ՝ ի մանաւորի, որպէս յորժամ գիտէ օգնել ումեք ըստ այս ինչ կամ ըստ այն ինչ կարօտութե։

Օ այս ահա ինդրէ մարգարէն, գիտեմ ասէ՝ զի հայիս յամենայն, և տեսանես զամենայն, ձանաչես զոր առնեմ, և գիտես՝ զոր կրեմ. այլ ես զայն ինդրեմ, զի նայեսցիս առ իս գիտելով հաստուցանել ինձ զօգնութե քոյ մեծ. վասն զի մեծապէս նեղեալ եմ՝ ի ձեռաց թշնամեաց իմոց. վասն որոյ և կարօտիմ մեծի օգնուե քումմ. որպէս զի նովաւ կարացից դատանել զազատութե։ Եւ զի վտանգաւոր տեսանէր զնեղութե՝ զոր կրէր՝ ի թշնամեաց, փութացուցանէ զնա, ըստ վերոյ եղեալ երկրորդ տեսութե, և ասէ։

Եւ՝ ոչ յընկերել ինձ ջուրե։ Որպես թէ ասէր. գիտեմ զի ոչ թողուս զիս՝ ի քաց, այլ օգնես ինձ. քայց ազաչեմ, զի փութասցիս յայդ՝ ընկերելով ինձ, և մի յամեսցիս. քանզի վտանգիմ՝ ի նեղութե՛ս իմում։ Կամ որ նոյն է, մի յամեցուսցես՝ զոր ոչն հեռացուցանես. իբր թէ ասէր. որպէս ոչ հեռացուցանես զօգնել, նոյնպէս և մի յամեցուսցես զընկերել, այլ փութացուսցես։

Ոչ դնե մարգարէն ձեպեա կամ վաղվաղեա, այլ փութա. զի վաղվաղելն հայի՝ ի հասանել յերն. իսկ փութալն հայի՝ ի կատարել ինչ յօժարութե. առ որ կարօտեր սաղմոսերգուն. և՝ ի գտանելն զայն՝ զձեպելն և զինդրել պատրաստ էր։ Յայս զանազանութե հայելով սարգիս ընդհալն՝ գրէ (՝ի մեկն. ք. պետ. ա. 14. ձառ. ք.) * ձեպելն քան զփութն ,, (այսինքն քան զփութալն ասէ) առաւել է. վասն ,, զի փութ է՝ արտաքոյ պղերգութե յօժարութե ,, սրտի՝ երս ինչ կատարել. իսկ ձեպելն է ամենայն ,, պնդութե զհետ ընթանալ և հասանել իրացն ։ Վասդ ինդիր մարգարէին էր զփութ օգնականութե ոն պատանել, առ ազատելոյ՝ ի նեղչաց իւրոց, և յազատելն ցնծալ առ ոն։ Ուստի զայս քան յառաջ բերեալ մեծն խոսրով. (՝ի մեկն. ժամագր. երես. 368.) գրէ այսպէս. * ոն յօգնել ինձ նայեաց. զի

,, առանց քո չեմ բաւական յաղթել չարին. լսէ
,, թէ դու փութասցիս օգնել՝ թշնամին ամաչէ. և
,, որք զքեզ խնդրեն՝ ցնծասցեն, զանուն քո մեծա-
,, ցուցանելով՚ի փրկելն քո ‖:

Յայս փութացուցանէր և հոգևոր հարան զվեհապ իւր ասելով. * փախիր (այսինքն փութա) եղբօրդ-
,, դի իմ, և նմանեաց այծեմանց ‖. (երգ. ը. 14.)
յորոյ վերայ այսպէս զրէ նարեկացին՚ի մեկնութենէ իւրում. * փութա՝ հասանել ինձ ըստ այծեմանց
,, յօգնութեն. փութա յօգնել ինձ. և ապ յաճենար ‖:
Եւ տայ զպատճառ այսր մեկնութենէ ասելով. * զի
,, արագընթացն և փախիրն զմի միտս ունին ‖:

Յայս բան զօրութեանէ ինձ առաջի առնէ մարգարէն և զչարուն թշնամեաց իւրոց, որպէս զի շարժեսցէ զմեծ յօգնութին՝ եթէ ոչ վասն իւրոյ արժանաւորութենէ, գոնէ վասն թշնամեացն դժնդակութենէ. զի որպէս գրէ գէորգ վարդապետ (՚ի մեկն. եսայ.) * բազում անդ
,, գամ ոչ արժանաւորութին փրկելոցն՝ այլ ընդդէմ
,, ըզայն չարութիւն զարթուցանէ զմեծ յօգնականու-
,, թիւն ‖:

Ապա զի արագընթացութեամբ առնէ զայս, ասէ՚ի վերին մանէ հոգւոյն իբր՚ի մեծէ ընդդէմ յարուցմանց զգայուն թշնացն. զի՚ի գրգռիլ նոցա՝ ծանրանայ մարտն՚ի վերայ վերին մասին. ըստ այնմ. (ա. թագ. լա. 3.) * ծանրացաւ պատերազմն՚ի վերայ սաւուղայ ‖: Եւ յայնժամ առ զերծանելոյ՚ի վտանգէ՝ պարտ է գոչել առ ինձ՝ զի նայեսցի յօգնել, և փութասցի լըն-
կերել:

Լամբրոնացին օգնութեն այ իմանայ աստ զնախախնամութենէ նորա հայեցողութենէ. իսկ ընկերելովն իմանայ զձեռնտու լինիլ նորա սպասաւորութեանն հրեշտակաց, և խօսելով առ ինձ գրէ այսպէս. * թէպէտ
,, փրկեցեր (զիս) և օգնեցեր յալեացն միջոյ, սա-
,, կայն՚ի մէջ շրջիմ թշնամեացս որք անյագ են՚ի
,, պատերազմելոյ. վասն այսորիկ մնաղթեմ ունել զ-
,, նախախնամութենէ քո հայեցողութին՝ օգնական լի-
,, նել, և՚ի ձեռն սքոց հրեշտակաց սպասաւորութենէ
,, ընկերել ‖:

Ստորհդաբար, սոյն այս ասէ՚ի դիմաց մարդկայինս

քնուԹԵ, յաղաղակել նորա առ ՚ած՝ օգնել ինքեան՝ նայելով ՚ի ԹշուառուԹիւն իւր. և փուԹալ գալ առ ինքն, և լինել ընկեր և ազգակից ՚ի ձեռն մարդե-ղուԹԵ: Կ՚ասէ որոյ ասէ ընորհալին. (՚ի մեկն. մատ. գլ. Ե.) * յո՛ ք՚ս... եղև հաւասար ընկեր նոցունց. ,, (այսինքն որդւոյ մարդկան) ըստ մաղԹանաց պաւ-,, ԹիւՀ ԹԷ յընկերել ինձ փուԹա՛. որ եկն և եղև ,, մարդ և որդի մարդոյ ՚ի զաւակէն աբրահամու ||: ՀաւաջնուԹիւն հատուածի դնի բառդ ՚ած. իսկ յերկ-րորդումն ՚ը. զի անդ առաջի առնէ մարգարէն զինքն իբրև զարարած կարօտ մեծի օգնուԹեն ՚այ. իսկ աստ իբրև զծառայ կարօտ փուԹով ընկերելոյ ՚ան: Կ՚նդ իբրև յարարչէ խնդրէ առնել՝ զի արասցէ զոր կարէ՝ առ ՚ի զերծանիլ, իսկ աստ իբրև ՚ի ՚ած խնդրէ հրամայել՝ զի հպատակեսցին նմա Թշնամիք իւր և հեռասցին: Կ՚նդ լսօսի իբր առ այն՝ որ տեսանէ զա-մենայն. իսկ աստ լսօսի իբր առ այն՝ որ տիրէ ամե-նայնի. վասն որոյ անդ դնէ ՚ած՝ առ ՚ի տեսանել և օգնել. և աստ դնէ ՚եր՝ առ ՚ի տիրել և ընկերել. և զի ՚ի յաջողիլ այսոցիկ՝ զհետ գայ յաՀոԹ լինել Թշնամեաց, վասն որոյ յարէ զկնի և ասէ:

ՔԸ. Կ՚ՀաՀէսցեն և յաՀոԹ լիցին, որ խնդրէին զանձն իմ. դարձցին յետս և ամաչեսցեն, որք խորհէին ինձ չար:

ՔԹ. Կ՚Հարցեսցեն առ ձեռն ամաչեսցեալ. որ ասէին ինձ վա՛շ վա՛շ:

Կ՚մաչելն և կիրք խորշանաց պատճառեալ յրմբռնմա-նէ ՚ած և ՚ից պակասուԹԵ երևելոյ յինքեան կամ յայլս: ՅաՀոԹ լինելն և՝ Թէպէտ բազում անգամ ՚ի տեղի ամաչելոյ ՚ի գործ ածի, որպէս և ամաչելն ՚ի տեղի յաՀոԹ լինելոյ, սակայն եԹէ կամիցիմք զա-նազանուԹիւն ինչ տալ ըստեքկին կարեն տարբերիլ ՚ի միմեանց. մի՝ ըստ առարկային, զի ամաչելն ունի ա-ռարկայ զո՛ և իցէ պակասուԹիւն հակադրեալ իմիք կա-տարելուԹԵ. իսկ աՀոԹ լինելն ունի յատուկ առար-կայ երբեմն զյոռուԹիւն յանցանաց ընդդէմ առաքի-նուԹԵ, մանաւանդ ընդդէմ բարեխառնուԹԵ, և երբեմն զանարգուԹիւն տկարուԹԵ ընդդէմ առաքի-

նուէրք արիուք։ Արդ՝ ըստ ենթակային. զի ամաչէին հայր ի պակասութէն՝ յորմէ և էր, եթէ յաստաչօղն, և եթէ յայլս. իսկ ամօթն հայր ի յոռութէն յանցանաց՝ որ էր յիւրում ենթակայի. այսինքն ի յամօթ կրօղն, և կամ որ յայն վերածի՝ թէև յայլս էր։ Արդ՝ ըստ ժամանակին. զի ամաչէին կարէ հայիլ և յապաւնին, այսինքն ի պակասութէնն՝ որ յայտնելոց է. իսկ ամօթն հայր յանցեաւն և ի նեբկայն. զրօխինակ և պատկառանքն. (զրմմ տես ի սաղ՛. լը. 20։) Արդ՝ անյատկապէս առեալ՝ ըստ առաւելութէ և ըստ նուազութէ. և ըստ այսմ յաստօք լինին ցուցանէ զառաւելութէն ամաչելոյն, որ և յոյժ ամաչէլ։

Արդ ի պաշարել Թշնամեաց զմարդն կամ ի ջանալ նոցա կորուսանել զնա, եթէ մարդն հնարիւք լուվք կամ օգնականութէ բարեկամաց, և կամ պաշտպանութէք այլոց զերծցի ի ձեռաց նոցա, նոքա պաշարին ամաչելով և ամօթով. ամաչելով, վասն զի տեսանեն զինքեանս յայնժամ անարգ երևեալ առաջի այլոց. ամօթով՝ զի տեսանեն զինքեանս՝ անիրաւ կամ յանցաւոր ցուցեալ յաչս այլոց. և զայս ամօթս առաւելապէս կրեն այն Թշնամիք՝ որք պատրուակաւ բարեկամ ցուցանելոյ զինքեանս ջանան ընտանել։

Ըստ ասացելոցս ըստ այսոցիկ խօսի աստ մարգարէն զԹշնամեաց. որք երիւք ջանային ընտանել՝ այսինքն խորհրդովք, բանիւք և գործովք. ըստ առաջնոյն ասէ. * որք խորհէին ինձ չար ||. ըստ երկրորդին ասէ. * որք ասէին ինձ վայ վայ ||. ըստ երրորդին ասէ. * որք լանդրէին զանձն իմ ||։ Այս նախ խօսի զամաչելոյն նոցա ըստ գործոց նոցին ասելով։

Ամաչեսցեն և յամօթ լինիցին, որ լանդրէին զանձն իմ։ Այսպէս թէ ասէր. Թշնամիք իմ լանդրէին զանձն իմ, այսինքն ի լանդիր էին կամ զկետ պնդեալ էին կորուսանել զիս. այլ եթէ դու նայեսցիս առ իս առ՛ի յօգնել, և փութասցիս առ՛ի ընկերել, զերծայց ես՝ի նոցանէ. որով և նոքա՝ի տեսանելն զզերծանիլս իմ՝ի ձեռաց իւրեանց՝ ամաչեսցեն և յամօթ լինիցին. մինչև դառնալ նոցա յետս. և առ այս յարէ՝ի մէջ բերեալ զխորհուրդ նոցա՝ի ջնջել և ասէ.

Գ՞արչեն չեփս և ամալէսցէն, ոյթ խորհէէն էնչ չար։ Այս-
լինքն Թշնամիք իմ որք խորհէին ՚ի միտս իւրեանց
համ որք խորհէին ՚ի սիրտ իւրեանց՝ Թէ զինչ արաս-
ցեն ընդ իս՝ զի կորուսցեն զիս, ՚ի տեսանելն զձեռն
քո ՚ի վերայ իմ՝ գարձցին յետս ամաչեցեալք։ Ալը
բառս գառնալ չեփս՝ չորեքկին կարէ իմացեալ լինել.
մի՝ փոխանակ գառնալոյ ՚ի խորհրդոց. որպէս Թէ ա-
սէր. յետս կացցեն ՚ի չար խորհրդոց իւրեանց՝ ամա-
չելով ընդ այն։ Երկրորդ՝ փոխանակ նահանջելոյ ոչ
՚ի խորհրդոյն, այլ ՚ի գործոյն. որպէս Թէ ասէր.
Թշնամիք իմ, որք զինեն չարիս խորհելով հասին ՚ի
վերայ իմ՝ ոչ կարելով կատարել զխորհուրդս իւր-
եանց՝ գարձցին և մեկնեսցին յինէն յետս, և ամա-
չեն ամաչեցեալք։ Երրորդ՝ փոխանակ վերասին ա-
մաչելոյ, որպէս Թէ ասէր. Թշնամիք իմ յետ ամա-
չելոյ ՚ի վերայ խորհրդոց և գործոց իւրեանց գարձ-
ցին ՚ի խորհիլ՝ Թէ զիարդ խայտառակ եղեն. և այ-
նու վերստին ամաչեսցեն։ Նոյ կամ ըստ լամբ". յետ
ամաչելոյ, եԹէ միւսանգամ յարիցեն ՚ի վերայ իմ,
վերստին ամաչեսցեն. և որչափ իցէ յանկուԹէն նոցա
առ ՚ի ուրախ լինել ՚ի վերայ կորստեան իմոյ, այն-
չափ լիցի և տխրիլ նոցա և ամաչել նոցին։ Ողորդ՝
փոխանակ ամօԹալոյ փախչելոյ. որպէս Թէ ասէր.
Թշնամիք իմ զայնպիսի մեծ ամօԹ կրեսցեն, մինչև
ոչ և ես կարել նոցա հանդուրժել, այլ խայտառակե-
լով փախչիլ. և այս՝ առժամայն. վասն որոյ յարե
զկնի ՚ի մէջ բերելով զվաշվաշուճն բանից նոցա և
ասէ։

ՔԱ. Գ՞արչեն առ ժամայն ամալէցեալ. որ ասէին էնչ վա՛շ
վա՛շ։ Կամն ասել՝ Թշնամիք իմ՝ տեսեալ զիս ՚ի Թըշ-
ուառուԹեն և կամ ՚ի վտանգի կորստեան, Թէպէտ
և ուրախանային և հեշտանալով ասէին. վա՛շ վա՛շ
(այսինքն օ՛խ օ՛խ), սակայն եԹէ դու հասցես ինձ
յօգնուԹեն, մի և ես կարասցին ուրախանալ և ասել
վա՛շ վա՛շ, այլ ամաչել ՚ի վերայ բանից իւրեանց, և
առ ժամայն դառնալ յետս՝ ոչ եԹէ վաշ վաշ ասե-
լով, այլ վա՛յ վա՛յ, կամ ո՛ւհ ո՛ւհ (այսինքն վա՛խ վա՛խ)։
Կամ այլապէս և՝ այսինքն է, Թշնամիք իմ Թէպէտև
մեծաբանելով ՚ի վերայ իմ ծաղր առնէին զիս, և ա-

աչին վաշ վաշ, այլ յօգնել քո ինձ՝ առ ժամայն յետս կացցեն ի բանից անտի՝ ամաչելով ի վերայ մեծաբա-
նութենէ իւրեանց, և ասիցեն վայ վայ։

Ամբրոնացին որ զբառդ չար չար՝ առնու իբր միջար-
կունեն գովութենէ, ասէ՝ թէ աստ ընդ հակառակն
դնի փոխանակ այսպանման. իբր թէ թշնամիք հոգ-
ւոյն այսինքն են դևք ի տեսանելն զչերծանիլ ուրուք
ի ձեռաց իւրեանց՝ այսպանելով ասիցեն վաշ վաշ.
որ է ասել, մինչ զերծանիցին ի ձեռաց մերոց։ Այլ
այս այսպանել և յոխորտալ նոցա գարձցի յամօթ նո-
ցին. որով ի խնդրել նոցա կորուսանել զարդարն՝
գտցեն զամօթ մեծ. իսկ արդարք ընդ հակառակն ի
խնդրել իւրեանց զնծ՝ գտցեն զուրախութենէ մեծ.
որպէս յայտ առնէ մարգարէն յաջորդ բանիւն ա-
սելով։

ՀԵ. Ընծասցեն և ուրախ լիցին ի քեզ ամենեքեան, որ խնդրեն զքեզ փրկութիւն։

Ընծալ և ուրախանալ և այլ ևս տոկին նման բառք
ի տեղի միմեանց ի գործ ածին. և զանազանութենէ
տոցա նուրբ է. (զորմէ տես ի սաղ". ՃԹ. 2.) իսկ ի
հասարակի խօսելով զանազանութենէ տոցա մտածի ըստ
առաւելութենէ և ըստ նուազութենէ՝ իբր զի ընծալն
ցուցանէ զառաւելութենէ ուրախութենէ։ Որ միտ դնէ
և աստ յասելն։

Ընծասցեն և ուրախ լիցին ի քեզ ամենեքեան, որ խնդրեն զքեզ փրկութիւն։ Ուրախ լինել կամ ցնծալ առ ած երբեմն լինի, մի՝ ուրախանալով ընդ բարութենէն ոյ. այսինքն է ուրախ լինելով ընդ այս՝ զի ած է յանբաւս բարի, յանսահմանս կատարեալ ևն։ Երկրորդ՝ ուրախանալով ընդ բարութենէն զոր ունի կամ զոր ունելոց է ի նմանէ. մինչև եթէ այն բարութենէ զոր ունի՝ ոչ էր կամ, ոչ ուրախանայր ընդ այն։ Երրորդ՝ ուրախանալով ընդ այն ամենայն զոր առնէ ած՝ եթէ ի փրկելն, և եթէ ի պատժելն. եթէ ի յաջողելն, և եթէ յոչ յաջողելն. եթէ ի մխիթարելն, և եթէ յանմխիթարելն թողուլն. զի զամենայն համարելով բարի՝ ցնծայ ընդ այն։ Կամ երից ըստ այսոցիկ ասէ ցնծասցեն և ուրախ լինիցին ի քեզ ամենեքեան նոքա,

որք խնդրեն զքեզ ՝ որ :

Նախ խնդրել զնա լինի չորեքկին, մի՝ յորժամ որ գտցուի՛ մեզս գառնայ առ նա՝ ցանկանալով գտանել զնա զոր կորուսեալն էր, և մերձենալ՝ յորմէ հեռացեալն էր. քայց յայսմ կանխէ խնդրելն ոյ զմարդ՝ քան մարդոյ զնա, այնու զի նա խնդրէ գտանել զկորուսեալն, և կորուսեալն խնդրէ զխնդրօղ իւր. զորով եթէ ոչ լինի անփոյթ՝ գտանէ անտարակոյս։ Երկրորդ՝ յորժամ որ գտցուի՛ մեզս գոլով՛ի նեղութեան՝ կամ՛ի փորձութեան, ոչ դիմէ առ այս որ կամ առ այն՝ այլ միայն առ նա։ Երրորդ՝ յորժամ որ՛ի գործս իւր և՛ի կեանս իւր խնդրէ առնել զհաճոյս նմա և ոչ զհաճոյս կամաց իւրոց. և յամենայնի առ նա հաւաչէ, և ընդ նմա խօսակից լինիլ փափաքէ, կամ յորժամ որ ցանկայ՝ զի կատարեսցի կամքն նմա, կամ փառաւորեսցի յարարածոց, և յայնցանէ՝ որք գառնան յապաշխարութեն. և՛ի տեսանելն ուրախանայ. որպէս լինի հրեշտակաց յերկինս. (ղուկ. ԺԵ. 10։) Յորմէ՝ յորժամ որ ցանկայ և փափաքի հասանել առ ժառանգութենն ոյ, որպիսի էր սա ինքն երանելիս, որ յոգւոց ելանէր, և ասէր. երբ եկից, և երեւեցայց երեսացդ ոյ։ Երդ որք միանգամ այսպիսի օրինակաւ ասէ խնդրեն զնա, նոքա ուրախ լինիցին առ նա յամենայնի, և փառաւորեսցեն զնա յամենայն ժամ, ըստ որում յայտ առնէ յաջորդ բանիւն ասելով։

Ե. Ասացեն յամենայն ժամ, ուր է նա. և ոչ տեսցեն զէրկնաւորն նա։

Որք խնդրեն զնա պարզմտութեք՝ գտանեն զնա շնմարտութեք. և՛ի գտանելն՝ երկոքումեք զգաճին. նախ՝ անպատում ուրախութեք, զորմէ ասաց՛ի նախընթաց համարն. * ցնծասցեն և ուրախ լինիցին ||. երկրորդ՝ ծայրագոյն խոնարհութեք, որով որչափ մեծ ըմբռնեն զնա՝ այնչափ նուաստ և անարգ տեսանեն զինքեանս։ Եւ այսմ զհետ գայ նախ քնաւ երբէք չապաւինիլ յանձինս՝ որպէս թէ անձամբք բաւականք իցեն հասանել փրկութենէ, այլ յանձն առնել զինքեանս բոլոր՛ի ձեռս նոյ, և՛ինամանէ ակն ունիլ այնմ

փրկուԹԵ՝ Օ՜հետ գայ երկրորդ՝ յամենայնի և յա-
մենայն ժամ նուաստացուցանել զինքեան, և զՅԾ
միայն մեծացուցանել. սմին իրի ասէ։

Ա.ասացեն յամենայն ժամ, ԹԵ է ՅԾ, և ոչ սէրըն չէրկո-
ՐԹԵ։ Ուր շարկապէ Ա՝ որոշ որոշ տայ իմանալ ըզ-
բանադ. որպէս Թէ ասէր, եԹէ նոքա ոչք խնդրեն
զքեզ, զոր չիշեայ՝ ինախընԹացաց համարըն, և եԹէ
նոքա ոչք սիրեն զփրկուԹիս քո՝ ասացեն յամենայն
ժամ, ՄԵԾ է ՅԾ։ Ա.յս ասելս զոր գնէ բառիս ա-
սացեն ոչ միայն է առ արտաքս, այլ և առ՝ի ներքս.
իբր զի ոչք Չանաչենն զՅԾ, և սիրեն զփրկուԹի՛ նո-
րա, ըմբռնելով Թէ քանի՛ ՄԵԾ է ՅԾ, ասացեն
յամենայն ժամ՝ի ներքս՝ի միտս իւրեանց. արդարև
ՄԵԾ է ՅԾ, և զայս ասացուած արտաքս ևս վե-
ՐՈՒԹԵՆ։

Ա.րդ ՄԵԾ ասի ՅԾ ոչ ըստ չափու՝ այլ ըստ գե՛րա-
զանցուԹԵ. զի յանհուԹ Չակս ՄԵԾ լինիլն է, գե՛րա-
զանց լինել. և այս մտածի յՅԾ ոչ ըստ էուԹԵ, կամ
ըստ գոյուԹԵ, զի է որ էն անեղ, այլ ըստ այլևայլ
բանի. նախ՝ ըստ անսահմանն կատարելուԹԵ, այսինքն
ըստ բարուԹԵ, ըստ իմաստուԹԵ, ըստ քաղցրուԹԵ
ևՅԾ։ Ա.րկրորդ՝ ըստ անսահմանն տեւողուԹԵ, այսինքն
ըստ յաւիտենականուԹԵ։ Ա.րկրորդ՝ ըստ անսահմանն
կարողուԹԵ՝ի գործելն. և ս և ըստ մանաւոր խնա-
մոյ՝ զոր ցուցանէ առ այնոսիկ՝ որք սիրեն զփրկու-
ԹԵ՛ս նորա։ Ա.սկ սիրելն զփրկուԹիս այ երկակի կա-
րի՛ լինել. մի՝ի փափաքիլն եզեր փրկուԹԵ, այսինքն
՝ի յանկալն երանուԹԵն այնմիկ, զոր տալոց է ՅԾ
սիրողաց իւրոց յարքայուԹԵ իւրում. և զի այս է՝ի
ժառանգուԹԵն այ՝ ասի լինել այ. և ըստ այսմ նոյն
է ասել՝ սիրել զփրկուԹի՛ քո, և ասել, փափաքիլ՝ի
փրկուԹի՛ քո։ Ա.րկրորդ՝՝ի փափաքիլն գալստեան
փրկուԹԵ, որ եղիւ՝ի գալ ՅՆ մեզոյ, որ և ունի
կատարիլ երկրորդ գալստեամբ նորա։ Ա.րդարև
փափաքիլն մարդոյ, զի յամենայնի ՅՒՀ լինի փրկու-
ԹԵ՛ իւր յա՛և իցէ չարէ։ Ա.ռաջնուԹն ցանկան ամե-
նեքեան, զի ըստ ամենայնի լնացին երանուԹԵ ըստ
հոգւոյ և ըստ մարմնոյ. երկրորդուԹն ցանկային նա-
հատեաք և մարգարէք. երրորդուԹն ցանկան երկիւ-

ղածք ան՝ որ ՚ի նեղութիս իւրեանց ոչ կամին՝ զի փրկութի՛ իւրեանց լինի լոկ մարդկային հնարիւք, այլ ածային հաձութիք, և նորա կարողութիք։

Ա. Եւ զի այսպիսի կամեցողութի՛ նոցա ապահովս առնիցէ, զսա, զի սովաւ համարին կալ՚ի ձեռս ամենակալ ան, վասն այնորիկ և լեալ լինին ուրախութիք, և գոչեն, մեծ է ած և կարօղ՚ի փրկել։ Յայսպիսի վիճակ երկիւղածաց ան հայեցեալ մարդարէին, (և և իւրաքանչիւր առն արդարոյ) խոնարհի յանձն իւր, և պաղատի առ ած՝ ինքեան և ցուցանել զայնպիսի խնամն. և յայս միտ յարէ զկնի և ասէ։

Շ. Ա՛ս աղչապ և փնանկ եմ, ած օգնեա՛ ինձ. օգնական և ազատիչ իմ ես դու. ած իմ մի՛ յամենար։

Ընդքատն է՝ որ չունելով զկարևոր պիտոյս անձին՝ կայ՚ի կարօտութե. իսկ տնանկ ասի անկեալն՚ի տա նէ՝ այսինքն՚ի մեծութէ յաղքատութի՛. ուստի ամենայն տնանկ կարէ ասիլ աղքատ, բայց ոչ ամենայն աղքատ կարէ ասիլ տնանկ. զի գոն աղքատք բազմք որք չեն անկեալ՚ի մեծութէ, այլ յաղքատութե ծնեալ են, և յաղքատութե կան։ Ընդ այդ աղքատն գաւ առաւել է վիշտ տնանկին քան ասկ աղքատին. զի նա առեալ զփարձ մեծութե, և յանկարօտ կեանս վայելեալ՝ ՚ի զրկիլն անտի՝ մեծապէս տառապի քան զասկ աղքատն, որ չէ առեալ զձաշակ մեծութե և անկարօտ լինելոյ։ Ընդյայսիսի իմն տեսեալ մարգարէն և զինքն և զայլս, կարօտիւ զիմմէ առ ած, և ասէ։

Ա՛ս աղչապ և փնանկ եմ. ած օգնեա՛ ինձ։ Ընդքատ կոչի զինքն, զի ո՛ և իցէ մարդ թէ և արդար իցէ՝ աղքատ ասի ըստ երից. մի՝ զի յիւրմէ ոչինչ ունի ոչ ըստ պիտոյից մարմնոյ, և ոչ ըստ պիտոյից հոգւոյ. և կայ միշտ՚ի կարօտութե ընդունել յայլ զպիտոյս անձին իւրոյ՝ մանաւանդ որ ըստ հոգևորին այսինքն ըստ ընտրհաց, ըստ առաքինութե՛ց, և ըստ բարեգործութե՛ց։ Ընդքատ ասի երկրորդ համեմատութի՛ գերագոյն և անմարմնին գոյացուե՛ց, այսինքն հրեշտակաց. զի նոքա կան՚ի լիութե՛ իմացականութե. իսկ մարդս է եզր իմացականութե. իբր զի քան զմարդն ոչ կա-

ըէ գոլ ատորին էակ յիմացական կարգի . զի է՛ի յետին գոլ՛ի սահմանի իմացականութենէ . վասն որոյ այնպէս համեմատի առ հրեշտակս , որպէս յետին էքաւոր աղքատն առ ամենալի փարթամին : Ա.ղքատ ասի երկրորդ համեմատութեամբ երանելոց , որք են յարքայութենէ . զի նոքա ունին յինքեանս զանսահման գանձն ուճդութենէ՝ ժառանգելով զնա , իսկ մարդս ցորչափ է՛ի մարմնի՝ թէ և ունիցի զչնորհս՝ համեմատութենէ երանելոց է աղքատ, զի չէ ժառանգեալ զանսահման և զանսպառ գանձն զայն՝ զոր նոքա ժառանգեն :

Ինանկ ևս կոչէ զինքն , զի ո՛ և իցէ մարդ տնայնկ է վասն բազում պատճառաց . նախ՝ վասն անկանելոյ՛ի տանէ , այսինքն՝ի դրախտէ փափկութենէ և՛ի սկզբնական արդարութենէ՝ յայն աղքատութի՝ յորում է . երկրորդ՝ վասն վերստին անկանելոյ՛ի չնորհայ՝ զոր ընկալաւ՛ի մկրտութենէ կամ յապաշխարութենէ : Երրորդ՝ վասն անդադար անկանելոյ՛ի լաւէ՛ի վատթարն . իբր զի այսօր զօրանայ , վաղիւն տկարանայ . այսօր զգաստանայ , վաղիւն ընդարմանայ . այսօր սրբի՝ վաղիւն աղտեղի . այսօր արդարանայ՝ վաղիւն վատթարանայ . (զորմէ տե՛ս՛ի նարեկն . քան . ՀՓ :)

Եւ արդ քանզի յայսմ աստենայնի միշտ կարօտի մարդ խնամոյն Աստ , վասն որոյ աղաչէ զնա մարգարէն ասելով . օգնեա՛ ինձ ա՛ծ . ուր բառդ օգնել՝ դնի ընդհանրապէս՝ փոխանակ խնամելոյ Աստ . որպէս թէ ասէր . դու որ խնամօղդ ես ամենայնի՝ տեսանելով զիս յաղքատութենէ և՛ի տնանկութենէ , ցո՛յց ինձ կարօտեալս զխնամս քո :

Ա.յլ աստ գիտելի է՝ զի մարդն ըստ որում մտածի աղքատ , կարօտի օգնականութենէն Աստ՝ առ՛ի գործել զբարին . իսկ ըստ որում մտածի տնանկ , կարօտի մանաւանդ ձեռնտուութեն Աստ այսինքն մանաւանդ փրկութենէ առ՛ի ելանել՛ի թշուառութենէ անտի՝ յոր անկեալն է . վասն որոյ և մարգարէն յետ՛ի հատարակելոյ՝ օգնեա՛ ինձ , մանաւանդ զբան իւր ըստ երկուցս ըստ այսոցիկ և ասէ :

( ) Փնտրեցի և գտի զնա . որ է մի յանդեսս : Ա.ճ օգնական ասի՝ յորժամ ձեռնտու լինի ուժեք գործել

զայն ինչ զոր ինքնին ոչ կարէ. սոյնպէս և փրկիչ
սա՝ յորժամ սղատէ զոք ի թշուառութէ կամ ի
հոգեառնէ՝ յորմէ ինքնին ոչ կարէ ազատիլ։ Ա.րդ թէ
պիտ ասծ միշտ պատրաստ է օգնական լինել ի կարօ-
տութէ և փրկիչ ի թշուառութէ, քայց երբեմն երևի
յամենալ. և այս եթէ ի հոգմանէ այլ մտածեսցի՝
վասն երկուց կարէ լինել. մի՝ զի այն է հաճութիւն
համաց նորա՝ որ անհաս է ի մէնջ. և երկրորդ՝ զի
զայն՝ օգուտ տեսանէ մարդոյ ըստ պէսպէս իրաց,
ըստ հանդիսի հաւատարմութէ, ըստ ցուցոյ հաս-
տատութէ, ըստ պահանջելոց կարգի համբերութէ,
ըստ առաւելութէ վարձուց, և ըստ այլ բազում
իրաց։

Նոկ եթէ ի հոգմանէ մարդոյ մտածեսցի, վասն չո-
րից պատահի այս յամեցումն օգնականութէ և փըր-
կութէ. մի՝ վասն անարժանութէ մարդոյ՝ որ արգելս
դնէ։ Երկրորդ՝ առ ի ճանաչել կամ առ ի տեսանել
մարդոյ զկարօտութէ և զթշուառութէն իւր որով ստի-
պեալ լինի խնդրել յայլ զօգնութէն և զփրկութէն նո-
ցա։ Երրորդ՝ առ ի առաւելապէս արժանաւորել (կամ
արդիանաւորել) մարդոյ այնմ, զոր խնդրէ, զի որ
երկար ժամանակաւ թախանձէ վասն իրին, առաւել
արժանաւորի այնմ քան որ ի սուղ ժամանակի։ Ա.ր-
դ՝ առ ի զգուշանալ պահպանութէ իրին յետ ընդ-
դունելոյն. իբր զի զոր յետ բազում թախանձանաց
անագան ընդունի ոք ինչ, ճանաչելով զյարգ նորա՝
զգուշանայ պահել՝ զի մի կորուսցէ։

Ա.յլ քանզի տկարութէ և կարճմտութէ մարդոյ ոչ
կարէ երկարել յայսմ, աղաչէ մարգարէն զնա՝ զի
մի յամեսցի յոյժ՝ լինել ինքեան փրկիչ և օգնական.
դու ինր ասէ՝ որ օգնական իմ ես ի կարօտութէ, և
փրկիչ իմ ես ի թշուառութէ, մի յամենար ցուցա-
նել զքեզ լինել ինձ օգնական և փրկիչ՝ և ի կա-
տարած կենաց իմոց ժամանեցուցիչ ի կեանս յաւի-
տենական։

ਪੰਜਾਬ ਦੇ ਦਖਣੀ ਸਰਹੱਦੀ ਜ਼ਿਲ੍ਹਿਆਂ ਅਤੇ ਬੰਬਈ ਰਾਜ ਦੇ ਉਤਰੀ ਜ਼ਿਲ੍ਹਿਆਂ ਵਿਚ ਵਸਣ ਵਾਲੇ ਲੋਕ ਮੁਖ ਤੌਰ ਤੇ ਖੇਤੀ ਕਰਦੇ ਹਨ।

ਇਸ ਜਾਤੀ ਦੇ ਲੋਕ ਆਪਣੇ ਆਪ ਨੂੰ ਰਾਜਪੂਤ ਵੰਸ਼ ਦੇ ਦਸਦੇ ਹਨ। ਇਨ੍ਹਾਂ ਦੀ ਬੋਲੀ ਮਾਰਵਾੜੀ ਹੈ ਪਰ ਇਹ ਲੋਕ ਪੰਜਾਬੀ ਵੀ ਬੋਲ ਲੈਂਦੇ ਹਨ। ਇਨ੍ਹਾਂ ਦੇ ਗੋਤ ਰਾਠੌਰ, ਪੜਿਹਾਰ, ਪੰਵਾਰ, ਸੋਲੰਕੀ, ਚੌਹਾਨ ਆਦਿ ਹਨ। ਇਹ ਲੋਕ ਹਿੰਦੂ ਧਰਮ ਦੇ ਸਾਰੇ ਤਿਉਹਾਰ ਮਨਾਉਂਦੇ ਹਨ। ਇਨ੍ਹਾਂ ਵਿਚ ਵਿਆਹ ਦੀਆਂ ਰਸਮਾਂ ਵੀ ਹਿੰਦੂ ਧਰਮ ਅਨੁਸਾਰ ਹੀ ਹੁੰਦੀਆਂ ਹਨ। ਇਨ੍ਹਾਂ ਵਿਚ ਵਿਧਵਾ ਵਿਆਹ ਦਾ ਰਿਵਾਜ ਨਹੀਂ ਹੈ। ਇਨ੍ਹਾਂ ਵਿਚ ਤਲਾਕ ਦੀ ਰਸਮ ਵੀ ਨਹੀਂ ਹੈ। ਇਹ ਲੋਕ ਮੁਰਦੇ ਨੂੰ ਦਫ਼ਨਾਉਂਦੇ ਹਨ। ਇਨ੍ਹਾਂ ਵਿਚ ਮੁਰਦੇ ਨੂੰ ਦਫ਼ਨਾਉਣ ਦੀ ਰਸਮ ਵੀ ਹੈ। ਇਨ੍ਹਾਂ ਵਿਚ ਮੁਰਦੇ ਨੂੰ ਦਫ਼ਨਾਉਣ ਦੀ ਰਸਮ ਵੀ ਹੈ। ਇਨ੍ਹਾਂ ਵਿਚ ਮੁਰਦੇ ਨੂੰ ਦਫ਼ਨਾਉਣ ਦੀ ਰਸਮ ਵੀ ਹੈ।

ਇਹ ਲੋਕ ਮੁਖ ਤੌਰ ਤੇ ਖੇਤੀ ਕਰਦੇ ਹਨ। ਇਨ੍ਹਾਂ ਦੀ ਬੋਲੀ ਮਾਰਵਾੜੀ ਹੈ ਪਰ ਇਹ ਲੋਕ ਪੰਜਾਬੀ ਵੀ ਬੋਲ ਲੈਂਦੇ ਹਨ। ਇਨ੍ਹਾਂ ਦੇ ਗੋਤ ਰਾਠੌਰ, ਪੜਿਹਾਰ, ਪੰਵਾਰ, ਸੋਲੰਕੀ, ਚੌਹਾਨ ਆਦਿ ਹਨ। ਇਹ ਲੋਕ ਹਿੰਦੂ ਧਰਮ ਦੇ ਸਾਰੇ ਤਿਉਹਾਰ ਮਨਾਉਂਦੇ ਹਨ। ਇਨ੍ਹਾਂ ਵਿਚ ਵਿਆਹ ਦੀਆਂ ਰਸਮਾਂ ਵੀ ਹਿੰਦੂ ਧਰਮ ਅਨੁਸਾਰ ਹੀ ਹੁੰਦੀਆਂ ਹਨ। ਇਨ੍ਹਾਂ ਵਿਚ ਵਿਧਵਾ ਵਿਆਹ ਦਾ ਰਿਵਾਜ ਨਹੀਂ ਹੈ। ਇਨ੍ਹਾਂ ਵਿਚ ਤਲਾਕ ਦੀ ਰਸਮ ਵੀ ਨਹੀਂ ਹੈ। ਇਹ ਲੋਕ ਮੁਰਦੇ ਨੂੰ ਦਫ਼ਨਾਉਂਦੇ ਹਨ

ջարդարուեա ա։ 18 Ա՚ինչ յալեաուել ե՚ի ճերանալ, աճ
էմ ի՚ ըողուր չէա։ 19 Ա՚ինչ պապեայե բապուկ ա՝ ապգե
ամենայնե ու գալոցն է։ 20 ՚Ո՚ղջուեա ա ե ջարդարուեա
ինչ ՚ե բարյուեա, ըոր արարեր ինձանե. աճ ո՚նմանէ չէ։
21 Արյաե յուգեր էնչ նեղուել բապու ե չարչարանա, դար-
յար ինելարեցեր չէա. ե ՚ե խորց անդնդոց երկրէ հաներ չէա։
22 ՚Յաճախեցեր ՚ե ջղուեա ա, դարյար ինելարեցեր չէա.
ե ՚ե խորց երկրէ դառանգամ հաներ չէա։ 23 Ա՚րդ ե էա
խոսփովան եղէց ա՚ել ՚ե պապրասպու՚ե սաղմոսաց ճշմարեպ աճ.
սաղմոս սասցեց ա՚ել օրհնուել՚ե սուրբ երկրայէլէ։ 24 ՚Յնճաա-
ցեր չըեուած էմ, յորճամ սաղմոս սուեցեմ ա՚ել. ե անչափ էմ՝ ըոր
ե երկեցեր։ 25 Ա՚յս ե լեզու էմ՝ ջղրհանապատ խօսեացե
ջարդարուեա ա. 26 ՚Ի ճամանակէ որպէս յաղող լեցին ե ա-
ղաչեացեն, ոչ կանդրկեն էնչ չար։

ՎԱՐԴԱՆԱՅ։

Սաղմոս ՚ե դաուել որդուցն յովհաննէայ, ե առաջնոյ գե-
ղեա. անվերնագիրե ՚ե հեբրայեցւոց։



ՈՐՔԱՓ ՕՐՈՒԱՆԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆ

ունիմք, այնչափ փոփոխուե կայ ՚ի բառս վերնագրիդ. ՚ի բազումս յաւելեալ լինի և բառդ ՚ե հապարաց. որպէս և ՚ի վարդանայն, յորմանս փոխանակ դնելոյ * և առաջնոյ գերուեե ‖. դնի չեա առաջնոյ գերուե. ոյնպէս է և ՚ի վարդանայն։ Յորմանս դնի առանց շաղկապիս և՝ այսպէս. որդւոյն յովհաննայ առաջնոյ գերուե. յորմանս ՚ի ներգոյականն այսպէս. որդւոցն յովհաննայ ՚ի յառաջինն գերուեե։ Յորմանս ոչ դնի ՚ի վերջոյ անվերնագիրն. և յորմանս դնի միայն բառս անվերնագիրդ առանց յարելոյ զբառդ ՚ե հեբրայեցւոց, որպէս և ՚ի վարդանայն ըստ ձեռ". իակ յորմանս երկոքին ևս դնին, որպէս և ՚ի լամբ"։ Ա՚յլ այս տարբերուեիք ոչինչ այլայլեն զմիտս բանին։

Յեբր" և ՚ի քաղդ" ոչ դնի ինչ վերնագիրն. յոյր սակս

եդեալ է՝ի մերումն անվերնագիրը՝ի յեբր՝՝ ։ Ի թարգ՝՝ եօթ՝՝ դնի * ՝ի դաւիթ (սաղմոս) որդւոցն յոսիբպատա ,, բայ, և առաջին գերեվարացն ‖ . այնպէս դնի և ՝ի լատ՝՝ և յեթէովմ՝՝. ևս և յարոբ՝՝ ։ Յօրինակս լինչ եօ թանանից յաւելեալ լինի ՝ի վերջոյ և ըստ մերումն. անվերնագիրը յեբրայեցւոց ։

Ի. ու իմանալոյ զգօրութիւն այսր վերնագրի, գիտելի է. զի գերութիւնն բաբելացւոց երկարի ասի լինել. առաջինն ՝ի հինգերորդ ամի թագաւորութենն ելիւա կիմայ՝ որ և կոչի յովակիմ. 602 ամօք յառաջ քան զքս յամի աշխարհի 3398. կամ ըստ եօթ՝՝ 4597. որ և ասի սկիզբն եօթանասնամեայ գերութենէ բաբելացւոց ։ Երկրորդն յետ քանի մի ամաց ՝ի գերել յեքոնիայ որ և յովակիմ՝ ՝ի բաբէլոն, 595 ամօք յառաջ քան զքս ։ Երրորդն յետ երբ ժա՞ ամաց ՝ի բառնալ թագաւորութենն յուդայ՝ 584 ամօք յառաջ քան զքս ։ Ի. րդ յառաջնում գերութենէ, նոյնպէս և յետ առաջնոյն այսինքն յերկրորդումն՝ անձնատուր եղեն հրէայք յարքայն բաբելացւոց. յառաջնումն անկան ընդ գերութիւն՝ բայց սակաւք վարեցան յերկրէ իւրեանց. իսկ յերկրորդումն բազումք վարեցան հանդերձ թագաւորաւ. այլ յերրորդումն ընդդէմ կացեալ առ հարակ գերեցան, և տաճար նոցա այրեցաւ. (որպէս է տեսանել՝՝ ՝ի գ. թագ՝՝. ի՛գ. ։ և 10 — 17. և ի՛ե. 1 — 11)։

Յաւուրսն յայնոսիկ յառաջնոյ գերութենէ անտի սկսաւ յորդոր լինել երեմիա մարգարէ առ հրէայս ուղղել զսիրտս իւրեանց, և ս և հնազանդիլ արքային բաբելացւոց. և նոքա թէպէտ և հնազանդեցան յանձնատուր լինիլ արքային, բայց ոչ ուղղեցին զսիրտս իւրեանց։

Ի ժամանակի անդ էին որդիք յոսիպատաբայ որդւոյ ռեքաբայ. (որպէս գրէ երեմիա. լե. 1 — 13.) զորս ղևտացիս համան՝ի վարդան. տոքա պատուէր առեալ ՝ի նախնոյն իւրեանց ՝ի ռեքաբայ՝ ոչ ըմպէին զգինի, և ոչ շինէին իւրեանց տունս, ոչ սերմանիս սերմանէին, և ոչ այգիս տնկէին. այլ վրանաւ շրջէին։ Եւ ՝ի գալ նաբուգոդոնոսորայ յերկիրն յուդայ՝ մտին տոքա յերուսաղէմ. և զի հնազանդ գտան յամենայնի

նախնոյն իւրեանց՝ առաջի եղ զսոսա երեմիա օրինակ հրէից՝ հնազանդիլ ՚ին։

Ի՛ յայնմ ժամանակի ևս անձնատուր եղեն հրէայք յարքային քաղքացւոց հնազանդելով բանիցն երեմիայ ըստ օրինակի որդւոցն յովնադաբայ. և որպէս հաւանական երևի, սոքա ևս վարեցան ընդ հրէայս ՚ի քաղքեն՝ յուսալով ամենեցուն առ հասարակ չՙոճ թէ այլ արասցէ ինքեանց, և դարձուսցէ զինքեանս ՚ի գերուէ անտի։

Յայս յոյս հաստատեալ սոցա և նոցա սկսան երգել զայս սաղմոս դաւթի, յարմարելով ինքեանց զբան սո-
րա. վասն որոյ և յետոյ յաւելին ոմանք դնել ՚ի վեր-
նագրի սորա զքաւստղ. որդւոցն յովնադաբայ և առաջնոց գերելոցն։ Որով ըստ նախակարգեալ բանիցդ լման-
ցեալ լինի՝ թէ այս սաղմոս՝ որ յօրինեալ է ՚ի դաւ-
թայ՝ եղև երգ և պաղատանք որդւոցն յովնադաբայ, և այնոցիկ՝ որք եղեն ՚ի ժամանակս առաջնին գերու-
թեան։

Ուր քառս առաջին՝ դնի հայելով ՚ի վերջինն, որով նշանակին երկու գերութիւնք յառաջեալք քան զվեր-
ջինն. որպէս թէ եգեալ էր. զայս սաղմոս ասէին նո-
քա որք յառաջ քան զվերջին գերութիւնն վարեցան ՚ի բաբելոն։ Ամին իրի բազումք ՚ի բերանոյ գերելոցն մեկնեն զայս սաղմոս։ Նակ այլք ՚ի բերանոյ որդւոցն յովնադաբայ, որք ՚ի մտանելն յերուսաղէմ, որպէս թէ գերի ճնացին անդ. զի ինքեանք գոլով վրանա-
բնակք ՚ի դաշտի, կալն նոցա ՚ի ներքս ՚ի քաղաքի՝ էր իբր առաջին գերութիւն նոցա։ Այլոց այս մեկնութիւնք ըստ յարմարութեանն միայն դնին, վասն որոյ և ոչ հա-
մարձակիմք հաստատել ինչ։

Արժէ և ևս ասել, թէ աստ բառիս յոլովաբար նշա-
նակի յուսացօղ կամ հաձեցօղ, ըստ որում յովնադաբ թարգմանի յօժարամիտ կամ ուխտօղ. յոր միտ յա-
սելն՝ որդւոց յովնադաբայ, իմացեալ լինին որդիք յօ-
ժարամիտ յուսացողաց կամ ուխտաւորաց. ըստ որում այս սաղմոս ՚ի բերանոյ այնպիսեաց ասի։

Նակ թէ երբ և ինչ առթէ ասացեալ եցէ դաւթի զայս սաղմոս՝ բազում են կարծիք։ Ումանք թէ ասաց ՚ի յեռին ժամանակս, և այն՝ մարգարէութիւն ՚ի բե-

բանոյ գերեվարէցն ՚ի բաբելոն : Ոմանք ասէ թէ ՚ի ժամու նակս հալածանացն սաւուղայ. և այլք թէ ՚ի ժամու նակի՝ յորժամ փախեաւ յերեսաց աբեսողոմայ : Եւ այս յետին կարծիք երևի բազմայ հաւանական. որ- պիսի է երեմնեւրորդ սաղմոսն, որ նման է այսմ. և ըստ սմին սկսանի :

Լոկ դաւիթ անյաղթ ՚ի յաւուրսն սաղ. վերածէ զայս ՚ի ժամանակ բժշկութենէ դաւթի. * իսկ իբրև ,, ասէ բժշկեցաւ դաւիթ ՚ի հարուածոցն՝ յայնժամ ,, ասաց զեօթանասներորդ սաղմոսն. ՚ուր ո՞ նման ,, է քեզ. ՚որչափ ցուցեր ինձ նեղութիւն և չարչա- ,, րանս. և զղջմամբ իմով կենդանացուցեր զիս ևն : Կան և այս որք պնդեն՝ թէ զայս սաղմոս ասաց դաւիթ իբր մի ընդ նախընթացին. զի որովհետև չունի ա- սեն սա վերնագիրը ինչ առ եբրայեցիս՝ հարկի իբր շարունակութենէ նախընթաց սաղմոսին. այն՝ իբր յա- ռաջաբանութենէ, և սա իբր բուն ձառ նորին :

Որպէս և դիցի՝ ասելի է՝ թէ զայս սաղմոս յօրինեաց դաւիթ հայելով ՚ի ժամանակս հալածանաց՝ և տա- ռապանաց՝ զորս կրեաց նա՝ և զորս ունէին կրել ար- դարք. ուստի և բանք սաղմոսիս ասին միանգամայն ՚ի բերանոյ դաւթի և ՚ի բերանոյ իւրաքանչիւր ար- դարոյ. զի ոչ ասակ վասն իւր եթող զսա դաւիթ իբր յիշատակ, այլև վասն այլոց ՚ի սիրելութենէ նոցին ՚ի նեղութենէ իւրեանց. յոր միտ ունելով մեկնել և մեք :

Այլ գիտելի է՝ զի յայս սաղմոս մինչև ՚ի համարն 20. մարգարէն ձևացուցանէ զինքն իբրև ՚ի նեղու- և ՚ի վիշտս, և յուսալով պաղատի վասն ազատելոյ, և խոստանայ գոհանալ յաղագս այնր. իսկ ՚ի 21 համա- րոյ և անդր իբրև զերծեալ ՚ի նեղութենէ, և ազատ- եալ ՚ի վշտաց. որոյ վասն գոհացողական դնէ ըզ- բանսն :

ԲԱՆԻ

ԺԲ. Ի՛ՆՉ ԵՔԵՑ ՅՈՒՍԱՑԱՅ. ՄԻ ԱՄԱՉԵՑԵՑ ՅԱՒԵՏԵԱՆ. ՅԱՐՏԱՍՈՒԵԼ ԵՍ ՔՈՒՆ ՀԱՄԱՐ ԵՄ ԱՊԱՐԵՑԻ ՀԱՒ։

ՄԱՆԿԱՒԱԺԻՆ

Ըստ կրկին իրաց յուսայ մարդ յաճ՝ մի ըստ ընդունելութե բարւոյ, և մի ևս՝ ըստ ազատութե՛ի չարի. կամ՝ որ նոյն է, մի՝ առ՛ի գոհանել՛ի նմանէ զոհատ անձին, և մի ևս՝ առ՛ի ազատիլ՛ի վշասուց կամ՛ի նեղութե՛ց՝ կամ՛ի ձեռաց թշնամեաց ևս, որ և տիրապէս ապաւինիլ ասի կամ ապաստանիլ. և այս կարէ լինել կամ յայնժամ՝ յորժամ չիք ուստեք օգնութե՛ն՝ քայց միայն յն, և կամ յայնժամ յորժամ թէև հնար իցէ այլուստ գոհանել զօգնութե՛ն, քայց ոչ վստահացեալ մարդոյ յայն՝ միայն յաճ ապաւինի։ Նրևի թէ ըստ այսմ մտաց առեալ խօսի սատ մարդապարէն զայս քան յառաջն։

սա յինէն։ Ա մէջ բերեալ ասպա և զժամանակն, յո-
րում ուներ խօսել՝ ասե։

իգ. Ձամանակէ որում յամօր լիցին և ամենայնին ,
նորընծեայն ինձ լոր։

Օ որ եգ 'ի համարն 13. ասա զնոյն դնե իբրև զա-
րիթ գոհանալոյ իւրոյ զնոյ. յասելն։

Ձամանակէ որում յամօր լիցին և ամենայնին, այ նորընծեայն
ինձ լոր։ Կամ ասէ. լեզու իմ օրհնեսցէ զքեզ 'ի
ժամանակին յայնմիկ , յորում ազատեսցես զիս 'ի
թշնամեաց իմոց , որով և յամօթ լիցին նոքա. զի
ուր կարծէին չարիս հասուցանել ինձ՝ բարիս հա-
սուցին. վասն զի եղեն պատճառ պաշտպանեալ լի-
նելոյ ինձ 'ի քէն։

Այս ըստ այսմ բառդ որում՝ դնի փոխանակ բառիս
չորեքտ, կամ ինչ. որպէս թէ եղեալ էր. օրհնեցից
զքեզ՝ չորեքտ յամօթ լիցին թշնամիք իմ։ Ա յս
ժամանակ կարէ հայել և 'ի ժամ մահու՝ յորում յա-
զտիլ Հոգւոյն 'ի բռնութենէ դիւաց ժամանակ առ ած
և ժառանգիլ զնա յաւիտեան։

ՍԱՂՄՈՍ ՃԱ.

Խնդրուած դաւթի վասն թագաւորութեն սողոմո-
նի՝ հայելով՝ ի քո, որ ես յերկնից յերկիր եբեր զօդ,
և արար արդարութիւն և խաղաղութիւն, փրկեալ զազգ
մարդկան. և կարգեաց իւր երկրպագուս զազգս
օտարս զհնդիկս, և զթագաւորս արաբայ և սաբայ,
և ս և Թարսոն և կղզեացս ետ. մինչդամայն և
բանք փառաւորելոյ անուան նորա ընդ ամենայն տե-
ղիս:

Ի սողոմոն սաղմոս ՚է դաւթի:

1 Աստուծ դատաստանս քո արքային տուր, և արդարութիւն քո որդւոյ թագաւորի: 2 Դատել զժողովուրդս քո արդարութեամբ, և զաղքատս քո դատաստանաւ: 3 Ընկալցին լերինք խաղաղութիւն ժողովրդեանն, և բլուրք արդարութիւն: 4 Դատասցէ զաղքատսն ժողովրդեանն, և կենդանի արասցէ զորդիսն աղքատաց, և խոնարհեցուսցէ զուռնայսն: 5 Եւապրեսցէ և ծագեսցէ ընդ արեւ, յաւիտեան յաւիտենից: 6 Իջցէ որպէս անձրեւ ի բուրդ, յաւազ ոռոգանել զերկիր: 7 Ծագեսցէ յաւուրս նորա արդարութիւն, բազում խաղաղութիւն մինչև կատարեսցի լուսին: 8 Տիրեսցէ ևս ի ծովէ մինչև ի ծով. ի գետոյ մինչև ի ծագս աշխարհի: 9 Առաջի նորա հարցին եթովպացիք, և թշնամիք նորա հող կերիցեն: 10 Թարսիսի և կղզիքն տուր պատարագս նմա. Թագաւորք արաբացւոց և սաբայ՝ պատարագս բերիցեն նմա: 11 Եւերկրպագեսցեն նմա ամենայն թագաւորք երկրի. և ամենայն ազգք ծառայեսցեն նմա: 12 Զի փրկեաց զաղքատսն ի հզօրէ. զաղքատ և որ ոչ ունէր օգնական: 13 Ողորմեսցի նա տկարին և աղքատին, և զանձինս աղքատաց կեցուսցէ: 14 Ի շահաւորէիցէ զանձինս նոցա ի չարեաց և ի գործոց անօրինութեան, և պատիւ անուան նորա առաջի նոցա. կեցցէ, և տացի նմա յոսկւոյն արաբացւոց: 15 Եւաղօթիցեն վասն նորա յամենայն ժամ. և ամենայն օրհնեսցին զնա: 16 Եւեղիցի հաստատութիւն ընդ

աղեաց էրէէր. և ՚է վերայ գլխոց լերանց: 17 Յարձրաց
չան պղպեանան պտուղ նորա. ձաղիեաց ՚է չաղատ ՚ին որպէս
խոտ էրէէր: 18 Դղիեայ անուն ՚ին օրհնեալ յատեպեան. պէ
յատաջ չան պարհ է անուն նորա: 19 ՚Ի նա օրհնեացին աղ-
նաց ապգ էրէէր, և աղեաց ապինչ էրանէցեան նմա: 20 ( )էհ-
նեալ ՚ին ՚ձ էրայէլ որ առնէ ափանչելս ղեաց. և օրհնեալ
է անուն ՚ին քո յաւիտեան. լցեալ չատօք նորա աղ
նաց էրէէր. էղիեայ էղիեայ:

ՎՆՈՐԵՆ ՄԱԳՈՒ:

՚Ի սաղմոսն սաղմոս ՚է չորս:



ՊԱՏՄԱՍ ՕՐԻՆԱԿԱՒ ԴԱՒԹԻ ՄԱՅՆ

վերնագիրը ՚է սաղմոս մեր՝ մանաւանդ ՚ի ձեռագիրս. յոմանս սոակ ՚է սաղմոն, յոմանս. սաղմոս ՚է սաղմոն. յայլս՝ որպէս և ՚ի լամք", և ՚ի վարդ". ՚է սաղմոն սաղմոս. յոմանս. սաղմոս ՚է չաւրն չան սաղմոնէ. յայլսում. չան ՚է սաղմոն սաղմոս. յայլսում. * ՚ի կատարած. սաղմոս ՚ի սաղմոն ‖: Լսակ ՚ի քանի մն տպագրեալս. * ՚ի սաղմոն, աղօթք դաւթի ‖: Ա.յլ յեօթն ձեռագրիս գտի ըստ նախակարգելոյդ, այսինքն է ՚է սաղմոն. սաղմոս ՚է չաւրն:

Ա.յս տարբերուլթիւ է և յօրինակս եօթն" և լատ". լեր զի յոմանս գնի. ՚ի սաղմոն սաղմոս ՚ի դաւիթ. և յոմանս սաղմոս ՚ի սաղմոն. և յոմանս՝ միայն ՚ի սաղմոն. որպէս և լեր" միայն լինելոմս, այս է՝ ՚ի սաղմոն, և յայլս այլագգ. ուր ՚ի քաղդ" գնի այսպէս. * ՚ի ձեռն սաղմոնի ասացեալ մարգարէաբար ‖. յոմ. մէ կամեցան ոմանք հաստատել, թէ զայս սաղմոս ասացեալ լեր սաղմոնի վասն քոի:

Ա.յլ հաստատակաց կարծիք է, թէ զայս ասաց դաւիթ ՚ի յեսրն աւուրս իւր, վասն Թագաւորեցուցանելոյ զսողոմոն զորդի իւր. կամ յորժամ Թագաւորեցոյց զնա. որում և երկիր եպագ յանկողնոյ իւրմէ, և ասաց. * օրհնեալ է տէր աստ իսրայէլ որ ետ

,, ինձ այսօր ՚ի զաւակէ իմմէ նաթիլ յաթոռ իմ և
,, աչք իմ տեսանեն ւեզ ‖. (զորմէ տես ՚ի Ջ. գիրս
Թագ" գլ. ա. 33—48)։ Եւ ապա տուեալ նմա զօրհ-
նութիւն իւր՝ ասայ առ ած զայս սաղմոս, զոր գուցէ
յառաջագոյն պատրաստեալն էր վասն նորա. յորում
խնդրէ յիւր, տալ որդւոյ իւրում զիմաստութիւն՝ առ-
նել յաստենայնի զիրաւունս և զարդարութիւն. գուշա-
կելով միանգամայն, թէ զիարդ ըստ խոստանալոյն
ոյ յաւուրս նորա լինելոց էին խաղաղութիւն, և տիրե-
լոց էին արդարութիւն։

Եւ զի յասելն զայս՝ հոյէր յորդի իւր իբրև ՚ի պատ-
կեր մանաւանդ թէ իբրև ՚ի ստուեր Ձլմարտին սո-
ղոմոնի այսինքն քրիստոսի, յայն ուղղէր զաստենայն գուշա-
կութիւն իւր. որպէս և տեսցի յաւուրսիկայդ ՚ի մեկնու-
թիւնէ իւրաքանչիւր բանից սաղմոսիս. վասն զի պարզա-
պէս առեալ՝ անմարթ է միայն ՚ի դէմս սողոմոնի
վերածել զսա. որպէս ասէ և նարեկացին (՚ի բանն
խը.) այլ ՚ի քս։ Հայր միտս է և գաւթի անյաղթ
(՚ի յաւաջաբ. սաղ.) ուր ասէ. թէ հա. սաղմոսն
յորում ասի *իջից որպէս զանձրև ՚ի վերայ գե-
,, մոն ւեզ. (ոչ յարմարի սողոմոնի,) այլ վասն հն
,, է ՚ի գաւթէ ասացեալ։ Եւ ասի սին գրէ և գէոդզ
վարդապետ (՚ի մեկն. եսայ. գլ. է.) յասելն. *հա
,, սաղմոսն՝ զոր ՚ի սողոմոն վերագրեաց, ոչ ՚ի սողո-
,, մոն պատշաճի՝ թէ յաւաջ քան զարև է անուննոյ
,, ա, այլ այնմ՝ որ գեր ՚ի վերոյ է քան զամենայն
,, քնութիւնս։

Յայս և ՚ի սոյն թէպէտ և բազումք ՚ի բաբունեացն հրէից համաձայն գտանին, բայց ոչ կամելով ՚ի վե-
րայ քան ևն մերոյ տարածել ՚ի մեսիայն իւրեանց վե-
րածեն՝ այլ համարելով զնա ըստ մարմնաջելոյ հաճոյից իւրեանց։

Այլ ևս աւելի յօրինելոյ սաղմոսիս յաւաջ քեռկ գաւթի անյաղթ (՚ի յաւաջաբ. սաղ.) և ասէ.
*գաւթի իբրև կամեցաւ շինել տուն անուան ևն ւոյ,
,, առաքեցաւ առ նա նաթան մարգարէ. և ասէ.
,, այսպէս ասէ ւեր, ոչ շինեսցես ինձ տուն. այլ որդի
,, քո՝ որ ելանէ յերանաց քոց՝ խաղաղութիւն անուն.
,, քանզի այսպէս զսողոմոն թագաւորեցուցեն. և դնէ զա-

„ ասաց նորա յաւիտենական. որ է քո. զայս լուեալ
„ դաւթի՝ նուագեաց զսաղմոսն ի վերայ ժամանա-
„ կաւոր որդւոյն, որպէս ի վերայ մշտնջենականի. և
„ անձրև ի վերայ գեղման զխաղաղ հերուեթինն սողո-
„ մոնի ասաց ||:

Բ Ա Ն Ի Ե

Ա Ն Ա Ն Ի Ա Ն Ի Ն

Իրաւունքն քահանայական նշանակութիւնք ի գործ
ածի. բայց աստ առեալ լինի փոխանակ այնպիսի կա-
րողութեան կամ այնպիսի իշխանութեան, որով ոք վարի
ընդ այլս ըստ օրինաց՝ մանաւանդ ի դատելն։ Այն-
պէս և բառս արդարութիւնն՝ բազում օրինակաւ վա-
րի, բայց աստ դնի փոխանակ այնպիսի առաքինու-
եան կամ այնպիսի կարողութեան, որով ոք առնէ զի տայի
իւրաքանչիւրոց այն ինչ որ իւրն է, մանաւանդ յատ-
նեալն զդատաստան։

Ո այսոսիկ խնդրեր դաւիթ յայ տալ որդւոյ իւրում
ի թագաւորելն. և խնդրեր իմաստութիւն. վասն զի
այլ իմաստուն զայն խնդրէ վասն որդւոյ իւրոյ, որ
էցէ նմա քարի ըստ վիճակի նորին, և ըստ պաշտա-
մանն. արդ որ նաեւ թագաւոր՝ հայելով ի վիճակ և
ի պաշտօն թագաւորութեանն էիք նմա մեծագոյն քա-
րի, բայց եթէ ունիլ յայ զայսոսիկ ձիրս, այսինքն
զիրաւունս և զարդարութիւն, որով կարասցէ ուղիղ
զեկավարել զժողովուրդ իւր. ապա քանզի ի վիճակ
թագաւորութեանն վերացոյց դաւիթ զորդի իւր զսողո-
մոն ըստ քանի ոչն, խնդրէ վասն նորա յայ տալ զայ-
սոսիկ ասելով։

Ո՛ձ չէրաւնա ոք արդեօք փո՛ր։ Կամ ասել. դու ա՛ծ՝
որ նախախնամօղդ ես ամենայնի, տո՛ւր որդւոյ իմում
նորատապատ արքայիս սողոմոնի զիրաւունս քո։ Կուր ոք

պնեալ խնդրէ տալ ջնջաւուն ոչ զմարդկային, այլ զքոյդ տուր ստղոմանի զայնպիսի երաւունս՝ որպիսի է քոյդ՝ ուղիղ, արդար, իմաստուն, ևն. կամ տուր նմա զչնորհս առնելոյ զնջաւուն ըստ հաճոյից քոց և ըստ օրինացդ։ Կամելով ապա հաստատապոյն առնել զնոդիսն իւր՝ յաւելաւ ասել։

Ն՝ ջարդարութիւն ո՛չ ոդիսոյ նախատրէ։ Ո՝ ստղոմանն զորդի իւր՝ զոր արքայ կոչեաց՝ աստ կոչէ որպէս թագաւոր. և զայս առնէ վասն երկուց. մի՝ առ՛ի ցուցանել՝ թէ նա իրաւամբ նստի յաթոռ արքայուէ, որով հետև դոլով որդի արքայի, է ժառանգ արքայութեանն։ Երկրորդ՝ առ՛ի ցուցանել թէ որովհետև արքայ է և որդի արքայի՝ ծնեալ յարքայուէ և նստեալ յաթոռ թագաւորուէ՛ի ներկայուէ հօր իւրոյ, արժան է ունել նմա զայնպիսի կատարելութիւն՝ որք էին յարմար այնպիսուն այսինքն արդարուն գերապոյն. վասն որոյ ազաչէ ասելով. տուր զարդարուէս քո որդուդ իմում ստղոմանի, քայց ոչ զայնպիսի որ յաչս մարդկան և եթ երևելոյ լինիլ արդարութիւն, այլ զայնպիսի զոր դու ինքն համարիս ձշմարիտ արդարուէն. ապա մի զմարդկայինն, այլ զքոյդ տուր նմա զայնպիսի արդարուէն՝ որպիսի է քոյդ՝ աննենդ, անսուտ ևն. կամ տուր նմա զչնորհս քո՝ զի կարասցէ դատել զարդարութիւնդ և իրաւամբք ըստ դատելոյ քո արդարութիւնդ. վասն որոյ յարէ զկնի և ասէ։

ը. Դատել զժողովուրդս քո արդարութիւն և զաղքատս քո իրաւամբ։

Ա՛յս բան ի քայլատրուէն դիտաւորուէ վերոյ գրեալ բանիցդ, ՚ի ցուցանել թէ առ ինչ վախճան առաց էր ածծ ստղոմանի զնջուաւունս և զարդարութիւն. եթէ զի այնու կարիցէ ծառայել օգտի ժողովրդեան նո. վասն զի Թագաւորն ի վասն օգտի ժողովրդեան, և ոչ թէ ժողովուրդն վասն օգտի Թագաւորի. արդ Թագաւորն լինի օգուտ ժողովրդեան՝ ՚ի բարուոք տրնաեալ անդ զնջութիւնն և յաւէտ ՚ի դատել զարդարութիւնն և իրաւամբք. զայս յայտնի դիտեալ աբեսաղամայ՝ տալին որսայաւ զսիրտ բոլոր ժողովրդեանն.

(որպէս որոշ և յայտնի գրի՛ւ ի՛ք գիրս Թագ". ԺԶ. 1—7)։ Ա՛յսու որով և պաւիք յետ խնդրելոյ յայ տաւ որդւոյ իւրում ստղոմոնի զիրաւունս և զարդա րութի՛ւն, ի մէջ բերել և զայն՝ Թէ զայս խնդրէ վասն օգտի ժողովրդեան ի դատել նորա զնոսա. վասն որոյ ասէ։

Դարձեալ ջժողովուրդս չոր արդարութի՛ւ, և կաղչապս չո էրա՛ւմէ։ Որպէս Թէ ասէր. տո՛ւր ստղոմոնի զմեծ զայս ընդհա քո, այսինքն զատարգևս իրաւանց և արդարու Թի՛ւ, զի նոքիմբք կարասցէ ուղիղ դատաստան առնել ժողովրդեան քում իսրայէլի։ Եւ քանզի յուղիղ դա տաստանի միշտ պարտի կալ արդարութի՛ւ, նախ ի՛ հաստարակի խօսելոյ ասէ, դատել զժողովուրդս քոյ արդարութի՛ւ՝ առանց աչառելոյ և առանց ի՛ մի կողմն հակելոյ վասն նուրոյ օգտի. և ապա յաղքատս ընդու ցանէ զբանն ասելով, և զաղքատս քո իրաւամբք. որու կամի ասել. զգրկեալս և զտառապեալս զայրիս և զորբս՝ որք կան ի՛ ժողովրդեան քում, դատեցէ յաւէտ իրաւամբք քան արդարութի՛ւ. այսինքն յաւէտ կանայելով ըստ իրաւանց, քան վարելով ըստ խստու Թի՛ւ վրէժխնդիր արդարութի՛ւ։

Օ՛գայ խնդիր դաւԹի յիրաւի կատարեաց ա՛ծ ի՛ ստ ղոմոն. մանաւանդ զի և նա ինքն զսոյն խնդրեաց յայ. և ա՛ծ եա՛ ետ նմա զայս առատուԹի՛ւ առ ի՛ առ նե՛լ զիրաւունս և զարդարութի՛ւն. զորոյ զառաջինն դա տաստանն լուեա՛ ժողովրդեան ասէիցան. որպէս գրի՛ (Գ. Թագ". Գ. 11 — 28.) յաւելն. * Եւ լուաւ ա ,, ռեղային իսրայէլ զդատաստանն զոր դատեաց ար ,, քայ. և զահի հարան յերեսաց արքայի. զի տեսին ,, Թէ իմաստութի՛ւն ա՛ստ է ի՛նմա առնել իրաւունս։

Ա՛րդ դաւԹի մարգարէ զսկզբնաւորութի՛ւն սաղմոսիս ելեալ վասն որդւոյ իւրոյ ստղոմոնի իբրև զստուե րագրութի՛ւն ինչ, հոգւովն խօսի վասն մեծի երկնաւոր արքայի՝ այսինքն վասն քո՛ւ որոյ ստուեր էր ստղոմոն. գիտեալով Թէ ի գալ քո՛ւ յաշխարհ, և ի Թագաւո րել նորա ի վերայ իսրայէլի իբրև որդի Թագաւորին դաւԹի ըստ մարմնոյ՝ տալոց է նմա հայրն երկնաւոր զամենայն իշխանութի՛ւն առնել զիրաւունս և զարդա րութի՛ւն. ըստ որում վկայեաց և նա ինքն ասելով.

* զամենայն դատաստան եւ որդւոյ իւրում ||. և թէ
* իշխանութիւն եւ նմա դատաստան առնել ||. (յովհ". ե. 22 — 30):

Այլ այս իշխանութիւն դատելոյ ոչ ամփոփի սոսկապէս ի դատաստան հանդերձեալ կենաց. այլ և ի դատաստան յայն՝ զոր արար քո ի քում իւրում յաշխարհի՝ ազատելով եթէ զժողովուրդ իւր զիսրայէլ և եթէ զաշխարհս ամենայն զհեթանոսս՝ յոտից անտի ջարդէ ի սատանայէ. ըստ որում և ասաց. * ի դատաստան զայսմանէ զիշխանն զհեթանոսաց՝ յոտից անտի ջարդեն զնոսա ||. (յովհ. ժբ. 39): Ուստի ոչ միայն զհինոյ հանդերձեալ էր զհետ գալ այսր, յայսմ առնէ մարգարէն ասելով:

Ա՛ոջն լերինս վերին վնասաղարտութիւն ծողովրդեան. և բլուրս զարդարութիւն:

Ածամեծս կամելով յայտնել մարգարէին՝ զայսպիսի նմանութիւնս ի միջ բերել. և փափաքելով զաւօղսն զարթուցանել՝ ահեղութիւն իմն խօսի յասելն:

Ա՛ոջն լերինս վնասաղարտութիւն ծողովրդեան, և բլուրս զարդարութիւն: Երամբք և բլրովք իմացեալ լինին աստանալք ընտ նկարագրին քննակիւք լերանց և բլրոց պաղեստինոյ, այսինքն են իսրայէլացիք, զի որովհետև կողմանք պաղեստինոյ՝ յորս քննակէին նոքա, լցեալ էին լերամբք և բլրովք, զլերինս և զբլուրս ի միջ բերէ. և Ճարտասանական ձևով խօսելով՝ զտեղիս փոխանակ տեղւականաց դնէ, այսինքն փոխանակ քննակչացն:

Ըստ այսմ առեալ՝ կաւն ասել ի դատել Թագաւորին սողոմոնի զժողովուրդս քո արդարութիւնք և իրաւամբք՝ առցեն լերինք և բլուրք զխաղաղութիւն և զարդարութիւն, և տացեն զայն ժողովրդեան. որ է ասել. գտցեն այն ժողովուրդք զխաղաղութիւն, և վարեսցին արդարութիւն. քանզի արդարև յաւուրս սողոմոնի ի խաղաղութեան կային որդիքն իսրայէլի, զի և ինքն սողոմոն եղև խաղաղութիւն իսրայէլի ըստ խոստանալոյն ոյ առ դաւիթ, թէ * Ա.Կա ծնցի քեզ
,, որդի, և նա եղիցի այր հանգստեան, և հանգուցից զնա յամենայն թշնամեաց շուրջանակի, քանզի
,, սողոմոնն անուն է նորա. և զխաղաղութիւն և

„ զհանդարտութիւն տայ՝ ի վերայ իսրայէլի յաւուրս
„ նորա ‖ . (ա . Մնաց . իբ . 9) :

Ա.յս խաղաղութիւն սակաւ էր և աւժամանակեայ .
և էր օրինակ այնր խաղաղութեանն զոր արար Երկնա-
ւոր արքայն սողոմոն՝ բնակչացն լերանց և բլրոց ,
այսինքն երկնաւորաց և երկրաւորաց , հեռաւորաց
և մերձաւորաց . վասն եղև խաղաղուն մեր. (եփես".
բ . 14 — 18 : յովհ". ժդ . 27 . ևն :)

Ըստ յարմարական մեկնութե , լերինք և բլուրք՝ յոր-
կանգնեալ էին կուռք , առին զխաղաղութի և զար-
դարութի՝ յորժամ կանգնեցան ՚ի նոսա տաճարք և
վանորայք , և բնակեցան Ճգնաւորք և կուսանք :
Ըստ փոխաբերական մտաց՝ լերամբք լմացեալ լինին
աստ իշխանք վերինք , և բլուրք իշխանք ստորինք ,
կամ հասարակ ժողովուրդք . յոր միտ գրի ՚ի մարգա-
րէութիւն միքիայ. (գ . 1) * լսարծուք զայս զոր ասաց Տր.
արի և դատեաց ընդ լերինս , և բլուրք լսեցեն ձայ-
նի քումմ ‖ : Ըստ այսմ լմացեալ , սուղին այսու խնդ-
րէ յայ մարգարէն տալ ոչ միայն արքայի , այլև իշ-
խանաց՝ մեծամեծաց և փոքունց զկրաւունս , զի ա-
րացեն արդարութի ժողովրդեան , և այնու լինին
նոցա պատճառ խաղաղութե . զի խաղաղութին է
գործ արդարութե . ըստ այնմ, (եսայ . լբ . 17 .)
* Եւ եղիցին գործք արդարութե խաղաղութի , և
կալցի արդարութի զհանգիստ ‖ :

Եւ կամ ընդ հակառակն՝ լերինք այսինքն իշխանք
ունիցին ՚ի մէջ իւրեանց զխաղաղութի վասն ժողո-
վրդեան . և բլուրք այսինքն ժողովուրդք արասցեն
զարդարութի . վասն զի յորժամ իշխանք ունին խա-
ղաղութի ՚ի մէջ իւրեանց , ժողովուրդք դիւրաւ
գործեն զարդարութի . այսինքն դիւրաւ և յաջողու-
թի պահեն զօրէնս , որով տիրէ խաղաղութիւն յա-
ւիտեան :

Ա.յս խաղաղութի իշխանաց (զոր յիշէ աստ մարգա-
րէն) հայի ՚ի խաղաղութին յայն , զոր աւետարանե-
ցոց էին հրեշտակք ՚ի յերկինից . և զոր առնելոց էին
առ ազգս մարդկան առաքեալքն քրի և աշակերտք
նորա ՚ի քարոզել նոցա զարդարութի , և արդարու-
թի՝ հաշտեալ ամենեցուն զխաղաղութի ըստ կան-

խազուսակ բանիցն եասցեայ յասել Նոցա. * իբրև զի
,, գերեցիկ են ի վերայ լերանց ոտք աւետարանչի
,, Համբաւուն խաղաղութեան՝ իբրև աւետարանչի բա
,, րութեան. զի լսելի արարից զքրկութեան քո ասել
,, ցսիոն, Թէ Թագաւոր քեզ ՚ած. զի ձայն պահապանաց
,, նոց քոց բարձրացաւ և ի նմին բարբառ առ Հասա
,, րակ ցնծացեն. զի գէմ յանդիման տեսցեն զժա
,, մանակ՝ յորում ողորմեցաւ աՀր ամենեցուն ի երկինք գո
,, չեացեն աւետարկեալ Հանդերձ երուսաղէմի զցնծու
,, թիւն, զի ողորմեցաւ նմա Տէր. և փրկեաց զերու
,, սաղէմ՝ ‖ . (Եսայ. ԺԲ. 7 — 9 : և Նաւում. Ա.
15 :) Այս դարձեալ նշանակի սոքիմբք խաղաղութիւն
և արդարութիւն իւրաքանչիւր եկեղեցեաց, որոց զմե
ծամեծն ըստ լուիչ՚ լերանց նմանեցուցանէ, և զփո
քունն բլուոց. զի սոքա առին զխաղաղութիւն ժողո
վրդեանն ՚ած, այսինքն իսրայէլացւոց, և գտին զար
դարութիւն ՚ի վնասայն որ յօրինաց անտի էր, այլ
զքրիստ, որ ի Հաւատոց. վասն որոյ թէպէտև զխա
ղաղութիւնն յաւէտ ասէ՝ ժողովրդեանքո, բայց զար
դարութիւն զայսպիսի ինչ ոչ գրէ :

Եւ ոտ նմանաբանութիւն՝ լերամբք և բլուրովք իմացեալ լինին բարձրութիւնք և մեծութիւնք խաղաղութիւն և արդարութիւն. յոր միտ կամի ասել. յաւուրս սորոմոնի բարձրացան յոյժ և մեծացան առ ժողովուրդն խաղաղութիւն և արդարութիւն. կամ ըստ կարգի չարադրութեանն ասացից. խաղաղութիւնք և արդարութիւնք այնչափ մեծացան և բարձրացին յաւուրս սորոմոնի, մինչև լինել նոցա իբրև զլերինս. ըստ որում՝ երե փառնակ ասելոյ՝ ——չէն դնի էՀ—— (մեռ ի էՀ—ոչէ, էՀ—ձէ) այսինքն ամբարձցէն, կամ բարձրացուսցեն. և այնու իբրև Թէ լինելով լերինք խաղաղութեան՝ զեղուցան ժողովրդեան զխաղաղութիւն, և իբրև բլուրք արդարութիւն հոսեսցեն զարդարութիւն :

Այս նմանութիւնք չեն ոտար յոճոյ մարգարէին. զի նա որպէս այլուր զարդարութիւն ոչ և զիրաւունս նոցա կամելով բարձր և մեծ ցուցանել՝ լերանց և խոշոց նմանեցուցանէ. (սաղ. լէ. 7.) սոյնպէս և ոստ զմեծութիւն այնր խաղաղութեան և արդարութեան՝ զոր տալոց էր ՚ած ի ժամանակս սորոմոնի, մանա-

ասեղ ՚ի ժամանակս քոյն, ընդ լերանց և ընդ բլուրց լսել, ։

Ա.Յոան նմանաբանութիւն նշանակի դարձեալ ընդհանրական ծառայութիւն խաղաղութեան և արդարութեան. և ըստ այսմ բառիդ լերինք և բլուրք ոչ այլ ինչ յայտնին ասա՝ բայց եթէ յայսմ առնել զառաքելսն խաղաղութիւն և արդարութիւն. որպէս թէ եդեալ էր. բոլոր աշխարհ լցցի խաղաղութիւն և արդարութիւն. և այնուամենայնի խաղաղութիւն և արդարութիւն, մինչև երեխել թէ նաև լերինք և բլուրք ՚ի նոյն ցնծան, և զնոսն ասն ժողովրդեան։ Ա.Յս տարաշ խօսից նմանի և այնմ, զոր դնէ յովէլ (գ. 18.) յասելն. * Լինի եղիցի յաւուր յայնմիկ բղխեսցեն լերինքն գաղցրութիւն, և բլուրք յորդեսցեն կաթին ։ (տես և ամովս. թ. 13)։

Ա.Ս յասելն ասա՝ լերինքն առցեն զխաղաղութիւն, և բլուրք զարդարութիւն, ոչ ցուցանել զաճախանութիւն խաղաղութիւն յարդարութիւն, որպէս թէ զմին առցեն լերինք, և զմիւսն բլուրք. այլ թէ ամենեքին առցեն զխաղաղութիւն և զարդարութիւն, ապա թէ ոչ՝ չէ հնար կալ և ոչ միւսն, զի եթէ խաղաղութիւնն իցէ ձգմարիտ, արդարութիւն պահի, և եթէ արդարութիւն իցէ ձգմարիտ, առաքնորդէ ՚ի խաղաղութիւն։ Ո այս եգեալ մարգարէին, կամելով ասա ցուցանել եթէ հաստատութիւն այսր խաղաղութեան և արդարութեան հիմնի յայն՝ զոր ասաց, այսինքն ՚ի առնելն զերկաւնսն, և յուղեղն զդատաստան, յարն զկնի և ասէ։

ՀԵ. Եւ եղիցի ազգաց ծողովրդեան, և հեթանոսաց ազգաց անանց, և խնդրեցեսցեն զերեսս անանց, և խնդրեցեսցեն զմեծարութեանս։

Ա.Զքաջաց ժողովրդեան ասէին նոքա որք ՚ի միջ ժողովրդեան անարգք երևին, և վասն անարգ երևելոյ արհամարհին, և ոչ զիւին ՚ի գործառութիւն այսինքն ՚ի միծատանց և յամբարտաւանից, մինուանդ եթէ այն ազգաքաջ իցեն որդիք անանց։ իսկ եթէ կայցեն խնամատուն Թագաւորք և արդարակրօն դատաւորք, որք բարեաք ձանաչելով զառաքեալսն այնպիսեաց արդարութիւն դատեսցեն, ազգաքաջ լինի դիւք, և ամբարտաւանից սանձ, և այնու սիրի ՚ի միջ ժողո-

վըրդեան այն արգութեն և յորդի այն խաղաղութեն՝ զոր ընծայեցոյց լերմոց և՝ բլրոց։ Յայս ակնարկե-

լով ասէ ։

Երթա՛ արացէ աղտատոյ ծաղրըդեան. և ՝ի ՛ետոյն ըզդէմ անանից, և խոնարհեցուսցէ զամբարտաւան։ Այս բան Հայելով յառաջին և յերկրորդ համարն մեկին այսպէս. տուր արքայի զիմաստութեի՛ զի իրաւ արասցէ, այսինքն տեսեալ թէ մեծատունք զրկեն զաղքատս, և ամբարտաւանք նեղեն զորդիս տնանկաց՝ տացէ իւրաքանչիւրոց զիւր իրաւունս, իբր զի զաղքատն զերծուսցէ՛ի զրկանաց, և զմեծատունն նուաստեսցէ, զորդիս տնանկաց սփոփեսցէ, և զամբարտաւանս նկուն արասցէ ։ Կամ համառօտիւ ևս. այնպէս կառավարեսցէ՛ զի աղքատք չանգիտեն, և զրկողք պահասեսցին. քանզի այս է յատուկ պաշտօն իմաստուն թագաւորի, և արդար դատաւորի ։

Իսկ եթէ այս բան Հայեսցի՛ ի համարն ՅՀ, մեկինի այսպէս. ՛ի տիրել խաղաղութեե՛ն և արդարութեան, սակաւք ինասցեն նուաճօղք աղքատաց և տնանկաց. ուստի և թագաւորն սակաւ աշխատանօք դատեսցէ զաղքատս ժողովրդեան ՛ի զրկողաց՝ որք կարեն գտանել ՛ի մէջ այնչափ բազմութե՛ն ժողովրդեանն. սոյնպէս և դիւրին լինի նմա փրկել տնանկաց և աղքատաց ՛ի ձեռաց չարչարողաց նոցա, և զչարչարօղսն դիւրաւ նուաճել։ Ա՛ արգասն տնանկօք իմանալ զանտունեան. որպիսի՛ էին՝ ասէ աբրահամ, իսահակ, և յակոբ, որք չունէին տուն. զորդիս սոցա ասէ կեցուսցէ՛ ՚ած, և զհարստահարօղս նոցին խոնարհե-

ցուսցէ ։

Այս բան հայլի միանգամայն և ՛ի բարեգթութիւն ՚ած. զոր առ ամենեսեան ցուցանէ և առ ամբարտաւանս, խոնարհեցուցանելով զնոսա ՛ի զգաստութե՛ն. որպէս արար ընդ նաբուգոդոնոսոր, ընդ մանասէ, ընդ պօղոս, և ընդ այլս բազումս ։ Կատարի՛ն եղ կոյս սպանիացի՛ վասն մեծագոյի լինելոյ և գեղեցկի՛ կոյ՛ , ամբարտաւանեալ լինէր, և առ ամբարտաւանութե՛ն ասէր. ոչ ոք գտանի՛ որ իցէ արժանաւոր առնուլ զիս յիւր հարսն, բայց եթէ թագաւոր ոք իցէ կամ թագաւորաւն. և որ միանգամ հրաւիրէր

զնա ՚ի հարսնութեն, զայս պատասխանէր ։ Յաւուր միում զգեցեալ շքեղազարդ հանդերձս ՚ի սենեկի. և եւթե անդ զնաչէութեն մի, ունկնդրով ՚ի վերոյ գրեալ · * յո նազովբեցի Թագաւոր հրէից ։ ՚Ի հայիլ կատարնեակ յերեսս յոն՝ խոսեցաւ յո ՚ի սիրտ նորա այսպէս՝ ասն Թագաւոր և Թագաւորացն ։ Այսմէն իմանալի ձայնիւ խոնարհեցաւ կատարնէ, և վառեցաւ ՚ի սէր փեսային յոն. եթող զամենայն զնաւ աչխարհի, և եմուտ ՚ի կարգ կարմելեանց՝ որ նորոգեալն էր ՚ի ծերն Թեբեզեայ. և կացեալ անդ սրբութեն՝ կուէցաւ կատարնէ յոեան ։ Այնպէս խոնարհեցոյց ՚որ և զայլ բազում ամբարտաւանս, և որք ոչ խոնարհեցան, ցրուեաց և կորոյս ։

Ա.ԱԼ այս առաջիկայ բան ուղղակի հայի ՚ի դէմն քոի, որ իբաւ աբար աղքատաց ժողովրդեան, այսինքն ազգի մարդկան, մանաւանդ հեթանոսաց, որք էին ագգաւոր և կարօտք իսրայէլի. և զայս առնելով կեցոյց զորդիս մնանկաց, այսինքն զորդիս մանկաց. եալ նախատեցիցն ագամայ և եւայի (գաղ·՚ե· 31·) և զամբարտաւանն սատանայ և զդևս նորա նուաճեաց իսպառ (ա·յովհ·՚ե· 8 և ՚ը· 44 ։ զուկ· ժա· 21։) Այս օրում գուշակեաց և եսայի յասելն. (ժա· 1 — 5·) * արասցէ իրաւունս անանկին, և ,, յանդիմանեսցէ զխոնարհս երկրի · · · և հոգւով ,, շրթանց իւրոց սատակեսցէ զամբարիշտս, և եղի ,, ցի արդարութեն ածեալ ընդ մէջ իւր ։ Ա.ԱԼ Թէ օրբան էր սեւոդութեն իշխանութեն այսը Թագաւորի, յայտ առնէ ՚ի յաջորդ համարն ասելով ։

Ե. Պաշտե և ճառագե ընդ արեւս՝ յառաջ քան զլուսին ապրել ցհետ ։

Ակիզբն առնէ աստ մարգարէն փոխել զգիտութիւն սեռութեն բանին, գարձուցանելով զայն պարզագոյս ՚ի դէմն քոի, զի զոր ինչ ասաց ցայս վայր՝ ըստ նկարագրին հայէր յանձն սողոմոնի, և խորհրդաբար ՚ի քո, իսկ աստ և անդր զոր ինչ ասէ, ըստ նկարագրին հայէն ՚ի քո, և նիւթապէս ՚ի սողոմոն. զի Թէպէտ վասն սողոմոնի խօսի, բայց ոչ յանձն սողոմոնի՝ այլ յանձն քոի. զի յայտ է Թէ ոչ երկաց և մեաց սողոմոն

ընդ արեւու յազգէ մինչև յազգ ցյաւիտեան. ուստի ոչ յանձին նորա ձչմարտի այս, այլ ի քս. որպէս և յասելն (ի սաղ. ՃՀ. 37). * զուակ նորա (այս,, ինքն զառաքեալն, որ այն ինքն է սոդոմին) ,, յաւիտեան կացցէ, և աթոռ նորա որպէս զարե,, գաւն առաջի իմ, որպէս զլուսին զի հաստատեալ ,, է յաւիտեան վկայ հաւատարիմ յերկինս ՃՀ. ‖ (և ի ՃՀ. Թագ". է. 16. ՃՀ.) այս քանք և այլ սոցին նման ասացուածք թէպետև զսոդոմնեայ ասին անդ, բայց ոչ հայելով յանձն սոդոմնի, այլ յանձն քրի։

Վ.պա և ասաւ յայս միտ խօսելով ասէ։

Վ—ՅՁԵ Ե ՆՈՅՆ ԸՆԴ ԱԲՐԱՀԱՄ՝ ՅԱՄԱՌ ՀԱՆ ԼՈՒՏԻՆ ԱՊՔԵ ՊՆԱԼ ՅԱՊՔ։ Ի.այս հաւաստմամբ ցուցանէ զանդորուձի Թագաւորութեանն սոդոմնայի՝ ի քս մինչև ի կատարած աշխարհի, այսինքն մինչև ի սպառիլ ժամանակի, կամ որ նոյն է՝ ցուցանէ տեւել յայնչափ ցորչափ տեւէ ժամանակ աշխարհի որ արեգականմբ և լուսնիւ չափի. որով և միտ բանին լինի այս. ցորչափ տեւէ արեգակն և լուսին՝ տեւեսցէ և Թագաւորութիւն սոդոմնայի, կամ տեւեսցէ սոդոմնի ի Թագաւորեն իւրում, ուր յիրեքեան՝ այլ ի ձչմարիտն սոդոմնի, այսինքն ի քս։

Ի.ւ առ բացատրելոյ զայս տեւողութիւն ի մէջ բերէ նաև զտեւողութիւն անընդհատ շարունակութեան ազգաց, ասելով ազգ մինչև յազգ, այսինքն ցորչափ լինիցի ազգ զկնի ազգի՝ մինչև ոչ ևս գալ այլոյ ազգի. որ է ասել. ցորչափ կայցէ ծնունդ ի վերայ երկրի, կացցէ և այն Թագաւորութիւն. և զի ի գադարիլ ժամանակի՝ գադարի և ծնունդն, վասն որոյ նոյն լինի ասէնն՝ մինչև ի գադարիլ ժամանակի, և ասէնն՝ մինչև ի գադարիլ ծնունդոց. վասն առաջնոյն եդ զտեւել արեգական և լուսնի՝ որոց չարժումն է չափ ժամանակի. իսկ վասն երկրորդին եդ զտեւէնն ազգաց մինչև յազգս։

Ի.յլ այս ասացուած՝ յազգէ մինչև յազգ՝ խորհրդաբար ցուցանէ Թէ Թագաւորութիւնն քան որ ստուերաբար երևէր յազգն իսրայէլի՝ հաստատեցաւ յազգս հեթանոսաց. և զի սոքա օրինակին ի լուսին՝ ասէ յառաջ քան զլուսին, այսինքն յառաջ քան զԹագա-

ասել նորա ի հեթանոսս. և ապա ի դառնալ նոցա
ի վիճակ լուսաւորութեանն արեւու՝ կացցէ և մնասցէ
ընդ նոսա մինչև ի կատարած աշխարհի։

Ա. Սաստիօք Հայելով ի կարգ շարադրութեանն այսր բնա-
բանի՝ երկու ինչ կան քննելի. առաջինն է՝ այն զի
յասէն՝ ընդ արեւու, կամ որ նոյն է մինչև ցտեւել
արեւու և լուսնի՝ այսու ոչ ցուցանի թէ արեւն և
լուսին ունին տեւել այսչափ ինչ ժամանակ, և չէա
այնուրիկ ոչ էս. այլ թէ շարժումն արեւու և լուսնի՝
յորմէ պատճառի ժամանակն՝ տեւէ մինչև ի կատա-
րած աշխարհի, և չէա կատարածի աշխարհիս շար-
ժումն նոցա դադարի. բայց ինքեանք մնան յաւիտեան
անասպան։

Վարձեալ յասէն՝ մնալ ընդ արեւու կամ յապդե
մինչև յապդ, քառքդ ընդ՝ և ինչ՝ ոչ ցուցանէն
թէ չէա այնուրիկ ոչ էս մնասցէ իշխանութեանն քոյ,
այլ թէ ոչ մնասցէ ընդ շարժմամբ արեւու ի կատա-
վարութեանէ երկրաւորաց կամ զհնուորեալ եկեղեցւոյ.
զի ոչ էս գոլ յայնժամ շարժումն արեւու, և ոչ էս
զհնուորեալ եկեղեցի, այլ եկեղեցի յաղթանակող.
ուստի և այն կատարածութեանէ՝ որ տեւէ ընդ արեւու և
ընդ լուսնի, չէա կատարածի տեւեսցէ ի վերոյ քան
զարեւ և քան զլուսին յաւիտեան։

Ա. յամ՝ ձա քեզ օրինակ զայն, զոր եգաք ի սաղ. ՀԷ.
18. ասէ քոյ ցառաքեալսն. * և աշխատիկ էս ընդ
ձեզ եմ զամենայն աւուրս մինչև ի կատարած աշ-
խարհի ։ (մատ. ԻԸ. 20.) ուր յայտ է թէ այս լի-
նելս ընդ նոսա մնածի ըստ կատարածութեանէ, որ
չէ երկրի. բայց այսու ոչ ցուցանի՝ թէ ոչ էս լինի ընդ
նոսա չէ երկինս չէա կատարածէ աշխարհիս, այլ թէ
ոչ լինիցի այնու օրինակաւ՝ որով էր չէ երկրի, այլ չէ-
բազանցութեամբ ինչ յոյժ։

Երկրորդ քննելին է այս, զի մարգարէն ի չէշէն
զարեւ՝ ասաց՝ ընդ արեւու. իսկ ի չէշէն զլուսին՝ ոչ
ասէ՝ ընդ լուսնի, այլ յառաջ քան զլուսին. որով
թէպէտ և կարէ խմացեալ լինել տեւէն ի յաւիտե-
նից յառաջ քան զառաջնումն լուսնի, որպէս մեկնէ
Լամբ՝, սակայն եթէ ի նեբքին միտս նայիցիմք, այս
էս զնոյն նշանակէ ասա. զի խօսի համեմատութեամբ

արեւու որ է անփոփոխ 'ի լուսաւորութենէ, ուսանի և ինայն ընդ արեւու՝ նշանակէ ինալ անփոփոխ ընդ անփոփոխութենէ նորա, կամ ինալ միշտ ցոլտուի ինայ արե։

Լոկ լուսինն գոլով փոփոխական՝ կայն և ինայն ընդ լուսնի ոչ ցուցանէ ինչ կատարելութենէ. բայց կայն և ինայն յառաջ քան զլուսինն ցուցանէ կալ և ինալ ընդ ամենայն ժամանակս, յորս յառաջէ փոփոխիլն լուսնի մինչև հասանել ցայն ժամանակ, յորում ոչ ևս լինի նմա փոփոխել. և ըստ այսմ կամի ասել, կացցէ և ինայցէ ցոլտուի փոփոխեացն լուսնին, կամ կացցէ և ինայցէ յառաջ քան զայն աւուրսն է լուսնի, յորում նա ոչ ևս փոփոխեացի. կամ որ նոյն է. կացցէ և ինայցէ յառաջ քան զանփոփոխութենէ լուսնի մինչև 'ի կատարած աշխարհի. զոր և յայտ առնէ 'ի համարս. 7։ Ո՞յսոսիկ առաջի եդեալ մարգարէին՝ մնալի յայլ ևս խօրհրդաւոր բանս, և ասէ,

ը. Եթէ որպէս պանիրն 'ի վերայ գեղման, որպէս ցօղ պի ցողն յերկինէ։

Զկնի է գալոյ անգործ, կամ բուրդ տակաւին ոչ գործեալ. իսկ իջանել անձրևոյ 'ի վերայ գեղմանն ցուցանէ զհանգարտ իջումն մանր անձրևոյ, որով հնար լինի տոգորիլ մազից գեղմանն, որպէս լինի և 'ի հանգարտ իջման ցօղոյ յերկնից յերկիր. և ըստ այսմ այս նմանաբանութենէ հայի յերկուս. մի՝ 'ի հանգարտ իջումն նշանակեալ իրին՝ զորմէ է բանն, և մի ևս՝ յընդունակութենէ ենթակային, այսինքն ընդունողին, առ 'ի տոգորիլ նմա նովաւ, այսինքն լիացնոյն ընդունել զիջեալն. 'ի սոսին հայելով ասէ,

Եթէ որպէս պանիրն 'ի վերայ գեղման, որպէս ցօղ պի ցօղն յերկինէ։ Լ.այս բան 'ի սոգումն հայելով յարաբերի զաւազ խաղողոյն և արտաքոյ, զորս յիշեաց 'ի համարն 3. և յիշէ ևս 'ի յաջորդ համարն. և միտ բան նին լինի այս՝ իջցէ 'ի վերայ նորա պարգև խաղողի, որպէս իջանէ անձրև 'ի վերայ գեղման. և ցօղացի 'ի նա յիւղ արդարութենէ որպէս ցօղն յերկնից ցօղ 'ի վերայ երկրի, որ է ասել. տացէ նմա տէր խա-

զաղուէթի ընդաձակ և արդարութի լիագոյն, և այն՝ հանդարտութի և առանց պատերազմի. կամ թէ նա ինքն սոզոմեն ևս և կառավարութի նորա ելցի ի վերայ Ժողովրդեան իբրև անձրև ի վերայ գեղմանն, կամ իբրև ցօղ ի վերայ ցամաքեալ երկրի. Լսեկ Տայելով ի քո՝ այս բան ցուցանել զինքեանէ նորա առ մեզ. առ որս ծանօթութի պարտ է ի միտ առնուլ զայն՝ որ պատմի ի գիրս դատաստանաց. (գլ. ջ. 36 — 40)։ Վանգի գրի անդ, թէ ի խնդրել գեղմանի նշան յոյ վասն փրկելոյ զնոսայէլ, եդ ի գիշերի զգեղմն ի կաշւո. և եկն անձրև ի վերայ գեղման՝ գոլով ցամաքութի ի վերայ ամենայն երկրի չուրջ զկալովն. և քամեաց գեդէոն զգեղմն, և էլ ցօղ ի գեղմանէ անտի լի կոնքիւ։ Եդ ապա դարձեալ ի գիշերի զգեղմն, և եղև ցօղ ի վերայ ամենայն երկրի չուրջ զկալուն, և ցամաքութի ի վերայ գեղման։ Յայս ակնարկէ առաքելական բան սաղմոսիս յասելն. իջցէ որպէս անձրև ի վերայ գեղմանն, և որպէս ցօղ ևն։

Այսու գեղմամբ նշանակի նախ ընդհանրապէս գեղմն մարդկան, որ մոլորեալն էր իբրև ոչխար կորուսեալ, և կայր ի խաւարամած գիշերի. եկն որդին աստ, և իբրև անձրև իջանելով ի գեղմն, այսինքն ի մարդկայինս բնութիւնս միաւորեցաւ ընդ նմին. և եղև գեղմն խմանալի, այսինքն մարդ կատարեալ, Թաղեալ զայլ արարածական բնութիս. և հանգոյն գեղմանն ձմռեալ ի վերայ խաչին՝ ցօղեցաւ իբրև ցօղ ցամաքեալ երկիր, լինելով համարէն ազգի մարդկան այն ինչ՝ որ ինչ լինի անձրև հանդարտ ցամաքեալ և ծածուկ երկրի։ Ոչ միտ առ նաթանայէլն (ի բանն՝ ջ). * անապական անձրև... ամենատեսչ գեղմն ։ այսինքն գեղմն առ ամենեսեան տեղացօղ զցօղ։ Այսու ցօղն իջանէ ի պարզի, և ի հանդարտ պահու, որպէն այ և էջ ի քնուի մեր յայնպիսի ժամանակի՝ յորում ի խաղաղութի էր համարէն աշխարհ։

Երկրորդ՝ այսու գեղմամբ նշանակի ազգն հրէից, յոր էին բանն ած իբրև հանդարտ անձրև՝ յորժամ տիրէր խաւար ի վերայ մարդկան, Թաղեալ զամե-

նայն երկիր ՚ի յամաքուածէ . յոր միտ նա ինքն ասաց * ոչ ուրեք առաքեցայ՝ եթէ ոչ առ ոչխարս կորուսեալս տանն իսրայէլի ‖ . (մատ . ԺԵ . 24 . և ովսեայ . Ը . 3) . և ապա երբեմն ցողջեցաւ ոչ իշխանութիւնն կամ բռնութիւն , այլ աւետարանութիւնն առաքելոյ , և և ցողով մկրտութիւնն յամենայն հեթանոսս ընդ ամենայն երկիր ըստ այնմ (մատ . ԻԸ . 19) . * գնացէք ,, այսուհետև աշակերտեցէք զամենայն հեթանոսս . ,, մկրտեցէք զնոսա յանուն հօր և որդւոյ և հոգւոյն ,, ՍՒՐԲ ‖ . Լ՚ս ինաց իսրայէլ ՚ի յամաքուածէ անհաւատութեն ,

ԼՐԵՐՈՐԴ՝ այսու գեղմամբ նշանակի կոյսն մարիամ , զոր գեղէն , այսինքն մարդկայինս բնութիւնն գոլով ՚ի իսը խաւարի եդ ՚ի կալ աշխարհի . և էջ ՚ի նա բանն ինձ իբրև անձրև կամ իբրև ցօղ այնպիսի հանդարտութիւն՝ մինչև ոչ խնամալ ումեք և ոչ իսկ յուսերիսյ , որ խօսեցեալ էր զնա իւր հարսն . և ամենևին տոգորեալ ՚ի նա առանց խօսուելոյ կուսութեն , յայնցաւ յարգանդիս նորա , և իբրև քամեցաւ , այսինքն իբրև ծնաւ՝ լցաւ կոնք ամենայն մարգարէութեանց . և ինքն բանն որ իբրև ցօղ էջ , իբրև անձրև քաղցր ցօղեցաւ յամենայն երկիր այսինքն յամենայն ոգիս մարդկան ՚ի ձեռն հնարհոց , մինչև նոցա և ծնանիլ զնա ՚ի հոգիս իւրեանց , և լինել մայր նորա՝ պահելով զբան նորին . (ոսրկ . գրի մարկ . Ը . 34) .

ԼՒ ըստ այսմ ցամաքութիւն որ ասաց ՚ի գեղմանն՝ նշանակէ զանբիծ և զանարատ կուսութիւն գեղմանն՝ այսինքն մարիամայ , որ իբրև մարդ անարատ և կոյս ծնաւ զԳառն այդ , ԼՒ զի զայս գեղմն եառաւ յոմանց կիմ և աննայ՝ որք ՚ի նէն իբրև գառինք հնոյ օրինաց , յայս սակս ասի ՚ի շարականն * ԼՒ.յոսր գառինքն ,, օրինակացն յոմանկիմ և աննա եառն մեզ զգեղմն ,, ընդունել զցօղն երկնային . յորմէ հոսեաց անձրևն ,, կենաց , և բղխեաց աշխարհի աղբիւրն խնայեաց ‖ . ԼՒ խօսիլ մարգարէին զերկիրդ գալստենէն քրիստոսի (՚ի սաղ . խբ . 1 — 5 .) ակագինս բարբառի . իսկ ՚ի խօսիլն ասա զառաջին գալստենէն՝ հանդարտ բառնիւք վարի . զայն հրով հրատարակէ , և զայս ցօղով . այսպէս խօսին և այլ մարգարէք , ՚ի յուշանալ զան-

Համեմատ տարաղաձութեան երկաբանչիւրոցն. * Եթէ
,, մարգարէին (ասէ Իգնատիոս վարդապետ. ի
,, մէկն. զերկուս ցուցանէն գա-
,, լատաս ... և վասն երկոցուն սոցա դաւեթաս
,, ասացեալ է. Իջցե՛ս որպէս զանձրև ի վերայ գեղ-
,, մանն անձայն իբրև զցօղ ցօղեալ յերկիր. այս ա-
,, ռաջին հանդարտ իջումն՝ որ առ կոյսն, և ի նմա-
,, նէ գալ նուաստութիւն յերկիր. իսկ վասն երկրոր-
,, դին յորժամ խօսի զՀոգի Լոյսն առաքի զնա զամս-
,, ՚ած ՚ածոց ՚ար խօսեցաւ. կոչեաց զամենայն արա-
,, բածս ի միասին. և ՚ած մեր յայտնապէս եկեսցէ,
,, և ոչ լռեալ դադարեսցէ. և Հուր առաքի նորա
,, գնասցէ, և շուրջ զնովաւ մրրիկ յոյժ. և կոչեաց
,, զերկինս և զերկիր ի մի. զի դատեսցի ժողո-
,, վուրդ իւր ||

Լարոյապէս այս բան Հոյի յիջումն Հնորհոց. ըստ որում Հնորհքն քան իբրև անձրև իջանէ ի Հոգին սուղ ի գետին. և ապա իբրև ցօղ ցօղէ յերկիր՝ այսինքն ի մարմին՝ առ ի զօրացուցանել զնա ընդդէմ փորձութեց, նա զի ի զուարճանալ Հոգւոյն անձրևաբ Հնորհաց, զուարճանայ երբեմն և մարմինն ըստ երկուց, մի՝ զեղմամբ ուրախութեն, և մի և՝ խաղաղելով ի բռնութենէ ցանկութեցն։

Վարձեալ և վարդապետութեն ՚ածային բանից որ նմանի ցօղոյ և անձրևոյ (Ի. օրին. լՇ. 2։ յոբ. իԺ. 19 — 23. ՚ած), իբրև զանձրև իջեալ ի ներքին լսելիս՝ ցօղէ ի Հոգին, յորմէ ծագէ ի կամն արդարութենէ ըստ վերին մասին, և խաղաղութենէ ըստ ստորին մասին։ Օ այս եղեալ մարգարէին՝ առաջի առնէ այժմ ի զգաստ այսորիկ ասելով։

Է. Օ ապէսդ յառաջս նորա արդարութենէ. բազում խռովութիւն գնալ ի միասին դնէ մարգարէն զերկուսին զսոսա՝ զարդարութենէ և զխաղաղութենէ, քանզի ուր կայ խաղաղութիւն՝ կանխէ անդ արդարութիւնն. և ուր կայ խռովութենէ, յորժամ Հասանէ արդարութենէ՝ բառնի խռովութենէն, և ի բառնել խռովութենէ յառջորդէ խաղաղութենէ։ Այդ քանզի մարգարէն խնդ-

քեաց յիշ տալ թագաւորի զարգարութիւն, այնմ հետեւեցուցանէ և զնաղաղուէնն. իբր զի ի տուեալ լինելն արգարութիւն՝ տուեալ լինէր և խաղաղութիւն. ուստի և ի ծագել արգարուն յաւուրս նորա՝ ծագէր և խաղաղութիւն, վասն որոյ ասէ.

Ծաղէսցէ յաւուրս նորա արդարութիւն եւ բազմութիւն խաղաղութեան։

Այս բան եթէ հայեսցի ի սաղմոսն, մեկնի այսպէս. ի տալ յիշ սաղմոսին զպարգեւս՝ առ ի դատել իրաւամբք, երեւեսցի յամենեսին արդարութիւն. իբր զի ամենեքին ի բաց թողեալ զանիրաւութիւնն՝ զհետ լինիցին արդարութեան. զի ուր տիրէ թագաւոր արդար՝ որ դատէ զամենայն անաչառ, ժողովուրդք դադարիցեն յանիրաւելոյ, և վարիցեն ըստ արդարութեան. և ի լինել այսր տիրէ խաղաղութիւն. որպէս և եղեւ յաւուրս սաղմոսին. յորս ժողովուրդն իսրայէլի կային անդորրացեալ իւրաքանչիւր ընդ որթոյ և ընդ թզենեաւ իւրով խաղաղացեալք յամենայն կողմանց չուրջանակ (գ. Թագ. գ. 24. 25)։

Իսկ ի քո հայելով չորեքկին առաջի դնի այս բան՝ ըստ չորից կարգաց արդարութեան. նախ ըստ այնմ արդարութեան զոր արար քո՝ հաստատելով հօրն երկնաւորի զպարտս մեր, որով և եղեւ խաղաղութիւն ի մէջ ոյ և մարդկան։

Երկրորդ ըստ այնմ արդարութեան, որով դատեաց զդատաստան մեր, և արար մեզ իրաւունս յօսոխէ մերմէ այսուհետեւ ի սատանայէ. որով և խաղաղացան մարդիկ ի բռնութենէ սատանայի. իբր զի ոչ ևս կարէ սատանայ ի դատ վաղել զաղգ մարդկան առ ի դատապարտել զնոսա, եթէ ոչ կամիցին ինքեանք մատնել զանձինս ի ձեռս նորա։

Երրորդ ըստ այնմ արդարութեան, որ ցուցանէ մարդոյ գործել ըստ ուղիղ բանի, ըստ ածական օրինաց. քանզի այս արդարութիւն չատաջ քան զչալ ներս մերոյ՝ բազում մարդիկ ծածկեալ եր, և ոչ երեւէր պայծառ. իսկ ի գալ նորա՝ փարատեցաւ մթութիւնն. և իբրև լոյս ծագեաց արդարութիւնն, կամ Աստուածն արդար գործոց և բազում կարգաց առաքինութեանց, զգաստութեան, կուսութեան եւ. յորմէ ծագեցաւ ի մեզ

և խաղաղութեի բազում ըստ բազմութեե գործոց արգարութեե։

Որորդի ըստ այմ արդարութե որով արդարանամք ի մեզայ ի ձեռն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։ Եւ եղև խաղաղութե ի հոգիս մեր առ ած ըստ գրեալ առաք՝ (Հռոմ. ե. 1.) * այսուհետև արդարացեալ ,, ելեալք ի հաւատոց անտի՝ խաղաղութի կալցուք առ ,, ած ի ձեռն Տեառն մերոյ Յիսուսի։ Այլ թէպէտ յառաջ քան զգալ քոյի և կայր արդարութե, որով արդարացան բազումք, որպէս արէլ, Հենովք, Նոյ եւ , բայց այն էր ի ձեռն արդարութեն քոյն. որ թէպէտ և կայր ի մանաւանդ արդարս, բայց ոչ էր ծագեալ այսինքն սփռեալ. իսկ ի գալ Տեն մերոյ ծագեցաւ, այսինքն տարածեալ սփռեցաւ յաշխարհ ամենայն։ զի որպէս ի ծագել արեւու՝ Տառագայթք նորա առժամայն ծաւալին ընդ ամենայն տեղիս, այսպէս և ի գալ Տեն մերոյ և ի լնուլ ժամանակն կրեալն՝ Տառագայթք արդարութե նորա առ ժամայն ծաւալեցան ընդ ամենայն աշխարհ. որով և ամենեքեան հաղորդ գտան խաղաղութե։

Ի յիշել մարգարէին զարդարութե՝ ոչ յաւելու ըզբառդ Էաղմ. իսկ ի յիշելն զխաղաղութե՝ յարի զէաղմն՝ յասելն. բազում խաղաղութե, կամ ըստ երբ և այլոց Թարգ. բազմաւ խաղաղութե, որով ցուցանի առաւելուլ խաղաղութեն ըստ այլևայլ գլխոց. մի՝ սոսկ ըստ արտաքինն. ի ծագել Տեն մերոյ յաւելութ օգուստոս կայսեր, աշխարհ ամենայն ի խաղաղութե կայր. զի որպէս ի մերձենալ ծագման արեւու՝ յառաջ արշալոյս, այսպէս և ի մերձենալ ծագմանն Տեն մերոյ յառաջեաց յաշխարհ խաղաղութի ինչ արտաքին, որպիսի տակաւին չէր եղեալ յետ աշտարակաշինութեն։

Արկրորդ՝ ըստ դադարելոյ վիճից ի վերոյ իւրաքանչիւր բանից մարգարէութեց, և ըստ կատարելոյ նշանակութե հին արարողութեց. Իբր զի որչափ ինչ վիճ կարէր լինել ի վերոյ բանից մարգարէութեց՝ թէ զիարդ գոյցէ քն, ուստի գայցէ, երբ գայցէ, զինչ առնիցէ. Տե. ի գալ նորա ամենայն ինչ խաղաղացաւ, այսինքն որշեալ եղև, թէ ահա այսպէս է և

այնպէս։ Այնպէս և նշանակութիւք արարողութեց
'ի կատարիլն քահ՝ հանդեան, այսինքն 'ի գլուխ հլլին
և լրացան։

Յորորդ ըստ հանդիլելոյ աղաղակի մարդկայինս բնու-
թեե. զի յորմէ սեռէ անկաս մարդս՝ հանապազ ագա-
զակէզ առ ՝ոծ բերանով նահապետաց և մարգարէից
և ա և փափաքանօք փրկութե. իսկ 'ի ծագել արդա-
րութե՝ այս ամենայն աղաղակ հանդիստ էառ և խա-
ղաղացաւ։

Յորորդ ըստ ամենայն կարգի արդարութե՝ զորս
թաւեցաք այժմ 'ի վերոյ, որով և յաձախութե խա-
ղաղուե տիրեաց յամենեսեան։ Ինդ երորդ ըստ առա-
ելելոյ առաքինութեց, մինչև զնհամիս և սիրել, և
բարի առնել տուելոյ, որով սկսի խաղաղութիւն։
Արթե է յաւելուլ 'ի սոսս և զյաջորդել յաւիտե-
նական հանդստեան. ուր է անսահման խաղաղութե,
որ տիրե յայնոսիկ՝ որք արդարանան արդարութե՛ն,
զոր երբեր քո։ Իսկ թե ցորչափ ունիցի տեւել այս
արդարուե և խաղաղուե, յայսո առնել ասելով։

Ընել կատարեալ լսոն։ Այս քան կրկին մտօք մեկնի,
մի՝ ըստ բուն նշանակութե բառիցն. որով ցուցանի
կատարուն լսանի. քանզի լսուինն միշտ գոլով յամ-
ման և 'ի պակասման լսոյ, է յանկատարութե. իսկ
յորժամ հասանէ նմա վերջին աձումն՝ կատարի, և
ասի 'ի պայծառանել յանդիմման արևու. և այս լինի
յաւիժարար 'ի կատարածի աշխարհիս. ուստի և
տեւելն իրիք, զորօրինակ արդարութե և խաղաղու-
մինչև ցկատարուն լսանի՝ է տեւել մինչև 'ի կատա-
րած աշխարհի։

Յերկրորդ մեկնի ըստ փոխաքերական մտաց. որով
բառդ լսոն՝ դնի փոխաքերութե փոխանակ փո-
խականութե. և մնկնանցուե մարդկան. և զի
այսր ամենայնի կատարած լինի 'ի վախճանի աշխար-
հիս, տեւելն իրիք մինչև 'ի կատարած լսանի, այս-
ինքն մինչև 'ի կատարած փոփոխականուե, է տեւել
մինչև 'ի վախճան աշխարհիս։ Ա այն որոյ սովին կա-
մի ցուցանել մարգարէն, թե այն արդարուի և խա-
ղաղութե՝ զորս յիշեաց, ունին տեւել մինչև 'ի կատա-
րած աշխարհի, որով նշանակի միշտ տեւել արդարու-

ԹԷ և խաղաղուԹ զոր երեր քո ։

Լսակ բառդ Ֆեձե՝ ոչ ցուցանել Թէ յետ կատարածի աշխարհի ոչ եւս ՅեսայՀ այն արդարուԹիւն և խաղաղուԹիւն , այլ Թէ մինչև ցայն ժամանակ տեւեսցէ , և ի ժամանակին անդ յայլ գերազոյն վիճակ փոխեսցի . յոր միտ ասէ Եզեկիացին , Թէ * մինչն ոչ սահմանաւ ,, կան է , այլ անեզրական ։ (ի մեկն . մատ . գլ . է) . Լյս հնօրհալին գրէ (ի մեկն . մատ . գլ . ՚ա) . * Մինչդ , ասէ , ժամանակական է՝ զի զնշանակեալն ,, յայտնէ , և որ զնկնին է ոչ հաստատէ ։ Լյս դաբձեալ ի մեկնէլն զբան առաքեալին՝ որ ասէ . * ոչ ,, դիտեր զնա՝ մինչև ծնաւ ։ գրէ այսպէս . * Մինչդ ոչ սահման իրաց է , այլ սովորուԹ է գրոց ,, գնել . որպէս և առ տուսաներան ասէ , Թէ եւ ագ- ,, ահաւ , և անդրէն ոչ գարձաւ մինչև ցցասմբել երկ- ,, րի . յայտ է Թէ և ոչ յետ ցասմբելոյն ... և Թէ ,, եղելոյն յաւուրս նորա արդարուԹիւն և խաղաղուԹիւն ,, մինչև կատարեսցի լուսին ... (այսու ոչ ցուցանի) ,, խաղաղուԹիւն գադարել ի Հանդերձեալսն յետ ,, կատարման լուսնին , որ մանաւանդ Հաստատելոյ ,, է ։

Լ. Յայսմանէ լուսնին նշանակէ աստ զեկեցի զոր. որ ի փոխուԹիւնէ կենցաղոյս գոլով օրինակի ի լուսնին . յորում մինչև ի Հասանել ի կատարուն՝ տեւեսցէ արդարուԹիւն և բազում խաղաղուԹի ։

Ձարմանական մեկնուԹիւնք ի ձեռն լուսնի նշանակի զոր կոյս . որ քան զամենայն աստեղս արագ ընԹանայ ամսեաւ (սերաք . Ճ . ճ) . * իբրև լուսին լի յաւուրսն իւրոց յԱծած ելոյց ի տես երից ամաց զայսմանէ տես ի գիրքն կռւեցեալ պատկեր տճնից տիրամօրն . ի Ձառն . ՚ք և ՚ջ .

Լ. Ռասպել էն աստ ոմանք՝ Թէ լուսինն տաբւով միով յառաջ քան զդալն քոլորի . և ինայ անշարժ . որով և խանգաբի տօմարն . վերադիրն լինի երեսուն . և եօԹնեբեան եօԹն . և յայս Հայելով ասէ . * մինչ չև կատարեսցի լուսին իբրև Թէ մինչև ցայն ժամա-

նակ անխափան տիրէ թագաւորութեանն քոյ։ Օ այս և վարդան լիչէ ասել ոմանց. բայց չայտ է թէ ինքնահնար զուարք են սոքին։ Լքէդ եդեալ մարգարէին զնա ծագման արդարութեանէ և խաղաղութեանն քոյ՝ խօսի և զտարածութեանէ իշխանութեանէ նորա, և ասէ.

Ը. Տէրեսոյ նա՝ ի ծովէ մինչև՝ ի ծով. ի գետոյ մինչև՝ ի ծագս աշխարհի.

Լանգիլ՝ի գիրս ելից (ԻԳ. 31) ասէ՝ այլ ցիսրայէլ, * եդից զսահմանս քո՝ի կարմիր ծովէ մինչև՝ի ծովն ,, փղշտացւոց (այսինքն մինչև՝ի ծովն միջերկրական) ,, և յանապատէն (որ է յայն կոյս յորդանանէ) մինչև ,, ի գետն մեծ եփրատ՝. (աես և՝ի գիրս Թուոց. ԼԴ. 3 — 10, և օրին՝. Ժս. 24, և յեսուայ. ԻԵ. 3 — 5.) Լբ զայս յայտնի խոստացեալ էր ասե աբրահամու. որպէս աւանդի՝ի գիրս ծննդ. (ԺԵ. 18.) յաւելն ցնա. * զաւակի քումմ տաց զերկիրդ զայդ՝ի ,, գետոյն եգիպտացւոց մինչև՝ի գետն մեծ եփ- ,, րատ՝. Եւ։ Լստ այսոցիկ խոստմանցդ Թէպետև սկսան որդիքն իսրայէլի ժառանգել զայս ամենայն, բայց ոչ կարացին տիրել, և ոչ ևս երբեք վայելել. իսկ սողոմոն՝ի Թագաւորելն անդ տիրեաց՝ի վերայ այսր ամենայնի՝ յօրինակ տիրելոյ նոն մերոյ ընդ ամենայն երկիր. վասն որոյ ասէ.

Տէրեսոյ նա՝ ի ծովէ մինչև՝ ի ծով. ի գետոյ մինչև՝ ի ծագս աշխարհի։ Լյս բան հայելով՝ի սողոմոն՝ մեկնի այսպէս. տիրեսցէ՝ի վերայ ամենայն Թագաւորութեանց եղելոց՝ի մէջ երկուց ծովուց՝ի սահմանաց կարմիր ծովու մինչև՝ի սահմանս միջերկրական ծովուն. և՝ի գետոյն եւփրատայ՝ ևս և՝ի գետոյն եգիպտոսի մինչև՝ի ծագս աշխարհի. այսինքն մինչև՝ի վերջինն՝ի ծայր աշխարհին պաղեստինոյ. մինչև յաշխարհն ասորւոց. վասն զի այս ոմն մինչև՝ի ծագս աշխարհի՝ կամ երկիրն, վերածի՝ի ծագս այնր աշխարհի զոր- մէ է բանն. և զի ասա բանն հայելով՝ի սողոմոն՝ է զերկրին առեաեաց, ասէլն մինչև՝ի ծագս աշխարհին՝ վերածի՝ի ծագ այնր աշխարհի, որ ասպատ՝ի սահմանս ասորւոց՝ առ վերջինն լերամբք լիբանանու։ Իսկ Թէ չէրաւէ տիրեաց սողոմոն յայսչափ տեղիս՝

զոր եդաք, յայտնի ասանդէ՛ զոր գիրն. յասէին գնամ-
նէ (ա. մնաց. Թ. 26.) Թէ * և իշխան ամենայն
Թագաւորացն ՚ի գետոյն եւփրատայ մինչև երկիրն
պղեստացւոց (ցծովէզրն) և մինչև ՚ի սահմանսն եգիպ-
տոսի ||. (տես և ՚ի Ջ. Թագ". 34. և ՚ի սաղ". ԼԱ.
12. և ՃԲ. 25.)

Ոտկ հայելով ՚ի քո՛ այս բան յայտնի ցուցանէ զսի-
րել նորա ՚ի ծովէ մինչև ՚ի ծով, այսինքն ՚ի միջի
ծայրէ աշխարհի ուր է ծով մինչև ՚ի միւս ծայր աշ-
խարհի, որ նոյնպէս աւարտի ՚ի ծով. զի երկիրս հա-
մայն չուրջ պատեալ ունի զծով. այնպէս ցուցանի և
զաւրել նորա ՚ի գետոց մինչև ՚ի ծագս աշխարհի,
այսինքն յո՛ և իցէ գետոց մինչև ցայն վայրն՝ յորում է
ծագ աշխարհի.

Եւ խորհրդաւոր ցուցանէ տիրել ՚ի վերայ հրէից և
հեթանոսաց, ՚ի վերայ արդարոց և մեղաւորաց, և և
՚ի վերայ հրեշտակաց իբր ՚ի վերայ գետոց. և ՚ի վե-
րայ գիւաց իբր ՚ի վերայ ծովուց.

Ձերբ". և յայլ Թարգ". եղակի գնի գետն, այսինքն
է * ՚ի գետոյ մինչև ՚ի ծագս աշխարհի ||. յոր միա-
մօրեայ է այսու գետով իմանալ զյորդանան. իբր զի
անդ սկսաւ Հռչակիլ ՏիրուԹիւն Նորա Ձայնիւ Հօր և
իջմամբ Հոգւոյն Ըզդ, և վկայուԹիւ յովհաննու, և
անտի տարածեցաւ յետոյ մինչև ՚ի ծագս Համօրհնէն,
ոյ յամենայն ծագս աշխարհի. զայսմանէ տես և ՚ի
սաղ. ՃԸ. 8. ուր գրի ասել Հօրն երկնաւորի ցորդի
իւր, * խնդրեա՛ յինէն, և տաց քեզ զՀեԹանոսս ՚ի
,, ժառանգուԹիւն, և իշխանուԹիւն քեզ ընդ ամենայն
,, ծագս երկրի ||. Ո այս եգեալ մնդրագարձին առաջի
առնի և զայն Թէ զիարդ ՚ի տարածիլ այսր իշխանու-
ԹԵՆ Հնազանդեցան նմա Թագաւորք, և նկուն եղեն
Թշնամիք. վասն որոյ ասէ.

Ք. ՚Ա՛ՀԼ նորա նախ հնազանդ անիցեն. և ընդեմն նորա
հաղ կերծեսցեն.

Ոյ՛ զի գիտա որոշակի ոչ աւանդի վասն այսոցիկ ազ-
գաց գալ առ սողոմոն, և երկիրպագանել նմա. այլ
՚ի հաստարակի ասի՝ Թէ սողոմոն * էր իշխան ամե-
,, նայն Թագաւորաց ՚ի գետոյն մինչև յայլազգիս և

„ մինչև ցսահմանս եգիպտացւոց ‖. (Ք. Թագ. Ժ. 26.) և Թէ * գայլն առնեսցի ազգք լսել զիմաս-
„ տուԹիւն սողոմոնի, և յառնեսցի Թագաւորացդ երկրի
„ նէ ‖. (Ք. Թագ. Ջ. 34): Իսկ մարգարէն որոշակի
խօսելով՝ ի մէջ բերէ նախ զՀնդիկա՝ և ասէ:
Պ՚աՀել նորա նախ Հնդիկս անկցեն: Յառիւս Հնդիկս՝ կա-
րեն իմացեալ լինել աստ պէսպէս ազգք. մի՝ ազգք
Հեռաւորք, զի երկիրն Հնդկաց Հեռի գոլով՝ մարթ
է զի և ՀՀ Հեռաւոր ազգս՝ Հնդիկս կոչել: Առ-
րորդ՝ ազգք բնակեալք յանապատս: Ներորդ՝ ազգք
սևացեալք դիմօք, զորս սովորութիւն է Հնդիկս կո-
չել՝ ըստ ստուգաբանելոյ ոմանց: Որրորդ՝ այնոքիկ
ազգք՝ որք Ունին բնակեալք անդր քան զգետն եգիպ-
տացւոց, կամ եգիպտացիք. զի որովՀետև՝ ի նախըն-
թաց Համարն յիշեաց զգետն զայն՝ ի հասարակի,
մարթ էր աստ յիշել և զբնակեալսն՝ ի գետոյ և
անդր: Չինգերորդ եԹէովպացիք բնակեալք յափ-
րիկէ, յոր միտ յայլ Թարգ" դնի աստ եԹէովպացիք:
Վ եցերորդ՝ այնոքիկ ազգք՝ որք նաւեն՝ ի ծովու. զի
Հեբրայականն դնի ՀԷՒՅ կամ ՀԷՒՅ. Իսկ այդ բառ
փոխանակ այսպիսեաց վարի ուրեք ուրեք՝ ի գիրս.
որպիսի Ունն փղշտացիք և փիւնիկեցիք, և կամ բնա-
կիչք կղզեաց, յոր միտ՝ ի Թարգ" ասոր" դնի կղզիք,
՝Ա. մին յայսոցիկ ազգացս ակնարկէ աստ բառդ Հըն-
դիկք. և կամ ըստ մեկնաբանուԹեանց քաղդէացւոց Հայի
՝ի մեծամեծս կամ յիշխանս:
Պ՚արԹ է և Հս ասել՝ Թէ որպէս Հռոմայեցիք զի և
Հյն օտար ազգս կոչէին բարբարոս, սոյնպէս և եբ-
րայեցիք զի և Հյն օտար ազգս կոչէին Հնդիկս, կամ
ըստ Թարգ" այլոց եԹէովպացիս, կամ ըստ նոցա
ձիիմ: Յոր միտ և դիցի՝ կամի սովաւ յայտ առնել,
Թէ՝ ի Հռչակիլ անուանն սողոմոնի՝ ազգք Հեռաւորք
և օտարք կամ ազգք եԹէովպացւոց և այլոց ժողո-
վրդոց անկցին առաջի նորա. այսինքն խոնարՀեսցին
առաջի նորա, գալով առ նա՝ ի լսել զիմաստուԹիւն
նորա, կամ առ՝ ի բերել զընծայս նմա. ըստ որում
վկայէ ած գիրն ասելով. (Ք. Թագ. Ժ. 23 — 26.)
* Եւ մեծացաւ սողոմոն քան զամենայն Թագաւորս
„ երկրի՝ մեծուԹիւք և իմաստուԹիւք. և ամենայն

„ Թագաւորք երկրի խնդրէին տեսանել զերեսս սո-
„ ղոմոնի, և լսել զիմաստութիւն նորա՝ զոր ետ ած ՚ի
„ սիրտ նորա. և նոքա բերէին իւրաքանչիւր զպա-
„ տարագս իւրեանց, անօթս արծաթեղէնս և անօթս
„ ոսկեղէնս, և հանդերձս, սատիճն և խունկս, և
„ ձիս և ջորիս՝ ամի ամի ‖:

Եւ մանաւանդ պատմէ վասն եգիպտացւոց և քետացւոց և ասորւոց ասէ անդ, թէ * ելանէին երբ կառաց
„ յեգիպտոսէ փոխանակ (ընծայից) արծաթոյ . . .
„ նոյնպես թագաւորացն ամենեցուն քետիմայ (այս-
„ ինքն քետացւոց) և թագաւորացն ասորւոց (և)
„ որ ընդ ծովակողմն ելանէին ‖. (այսինքն են թա-
գաւորք փիւնիկեցւոց). (Ջ. Թագ". Ժ. 29.) սոքա ամենեքին ընծայաբերք եղեն սողոմոնի մի քան զմի յառաջելով:

Եւ յայս միտ դնի աստ ՚ի թարգմանութիւնէ մերում բառս նախ՝ յասելն. առաջի նորա նախ հնդիկք անկ-
ցին. որով ոչ ցուցանի թէ նախ նոքա եկին. և ապա այլք, այլ թէ այլևայլ ազգք օտարք զորս հնդիկս կոչէ՝ մի քան զմի յառաջեացեն գալ առ նա, և բե-
րելնմա ընծայս, և անկանիլ առաջի նորա նախ սա և ապա նա: Նոյնպէս որք թշնամութիւբ էին ընդ նմա, և ոչ խոնարհեցան նմա, ինքեանց ճնասեցին. և զայս
յայտ առնէ յաջորդ բանիւն ասելով:

(ա) Թշնամիք նորա հող լիզեցեն: Այսմ ասել. թշնամիք սո-
ղոմոնի չոչ կամիլն հպատակիլ նմա՝ թշուառացին, մինչև կարօտ ճիալ նոցա կերակրոյ, և ստիպիլ ու-
տել զհող. որով ոչ ցուցանի՝ թէ յիրաւի հող ուտէ-
ցեն, այլ կամելով չափազանցօրէն խօսիլ՝ դնէ զայս, առ ՚ի ցուցանել զկարօտիլ նոցա և զսովիլ նոցին և զթշուառանալն յամենայնի. և կամ սովին կամի պա-
տարակել զնոսա. իբր թէ ասել. որովհետև ոչ կա-
մեցան ՚ի խաղաղութիւնէ սողոմոնի վայելել, և հանգս-
տեամբ զկերակուր իւրեանց ուտել որպէս այլք, փո-
խանակ այնր հող կերիցեն. (զորօրինակ ասի ՚ի ռամ-
կական զրոյցս, Թող քար ու քացախ ուտեն):

Պարթ է ասա ՚ի փոխաբերական միտս հողոյլ իմա-
նալ զանուտի և զխմարական իմաստութիւն աշխարհի. յոր միտ կամի ասել. որովհետև ոչ կամեցան ձաշա-

կել զերկնաւոր իմաստուԹիւն սողոմոնի, կերկեցեն զերկրաւորն։ Կարեմք յաւելուլ և ա, Թէ հող ուսեալն դնի աստ ըստ խոնարհելոյ՝ի հող, այսինքն ըստ երկերպագանելոյ կամոյ և ակամայ։

Ա.յլ այս բանք ուղղակի մեկնեալք՝ի դէմս քրիստոսի՝ յայտնի ցուցանեն Թէ ազգք հեռաւորք և օտարք բնակեալք՝ի ծագս աշխարհի, կիք ազգք հնդկայինք, այսինքն ազգք ըստ հնդկաց սևացեալք՝ի հոգիս իւրեանց և մԹագնեալք՝ի վարս՝ կանխեացեն առ քիս, և ընկալեալ զհաւատս նորա երկիր պապցեն նմա։

(զայսմանէ տե՛ս՝ի սաղ. կէ. 32)։

Ա.սացի՝ի վերոյ, Թէ ԹարգմանուԹիւնք մերում, զի բառդ նախ ոչ դոյ յայլ ԹարգմանուԹիւն։ և սակայն եԹէ առցի այն փոխանակ նախնուԹեանն ժամանակի, հայելով՝ի քս՝ ցուցանէ Թէ հնդիկք, այսինքն հեԹանոսք յառաջագոյն անկանելոց էին առաջի քրիստոսի և էղեն ինակ։ ըստ որում մոգք հեԹանոսք յառաջագոյն քան զհրեայս ծանեան զքս և երկիր պագին նմա՝ի ծնանիլ նորա։ և չէ ինչ ընդդէմ հնդիկս կոչել զնոսա, զի եկին յարևելից կողմանէ պաղեստինոյ՝ որ է՝ի կողմն հնդկաց։ սոյնպէս է ասել և վանն եԹէոփլիացւոց։ (գործ. ը. 27.) և առաւել ևս վանն հայոց։ որպէս յայտ է՝ի գործոց աբգարու։

Ա.յլ եԹէ առցի այդ բառ փոխանակ նախնուԹեան աճապարելոյ, որպէս եդաք՝ի վերոյ, ցուցանէ Թէ հեԹանոսք փուԹացան երկիրպագանել քրիստոսի, որով գրեԹէ յափշտակեցին զնա՝ի ձեռաց հրէից՝ նախ քան զիմանալ նոցա։ իսկ սոքա Թողեալ զքս՝ յարեցան յերկրաւորս։ վասն որոյ ասէ։ Թշնամիք նորա այսինքն հրէայք հող կերիցեն, այսինքն զերկրաւորօք գայցեն, և զերկրաւորս աւեԹ խնդրելով՝ ոչինչ շահեսցին։ որպէս որ ուտէ հող՝ ոչ առնու ինչ սնունդ։ Ա.յս կարէ հայել և՛ի դէմս։ իբր զի յետ գալստեանն քրիստոսի՝ ոչ ևս կարասցեն ուտել բռնուԹեամբ զորդիս մարդկան։ այլ կերիցեն զհողս այսինքն զայնոսիկ՝ որք կամօք իւրեանց յարձին՝ի հող, և յայն են եղեալ զոյս իւրեանց։ Նմանապէս և հեբեոփկոսք հող և մոխիր զրոյ կերիցեն և ոչ զուարԹանան։ Սոյնպէս և երկրա-

սէրք ըստ լամբ". զմարմնականն և զապականացու
վայելչութիւնս, և ոչ զանապականն։ Եւ խօսել ըզ
մարգարէին զերկրպագութէ հնդկաց՝ խօսի այժմ և
զերկրպագութէ և զընծայաբերութէ Թագաւորացն
կղզեաց, և այլոց աղգաց ասելով։

Ժ. Թագաւորք Թարսիս և կղզեաց՝ պատարագս մատուսցեն
ցնէն նմա. Թագաւորք արաբիոյ և սաբիոյ՝ պատա-
րագս բերցեն նմա։

Որպէս ասացաք՝ի նախընթաց հատարն՝ ոչ յիշի՝ի սր
գիրս բերել առ սողոմոն պատարագս Թագաւորացն
հնդկաց՝ և Թագաւորացն Թարսիս և կղզեաց ևն.
այլ՝ի հատարակի, յասելն (ք. Թագ. Թ. 23.) * ա-
„ մենայն Թագաւորք երկրի... բերէին երեսաքանչիւր
„ ոք ընծայ նմա... աման ամի ‖. և (՚ի հատարն. 14.)
* յամենայն Թագաւորութէեցն արաբացւոց և յիշխա-
„ նաց երկրին բերէին ոսկի և արծաթ արդեալ սո-
„ ղոմոնի ‖։ Այլ քանզի յայտնի և աւանդէ սր
գիրն Թէ * նաև Թարսասցի էր սողոմոնի արդեալ ՚ի
„ ծովու ընդ նաւս քիրամայ, և յերեամ գայր ար-
„ գեալ նաւ ՚ի Թարսիս՝ ոսկւոյ և արծաթոյ, և ժա-
„ նեաց փղայ, և կապկաց, և սիրամարգաց ‖. (ք.
Թագ. Ժ. 22. և ք. Թագ. Թ. 21). հաւանական է
ասել, Թէ նաև Թագաւորք Թարսիս ՚ի նաւարկուէ
անտի ծանուցեալ զմեծութէն և զիմաստութէն սողո-
մոնի՝ մատուցանէին նմա պատարագս՝ կամ ինքնին,
և կամ ՚ի ձեռն այլոց. նոյնպես և Թագաւորք կղզեաց՝
որս պատահէին այն նաւք սողոմոնի. վասն որոյ
ասէ։

Թագաւորք Թարսիս և կղզեաց՝ պատարագս մատուսցեն նմա։
Որ էր արդեօք այս Թարսիս՝ ոչ ոք կարաց իմանալ
մինչև ցայժմ։ Ո երիս հաւանական կարծիս մարթ է
առաջի առնել։ Ա. առաջինն է այն՝ Թէ բառիս նշա-
նակի ծով, կամ ըստ ասելոյ հրէից՝ առանձին
ինն ծով հնդկային. ընդ որ առաքէր սողոմոն նաւս
՚ի հեռաւոր տեղիս, և ա՚ի սոփէր. վասն որոյ և
Թագաւորօք Թարսիս իմացեալ լինին Թագաւորք
ծովու, այսինքն Թագաւորք ծովեզերեայց, մանա-
ւանդ որ ՚ի կարմիր ծովու յարևելեան մասին ափրի-

կոյ. ուր է թագաւորութիւնն սուրհանդակ լի ոսկւով. յորմէ և ցարդ լսեք ոսկի բազում կոյժ, ոչ միայն ի հանքս և ի քարինս, այլև ընդ կեղևանօք ընոյ մանաւանդ ինչ ծառոց ի յարմէ մինչև ցոստան. այս երկիր կոչի և ովփիր կամ ոսիր՝ յուսիրայ որդւոյ յեկտանայ:

Արկղ կարծիքն է՝ թէ բառիս ընթերձ՝ նշանակի տարսոն քաղաք կիւլիկեցւոց. զի որպէս աւանդի ի հին պատմուիս, ի Թարսիս Թոռանէ յաբեթայ ծնանի կիւլիկեցիք և կիտիացիք (ծնն. Ժ. 4.) յորմէ և քաղաք նոցա անուանեցաւ Թարսիս կամ տարսոն. և զի տաքա տիրէին ծովու, և էին հզօրք նաւուք և ընչիւք՝ մերձակայ տեղիք սոցա և ծովն իսկ Թարսիս առաջաւ: Ուր ըստ այմ Թագաւորք Թարսեայ իմացեալ լինին Թագաւորք տարսոնի կամ կիւլիկեցւոց և կիտիացւոց այսինքն կիպրացւոց: Իսկ Թէ ըստ վերոյգրեալոյ Թարսիան ծով Թարգմանի, այդ ըստ սորա գաբանուէ է. իսկ ըստ իրին նշանակէ ոչ միայն զանուն մարդոյ, այն է Թուն յաբեթի, այլ և զանուն քաղաքի, այն է տարսոն:

Արտրդ կարծիքն է՝ Թէ Թարսեաւ նշանակի աստ կարԹագինէ քաղաք կարքեդոնացւոց (այսինքն Թունուզից). ուստի՝ ի բազում տեղիս ՚ըբ գրոյ, ուր՝ ի մեզ և յեօԹ". դնի կարքեդոնայիք կամ նաւք կարքեդոնացւոց, յեբր". դնի Թարսիս կամ Թարշիշ. զայս յիշատակէ և գէորգ վարդապետ՝ ի մեկն. եասյ:

Նոյ կղզեօք իմացեալ լինին աստ այն մեծամեծ կըղզիք՝ յոր նստէին Թագաւորք. որպիսի են կիպրոս, կիւրիտ, Ռոդ. և կամ կղզիք մեծի ծովուն՝ և ա և հնդկաց, որպէս տեսանի յեբր". ընդ սոսին և ցամաքակղզիք. որպիսի է և պեղոպոննիսոս, այսինքն է մոռայ, և այլ սոցին նման տեղիք:

Նոյապատուորք սոցա ամենեցուն ոյք և իցեն՝ պատրաստ մատուսյեն ասէ սողոմոնի, կամ առաքեսյեն առ նա զպատուական ընծայս, ոսկի և զհարկս և այ. իսկ պատճառ յիշելոյն զսոսա Թուի լինել այս. զի սասց ՚ի վերոյ, Թէ տիրեսյէ նա ծովէ ՚ի ծով, և զի մի այսու կարծեսցի Թէ մինչև յեզերս ծովու միայն տիրէ, և ոչ ոյք էնն ՚ի ծովս, սոին էրն յաւել խօսիլ

և զայնց՝ որք են ի ծովու. խօսի ապա և զԹագաւոր
բայն արաբայ և սաբայ ասելով։

(գ) Թագաւորք արաբայ և սաբայ՝ պատարագս բերցեն նմա։
Թագաւորքն արաբայ ասելով՝ երևի Թէ իմանայ զՔ-
Թագաւորս արաբացւոց. զորոց չիք տարակոյս Թէ
բերէին սողոմոնի պատարագս, որովհետև յայտնի ա-
ւանդէ ի գիրս (ջ. Ծնոց. Թ. 14.) Թէ ամենայն
Թագաւորքն արաբացւոց բերէին ոսկի և արծաԹ ար-
քային սողոմոնի. նաև յետ ժամանակաց արքային
յուդայական. (ջ. Ծնոց. ԺԶ. 11։) Նոյնպէս և
վասն Թագաւորացն սաբայ յայտնի աւանդէ յասելն
վասն տիկնոջն սաբայ, Թէ եկեալ յերուսաղէմ.
* ետ սողոմոնի հարիւրվեց քսան տաղանդ ոսկւոյ. և
„ խունկս բազումս յոյժ, և սկանս պատուականս ‖.
(Գ. Թագ. Ժ. 1—10)։

Այլ Թէ ուր գաւառ էցէ սաբա, պէսպէս կարծիք
են. այս մի ինչ ձշմարիտ է՝ Թէ այս սաբա ըստ ո-
րում յիշի յաւետարանն մատ". ԺԲ. 42. էր ի հա-
րաւակողմն երկրին պաղեստինոյ. և ըստ այսմ բա-
զումք համարին զսա լինել շապային, այսինքն է հա-
պէշ՝ որ կոչի մանաւանդ եթէոպիա. ուր կայ և ա-
ւանդութիւն հաստատուն առ հապէշս՝ Թէ իւրեանց
Թագուհին էր այն՝ որ գնաց առ սողոմոն. Թուղ ըզ-
յաւելուած առաքելական, Թէ յղացեալ ի նմանէ
ծնաւ զորդի. յորմէ է ասեն ցեղ Թագաւորացն հա-
պէշից։

Ոմանք ասեն, Թէ սաբայ էցէ մերումէ գաւառն և քա-
ղաք նուպիայ աշխարհին, որ է ընդ մէջ հապէշի և
եգիպտոսի. և սորա Թագուհին էր ասեն այն, որոյ
մականուն է կանդակէ կամ կանդակա, որ և յիշի
ի գործ (ը. 27։) Յայս միտս է և գէորգ. վարդա-
պետ՝ որ գրէ (ի մեկն. եսայ. գլ. Կ.) Թէ * սաբա-
„ ցիք սահմանակից են հնդկաց, (այսինքն հապէ-
„ շից, զի առ նախանիս և առ մեզ՝ հնդիկք կոչին հա-
„ պէշքն). որք և (այսինքն սաբացիք) ընկալան զնուր
„ քարոզութիւնն ներքինեաւն, զոր մկրտեաց փիլիպ-
„ պոս ‖. և յաւելու ասել. * եգիպտացիք և եթէոպ-
„ պացիք, և նոցա սահմանակիցքն սաբայիք ‖. որով
յայտնապէս զնուպիացիս իմանայ։ Իսկ զոր ասեն Թէ

թագուհի սորա էր կանդակէ տիկին, պարտ է իմանալ ըստ իշխելոյն. իբր զի ինքն գոլով թագուհի եթէովփիոյ՝ իշխէր և նուապիոյ. ըստ որում եթէովպացի կոչի. որպէս է տեսանել ի գործս առաքելոց. (Ը. 27.) ուր ասի. * այր մի եթէովպացի ներքինի ,, հզօր կանդակայ տիկնոջ եթէովպացւոյ ||:

Իսկ այլք ասեն՝ թէ սաբայ էին երջանիկ արաբիա, այն ինքն է աշխարհն եւմէնու՝ սահմանակից անապատ արաբայ. յոր միտ ի ծ. Թագ. Ժ. 15. երկիրն անապատ արաբայ՝ դնի ի կողմն սաբայ. զի որ անտ գրի լինել ի կողմն նորա, այսինքն ի կողմն սաբայ, ի ը. միաց". Թ. 14. դնի արաբայիք. որով իմացեալ լինին բնակիչք անապատ արաբիոյ:

Ո այսոսիկ դնելով մարգարէին՝ ցուցանէ, թէ ամենայն Թագաւորք երկրի հանդերձեալ էին լինել ընծայաբերք սողոմոնի յայլևայլ աշխարհաց. զի նախ եդ զարևելեանսն՝ անուանելով զնոսա հնդիկս. ապա զծովայինսն՝ Թարսեացիս կոչելով զնոսա. և յետոյ աստ եդ զհարաւայինսն զարաբայ և զսաբայ: Իսկ զհիւսիսայնոց Թէպետ ի մանաւորի ոչ դնէ, բայց զնոսին ևս տայ իմանալ յընդհանրական բանսն իւր ասելով ի յաջորդ համարն, * երկիրպագցեն նմա ա,, մենայն Թագաւորք երկրի ||:

Ա. Այլ այս ամենայն լրապէս ձշմարտի ի քս, որում մատուցին Թագաւորք երկրի պատարագս՝ զհաւատ, զյոյս, և զսէր, մանաւանդ Թէ և զանձինս իւրեանց ի հնազանդութիւն նորա, ոչ միայն մօտաւորք, այլև հեռաւորք բնակեալք ընդ ամենայն երկիր, ևս և ի կղզիս. որպէս գրի յեսայեայ. ծ. 5. և ԿԱ. 9. յասելն, * ինձ ակն ունին կղզիք և նաւք Թարշ,, ի ևս ||:

Ա. Այս բան ըստ յարմարութիւն և ըստ կատարման իւրոցն հայի յերեսին Թագաւորան. որոց անուանք առանդին լինել, մելգոն, գասպար, և բաղտասար, որք եկին յերկրպագութիւն քսի ի բեթղեհէմ: Զ նորհալին (ի մեկն. մատ. գլ. ը.) համարի զսոսա լինել՝ ի պարսից, յասելն. * աղգաւ ի պարսից էին ,, (մոգքն), և աշխարհաւ յարևելից. որպէս աւետա,, րանիչս ցուցանէ ||. ուր յարևելից ասելով՝ իմանայ

զսահմանս բաբելացւոց. վասն որոյ և ասէ. * զբա-
,, բելոն աստեղծն հրաւիրէ զալ յերկրապատութիւն
,, մոյ երկնաւորին ՚այ. և յեպիսատոս լինքն չոքաւ
հանդերձ կուսիւն ‖:

Եւ սակայն ըստ հաստատելոյ բազմաց՝ մին յերից Թագաւորացս ասի լինել՚ի Թարսէ, երկրորդն ՚ի սաբայ, և երրորդն յարաբայ ըստ նախագրելոցդ, և Թէպէտ ոմանք ՚ի մադիամէ ասեն և՚ի գեփայ և՚ի ծովէ, սակայն սոքա ևս ըստ մասին են յարաբիա, և ըստ մասին ՚ի սաբա. յոր միտ ասի յեսայեայ. Ի. 6.
* փոխեսցի ՚ի քեզ մեծութիւն ծովու և ազգաց և ժո-
,, ղովրդոց. եկեսցեն ՚ի քեզ երամակք ուղտուց, և
,, ծածկեսցեն զքեզ ուղտերամակքն մադիամու և
,, գեփայ. ամենեքեան (այսինքն և բաղումք) ՚ի սա-
,, բայէ եկեսցեն բերել ոսկի և կնդրուկ, և ականս
,, պատուականս. և փրկուած ՚ան առցեն զաւետիս ‖:

Ոմանք աստանօր յայլ ինչ կարծիս բերին. զորմէ գի-
տելի է, զի բովանդակ աշխարհն արաբիոյ բաժանի
յերիս, մին ասի ապառաժ արաբիա. երկրորդն անա-
պատ արաբիա, և երրորդն երջանիկ արաբիա՝յորում
էր մադիամ. ՚ի սոցանէ (ասեն) եկին սոյն երեքին
Թագաւորք:

Պատճառ գալոյ այսոցիկ Թագաւորացս ոչ քարոզու-
Թի՛ մարդկան եղև, և ոչ գուշակուԹի՛ մարգարէից,
ոչ ազգարարուԹի՛ հրեշտակաց և ոչ փայլողուԹի՛ աս-
տեղն, այլ ազգումն ներքին, այսինքն փոյթ և յո-
ժարուԹի՛ նուրեանց յածծային ընտրհաց. ապա Թէ ոչ՝
և այլք բազումք շարժէին գալ. ուստի ասէ ընտրհա-
լին ՚ի նախայիշեալ տեղւոջ. * բայց շարժման նոցա
,, պատճառ ոչ յայլոց և ոչ յինքեանց յատուկ, և
,, ոչ յոյլ առանձինն. այլ ինքեանք յօժարեցան (՚ի
,, ընտրհացն ՚այ), և ՚ած յորդորեաց ‖. տե՛ս զայսմա-
նէ ՚ի գիրքն կոչեցեալ՝ պատկեր տօնից. ՚ի Ձառն.
Ի. այն է Ձառ յայտնուԹի՛ ՚ան:

Ի ամբրոնացին հոգևորապէս մեկնեալ զայս բան գրէ
այսպէս * կղզիք են եկեղեցիք յաղտաղտուկ անհա-
,, ւատուԹի՛ զերծեալք. իսկ Թարսիս, արաբիա և
,, սաբա՝ ոսկւոյ և պատուական ականց են տուիչք,
,, որք նշանակեն զեկեղեցւոյ մանկանց անաղտուԹի՛

„ և զպէտսն առաքինութեան. սոյա թագաւորքն՝
„ առաքեալքն, և նոյին յաջորդքն զօրհանապազ պա-
„ տարագեն զնոսին ՚այ ։

Ա.յլ գէորգ վարդապետ (՚ի մեկն. եսայ.) կղզեօք
իմանայ զհեթանոսս, և ասէ. * բարւոք կղզիս կոչէ
„ զառ՚ի հեթանոսաց ժողովարանն՝ որ ՚ի մէջ աղ-
„ տաղտուկ ջուրցն անհաւատութեանէ կալով՝ ՚ի վեր
„ ամբարձան քրիս. և հաստատութեանն առին՝ յոյժ
„ խարխեալ. նոցա հրամայէ նորոգել ՚ի հնութենէ
„ մեզայ ։

Ա.րդ առաջի արարեալ մարգարէին զթագաւորս կոչ-
մանցն Թարսոսի, արաբայ և սաբայ, որպ՚ես զի մի
կարծեսցի, թէ միայն այնոցիկ կողմանց թագաւորք
եկին յերկրպագութենէ քրիստոսի՝ զամենայնն ևս ՚ի մէջ
բերէ ասելով ։

ԺԱ. Ի՚երէմիա զնա ամենայն ընագաւորք երկրի. և ա-
մենայն ազգ ծառայեսցեն նմա ։

Պ.ատեհ է՝ զի երկրպագանելն կարէ լինել արտաքին
և ներքին. և այսոքիկ ևս կարեն լինել երկուակի. մի՝
ոսկ ըստ մեծարանաց և ըստ հպատակութենէ ՚ի քնա-
կան կարգի. որպիսի է երկրպագել իշխանաց, թա-
գաւորաց ևն. երկրորդ՝ ըստ յարգանաց յայնմ կար-
գի՝ որ էցէ ՚ի վեր քան զքնականն և ՚ի վայր քան
զաճծայինն. որպիսի է երկրպագանել սքց, կամ
հրեշտակաց. իսկ երրորդն է ըստ աճծային պաշտա-
մանն, որով երկրպագի աճ միայն իբրև տէր ամենայնի ։
Ո՚երեսին զայսոսիկ գտանեմք արարեալ աբրահա-
մու. որպէս տեսանի ՚ի գիրս ծննդոց. ըստ առաջ-
նոյն՝ երկիր եպագ նա ժողովրդեան երկրին որդւոցն
քեթայ (ծնն՞. իե. 7.) ըստ երկրորդին երկիր եպագ
հրեշտակաց (ծնն՞. ժը. 2.) և ըստ երրորդին՝ եր-
կիր եպագ ՚այ (ծնն՞. ժէ. 3։) Ա.րդ ասա երկրպա-
գանելն հայելով ՚ի տոլոմեն դնի ըստ առաջնոյն. իսկ
հայելով ՚ի քո դնի ըստ երրորդին այսինքն ըստ աճ-
այնի պաշտամանն, յասելն ։

Ի՚երէմիա զնա ամենայն ընագաւորք երկրի. և ամենայն
ազգ ծառայեսցեն նմա ։ Յայս քան զառաջ ամենայն՝ հայե-
լով ՚ի տոլոմեն՝ ոչ ցուցանէ զամենայն թագաւորս ըս

անհատի, այլ ըստ կարգի, որով և միտ բանին լինի այս. Թագաւորք բնակեալք շուրջ զպաղեստինեաւ ընդ արևելս և ընդ արևմուտս, ընդ հիւսիս և ընդ հարաւ՝ երկիրպագեն նմա, և այս՝ երկիրպագութիք մեծարանաց կամ հպատակութեանէ. սոյնպէս և ազգք բազումք ծառայեացեն նմա: (տես զոր ասացաք ի նմ. մարն 9. և 10. ի սկզբան:)

Իսկ հայելով ի քո՝ այս բան ցուցանէ թէ ամենայն ազգաց Թագաւորք հանդերձեալ էին երկիրպագանել նմա, որով բառս ամենայն՝ հայի յիւրաքանչիւր ազգաց Թագաւորս, և ոչ յիւրաքանչիւր Թագաւորս իւրաքանչիւր ազգաց. և այս բարւոք բացատրի յինջանելն ի մանաւորս. զոր օրինակ թէ ասէաք. Թագաւորն հնդկաց երկիրպագեն նմա, քայց ոչ ամենայն Թագաւորք հնդկաց. սոյնպէս թէ Թագաւորն պարսից երկիրպագեն նմա, քայց ոչ ամենայն Թագաւորք պարսից. ըստ այսմ իմն և զԹագաւորաց այլոց ազգաց. զի յայս միտ ձշմարտի այս բան ըստ ձշմարիտ երկրպագութեանէ. քանզի արդարև այսոցիկ ազգաց ամենայնի Թագաւորք ձշմարտապէս երկիրպագին քո՝ իբրև ՚ի կենդանւոյ. սոյնպէս և ամենայն ազգք մատուցին նմա զծառայութիւն իւրեանց՝ պաշտելով զնա և պահելով զհրամանս նորա յարևելից մինչև ՚ի մուտս արևու, ՚ի հիւսիսոյ մինչև ՚ի հարաւ յամենայն տեղիս և յամենայն լեզուս. զի ոչ գոյ ազգ ՚ի վերայ երկրի՝

յորում ոչ գտանիցի երկրպագութիք քո:

Ըստ ըստ ձշմարիտ երկրպագութիէ, որ է յայտնի և կամաւոր երկրպագութիէ. քանզի եթէ մտածես. ցուք ըստ անյայտ երկրպագութիէ, ամենայն Թագաւորք և ամենայն ազգք ըստ ամենայն անհատից, թէև անհաւատք իցեն, և ոչ ծանիցեն զքո, անկեալ կան ընդ իշխանութիք նորա. զի տուաւ նմա իշխանութիէ յերկինս և յերկրի. (մատ. իը. 18.) և ինքն կարգէ զամենայն ըստ իւրաքանչիւր անհատից որպէս և կամի, և ինքն է Թագաւոր Թագաւորաց և տէր տերանց (յայտ". ժթ. 16. փիլիպ". բ. 10:) Եւ այս ոչ միայն

ըստ որում ասծ, այլև ըստ որում մարդ:

Իսկ ըստ ակամայ երկրպագութիէ յաւուրն յեհանում ամենեքին առ հատուցումն, և ոմն և խոչընդոտեալք նորա,

բռնադատեսցին երկիրպագանել նմա, ընդ որս և ամենայն դևք. և անկցին ամենեքին ընդ առաւք նո-
ցա։ Օ այս եդեալ մարգարէին՝ ի միջ բերել և զայն
ղոր նա արար. վասն որոյ ասէ։

ԺԲ. Օ ի էրկնոյ ղաղտան ի հնոցն. ղաղտան և
ղանձին, որոյ ոչ է օգնական։

ԺԳ. Նհայեսցէ նա յաղտան և ի գանձին. և զանչինս
գանձոյ էհյոասցէ. ի վաղնջ և ի յարեաց էրկ-
հնոյն ղանչինս նոցա։

Ստագաւօր՝ որ յամենայնի բարւոք խնամէ զժողո-
վուրդ իւր և զազգս եղեալս ի Թագաւորութիւն իւ-
րում՝ փրկելով զառաւտեաւն ի տառապեցուցչից,
իրաւունս առնելով ամենեցուն, և ցուցանելով զու-
առ ամենեսին, բերել չկրնքեան զնմանութիւն երկնա-
ւոր Թագաւորի. որով և ընդ ամենայն տեղիս փա-
ռաւորի, և յաչս Թագաւորաց և ազգաց նախանձելի
լինի. որպէս յայտնի տեսանի այս ի սողոմոն. յա-
զագս այսորիկ և մարգարէն առ ի ցուցանել Թէ
իրաւամբք ասաց զնախահակարգեալ քանդ վասն փա-
ռաւորութեան նորա, զայս բան առաջի դնէ առ ի ցոյց
առացելոցն, ամին իբր ասէ։

Օ ի էրկնոյ ղաղտան ի հնոցն. ղաղտան և ղանձին, որոյ
ոչ է օգնական։ Այս քանզ Հայելով ի սողոմոն ցուցա-
նեն, Թէ նա փրկեաց զնմ և իսկ ազգատ ի ձեռաց
այնը, որ անողորմութիւնք զօրանայր ի վերայ նորա. և
Հարատահարէր զնա պահանջելով ի նմանէ զայն ինչ՝
զոր նա ոչ կարէր տալ, Թէև պարտական էր տալոյ,
և ոչ իակ միջնորդութիւնք այլոց կարէր Համոզել զնա.
և առաւել ևս օգնեաց այնոցիկ աղքատաց և տնանձ
կաց, որոց չէր ուժեղ օգնութիւն։ Այլ Թէպէտ յա-
սեղն գաւԹի զայս տակաւին չէր արարեալ սողոմո-
նի զայսպիսիս, բայց Հաստատութիւնք գիտելով Թէ
այնպէս առնելոց իցէ՝ իբրև արարեալ դնէ՝ յասելն
փրկեաց։ Այլ ապա զտարազ փրկելոյն առաջի դնէ
ասելով։

ԺԴ. Նհայեսցէ նա յաղտան և ի գանձին. և զանչինս
գանձոյ էհյոասցէ. ի վաղնջ և ի յարեաց էրկհնոյն ղանչինս

Նոցա։ Այս թէ ոչ ընդդէմ երևի այնմ, զոր հրաման տայեաց ած ժողովրդեան խոստչել յասելն . * մի՛ ,, ողբասցիս մնանկին ի դատաստանի՛։ (Ելից. ԻԳ. 3 .) բայց յայտ է թէ այդ հայի յանիրաւութեն ազատել զիրաւունս և զարդարութեն վասն խնայելոյ ի մնանկն . իսկ աստ բանն հայի յիրաւունս , այսինքն է խնայել ի մնանկն ըստ իրաւանց և ըստ արդարեւ , և վարել ընդ նոսա յաւէտ իբրև հայր գթած. ևս և ինամել և կեցուցանել ի վտանգից կորստեան , քան իբրև բռնաւոր տիրել նոցա և կեղեքել ։

Այլ զի երբեմն ազգաւոք և մնանկք մատնեալ ի կասկածութեն մեծ՝ առնուն յայլոց դրամս վաշխիւք , և ի բազմանալ վաշխին ոչ կարեալով վճարել՝ մատնին ի ձեռս անողորմ բռնութեն վաշխառուաց , վայել է արդար Թագաւորի , կամ դատաւորի՝ զի տեսեալ զայսպիսիս ազատեացէ ի վաշխից չարաց , և ի չարութեն վաշխառուաց ։ Այսպէս ասացէ ասէ՝ և տողմին ի Թագաւորէն , և կամ զայնպիսի Ճանապարհ կալցէ՝ զի մի լինիցին անիրաւ վաշխառուիք ։ Այայց այս ամենայն զոր առաջի դնի տայ մարգարէս՝ ուղղակի Հային ի քո , որ փրկեաց զաղքատս , այսինքն զաղքատացեալ ազգ մարդկան ի ձեռաց հզօրի՝ այսինքն սատանայի . քանզի որպէս այլոյր ասացաք , մարդն որ ստեղծաւ ամենարուեստ արարչութեն ի լուսոյ ընտրհաց և ի փառս ամենայն բարութեն , անասելով սատանայի՝ բազում չարեաց պատահեցաւ . մի՝ զի կողոպտեալ եղև յամենայն բարեաց՝ զորս վայելէր ի դրախտի . և մնանեցաւ ի յետին աղքատութեն , և անկաւ ի ժառանգութեն աբեղայութեն . որով և եղև աղքատ և մնանկ ։ Հրկիրդի՝ զի մեռաւ հոգւով , և իբրև Թէ Թաղեցաւ ի գերեզմանն մեղաց նեխեալ և փտեալ . և որ դառն է՝ մնանեցաւ ի ձեռս սատանայի ։ Հրկրորդ որ ծայրագոյն չարն է՝ պարտական գտաւ յաւիտենական դատապարտութեն . Չայսմ ամենայնի չունէր զոք իւր ձեռնտու՝ առ ի փրկել , և կեցուցիչ առ ի յառնել , և ոչ զոք օգնական՝ առ ի վճարել զպարտս իւր . գիացաւ ասպ ի նա արարիչն և ինայեաց ի նա . և յայս սակս ասէ . փրկեաց զաղքատն ի հզօրէ , զաղքատն և զանանկն՝

որոյ ոչ է օգնական. և թէ անխափանացէ նա յաղքատն
և ի տնանկն.

Այժմ օրինակ եղիցի ընդունելին նորա զնմանութիս առա-
ւել որդւոյն, և խնայել նորա ի կինն տնանկացեալ
հնութիւ. ի կինն պոռնիկ, և յաւազակն աղքատաց-
եալ, և յայլս ամենեսեան, զորս կամիցես կեղծաց-
նել, որոյ վասն եկիր և կոչեաց զամենեսեան ի գե-
բեզմանէ մեզաց. և որք միանգամ ըստ զայրու-
լուան նմին, այսինքն հաւատացին ի նա, և զօրձան
առ նա՝ կենդանացոյց զնոսա ի մահուանէ անտի.
և յայս միտ ասէ. * զանձինս տնանկաց կեղծուցէ ||,
Թէ վասն ազատելոյ ի պարտաւորութէ ծանիցէ, զի
յաղքատանալ և ի տնանկանալ ազգի մարդկան՝
մեզքն սկզբնական՝ որ տիրեաց յամենեսին՝ եղև ի
նոսա իբրև գլուխ զրամոյ ամենայնի պարտուց. և
զի ոչ կարէին մարդիկ վճարելով ինչ՝ Թողուլ ի քաց
զայս ամենայնի պարտս, սատանայն պահանջիչք առ-
նուլ ի նոցանէ և վաղիս զնեզգործական մեղս նո-
ցա, և և զՀոգիս նոցա՝ իբրև զպատուս սկզբնական
մեզաց, և զպատիժս իբրև զպատուս նեզգործական
մեզաց. որով և պարտք մարդկան ի դիպել վաչխիցն,
այսինքն մեզաց, գնալով գնայր և բազմանայր. և
Հայր այլ Հնար, բայց եԹէ կամ մատնիլ ի բանսն
յաւիտենական, և կամ պատահիլ անսահման ողբո-
մութէ.

Հայսպիսի աղէտս տեսեալ ամենագԹած հեն զարա-
ծեօս իւր՝ ոչ կարաց չանդուրժել այլ ողբովեաւ,
և յայց եղ նոցա. և պատուհասել զմուրհակ նոցա փըր-
կեաց զնոսա ոչ միայն ի չարեաց, այսինքն ի գլխոյ
անտի պարտուցն, այլև ի վաչխից նոցին, այսինքն ի
նեզգործական մեզաց և ի պատժոց նոցին. յոր միտ
ասէ * ի վաչխից և ի չարեաց փրկեացէ զնոսա։
Օ այս ծանոյց և եսայի այլով իմն բանիւ յասելն,
(Ե. 4.) ի գալ փրկչին առ որդիս մարդկան * վե-
,, բացաւ ի նոցանէ լուծն (սկզբնական մեզաց) որ
,, կայր ի վերայ, և գաւազանն (իշխանութէ սատա-
,, նայի) որ ի վերայ պարանոցաց. զի զգաւազան
,, պահանջողացն (վաչխից մեզաց) մերժեաց ||.
Իսկ երբեմն կրկնութեամբ բանիցդ զայդ և զնոյն ցուցա-

նէ նախ՝ զանհնարին կաթսուրեն ազգի մարդկան. զի կայր ի կետին չքաւորեալն և յանտանելի թշուառութեան. ցուցանէ երկրորդ զամենազեղ գթածութիւն առ ազգս մարդկան. զի առանց ակնհայելոյ առնուլ ինչ ի նոցանէ փրկեաց զնոսա. քանզի զինչ կայ ակնհայել ի փրկչէն. արդարև ոչինչ. զի չաղքատաւէ զինչ ակնկալելի էցէ. և ի տնանկէ ոչ էր յուսալի՝ թէ առնուցու ինչ չահ։

Օ այսպիսի փրկութեան գտեալ ազգի մարդկան առհասարակ ի ձեռն քո՝ առ նա դիմեցիր, և գնա ծառնեան իւրեանց տէր և փրկիչ, նմա ծառայել փութացան, և նմա երկիրպագին ինքեանք և թագաւորք իւրեանց. որոյ վասն իսկ ասաց ի վերոյ. երկիրպագեն նմա ամենայն թագաւորք երկրի և ամենայն ազգք ծառայեսցեն նմա. զի փրկեաց զնոսա տէր զաղքատացեալս և զտնանկացեալս, և ազատեաց ի հզօրէ և ի վաչխառուց նոցա։ ԽԲ. որով և անուն նորա ցուցաւ փառաւորելի պաշտելի և երկրպագելի ի նոցանէ՝ որք փրկեցան. սմին իբրև չարէ զինի և ասէ.

ԺԴ. Պատուական է անուն նորա առաջի նոցա. ՚էեշեե և գայէ նմա յոկիան արբաշոյ։

Պատուական ասի ինն, նախ վասն ունելոյ յինքեան զայնպիսի ինչ որով լինի արժանի պատուոյ, և յորգուէ. Երկրորդ՝ վասն ունելոյ յինքեան զայնպիսի ինչ՝ որով երևի ախորժելի և հաճոյ, թէև չիցէ ինն թագոյ պատուոյ. յոր միտ զդ՝ոշարս և զոսկի կօշմէ պատուական։ Երրորդ վասն սակաւագիւտ լինելոյ, յոր միտ ասի (՚ի ա. Թագ. ՚ի. ւ). * և բան նոն ,, պատուական էր յաւուրսն յայնոսիկ ։։ Չ.Լ որպէս երևի ասա բառս պատուական դնի փոխանակ առաջնոյն յասելն։

Պատուական է անուն նորա առաջի նոցա։ Լ.ա՝ բան հայելով ի սոզոմէն ցուցանէ՝ թէ պատուոյ արժանի գտաւ անուանն սոզոմենի առաջի ժողովրդեան վասն իւրոյ խնամատարելոյ և արդարութեան, և ա և վասն ցուցանելոյ զինքն բարեբար և խաղաղարար առ նոսա. մինչև ի լսել նոցա զանուն նորա՝ ցանկալ նոցա երթ

կարուեծեան կենաց նորին. յոր միա յարէ զկնի և ասէ՝

Այեցէ՛ք, Զամդ կեցցէ՛ հայի յայն՝ զոր հաստարակօրէն ասէն մարդիկ վասն ի ագաւորի՝ կեցցէ՛ արքայ, որով ցուցանի մաղթել վասն նորա զերկարութի երջանիկ կենաց. ըստ այսմ դնի և աստ վասն սողոմոնի. և առ ի ցուցանել զմեծուի իշխանութե նորա յարէ՝

Ո՛ր պայ նմա յոսխոյն աբաթացոց. Այս բան ըստ կրօնից մերոց մեկնի. մի՝ ըստ փարթամանալոյ, որպէս ի՛ ասէր. յաւելցի՛ ի նա փարթամութե բազում. և զի ոսկին որ գայր յարաբացոց՝ էր ազնուագոյնն, զայն դնէլով զայլս ևս ոտ իմանալ. Եւ որովհետև ի՛ փարթամութե ոսկին է իբր պարագրիչ այլոց, զայն յիշելով զամենայն փարթամուի կամի ընդ նմին յիշել. և յիրաւի իակ այնչափ բազում եղև փարթամուի ոսկւոյ և արծաթոյ ի գանձս սողոմոնի, մինչև ասել՝ ըբ գրոց՝ թէ *եդ արքայ սողոմոն զոսկի և զարծաթ իբրև զքարինս յերուսաղէմ ‖. (ի՛ Թագ. Թ. 27.) զոր լաւ ևս կարես իմանալ եթէ ընթերցցիս ի՛ Թագ. գԼ. Ի՛. և ի՛. Թագ. գԼ. Թ. Ծայլէ՛ ի Ծայլ.

Երկրորդ մեկնի ըստ տիրելոյ ի վերայ բազմաց. որպէս թէ ասէր. կեցցէ և տիրեսցէ սողոմոն բազում Թագաւորութեանց, և յամենեցունց տացի նմա ընծայ՝ ոսկի աղնիւ, որպիսի էր ոսկին՝ որ գայր յարաբացոց՝ Այսպէս գիտելի է, զի յարաբիա ոչ գոյ յաձախութիւն ոսկւոյ. ուստի և աղնիւ ոսկին՝ որ գայր անտի, ոչ երևի թէ անդ լինէր. այլ թէ յայլ տեղեաց գայր անդր՝ մանաւանդ ի կողմանցն ափրիկոյ. ուր է յաձախութէ ոսկւոյ, և և ոսկի բուսական ընդ կեղեւոյ ծառոյ. և անտի սփռիւր յայլս՝ որպէս և այժմ իակ սփռի. զորոյ զմեծ մասն տանին յարաբիա նաւք Ճիտայէ և մեքքէի. և այսմ օրինակ լիցի քեզ ոսկին վինեհոկոյ աղնիւ ՝ի զամենայն ոսկիս, ոչ զի ՝ի տեղւոջ վինեհոկոյ գոյանայ, այլ զի գայ անդր, և զտեալ անդէն՝ սփռի յայլ տեղիս։ Այնպէս թուի ասել և վասն ոսկւոյն արաբացւոց, և կամ գուցէ բառս աբաթացւոց՝ դնի աստ փոխանակ Հարաւահողմեայ պա-

ղեստինոյ ,յորում է և ասիրիկէ· զայսոսիկ եղաք Հայ-
ելով ՚ի սողոմոն ։

Բայց այս բան ուղղակի Հայն ՚ի քո· որոյ անունն պատուական եղև առաջի մարդկան , զորս կոչեաց ՚ի վերոյ ազգաւտս և անանկա· քանզի ՚ի փրկել նորա զնոսա ՚ի ձեռաց բռնաւորը Հղօբրին , այսինքն գոռոզին սատանայի , և ՚ի կեցուցանել զնոսա , անուն նորա պատուական եղև յոյժ առաջի նոցա· և այնչափ բարձ-
բացաւ , մինչև ամենեցուն պատիւ և երկրպագութիւն մատուցանել այնմ , բազմութիւն ազգաց կրել զայն յինքեանս , և ՚ի նոյն պարծիլ· նա և զնոսն այնր հե-
ղուլ զարիւն իւրեանց , և նովին զինեալ ելանել ընդդէմ թագաւորութիւն սատանայի , և վանել զզո-
բութիւն նորա ։

Այլ զի ցուցցէ մարգարէն , թէ նա ոչ է իբրև զայլ թագաւորս գրաւեալ ընդ իշխանութիւն մեհու , յա-
ւելու ասել՝ կեցցէ· որով կամի ցուցանել նոսա՝ թէ ՚ի գալ իւր յաշխարհ՝ կեցցէ , որպէս և կամի և ոչ ոք կարիցէ ձեռն արկանել ՚ի նա , եթէ ինքն ոչ կամի ցի· որպէս տեսանի յաւետարանն ։ Լերկրորդ՝ թէ նա առ ՚ի կեցուցանել զազգ մարդկան՝ թէպետև մեռանելոց է , բայց ոչ կացցէ ՚ի մահու· այլ մահ ուամբ իւրով կեցուցանելով զայլս՝ կեցցէ , այսինքն յարիցէ· Լերրորդ՝ թէ նա միշտ կեայ և միշտ կեցցէ յաւիտեանս յաւիտենից , գոլով ՚որ կենաց , և կեցու-
ցիչ ամենայնի ։

Ասէ թէ ՚ի կեցուցանել նորա զազգ մարդկան զինչ մատուցին նմա մարդիկ , յայտ առնէ այնու՝ զոր յարե զինի , ասէլով , և ասցէ նմա յանդիման· որով երեք ինչ նշանակի ըստ այլևայլ տեսութիւն· մի՝ ըստ կատարելոց իրացն՝ որով մատուցաւ նմա յոսկւոյն ա-
րաքաւօղ յերից թագաւորաց անտի ՚ի Ծնանիլն նո-
րա· որպէս գրի յաւետարանին (մատ· ՚ը) ։

Այլ որպէս ասեն ոմանք , ընդ սրս և Ծործորեցին (՚ի մեկն· մատ· գ· ի՚ը·) զայս ոսկիս ընդ այլ ընդ Ծայս մատոյց և նոքա յոսկեփ ՚ի յանչխման առնելն անդ զյն իբրև զնոր ոսկւոյ և մեծութիւն ։

Լերկրորդ՝ ըստ այլաբանութիւն· իբր զի յատկութիւն ոսկւոյն սրաբաւօղ երևեացի ՚ի նմա ՚ի Ծնունդեան· խո-

այս յատկութիւնք էր այն՝ զի առանձին ոմանք, ընդ որս և վարդան, թէ այն ոսկի արաբացւոց որ յիշի առատ, ոչ է ի հանքից, այլ որպէս յիշեցաք ի վերոյ բուսանեալ յերկրի ընդ կեղևով ծառոց. որ է օրհնական կուսութիւնն. և յայս միտ կամի ասել, թէ ի գալ որդւոյն ոչ յաշխարհս առ ի փրկել զմարդկիմ, ասացի նմա ի հօրէ առանց սերման՝ բուսանիլ կուսութիւն՝ որպէս է բուսանիլ ոսկւոյն արաբացւոց։

Նորոգեալ ըստ փոխաբերութեան. իբր զի մատուցի նմա ազնիւ ընծայ, այսինքն հաւատ, յոյս, սէր, խոնարհութիւն և պաշտօն ածային, որք օրհնականին յոսկի ազնիւ. որպէսի համարիւր ոսկին արաբացւոց ըստ նախագրելոցդ։

Յաւելու լամբրոնացին. «և առաք ասէ անուան նո,, բա ոսկի ոչ զգալի արաբիայ, այլ ի մարմնոյ միրոյ ,, զմեռոյ մաքրութեան զանազատութիւն. քանզի ոսկին ,, այսմ է նշանակ, որոյ ձանձնչատեսակ սրբութիւն ,, ներքնդունակ լինի ձառագայթից անուան նորին, ,, և ընդ նմին փայլէ, եղեալ լուսաւոր յաշխարհի ,, լուսոյն Հայելի լինելովն»։ Իբր մաքրութիւն մտաց և անազատութիւն ասելով ոչ ամիծոիէ յայսոսիկ և եթէ զինչանակութիւնէ ոսկւոյն. զի նովաւ նշանակին նաև պատիւ գերագոյն և պաշտօն ածային որպէս ասացաք, ընդ որս և աղօթիք և օրհնութիւնք. զորս ի մատնաւորի յիշէ մարգարէն ի յաջորդ համարն ասելով։

ԺԵ. Յաղօնս կացցէն առ նա յանվնայն ժամ. և գործնատակ օրհնեսցեն զնա։

Յաղօթս կալ և աղօթել թէպէտ զնոյն նշանակեն, բայց ուր ուրեք կամիմք յայտ առնել զաղօթելն ըստ արժանւոյն, երբեմն վան հաստատելոյ զայն՝ դնեմք կալ յաղօթս. յոր միտ ասի «կայր յաղօթս». (մարկ. ԺԳ. 35). և թէ «կացից յաղօթս հոգւով». (ա. կոր. ԺԴ. 15)։ Լաւ զի ատ խօսի զարժանաւորն առ աղօթից՝ դնէ յաղօթս կալ, յատեն։

Յաղօնս կացցէն առ նա յանվնայն ժամ. և գործնատակ օրհնեսցեն զնա։ Այսինքն՝ ազգք մարդկան գաւեալ զիբրու-

թէ՝ ի ձեռն քոյ, մատուսցէն նմա զաթժանաւոր ա-
ղօթս ըստ այլևայլ բանի, այսինքն ըստ պաղատանաց
առ ի գամանել ի նմանէ զօգնութիւն. և ըստ գոհու-
թեան առ ի ընդարձակել լինել զնմանէ ետ. և զի ի մէջ
ազօթից գերազանց է օրհնութիւնն, զայն ի մասնա-
ւորի գնէ. զերկնաւոր ասէ օրհնեցեն զնա։

Աւր ասելն զօրհնասպաս, նոյնպէս և ասելն յառաջ-
նում հատուածի յամենայն ժամ. ըստ երից գնի. մի՝
ըստ շարունակելոյ. իբր զի ի մէջ փրկելոց բազմու-
թիւք մարդկան զօրհնասպաս և յամենայն ժամ ու-
նելին ազօթս մատուցանել առ քեզ. և այս հանապա-
զորդութիւն ազօթից ըստ ասելոյ լսեաք" և * ոչ մի օր
դադարեաց յաշխարհէ, յորմէ հետէ երևեցաւ նորն
մեր, և ոչ խափանեսցի ի յաւիտեան ։ Երկրորդ՝
ըստ կարգաւորեալ ժամուց՝ յաւուրն ևօթնից, և
ըստ այսմ բառդ յամենայն ձամ կամ զօրհնասպաս նշանա-
կէ զամենայն կարգեալ ժամս։ Երրորդ՝ ըստ գիտե-
լոյ յամենայնի զփառսն քոյ. զի օր յամենայնի զփառս
նորա գիտելով գործէք ինչ՝ եթէ յաւուրն, և եթէ ի
գնջութեն ետ. յամենայնի և յամենայն ժամ ազօթել առ
քա և զօրհնասպաս օրհնէ զնա, և կեանք նորա հա-
մարեալ լինի հանապազօրեայ տիւ անգիշեր։

Այս բան օրպէս և տեսանի՝ յայտնաբերեալ քարոզէ
զնաճութեն քոյ. զի միայն առ ձեզ լինի կալ յամե-
նայն ժամ յաղօթս, և միայն ձեզ վայելէ մատուցանել
զօրհնութեն զօրհնասպաս, և ոչ թէ սոզոմինի, կամ
այլոյմ ումեք. և սոքին իսկ ցուցանի թէ բան առ-
մոխս ուղղակի ի քէ Տէրն, և նեւթապէս միայն ի
սոզոմին ։ Օ այս եդեալ մարգարէին առաջի առնել
այժմեան զառաքեալ հաւատոյն քոյ և վկայասիրել
նորին ընդ ամենայն տեղիս, վասն որոյ ասէ։

ԺԴ. Եղէջ հաստատութիւն ընդ ամենայն երկիր. և ի վե-
րայ գետոց կերտեաց։

Եւ ի թէ կրօն կամ պաշտօն՝ զոր հնարեցին մարդիկ,
որովհետև հիմնեալ էր ի բնական հանգամբ կամ ի
մտոտի պատճառս, ոչ կարէր ունել զհաստատութիւն
մշտնջենաւոր, այլ թէ կրօնք ինչ կամ աղանդք երևին
ունել զհաստատութիւն, այն առաքելոյմս է, և ոչ

յինքեանս. իսկ կրօնք և հաւատք քրիստոնէից հնար
նեաւ գոլով յածային հանձար, և ՚ի աշխարհաւեթ
յաւիտենական, ընդ ամենայն աւելս ունի պհասուա-
ւութեն և յաւիտենի ժնայ անջնջելի. յայս հայելով
ասէ:

Ընդէր հաւատոյն ընդ ամենայն էրկիր. և ՚ե վերայ գլխոց
ելեանց: Այսինքն հաստատութեն քրիստոնէական հա-
ւատոյ ոչ եթէ յայս կամ յայն տեղի միայն լինելոյ՝
այլ ընդ ամենայն տեղիս. որ է ասել. քրիստոնէա-
կան հաւատք, կամ հաւատան որ ՚ի քե, սփռեալ ընդ
ամենայն երկիր՝ յաւիտենի ժնայ անկործանելի. և
եթէ ՚ի վերայ գլխոց լերանց և ասելցէ, ոչինչ հոգմով
կարիցէ անկանիլ:

Եւ այս այլաբանութեն ոչ ցուցանէ եկանել հաւատոյ
՚ի վերայ լերանց, այլ յայտ առնէ նախ փոխաբերու-
թեբ պհասուածն լինել այնր և երևելի ամենեցուն
ընդ ամենայն տեղիս. երկրորդ յայտ առնէ նմանու-
թեբ զտարածիլ նորա յանմարդի տեղիս, որպիսի են
գլուխք բարձրաբերձ լերանց. երրորդ յայտ առնէ
առաքեբանութեբ պհաստատիլ այնր յիշխանս զանա-
զան ազգաց, կամ յիմաստուն աշխարհի, որք օրինա-
կին ՚ի գլուխս լերանց. որովք կամի ցուցանել, թէ
յայսմ ամենայնի և յամենեսին հաստատութեն ունի
հաւատն քի, և ժնայ անկործանելի:

Այս հաստատութեն մտածի ոչ ՚ի կողմանէ մարդ-
կան, այլ ՚ի կողմանէ հաւատոյն. իբր զի հաւատքն քի
՚ի կողմանէ իւրմէ ոչինչ իւիք կարէ եղծանիլ. զի
որչափ և ընդդիմութեն կրեսցէ, այնչափ պայծառա-
նայ՝ հանպոյն խարուկի, որ ՚ի վչմանէ հոգմոյ առա-
ւել և ևս զօրանայ:

Իսկ թէ մարդիկ ՚ի բաց Թողուն զայն կամ մերժեն,
կամ հալածեն ևս, այն ոչ է վասն անհաստատ լինե-
լոյ հաւատոյն, այլ վասն անհաստատ կոլոյ մարդկան,
կամ յաւէտ վասն յանդիմանեալ լինելոյ մեղութեանց
նոցա, և մեղսութեենց նոցին յուղղութեբ և ՚ի ձչմար-
տութեբ հաւատոյ:

Արդ ի սատ հաստատութեբ իմանալ զխաղաղութեբ
և զանդորրութեբն ՚ի կրօնս ծնդպաշտութեբ. իբր զի
նախ քան զյայտնել ան մերոյ խռովութ էր ՚ի կրօնս,

թէ զիարդ էցէ, որ էցէ, ևն. իսկ ՚ի գալնորա յայտնեցաւ ձշմարտութիւնն, և եղև խաղաղութիւն ընդ ամենայն աեղիս. այլ թէ մարդիկ ոչ կամեցան վայելել յայնմ խաղաղութիւնե, նոցա է յանցանքն. զի տեսին և ոչ առին, գտին և արհամարհեցին. որով ինքեանց ժնասեցին, և ոչ ձշմարտութիւնն քեի. որ ՚ի կողմանէ իւրմէ միշտ յայլեօղ գտաւ և բարձրացաւ. զորմէ խօսի մարգարէն ՚ի յաջորդ համարն ասելով:

ԺԶ. Բարչբասցե հան ղլիբեանան պտու-ղ նորա. ծաղիեսցե ՚ե հաղատե ՚ան որպէս խոտ երիբե:

Որովհետև համեմատութեամբ երկրին պաղեստինայ բարձր է լիբանան բարձրութեբ մեծամեծ լերանց, պաղեստինացիք բերէին զայն ՚ի նմանուե բարձրուեե և էր իրի եղելոյ ՚ի վերոյ քան զայլս. իբր զի առ ՚ի ցուցանել, թէ այս ինչ բարձր է քան զամենայն, ասէին. բարձր քան զլիբանան. որպէս տեսանէ ուբեք ուրեք և ՚ի բանս մարգարէից. յայս ոմ կարգէ և մարգարէն առատ զբան իւր՝ յասելն:

Բարչբասցե հան ղլիբեանան պտու-ղ նորա: Այսինքն պտուղն քրիստոնէական հաւատոյ, և քարոզութիւե աւետարանին բարձրասցի քան զլիբանան, այսինքն առաւել բարձր ցուցցի քան որչափ բարձր երևի լիբանան, համ որչափ բարձր են մայրքն լիբանանու. որ է ասել բարձրասցի յոյժ. և այս բարձրութիւե ըստ երից մտաց է. մի՝ ըստ փառաւորութե. զի յամենայն տեղիս փառաւորեցաւ քարոզուե աւետարանին և հաւատքն քեի. երկրորդ ըստ ընդհանրական տարածութե և պտղատուուե. զի ընդ ամենայն տեղիս տարածեցաւ հաւատքն քրիստոնէական և ոչ տակ ՚ի հրեաստան որպէս հրէից. և եա յամենայնի զպտուղ իբր. և ոչ ճեաց անպտուղ իբրև զծառան լիբանանու: Երրորդ՝ ըստ սքանչելի գործոց երևելոյ ՚ի պեսպէս իրս, ոչ միայն ՚ի հրաշագործութիե՝ որք անպակաս եղեն ՚ի մէջ հաւատացելոց, այլ և ՚ի մեծամեծ առաքինութիս ոգւոյ, և ՚ի նահատակութիս մարտիրոսաց, ՚ի հանդէս արիութե կուսանաց և ՚ի խաստութիս վարուց և ձգանց, և յայլ զանազան իրս, որք իբրև պտուղք հաւատոյն քեի բարձրացան քան զմայրան լի-

բանանու , այսինքն քան զամենայն շահաւէտութիւն մովսիսական օրինաց , և քան զամենայն իմաստուին արտաքին գիտութենէց , և քան զամենայն զօրութենէ թագաւորութենէց երկրի . որով առաւել քան զառաւել գեղեցկացաւ հաւատքն քո ՚ի մէջ ՚ոբ եկեղեցւոյ . և զայս կամելով նմանաբանութեբ ինն յայտնել , յարէ վկնի և ասէ :

( ) ՚աղէաց ՚է ՚աղաւէ ՚ին ոլէս խոտ երկրի : Պատաղաբ ՚ոյ ասելով իմանայ զսիոն այսինքն զեկեղեցի ՚ոբ . յորում ծաղկեցաւ հաւատքն քո ՚ի ըստ այլևայլ բանի . նախ՝ ըստ առաւել պայծառանալոյ . երկրորդ ըստ առաւելել և հաստատելոյ . երրորդ՝ ըստ սփռելոյ անուշահոտութենէ ՚ոբ վարդապետութենէ . չորրորդ՝ ըստ բազմերկայացս հաւատացելոյ ազգաց ՚է ազգ . հինգերորդ՝ ըստ բազմանալոյ հաւատացելոց , և յայս յետինս հայելով սփռեալ տարածեալ ասէ , որպէս խոտ երկրի . իբրև թէ ասել՝ աճեցեալ և առաւելեալ լինի յոյժ հաւատքն քո . որով այնպէս աճեցեն հաւատացեալքն ՚ի քո , որպէս աճէ և բարգաւաճէ խոտ յերեսս երկրի :

Լամբ՛. լիբանանաւ իմանայ զկռապաշտութենէ , և զեղեցիկ ինն նկարագրելով խօսի այսպէս . * ՚Ո լիբա-
„ նան սովորութենէ ե մարգարէից կռապաշտութենեն
„ առնուլ օրինակ . ըստ այնմ, փշոյ ՚որ զմայրան լի-
„ բանանու : Եւ փառքն լիբանանու առ քեզ եկեսցեն
„ ցեն , ասէ եսայի առ եկեղեցի . և բարձր էր ՚ի կռ-
„ ապաշտութենէն ՚ի գալատեացն քո և տարածեալ
„ ընդ ամենայն երկիր : Իսկ յորժամ որթն Քրիստոս
„ տնկեցաւ ՚ի յերկիր , զոր մշակեաց Հայրն երկնա-
„ ւոր և տարածեաց ՚ի նմանէ հոգւոյնէն զուռս և
„ զբարուենակս առաքելոյն , պտուղ նորա այսինքն
„ տիեզերաց եկեղեցիք բարձրացան և գեր ՚ի վերոյ
„ անցին կռապաշտութենեն մեծութե , մանաւանդ թէ
„ և բնաջինջ արարին զնա ՚ի միջոյ : Եւ ծաղկեցի
„ ՚ի քաղաքի ՚ն ոպ խոտ երկրի : Որպես ՚ի մարգա-
„ գետինս զանազան խոտոցն ծաղիկք , այսպէս
„ ծաղկեցաւ ՚ի քաղաք ՚ն՝ յեկեղեցի՝ պետս առա-
„ քինեացն անձինք , վկայիցն վարդ , ճգնաւորացն
„ շուշան , կուսանացն քրքում, տեսողականացն ար-
„ մաւենի . և այլ անթիւ ՚ոբցն գումարք՝ որք ՚ի սուր

„ ըին քաղաքս ծաղկեցին, և՝ի վերինն զնայծեալ
„ պտղոցն Ճաշակեն զհամեղութե՛ ‖ :

Խորհրդաբար այս քաղաք ան է ած ածանին. որոյ պարիսպ է կուսութե՛ն. ՛ի սմա ծաղկեցաւ և բուսաւ պատուղն անմահութե՛ իբրև խոտ երկրի, որով ցուցանի նախ կուսութե՛ ծաղկիլն առանց սերման. երկրորդ՝ իբրև մարդ ծաղկիլն, և ոչ իբրև հրեշտակ. զի մարդիկ խոտոյ նմանին ըստ եսայեայ. (խ. 6):
Երրորդ իբրև ուտե՛լ ընծայիլն մարդկան. զի որով հետև մարդիկ հաւասարեցան անասնոց անբանից, (սաղ. խե. 11.) ետ նոցա զինքն ՛ի կերակուր:
Ա.յս բան եթէ հայիցի ՛ի տողոմն՝ մեկնի այսպէս. պատուղ իմաստութե՛ նորա բարձրացի յոյժ, և աքան՛չելի լինի, և ծաղկեցի յերուսաղէմ, և անտի տարածեցի ընդ ամենայն տեղիս, և լցուսցէ զերկիր ամենայն՝ որպէս խոտ որ բուսանի ընդ ամենայն երեսս երկրի: Ո՛յս ամենայն եդեալ մարգարէին՝ բովանդակե՛ զբան իւր յօրհնութե՛ անուան ան է, և ասէ:

ԺԵ: Լ՚ԱՂԵՅԵ ԱՆՈՒՆ ՔՈ ՕՐՀՆԵԱԼ ՅԱՒԵՏԵԱՆ. ՊԷ ՅԱՒԱՂ ՔԱՆ ՊԱՐԶ Է ԱՆՈՒՆ ՆՈՐԱ:

Բառս անուն՝ կրկնակի կարէ առեալ լինել. մի՝ ըստ այնմ զի նշանակէ ըստ որում է ձայն նշանակօղ, և մի և ա՝ ըստ այնմ զի նշանակի ըստ որում ՛ի մէջ բերի նովաւ նշանակեաըն: Ա՛րդ որպէս երևի՝ յայս բան յառաջնումն հատուածի անունն դնի ըստ այնմ որ է նշանակօղ, որպիսի են անուանքս, ՔՃ, ՔՐ, փրկիչ, ՔՏ, ՔԶ. իսկ յերկրորդումն դնի ըստ այնմ որ անուամբ նշանակի, այսինքն է նոյն ինքն ՔՃ փրկիչ. ըստ առաջնոյն ասէ:

Լ՚ԱՂԵՅԵ ԱՆՈՒՆ ՔՈ ՕՐՀՆԵԱԼ ՅԱՒԵՏԵԱՆ: Ա՛ւր անուամբ ան իմանայ զանուն այնորիկ, զորմէ ցայս վայր խօսեցաւ, այսինքն է անուն փրկչին, որ է անունս ՔՏ. այս անուն ան ասէ՝ այսինքն անունս ՔՏ՝ եղիցի օրհնեալ յաւիտեան յամենայն արարածոց. * զի յանուն ՔՏ քո ամենայն ծունր կրկնեսցի ‖. (փիլ. ՔԵ. 10). և այս յաւիտեան. իբր զի ցորչափ ՔՏ է, անունս ՔՏ եղիցի օրհնեալ: Եւ դարձեալ յինչ անուն և կո-

ջեսցի, և եթէ ծաղիկ երկրի համ իսոտ, օրհնեալ
է յաւուրսն։ Բանզի և ինքն իսկ միանջև առեալ
եր զանուն՝ ի վերայ երկրի՝ օրհնեալ եր յաւուրս քան
զաւուրսն, և առ այս յարէ։

(՝) է յաւուրս հան ցարիս է անուն նորա։ Այր որպէս առա-
ջաք բառս անուն դնի փոխանակ այնր՝ որ անուամբ
նշանակի, որպէս Թէ ասէր. Նա ինքն յա քո՝ ի յաւի-
տենից է՝ յաւուրս քան զաւուրսն արարած ևս և յա-
ւուրս քան զարև։ Իսկ եթէ անուանն առցի աստ իբրև
նշանակօղ՝ միտ բանին լինի այս, անուանս յա՝ ի յաւի-
տենից նախատեսմանեալ՝ և յաւիտենից օրհնեալ
է, և եղիցի օրհնեալ մինչև՝ ի յաւիտեանս. իսկ
պատճառ զարև միայն յիշելոյն է այս՝ զի յերևելի
արարածս այ փառաւորապէս է նա առ մեզ քան զա-
ւուրսն. ուստի եթէ յաւուրս քան զայն օրհնեալ է
անուանն յաի, ապա և յաւուրս քան զայլ արարածս։ Այլ
զի այսպէս օրհնեալ գոլով՝ յօրհնութենէ նորա օրհնե-
ցան և ազգք ամենայն, յայն հայելով մարգարէին՝
ասէ։

ԺԲ. (՝) Ա նա օրհնեացին ամենայն ազգք երկրի, և ամենայն
ազինք երանելցեն նմա։

Այս այն է՝ զոր խոստացաւ ած աբրահամու՝ յասելն
առ նա. * և օրհնեսցին ՝ի զաւակի քումդ ամենայն
„ ազգք երկրի՚. (ծնն. ԻԲ. 18). զոր յաւուրս բերեալ
պօղոսի. (գաղ. Գ. 8—16.) ցուցանէ Թէ սովաւ
նշանակի քո, յորում օրհնեցան ամենեքին. յայս
հայելով ասէ։

(՝) Ա նա օրհնեացին ամենայն ազգք երկրի։ Ահաւադ ՝ է նա ոչ
դնի աստ ուղղակի փոխանակ անուանն քոյ զոր յիշե-
եայ ՝ի նախընթացս համարն. իբր Թէ լոկ յանուննո-
րա օրհնեսցին, այլ փոխանակ քոյ. որով ցուցանէ,
Թէ քոյիւ հանդերձեալ էին օրհնել ամենայն ազգք
երկրի, ազատեալք ՝ի գատապարտութենէ անիծիցն,
և ՝ի գերութենէ սատանայի, և վերածելով յորդե-
գրութիւն այ և ՝ի ժառանգութիւն յաւիտենական կե-
նաց. և ՝ի սոյն իսկ ամենեքին ուրախին փառս տալ
նմա, և օրհնել զնա. զոր միտ յարէ զինի և ասէ։
Եւ ամենայն ազինք երանելցեն նմա։ Երանելն է յայտնել

զերանելի գոլն ուրուք. և այս կարէ լինիլ կրկնակի. մի՝ սովին իսկ բառիս երաժել, կամ երանի տալ, կի՛ երանելի՛ ասել, ևս. զորօրինակ երանի քեզ, կամ երանելի ես դու, կի՛ երանեմք զքեզ, կամ երանեալ յաւիտեան ևս. և մի և՛ս՝ այնպիսի բառիւք՝ որք յայտ առնեն զքան երանելի լինելոյն. որպէս յասելն զուլմեքն՝ լինել իմաստուն, հզօր, բարի, և՛ն. զի այսպիսի բառք յայտ առնեն զայն ինչ՝ որով ասի ոք լինիլ երանելի, յայնմ իրի որ յիշի, զերկասին զայսոսիկ՛ի միասին վարելով առաքելոյն ասէ զ.քեզ. * երանելին ,, և միայն հզօր թագաւոր թագաւորաց և տէր տերանց ,, և՛ն ‖. (ա. տիմ. զ. 15):

Այս միտ դնէ և աստ մարգարէն զերանելն. իբր զի ամենայն ազգք և ազինք օրհնեալ լինելով՛ի քէն՝ երանեն նմա, այսինքն տան նմա զայնպիսի գովեր թիւ՝ որովք ցուցանի թէ նա միայն է երանելի. յոր միտ՛ի քաղդէականն փոխանակ ասելոյ երանեացեն՝ դնի, * բարի ասացեն նմա ‖: Նոյնի՛ի թարգ" ասէր" և արաբ" դնի * փառաւորեացեն զնա ‖. և՛ի թարգ" լատ" դնի, * մեծացուացեն զնա ‖. ուր յեբր" ըստ մեկնութեան դնի եէաշէռուհու, այսինքն երանիցեն նմա. սոյնպէս դնի և յընտիր օրինակս եօթ" և յեթէով":

Լամբ" ՛ի մեկնելն զսոյն զայս բնաբան՝ զեղու և՛ի հոգւոյ իւրմէ զբան վայելուչս, ասելով. * ո՞յր ,, սիրեաց զհոգևոր օրհնութիւն և զերկնից բարեացն ,, խոստումն՛ի ծագաց երկրի ազգս, թէ ոչ էմմա- ,, նուէլն փրկիչ. յումմէ՞ ընկալան ազգք երկրի ձրի ,, մեղացն թողութիւն, թէ ոչ՛ի քէ յո՞ մկրտելն. ար- ,, դարև՛ի նա օրհնեցան, և նորա մարմնոյն հաստակ ,, լինելովն՛ի բարձունս վերացան. նա յաւիտենից ,, կենացն կարապետ, նոյն և երկնից մուխցն առաջ- ,, նորդ. զի օրհնութիւնն է բարեաց առաւելութիւն. ,, և զայս ընկալաք՛ի քէ, ո՛չ զանցաւոր բարիս, այլ ,, զմշանջենաւորն: Վասն որոյ և երանէ նմա ամե- ,, նայն ազանց լեզու՝ երանութենէ բաշխող բերանոյն. ,, զի և ետ երանութիւն ձրի, և առ զնոյն սիրով. և ետ ,, զինքն մեզ կամօք, և առ զմեզ ինքեան բաղձանօք. ,, վասն որոյ որչափ յաձախեմք զերանութիւն ,, օրհնութիւնէ, ՛ի մեզ գառնայ նոյն՝ տոկոսեօք առա-

,, ահեղութեա՛ն զվերարարութենն. զի՛ի պահանջեսցէ
,, որպէս զկարօտ՝ զկարօտեալքս փարթամացուցանէ
,, իրախուԹի՛ ||:

Օ այս քան ահաբեկ հրէից աւս սողոմոն վերածեն. իբր Թէ նովաս օրհնեցան ազգք, այսինքն Թէ՛ի ժամանակս նորա ամենայն ազգք լսացան բարեօք. և ամենայն ազինք զարմացեալ ընդ նա՝ երանի եւտուն նման. և յաւելուն ասել Թէ միշտ տացի նման նոյն երանուԹի՛ն: Բայց զժուարաբաւնալի է այս մեկնուԹի՛ն իբրև զաւազ և անկլանելի իբրև զմաղ. քանզի մեծ ինչ և առաւել քան զայդ ցուցանէ բանս այս. և որպէս ասացաք այժմ, ուղղակի հայի յայն քան՝ զոր ասաց ած ցաբրահամ. ՚ի զաւակի քում օրհնեսցին ամենայն ազգք. և զի այս քան ոչ զհեսիայէ ասի, և ոչ զսողոմոնէ, ապա և առաջնիկայ քան սաղմոսիս: Բայց եղեալ ևս Թէ նաև զսողոմոնէ ասիցի, այն մտածի աստուերաբար. իսկ յաւելն զքնի՝ մտածի լրուԹի՛ն և ճշմարտուԹի՛ն. ըստ որում նովաս լրապէս և ճշմարտապէս օրհնեցան ամենայն ազգք, եղեն նորա ժողովուրդ և անուանեցան նոր իսրայէլ. և նա՝ որ ասէր ած իսրայէլի եղիւ և ած նոցա. վասն որոյ և մարգարէն ՚ի բերանոյ հաւօրէն ազգի մարդկան օրհնուԹի՛ն մատուցեալ աս նա գոչէ:

Ի. ( ) երկնեալ ար ած իսրայէլէ, որ առնէ սքանչելիս դիայն. և օրհնեալ է անուն ՚ի փառս նորա յաւիտեան. լցցէ փառօք նորա ամենայն երկիր. եղիցի եղիցի:

Այս ած քանի հատարակ էր ՚ի բերանս նահապետացդ և մարգարէիցդ՝ յօրհնել նոցա զած վասն մեծամեծ գործոց նորա. որպէս է տեսանել յՈՒծաշունչ գիրս յանհամար տեղիս. յոր բերի բերկրանօք և երանեալս գաւիԹ յաւելն:

( ) երկնեալ ար ած իսրայէլէ: Այ՝ ասի լինել ած իսրայէլ. և ասի զնոսա ընտրեաց իւր ժողովուրդ. և աս նոսա յայտնեցաւ բազմապատիկ օրինակաւ. և նոցա ետ զօրէնս իւր ըստ պէսպէս կարգի. որով պարտիւր՚ի նոսա, և՚ի նոցունց քարոզիւր: Այս գարձեալ՝ զի յաղգէ նոցա կամեցաւ ծագիլ. աս որոյ գուշակուԹե՛ն ազգի ազգի արարողուԹե՛ս սահմանեաց ՚ի

նոսա, և ընդ ժամանակս ժամանակս առաքեաց մարգարէս առ նոսա, աւետարանել նոցա և համօրէն ազգի մարդկան զայս խորհուրդ։ Ի՝ան այսոցիկ պատճառաց և վասն այլոց բազմաց՝ նա որ էր ած ամենայնի, ասէր ած իսրայէլի։

Նա զի նա միայն էր Ճշմարիտ ած՝ յասելն ած իսրայէլի՝ իմացեալ լինէր ած Ճշմարիտ. որպէս ընդ հակառակն՝ յասելն ած ակկարոնի՝ իմացեալ լինէր ստուտ ած՝ այսինքն չած։ Նա քանզի նա միայն է օրհնեալ՝ որ է ած Ճշմարիտ, վասն այսորիկ ասէ. օրհնեալ ած որ ած իսրայէլի. այսինքն օրհնեալ է և օրհնեալ եղիցի յաւիտեան ածն իսրայէլի՝ որ է ած Ճշմարիտ։

Ծործորեցին (՚ի մեկն. մատ. գլ. իե. և իզ.) զբաւդ օրհնել՝ բացատրէ լինել յայտնեալ. և զայս թերևս առնու յարիսպագուցն յասելն. * օրհնեալն յայտնեալ ասի ‖։ Ցայս վերածէ և վարդան վարդապետ (՚ի մեկն. օրհն. մովսիսի. ք. օրին. լբ. ։) ուր գրէ այսպէս. * մեծն դիոնեսիոս զօրհնեալ ,, նուիրեին յայտնաբանուիթե թարգմանէ. օրհնեալ ,, ես ած, այսինքն յայտնի ես ած անձաւ պարգևօքդ ,, և անպատմելի սքանչելեօքդ. չես թագուն և ՚ի ,, ծածուկ և առանց վկայուիթե, ըստ պօղոսի՝ թէ ,, երևելի արարածովքս յայտնի են աներևոյթ զո- ,, րուիթիքն ցոյ, և դարձեալ թէ առանց վկայուիթե ,, զինքն ոչ եթող ‖։ Ուրդ եղեալ մարգարէին զօրհնեալ լինել Ճշմարտին ցոյ՝ ՚ի ցոյց այսր յաւելու և ասէ։

Ոչ առանձ սքանչելիս դայն։ Սքանչելիք ասին այն գործք որ գործին ՚ի վեր քան զկարգ բնուիթե. և զի միայն ած է որ կարգի բնուիթե և ՚ի վեր քան զբնուիթե, միայն ած կարօղ է առնել զսքանչելիս. սմին իրի նմա միայն ընծայէ մարգարէն զսքանչելիսն, նա միայն ասէ առնէ զայս. և զի ՚ի մէջ սքանչելեացն ցոյ գե- րազոյն եղև խորհուրդն մարդեղուիթե ՚ի փրկուիթե ազգի մարդկան, զորմէ էին բանք սաղմոսիս, յաւէտ յայս սքանչելիս քան յայլս հայելով խօսի աստ մար- գարէն զայս բան. որպէս թէ ասէր. միայն ած կա- րաց առնել զայս սքանչելիս, զի եկեալ յաշխարհ

մահուամբ իւրով փրկեաց զազգ մարդկան ՚ի յաւիտենական մահուանէ, և վերածեաց զնոսա յերկնից թագաւորութիւն. Թո՛ղ զքաղաքան սքանչելի պարագայս այսր խորհրդոյ։ Զոյն զայս սքանչելիս իբրև թէ աչօք տեսանելով մարգարէին, և ՚ի ընտրս նուրին վայելելով՝ տայ օրհնութիւն անուան սքանչելագործին յասելն։

Այս օրհնեալ է անուն ՚ի ձառայ նորա յաւիտեան։ Բաւական ուսմանութիք են այ՝ մանաւանդ առ եբրայեցիս. քայց հայելով առ մեզ և ըստ մեզ խօսելով՝ իբր յաւուկ անուն ընծայի նմին բառս ՚ի, ոչ ըստ քնութեն, այլ ըստ խնամելոյն. զի ինքն անեղ անանուն գոլով՝ յարարչագործելոյ և ՚ի նախախնամելոյ ընկալաւ զանուն, ընդ որ զարմանալով ինն լուսաւորիչն մեր գրէ (՚ի յաճախ. Ձառ. ը. երես 16. և 17.) այսպէս. * քայց զարմանալի է այս (ասէ), զի վասն առաջ ,, եւել սիրոյն իւրոյ՝ անանունն յանուն գայ, զի ոչ երբ ,, ոք ընդ անսկզբանն՝ որ կոչէր զանուն նորա. այլ ,, ինքն վասն բարեբար կամացն արարիչ արարածոց ,, անուանի. զի արարիչ և բարեբար, լոյս և կեանք, ,, ՚ի խնամս արարածոց զանուանս ունի. այլ զիւր ,, անունն ինքն միայն գիտէ ..... որպէս առ մար- ,, գիկ այս օրինակ ճշմարտութիք երևի, ոմանց քնու- ,, թիք (հայր կոչիլ,) և ոմանց խնամածութիք՝ որբոց ,, հայր ։ Ըստ սմին և յայլ կոչմունս. յոր միտ ասէ Կիրակոս վարդապետ (՚ի մեկն. եւագր. գ. 18.) * նախ քան զլինել աշխարհիս ՚ած էր բարի, զօրա- ,, ւոր, իմաստուն, ևն. և իբրև մեղան մարդիկ՝ ,, եղև դատաւոր, և դարձեալ՝ ՚ի մեղաց բժիշկ ։ Ըստ՝ մանաւանդ առ եբրայեցիս. զի բազմապատիկ անուանք և ստորոգելիք այ գտանին առ նոսա. որպէս եօվա կամ եհովա, այսինքն որ էն. էլ, այսինքն հզօր. սատտայ այսինքն ազատ. կամ ամենաբաւական. ատօնի. այսինքն, տէր. կամ ատօնայի սեպհ, որ ապայից (զօրից կամ զօրութեանց). և այլն։

Ո՛ոմանս յանուանց ատուի յատուկ բերէ որպէս յակոբ մեբնայ հայրապետ (՚ի Ձառն ժդ. երես. 364.) ըստ թարգմանութեանէ ասորւոց և ասէ. * անուանք այ

„ քազուամ են . . . և կոչեաց զանուն իւր , ահիահ.
„ շահարահ. էլի. շադէ. և ադօնէ , ծբաւուԹ. այսու
„ անուամբ կոչեցաւ ած ||:

'|. սոսա առաջինն՝ որ է եօվա որէն , ասի լինել անուն փառաց ածուԹե. ըստ որում յայտ առնէ զփառս էին անեղի:

Սոյնպէս է և անուննա յա. զի և սա յայտ առնէ զփառս որդւոյն այ ըստ որում է փրկիչ ամենայնի , փառաւորեալ և փառաւորիչ ամենեցուն. արդ ասէ այս փառաց անուն՝ որ է եք , օրհնեալ է յաւիտեան , ոչ միայն յերկինս , այլև յերկրի. ըստ որում ամենեքին որք են յերկրի՝ տեսեալ զսքանչելի փառս նորա՝ զարմանան և փառաւորեն զնա. և առ այս յայտնի է:

Ոչ էր փառօք նորա ամենայն էրէէ: Փառքն այ մտածի կրկնակի. մի՝ յինքեան , որ այն ինքն է անսահման կատարելուԹեն նորա , որով փառաւորեալ է յինքեան. և մի և ա՝ առ արտաքս. և այս կարէ մտածիլ յատկապէս և անյատկապէս. յատկապէս մտածեալ՝ է յայտնուԹե կամ հռչակուածն այնը ներքին փառաց 'ի ձեռն նախախնամուԹեն այ , որ յամենայնի սքանչելի պոլով՝ յայտ առնէ զփառս նորա. իսկ անյատկապէս մտածեալ՝ արարածք ամենայն ասին լինել փառք այ , ոչ զի են , այլ զի ցուցանեն զփառս այ՝ այսինքն զկատարելուԹիս նորա: Եւ քանզի լի է ամենայն երկիր այսպիսի արարածովք , և յամենայնի սքանչելի տեսանի նախախնամուԹե նորա , վասն այսորիկ ասի Թէ լցեալ է փառօք նորա ամենայն երկիր:

Այլ զի աստ քան մարգարէին ըստ նախակարգեալ ուկնուԹեցդ հայի յաւետափառաւոր գործ խորհրդոյ մարդեղուԹե՝ որոյ փառօք լցեալ եղև երկիրս , այնմ կանխագուշակ լինելով՝ յապառնին դնէ , և ասէ. լցցի ամենայն երկիր փառօք նորա. որպէս Թէ ասացեալ էր , ոչ ասակ պաղեստին՝ որպէս յառաջն , այլ աշխարհ ամենայն լցցի փառօք նորա , այսինքն լցցի փրկուԹեք նորա , լցցի քարոզուԹեք աւետարանի նորա , լցցի ճշմարիտ պաշտամամբք նորա , լցցի աքանչելագործուԹեք նորա , լցցի ամենայն բարեկարգուԹեք և ամենայն բարեօք , լցցի և նշանաւ երկրպա

պէտք խաչին. որովք և ինքն յուցցի փառաւորեալ յամենայնի։

Ամենքեան էր մարդացեալ որդին ՚ոյ, երևեր թէ լի էր երկիր փառաւքն ՚ոյ, ըստ ասելոյն Եսայեայ (ջ.3). բայց այն չէր լիութեն փառացն. իսկ ՚ի մարդանալ նորա, Ճշմարտապէս լցաւ երկիր փառաւք նորա. ուստի պէտք վարդապետ խօսելով ՚ի վերայ բանին Եսայեայ, ասէ. * յորժամ այս քանք (Եսայեայ) ,, ասացան, լի էր երկիր ամպարշտութեք. իսկ յոր- ,, ժամ մարդ եղև միածինն՝ լցաւ ամենայն երկիր ,, փառաւք նորա. զի նմա կրկնի ամենայն ծունը ‖։ Կամելով ապա մարգարէին յուցանել՝ թէ Ճշմարիտ է այս ամենայն, և թէ ցանկայ ինքն, զի այսպէս լինիցի, յարէ զկնի և ասէ։

Նշէյե եշէյե։ Յեբր" և յասոր" և ՚ի քաղդ" դնի ամն և ամն. զոր յաճախ ՚ի կիր էառ ՏերՆ մեր։ Իսկ այս քառ յորժամ նախ դնի՝ նշանակէ Ճշմարիտս. որպէս յասելն ՏՆ՝ * ամն ասեմ ձեզ ‖. (Մատ. ջ. 2). կամ * ամն ամն ասեմ ձեզ ‖. (յովհ. ՟ա. 51.) նշանակէ ասել, Ճշմարիտ ասեմ ձեզ կամ յիրաւի Ճշմարիտ է՝ զոր ասեմ ձեզ. կամ ըստ Տէրծորեցւոյն (՚ի մեկն. մատ. գլ. ժգ.) * եղիցի ձեզ՝ զոր ասե- ,, լոց եմ ‖։ Իսկ յորժամ յետոյ դնի, նշանակէ ասել. այս այնպէս է, կամ յիրաւի այնպէս եղիցի. ըստ որոյ եդեալ է ՚ի մեզ. եղիցի եղիցի. և յատրաբ" լոյն ևս. և յօրինակս ինչ եօթ" այնպէս եղիցի՝ այնպէս եղիցի. և ՚ի Թարգ" ակնւզասայ, հաւատարմաբար հաւատարմաբար, կամ հաւաստեաւ հաւաստեաւ։ Որովք ցուցանի, Թէ այս ամենայն զոր ասաց՝ Ճշմարիտ են, և Ճշմարտութեք կատարեսցին. և ՚ոճ որ առնէ զայս ամենայն, լինի փառաւորեալ յաւիտեան։

Այլ աստ գիտելի է, զի այս յետին համար է աւարտումն երկրորդ գրոց սաղմոսի ըստ բաժանելոյ եբրայեցւոցն. (զորմէ տե՛ս ՚ի ներած գլ. Ե. և ՚ի սաղ. ի. 14)։ Իսկ Թէ այս յետին բան յուժմէ՛ն լոյ եղեալ. ՚ի դաւթայ, Թէ յեզրասայ, կամ յայլոց, չէ յայտ. հաւանական է ասել, Թէ որ ՚ի հինգ գլուս բաժանեաց զսաղմոսն առ եբրայեցիս, զայս յա-

ել՝ի վախճան իւրաքանչիւր գրոց, առեալ՝ի վերջին համարոյ ի սաղմոսին։

Ստանիօր յերբր" և՝ի քաղէ". և՝ի թարգ" եօթ". և լատ" և եթէոլ" ՝ի վերջ սաղմոսիս գնի, * պակաս՝ սեցան (կամ բովանդակեցան) օրհնութիւնք դաւթայ որդւոյ յեսսեայ ‖։ Զոյն է տեսանել և՝ի տպագրեալ աճաշունչս մեր. իսկ՝ի ձեռագիրսն սաղմոսաց՝ յեօթն օրինակս այդ քան գնի՝ի սկզբան յաջորդ սաղմոսին. այլ՝ի տպագրեալսն ոչ գնի, սոյնպէս և ոչ՝ի թարգ" ասոր" և արաբ"։

Որպէս և գիտի, այդու ոչ ցուցանի՝ թէ սաստի և անդր ոչ ևս կան սաղմոսք դաւթի՝ի կարգս սաղմոսաց. զի բազումք՝ի սաղմոսաց նորա յետ այսր գնին. այլ թէ այս սաղմոս է այն՝ զոր՝ի վերջոյ ասաց դաւիթ, և ոչ ևս յաւել ասել. զի որպէս՝ի վերոյ ասացաք, զայս սաղմոս յօրինեաց նա յորժամ թագաւորեցոյց զորդի իւր զսողոմոն. յորում ժամանակի էր՝ի յետին հիւանդութեանէ։ Իսկ թէ աստ է եղեալ, այն է վասն կարգի սաղմոսաց՝ զոր դասաւորեաց եզրաս կամ այլ ոք. (որպէս ասացաք՝ի ներածուէ. գլ. ՃԸ։) Այլ թէ զինչ կարգ է այն, որոյ վասն աստ եղեալ է այս սաղ", և ոչ՝ի վերջոյ, ոչ ոք գիտաց մինչև յայժմ։ Այն ևս ոմանք ոչք հաւանականապէսն համարին, թէ որ նախ կարգաւորեաց զգիրս սաղմոսաց՝ զայս սաղմոս եդ՝ի վերջոյ. վասն որոյ և յաւել ասել. * զոր ‖ վանդակեցան աստ սաղմոսք դաւթի ‖. իսկ յետոյ այլք փոփոխեալ զայն կարգ՝ զայլ բաժանումն եդին. և զայս սաղմոս՝ որ եղեալ էր՝ի վերջոյ՝ աստ փոխադրեցին, գուցէ հայելով՝ի մերձաւորութիւն նիւթոյն զոր ունի սա ընդ նախընթացին. իսկ հայելով՝ի ներքին իմաստ քանից սաղմոսիս՝ տիրապէս սա եղև վերջինն, ըստ որում՝ի վերջ ամենայնի ուղղակի հայի՝ի քս, որ եղև լրումն ամենայնի՝ փառաւորեալ յաւիտեան։